

Испустя мѣсяца многѣхъ
и къ себѣ къ себѣ
Ер. 57.

ՀՈՄԵՐՈՍԻ
 աշուսան
 հ.բ.



Վե՛տե՛Ն ԿԿ
 ի Առաքել Զագար
 — 1843 —



գրքի համար

88
2-78

ՄՏՈՒԳՎԱԾ Է 1961 Ք.

Հ Ո Մ Ե Ր Ո Ս Ի Ե Գ Ւ Ը Կ Ը Ն

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ Ի ՀԵԼԼԵՆԱԿԱՆԷ

Հ. ԵՂԻԱ Վ. ԹՈՄԱՃԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ՀԱՏՈՐ Բ.

~~2858~~
267



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԵՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՀԱՅ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԵՎԱՆ
1972 թ.
ՊՆԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
1843

722

1-1-1

ԵՂՄԵԼՆԵՆ



ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԳ․

ՆԱԽԱԳԻՐ ՈՒԹԻՒՆ

Պոսիգոն տեսեալ զԱրամազդ այլուր
 դարձուցեալ զհայեցուածս, պատրաստի
 զօրավիգն կալ Յունաց: Նկարագրուծին
 ուղևորութեան նորա ընդ ծով: Առեալ
 զնմանութիւն Կալքասայ, բորբոքէ 'ի
 մարտ զկրկին զԱյասս. ապա վազեալ
 ընդ նաւս, գրգէ 'ի մարտ և զՅոյնս:
 Նահատակութիւն Իդոմենեայ և Մե-
 րիոնի և Մենեղաւեայ: Թևն ձախոյ
 Տրոյացւոց տեղի տայ, թէպէտ և զօրա-
 ցեալ իսկ էին 'ի նմա Ենէաս և Դե-
 փօբոս: Հեկտոր յաջոյ թևին զգէմ ունի
 Այասից: Զօրք իւր պարսաքարեալք 'ի
 Լոկրացւոց, ինքն անցանէ յայլ թև. Ժո-
 ղովէ զցրուեալն և դառնայ հանգերձ
 Պարիսիւ 'ի մարտ:

Տեսարանն է ընդ մէջ պատուարին
 Յունաց և ընդ մէջ ծովեզեր:



ԵՂՒԼԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԳ .

Ի ԲՐԵՒ այնպէս Դիտս ըզնաւան եղ Հեկ-
տորեանց նըշաւակ,
Եթող անդէն յանդուլ տագնապ քիր-
տըն թափել դըժընդակ :
Ինքըն դարձաւ ակընկառոյց հայեր բը-
բօք լուսաւիր
Գոռ Միւսացւոցն և Թրակացւոց քաջա-
ձիոցն 'ի յերկիր,
Նոյն քաջազանց Ձիակըթաց, որ կաթնա-
կեր են որեար
Եւ են նոքա երկայնակեացք և են մար-
դիկ յոյժ արդար 1 :

Ի Տրոյիա այլ չափանեաց . ասէր , ոչ ոք
յանմահից

Գայցէ Տրոյեանց կամ Հելլենաց տալ զօ-
րավիգ 'ի յերկնից :

Բայց և չեկաց դէտ վայրապար երկրա-
սասան մեծ Աբբայն ,

Որ կայր բազմեալ Թրակեան Սամեայ 'ի
բարձրաբերձն արտևան .

Յանտառախիտ ծայրից Սամեայ կայր
նա մարտին 'ի զընին ,

Ուստի Իդա և Եղիոն և նաւք Յունաց
երևին :

Եւ 'ի ծովէն և անդ նստաւ , սրտնէր
յՈրմիզդ մեծապէս ,

Քանզի զազէտն ետես Յունաց և էր յո-
գին աղեկէզ :

Յարեաւ անդէն և սրավարեալ էջ 'ի լեռ-
նէն ահագին ,

Ընդ արբային անմահ ոտիւք լերինք բար-
ձունք սասանին .

Ի նոյն և Թաւ սարսին մայրերն 'ի քայլա-
փոխս աստուծոյն ,

Քայլեաց երկցս , 'ի չորրորդին 'ի կէտն
Եդա հաս 'ի նոյն :

Յալուց ծովուն կային նորա անդ ոսկե-
ղէն ապարանք ,

Յարկ հոյակապ և սրբափայլ յաւէժ ան-
եղծ օթեւանք :

Հասեալ անդէն և լուծ 'ի կառս արկ
 ամոլից նըժուգաց ,
 նըժոյգք սրավարք , պըղընձոտինք և ոս-
 կեփունջք գիսապանծ .
 Համակ յոսկի պարածածկեալ առ պերճ
 զոսկին խարազան ,
 Եւ յաթռուակն և ընդ ալիս օգապարիցն
 ետ հորդան :
 Կէտք ընդ նովաւ կայթս հարկանէն դա-
 րեալքն յալուցս անդ 'ի խոր ,
 Ի դուրս վազեալք ճախր առնուլին , ծա-
 նեան զիւրեանց թագաւոր .
 Ծոյն առ խընդին ծածանելով փեռե-
 կեցաւ առաջի ,
 Եւ կառածիգքն յընթացս անհետ թռու-
 ցեալք սուրան շէշտակի .
 Զի և կաթ մի ներքոյ առանցք ոչինչ
 թացաւ պըղընձին ,
 Ճախրեալք այնպէս հանդէպ նաւաց ան-
 դէն զարքայն կացուցին :
 Ի անդանօր խոր ալուցաց ընդ անդըն-
 դովք ձիգ քարայր ,
 Առկայացեալ ընդ Տէնեդոս և ընդ Իմ-
 բրոսն առապար ,
 Երկրասասանն անդ առ ըզկայ , լոյծ ըզ-
 նըժոյգսն 'ի կառաց ,
 Եւ խար նոցա արկ զառաջեաւ յանմա-
 հական ճարակաց .

Աղետեաց զոտիւքն շարաւանդ անլոյծ ,
անքակ , ոսկեղէն ,

Զի մինչ 'ի դարձ վեհ արքային անշարժք
նոքա անդ կացցեն :

Եւ Պոսիդոն և դէմ եդեալ խաղայր 'ի
զօր Աքեցւոց

Ուր և Տրոյեանց գունդք գոռային իբրև
մըրրիկ իբրև բոց .

Շըռինդն հարեալ ընդ Հեկտորայ բազ-
մաշըշուկ մեծասաստ ,

Մոլին 'ի նաւս համանգամայն ըզՅոյնս
առնել դիտապաստ :

Բայց Երկրապատն Երկրասասանն է-
լեալ ծովուն 'ի խորոց ,

Խրախոյս Յունաց առ զկալքասայ տիպն
և ըզձայն մեծագոչ :

Չայն Այասից ետ առաջին որք ինքնա-
գրաւքն իսկ էին .

« Այասք , ասէր , ամոլք հուժկուք փըր-
կիչք Յունաց բանակին .

Զի՞ կայք , ո՞վ քաջք , զի՞ ձեզ պակնուլ
սառնասառոյց յերկիւղէն ,

Բա՞ այլ ուստէք չիք ինչ երկիւղ Տրոյ-
եանց յանսանձ 'ի բազկէն .

Զի թէ դոքա հրոսակ կապեալ անցին
ընդ մեծն ընդ պատուար ,

Սանձ Աքայեանք արկցեն դոցա ընդդէմ
կըքրեալք քաջաբար :

Բայց յայս մարզէն յոյժ զանգիտեմ կը-
րել ինչ մեզ ահագին ,

Ուր ինքն հեկտոր իբրև ըզբոց զօրավարէ
կատաղին ,

Խընդացեալ է և դիւցազանց զինքըն դնէ
ի կարգի ,

Ճոխապանծ է իբրու թէ ճետ ամալրո-
պայնոյն Դիոսի :

Յանկարծ , ո՞վ քաջք , ոք յանմահից սիրտ
ձեզ հաստէր անվէհեր ,

Եւ դուք աստէն արձանացեալ տայիք
այլոց քաջալեր .

Բա՛ ՚ի նաւաց դուք զայդ վերագ մո-
լեալն ՚ի հոյն սաստկութեան

Վանէք հեշտին , թէպէտ գրգողն իցէ
ինքնին Ողիմպեան " :

Արախոյս քաջացն անդ զայս կարգաց
երկրապարփակ մեծ Արքայն ,

Եւ գաւազան հրպեցուցեալ աղգեաց
կորով աստուածեան .

Զիրան նոցուն ըզձեռս և զոտս թէթև-
անդամս առագրէ ,

Եւ ինքն անդէն արագաթուիչ սլացաւ
իբրև ըզբազէ ,

Այն որ ճախրեալ յանմատուցից և ՚ի
ժայռից ամափայ ,

Ի դաշտ խոնարհ սրաթև թափով թըռուչ-
նոյն ըզհետ խոյանայ ,

Ճշգրիտ այնպէս էր սըլանալ վէհ Պո-
սիդոն արքային ,

Եւ Ուրէան արագն Այաս ծանեաւ ըզնա
առաջին :

Դարձաւ ձայն ետ առ մեծն Այաս Տե-
ղամոնեան փութապէս ,

«Ոք յանմահից անշուշտ , Այաս , յերկ-
նաճեմից էջ առ մեզ .

Նա տիպ առեալ ըզգուշակի , մարտ մեզ
մըղել հրամայէ

Մարտ առ նաւուք . բայց օն և օն նա
հաւահմայն կալքաս չէ .

Ծանեայ անդէն ես 'ի Թիկանց զննեալ
նորա հետ զոտին

Եւ ըզգընացս սրունից նորա . զի դէքն
հէշտեաւ ճանաչին :

Արդ քաջալանջ ես մարտ մըղել վառիմ
իբրև 'ի բոցոյ ,

Եւ իմ զարդիս ձեռք 'ի վերուստ և ոտք
վազէն 'ի ներքոյ » :

«Եւ ինձ , ո՛վ քաջ , Տեղամոնեանն ան-
դէն կըցեաց սատասիան ,

Եւ ինձ զարդիս ըզգեղարդեամբ ձեռքս
անվըկանդ բոցանան .

Ոգէք վառին , ոտք արագէն , անձկամ
յառնել նահատակ ,

Եւ վերագին ընդ հեկտորայ 'ի վէգ խա-
ղալ միայնակ » :

Ձայտոսիկ քաջքն անդ խընդացեալք
 յաշխոյժ մարտից մրցանաց

Ձոր դիւցաբար Երկրասասանն 'ի լանջ
 նոցուն բորբոքեաց :

Բայց Պոսիդոն ըզվերջ զօրուն զարթոյց
 'ի մեծ քաջալեր ,

Որ անդ 'ի նաւ դեգերէին այր կարեկից
 ընդ ընկեր .

Կային թախծեալ , քամակաբեկք , խոնջք
 և վաստակք , քրտնահար ,

Յոգւոց հանեն ըզՏրոյացւոց տեսեալ
 դըռոյթն ընդ պատուար .

Ըզգերարտօսրն հոսեն յաչացն հարեալք
 ցաւովք սայրասուր ,

Գո՞գ յուսահատք 'ի մահագոյժ լինեւ
 ժամէն անձնապուր :

Բայց Երկրաշարժն 'ի մէջ անցեալ ձայն
 փաղանգաց արձակեր ,

Նախ առ Տեւկրոս և առ Ղետոս մատեաւ
 կարդաց քաջալեր .

Ձայն Դիպիւրեայ ետ , Թոասայ և Պե-
 նեղեայ դիւցազին ,

Մերիոնին , Անտիլոքեայ . սոքաներկուռք
 են մարտին :

Այս հըզօրաց խրախուսական ձայն զայս
 կարդաց ազգեցիկ ,

« Մուժ ամօթոյս , աւանդ Յունաց մեր
 քաջաւոյգ պատանիք .

Յոյս իմ 'ի ձեզ էր, ո՛վ իմ քաջք, թէ մեր
անշուշտ նաւք փրկին .

Իսկ թէ և դուք ձեռն ըզմիջով, ժամ է
արդ մեր օրհասին :

Բաբէ բաբէ, հրէշից հանդէս, զոր աչք
իմ արդ զահանեն :

Տեսի՛լ դըժնի, զոր չասէի թէ մեզ երբէք
պատահեն .

Տրոյեանք խուժան տան մեր նաւաց,
այն որք յառաջ վատաբար

Խուճապէին հանգոյն եղանց որ 'ի մայ-
րիս են թափառ .

Էրէք անղէնք և ասիկաբք, որս և ճա-
րակ են ժանեաց

Ընձառիւծուց և յովազուց, որս և գայ-
լոց վոհմակաց .

Հանգոյն Տրոյեանք յառաջ քան զայս և
ոչ խուճն մի ժրտեցան

Արձանանալ ընդդէմ ուժոյ անյաղթ
բազկին յուճական :

Իսկ այժմ հեռի 'ի յոստանէն մարտ ընդ
նաւաց տան 'ի բուն ,

Այս է վընաս զօրավարին 2, այս վատու-
թիւն է զօրուն .

Զի զօրք գժտեալք ընդ իշխանին ըզնա-
ւատորմն ոչ փրկեն .

Նա յօժարին և անձնամատն ողջ գիտա-
պատ գող անդէն :

Թէսկէտ և բուն ճշգրիտ պատճառք ե-
կաց դիւցազն Ատրիդէս,
Այն որ ըզքաջըն նահատակ զըզուեաց
ըզմեծն Աքիլէս,
Համայն այնսկէս չէ մեզ արժան գըլալ
երբէք 'ի մրցմանց.
Դարման տարցուք, քանզի և փոյթ միտք
ամոքին քաջաղանց:
Իսկ ձեզ ապա վատել երբէք, չէ և չէ
ինչ գեղեցիկ,
Ձեզ որ ուջոյն էք բանակին քաջ ախոյ-
եանք և մարտիկ:
Ընդ անաւազն ես ոչ սրանիմ որ տեղի
տայ 'ի մարտէ,
Այլ ձեզ քաջացդ ընդ վերջոտնել ցաս-
նում վառեալ 'ի սրտէ:
Այ կնամարդիք, այդ վատութիւնդ ևս
ահագին ածցէ բօթ.
Արիք 'ի վեր վառեցարուք դուք 'ի ցա-
սումն և յամօթ:
Արդ մարտ վերջին, արդ մերձ նաւաց
ինքն է Հեկտոր նահատակ,
Առիւծացաւ դրանդիս փշրեաց ջախեաց
զամուր գըռնափակ »:
Հուր Պոսիդոն արկ 'ի Հելէնս. վառին
աշխոյթ պատանիք,
Փաղանգք հզօրք խիտ զԱյասիւք բակ
գործեցին գեղեցիկ.

Յոյժ գեղեցիկ, մինչ զի ինքնին թէ հան-
դիպէր անդ Արէս
Նոյն և Պալաս զօրաժողովն, յակճիւս
կային մեծապէս :

Ընտիր ընտիրքն արձանացեալք անդ Եկ-
տորեանց կան մընան ,

Ցանգապատեալ կուռ տէգ առ տէգ և
յաղթ վահան առ վահան ,

Անտառախիտք վահանակաց շաղապա-
տեալք ընդ ասպար ,

Եւ սաղաւարտ առ սաղաւարտ , հոճեալ
և այր կայր ընդ այր .

Իսկ դարգմանակքըն գիտապանծք մի
ըզմիով ծածանին ,

Ճաճանչ հատեալք 'ի ցրցունից վերջք
ընդ վերջից փողփողին :

Այսպէս փաղանգըն խիտ առ խիտ հա-
րըստեցաւ 'ի վայրին ,

Եւ 'ի բազկաց կորովաձիգ շարժին աչ-
տէք և ճօճին :

Կազմք և պատրաստք ըզմահազէնան 'ի
Թափ կըշուեւ շէշտակի ,

Եւ իբրև բոց բորբոքեցան գոլ խառնա-
մուխ 'ի մարտի .

Սահատակեալ Տրոյեան գնդաց խու-
ժեն կոհակք վէտ 'ի վէտ ,

Եւ յառաջոյ էր տիտանեանն Հեկտոր
ահեղ կարապետ .

Զորօրինակ մահահրաւէր վէմ՝ Թաւալ
 գլոր 'ի լեռնէ,
 Զոր գետօրէն ուղիս ձմերայնոյն յարտաւ
 նէն դըզըրդէ,
 Զի ջաղբ անձրև հար փեռեկեաց ըզլուռ
 հաստածն ըզժայռի,
 Եւ ահագին վէմըն զերծեալ գահէ 'ի
 գահ հոլովի,
 Մայրք ընդ նովաւ հեծեն ճայթմամբ
 բունք ճարճատին յազթ ծառոց,
 Գամ քան ըզգամ վայրաբերի ընդ ահա
 բեկ Թաւալոց,
 Վազեալ այնպէս մինչև 'ի դաշտ վէմն
 հասանէ անարդիլ,
 Իջեալ նստի, Թէպէտ սարսես, ոչ ևս 'ի
 գիւ գայ 'ի գիւ³,
 Այսպէս Հեկտոր ամեհացեալ մինչև 'ի
 ծովն հալածել,
 Մահու գուժկան 'ի բուն բանակն անձ
 կայր մըխիլ անարգել,
 Այն ինչ եհաս մտ 'ի ճակատ կուռ փա
 ղանգին աննըկուն,
 Վարանեցաւ հսկայազօրն ոսնակառեաց
 'ի ժամուն :
 Հեղենք անդուտ 'ի բունն առեալ երկ
 սայր սուսեր և նիզակ,
 Արձանացան կըշիւ խոցել վանել յան
 ձանց ըզվերագ :

Մինչ յանհընարս մըտեալ Հեկտոր վերջ
 ոտնեցաւ մոլեգին ,

Դարձաւ և ձայն քաջաց քաջաց Տրոյ-
 եանց կարգայր ահագին .

« Տրոյեանք , Լիւկեանք , Դարդանք մար-
 տիկք արձանացէք քաջաբար ,
 Իմոյն այժմիկ Թափոյն Հելլենք ոչ ժու-
 ժացեն մինչ 'ի սպառ .

Թող կուռ փաղանգս հարըստեսցեն հո-
 ծեալ իբրև աշտարակ ,

Արագ արագ խուճապեսցին յաղթահա-
 րուստն յիմ նիզակ .

Վատթարեսցին , եթէ արգեօք ահեղն 'ի
 գիս աննըման ,

Ձիս այժմ ինքնին փայլակնացոյց Հե-
 րոյ փեսայն Ամպրոպեան » ,

Խրախոյս Հեկտոր զայս ետ զօրուն և
 բոց 'ի սիրտ բորբոքեաց ,

Եւ Պրիամեանն Ռեփորոս գիմեաց 'ի
 մարտ քաջալանջ .

Ձամրածածուկն 'ի հանդիպոյ առ և
 կալաւ զիւր ատար ,

Եւ յապահով 'ի յասպարէն հանդար-
 տաքայլ ընթանայր :

Դիտեաց անդուստ , տէգ Մերիոն ճօ-
 ճեաց հրափայլ գեղարդան ,

Ձրգեաց կըչիւ յամրածածուկ քեմրև-
 տապասն 'ի վահան .

Հար կորովի, այլ թափ չանցոյց յարջա-
ռամորթն ասպարին,

Չև խորամուկս երկայն աշտէն խորտա-
կեցաւ 'ի սայրին .

Ճեպ Դեփոբոս ետ և զասպարն առ-
բացագոյն յիրանէն ,

Չահի հարեալ Մերիոնին կորովաձիգ-
նիզակէն :

Տեղի դիւցազն ետ Մերիոն, 'ի խուան ե-
մուտ զայրագին

Չի յաղթութիւնն ել 'ի դերևս և սայր
բեկաւ աշտէին :

Յարեաւ անդէն և ընթանայր նաւաց
վրանացն 'ի բանակ ,

Անուլ զպահեստն 'ի խորանէն զերկայ-
նատէգն ըզնիզակ :

Բայդ անդ 'ի դաշտ մարտ բորբոքեալ
խօշիւն գուժէր ահաւոր ,

Յարեաւ Տեւկրոս քաջ նահատակ, զայր
մի եհար փառաւոր .

Եր սա Խմբոսըն բառացին ներհունն
հըզօր 'ի մարտի ,

Սա քաջորդի բազմահարուստն 'ի ճետ
ձիոց Մենատրի .

Մինչ չև եկեալ Աքայեցւոց բնակէր
Խմբոս 'ի Պետէ ,

Չանհարազատ կոյս Պրիամուն Մեգի-
կաստէն կին ածէ .

Մինչ նաւքն եկին, երթ յեղին և զօ-
 րութեամբ քաջանայր,
 Առ Պրիամոնն կայր նա շքեով արքայոր-
 դւոցն հաւասար .
 Ըզսա Տեւկրոս հար ընդ ունկամբն յեր-
 կայնատէգ նիզակի .
 Քարչեաց զաշտէն, նա թաւալգլոր ան-
 կաւ իբրև ըզհացի .
 Որ 'ի բացուստ յերևանի մեծի լերին
 յարուան
 Տասարահար կայ գետնաքարչ 'ի սա-
 ղարթուց փափկութեան,
 Սապէս Իմբրոս տասալեցաւ և զէնք
 գունեանք հնչեցին .
 Կապտել ըզզէնան անձկայր Տեւկրոս,
 դիմեաց 'ի նա մոլեգին :
 Կանխեաց Հեկտոր և տէգ հրաչէկ ձը-
 գեաց վերագն ահափեա,
 Տեւկրոս դէտակն 'ի թափ տիգին անգ
 վայրիկ մի տեղի ետ .
 Կըշիւ թափոյն գնացեալ 'ի լանջն հար
 զԱմփիմաք դիւցազնեան,
 Զայն ինչ մըտեալն յասպարէս զորդին
 Կիտեայ Ակտորեան .
 Անկաւ դոփեաց, զէնք շաչեցին . Հեկ-
 տոր սրացաւ 'ի վայրին
 Կապտել զչըքնաղ զամրածածուկն ըզ-
 գլխանոց դիւցազին .

Լ՛ճապարեաց Այաս ըզձիգն ասեղա-
աստ նիզակին .

Չազգեաց յիրանն , համակ երկաթ գօ-
շիւք ծածկեալ էր յանձին .

Չկումք զասպարին եհար ասեղ և ըզ-
վերազն ընկըրկեաց ,

Նա ըզկրկին ըզգիակոճս ելլք 'ի ձեռս
հէլէնաց :

Քաջ Մենեսթոսն և Ստիքիոս Աթենա-
ցոց պետք աւագ

ՉԱմփիմաքոս առին բերին յԱքայեցւոցն
'ի բանակ :

Իսկ Ղիմբրիտըն դիտապաստ ըզքաջոր-
դին Մենտորեան

Տարան յինքեանս կրկին Այասքն ասե-
ղագոռքն աննըման :

Որպէս կրկին յալթ առիւծունք 'ի սրա-
ժանի բարակաց

Չայծ մի կապտեալ վարեն 'ի թաւս ընդ
մացառուորս մայրեաց ,

Կալեալ յահեղ 'ի ծամելիս բարձր 'ի յեր-
կրէ զայն տանին ,

Այսպէս Այասք վերամբարձեալ ըզնա
զննուց կապտեցին :

Իսկ անդ Տեւկրոս հարեալ յողին յԱմ-
փիմաքեայն օրհասէն ,

Առեալ ըզգլուխն Իմբրիտսին կտորեաց 'ի
գիրգ յառանկն .



04882

267

Առ և ձրգեաց իբրու գնդակ գըլեաց 'ի
մէջ բանակին ,

Կառափն 'ի գիւ ընդ ապաժոյժ անկաւ
առ ոտս Հեկտորին :

Ըմփիմաքեայն ընդ օրահաս վեհ Պոսի-
դոն սրբանեցաւ ,

Տեսեալ ըզթոռն անկեալ տապաստ մար-
տին շըշուկն յայն ամբաւ :

Յարեաւ , հորդէր ուղի 'ի բունն Աքայե-
ցւոց բանակին

Խրախոյս ձայնէր , և Տրոյացւոց աղէա
նիւթէր 'ի սրտին :

Ընդառաջեաց Իդոմենէս հըզօրն 'ի ձիգ
նիզակի ,

Որ դարձ առնէր նա յայց ելեալ իւր վի-
րաւորն համհարզի .

Չայն վիրաւոր այն ինչ ընկերքն ածին
առ նա 'ի մարտէ ,


Էր նա խոցեալ 'ի կարթ սրունից 'ի սայ-
րասուր նիզակէ :

Առ ըզխոցեալն Իդոմենէս և յանձն ա-
րար բըժըշկաց ,

Դարձ 'ի վրանէն ճեպէր 'ի զօրն . էր նա
մարտին անձկայրեաց :

Բարբառեցաւ առ Իդոմէն երկրասասան
մեծ Աքայ ,

Տըպաւորեալ զբարբառ ձայնին զԱնդրե-
մոնեան Թոասայ .



Գրքարան

ԿԳԵ

Էր այս թոռս ողջ 'ի Պէւերոն և 'ի բար-
ձունն Կողիւդոն

Ետողացւոց ըզթապ կապեալ . գոգ դիցն
ուհէր ըզսաշտօն .

“Վրետաց ուշիմդ Իդոմենէս , ո՛ւր սպառ-
նալիքն յանդ ելին ,

Զոր անդ ուրեմն Աբայեցիք Տրովադա-
ցւոց սաստէին ” :

“ Չիք , ո՛ թոռս , կրկնեաց անդէն Կրե-
տաց արքայն քաջատէգ ,

Չիք յանցուցեալ մարդոյ ցայսօր , որչափ
եմ ես իրազեկ .

Կըռուիմք ողջոյն . չիք որ յահէն կասեաց
իբրև վատ արանց ,

Եւ ոչ դարձեալ ոք յուլացեալ խուսէ
մարտին 'ի քըրտանց :

Բայց թէ թերևս այս է կընքեալն Արա-
մազդայ արքային ,

Զի տարաշխարհք Յոյնք յԱրգոսէն չի-
ջեւափառք աստ անկցին :

Այլ ալէ դու , թոռս մարտիկ , ցանգ դու
վատաց քաջալեր ,

Օ՛ն և զարդիս իրախոյս կարդա , վա-
ռեա 'ի մարտ անվէհեր ” :

“ Լո՛ւր ինձ արքայ , Երկրասասանն ետ
նրմա ձայն իրախուսի .

Ո՛վ , թէ երբէք մարդ ողջանդամ 'ի մեծն
յԱրգոս ոչ դարձցի ,

Այլ աստ տապաստ շանցըն ժանեաց
 խրախճան լիցի բերկրարար ,
 Մարդ, որ այսօր 'ի կրուուեւոյն տեղի տա-
 ցէ կամակար :

Բայց աղէ դու , երթ և վառեաց , դար-
 ձիր այսրէն միւս անգամ ,
 Փորձ փորձեսցուք , թէպէտ երկուք , թե-
 րևս իցեմք պիտուան .

Ազգէ քաջիկ ոյժ միացեալ նա և արանցն
 անաւագ ,
 Իսկ մէք 'ի մարտ և ընդ քաջաց երեսա-
 նամք նահատակ " :

Օ այս Պոսիդոն , և դէմ եդեալ խառ-
 նէր մարտին 'ի խուժան ,
 Դիմեաց անդուստ և Իդոմէն գեղեցկա-
 շէնն յիւր խորան :

Հրաշէկ ըզդէն արկաւ զիւրեաւ առ տէգ
 կրկին գեղարգան ,
 Յարեաւ խաղալ և ընթանայր իբրև տե-
 սիլ փայլական ,

Զոր Ամպրոպեան շանթէ աջուի յՈ-
 զիւմպոսէն արփաւոր ,
 Նըշան ահեղ տայ մահացուաց , և են ցու-
 մունքն ահաւոր ,

Այսպէս զինուցն , յորժամ խաղայր ,
 փայլ հատանէր 'ի լանջաց .

Եւ տակաւին 'ի խորանէն չէր նա այնչափ
 տարակաց ,

Անդէն համհարզն իւր Մերիոն ընդա-
ռաջեաց քաջարին ,
Որ 'ի Ժամուն յուղի անկեալ գայր 'ի խըն-
դեր նիզակին .

Չայն ետ նրմա մեծն Իգոմէն , « Դու ո՛վ
Մողեան քաջորդի ,
Իմ արագոտըն Մերիոն , ինձ սիրաբուն
փարելի ,

Ձի դու եկիր լքեալ ըզմարտն , աղէ ո՛վ
քաջ , ինձ ձայն տուր ,
Խո՞ց ես արդեօք , և չարչարէ ըզքեզ փը-
քին սայրասուր .

Կամ թէ արդեօք հրեշտակու թեամբ գան
ինձ բերել 'ի զըուցաց ,

Այլ բազմոցի չեն ինձ արդ պէտք . մարտ
ես խնդրեմ մրցանաց " :

« Արետաց աւագ Իգոմէնէս , Մերիո-
նէս կրկնեաց ձայն ,

Տէգ մի խնդրեմ , իցէ՞ թերևս քեզ 'ի սա-
հեստ 'ի խորան .

Առ ից ես զայն , զի ես զիմ տէգ խորա-
կեցի 'ի սայրին

Քաջամարտկին Դեփոբոսի վարսեալ 'ի
կուռ ասպարին " :

Կրկնեաց Կրետաց խորհրդականն Իգո-
մէնէս քաջ արքայն ,

« Թէ 'ի խնդիր ես դու տիգաց , գտցես
ոչ մի այլ քրսան .

Ի խորանիս կան առ որմովք հրաշէկ
փայլունք իբրև բոց .

Տէգք են Տրոյեանց , զոր ես կապտեմ 'ի
գիտապաստ անկելոց .

Ձի խառնամուխ լեալ 'ի նոսա մարտ ոչ
մըղեմ հեռաւոր .

Վասն այն և շառք են իմ նիզակք շատ
և ասպարք կրմբաւոր .

Շատ սաղաւարոք և վարապանք փայլակ
նացայտ ճաճանչեն » .

Լըւաւ ուշիմըն Մերիոն , ձայն անդրա-
դարձ ետ անդէն .

« Են և իմ շատ կապուտ Տրոյեանց 'ի
խորանին , 'ի նաւին .

Այլ 'ի բացեայ կան այդդքիկ , առ ձեռն
ունեւ չէ հեշտին :

Եւ իմ երբէք չէ վատացեալ 'ի փորձ զը-
նուց ահաւոր ,

Այլ գիմագրաւ ընդ նահատակս 'ի մարտ
խառնիմ փառաւոր :

Թերևս թէ մարդ ոչ քաջ զննեաց 'ի
մարտընչելն իմ անդուլ ,

Բայց իրազգած ըզքեզ կարծեմ , իբրու
'ի քէն չէ զանխուլ » :

« Օ արու թիւն քո , կրկնեաց արքայն ,
գիտեմ իսկ քաջ ես ինքնին ,

Ինձ աստանօր , ո՛վ Մերիոն , զինչ յուշ
ած եւ պէտք էին :

Դարանն է փորձ . աղէ կացցուք մէք
 .բաջընտիրքս 'ի դարան ,

Ձի այն ճշգրիտ է փորձաքար .բաջորե-
 րոյն ընտրուածեան .

Անդ իսկ և իսկ այր վատ արանց զանա-
 զանի 'ի քաջէ ,

Ձի կնամարդոյն 'ի դարանի գոյն փոփո-
 խի 'ի գունէ .

Չէ և նորայն սիրտ և ոգին չէ անասան
 'ի կայի ,

Ծունկք կըթոտին , ինքըն կըծկեալ ծա-
 լեալ ըզծունգսն բազմի .

Սիրտըն վազէ յահէ մահուն և զատա-
 մունս կափկափէ ,

Իսկ քաջարին ոչ գոյն փոխէ և ոչ սպակ-
 նու ինչ յահէ .

Նա դիմագրաւ անցեալ նստի դարանա-
 մուտ առաջին ,

Անձկայ ժամուն խառնիլ արագ բազմա-
 վըտանգ 'ի խազմին :

Արդ մէք ողջոյն դարանակալ դիտեմք
 ըզքեզ .քաջարի ,

Եւ է կորով քոյին բազկաց իբր անվը-
 կանդ գովէլի .

Ձի և 'ի մարտ երբ նեւ կամ տէգ ըլ-
 քեզ կալցի նըստտակ ,

Քեզ 'ի թիկանց չանկցի սըլաք 'ի .քո ծոծ-
 րակ կամ քամակ ,

Այլ շէշտակի կամ 'ի լանջ քո հարցէ
ըզքէզ կամ 'ի փոր ,

Երբ խառնամուխ լիցիս 'ի մարտ իբր ա-
խոյեան քաջազօր :

Բայց աղէ մեզ մի աստ յերկար բանդա-
գուշէլ զերթ մանկտի ,

Գուցէ ըզմեզ ոք յեկէլոց անճահ բանիւք
լուտասցի :

Արի փուլթա , մուտ 'ի խորան ան հաս-
տամուրն ըզնիզակ " .

Լըւաւ , ճէսլեաց Մերիոնէս իբրու զԱ-
րէան այն արագ .

Յապուրակի 'ի խորանէն ըզկուռ զաշտէն
առ եբարձ ,

Վազեաց ըզհետ Իգոմենեայ յանձուկ
մարտին մրցանաց :

Որպէս Արէան արենախանձ լեալ խառ-
նամուխ 'ի մարտին ,

Ըզհետ յառնէ և անձկալին իւր այն զա-
ծածն ահագին ,

Սա է այն խօշն , որ Արհաւիրք անուն
նորա յորջորջի ,

Որ և ահիւ սրակուցանէ և զայր սրտեայն
քաջարի ,

Ի Թրակիոյ վառեալք խաղան ամուք
գուժկանքս այս արեանց ,

Ընդ Եփիւսեանց գան և խառնին կամ
Փլէգացւոցն քաջաց 4 ,

Բայց և ազգացն այն կրկնակի ակըն նո-
քա ոչ ածեն ,

Մինչև յանկարծ միում նոցա շուք ըզ-
մարտին հարկանեն ,

Այսպէս ամուք այս զօրավարք 'ի մարտ
էլին և 'ի վէգ ,

Քաջ Մերիոնն և Իգոմէն վառեալք 'ի
զէն 'ի հրաշէկ :

Բայց առաջին հարցաբընին լինէր անդէն
Մերիոն .

« Քաջ Տեւհաղեանդ ասա , ո՛ւր մէք հար-
ցուք մարտին ըզսաշտօն .

Արդեօք յաջոյ 'ի թև զօրուն կամ թէ
արդեօք 'ի միջոց ,

Կամ թէ յաւէտ 'ի թև ձախոյն , ուր մարտ
ծըփայ ալէկոծ :

Կարծեմ , անշուշտ նիզակակցի պէտք են
Յունաց յայս մարզէն » .

Չայս Մերիոն . և Կրետացւոց կընքեաց
արքայն Իգոմէն :

« Ի միջոցին Այսպէն և այլք կան զօրա-
վիգ 'ի մըրցման ,

Կայ և Տեւհրոս ուղմիկ հուժկուն նե-
տողն Յունաց աննրման .

Դոքա շատ ինչ վաստակաբէկ քիրտն հա-
սուցեն Հեկտորի ,

Որչափ և գոռ իցէ մարտիկ որչափ և յոյժ
կորովի :

Թող գողացի, բայց զոյժ գոցա տադ-
նապեսցի 'ի վանեւ:

Ի յազթ բազկացն ինք վանեսցի մի հուր
'ի նաւս արկանեւ,

Թէ ոչ Դիոս ինքնին արկցէ անդ խան-
ձող մի բոցակէզ:

Զի մեծն Այաս մահկանացուաց չառնէ
երբէք ինչ երես:

Մարդ, որ ուտէ հաց Դեմետրեան և
զոր երկաթըն խոցէ

Եւ զոր վէմ մեծ բաւէ ջախեւ, նա յայն-
պիսեաց ոչ խուսէ

Նա ակն և ոչ քաջին ածէ այն ահեղին
Աքիլէայ,

Այլ կայ կրուռի. Թէպէտ 'ի վազս զու-
գակըչիւ չէ նրմա:

Արդ մէք ձախոյն խառնեալք 'ի Թև
փորձ քաջութեան փորձեսցուք,
Թերևս ումէք տացուք մէք փառս կամ
ոք հարցէ մեզ ըզուք”:

Ասաց, խաղայր Մերիոնէս 'ի Թուխս ո-
տից Արեսեան,

Մինչև 'ի Թևն 'ի սոյմանեալ հասին զօ-
րուն 'ի խուժան:

Եկն յերևան Իդոմենէս հրեղէն ցորմանցն
'ի տիպար,

Անդ առ ընթեր և համահարզն 'ի ղէն
հրաչէկ բոցանայր:

Տեսին Տրոյեանք , խրախոյս ձայնեալ
 խուժեն 'ի նա խմբովին ,
 Եւ հաւասար 'ի խելս նաւաց բորբոքե-
 ցաւ բոց մարտին :
 Որպէս հողմոցն յուժգնահընչող մըրբիկ
 սաստիկ փոթորկի
 Յաւուրս ջերմինս , յորժամ փողոցք կու-
 տին յամբաւ 'ի փոշի ,
 Շընչեալք այնպէս և ամբառնան զամբ
 ըզփոշւոյն ահագին ,
 Հանգոյն և մարտն 'ի վեր 'ի վայր մըրբ-
 կեցաւ 'ի դաշտին :
 Բոց ամբարձաւ , այր ընկերին 'ի սայր
 սուսեր մահ գուժեաց ,
 Եւ բազմախուռն 'ի նիզակաց Արէս պա-
 կոյց մարգախանձ .
 Աք բըլջանան 'ի ճաճանչել սաղաւար-
 տից փայլական ,
 Ի բոց զրահից և ասպարաց , մինչ ընդ ի-
 րեարս խեթկեցան .
 Սիրտ ապաքէն է ապառուժ , որ յայն 'ի
 շտապ տագնապին
 Անդորր ոգւով կայ 'ի զընին և ոչ աղբ
 գալարին :
 Օ այսօրինակ այլախորհուրդք անդ Ձը-
 րուանեանք վէհք կրկին ,
 Քաջորերոյն այն դիւցազանց աղէտս ամ-
 բաւ նիւթէին .

Խնդրէր Դիոս շուք տալ Տրոյեանց և
 Հեկտորայ յայն մարզէ ,
 Քանզի կամէր զի Աքիլլէայ արագոտին
 շուք հարցէ .
 Ոչ թէ ըզՅոյնս ողջ վատթարեւ Եղիոնին
 յանդիման ,
 Այլ զի Թետեայ տալ մեծարանս և իւր
 որդւոյն աննրման :
 Իսկ Պոսիդոն յիւր յալէտանջ ելէալ
 ծովէն գալտաբար ,
 Ի յայս մարզէ ձայն տայր Յունաց զրա-
 հէր 'ի մարտ բոցավառ :
 Քանզի նրկուն տեսեալ ըզՅոյնս ոչ հան-
 գարտէր 'ի սրտին ,
 Եւ խեթացեալ ընդ Արամազդ էր նա
 ողջոյն զայրագին .
 Թէպէտ և զարմերկուց սոցա էր նոյն և
 մի և նոյն ճէտ .
 Բայց անդրանիկ էր Արամազդ էր և ու-
 շիմ բազմագէտ .
 Վասն այն կրրսերն ոչ ժրտեցաւ օգնել
 Յունաց յանդիման ,
 Այլ թաքթաքուր դրդէր ըզղօրն , առեալ
 մարդոյ կերպարան :
 Այսպէս սոքա ճրդճրգեւոյ ըզլարն աս-
 տի և անտի ,
 Ըզլար կրուուոյն զայն ուժգնապիրկ ըզ-
 հաւասարն 'ի մարտի ,

Իբրու թէ վարմ անդ 'ի վերայ արկին կըս-
կին այն ազանց ,

Շաղեալ անլոյծ անխըզէլի , որ ծունկ
կըթոյց ըզբազմաց :

Բայց Իդոմէն թէպէտ յեցեալ տիս յա-
լէխաուն հասակին ,

Ի գլուխ կացեալ ձայն ետ Յունաց , ահ
արկ Տրոյեանց բանակին .

Նա զՈթրիւոնն զխտապատտ 'ի մահ
մատնել քաջացաւ ,

Ձայն ինչ եկեալն 'ի Կաբեսեայ մեծի
մարտիս 'ի համբաւ .

Սա զՊրիամոն կոյսն անօթխտ ըզկաս-
սանդրէն կին խընդրեաց ,

Ի Տրոյիոյ վանել ըզՅոյնս , գործ մեծ ան-
շուշտ , բան կըռեաց .

Բզկոյս չքնաղն իւր դստերաց տալ խոս-
տացաւ ծերունին ,

Նա խրախուսեալ 'ի բան խոստմանն ճի-
գըն թափէր 'ի մարտին :

Սիգայր խաղայր . ետես կըշուեաց Իդոմե-
նէս հար զաշտեայն ,

Եւ 'ի հարուածն ոչ հանդուրժեաց նորա
պըղինձ վարապան .

Անցոյց 'ի թափ և յորովայն ըզկորովին
տէգ վարսեաց .

Անկաւ դոփմամբ , Իդոմէնէս ոտնհար ե-
լև և հեգնեաց .

«Քեզ, ՈՒԹՐԻԼՈՆ, վերոյ բնաւից շուք ձօ-
նեցից գերարուն ,

Թէ ողջ լցցես զոր խոստացար դու Դար-
դանեան Պրիամուն .

Նա զիւր կուսան քեզ խոստացաւ , մեք
ևս անսուտ տամք քեզ բան .

Տամք քեզ 'ի հարսն ածեալ յԱրգեայ
կոյս զԱտրեսեանն աննըման ,

Թէ զԵղիոն դու 'նդ մեզ վանես . արդ-
՞ն ըզհետ է՛կ արագ ,

Դաշն հարսանեաց դիցուք առ նաւս . չէ
մեր օժիտն անաւագ » :

Լսաց դիւցազն , և զոտանէն առեալ
քարչէր 'ի դաշտին ,

Անդուստ հետի մեծն Ասիոս սլացաւ 'ի
վրէժ քաջազին :

Ըզսէդ նրժոյգսն կառավարն ունէր նո-
րա 'ի Թիկանց ,

Եւ ինքն անձկայր Իդոմենեայ տալ մա-
հացուն ըզհարուած :

Աճապարեաց Իդոմենէս յուսն 'ի ներքոյ
կըզակին

Կըշռեաց եհար և խորամուխ ըզտէգն ան-
ցոյց նիզակին .

Տապալեցաւ մեծն Ասիոս , անկաւ իբրև
ըզկազնի

Կամ կաղամախ և կամ իբրև ամբարձու-
ղէշ մեծ սոճի ,

- Զոր 'ի լերինս հարուն տապալ 'ի սայրա-
սուր 'ի տապար ,
Եւ պատրաստեն նաւաց 'ի սէտս ատաղ-
ձագործք արք ճարտար ,
Այսպէս տապաստ նա առ կառօք ժա-
նիս կըրճէր ահագին ,
Եւ մագըլցէր հանդէս ձիոց զարինա-
խաուն ըզփոշին :
Յապուշ հարաւ անդ կառավարն ընդ
աղեկէզ տեսարան ,
Եւ ոչ բաւեաց դարձ նըժուգաց տալ
վասն անձին փրկութեան :
Վաղեաց արին Անտիղոբոս , կըռեաց ըզ-
ձիգ զաշտէին ,
Եւ զօրավիգն ինչ ոչ նըմա պատեանն ե-
կաց պըղընձին .
Հար սաստկութեամբ 'ի մէջն 'ի պօրտ
շամիրեաց զաշտէն ըզհրափայլ ,
Նա գեղեցիկ յաթոռակէն 'ի վայր անկաւ
հատկըլեալ :
Հապա զնժոյգսն Անտիղոբոս հան 'ի
Տրոյեանց փութապէս ,
Եւ սպառազէն յԱքայեցւոց վարէր զօ-
րուն 'ի հանդէս :
Բայց Դեփոբոս աղեկիղեալ յԱսիոսին
օրհասէն ,
Վաղեաց յառաջ մօտ յԻգոմէն փայլակ-
նացաւ 'ի յաշտէն .

Ի նա դէտակն Իդոմէնէս խուսեաց յա-
հեղ հարուածոյն .

Եւ յասպարէն ամրածածուկ հովանա-
ցաւ նա ողջոյն .

Էր այն ասպար կուռ պղղընձեայ և կրկ-
նափոկ քեմըխտեան .

Վրձկեալ այնպէս ողջ ընդ նովաւ , վե-
րաթըռեաւ սուր աշտեայն .

Խուն մի 'նդհարեալ յասպարն աշտէն
ձայն մի հնչեաց ապիկար ,
Բայց և այնպէս 'ի քաջ բազկէն ոչ սրլա-
ցաւ վայրասպար .

Շէշտ զԻպպոսեան մեծն Իսսենոր ընդ
առագաստն հար սրտին ,

Խոցեաց ըզեարդն և ծունկք քաջին ա-
րագ արագ կըթոտին :

Խնդաց յարկածըն Դեփորոս ձայն մի
կարդաց մեծասաստ ,

« Զարգիս , ասէր , մեծն Ասիրոս աստ ոչ
անվրէժ կայ տապաստ :

Նա դըժոխոցն անդընդափակ իջեալ առ
դուրս խաւարին ,

Զայս ուղէկից , զոր ես ետու , տեսեալ
ցնծայ 'ի յոգին » :

Օ այս պանծացաւ . Յոյնք խոցեցան 'ի
պարծանաց քաջազին ,

Եւ Անտիոք անդ այլ յայլմէ ամբոխե-
ցաւ 'ի սրտին .

Գեղան աղէքն, և նա համայն զընկերն
անտես ոչ արար,

Վաղեաց 'ի մէջ ըզդիակամբն հովանա-
ցոյց զիւրն ասպար,

Մինչ մըտերիմք քաջն Ալաստոր և Ե.քի-
սեան Մեկիստէս,

Բարձեալ ըզնա տարան 'ի նաւս և ջայ-
լեցին դառնապէս :

Բայց Խդոմէն վարազացեալ չքսայր անդ
դուլ և դադար,

Վառէր անշէջ տալ զոք Տրոյեանց յաշ-
խարհակուլն 'ի խաւար .

Կամ Թէ ինքնին անկցի դոփմամբ դիա-
թաւալ 'ի մարտին,

Եւ 'ի Յունաց ըզմահաբեր ժամ վանես-
ցէ զօրհասին :

Էր անդ սիրունն այն փառաւոր որդի
քաջալն Եսիտեայ,

Անուն նորա Ալկաթոոս Անքիսեսին էր
փեսայ .

Ձերիցագոյնն 'ի գըստերաց զԽպպողա-
մէն ած 'ի կին,

Կոյս սիրասուն 'ի տան ծնողաց էր հօրն
և մօր նազէլին .

Վէհ էր բնաւից համատիոցն 'ի գեղն, 'ի
դործ, 'ի հանճար,

Ձոր և 'ի մեծն 'ի Տրոյիա այր բառացին
կին արար .

Բզսա բազկին իդոմենեայ մեծ Պոսիդոնն
առ մատնեաց .

Բզլիճ լուսոյն նախ մըթագնեալ, զան
դամնն առոյգ ջըլատեաց .

Զի 'նդարմացեալ, նա ոչ փախչել ոչ
խոյս բաւեաց տալ անգամ,

Կայր իբրև ծառ ամբարձուղէշ կամ իշր
արձանն անսասան .

Հաս իդոմէն, 'ի լանջամէջն հիբացելոյն
հար նիզակ ,

Զամրապահեստըն փրկութեան խրզեաց
զերկաթ պահպանակ .

Անդուստ ձայն բամբ 'ի տիգախոց 'ի
սլատենէն արձակի ,

Եւ Ալկաթոս անկաւ դոփմամբ մըլեսալ
նիզակն 'ի սրտի .

Սիրաըն տրոփէր, մըլեսալ տիգին անդ
տայր ճոճանս առ 'ի ծայր 5 ,

Մինչև 'ի սպառ զէնն Արեսեան յուժգին
թափոյն առ դադար :

Պարծանս յայնժամ 'իդոմենէս կարգաց
'ի ձայն մեծապէս .

“ Արդ այս հաշիւ, ո՛ր Դեփոբէ, զիմրդ
արդեօք թըլի քեզ .

Շան է առ մին զերիս տապաստ մեզ ար-
կանել քաջաբար .

Ի զուր ուրեմն ինքնին, այր դու, ընդ օդ
բախեալ պանծացար .

Արի 'ի մօտ բանդագուշեալք եկ կաց
հանդէս ինձ արձան ,

Տեսցես քաջիկ , ճեաս Որմըզդայ զխորդ
կամ քեզ ախոյեան :

Քանզի զՄինովս կրետաց իշխան ծընաւ
Դիոս առաջին ,

Մինովս ծընաւ զայրն անարատ Դեւկա
լինն զիւր որդին .

Դեւկալինն զիս ընծայեաց բիւրուց կրե
տաց սէտ ազգաց ,

Արդ նաւք ածին զիս քեզ և հօրդ և Տրոյ
ացւոց 'ի հարուած ։ :

Եւ զայս գոռաց . և Դեփոբեայ վարա
նեցան միտք կրկին ,

Արդեօք առեալ քաջ զոք 'ի յօդն 'ի վէդ
խաղալ ընդ քաջին

Կամ թէ արդեօք ինքնին միայն , 'ի յաչան
եդեալ զօրահաս .

Մինչև ուրեմն հաստատեցաւ ձայն տալ
առ մեծն Ենէաս :

Եգիտ ըզնա , կայր անդ գիւցազն 'ի վեր
ջապահն 'ի զօրուն ,

Զի ցանդ սրբոնեալ կայր Ենէաս ընդ ար
քայի Պրիամուն .

Շուք չընծայէր նրմա արքայն 6 , թէսէտ
էր նա քաջարանց .

Մօտ առ նրմա կաց Դեփոբոս արագաթև
ձայն կարգաց .

« Քաջդ Ենէաս, փառաց զարմիդ երես
 առնել թէ պէտք են,
 Ժամ է զարդիս. կայ աւագիկ տապաստ
 քեռայրն յօրհասէն.
 Ո՞չ Ալկաթոս ըզքեզ մանկիկ սընոյց առ
 քեռն 'ի յարկին,
 Օ՞ն վրէժ առցուք յԻդոմենեայ, որ հար
 ըզնա 'ի յոգին » :
 Լսաց, անդէն և յԵնէաս հուր 'ի սրտին
 բորբոքեաց,
 Հնապա արին շէշտ յԻդոմէն գիմեաց 'ի
 վէզ մրցանաց :
 Այլ ոչ այնպէս Իդոմենէս պակեաւ որ
 պէս ըզտըլայ,
 Եկաց անշարժ որպէս վարազ բարձանց
 լերանցն 'ի վերայ.
 Յորժամ դազանն յանձնապաստան կա
 ցեալ ուրեք յամայի,
 Սպասեալ մընայ անդ հրոսելոյ շատ
 խառնամբոխ խուժանի,
 Լարեալ զըստեն 'ի քամակին և քըստմնա
 փուշ դիզանայ,
 Եւ բոցակէզ աչք վարազուն կայծակնա
 ցայտ ցողանայ,
 Ահ արկանէ մարդկան և շանց ժանիս
 սրէ սաստկուժեան,
 Կըման անշարժ կայր Իդոմէն քաջին Ե
 նեայ յարձակման :

Դարձաւ և ձայն ետ ընկերաց Ասկալա-
փեայ, Ափարին,

Անտիղոքեայ և Դեպիւռեայ, նոյն Մե-
րիոն համհարզին .

Ջայս նահատակս նա 'ի ժամուն վա-
ռեաց 'ի մեծ 'ի խրախոյս ,

«Աղէ գուք այժմ, ո՛ր բարեկամք, լնք ա-
ջակից միայնոյս .

Արդ յարագոտն Ենէասայ տագնաոպ
յորդէ արհաւրաց ,

Դիմեալ գայ այրն երեսաւոր և 'ի մար-
տի մարգախանձ .

Դա և ծաղկեալ ունի ըզտիսն , որ ոյժ
ազդէ կորովի .

Ո՛վ, ընդ ոգւոյս և իմ բազուկ նոյն էր 'ի
տիս հասակի .

Արագ յայնժամ կամ նա կամ ես շուք
տանէպք ըզմարտին » .

Ասաց արքայն , յարեան համհարզք և
միաբան ճեպեցին :

Մատեան կացին նիզակակից կալեալ
զասպարս 'ի խոնարհ .

Անդուստ և ձայն մեծն Ենէաս խրախոյս
քաջաց իւր կարգայր .

Չայնեաց զՊարիս , ըզԴեփորոս և զԱ-
գենոր քաջարին ,

Որք ընդ նրմա Տրոյեանց ազգին էին իշ-
խանք բանակին .

Ելեալ յայնժամ և բազմամբօխ խուժան
 ըզհետ ետ հորդան ,
 Որպէս ոչխարք ըզհետ խոյին գան յարօ-
 տէն յաւազան ,
 Գան և խըռնին և 'ի զընին խնդայ հո-
 վեւն 'ի սրտի ,
 Այնպէս խնդայր մեծն Ենէաս տեսեալ
 զամբօխն ըզկընի :
 Հասեալ կացին շուրջ զԱլկաթեաւ , կը-
 ուռին 'ի տէգս 'ի յերկայն ,
 Կուռ լանջապանքն հնչեն ահեղ , զի. քաջք
 ընդ քաջս խառնեցան :
Իսկ գոռքն ամուք գերազանցեալքն անդ
 Ենէաս , Իգոմէն
 Իբրու Արէսք մոլին զիրեարս գօշել 'ի
 սուր կամ յաշտէն :
 Շահատակեալ տէգ յԻգոմէն հար Ենէ-
 աս առաջին ,
 Նա ուշ կալեալ աճապարեաց խոյս ետ
 'ի ձիգ նիզակին .
 Թուուցեալ հանդէպ կալաւ ըզհող տէգ
 Դարգանեանն ահաւոր ,
 Ի յաղթ բազկէն ել վայրապար , վարսեր
 յերկիր անդ 'ի խոր :
 Տէգ շողացոյց և Իգոմէն , հար յորովայն
 զինոմիս .
 Խզեալ ըզգոգ լանջապանին 'ի գուրս վայ-
 թեաց զախոնդիս :

Հողաթաւալ տապալեցաւ բրոնահա-
րեալ ըզգետին ,

Մինչ Իգոմէն 'ի մեռելոյն ըզտէգ կորզեաց
զանարին .

Բայց և կապտել չքնաղ ըզգէնս չեղև 'ի
նա դամագիտ ,

Քանզի տարափ տեղայր փքնաց անդուստ
յարբայն խիտ առ խիտ :

Չէր Իգոմէն առոյգ ծընգովք , չէր և 'ի
մարտ ճեպընթաց ,

Յետնէր վազել 'ի տէգընկէցս և կամ
խուսել 'ի տիգաց :

Թէպէտ կայր նա յակաստանի անձին
պաշտպան յորհասէն ,

Այլ չուժէին ոտքն 'ի շտապել հանել
ըզնա 'ի մարտէն :

Իբրև այնպէս յուշիկ արբայն անդ վերջ
ոտնէր մանրաբայլ ,

Տէգ Դեփոբոս կըշուեաց 'ի նա , էր ցանգ
նմա ռիակալ 7 .

Եւ 'ի դերևս և զԱսկղափեայ զուսն հար
զորդուոյ Արեսին ,

Մըխեսալ թափանց նա դիթաւալ բրոնա-
հարեաց ըզգետին :

Բայց գոյժն յայնժամ ահագնագոջըն
Արեսայ չեղև ազգ ,

Եթէ որդին 'ի բազմածուփ չըշուկ մար-
տին կայ տապաստ :

Զի խորհրդովն Արամազդայ նա յամս
պատեալ ոսկեղէն ,

Բազմեր յՈղիւմս ուր գիբն անմահք կայ
ին անգործք 'ի մարտէն :

Բայց մարտ սաստիկ զԱսկղափոսիւ ծը-
փայր 'ի զէն և 'ի զարդ ,

Եւ Դեփոբոս վազեաց զնորա կորզել
հրափայլ սաղաւարտ :

Արեսացաւ անգ Մերիոն եհար նորայն
'ի բազուկ ,

Եւ եռավերջն յափոյն զերծեալ հըն-
չեաց յերկիր շառաչուկ .

Բայց Մերիոն գիմեալ կրկին անգեղ
նրման սրընթաց ,

Թափ 'ի բազկէն քարշեալ ըզտէզն 'ի
խուան եմուտ ընկերաց :

Հովանացաւ վիրաւորին իւրն հարազատ
Պողխէն ,

Եւ գիրկ փարեալ եհան արտաքս բազ-
մատագնապ 'ի ժամէն .

Ած 'ի նրժոյգան արագոտինս որ 'ի մար-
տէն մեկուսի

Կային յետոյ , ուր գեղեցիկ կային և
կառքն ընդ վարջի :

Թուուցեալ ըզնա տարան յոստանն . խոր
թառաչէր 'ի սրտէն ,

Մինչ ապաժոյժ հոսեր արիւնն յայն ինչ
խոցեալ 'ի բազկէն :

Այլ մարտ յուզէր 'ի մեծ շըռինդն, ուր
 Ենէաս նահատակ
 Շէշտ յԱփարոս կալեդորեան 'ի փողն
 Եհար սուր նիզակ .
 Կըքեալ գըլուխն ընդ իւր տարաւ ըզ
 սաղաւարանն և վահանն ,
 Եւ ըզնովաւ կէնդանասպառ ըստուէրք
 մահու պատեցան :
 Իսկ ըզԹոոս զընդ կրուկ դարձեալն Ան
 տիղոքոս հար խոցեաց ,
 Եւ շէշտակի զվիրաւորին ողջոյն զերակն
 հատ կըտրեաց ,
 Զերակն ողին որ մինչ 'ի փողն երկայ
 նաձիգ տարածի ,
 Նա զայն ողջոյն միանգամայն խըզեաց 'ի
 սայր կըշուակի .
 Անկաւ յորսայս և ըզդաստակսն առ հա
 մահարզս տատանէր ,
 Իսկ Անտիղոք շուրջ ականեալ վազեաց
 ըզզէնսըն կապտեր :
 Յասպար քաջին յաղթ յերփնազարդ
 նեոք 'ի Տրոյեանց տարափին ,
 Այլ վերջացան գըծել յերկաթ զԱնտի
 ղոքեայ գիրդ մարմին :
 Կայր Պոսիդոնն 'ի տեղ նետից պաշտ
 պան որդւոյն Նեստորի ,
 Որ ճախր առեալ յասպարիսէն չեկաց
 երբէք մեկուսի .

Նիղակ անդուլ ճօճէր ճեմէր ինքըն վա-
ռեալ 'ի բոցոյ ,

Կամ բացաձիգ գոլ արդեննկէց և կամ
շամիրեւ 'ի մօտոյ :

Մինչ գեռ գոռայր , գէտակն 'ի նա քաջն
Ագամասըն Ասեան ,

Մօտ խոյացաւ յԱնտիլըբոս խոցեաց 'ի
կումբն ըզվահան :

Խնայեաց 'ի կեանան ըզսայր բըթեաց ծի-
րանավարս Պոսիդոն ,

Կէս գեղարդան կաց յասպարին իբրև
խանձող մի կըտրօն ,

Կէսըն նորա միջաբեկեալ անկաւ յերկիր
յասպարէն .

Ճեպ Ագամաս ընդ կրուկ 'ի խռան խոյս
տայր ապրեւ յօրհասէն :

Հաս Մերիոն ընդ առականսն ընդ պորան
եհար ետ ընդ ետ ,

Ուր տիգահար վէրն արեսեան ցաւ է
մարդոյ դառնաղէտ .

Յայն վայր ըզսայր կըշուեաց տիգին ճե-
պել նրմա օրահաս .

Վարսեալ սայրիւն տարուբերէր տան-
ջէր սաստիկ Ագամաս .

Որպէս ըզցուլ արբ անդէորդք ուժգին
ածեն 'ի լեռնէն

Եւ նա հեստէ տարուբերի , բայց առա-
տկօք ձրգձրգեն ,

Նոյն Ագամաս ձրգտէր տանջէր, այլ 'ի
 վըշտին չերկարեաց
 Մինչև ըզտէգ քարշեալ գիւցազն աչացն
 ածէր ըստուերած :
 Իսկ Եղէնոս Դեպիւռոսին նահատա-
 կեալ 'ի գիմի,
 Իջոյց 'ի քունն հատու և մեծ վաղակա-
 ւոր Թրակացի .
 Հար զեռավերջն և 'ի գըլխոյն զերծեալ
 յերկիր Թաւալէր,
 Կորզեաց ըզնա ոմն յԱքայեանց մինչ
 ընդ ոտիւքն հոլովէր .
 Բայց Դեպիւռեայ սպտին աչաց մահուն
 ըստուերք խաւարին,
 Ետես արին Մենեղաւոս գորովեցաւ 'ի
 յոգին .
 Շէշտ յԵղէնոս գիմեայ յարքայն ըզտէգ
 ճօճեալ գեղարդան,
 Ճեպեաց յայնժամ մեծն Եղէնոս, ընդ
 գիրկն եմուտ ալեղան :
 Արձանացան . մին նըկըրտէր վարսել 'ի
 սայր նիզակին,
 Եւ միւսն հանգէս 'ի հաստ լարէն ոս-
 տուցանել ըզփըքին .
 Նախ շահատակ Պրիամոսեանն 'ի լանջ
 քաջին նետ եհար,
 Զարկեալ ընդ գոգ լանջապանին փըքինն
 ոստեաւ սըրավար :

Որպէս յորժամ 'ի կալ արձակ 'ի լայնա-
փոր խարբալէն

Չոր սևամորթ բակլայք սիսուունք 'ի բաց
վազեալք ոսոոստէն,

Յորժամ շնչեալ ուժգնահընչող հողմն
ընդքօք փոթորկի,

Եւ տարուբեր յաջ և յահեակ ձեռն
շարժէ խարբալէի,

Նրման յայնժամ ընդ դիւցազնն Մենե-
ղաւեայ լանջապան

Եկըն զարկաւ, թռուցեալ 'ի բաց նետն
վազեաց դառնութեան :

Իսկ Մենեղաւ ըզձեռն ունող հաստ ա-
ղեղան հար խոցեաց,

Եւ խորամուխ 'ի սայր տիգին ըզձեռն
յաղեղն կարեաց :

Խոյս ետ տիգեալն եմուտ 'ի խուան 'ի
մահագոյժ տազնապի,

Ձեռն իւր 'ի կախ ըզտէգն հացեան ձրգեր
տանէր ըզկրնի :

Քարշէլ ըզսայրն դառն լթեան քաջն
Ագենոր հոգ կալաւ,

Արագ այնպէս դարման տարեալ պա-
տեաց ըզձեռն պարսատկաւ .

Էր քաջորր յասուեաց օդեաց համակ
գործած պարսատկին,

Չոր պաշտօնեայն անդ կազմ ունէր 'ի
պէտս իւրոյ արքային :

Բայց ախոյեան 'ի Մենեղաւ եւ Պիսան-
դրոս քաջապէս,

Ո՛վ, օրհաս չար դրդեաց ըզնա մահուն
իւրոյ յասպարէս :

Զի 'նդ քեզ կըռուեալ, ո՛ Մենեղաւ, 'ի
քէն հարցի նա նըկուն .

Հայա գիմեալք քաջ ընդ քաջի ասպա-
րիսի ձայն ետուն :

Զըգեաց նիզակ Մենեղաւոս եւ 'ի կըշ-
ուոյն վայրապար ,

Զախոյենին հար Պիսանդրոս խոցեաց ըզ-
կուռն զասպար ,

Զուժեաց մըխել յամուրն հաստած , տէ-
գըն բեկաւ 'ի բընին .

Բայց նա իբրև ըզմրցանակ տարեալ խըն-
դաց 'ի յոգին :

Վազեաց Ատրիդ մերկեաց 'ի նա զարծա-
թագամն ըզսուսեր ,

Նա սուր տապար ընդ հովանեաւ իւր
ասպարին կազմ ունէր .

Տապար հարուստ , մեղէին յըղկեալ, եր-
կայն 'ի փայտ ձիթենւոյ .

Կացին այնպէս և զուգահէտ զէն շար-
ժեցին 'ի մօտոյ .

Ըզսուր տապարն երկաթակուռ ամբարձ
Պիսանդր և կըշուեաց ,

Ընդ ցըցունիւքն հար ըզկատար սաղա-
ւարտին գիսապանծ .

Մենեղաւոս եհար կըշիւ ախոյենին 'ի
Ճակատ ,

Եւ խորամուխ վարսեաց ըզուրն ընդ
ըւրնգացն ընդ արմատ .

Ոսկրն ճայթեաց , աչքն ոստուցեալք ա-
րիւնազանդք 'ի յերկիր

Անդ առ ոտիւքն անկան նորա , և ինքն
անկաւ անյարիր .

Խաղաց Աարիդ և աքացի 'ի դիական հար
'ի լանջ ,

Ձապուռ զինուցն առեալ նորա բարբա-
ռեցաւ մեծապանծ .

Վասպէս ահա ըզնաւս Յունաց լքջիք
զազգին քաջաձի ,

Այ ուխտադրուժ Տրովադացիք , անյադք
յարեանց 'ի մարտի .

Ո՞չ շատ էր ձեզ , շունք լքենիք , զրկել
յիմում զիս յարկի ,

Ձեզ և ցասումն ահ չարկ Գիայ ամպրո-
պայնոյն վանատրի .

Բայց նա ճշգրիտ ըզբարձրաբերձն հար-
ցէ զքաղաք ձեր յաւեր ,

Որ ընդ գանձուն զուր վարեցէք զառոյդ
զիմ կինն հիւրասէր .

Արդ դուք և հուր գուժայք նաւաց և
մահ Յունաց դիւցազանց .

Բայց և անշուշտ դուք գըլասջիք 'ի ձեր
գուռոյն մարդախանձ :

Արամազդ հայր, դից գերիմաստ ասէն
ըզքեզ և մարդկան,
Բայց և այնպէս 'ի քէն ողջոյն այս պատա-
հարք յառաջ գան .

Դու ձեռն և արդ տաս զօրավիգ այդ
չարարուեստ Տրոյացւոց ,

Դոքա անյագք անդուլք 'ի մարտ , որ
աշխարհի ածէ կոծ :

Բա՛ յագուրդ է ամենայնի, յագուրդ քը-
նոյ և սիրոյ ,

Յագուրդ և քաղցր է նըւագաց և գեղե-
ցիկ կաքաւոյ ,

Յորոց յաւէտ հեշտանայ մարդ քան մա-
հագոյժ 'ի մարտէն ,

Այլ աւագիկ այդ Տրոյացիք 'ի պատե-
րազմ անյագք են " :

Ասաց, զապուռ զինուցն արեամբ տայր
համհարզից Մենեղաւ ,

Եւ ինքն անդրէն 'ի գունդ քաջաց նա-
հատակաց խառնեցաւ :

Դիմեաց յայնժամ 'ի նա Արպաղ որդի
Պլեմնեայ արքային ,

Սա եկն ընդ հօրն 'ի մարտ Տրոյեան բայց
ոչ դարձաւ և կրկին .

Սա տէգ յասպարն հար Աորիդեայ, այլ
խորամուխ ոչ բաւեաց .

Ըշտապեցաւ , դառն յօրհասէն խուսեաց
'ի խուամբ ընկերաց :

Մինչ զակն յածէր, գուցէ ուստէք հա-
րուած առցէ գեղարդան,
'Նեա սայրասուր հար Մերինն կըշիւ 'ի
յաջն երաստան .

Մուտ սայր փըքնոյն ներքոյ ոսկերն , առ
'ի փամփուշտն ել թափանց,
Անկաւ 'ի գուճս և սիրելեացն 'ի ձեռս
զոգին իւր փչեաց .

Գիականացաւ և իբրև որդն այնպէս տա-
պաստ անկեալ կայր ,
Բուղն ապաժոյժ բոսոր արեան թա-
ցեալ զէրկիր առուանայր .

Պատեն ըննա որեար քաջաց անուն ազ-
գին Պափղագոն ,

Յոգւոց հանեալ բառնան 'ի կառս 'ի
մեծն ածեն յԵղինն :

Հայրն ընդ նոսա գերաշխարան յար-
տօսր հարեալ և գընայր ,

Ո՛հ , նա զվըրէժ զարեան որգւոյն չետես
ոգւոյն մխիթար :

Բայց Պարխին գելան աղէքն անդ 'ի
մահուան այս քաջի ,

Զի էր նրմա 'ի Պափղագոնս սա հիւրըն-
կալ սիրելի :

Չըհանգուրժեաց ընդ գիրկն եմուտ գե-
րեքթևեանն հար փըքին ,

Եւ էր անդ ոմն Եւքեննորէս ճեա Պողիւ-
դեայ գուշակին .

Սա այր հրզոր բազմահարուստ 'ի Կորըն-
 թոս ունէր տուն ,
 Սա եկն 'ի մարտ թէպէտ իւրում դառն
 օրհասին էր ներհուն .
 Զի շատ նըլագ գուժէր նըմա քաջ Պո-
 ղիւդէս ծերունին ,
 Թէ նա 'ի տան իւր հայրենի յախտ ծիւ-
 րեսցի գըժուարին ,
 Կամ թէ գնացեալ 'ի նաւս Յունաց , 'ի
 սուր Տրոյեանց անկանի .
 Լըլաւ նա զայս , և դիւր անձին ըզմահն
 ընտրեաց 'ի մարտի .
 Գիւր յոգետանջ 'ի լուտանաց զոր Յոյնք
 նըմա պարսեսցեն ,
 Դիւր և 'ի չար խօթութենէ մի տըլայ-
 տիլ 'ի յախտէն :
 Ըզսա Պարիս հար ընդ ունկամբն և ծա-
 մելեացն առ ընթեր ,
 Փըչեաց իսկոյն և ըզնովաւ խաւար պա-
 տեաց մահաբեր :
 Ըյսպէս անդէն մարտ բորբոքեալ էր
 բոցավառ իբրև հուր ,
 Այլ մեծն հեկտոր զիւր խուժանին ըզ-
 հարուածոյն չէառ լուր .
 Գիտաց ոչինչ , թէ զոր բեկաւ 'ի թև
 մարտին 'ի յահեակ ,
 Եւ թէ գողցես անդ զօրն Յունաց տա-
 նէր զմարտին մրցանակ :

Այսչափ նոցա Երկրասասանն ըզթափ
ուժոյն բորբոքեաց ,

Ինքն էր գնդին նիզակակից յայնժամ
իւրոցն հեւենաց :

Այլ կայր հեկտոր անդ ուր յառաջ ընդ
գուրս վազեաց ընդ պատուար ,

Եւ ըզՅոււնաց զասպարափակն եհար վա-
նեաց դիւցաբար .

Ուր Այասայ և Պրոտսիղեայ յափընքար-
չեալ նաւք կային ,

Եւ ուր պատուար յայնրմ կուսէ խոնար-
հագոյն կանգնեցին :

Վասն այն հետեաց 'ւ այրուձիոյն անդ
ահագին մարտ գոռայր ,

Ուր Բիովտեանց 'ւ Երկայնակաճ Յո-
նեանց կային քաջ որեար ,

Ուր և Լոկրաց և Փիթացւոց ⁸ և քաջք
Եսեանց խուժանին ,

Որք 'ի նաւաց միահամուռ զայր կատա-
ղին վանէին .

Ճըգնին վանել , այլ ոչ բաւեն այն դիւց-
ագին մեծազօր ,

Քանզի ճշգրիտ հանգոյն բոցոյ ամեհա-
ցեալ էր հեկտոր :

Ընդ այրընտիր Աթենացւոց նահատա-
կէր լաւորեար ,

Եւ էր նոցա որդին Պետեաց Մենեսթէոս
զօրավար .

Խաղայր ըզհետ և կորովին Բիոս , Փիգաս
և Սաիքոս ,

Իսկ պետք Եպեանց Մեգէս Փիւղեան
և Ամիիոն և Դրահոս .

Ի գլուխ Մեգոն կայր Փիթացւոց և Պո-
դարկէս կորովի ,

Մեգոն արւոյն այն Ոիլեայ անհարազատ
էր որդի .

Եղբայր գոլովսա Այասայ բնակէր յեր-
կրին Փիւլակեան ,

էր տարադէմ 'ի հայրենեաց , քանզի այր
մի հար ըսպան .

էր ըսպանեալն հարազատն Երովպի-
տեայ իւր մօրուին ,

Զոր քաջարին Ոիլէոս ածեալ էր իւր յա-
մուսին :

Իսկ Պոդարկէս էր քաջորդի Իփիկլոսին
Փիւղակեան ,

Սոքա վարիչք էին Փիթեանց վառեալք 'ի
կուռ ըննչապան .

Նահատակեալ 'ի սլաշտպանեւ Յունաց
նաւաց հանդիսին ,

Մարտ դընէին միահամուռ ընդ Բիով-
տեանց խուժանին :

Բայց Ոիլեանըն քաջորդի Այաս արագն
և արի ,

Տեղամոնեանըն յԱյասայ չեկաց 'ի զառ
և վայր մի :

Որպէս հարկիք եզանց սեւից 'ի կորդա-
ցեալն անդաստան

Ամուք հաւանք ըզկուռ զարօրն առնուն
ձրգէն միաբան ,

Չըգէն և քիրտն յոլով քրսէ ընդ արմընդ
բունն եղջերաց ,

Եւ անջըրպետ լըծոյն միայն զատէ զա-
մուլն 'ի միմեանց ,

Քայլ ընդ ահօս ըզնոյն կոխեալ զարդանդ
հողոյն պատառէն ,

Այսպէս Այսպէն անանջըրպետք կացին
անդ այր յընկերէն :

Բայց Տեղամօնն շատ այրընտիր ունէր
համհարզս 'ի կրօուին ,

Եւ մինչ ընդ քիրտն հարեալ խոնջէր , զաս-
պար նորա բառնային :

Իսկ Լոկրացիք մօտ ոչ կային քաջի որ-
դւոյն Ուրէան ,

Մարտ յարդարեւ յակաստանի աշխոյժք
նոցուն վատեցան .

Չի չէր նոցա կուռ սաղաւարտ վերջա-
ւորօք գիսասպանծ ,

Եւ ոչ ասպարք բոլորածիրք ոչ գեղար-
գունք 'ի հացեաց .

Այլ յեղինն եկին 'ի մարտ առեալք զա-
ղեղն հաստաձիգ ,

Բարձին և զէն ըզքաջոլորն յասուեաց
օդեաց պարսաստիկ .

Չու արարին խրախուսեցին յայտ զէն 'ի
զարդ ասաստանք ,

Նետիւք սարսիւք փարսոտէին անդու
Տրոյեանց ըզփաղանդ .

Մինչ այլք ճակատ տըւեալ Տրոյեանց
զինավառեալք կըռուէին ,

Կըքրեալք ընդդէմ և Հեկտորայ սըղըն
ձավառ վիրազին .

Սոքա յետուստ կըծկեալք նոցա մահ տե
ղային անսայման

Աղէղնաձիգք և սարսաձիգք, մինչև Տրոյ
եանք վատեցան .

Աղմըկեցան 'ի տեղ փըքնաց, զոր խուճա
սկեր Դարդանեանց ,

Եւ մեծամեծըս հարուածեալք ընկըրկէ
ին 'ի նաւաց :

Անշուշտ և դարձ առնէր բանակն 'ի յե
ղիոն հողմասուն ,

Թէ Պուղիւդամ առ խրոխտն Հեկտոր
խորհուրդ չազգէր 'ի ժամուն .

« Զի՞ քեզ, Հեկտոր, զի տարտամել խրա
տուն այլոց գոլ հաւան ,

Իբրու աստուած բնաւից ըզքեզ վէհ եդ
'ի մարտ գոռութեան .

Մի՞թէ վասն այն և ժրտեսցիս գըլէլըզ
բնաւս 'ի հանճար ,

Բայց միահետ քեզ զամենայն անձին
գրաւել չիք հընար :

Քանզի բաշխեաց և ըզմարտին հանդէս
միումն ետ աստուած ,

Միւսում ըզկայթ , այլում կիթառ , այ-
լում ետ զերգ նըւագաց .

Հեղ խնամածուն յօգուտ բազմաց միւ-
սում հանճար 'ի սրտի .

Հանճար փրկիչ է քաղաքաց . զայսնա գի-
տէ որ ունի :

Արդ ես , ո՛վ քաջ , ասեմ քեզ արդ ոք
ինձ թըւի 'ի լաւաց ,

Զի այժմ ըզքեզ պըսակ մարտին իբրև
ըզհուր պաշարեաց :

Այո , Տրոյեանք նահատակեալք վա-
զեալ անցին ընդ պատուար ,

Բայց կէսք աստէն զինու զարդու վատին
խառնիլ 'ի գուպար .

Իսկ կէսք նուազունք մարտ ընդ բազմաց
զընեն առ նաւս ցիր և ցան ,

Օ՛ն դու վայր մի դարձիր և էրթ , ձայն
տուր քաջաց միաբան .

Համագումար ատեան կազմեալ խոր-
հուրդ քաջիկ մէք կալցուք ,

Արդեօք գըռոյթ տալ մեզ 'ի նաւս ար-
ժան իցէ կընքեսցուք ,

Այլ ո՛վ , այժմէն մըցանակել հաճէր և
տայր մեզ աստուած ,

Կամ թէ աստէն անդրոթելք վերջոս ,
նեսցուք 'ի նաւաց :

Ահ զիս ունի, թէ Յոյնք այսօր պարտս
հատուցեն զերեկեան,

Նա զի բազմեալ կայ այրն 9 'ի նաւս ան-
յագն 'ի մարտ գողութեան .

Դա ետ ընդ ետ փայլակնացի մեզ յե-
րևան 'ի սլայքար " .

Լըւաւ հեկտոր, բարեբանեաց Պուղիւ-
դամայն ըզհանձար :

Ոչ հանդարտեաց . հասլ 'ի գետին վա-
ղեաց զինուքն 'ի կառաց,

Դարձաւ անդէն առ Պուղիւդամ արա-
գաթև ձայն կարդաց .

“ Ըզքաջորեարն, ո՛վ Պուղիւդամ, կալ
աստ մինչ ես անդ գընամ .

Կարգ տամ զօրուն, հանդէս մարտին, և
փութապէս աստ դառնամ ” :

Եսաց, գիմեաց հըսկայազօրն նըման լե-
րին ձիւնեղէն,

Տրոյեանց ազգումն և համհարզից գոչէր
յահեղն 'ի ձայնէն .

Ըշտապեցան միանգամայն ըզհեկտորայն
լըւեալ ձայն,

Հորդան տային առ քաջարին Պուղիւդա-
մաս Պանթոսեան :

Հեկտոր զարին խնդրէր Դեփօբ և զԼը-
տակեանն Ասիոս,

Եւ զԱգամաս յուզէր զԱսեանն և քաջ
զարքայն Եղէնոս .

Գիտ ըղնոսս կամ հարուածեալս կամ
ոչ բնաւին կենդանի ,

Իբրու նրկուն գրտան նոքա ընդ բռամբ
Յունաց ՚ի մարտի .

Կէսք առ նաւուք զիականացեալք կային
նոցուն ՚ի ճամբար ,

Եւ կէսք ՚ի ներքս ՚ի պատուարին տի-
գեալք և կամ նետահար :

Ապա յահեակն ասեղ մարտին բար-
ձեալ զէտակն հեկտորայ ,

Անդ զառևանգն ետես փեսայ վարսագե-
ղոյն հեղինեայ :

Կայր նա խրախոյս նիզակակցաց տայր ՚ի
հանդէս մրցանաց ,

Արձանացաւ արին հեկտոր և լուտանօք
բան սարսեաց .

“ Լա՛ղ Պարիս , զէմք գեղաղէշ , կնամու-
շամբուշ , դաւաճան ,

Ո՛ւր է Գեփօբ , ո՛ւր Ադամաս , ո՛ւր Եղե-
նոս է արքայն ,

Ո՛ւր Ասիոս , ո՛ւր Ոթրիւոն . արդ Եղիոն
բարձր ոստան

Հիմնայտակ քանդի , և քեզ օրհաս գու-
ժէ զառնութեան ” :

“ Զիարդ հեկտոր , անդէն ՚ի նոյն Աղէք-
սանգրոս ետ բարբառ ,

Զիարդ դու յիս զուր տարապարտ ձը-
գես այժմիկ պարսաբար .

Թէ զայլ նրւագ թերևս ուրեք էս վա-
տացայ 'ի մարտէ ,

Բայց քաւ թէ զիս բնաւին վատեալ մայրն
իմ ծընաւ յարգանդէ :

Ո՞չ մէք ինքնին , յորժամ գուժեաց նա-
ւամարտիս այս շըշուկ

Աստ համհարզիւք արձանացաք իբր ա-
խոյեանք աննրկուհք :

Իսկ զոր խնդրես նիզակակիցքն , աւանդ ,
նոքա տասպատ կան .

Երկուք միայն ողջ Դեփոբոս ողջ Եղե-
նոս է արքայն .

Խոցք վիրաւորք չոքան 'ի բաց 'ի ձեռս
հարեալք յաշտէն սուր ,

Արամազդայն ընդ հովանեաւ գրտաննո-
քա անձնապուր :

Արդ տար ըզմեզ , ուր քոյ աշխոյժք վա-
ռեն ըզքեզ 'ի յոգիդ ,

Մէք գիմագրաւ նահատակեալք ըզճետ
խաղամք ըզքաջիդ :

Անշուշտ , ո՛վ քաջ , ըստ մեր կարին ոչ
վատասցուք 'ի գուսար ,

Բայց քան ըզկար կրուուել մարդոյ , թէ
և անձկայ , չէք հընար " :

Ասաց Պարիս , զհարազատին միան ամո-
քեաց հեշտաբար .

Հայտա խաղան ուր արհաւիրք յուզէր
մարտին և ծըփայր :

Անդ կըռուէին քաջ Պուղիւղամ և Կեր-
րիոն և Փալկէս ,
Շահատակէր և Որթէոս և զիւցանման
Պողսլիտէս .

Անդ և Պալմէս , Ասկանիոս , Մոռիւս
որդի Իսպոսեայ ,
Աւուրբ յառաջ հասին կըռուէլ փոխա-
նակաւ և սորբա .

Եկին այս քաջք 'ի յարգաւանդն Ասկա-
նիոյ սահմանաց ,
Քանզի յայնժամ վէհն Արամազդ զնոսա
'ի մարտ բորբոքեաց :

Արդ խաղային գոգ զիււաշունչ հողմոց
Թափոյն հանգունակ ,
Որ յամպրոսպցն Արամազդեան մըրրկէ 'ի
դաշտ տափարակ ,

Անդ ուստ խուժեալ 'ի ծով խառնի ահեղ
'ի ձայն գոռութեան ,
Փլանին անդունդք ահագնագոցք , կոյտք
կոհակաց լեռնանան ,

Գան վէտ 'ի վէտ վարաղացեալք ալիք զա-
լիսըն գըլեն ,
Եւ փրփրադէզք մի ըզմիով յեռանդն հա-
րեալ մըռընչեն ,

Այսպէս Տրոյեանք կուռ խիտ առ խիտ
դէն փայլակեալ 'ի պէսպէս ,
Զօրավարաց ըզհետ յորդեալք խաղան
մարտին յասպարէս .

Արենասիանձ իբրև Արէս էր սէգն հեկ-
տոր կարապետ ,

Պրզնձակուռ քեմրխտապատ բարձեալ
ասպար ահափետ .

Սաղաւարտին շարժել 'ի քունս նըշոյք
հատեալք փայլակէն ,

'Նա քայլ 'ի քայլ խաղայր յառաջ հովանա-
ցեալ յասպարէն .

Փորձէր ժրտէր շուրջանակի խրոտլ հա-
րուլ փաղանգաց ,

Այլ վերջացաւ ահ արկանել 'ի սիրտ քա-
ջաց հելէնաց :

Քայլ մեծաքայլ խաղաց Այաս , կար-
դաց նըմա ասպարէս .

« Այ խրոխտ վիրագ , մօտ էկ , դու զի
ահ մեզ քաջաց արկանես .

Քաջ եմք հելէնքս 'ի դործ մարտի , չեմք
ինչ անփորձք անաւագ .

Մէք օն և օն , քաւ , ոչ 'ի քէն , յԱրա-
մազգայ դանեցաք :

Յաճիւն ըզնաւս վարել ըզմեր թէ զքեզ
դրդեն քո ոգիք ,

Են են և մեր բազուկք քաջաց մեզ 'ի
սաշտսան զօրալիք :

'Նա և կանուխ քո պերճ ոստանդ 'ի մէնջ
լիցի հիմնյատակ ,

Եւ քեզ ինքնին դոյժ արկանեմ . քո մեր-
ձեալ է ժամանակ .

Երբ խուճապեալ դու Ղիոսի և դից հան-
ցես խնդրուած ,

Զի երագունք քան զբազէից թըռիչքդ
իցեն նրժուգաց ,

Սրասցին հանդէս բաշ արձակեալք և
կուռ հարեալք ըզսմբակ ,

Զամի ըզփոշոյն յուզեալք ընդ դաշտ
թուուսցեն ըզքեզ 'ի քաղաք " :

Մեծն Այասայ այն ինչ էին բարբառք
ձայնին 'ի բերան ,

Թըռչուն յաջմէ բարձրաթըռիչ արծուի
ճախրեաց յերևան :

Իբրև խուժանն 'ի հմայս ժամուն գոչ
մամբ ձայնի խրախուսեաց ,

Յայնժամ Հեկտոր ահեղասաստ ետ Այ-
ասայ անդրադարձ .

« Մնապարծ Այաս , զոր բարբանջանս
ժայթքես դու ցուլ յաղթանդամ .

Ո՛վ , թէ այնպէս ես ճետ էի վէհին Գիայ
և հերայն ,

Եւ զՊալասայ և զՓեբոսին շուքն ունէի
ես անշուշտ ,

Որպէս անվրէպ ձեզ մահ այսօր ածցեն
երկինք 'ի վերուստ :

Եւ դու 'նդ նոսա արկցիս տապաստ , թէ
իմ մնասցես նիզակին

Որ սայրասուր զայդ քո ըստուար յօշա-
տեսցէ ըզմարմին .

Ձի դու անկեալ գէշ առ նաւուք 'ի քոց
մարմնոց ճարսպալիւր ,
Յագեցուցես ըզՏրոյիոյ ըզհաւս և շանցն
ըզջուլիւր ” :

Ասաց խաղաց , գոչեն փաղանդք և զհետ
քաջին փողեցան ,
Չայն բարձրացաւ ժողովրդեան , խօ-
շիւնք մարտին հնչեցան :
Մեծ արձագանդ կրկնեն և Յոյնք շա-
հատակեալք 'ի հանդէս ,
Մնային քաջաց Տրոյեան գնդին երբ կար-
դասցեն ասպարէս :
Իսկ երկուստեք ձայնից բոմբիւնք մինչև
յեթեր գանգեցան ,
Անգուստ մինչև յԱրամազդայ ճաճան-
չաւորն 'ի խորան :



10

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is extremely faint and illegible due to the quality of the scan and the nature of the bleed-through.

ԵՂՅԻՆԿԱՆ



ՀԱԳՆԵՐԳՈՒԹՅՈՒՆ ԺԴ .

ՆԱԽԱԴՐՈՒԹՒԻՆ

Նեստոր տագնապեալ ընդ մտալուս
վտանգ Յունաց յառնէ խորհուրդ խոր-
հել ընդ Ագամեմնոնի: Անձկութիւն սրաի
արքային, յարանալ ՚ի մարտ եթէ դառ-
նալ յետս: Զխորհուրդ դարձին այսպա-
նէ Ոգիւտէս. զնոյն քաջաբար զգէմ դառ-
նայ Գիոմեդէս. և ըսա խորհրդոյն նորա
արքայք, թէպէտ և վիրաւորք, մտանէն
՚ի զօրն ՚ի քաջալեր բանակին: Պոսիդոն
՚ի նմանութիւն մարդոյ սրտապնդէ զնո-
սա: Հերա յառաւել զօրավիդ Պոսիդոնի
դաւէ զԱրամազդ գրգանօքն և ննջեցու-
ցանէ: Պոսիդոն զայն ժամ պատէ՛հ գը-
տեալ, ինքնին զօրավարէ բանակին Յու-
նաց: Հեկտոր վիմահարեալ յԱյասայ,
անկանի յերկիր կիսամահ, և հարկանին
Տրոյացիք:



ԵՂՒԼԱԿԱՆ

Հ Ա Գ Ն Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Ժ Դ .

ՉԱՅՆ խառնագոյ լըւաւ Նեստոր յարբ-
ման գոլով բաժակի ,
Դարձաւ անդէն և վարանէր ընդ Ասկղե-
պեան արքայի .
« Բա՛բէ բա՛բէ , զի՛նչ իբբ իցեն , ո՛ Մա-
քանն քաջ արանց ,
Զի՛նչ այս գոջիւն յորդեաց առ նաւս մեր
քաջառոյգ պատանեաց :
Բայց դու հանգիր 'ի բազմոցիդ արբ ըզ-
հրաշէկ ըզգինին ,
Մինչ գանգրահերն Եկամիդէն ջուր կա-
հեսցէ քեզ ջերմին .

Լուսացես նովաւ դու զապաժոյժն և
զապաւառդ յարենէն ,

Ես արդ գնացից արագապէս զըննել ըզ-
բանն 'ի դիտէն ։

Լսաց , զասպարն ըզքաջորդւոյն արկաւ
զուսով ծերունին ,

Պըզընձակուռ և հրաշափայլ ցայտէր աս-
պարն 'ի վրանին .

Ձի թրասիւմէդ ըզհօրն իւրոյ զասպարն
էառ հաստամուր ,

Բայց ծերունին կալաւ 'ի բուռն և տէգ
հարուստ սայրասուր ։

Եւ 'ի վրանէն արձանացաւ ողորմ՝ ետես
տեսարան ,

Տրոյեանք խիզախք վանեն ըզհետ և Յոյնք
խուճապ փախուստ տան ։

Դարձեալ և զայն յակն արկանէր յապուշ
հարեալ ծերունին ,

Ձի և պատուարն Աքայեցւոց հոսեալ
անկաւ 'ի գետին ։

Որպէս ծով մեծ կապուտակի և կան ա-
լիքն անմըռունչ ,

Գոգ նախազգաց , թէ մօտալուտ հողմք
խուժեցեն դիւաշունչ ,

Վասն այն 'ի մէտ կայ 'ի կըշուի ոչ անդ
դառնայ և ոչ աստ ,

Մինչև մըրրիկ սահմանաւոր շնչէ 'ի նա
Արամազդ ,

Այսպէս անդ ծերն արձանացեալ, միտ
 վարանէր 'ի կրկին
 Ի խաղմ' արդեօք գնասցէ Յունաց, թէ
 յայց Ատրիդ արքային :
 Եւք վարանացն զերթն առ արքայն հա-
 մարեցաւ նա քաջիկ,
 Մինչ դեռ անդուստ յերկոց կողմանց
 արեանց հոսէն ճապաղիք .
 Գըծեալ հնչէր կուռ պղղընձին յիրանս
 քաջաց 'ի կրուռի,
 Հարեալ ջախեալ 'ի սուսերաց և 'ի տի-
 գացն երկսայրի :
 Ելին յանկարծ հանդէս ծերոյն ար-
 քայքն եկեալք 'ի նաւաց
 Խոցք վերաւորք Դոմեդ, Ողիւս և Ատ-
 ըրիդէս քաջ արանց :
 Հեռի մարտէն առ ծովափամբ քար-
 շեալք կային նաւք սոցին ,
 Իսկ առաջինքն 'ի ներքս 'ի դաշտ, զորովք
 պատուար կանգնեցին .
 Քանզի թէպէտ առ հաւասար էր անդ
 ծովափն ընդարձակ,
 Բայց և այնպէս չէր նա ողջոյն նաւատոր-
 մին ընդունակ .
 Եւդէր խոնէր 'ի վայրն անձուկ Աքայե-
 ցւոցըն խուժան ,
 Ուստի և նաւք մի ըզմիով աստիճանեալ
 կարգեցան .

Ձեզան լըցին զերկայնաձիգ ըզծոցն ըզմեծ ծովեզեր ,

Որչափ ինչ վայր շուրջանակի 'ի հրուանդանաց պարագրէր :

Ըրդ այս արքայք անձուկ բերեալ գիտել ըզխազմ ըզմարտին ,

Յեցեալք 'ի տէգս և զուգահետք քայլեալ գային թախծագին :

Տեսեալ ըզծերն ընդառաջեալ արքայքն յապուշ կրթեցան ,

Կարդաց անդէն Ագամեմնոն և յանուանէն ետ ըզձայն .

« Բա՛բէ , Նեստոր Նեղեանդ ասպետ ,
փառք մեր Յունաց բանակին ,

Ձի՛ է , ո՛վ քաջ , զի առ մեզ գաս լըքեալ զարեանց դաշտ մարտին .

Խիթամ թէ զբանն ասեղասաստ լըցէ վիրագդ այդ Հեկտոր ,

Ձոր անդ երբեմն յատեան Տրոյեանց ձայն որոտաց ասաւոր .

Թէ զնաւս յաճիւն մինչ չև փոխեալ ինքն յԵղիոն ոչ դարձցի ,

Մինչ դառնապէս առ հասարակ հարցէ և զմեզ 'ի յոգի :

Ձայս որոտաց նա յայն ատեան , և արդ բանիցն է հանդէս .

Բա՛բէ , ուրեմն և այլք ընդ իս խեթան որպէս Աքիլէս .

Չառնուն 'ի յանձն 'ի մարտ մըխել 'ի տագ-
նապէլ մեր նաւաց ։

Զայս Ատրիդէս . և ծերունին ահիւ կըր-
կնեաց անդրադարձ .

66 Օարգիս անշուշտ սատաք հեկտորայ
յանգ ելանեն անարգել ,

Եւ ոչ Դիոսն ահագնագոչ լիցի այլ ազգ
ճարտարել .

Նա աւանիկ մեր հաստամուր պատուարն
հոսեալ քանդեցաւ ,

Այն որ նաւացն և մեզ ինքնին էր ախոյ-
եան դիմագրաւ .

Տրոյեանք անդուլ մօտ առ 'ի նաւս մարտ
յարդարեն ահագին .

Թէ և զըննես , գիտասցես ոչ , Յոյնք ո՛ւստ
ուստեք խուճապին .

Մահ ճարակեալ է յընդհանուրս . զեր-
կնիւք քերէ աղաղակ .

Խորհուրդ կալցուք զեմրդ մեր իրքս ելս
ունիցին յաջողակ :

Քաւ , թէ 'ի մարտ գոլ խառնամուխ ձեզ
ինչ տամ ես քաջալեր ,

Իբրև անճահ է խոցելոց կալ և կըռուել
անվէհեր ։

66 Ո՛վ Նեստորէ , կրկնեաց արքայն , մար-
տըն գոռայ մերձ նաւաց ,

Ամուր պատուարըն քանդեցաւ , իրբամն
ինչ մեզ ոչ օգնեաց ,

Յոր քրտնաջան եղէն հեւընք իբրու վըս
տահք մեծապէս ,

Ձի էր նաւացն և մեզ ինքնին նա յանխա-
խուտ 'ի պատնէշ :

Անշուշտ ուրեմն ամպրոպային խնդրէ
հրզօրն Արամազդ ,

Ձի տարաշխարհք անփառուենակք անկ-
ցին հեւընք աստ տապաստ :

Գիտեալ խակ եմ , զիարդ երբեմն էր նա
Յունաց զօրավիգ ,

Արդ զանմահիցն ետ շուք Տրոյեանց , որ-
պէս դիտեմ էս այժմիկ .

Խակ ըզկորով և ըզբազուկ կապեաց ըզ-
մերն արդ ողջիկ ,

Այլ աղէ դուք առ հասարակ վայր մի
բանիս ունկըն գեք :

Ըզնաւս քարշեալս աստ մօտ զափամբ 'ի
ծովն արկցուք բացագոյն ,

Անդէն 'ի խորս արկցուք խարխիսի մինչ
մուծըն գայ գիշերոյն .

Եթէ յայնժամ դուլ Տրոյացիք մարտին
տացեն գոռուծեան ,

Ապա և մէք տացուք 'ի ծով ողջոյն նաւաց
մեր հորդան :

Չեն ինչ այսպանք , 'ի վըտանգից խոյս
տալ նա և գիշերի .

Լաւ է փախուստըն անձնապուր քան
անկանեւ մեզ գերի » :

Խեթիւ 'ի նա ձայն Ոգիւսէս բազմախոր
 հուրդն արձակեաց ,
 « Զինչ , ո՛վ Ատրիդ , բան մահագոյժ ել
 յամբափակդ 'ի շրթանց .
 Աւանդ , ո՛վ թէ քո զօրավար լեալ էր զօ-
 րուն սինըքոր ,
 Եւ ոչ մեզ աստ յարշաւանիս հրամանա-
 տար թագաւոր .
 Մեզ , ոյց Ղիոս յառոյգ ակոց մինչ յա-
 լուցթ հասակին ,
 Ետ մարտ մըղել մինչև 'ի շունչ իւրաքան-
 չիւր 'ի վերջին :
 Ուրեմն անշուշտ սնդեա՞լ է քո թողուլ
 զոստանն ըզՏրոյեանց ,
 Զոստանըն մեծ , ոյր աղագաւ ամբաւ տա-
 րաք մէք վըշտաց :
 Լճու լեր , մի՛ ոք յԱքայեցւոց լուիցէ եր-
 բէք զայդ քո բան ,
 Զոր և անշուշտ այր ոք ուշիմ՝ երբէք չառ-
 նու 'ի բերան ,
 Այր որ ունի կըշիւ լեզուի և գաւազան
 արբունի ,
 Եւ հրամատար է շատ զօրու , որչափ
 դու մեր բանակի :
 Ըզքո խորհուրդն ես այսպանեմ , որ մեզ
 հրաման կարդացեր ,
 Զհանդէս նաւաց ձըդել 'ի ծով մինչ
 մարտք յուզին գուժաբեր :

Զի յաղթականք յայնժամ Տրոյեանք 'ի
մեզ եղեալ գամագիտ ,

Առ հասարակ մէք դիտապատտ անկցուք
աստէն խիտ առ խիտ :

'Նա զի և Յոյնք ոչ ևս յայնժամ մարտ
անվրկանդ կրուուեսցին ,

Եթէ նաւք մեր այս ապաւէնք 'ի ծովն
առեալ ձրգեսցին :

Քանզի 'ի ծովն յառեալ նոքա հրաժեշտ
տացեն 'ի մարտէ ,

Եւ մահաբեր տեսցես զխորհուրդն 'ի քէն
տըւեալ յարքայէ " :

Ոչ հանդուրժեաց , կրցեաց արքայն , ըզ
սաստ ըւեալ զՈղիւսեան ,

“ Քոյդ Ողիւսէս սուր կըշտամբանք խոր
'ի յողիս իմ հարան .

Քաւ , ես հրամանն ոչ կարդացի ընդդէմ
կամաց հելլենաց ,

Առնուլ 'ի ծով ձրգեւլ զհանդէս ըզհաստ
ամուր մեր նաւաց :

Օն արդ 'ի մէջ կացցէ այր մի թէ ծեր
և թէ պատանի .

Եթէ քաջիկ տացէ խորհուրդ այդ ինձ
անշուշտ քաղցրասցի " :

“Ս երձ կայ ձեզ այրն , անդէն Դոմեդ
ձայն արձակեաց կորովին ,

Եւ զայրն զայն խնդրել յերկար չեն
պէտք մերոյ ակըմբին ,

Թէ իմ բանիս ունկըն դնէք և ոչ խե-
 աայք ՚ի սիրտ ձեր ,
 Զիս չեպերէք իբրու որ այն տիօք ՚ի ձեզ
 եմ կըրսեր :
 Խնդամե ես գոչ ՚ի Տիւղեայ ճեա քա-
 ջարւոյն ՚ի հօրէ ,
 Որ արդ ծածկեալ կայ ՚ի յարգանդն հո-
 ղապատեան ՚ի Թեբէ :
 Քանզի երէք Պորթէոսի ծընան որդիք
 աննրման ,
 Բնակեալք ՚ի բարձրն ՚ի Կաղիւղոն և ՚ի
 յերկիր Պէւրոնեան .
 Էր Ագրիոս , երկրորդ Մեւա , երրորդ
 ասպետն էր Ինէս
 Հայր հօրն իմոյ , սա վեհագոյն էր արու-
 թեանցն ՚ի հանդէս :
 Նոքա ողջոյն մնացին անդէն , հայրն իմ
 Թափառ անդ և աստ
 Նստաւ յԱրգոս . այս էր կամք դից և զայս
 կամէր Արամազդ :
 Նա անդ կացեալ , և յԱտրասդեայն ՚ի
 դըստերացն ած ՚ի կին ,
 Եւ բնակեցաւ ՚ի հացալից բաղմահամբար
 ՚ի յարկին .
 Շատ և գետինք էին նորա ցորենաբերք
 ՚ի յանդի ,
 Եւ ծառատունկք հովանաւորք կային
 անդ կարգ ըստ կարգի .

Բազմահարուստ էր և խաշտօք , տիգաւ
վէ՛հ էր Հեւլէնաց ,

Լըւեալ իսկ է ձեր զամենայն . պատմեմ
յանշուշտ 'ի զըուցաց :

Ձիս արգ , ո՛վ քաջք , ճէտ չասելով ոչ
անաւագ ոչ անկած ,

Մի ունչս առնէք իմ խորհրդոյն , զոր
տամ զարդիս ձեզ քաջաց :

Օ՛ն թէպէտ խոցք , արիք 'ի մարտ , զի
հարկն այսպէս ըստիպէ .

Կետընկեցիւ չափ մերձաւորք կացցուք
գոռոյն 'ի բացէ .

Մէք անձնապահք ըզգուշացեալ մի վէրս
'ի վէրն յաւելցուք ,

Կացեալք այնպէս յերևանի խրախոյս վա
տաց կարդասցուք .

Հրաման տացուք և զատելոցն , որ մարտ
մըղել չըկամին » .

Ասաց Դոմեգ . 'ի լուր բանին արքայքն
յուզի անկանին :

Վարապետէր Ագամեմոնոն , և Պոսիդոն
սկանեաց .

Ի կերպարան առնն ծերոյ եկն առ նոսա
մօտ եկաց .

Կալաւ զաջոյն Ագամեմոնեայ ձայն ետ
անդէն փութապէս ,

« Անշուշտ , Աարիգ , խնդայ զարդիս մա
հահամբոյրն Աքիլէս .

Դա 'ի զընին կայ արհաւրաց Ա.բայեցուոց
բանակի .

Դա յայլոյ խելս . և գուԹ յաղես բա՛ չեք
գորա և խուն մի 10 :

Ո՛վ, մահ ըննա առեալ տանէր , ոտնհար
լինէր և աստուած .

Սակայն ընդ.քեզ չեն խեթացեալ ողջոյն
ակումբն երջանկաց :

Տեսցես դարձեալ Տրոյեանց զիշխանս
յուզել ըզգաշան 'ի փոշի ,

Եւ յեղին 'ի ծովափանց փախչել 'ի շտաս
տազնասպի 3) :

Ասաց , 'ի նոյն գոչեաց ասեղ և արշա-
ւէր 'ի դաշտին ,

Որչափ և ինն և տասն հազար գոչեն մար-
տիկ.ք 'ի խազմին .

Այնչափ գոչիւն Երկրասասանն եհան
յամուրն 'ի լանջաց ,

Եւ մարտ անդուլ մըղել անդէն հուր 'ի
հեղենս բորբոքեաց :

Եր ոսկեգահն հերա դշխոյն յՈղիւմսդո-
սին 'ի կատար ,

Ետես զի տագրն որ և եղբայր էր խառ-
նամուխ 'ի սլայքար .

Խնդայր յողին , բայց և բաղմեալ 'ի ծայր
Իգայն բիւրակնեայ

Ետես զՈրմիզքն ասեղասաստ , խեռայր
խեթայր սիրտ նորա :

Խորհուրդ ասլա մենքենայեաց դշխոյն
այն մեծ աչագեղ,

Զխորդ հնարիւք նա գողասցի միտ զԱր-
քային զայն ահեղ :

Աընքեաց խորհուրդ , պճնայարդար ու-
ղոյ լինել 'ի յՌգա ,

Թերևս այնպէս տեսեալ Ղիոս մըտցէ փե-
սայն իւր առ նա .

Տացի յայնժամ արտուանանցն Արամազ-
դայ քաղցըր քուն ,

Թըմբիր անոյշ միանգամայն արկցի մը-
տացն այն արթուն :

Մուտ յառագաստըն զոր շինեաց հե-
փեստ որդին փարեղի ,

Ղրանդեաց ամուր դուրս յարմարեաց և
եդ ծածուկ բանալի ,

Զի և բանալ զայն դուրան երբէք չէր ոք
'ի դից բաւական .

Ի ներքս եմուտ , առականեալ փակեաց
ըզդուրս լուսարփեան :

Անդ յանուշակ ջնջեաց յաւիշ ողջ զաղտ
ըզգիրդն ըզմարմնոյ ,

Յանմահականն օծաւ ասլա յանոյշ սա-
րարտ 'ի յիւղոյ .

Բազմաբուրեան յուզեալ իւղոյն 'ի յարկն
յաւէժ Ղիոսին ,

Բուրմամբն անոյշ առ հասարակ լընոյր
զերկիր և զերկին :

Օժեալ այնպէս սանտրեաց ըզգէսս ,
 զարդ ես վարսից գեղամոյն ,
 Փունջ խոսողպեաց եդ պերճ աւագ ան-
 մահական իւր գլխոյն :

Արկաւ զանձամբ տեռն պայծառ զան-
 կեալն 'ի մեծն Աթենայ ,
 Որ հրաշակերտ գործած բազում արուես-
 տակեաց 'ի նրմա .

Պընդեաց 'ի լանջն և ճարմանդիւք աղ-
 խեաց ըզնա ոսկեբուն ,
 Ած և գօտի և էր հարիւր նա թեզանեօք
 զարդարուն :

Ի ծակ բլթակս իւր գեղեցիկ նա եռակ-
 նեայ գինդ կախէր ,

Գինդ շնորհաշուք , գոհարակասպ , հրա-
 շապայծառ լոյս ցայտէր :

Նոր գլխաշուք ջինջ իբր արփի , դիցա-
 նուշիցն իսկուհի

Արկ , և 'ի յոտսն 'ի ձիւնափայլ կօշիկ կա-
 պեաց գեղանի :

Այնպէս համակ յարդ և 'ի զարդ յառա-
 գաստէն ելանէր ,

Ի զատ 'ի դից կոչեաց զԱսողիկ , ձայն
 արձակեաց անվէհեր .

“ Ընէս , ո՛ր գուտոր , և կամ զլանաս ,
 զոր ես զարդիս ասեմքեզ ,
 Խեռան թերևս զի ես Յունաց և գու-
 Տրոյեանց սատարես ” :

“ Արդոյդ դշտոյ, կրկնեաց Աստղիկ,
 դուստրը դու վէ՛հ Չըրուանեան,
 Ասա ըզբանդ, ես յանգ հանեմ ըզկարե-
 լին և զարժանն ” :

“ Տո՛ւր ինձ զարդիս, Դշտոյն նրմա բար-
 բառ կրկնեաց մանգութեան,
 Տո՛ւր ինձ, Աստղիկ, ըզբոյ գրգանսդ, հաղբ
 զանմահից և մարդկան .

Քանզի այցել ես չու առնեմ ծագաց երկ-
 րին բարեբուն

Եւ դիցածին Ովկիանու 11 և Տեթիւեայ
 մօր նախնոյն .

Որք ժողովեալ 'ի տունս իւրեանց սնու-
 ցին սիրով զիս հերա ,

Եւ ինձ կացին դաստիարակք, առեալ
 զիս ինքն 'ի Ռէայ .

Յաւուր յորում վէ՛հն Արամազդ արբայն
 հըզօր գերաբուն

Վանեաց զՉըրուան խոր ընդ երկրաւ
 յանբուսաբեր 'ի ծովուն :

Արդ ես նոցա գընամ այցել և համո-
 զել 'ի կագէն ,

Քանզի անհաշտք լեալ վաղընջուց, նոքա
 միմեանց անհուսւք են .

Խէթ զըժընդակ զոգիս նոցա գրաւեաց
 և քէն ոխակալ,

Ո՛վ, թէ համբոյր ըզսիրտ դոցա գործեմ
 բանիւք հէշտընկալ :

Թէ յաջողիմ հաշտ և ամոք հանել ըզ-
խէթն 'ի յոգւոյ ,

Անշուշտ հոբա զիս կարդասցեն ցանգ նա-
զելի և արգոյ ” :

Օ՛իծաղասէրն Աստղիկ կրկնեաց . « Չիք
անաստեղ քում բանին ,

Չէ և քոյին խնդիրն անճահ դու ես
Դիայ փարելին ” :

Ասաց , ելոյժ ըզանջագեղ զերփնասղնա-
գործ ըզգօտին ,

Յորում անկեալ հրապոյրք , պչրանք ող-
ջոյն ցանցեալ դարէին .

Անդ և տարփանք և ցանկութիւն , խօսք
խաբուսիկ 'ի լեզուէն ,

Եւ խեղդք շըրթանց , որք և ըզմիտս հան-
ճարեղաց թակարդեն 12 :

Եդ զայն 'ի ձեռս և « Ա՛ռ , ասէր , դու
զերփնազարդ զայս գօտի ,

Յորում անկեալ կայ ամենայն . դիր զայդ
'ի քում 'ի ծոցի :

Անշուշտ գործով պըսակեսցես , զոր ինչ
նիւթես խորհըրդով ” .

Լըլաւ Աչեղն և ժրմոեցաւ , եդ 'ի ծոցին
ժպտելով :

Յարեաւ Աստղիկ դուստրն մազդեղն 'ի
տուն չոքաւ աստուածեան ,

Սլացեալ հերա ելիք անդէն զՈղիւմսո-
սին արտեան :

Ընդ Պիրիա և ընդ յուռթի դաշտ Եմա,
Թեան ել գիմեաց,

Եւ ընդ լէրինս ձիւնախաղաղ անց թրա,
կացւոցըն քաջաց :

Սրանայր իբրև սաւառնաթև ընդ սեպա,
ցեալս ընդ կատար,

Եւ ոչ զերկիր գըծէր նորա անհետ ոտին
դարչապար :

Էջ նա 'ի ծոփն ալիասաստ գիմեալ լեռ,
նէն 'ի յԱթոս,

Եւ գիւցազինըն թոասայ հաս 'ի քաղաքն
'ի Լեմնոս :

Անդ գիտ ըզՔուն 13 զեղբայր Մահուն,
աչեղ Դշխոյն մօտ եկաց,

Ըզձեռանէն կալաւ նորա և յանուանէն
ձայն կարդաց .

“ Բաբէ, ո՛վ Քուն, դից ամենայն և ողջ
մարդկան դու արքայ,

Երբէք թէ ունկն ինձ մատուցեր, Օն և
զարդիս ինձ անսա .

Քեզ յաւիտեանս ընդ ամենայն շնորհս
կալայց ես ինքնին .

Տո՛ւր լուսալիր աչացըն քուն 'ւ արտևա,
նանց Դիոսին :

Մըտեալ առ նա ես զամուսնոյ հարկց
նրմա ըզպաշտօն .

Դու նրնջեցո՛ւք քեզ աթոռակ 14 ոսկի ան,
եղծ տամ 'ի ձն .

Հեփեսոս որդիս զայն հիւսնեսցէ , դիցէ
 նա և սատուանդան ,
 Անդ քո ըզգիրդ զոտս հանգուացես յոր-
 ժամ բազմիս 'ի սեղան ' :
 66 Բաբէ արգոյդ , 'ի սատասխան կըրկ-
 նեաց զայս Քունն անուշակ ,
 Դու Ձըրուանայ դուստրը մեծին , բաբէ
 Դշխոյդ գերունակ .
 Ես բողորից տամ նինջ հեշտի դից յաւեր-
 ժիցն քաջաց ,
 'նինջ և բնաւիցս համաճնողին Ովկիանուն
 հոսանաց .
 Բայց քաւ յինէն , ես ոչ ժրտիմ գընալ 'ի
 մօտ Որմըզայ ,
 Տալ քուն և նինջ արտեանանցն , երբ ինձ
 հրաման ոչ կարգայ :
 Յիշեմ ես քաջ , զի զայլ նըւագ բան տի-
 րուհւոյդ զիս դրդեաց ,
 Երբ մեծն հերակլ Արամազդեան յԵզիո-
 նէն ել նաւեաց .
 Յորժամ զոստան զայն Տրոյացուոց քան-
 դեաց մագդեզն այն արքայ ,
 Եւ ես քուն քաղցր 'ի թմբրութիւն մը-
 տացն ածի Որմըզայ :
 Իսկ դու յայնժամ ընդդէմ քաջին չարիս
 նիւթեալ խիտ և հոժ ,
 Փլուզեր ըզծով մըրբիկ ածեր 'ի դիւա-
 շունչ թափ հողմոց .

Տարամերժեալ յիւր համհարզիցն արկեր
ըզնա անդ 'ի կով,

Զարթեալ Դիոս սրբամբտեցաւ և յՈ-
ղիւմպեանս արկ խըռով:

Նա զնս խնդրէր, գըտեալ ըզհէգս ան-
դէն 'ի ծով վայրհոսէր,

Թէ ոչ Գիշեր մայրն աստուածոց մայրն
և մարդկան զնս փրկէր 15:

Փախեայ առ նա. Դիոս սրբանեալն հան-
դարտեցաւ 'ի հոգի,

Եւ խորշեցաւ դիմադրաւելնա Գիշերոյն
սէրունի:

Արդ գու կրկին հրաման կարդաս ան-
ձին իմոյ գուժաբեր ʞ.

«Զի՞ քեզ, ո՞վ Քուն, լըւեալ Դշխոյն ան-
դէն բարբառ արձակէր.

Զի՞ քեզ բընաւ 'ի յայդպիսեաց բան խո-
ճոճել 'ի սրտի.

Կարծես թերևս, թէ Տրոյացոց Դիոս
խընամ մեծ ունի.

Կամ ցասնուցո՞ւ, որպէս ցասեալ վասն
իւր որդւոյն մեծապէս.

Քաջ լեր, ահա ըզմանկագոյն հարսն 'ի
Շնորհացն ես տաց քեզ.

Դա Պասիթէն է նազելիդ 16, դա կո-
չեսցի քեզ 'ի կին ʞ.

Լըւաւ զայն Քունն և ցընծացաւ, կըր-
կնեաց անդէն Դշխոյին.

“Յանսուտն 'ի ջուր ինձ 'ի Ստիւգեան
 երգուիր Դշխոյդ գերունակ ,
 Տուր 'ի ցամաք ըզմի քո ձեռն ըզմիւսն
 'ի ծով սառնորակ .

Դեքն ընդերկրեայք առ Ձըրուանաւ ող-
 ջոյն վըկայք մեզ լիցին ,
 Թէ զՊասիթէն տաս ինձ զառոյգ զիմ 'ի
 Շնորհաց փարելին 17 ” :

Լըւաւ հերա լուսածըղին , ոչ հրաժա-
 րեաց յերդմանէն .

Չայն ետ ողջ դից Տարտարոսին , զորս և
 Տիտանս անուանեն 18 :

Երգուեալ այնպէս և միաբան թողեալ
 զԼեմնոս և զԿաբէս ,

Քօղարկեցան յօդ միգապատ , ուղղոյ ե-
 ղեն փուլթապէս :

Սրացեալ նոքա 'ի գազանուտն հասին
 յԻդա բիւրակնեայն ,

Եւ 'ի Լեկոոն թողին ըզծով և ընդ ցա-
 մաք ուղղեցան .

Նոցա 'նդ ոտիւք բարձր անտառին տան
 սօսափիւն ծայրք մայրեաց ,

Անդ եկաց Քուենն աներևոյթ յԱրամազ-
 դայն 'ի յաչաց .

Եւ դարեցաւ յամբարձուղէշ 'ի յաղթ մի
 ծառ եղևին ,

Որ անդ յԻդա աճունաճիւղ ձըգտէր ըզ-
 ծայրն 'ի յարփին .

Ընդ թաւ սասուլք թաքեալ 'ի տիտ
սրաձայն թըռչնոյն լեռնական ,
Զոր Քաղկիդէ դիքն անուանեն , և Կիւ-
մինդէ ազգ մարդկան 19 :

Սլացաւ Հերա բարձուն իգայ Գարգա-
րոսին 'ի կատար ,
Դէտակն 'ի նա ամպրոպայինն ետես Ար-
քայն շանթահար .

Այն ինչ ետես , և գրաւեցաւ 'ի նա ող-
ջոյն Արամազդ ,
Որպէս նըւագն այն զառաջին մըտինն նո-
քա յառագաստ ,

Յաւուր յորում եմուտ առ նա ինքն 'ի
ծածուկ 'ի ծնողաց 20 ,

Եւ աստ յարեալ նրմա 'նդ առաջ ձայն
յանուանէն զայս կարգաց .

“Առ ինչ գալուստդ յՈղիմպոսէն , Հեր ,
ո՛ւր քո երթ ճեպընթաց ,

Եւ ո՛ւր են կառքդ և երկվարք” . Լըւաւ
‘Իշխոյն և կեղծեաց .

“Ի յցել , ասէր , գընամ զարդիս ծագաց
երկրին բարեբուն ,

Եւ դիցածին Ովկիանու և Տեթիւեայ մօր
նախնոյն .

Որք ժողովեալ զիս յապարանսն իբրև
իւրեանց սիրասուն ,

Դաստիարակք կացին մանկանս հասակ
ետուն ինձ զարգուն .

Այցեմ նոցա և համոզեմ զանհաշտելիսն
 'ի կագէն ,
 Որք 'ի վաղուց զատեալք միմեանց տապին
 'ի խէթ և 'ի քէն :
 Իսկ անդրուվարքս աստ 'ի ստորոտ մընան
 Իդեայ բիւրակնեայն ,
 Որ զիս ընդ ջուր և ընդ ցամաք թռուս
 ցեն նըժոյգքն աննըման :
 Ի քո պատճառս յՈղիւմսդուէն հասեալ
 եկի ես զարգիս ,
 Ձի մի թերևս յեա այսորիկ ասեղգ ընդ
 իս սրբանեսցիս ,
 Իբրու որ լուռ ուղուց եղեալ ես առ 'ի
 քէն գաղտաբար ,
 Անդընդախոր Ովկիանուն 'ի տունն առ
 նեմ ճանապարհ " :
 66 Ընդ դու , հերա , գնացես ապա , ձայն
 Ամարոսպեանն արձակեաց ,
 Իսկ մէք այժմէն ծն առեալ աստ սաշտօն
 հարցուք զամուսնաց :
 Ձի ապաքէն ոչ կին երբէք և ոչ դար
 ձեալ գիցուհի ,
 Ձայսորինակ յինքն յանկուցեալ գրա
 ւեաց կալաւ զիմ ոգի ,
 Ոչ և յորժամ մըտի ես ինքն 21 առ Եք
 նոսեանն ամուսին ,
 Որ մայր եկաց Պիրիթոսի հանճարիմաստ
 գիւցազին .

Եւ ոչ յորժամ առ Ակրիսեանն առ Դա-
նայէն գերաբուն ,

Այն որ ծընաւ ըզՊերսէոս բնաւից մարդ-
կան վէհագոյն .

Եւ ոչ յորժամ մըտի առ դուստր համ-
բաւատենչ Փինկոսին ,

Որ Մինոսին ծընող եկաց և հռադամայ
մազգեզին .

Եւ ոչ յորժամ առ Սեմելէ և առ Աղկմէն
'ի Թեբէ ,

Որ զհերակէս զորդին իմ քաջ 'ի Լոյս կե-
նաց վերբերէ .

Իսկ Սեմելէ զԴիոմիլիւսոս ծընաւ զորդին
բերկրարար ,

Զի է իսկ քաջ ուրախութեան կանա-
ցածնաց սա սլատճառ 22 .

Եւ ոչ յորժամ առ Դեմետրէ առ վար-
սագեղն այն դշխոյն ,

Եւ ոչ յորժամ առ Ղետոնէ առ նազե-
լին և արգոյն ,

Եւ ոչ յորժամ առ քեզ ինքնին , որպէս
արդ զիս գրաւեցեր » .

Լըւաւ Դշխոյն , և սլատասիսան խորա-
մանգեալ բարբառէր .

“ Բա՛բէ ահեղճ Զըրուանեան , զո՞ր
բան հաներ 'ի շրթանց ,

Ի ծայրն իդայ յերևանի սլաշտօ՞ն հար-
ցուք զամուսնաց .

Թէ զայդ յանկարծ մի ոմն 'ի դից ակա-
 նեսցէ յաւերժից,
 Եւ փութացեալ մատն և դուշակ դա-
 սուն լիցի անմահից,
 Ինձ որ դիմօք այնուհետև դառնալ յՈ-
 ղիւմսկ երկնաճեմ,
 Որ դարձ աստի անդ արարեալ զիս ինքն
 անկած առակեմ:
 Թէ իղձ լինիս 'ի բան տանել, էքեզ ար-
 դէն սըրսկապան 23,
 Զոր հեփեստէս կերտեաց որդին դրան-
 դեաց ետ դուրս անասան.
 Օն առեալ մեր անդրո գնասցուք, անդ
 պաշտեսցուք անվէհեր » .
 «Արի, հերա, Ամպրոպայինն ետ Դշխոյ-
 ին քաջալեր,
 Աղէ աչեղդ, ըղքեզ ոչ դիք տեսցեն
 երբէք, ոչ մարդիկ .
 Ամբ ոսկեղէն բակ տամ ըղքև ամբաժա-
 ծուկ քօղածիդ,
 Եւ ոչ արեգն իւր թափանցիկ տեսցէ
 լուսովն եօթնարփեան » :
 Այն ինչ ասաց, և մերձեցաւ ամպրո-
 պային Զըրուանեան :
 Երկիր յայնժամ եբաց անդէն զարգանդ
 ծոցոյն աստուածեան 24,
 Եւ փըթթեցոյց ներքոյ նոցա սէզ դալա-
 ըի խուռներամ .

Փրթթէր լուտաս ցօղտտարափ , փրթ-
թէր քրքում ճոխաբար ,
Փրթթեալ յակինթ թաւ և քնքուշ յեր-
կրէ զնոսա ամբառնայր :

Հանգեան այնպէս և 'ի վերուստ քօղ-
արկեցան յամպ ոսկի ,

Յամպ գեղեցիկ յորմէ շողեալ լուսաճա-
ճանչ ցօղ կաթի :

Այսպէս արքայն ընդ գշխոյին Գարգա-
րոսին յարտեան ,

Անդորրաւէտ կայր 'ի ժամուն գրաւեալ
'ի քուն քաղցրութեան :

Ազեաց յայնժամ Գունն 'ի վայրէն
Յունաց նաւացն 'ի հանդէս ,

Երկրասասան Պոսիգոնին գուշակ լինէր
փութապէս .

“Օն արդ առեալ ճեպ տուր , արքայ ,
քեզ զըղձացեալդ առնեմ ազդ ,

Տուր ձեռն Յունաց , տուր շուք վայր մի
ցորվայր նրնջէ Արամազդ .

Ի քուն 'ի խոր քաղցր և անոյշ ըմբռնեցի
ես ըզնա ,

Զի նա զարդիս 'ի տիկնոջէն թակարդե-
ցաւ 'ի հերայ ” :

Ասաց սրացաւ , ընթանայր Գունն առ
ճոխ մարդիկն և հարուստ 25 ,

Եւ Պոսիգոն թիկունս Յունաց նահա-
տակէր տալ անդուստ :

Անց 'ի ճակատ նահատակաց, խրախոյս
նոցա մեծ կարգայր .

«Զինչ. միւս անգամ մէք Հեկտորայ յաղ-
թել թողցուք հիբաբար :

Վանեալ ըզնաւս տարցի՛ նա շուք որպէս
գոռայ և պանծայ ,

Յորվայր 'ի նաւս անդ ապագէն , սիրտըն
քուքայ Ա.քիլէայ :

Օն արիք Յոյնք . մի անձկայրեացք լի-
ցուք այդչափ յԱ.քիլէս ,

Մեզէն խրախոյս բարձցուք զարդիս մէք
'ի մարտին յասպարէս :

Սակայն և քաջ միամըտեալ հնազանդ
բանիս լիք 'ի բուն ,

Առէք ասպարս որչափ ինչ յաղթ և կուռ
կայցեն 'ի զօրուն .

Փայլուն 'ի գլուխ դիք սաղաւարտ , ամ-
րածածուկ եղերուք ,

Երկայն մըկունդս աղխեալք 'ի բունն և
օն առեալ խաղասցուք :

Ես կարապետ հորդեմ ուղի , և Պրիա-
մեանդ այդ Հեկտոր

Ոչ ժուժասցէ յակաստանի , թէպէտ ա-
հեղ թէպէտ գոռ :

Մարտիկն 'ի ձեզ , որ ըզթիկամբք բառ-
նայ վահան փոքրոգի ,

Անաւագին տացէ ըզնոյն 26 և ինքն աս-
պար յաղթ կալցի » :

Պոսիգոնին հնազանդք ձայնին, կարգեն
ըզզորն 'ի հանդէս

Նոյն իսկ արքայք թէպէտ և խոցք Դո-
մեդ, Ոգիւս 'ւ Ատրիդէս.

Շրջեալք ընդ զորն և առնէին զինուց
զարգուց փոխադարձ,

Զէն զորաւոր առնոյր հըզորն և ըզյո-
ռին տան վատաց:

Նապա խաղան զինաւառեալք փայլակ-
նացայոցք 'ի գուպար,

Եւ յառաջոյ երկրասասանն էր Պոսիգոն
զորավար.

Սուսեր 'ի բռին երկայն, ահեղ, մերկեալ
'ի տիպ փայլական,

Վայ, որ 'ի նա ընդհարկանի, նա ար-
հաւիրք է մարդկան:

Անդ և Հեկտոր կարգ տայր զօրուն,
խօշիւնք ահեղք յուզեցան,

Աստ Պոսիգոն ծիրանավարան և անդ
Հեկտորն աննըման.

Երկուց սոցա խրախոյսքաջաց մարտ փո-
թորկեաց մարտ արեանց,

Մին զորավիգ կայր Տրոյացուց մին թափ
յորդէր Հելլենաց:

Ծով գիզացաւ, ըզնաւս Յունաց և ըզ-
խորանս ողողէր 27,

Մինչ դեռ անդուստ 'ի ճակատուց ձայնն
ահագին, որ հնչէր.

Ոչինչ այնչափ ծովուն մեծի գոչեն կո-
հակքն ամեհի

Ընդ ամինածիր բախեալք , 'ի բուռն հող-
մոց վարեալք հիւսիսի ,

Եւ ոչ շահին բոցոյն այնչափ ասեղա-
ձայն ծաւալի ,

Երբ հրաբորբոք 'ի Թաւ լերին բոցակի-
ղէ ըզմայրի ,

Եւ ոչ այնչափ ձայն մըռընչայ ուժգնա-
հրնչող Թափ հողմոյն

Հարեալ ըզվարարս Թաւ ոստոց զամբարձ-
ուղէչ ըզկաղնոյն ,

Որչափ յայնժամ ասեղագոչք վարա-
զացան ազգք կրկին ,

Եւ ձայն տըւեալ ընդ ճակատուն բա-
խեր ճակատն ասագին :

Լ'նց նահատակ , նախ տէգ յԱյաս հեկ-
տորն եհար կորովի ,

Քանզի նրմա այն ախոյեան խաղայր ընդ
դէմ շեշտակի :

Չեւ 'ի դերևս . կըռւեաց 'ի փոկս 'ի լան-
ջածիգս 'ի կրկին ,

Մին ասպարին և միւսն էր փոկ արծա-
Թագամ սուսերին .

Կուռ այս քեմուխոք քաջին մարմնոյ
պաշտպանեցին հեշտաբար .

Ցասեալ հեկտոր , զի եւ հարուստ տէգն
'ի ձեռաց վայրապար :

Մ'ուտ 'ի ճամբար նիզակակցաց թիկնա
գարձոյց յօրհասէն ,

Հա՛ մեծն Այաս տեղամոնեան ճեպ ետ
'ի բուռն առ ըզվէմ .

Անդ վէմք բազումք կային սփռեալք առ
'ի նաւացն հաստարան ,

Եւ առ ոտիւք նահատակաց թաւալէին
ցիր և ցան .

Բարձնա ըզվին , յուրն առ 'ի լանջ թափ
յասպարին պարունակ

Բախեաց եհար , չըջանակեալ ըզվէմն ըզ-
յաղթ զերթ գնդակ :

Որպէս 'ի շանթ Արամազդեան կաղնին
տապալ յարմատոյ

Հոսի կործան և դառնապէս հոտ ծա-
ւալի ծըծըմբոյ ,

Պակնու մըշակն որ կայ 'ի մօտ հրացան
սասաին բարկութեան ,

Քանզի ճայթէ լի արհաւրօք շանթն Ար-
քային ամպրոպեան ,

Այսպէս հեկտոր արագ արագ կործան
յերկիր կորովին

Տապալեցաւ 'ի նոյն և տէգն ել 'ի ձե-
ռաց հըսկային .

Ասպարըն կուռ յեա կոյս գըլեաց , 'ի
նոյն և յաղթ սազաւարտ ,

Եւ շկահեցին շուրջանակի զէնք պըղընձիք
երփնազարդ :

Խուժան 'ի նա տըւեալ Հելլենք ձայն
ամբարձին մեծագոչ

Եւ խրախուսեալ քարշէլ ըզնանեա թօ
Թափեն խիտ և հոժ .

Բայց և կըշիւ բաւեաց ոչ ոք ըզքաջն
հարուլ փըքնածիգ ,

Քանզի արագ բազ ըզնովաւ արք սա
տեցին կորովք .

Պուղիւգամաս և Ենէաս ճեպին քաջին
'ի սաշտօն ,

Գլաւկոս արին և Ագենոր 'ւ արքայն Լիւ
կեանց Սարպեգոն .

Իսկ և յայլոց կասեաց ոչ ոք 'ի յերաշ
խէս գիւցաղին ,

Առեալք վահանս ամրածածուկ ասպա
րափակ գործեցին :

Լուին համհարզք , բարձին բազկօք ա
ճապարեալք 'ի Ժամու ,

Եւ 'ի խազմէն մեկուսացեալ ածեն ըզնա
յանգորրու .

Ուր և նըմա 'ի վերջապահս մնային նը
ժոյգքն օդապար ,

Ի նոյն և կառքըն երփնուհակ կազմ էր
և անդ կառավար :

Թուուցին ըզնա յոստանն 'ի կոյս . հեկ
տոր հէժէր խոր յոգւոց ,

Մինչև եկեալ Ժամանեցին 'ի հուն գե
տոյն գեղահոս .

Այս է Քսանթոս յորձախաղաց ճէտ
Դիոսի անմահին .

Անդ 'ի կառացն եդեալ 'ի վայր և ջուր
առեալ ցանեցին .

Ըսթափեցաւ, շուրջ հայեցաւ 'ի վեր
բարձեալ ըզդիտակ ,

Նստաւ ծընդաց իւր 'ի վերայ, արին
ժայթքեաց սևորակ .

Գըլեալ անդէն 'ի յետս 'ի կոյս զգեանի
զարկաւ նա կրկին ,

Էր տագնապեալ 'ի հարուածոյն և
ստուերք աչաց պատեցին :

Տեսին հելէնք տարակացեալ զարին
հեկտոր ախոյեան ,

հորդան սաստիկ 'ի գունդ Տրոյեանց
տըլեալ 'ի մարտ վառեցան :

Նահատակեալ քաջն Ոիլեան արագն
Այսս շահատակ ,

հար զԵնոպեանն ըզՍատնիոս 'ի սայրա-
սուր 'ի նիզակ .

Չայս Սատնիոս ծընաւ Նայեան յաւեր-
ժահարան այն արգոյ

Անդէորդին Ենոպոսի մերձ առ ամամբ
Սատնիոյ .

Ըզսս Այսս տիգեալ 'ի փորն արկաւ
յորսայս 'ի գետին ,

Եւ ըզնովաւ կրկին զօրուն մարտ յուզե-
ցաւ ահագին :

Եւ վրիժահան Պուղիգամաս Պանթեանն
 'ի տէգ գերազանց,
 Ի Պրոթէնոր Արիլիկեան յաջ ուսն աչ-
 տէ հար թափանց .
 Տասպալեցաւ հողաթաւաւ, բըռնահա-
 րեաց ըզգետին .
 Ձայն մեծապանծ Պուղիգամաս ան-
 դուստ դոչեաց բանակին .
 “ Տէգ նիզակին իմ կըշուակի ոչ վայրա-
 պար եւ 'ի բաց
 Բազմահարուստ որդւոյս Պանթեայ կո-
 րովաձիգն 'ի բաղկաց .
 Քաջ նա եգիտ զոք հեւլենաց և վարսե-
 ցաւ 'ի մարմին,
 Նա յիմ նիզակն յեցեալ զարդիս իջցէ 'ի
 տուն խաւարին ” :
 Յոխորտ ձայնէն Յոյնք խոցեցան և մեծն
 Այաս կարեւէր
 Յոգի հարաւ, զի նահատակն անկաւ նո-
 րայն առ ընթեր :
 Ճեպով Այաս վերջոտնեւոյն փայլակ-
 նացոյց տէգ ասէղ,
 Խոյս յորհասէն ետ Պուղիգամ, վազեալ
 'ի կողմն առ 'ի շէղ :
 ԶԱրքիղոբոսն Անտենորեան կալաւ աչ-
 տէն մահաբեր .
 Արմա յայնժամ կէտ օրհասին առ յաս-
 տուածոց կընքեալ էր :

Հարաւ նիզակըն կըշուակի 'ի վերջն աղ-
խից միջնողին

Ընդ զօդ գլխոյն, ընդ զօդ ուլանն. հա-
տան ձրգանքն երկոքին .

Մինչ չև կործան անկեալ նորա սրունիւք
ծընգովք մահակիր ,

Գլուխն և բերան նոյն և ուրնգունք կան-
խեն տապաստ 'ի յերկիր :

Օղոյք հարուածոյն գոչեաց Այաս առ
Պուղիւգամ քաջարին

«Աղէ դու արդ, Պուղիւգամէ, զանշուշան
ասա ինձ մեկին ,

Այդ նահատակ զոր արդ հարի ըզՊրո-
թենոր ոչ արժէ .

Թշուի ինձ դա ոչ 'ի վատաց, ոչ յանա-
ւագ 'ի զարմէ .

Դա կամ եղբայր կամ զաւակ է Անտե-
նորայ ասպետի ,

Քանզի զնորա զազգատոհմին ըզտիպ բե-
րէ դիտակի » :

Ի կեղծ ասաց, քաջ ճանաչէր . Տրոյ-
եանք 'ի սիրտ խոցեցան .

Եւ Ակամաս փութաց յայնժամ հարազա-
տին վրիժահան .

Հար ըզՊրոմաք բիովտացին որ առ զո-
տիցն և քարչէր ,

Պարծանս անձին ետ Ակամաս, ձայն
զայս գոչեաց անվէհեր ,

66. **Ն**եւեհնք նետից դուք նըշաւակք, յա-
 խուռնախօսք վայրասպար,
 Անշուշտ ուրեմն ոչ վասըն մեր միայն է
 կոծն և աշխար.
 Բա՛րէ, և դուք նոյնօրինակ կայք դիտա-
 պաստ 'ի յերկիր.
 Զխորդ Պրոմաքդ յիմ'նիզակէն ըզքուն
 ննջէ անյարիր.
 Հարազատիս վըրէժ արեանն ոչ ձըգե-
 ցաւ ընդերկար.
 Մաղթեսցէ մարդ, 'ի վըէժ մահուն թո-
 ղուլ 'ի տան զոք եղբայր " :
 Չայն զայս լուան ըզպարծանաց, Յոյնք
 սըրտնեցան ահագին,
 Իսկ ըզՊենեղ այս երգիծանք յոյժ կա-
 րեվէր խոցեցին.
Եւ քաջ արքայս այս Պենեղոս և տէգ
 կըշուեաց յԱկամաս,
 Աճապարեալ նա առ 'ի կողմն յանձնէն
 մերժեաց զօրահաս.
 Սըլաքն հարաւ մահահրաւէր յիլիոնէս
 շեշտակի,
 Եւ էր զաւակ սա սիրասուն խաշնահա-
 րուստ Փորբասի.
 Ըզսա հերմէս սիրեաց սաստիկ 28, ըն-
 չեղ Տրոյեանց եգ յազգին,
 Ծընաւ ըզսա մայր իւր արդոյ հօր Փոր-
 բասայ միածին.

Ի սա Պէնեղ ընդ արմն աչաց հար ընդ
 յօնիւքն ըզնիզակ,
 Ոստոյց ըզբիբն, և սայր տիգին թափ անց
 ընդ ակն ընդ ծոծրակ.
 Ի դուճս անկաւ, բարձ Իլիոն զափ ըզ-
 կրկին դաստակաց,
 Պէնեղէոս վազեալ 'ի նա սուր սուսե-
 րաւ փողոտեաց :
 Բզգլուսն հանդերձ սաղաւարտիւն ա-
 ռեալ զարկոյց ըզգետնի,
 Մինչ գեռ անդէն յականողիսն էր սայր
 վարսեալ նիզակի.
 Ի վեր ապա բարձ զայն իբրև կորզեալ
 գլուխ մեկոնին,
 Ած յերևան և մեծազանժ ձայն ետ Տրոյ-
 եանց բանակին.
 « Արդ հօր և մօր Իլիոնիդ լէք ինձ Տրոյ-
 եանք ազգարար,
 Թող ըսկըսցին 'ի տաճարին ջայլել ըզկոծն
 և զաշխար.
 Զի և ոչ կին Պրոմաքոսին Ալգէնո-
 րեանն հրճուեսցի
 Ի տես կրկին իւր ամուսնոյն, երբ գարձ
 առնեմք մէք աստի » :
 Ի լուր բանին ողջ ահաբեկք գոյն շքե-
 ցան 'ի դալկան,
 Այր այր խուճապ դաշտ փախըստի խըն-
 դրէր մահուն դառնութեան :

Ենձ արդ, Մուսայք, դուք պատմեցէք,
 հիւրք ողիւմսկեան երկնաբնակք,
 ո՞ր դք յայնժամ յԱ.բայեցւոց եկաց փա-
 աօք նահատակ,

Որ նախ զանկածն արիւնայեղց տարաւ
 կապուտ կողոպուտ,

Երբ առ հեղենս յաղթօղ մարտիւ վեհ
 Պոսիդոնն եկն եմուտ:

Հար առաջին Տեղամոնեան Ա.յասըն
 վեհ դիւցազանց

ԶԻւրոտս Գիւրտեանըն զօրավար կորո-
 վասիրտն այն Միւսեանց.

Ապա զՓալկէս և ըզՄերմէր Անտիդքոս
 կողոպտէր,

Քաջ Մերիոնն 'ի մահ զԻպպոտ և ըզ-
 Մորիւս տարածէր.

ԸզՊերիփետ և ըզՊրոթոն Տեւկրոս ե-
 հար քաջարին,

Աշտէ յարքայն Իպերէնոր հար Մենե-
 դաւ 'ի փորին.

Ըզփեռեկեալըն զախոնդիս վայթեաց
 աշտէն դառնութեան,

Ի նոյն խուճապ հոգի նորա ել ընդ վի-
 ըին ընդ բերան.

Անդէն նորա ականողեաց մոլթ մառա-
 խուղք պատեցան.

Բայց և Ա.յաս մահունս ամբաւ դոր-
 ծեաց արագն Ուլեան.

Սա աներման էր հետամուտ խուճապե-
լոցն ահ և սաստ ,
Երբ 'ի փախուստ ըզտագնապեալս ան-
դուստ ճեպէր Արամազդ :



ԵՂՒԼԱԼՆ



ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ժԵ .

ՆԱԽԱԴԻՐՈՒԹԻՒՆ

Արամազդ զարթուցեալ ՚ի քնոյ և տեսեալ զհարուած Տրոյացւոց, իմանայ ըզգաւն Հերայ և դառնապէս սպառնալեօք կշտամբեալ զնա, հրամայէ դառնալ յՈղիւմսոս: Անդ հնարիմացութեամբ Հերա գրգռէ զգիս ընդդէմ Արամազդայ: Բորբոքի Արէս, և հանդարտի յԱթենասայ: Հիբիկ ՚ի հրամանէն Արամազդայ տայ Պոսիդոնի տեղի տալ ՚ի մարտէն: Ապողոն նորաստեղծէ զՀեկտոր, և կացեալ ՚ի գլուխ բանակին Տրոյեանց, տապալէ զմնացուածս սպառուարին Յունաց: Մարտ անհնարին և անընկրկելի: Հեկտոր, թէպէտ և ընդդէմ ճիգն թափէ Այաս, մտի ՚ի հրակիղել զնաւան:



ԵՂՒԼԿԸՆ

ՀԱԳՆ ԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԵ .

Ի ԲՐԵՒ այնպէս գունդք Տրոյացւոց հա-
րուած առեալ սաստկութեան ,
Խուճապեցան յԱքայեցւոց ընդ շէր-
տափակն ընդ խրրամ ,
Յոգիս նոքա ասլաստանեալք եկին կա-
ցին մերձ կառաց ,
Եւ գոյն դիմացն առ հասարակ էր թա-
լացեալ յարհաւրաց :
Չարթեաւ Դիոս յԻդեան կատարս առ
ոսկեգահ Դշխոյին ,
Յարեաւ եկաց ակնկառոյց եղև ՚ի յազգն
՚ի կրկին .

Տրոյեանք վանեալք , Յոյնք հետամուտք
սաստիկ մարտին տան մըղօն ,

Եւ 'ի նոսա արձանացեալ գոռայր ար-
քայն Պոսիդոն .

Գարձեալ և զայն յակն արկանէր , զ' 'ի
դաշտ տապաստ կայր հեկտոր ,

Եւ ըզնովաւ նստեալ համհարզք քամա-
կաբեկք կորակոր ,

Նա ուշագնաց յոգւոց թասէր , արիւն
ժայթքէր 'ի լանջաց ,

Քանզի և որ եհարն ըզնա չէր ապիկարն
'ի Յունաց .

Ետես Դիոս գորովեցաւ հայրն աստուա-
ծոց և մարդկան ,

Խոժոռ ահեղ յառեալ 'ի հեր ձայն որո-
տաց սաստկութեան :

Մ. Ն չարարուեստ , հեր խաբուսիկ ,
քոյին խաբանքդ այդ անշուշտ

Դուլ 'ի մարտէն ետ հեկտորայ , ճե-
պեաց ըզգօրն 'ի փախուստ :

Ա. Ղ անպատիր լուծցես ըզվրէժ քոց
չարանիւթ բարոյից ,

Եւ ես 'ի քեզ նախ բուռն արկեալ եդից
ըզքեզ գանալից .

Ո. Ճ յիշես դու երբ կախ ընդ օդ ոտիցդ
եդի սալ կրկին ,

Եւ դաստակացրդ ձեռակոտպ ետու զան-
լոյծն ես զոսկին .

Հէգ դու այնպէս կայիր ընդ ամսսս և
 ընդ եթեր երերուն 29 ,

Եւ սրբանէին դիցն երախանք 'ի յՈղբա՛մ
 պոս 'ի բարձուն .

Չէին իշխան փրկել ըզքեզ . և թէ ժրտէր
 ոք ընդդէմ ,

Կալեալ ըզնա ես վիժէի առ 'ի սեմոցն
 երկնաճեմ .

Թաւալցըրոր անդ հիքացեալն ունէր զեր
 կիր շնչասպառ ,

Բայց և այնպէս չէր դուլ ցաւոյս վանն
 հերակլեայս քաջափառ .

Ում խեթացեալ յանբերն 'ի ծով մըրըսիկ
 յուզեալ հիւսիսի ,

Եւ ձրմերունք ածեալ որդւոյս 'ի Կով
 արկեր զարտուղի 30 .

Չոր ես փրկեալ 'ի ձիաւէան յԱրգոս
 ածի միւս անգամ ,

Յանդորր հանի զի վշտատես գրտաւ նա
 գամ քան ըզգամ :

Յուշ ած ըզբանդ , զի դու կացեալ 'ի
 դաւանաց մեկուսի ,

'Նա և զարդիս լիցիս գործոյդ քաջ խեղ
 մուտ 'ի սրտի ,

Թէ այդ պջրանքդ և այդ գրգանք զոր
 քեզ բերցեն արգասիս ,

Որ դու 'ի դից մեկուսացեալ եկիր աս
 տէն դաւել զիս .” :

Օ՛, ահի հարաւ և կայր այնպէս աչեղ
 Դշնոյն 'ի դողման,
 Ձայն յԱրամազդ արագաթև ետ զայս
 կրկնեաց պատասխան .
 « Վըկայ Երկիր , և երկնաճեմ Երկին
 անդորր ինձ վըկայ ,
 Անդընդական Ստիւգեայն վըկայ լիցի և
 ջուր որ գընայ ,
 Ձի այս է ջուրն ահագնալուր , յոր ոք
 լիցի երգմընի ,
 Երգումն է մեծ սա երջանկաց յոյժ ա-
 հաբեկ 'ի յոգի .
 Վըկայ և գլուխդ անմահական և սուրբ
 այս մեր անկողին ,
 Օ՛ն անդր յինէն , թէ երգմնահար լի-
 նել երբէք ես ժրտիմ :
 Քաւ , Պոսիգոն ոչ յիմ խորհուրդ վնա-
 սել Տրոյեանց խիզախեաց ,
 Կամ Հեկտորայ զեան հանդերձել կամ
 զօրավիդ տալ Յունաց .
 Ի յայդ նախճիր դա առանձին յոգւոյն
 իւրմէ դրգեցաւ ,
 Ձաղէան ամբաւ զԱքայեցւոց տեսեալ
 'ի դուլթ շարժեցաւ :
 Բայց ես նրմա հրահանգ ազգեալ և յոր-
 դորակ նրմա տաց ,
 Միամըտեալ կացցէ պատկառ Ամպրո-
 պայնոյդ պատգամաց » :

Լայն ինչ լուեաց, և ժպտեցաւ հայրն
 աստուածոց և մարդկան,
 Եւ առ Դշխոյն արագաթեւ պատգամ
 կարդաց տէրունեան
 « Թէ դու արգոյդ Հերա աչեղ յա-
 կումբ բազմեալ անմահից,
 Համախորհուրդ իմոց կամաց անշուշտ
 իցես ձայնակից,
 Ինքնին յայնժամ և Պոսիդոն, թէ և կալ-
 ցի միտս օտար,
 Արագ շրջեալ յիւր խորհրդոց ընդ մեզ
 չէլցէ 'ի պայքար:
 Բայց աղէ դու, թէ անպատիր և ան-
 խարդախ խօսեցար,
 Օ'ն արդ առեալ երթ յՈղիւմպոս 'ի
 յանմահիցն 'ի կաճառ.
 Չայն տուր Հիրկայ և քաջաղեղն Ապո-
 ղոնին մազգեղանց,
 Գնացեալ Հիրիկ մոցէ 'ի զօրն պատե-
 նաղէն Աքայեանց.
 Զլիմ տէրունին տացէ պատգամ Պոսի-
 դոնի արքայի,
 Դուլ և դադար տըւեալ մարտին նա յօ-
 թեվան իւր դարձցի:
 Իսկ Ապոլոն սիւգ նոր շնչեալ հանցէ
 զԵկտոր 'ի հանդէս,
 Եւ մոռացօնք ածցէ ցաւոցն յոր տագ-
 նապի դառնապէս:

Անդուստ և Յոյնք թիկնադարձոյցք փա-
 խուստ առցեն զանարին ,
 Խուճապեսցին մինչև 'ի նաւս Աքիլէ-
 սի գիւցազին :
 Խրախոյս յայնժամ նա 'ի կրուուէլ տացէ
 իւրում Պատրոկղեայ ,
 Սադիտապասա զԵղիոնիւ անկցի 'ի տէգն
 Հեկտորայ :
 Բայց և անկցին շատ պատանիք 'ի Պատ-
 րոկղեայն տիգաբուն ,
 Հարցի և անդ իմ Սարպեդոն մազդէզն
 որդիս գերագոյն :
 Հրաշունչ յայնժամ գիւցազն Աքիլէ
 զԵկտոր 'ի մահ վարեսցէ ,
 Եւ ես յաւէժ ըզՏրոյացիս վանել վանեմ
 յայնմ օրէ :
 Վանեալք այնպէս խուճապեսցին ցանդ
 'ի նաւաց բացակայ ,
 Մինչև առցեն Յոյնք զԵղիոնն 'ի խորհր-
 դոցն Աթենայ 31 :
 Բայց և իմում սրբամբտութեան դուլ ես
 երբէք չարարից .
 Ոչ և ներեմ, սատար Յունաց թէ ոք լի-
 ցի յանմահից ,
 Մինչև ողջիկ առեալ լըրումն իղճն Ա-
 քիլէայ քաջազին ,
 Որպէս յառաջ խոստումն ետու զիմոյ
 գլխոյն զակնարկին ,

Երբ ըզձընդովք իմ փարեւով Թեոփս ար-
դոյն դիցուհի

Արդահատեաց, շուք Աքիլեայ տալ դից-
ազին զաւակի ։

Ըսաց արքայն, անսաց բանին լուսածը-
ղին մեծ Դշխոյ,

Յիդեան լերանց վերամբարձեալ սլացաւ
ի ծայրն Ողիւմպիոյ ։

Չորօրինակ խորհուրդք մարդոյ շութա-
փութեամբ աննրման,

Երբ տար աշխարհս հատեալ բազում
անդրէն ՚ի նոյն խոյանան,

Չի խեղամուտ ամենայնին ինքնին ընդ
անձն իւր ասէ,

Ես աստ չոքայ ես անդ չոքայ և շատ
ինչ այլ յուշ ածէ 32,

Այնպէս սրաթև թռուցեալ Հերա յՈ-
ղիւմպն եհաս վերնական,

Ի տուն եմուտ Արամազդայ, ուր ան-
մահիցն երախան ։

Տեսին յարեան, հիւրընկալէն ձօնեալ
բաժակս ՚ի ձեռին .

Նա թող զայլոցն, առ ըզբաժակն ըզգե-
ղաւոր Թեմիսին 33 .

Սա առաջին աճապարեալ ել Դշխոյին
ընդ առաջ,

Արձանացաւ և ձայն նրմա՞ արագաթև
արձակեաց .

“ **Օ** ի՞նչ այդ գալուստդ և զի՞ գշխոյդ
 անաբեկեալ տիպ բերես ,

Այդ ջրուանեանդ անկողնակից թերևս
 պակոյց ինչ ըզբեզ ” :

“ **Մ**ի ինձ , թեմիս , կարճեաց ըզբանն
 լուսածըղին Գիցանոյչ ,

Մի հարցաներ , և մի ինձ այժմ՝ ի յայդ-
 պիսեաց ածեր յուշ :

Գիտես իսկ դու զոգին դորա ամբար-
 տաւան և դարժան .

Արի՛ դու այժմ՝ ի գլուխ բազմեաց մեր տա-
 ճարին ՚ի խրախճան .

Առ հասարակ լուիցես և դու ընդ ան-
 մահիցն ակրմբի ,

Զի՞նչ մեզ Գիտս պատուիրանաւ զի՞նչ
 ազդ արար դըժպըճի :

Աչ խնդասցեն ոչ դիք անմահք և ոչ
 մարդիկ մահացուք ,

Թեպէտ ումեք բերկրեցելոյ համեղաս-
 ցին այս կոչունք ” :

Լսաց , անդէն Գշխոյն արգոյ առ բազ-
 մական յակրմբին ,

Եւ թախծեցան պարբ անմահիցն յԱրա-
 մազդայ տաճարին .

Իսկ՛հա ժըպիտ վեր ՚ի վերոյ խուն ՚ի չըր-
 թանցն արձակեաց ,

Բայց ՚ի վերուստ առ թուխ յօնիւք զիւր
 ըզճակասն ոչ պարզեաց .

Մըղձկեալ այնպէս և զայրագին բազմա-
կանին ձայն կարգայ.

«Անշուշտ, ուակայք եմք և մանկունք, թէ
կազ յուզեմք ընդ Դիայ.

Ի զուր է մեզ մօտել առ նա, սանձել
բանիւք կամ բրունի,

Նա աւանիկ բազմեալ անդէն ոչ հոգայ
ինչ ոչ շարժի:

Ասէ իսկ զինքն անզուգական դիցն ան-
մահից երամոյն,

Կորովութեամբ և զօրովթեամբ բնաւից
նոցա վէհագոյն:

Արդ զոր աղէտ դա ձեզ առթէ, ժու-
ժալ պիտի մեծապէս,

Որպէս զարդիս իւրում վշտին, կարծեմ,
ժուժայ դուն Արէս.

Ահա տապաստ կայ 'ի մարտի որդի նու-
րա փարելի,

Ասկաղափոս, զոր քաջդ Արէս իւր սի-
րասուն դաւանի 34 »:

Գուժեաց 'ի լուրն, և հաստ ըզբարձն
առեալ ձեռամբքն Արէս

Կոծէր ծեծէր և մոլեգին յոգւոց եհան
դառնապէս.

« Արդ դատապարտ զիս մի առնէք, ո՛
երկնաձեմք ողիւմպեան,

Թէ արդ առ Յոյնս սրացեալ իջից ա-
րեան որդւոյս քինահան.

Թէպէտ օրհասն հարեալ զիս անդ յԱ-
րամազդեան 'ի շանթին,

Թէպէտ տապաստ արկցէ 'նդ մեռեալս
զիս ապաւառ ընդ փոշին ։

Ասաց, անդէն և սոսկալի յԱՏՆ և 'ի
հոյն ձայն կարգաց 35

Տալ զերիվարսն 'ի լուծ, և ինքն ըզ-
զէնսն արկաւ բոցաղգեաց ։

Սոր իմն ասեղ անշուշտ յայնժամ ցա-
սումն և խէթ մահաբեր

Ընդդէմ դասուն գիցն անմահից յԱմալ-
րոպայնոյն բորբոքէր,

Թէ ճեպ չըտայր, ասաբեկեալ վասն
անմահիցն Աթենաս,

Վազեալ գահէն 'ի նախադրանց վանել
ըզգառն օրահաս 36 ։

Ըզսաղաւարսն առ 'ի գլխոյն, եբարձ
զասպարն 'ի թիկանց,

Տեգ զերկաթին առկայացոյց կորզեալ 'ի
յաղթն 'ի ձեռաց .

Արիական ձայն ընդ Արէս գոչեաց ասեղ
նա անդուստ,

« Այ մոլեգին հանճարազիրկ, գնացեր
անշուշտ 'ի կորուստ ։

Ի զուր ուրեմն են լսելիքդ, ամեթ չիք քո
չիք հանճար .

Եւ որ այն ինչ եկն 'ի Ռիայ զարդոյ
Իշխոյն ո՞չ լուար .

Սրտիս թերևս ըզքեզ առակ գըճճեւ չա-
րեօք ահագին ,

Եւ նըշաւակ բըռնադատեալ դառնալ
յՈղիւմսւ վէրըստին .

Ա՛յ հիքացեալ . և մեզ բնաւից վիշտ առ-
թեսցես գըժընդակ ,

Յորժամ Դիոս արագ արագ թողեալ
զազգացն ըզբանակ

Հասցէ յՈղիւմսւ , խըռով սաստիկ յաղ-
թողն հարեալ մեծապանծ ,

Զայր այր 'ի մէնջ 'ի բուռն արկցէ , որ
յանցաւոր որ անյանց :

Արդ դու զորդւոյդ , հրաման կարդամ ,
դիր այժմ 'ի բաց ըզսոյքար ,

Զի և շաք իսկ տապաստ անկան քան
զորդին .քո քաջ որեար :

Ո՛չ և յապայս արկցին տապաստ շատ
կորովիք 'ի բազկէն .

Դըժընդակ է զազգ մահացուաց ողջոյն
փրկեւ յօրհասէն) :

Ըսաց Պալաս , յանկոյց զԱրէս և յիւր
'ի գահ հրաւիրէ .

Իսկ զԱպողոն յայնժամ Հերա կարդաց
'ի դուրս 'ի տանէ .

Կարդաց 'ի նոյն և ըզհիրիկ , սա անմա-
հից է հրեշտակ .

Ո՛յց և սատգամ նոցա հակիրճ զայս ետ
Դշխոյն գերունակ .

« Արիք ճեպով յիդեան կատար, ձեզ
Արամազդ տայ հրամանն .

Գուք անդր հասեալ հարէք ըսպասակըն-
կառոյցք 'ի յԱրքայն ,

Ձոր և պատգամ տայ տէրունի ածէք
փուլթով 'ի կատար 37 » .

Ասաց դարձաւ, և 'ի գահոյսն անց գի-
ցուհին գերափառ :

Սլացան նոքա յՈղիւմպոսէն սաշտօն հա-
րուլ շուտափոյթ ,

Թշուեան արագ 'ի բիւրակնեայն հասին
յիդա գազանուտ :

Անդ զաշալուրջն Ձրրուանեան Գար-
դարոսին յարտեան

Գրտին բազմեալ, և ըննուլաւ շուրջ բակ
ունէր ամպ բուրեան :

Եկին նոքա արձանացան Ամպրոպայնոյն
առաջի ,

Կացին սպտկառ . ետես Արքայն և բեր-
կրեցաւ 'ի յոգի ,

Ձի սպասարկուս ետես արագ 'ի ձայն
սիրուն լծակցին .

Բաց ըզբերանն և առ Հիրիկ պատգամ
կարգաց առաջին .

« Արի Հիրիկ, 'ի Պոսիգոն ձայն տուր յար-
քայն անվեհեր ,

Եւ անվլթար հրեշտակուլթեամբ լիցիս
անսուտ իմ բանբեր .

Հրաման կարգա . դուռ և դադար տը-
 ւեալ նա դուռ իւր մարտին ,
 Դարձցի անդրէն դիցն յերախան , և կամ
 'ի ծով ծիրանին :
 Ապ' եթէ նա ոչ հանգարտեալ ըմպահ .
 կեսցէ 'ի ձայնն իմ ,
 Քաջ 'ի խորհուրդս իւր կըշռեացէ լեալ
 խելամուտ և ուշիմ .
 Ժուժայ արդեօք յակաստանի , թէպէտ
 հուժկու կորովի ,
 Դիմագրաւէ , յորժամ էս ինքն հարայց
 նըմա 'ի դիմի :
 Եմ իսկ ծնընդեամբ էս անդրանիկ , եմ
 և ուժով աննըման .
 Զխորդ կըշիռ գործէ ընդ իս , ում այլք
 ահիւ տեղի տան : :
 Լըւաւ , անդէն ճեպեաց հիրիկ յԱրա-
 մազգայն 'ի պաշտօն ,
 Ի թևս հողմոց յիգեան լերանց սրացաւ
 'ի սուրբն Եղիօն :
 Որպէս յամպոցըն ձիւնաբերք կուռ և
 արագ թօթափին ,
 Եւ կամ պաղեալ ճեպէ կարկուտ 'ի թափ
 պարզող հիւսիսին ,
 Այնպէս արագ սլացաւ հիրիկ արշաւա-
 սոյր շէշտակի ,
 Արձանացաւ , տայր ըզպատգամն երկրա-
 սասան Արքայի .

« Հրեշտակ առ քեզ առաքեցայ, ծիրա-
 նավարս ո՛վ արքայ,
 Պատգամ բերեալ քեզ ըզքաջին զասպա-
 րազէնն ըզ՚Իայ .
 Հրաման կարդայ . դու անձնապահ ըզ-
 գուշացեալ 'ի մարտից,
 Գարձցիս անդրէն յանդորր 'ի ծով և
 կամ 'ի պարս անմահից :
 Ապ' եթէ դու ոչ հանդարտեալ անաս-
 տեսցես պատգամին,
 Սպառնայ ինքնին քեզ երեսել մարտ
 յարդարել առանձին :
 Վասն այն 'ի յաղթ ապրել բազկէն խոր-
 հուրդ տայ քեզ գեղեցիկ,
 Զի է իսկ ինքն ուժով ահեղ, է և ծնուն-
 դեամբ անդրանիկ .
 Փրտիս ըզդէմ ունել նորա, որ ահ այ-
 լոց տայ ամբաւ » .
 Ասաց, 'ի նոյն և Պոսիդոն 'ի հուր ցաս-
 ման վառեցաւ :
 « Բա՛րէ, գոչէր, հըզօր է նա, այլ բար-
 ձրայօնս բարբառի .
 Ճըգնէ զիմ կողմն որ 'ի սկըզբանց զոյգ եմ
 նրմա 'ի պատուի :
 Զ' 'ի Զըրուանայ եղբարք երեք եմք 'ի
 Ռէայ ծընընդոց,
 Դիօս և Ես և է երրորդն Անդընդեհպեա
 դըժոխոց .

Ի բաշխեալ երրեակ գոյք բաշխեցան 38, այր
այր կալաւ զիւր բաժին .

Վիճակ արկաւ, և ես յաւէժ 'ի ծով բնա-
կիմ ծիրանին :

Անդընդէհպետն էառ բաժին զտուն
խաւարին միգաբեր ,

Եւ Արամազդ զերկին անդորր 'ի վեր 'ի
յամպս և յեթեր :

Իսկ է երկիր և Ողիւմպոս մեզ հասարակ
'ի վիճակ ,

Վասն այն և ես Արամազդայ չեմ պատ-
գամին հրպատակ .

Կացցէ դա լուռ յերրորդ բաժնին , թէ
պէտ ուժով գերազանց ,

Եւ մի բազկաւն երկեցուսցէ նա զիս իբ-
րև վատ արանց .

Շատ է դրմա ընդ մանկըտուոյն բանիւք վա-
րեալ գոռութեան ,

Ահ արկանել իւր ուստերաց իւր դրստե-
րացն յերախան :

Իսկ արդ ո՞ ոք իցէ երբէք յիւր ծընընդոց
զոր ծընաւ ,

Որ իւր ձայնին պատկառ կայցէ անբռ-
նադատ և կամաւ) :

“Վամիս արքայդ , կրկնեաց հերիկ , կա-
միս արքայդ երկրափակ ,

Եթէ Դիայ տարայց ես զայդ հրեշտա-
կութիւն իրստամբակ :

Աղէ դու, քաջ, ինչ ո՞չ փոխիս. առաքի-
նեաց միտք փոխին 39 .

Գիտես իսկ քաջ, զի անգրանկաց ցանդ
Երկննէսք պահ ունին 40 ” :

“ Այո հիրիկ, Ծիրանավարսն անդէն
կրկնեաց ըզբարբառ ,

Այո դու զայդ, ո՞վ գիցանոյշ, իրաւ ա-
սես և արդար .

Ե գեղեցիկ, թէ այր դեսպան խորհուրդ-
տացէ խոհական .

Այլ իմ խորհուրդք տապեալ սրտի հուր
բորբոքեն ըզցամանն :

Ձի դա զարդիս գողայ ընդ իս ընդ
նոյնաբաժ գահակից ,

Եւ խիզախեալ որոտընդոտ հրացայտ
շանթէ 'ի բանից :

Այլ զն առեալ, թէպէտ տապիմ, ես
զայս նըւագ տեղի տաց .

Բայց քեզ ասեմ, և սպառնալիքս են իսկ
յանշուշտ 'ի մլտաց .

Թէ 'ի հեճուկս դա ինձ և մեծ օրիոր-
դին Աթենայ ,

Հերայ ընդդէմ և Հերմեսին և արքային
Հեփեստեայ

Խնայէ քանդել հողաթաւալ զԵղիոնին
ըզպատուար ,

Եւ ոչ 'ի կողմն Աքայեցւոց տայ յաղթու-
թիւնն անլըթար ,

Օ՛ն և օն մեզ զանչէջ խեթին բոց բորբո-
քէ դըժընդակ ։

Ասաց, ելիք Երկրասասանն զԱքայե-
ցւոցն ըզբանակ ։

Չոքաւ եմուտ անդընդասոյզ ՚ի փապ
ծովուն ալէտանջ,

Եւ անձկայրեաց եթող առ ինքն ըզսիրտ
Յունաց դիւցազանց ։

Չայն յԱսողոն Ամպրոպայինն յայն-
ժամ կարգաց տէրունի,

« Աղէ դու արդ, ս՛յլ քաջաղեղն, երթ
առ Հեկտոր կորովի ։

Չերկրասասանն արդ յանդորրու ալուցք
ծովուն ժողովէն,

Ընկրկեցաւ նա խոյս տըւեալ ՚ի մեր յա-
հեզ ցասմանէն ։

Թէ չէր այնպէս ։ մինչև յանդունդս
ձայնն ահաւոր մեր խազմին

Հնչէր և դիցն խաւարարգեւ, որք ըզՉՁ-
րուան բակ ունին ։

Այլ այս ճշգրիտ ինձ և նրմա քաջ իսկ
եղև պիտեան,

Որ խոյս յիմոյն ետ ՚ի բազկէն, թէպէտ
հրավառ ՚ի ցասման ։

Գիտաց նա քաջ, եթէ անքերտն յանկ ոչ
ելցէ այս պայքար,

Բայց աղէ դու ս՛ռ այժմ ՚ի բուռն ըզ-
փողփողեալն իմ զասպար ։

Փայլակնացո և հոր շքութիւնդն , ահ արկ
Յունաց գիւցազանց ,

Եւ հեկտորայ , ո՛վ գիւպաղէղն , իմում
քաջին իրնամ ած ,

Կորով հուժկու շնչեալ 'ի նա , մարտիկ
գիցես քաջազէն ,

Զի մինչ 'ի նաւս և յԵլէսպոննա Յոյնք
խուճապեալք փախիցեն :

Գամն 'ի բանից և 'ի յարդեանց հնարեմ
յայնժամես 'ի բուն ,

Զի միւս անգամ Յոյնք վշտատեաք գիւր 'ի
քրտանց առնուցուն » :

I ըլաւ Փեբոս յիդեան լերանց սրացաւ
իբրև ըզբազէ

Աղանէխանձ , սա է սրաթև յոյժ 'ի
Թըռչնոցն յերամէ :

Զեկտոր գիւցազն եգիտ 'ի նիստ , չէր
նա յորսայս 'ի ժամուն ,

ՍԹափեալ այն ինչ և ընտրուԹիւն առ
նէր նա իւր որերոյն .

Քիրտն ապաժոյժ եկաց նորա ոչ ևս յո
գւոց նա Թասայր ,

Երբ մի անգամ ընդ միտ ածեալ Դիոս
նրմա այց արար :

Մերձ Քաջաղէղն արձանացաւ , ձայն
արձակեաց խրախուսի ,

“ Զի քեզ հեկտոր քաջ Պրիամեանդ ,
հիմ կաս յայլոց մեկուսի .

Զինչ միջաբեկ նստեւքո այդ, որ ցաւ
ըզբեզ պարանեաց” .

Չայն մի նըւաղ անդուստ հեկտոր յո-
գւոց եհան անդրադարձ .

“ Յին տէր . ո՛վ ես դու քաջդ ’ի դեց որ
մօտ եկեալ հարցանես ,

Ո՞չինչ լըւար զիմ կըռուելոյն նաւատոր-
մին ’ի հանդէս .

Անդ ես տապաստ արկանէի գոռն Այա-
սին յընկերաց ,

Նա վեմ առեալ ձրգեաց յիմ լանջ , զիս
’ի մարտէն ընկըրկեաց :

Էր ինձ անշուշտ այցել այսօր ոգւոցն ’ի
տան դըժոխոց ,

Զի վայրիկ մի ես ապաստան էի պարզել
’ի յոգւոց” :

“ Բաջալերեաց , անդէն Փեբոս խրա-
խուսական ձայն կրկնեաց ,

Քաջ լեր , ահա քեզ զօրավիզ Գիոս յԻ-
դեայ զիս յըղեաց .

Իսկ որ այժմիկ քեզ յօգն եհաս , է ոս-
կեսուրն Ապողոն ,

Որ քեզ յաւէժ հովանացայ և ոստանիդ
Եղիոն :

Արդ աղէ քաջ դու ձայն խրախոյս տուր
բազմահոյն ասպետաց ,

Դըռոյթ ’ի նաւս տացէն դոքա օգապա-
րիկ նըժուգաց .

Ես յառաջոյ հորդեմ՝ ձիոց , թող ճախ-
րեսցեն աննրկունք .

Ես վանեցից , փախուսաւ ընդ կրուկ առ-
ցեն Յունաց գիւցազունք ” :

Չայս՝ Բաղադեղն հովուին մեծի ետ քա-
ջալեր մեծազօր ,

Եւ անվրկանդ շնչեաց կորով հուր բոր-
բորեաց ՚ի հեկտոր :

Որպէս յորժամ ասպաստանիկ ձին գա-
րեբոյժ ՚ի մըսրոյն

Դափր հատանէ , սրանայ ՚ի դաշտ կա-
սակոտոր աննրկուն ,

Լուանալ անձկայնա իւր գետոյն յակա-
նակիտ վըտակին ,

Եւ սաւառնի բարձր ՚ի գըլուխ , բաշքըն
զուսովք ծածանին ,

Սէդ գեղապանձ ճախրեալ այնպէս ,
ծունկքն արագեն խիտ առ խիտ ,

Թուուցեալ գընայ յարօտ ձիոց յընդեւա-
կանն իւր հովիտ 41 ,

Նըման հեկտոր թեթևաթուիչ ՚ի յոտան
՚ի բուն և յիրան

Խրախոյս կարգայր այրուձիոյն , երբ ձայն
ըլաւ աստուածեան :

Իսկ Յոյնք անդուստ , որպէս բարակք
որպէս որեար գիւղական

Մեծ եղջերուին ըզհետ մըտեալք և կամ
արագ այծեման ,

Որ պաշտպանեալ բարձր 'ի ժայռի և
կամ 'ի թաւ անտառի ,

Կայ յանդորրու իբրև նորա չէ ժամ
հասեալ օրհասի ,

Մինչ այս մինչ այն , առիւծ յուզող
գայ յերևան բաշաւոր ,

Եւ հետամուտ արքն և բարակք փա-
խուստ ճեպեն կորակոր ,

Սապէս ցայն վայր ողբ ըզՏրոյեանս հե-
տապընդեալք՝ վանէին ,

Խոց վիրաւոր հարեալ 'ի սուր հարեալ
'ի տէգ երկսայրին ,

Իբրև զԵկտոր տեսին շուրջ գալ կարգ
տալ մարտին և խօշիւն ,

Անկան բեկան բնաւից նոցա ընթադրե-
ցաւ արութիւն :

Յայնժամ Թոռս Անդրեմոնեան Ետո-
ղացոց կորովին

Քաջ նետաձիգ քաջ և մարտիկ յասպա-
րիսի 'ի մարտին

Քաջ և բանկայ , զոր պարտէին նուա-
զունք Յունաց յատենի

Երբ պատանեաց լինէր պայքար ճարտա-
սանիցն հանդիսի ,

Սա ինքն յայնժամ արձանացեալ խոր-
հուրդ ազդեաց քաջապէս .

« Բա՛բէ , զի՛նչ է զոր ականեմ , զի՛նչ այս
հրաշից է հանդէս .

Արդ յօրհասէն, բա՛բէ, հեկտոր զեր-
ծեալ կրկին յոտին կայ,

Հեկտոր կարծեալն անշուշտ 'ի մահ վա-
րեալ բազկէն յԱյասայ:

Ըզգա ուրեմն ոմն յանմահից եհաս թա-
փեաց յօրհասէ,

Որ շատ ըզՅոյնս կարթակոտոր արար և
ևս արասցէ.

Ամպրոպայնոյն արդեօք յանգէտս չե՛լ
նահատակ դա զօրուն.

Այլ աղէ, քաջք, ինչ զոր ասեմ, սատա-
րեսցուք մէք ողջոյն:

Թող մեր խուժանն այժմէն ընդ կրուկ
դարձցի նաւացն 'ի ճամբար,

Եւ մէք զօրուն առաքինիքս արձանա-
ցուք 'ի պայքար:

Փորձ փորձեսցուք նահատակեալ. սան-
ձեմք թերևս զայդ վիրագ

Կըլիւ ընդդէմ առ հասարակ տէգ ամ-
բարձեալք և նիզակ:

Քաջ խկ վիրագդ ոչ ժլտեսցի 'ի խուան
մըխիլ կորովեաց ».

Լըւան ըզբանն և գրաւեցան 'ի քաջ խոր-
հուրդն զոր ասաց:

Յարեաւ արքայն Իգոմենէս, յարեան
Այասքն և կրկին,

Եւ Մերիոն, Տեւկրոս, Մեգէս համա-
նմանեալն Արեսին:

Կարգ տան մարտին , քաջաց քաջաց ձայն
տան իրմբեւ ՚ի մի վայր ,
Մեծն Հեկտորայ և Տրոյացւոց արձանա-
նաւ քաջաբար :

Իբրև խուժանն ընդ կրուկ ՚ի կոյս նա ,
ւատորմին տայր հորդան ,
Տրոյեանք անդուստ նահատակեալք հրո-
սակ ետուն միաբան :

Քայլ մեծաքայլ դիմադրաւեալ խաղայր
Հեկտորն ահափետ ,
Եւ յառաջոյ հորդէր նըմա մեծն Ապոլոն
կարապետ .

Պատեալ էր զուան յամբ , և ՚ի բուռն աւ-
սար ունէր մեծազօր ,
Ասպար հարուստ և անվրկանդ , և Թաւ-
համակ ահաւոր .

Զայս յահ մարդկան կրուեաց Հեփեսոս ,
ետ զայն տանեւ Որմըղգայ .
Սովաւ ՚ի բուռն հորդէր զօրուն ոսկիա-
սուրն այն Արքայ :

Գնդեալք յայնժամ Աքայեցիք մնային
՚ի մարտ դիմադրաւ ,
Եւ բանակաց ձայն ահագին աստի անտի
բարձրացաւ :

Լարք ճայթեցին ՚ի լայնալիճ ոստեան
փրքինք յաղեղանց ,
Եւ Թօթափին տեգք բազմախուռն ՚ի
յաղթ բազկաց կորովեաց .

Կէսք 'ի մարմինս վարսին քաջաց, հա-
սեալք 'ի դէպ նրպատակ,
Եւ կէսք ընդ օդ 'ի կէս ուղւոյն դերևե-
ցան անժամանք .

Մինչ չև զմարմնոց առեալ զճաշակ հա-
րըստեցան 'ի գետնի ,
Քաղցեալք այնպէս և ապաժոյժ մնացին
արեան ծարաւի :

Յորչափ Փերոս 'ի բռին իւրում զաս-
պարն անշարժ ըմբռնէր,
Խոցք վիրաւորք աստի անտի զօր դիտա-
պաստ անկանէր .

Իսկ երբ խաղաց տիգօք աչաց նա շէշո
ճակատն 'ի Յունաց,
Զասպարն հանդէպ փայլակնացոյց և
ձայն ասէլ արձակեաց ,

Աշխոյժք քաջացն աղարտեցան , լանջք
կորովեաց սաղեցան ,
Եւ խիզախեալքն միջաբեկք յողիս ե-
ղէն ապաստան :

Զորօրինակ ջոկք անդէոց կամ հօտք խա-
շանց 'ի դաւթի ,

Երբ յեղակարծ գազանք երկուք գան
ընդ խաւար գիշերի ,

Իբրև չէ անդ և հօտերէց , նոքա վեր
վայր խուճապին ,

Այսպէս Հելլենք ասաբեկեալք չըւա-
ռացան 'ի կըռուին :

Քանզի նոցա լի արհաւրօք հար Ապողոն
ըզըշուկ ,

Իսկ Հեկտորայ և Տրոյացւոց փառքս
նաւթճէր և ըզուք :

Խառնուրդ եղև ասէղ մարտին , այր
զախոյեանն հարկանէր .

Շանթեաց Հեկտոր 'դ Արկեսիղեայ
զխտքոս 'ի մահ տարածէր .

Արկեսիղոս էր զօրավար պատենազէն
Բիովտեանց ,

Խտքոս վէհին Մենեսթեսի 'ի համհար-
զիցըն քաջաց :

Յենէասայ քաջէն տապաստ Յասոն , Մե-
դոն անկանին ,

Սա հարձորդի էր Ուլեայ և էր եղբայր
Այասին :

Սա այս Մեդոն էր բնակաւոր 'ի Փիւ-
ղակեան սահմանի ,

Նըժդեհացեալ և տարադէմ գըտաւ յեր-
կրէն հայրենի .

Ձի այր մի նա 'ի մահ վարեաց ըզհարա-
զասն ըզմօրուին ,

Անուն սորա Երովպիդէ զոր Ուլէս ած
'ի կին :

Իսկ քաջն Յասոն Աթենացւոց կարգեալ
զօրուն էր իշխան ,

Որում անուն յորջորջէին որդի Սփիլեայ
Բուկողեան :

Հար զԵփիսսըն Պողիտէս անդէն մար-
տին 'ի սկըզբան .

Ըզկըննիոս հար Ագէնոր , ըզՄեկիստէս ,
Պուզիւգամ :

Թիկնադարձոյց լեալ Դեյոքոս մինչ դեռ
խուսէր 'ի մարտէ ,

Տէգ 'ի քամակն եհար Պարիս Թափանց
ըզսայրն հարըստէ :

Մինչ դեռ անդէն յառ և յապուռ կա-
պուտ լինէր դիականց ,

Ընդ շերտափակըն տարմաբար զօր խու-
ճապէր Աքայեանց :

Նոյն ընդ պարկէն հատեալ փոսոյն յայս
կոյս յայն կոյս դիր և տար

Փախուստ խնդրեն , և տագնապեալք ա-
պաստանին 'ի պատուար :

Տրոյեանց յայնժամ գոչէր Հեկտոր հրո-
սակ կապել շուտափոյթ

Խուժեւ 'ի նաւս , Թողեալ վայր մի զա-
րինայեղցն ըզկապուտ .

« Իսկ Թէ ուրեք յակն արկանեմ »⁴² զոք
'ի նաւաց տարադէմ ,

Արագ արագ անգ առ ետեղ տապաստ
ըզնա արկանեմ .

Նըմա խարոյկ ոչ հարազատք ոչ քորք
տացեն 'ի բաժին ,

Այլ շունք ըզնա կեղեքեացեն հանդէպ
մերոյ ոստանին » :

Լսաց, 'ի նոյն և նրժուգաց մտրակ ճայ-
 թեաց 'ի քամակ,
 Եւ կարգ 'ի կարգ խրախոյս բարձեալ
 շարժէր զօրուն ըզբանակ .
 Խումբ արարեալ քաջին ըզհետ խաղան
 կարգաւ գեղեցիկ,
 Անհուն գոռամամբ արշաւասոյր վարեն
 ըզձիս կառածիդ :
 Մեծն Ապողոն 'ի յառաջոյ տրոփմամբ
 ոտին հեշտաբար
 Քանդեաց ըզթումբ խոր խրամոյն, արկ
 'ի փոսոյն միջնավայր .
 Ուղի գործեաց կամրջօրէն տեղընկէցիւ
 չափ արձակ,
 Որչափ ձրգէ այր արդնընկէց 'ի փորձ բազ-
 կին ըզնիզակ :
 Ընդ նոր ուղին փաղանդօրէն հրոսակ ե-
 տուն և հորդան,
 Յառաջադէմ խաղայր Փեբոս 'ի բուռն
 ասպար աննրման .
 Նա հեշտաբար հար տապալեաց և ըզ-
 պատուարն ըզՅունաց,
 Որպէս տըղայն առ ծովեզերք ըզվաղա-
 փուն իւր կերտած,
 Երբ նա զաւազն անտիական իւր խաղալ
 կաց նիւթ գործէ,
 Եւ մատուցեալ անդրէն 'ի խաղ, ոտիւք
 ձեռօք խանգարէ 43 ,

Այսպէս, փեբէ դու քաջաղելն, ըզ-
քիրտն Յունաց զայն անչափ
Աղարտեցեր, մեծ արհաւիրս արկեալ
նոցա և խուճապ:

Տագնապեցան նոքա 'ի նաւս, և այր
դարձեալ ընդ ընկեր,

Մի ըզմիով խրոնեալք ասիւ միմեանց
կարդան քաջալեր:

Ուխտիւք մաղթանս այր այր ձօնեալ
ձեռս անմահից ամբարձին,

Յառաջադէմն Աքայեցւոց յաւէտ Նես-
տոր ծերունին.

Սա աղօթիւք յաստեղանիչն յերկին մա-
տունս տատանէր,

« Արամազդ հայր, ուխտաւորին պա-
ղատանաց լուր, ո՞վ տէր:

Թէ թամբըս յոյր ղեզանց 'ւ օդեաց որ
'ի յԱրգոս զո՛հ արար,

Մաղթեաց ըզդարձն 'ի հայրենիս և դու
հաճեալ խոստացար,

Զայն արդ յուշ ած, ո՞վ Ողբամպեան,
զօր զայս անցո զահագին,

Մի 'ի Տրոյեանց Աքայեցիք այսչափ նը-
կունք լինիցին »:

Օ այս աղօթեաց, և Ամարոպեանն ան-
դուստ ասէղ որոտաց

Եւ Նեղոսեան մեծ ծերունւոյն լըւաւ
ձայնին մաղթանաց:

Տրոյեանց յայնժամ լըւեալ նըշան զաս-
 պարազէն Դիոսին,
 Դըռոյթ սաստիկ տըւեալ 'ի Յոյնս և
 խազմ ահեղ զարթուցին 44:
 Ձորորինակ մեծի ծովուն յուզեալ կո-
 հակ անարի
 Գայ փըրփրադէղ, 'ի վեր վազէ ընդ կող
 նաւուն հարկանի,
 Ձի ամէհի գործեաց ըզնա ուժգնահըն-
 չող թափ հողմոյն,
 Յորմէ ալիք գիզան 'ի վեր բնաւորեցան
 'ի ծովուն,
 Այնպէս Տրոյեանք ահագնագոցք վա-
 զեալք 'ի վեր ընդ պատուար,
 Ճեպ միջամուխ տան նըժուգաց և ընդ
 նաւուց տան պայքար .
 Ի կառս նոքա աշտանակեալ և յերկսայ-
 ըի տէգ գողան,
 Յոյնք 'ի վերայ լաստափայտիցն երկայն
 ձողիւք զինեցան .
 Ձողք այս 'ի նաւս պահեալք 'ի սէտս
 կան նաւամարտ հանդիսից
 Հաստահարուսոք, ձողք ագուցիկք, եր-
 կաթագամք 'ի ծայրից :
 Բայց Պատրոկղէս ցորվայր խօշիւն մար-
 տին Տրոյեանց և Յունաց
 Ծըփայր յուզէր առ պատուարաւ անդ
 'ի բացեայ 'ի նաւաց,

Նա 'ի վրանի քաջ արքային Եւրիւպի-
 ղեայ դեգերէր,
 Բազմեալ անդէն հարուստ մի ժամ բա-
 նիւք գըրգայր քաջալեր .
 Դարման տարեալ բարեկամին մահա-
 համբոյրն 'ի վերին ,
 Եւ սպեղանիս սրփռէր խոցոյն դիւրիչ
 ցաւոց խաւարին :
 Այլ մինչ ետես ըզՏրոյացիս խուժան
 տըւեալ 'ի պատուար ,
 Անդուստ և ահն Աքայեցւոց և ձայն
 գուժին բարձրանայր ,
 Յոգւոց եհան և ըզդաստակսն 'ի վայր
 ածեալ Պատրոկղէս ,
 Ծեծէր ըզբարձս և աւաղեալ ձայն զայս
 կարգաց դառնապէս :
 “ Ոչ այլ յամեմ , Եւրիպիւղէ , թէպէտ
 դառն են քո կարիք ,
 Տեսեր , ո՛վ քաջ , արդ կարեմէր մեզ գու-
 ժեցին արհաւիրք :
 Քեզ պաշտօնեայդ ցուցցէ զարդիս զիւր
 խընամոցն ըզհանդէս ,
 Ես այժմ 'ի մարտ փուլթամ ճեպիմ
 զարթուցանել զԱքիլլէս .
 Ո՞ր գիտէ ո՞ր , ազդեմ սրտին թէ ինձ աս-
 տուած ձեռըն տայ ,
 Եւ ամոքեմ . քանզի յորդոր բարեկամին
 քաղցրանայ ” :

Լսաց, յարեաւ յողոց հանեալ ճեպ
 քաջընթաց տայր ոտին,
 Մինչ դեռ անդուստ ընդդէմ Տրոյեանց
 Յոյնք քաջապէս կըքրէին :
 Թէպէտ հրոսակք 'ի Տրոյացոց նուա-
 ղունք ետուն ըզհորդան,
 Բայց և այնպէս առ 'ի նաւաց անվանե-
 լիք քաջացան .
 Ոչ և Տրոյեանք բաւեցին ինչ վանել
 փաղանգս ըզՅունաց,
 Եւ միջամուխ գող 'ի խորանս և 'ի հան-
 դէսն 'ի նաւաց :
 Որպէս կարակն 'ի ձեռս հըմուտ ատաղ-
 ձագործ ճարտարի,
 Ի նաւական փայտ հեծանին կըշիռ գոր-
 ծէ ուղղակի,
 Զի հրահանգեալ է յԱթենայ նա յա-
 րուեստին 'ի հանճար,
 Այսպէս սոցուն մարտն և պայքար էր 'ի
 կըշուին հաւասար :
 Կէսք 'ի քաջացն 'ի կէս նաւաց գըրոհ
 տային ըզմարտի,
 Այլ ախոյեան մեծն Այասայ խաղայր
 Հեկտոր շէշտակի :
 Երկուք առ մի նաւ գիւցազունք ճիգըն
 Թափեն մեծապէս,
 Ոչ նա զԱյաս բաւէր վանել ըզնաւն
 առնել բոցակէզ,

Ոչ և Այսս վերջոսնեցոյց զԵկտոր վե-
րագն անվեհեր,

Քանզի ըզնա մի ոմն 'ի դից հովանացեալ
անդ եբեր :

Շահատակեաց Տեղամոնեանն 'ի Կա-
ղետոր Կիւտոսեան

Որ հուր բարձեալ բերէր 'ի նաւն, 'ի
լանջ նորա հար զաշտեայն .

Անկաւ դոփմամբ այրըն տապաստ, զէր-
ծաւ խանձողն 'ի ձեռաց .

Ետես Հեկտոր ըզքեռորդւոյն զայն
դառնութեանն օրահաս,

Հայա Տրոյեանց և Լիւկացւոց ձայն
խրախուսի արձակէր,

Մինչ Կաղետոր հանդէպ նաւուն 'ի հող
փոշւոյն թաւալէր :

«Օ՛ն արդ Տրոյեանք, արիք Լիւկեանք,
և Դարդանեան նահատակք .

Տագնապ գուժեաց, մի վերջոսնիք իբր
անարիք նըշաւակք .

Մի դիւազերծ Աբայեցիք ըզԿաղետորն
արասցեն ,

Պահ դիք քաջին որ տապաստ կայ 'ի նա-
ւամարտ հանդիսէն » :

Ասաց, անդէն կըշիւ յԱյսս ձրգեաց
հրափայլ զիւր աշտեայն .

Եւ զարտուղի թըռեաւ խոցեաց ըզԼիւ-
կոփրոն Մաստորեան :

Սա՛ի Կիւթրայ եկն առ Այաս, եղև նո-
րա պաշտօնեայ .

Նըժդեհացաւ, զի պարտ արեան էր նա
ի մեծն ՚ի Կիւթրա .

Ի դլուխ սորա հար մօտ ունկանն հեկ-
տոր ըզսայր նիզակին ,

Մինչ կայր կանգուն քաջ համահարզն
առ Այասայ դիւցազին .

Յորսայս տապաստ փոշեթաւալ անկաւ
նաւուն ՚ի խեղաց .

Այաս դիւցազն հարաւ յողին, հարա-
զատին ձայն կարգաց .

“Ահա՛, Տեւերէ, բարձաւ ՚ի մէջ մեր
Մաստորեան քաջալաւ ,

Որ համահարզ մեզ ՚ի Կիւթրայ բնակէր
ընդ մեր մարդակաւ .

Սա ՚ի մեր տան էր մեծարոյ արգոյ ծնո-
ղաց հաւասար .

Եւ արգ ՚ի սա վերագն հեկտոր մահա-
հրաւէր տէգ եհար :

Ո՞ւր քո աղեղն Ապողոնեան, փըքինքդ
ո՞ւր են գուժաբեր ” .

Կարդաց Այաս, լըւաւ Տեւերոս վա-
զեաց նըմին առ ընթեր :

Բարձ ըզնեաից պատկանդարանն առ և
զաղեղն կորովի ,

Ընդ գիրկն եմուտ և ձիգ դընէր Տրոյ-
եանցն ընդդէմ խուժանի .

Անդ ըզվլտոս Պիսենորեայ ըզքաջոր-
դին հարկանէր ,

Սա Պանթոսեան Պուղիւղամայ հոյակա-
պին էր ընկեր .

Շահատակեալ սա 'ի բըռին անդուլ ու-
նէր զերասան ,

Եւ ժիրաժիր կայր 'ի վերայ երիվարաց
պաշտաման .

Տանէր բերէր ուր մեծ շըշուկ էր փա-
ղանգաց բանակին ,

Պատուասիրէր յաչքս Տրոյեանց և հեկ-
տորայ դիւցազին .

Ըմբըռնեցաւ անպատրաստար յօրհանն
անգերծ դըժընդակ ,

Բազմակական նետ մահահոտն եկն և ան-
կաւ 'ի ծոծրակ .

Անկաւ կառացն , հարթեան նըժոյգքն և
կառք թափուր սարսեցան ,

Ճեպեաց արքայն Պուղիւղամաս վազեաց
ձիոցն յանդիման .

Առ զերիվարսն և Պրոտասեան Աստիւ-
նոսին ետ յանձնեաց ,

Եւ պատուիրէր մօտ իւր քերեալ խընամ
ունել նըժուգաց .

Ասաց և ինքն անգրէն խառնէր նահա-
տակացն 'ի կարգին ,

Մինչ դեռ Տեւիրոս կըշիւ յԵկտոր ոս-
տուցանէր այլ փըքին .

Վախճան յայնժամ լինէր անշուշտ նաւա-
մարտին գուժաբեր,

Թէ Տեւկրոսեանն լայնալիճ զարև քա-
ջին հատանէր :

Բայց խելամուտ վեհն Արամազդ ար-
թուն քաջին դէտ կենաց

Տեղամոնեանն 'ի Տեւկրոսէն ըզշուք փա-
ռացն ընկրկեաց .

Այն ինչ քարշէր, կուռ աղեղան ջիղն
հաստապինդ խրզեցաւ ,

Եւ նետ սրավարն երկաթագամ ընդ ար-
տուղին ձրգեցաւ .

Անդէն 'ի նոյն և լայնալիճ աղեղն ան-
կաւ 'ի ձեռաց ,

Սարսեաց Տեւկրոս և գումարեալ հարա-
զատին զայս ասաց .

« Բա՛բէ, զարդիս խրզեաց աստուած ողջ
ըզխորհուրդ մեր մարտին ,

'Նա զլայնալիճն յիմ ձեռանէն կորզեաց
և հար ընդ գետին .

Կըտրեաց ըզջիղն իմ նորագործ զոր ես
այգուն լարեցի ,

Զի բազմախուռն 'ի ձիգ նետից հանդար-
տեսցէ կալ յուժի » :

« Օ՛ն արդ ուրեմն, Այաս անդէն հա-
րազատին բան կրկնեաց ,

Օ՛ն արդ, ո՛վ քաջ, հոժեալ նետիւքդ ըզ-
լայնալիճդ ա՛ռ 'ի բաց :

Ո՞չ տեսանես, վանեաց աստուած ե-
ղեալ ընդ մեզ խեթահար .

Արդ կուռ նիզակ ան դու 'ի բուռն և
արկ զուսով քով ասպար :

Չայն տուր մարտին , թող Տրոյացիք
ընդ քիրտն հարցին դառնապէս ,
Տաղնապետցին վանեալ ըզմեզ ունելնա-
ւացն ըզհանդէս .

Մէք օն 'ի մարտ խրախուսեսցուք 'ի
փորձ բազկաց հաստաբետ » .

Լըւաւ Տեւկրոս և զլայնալիճն եդ 'ի
խորանն 'ի պահեստ :

Ասպար կալաւ քառատակեան ան և
զուսով իւր ձրգեաց ,

Ի գլուխն 'ի յաղթ եդ սաղաւարտ յա-
դեաց ձիոց գիսապանծ ,

Սաղաւարտին ահեղակերպ վերջք փող-
փողէր 'ի վերուստ ,

Առ և 'ի բուռն ըզսայրասուր տէգ զեր-
կաթին ըզհարուստ :

Սաղեաց յԱյաս . ետես հեկտոր զի
նեոք բեկան Տեւկրոսին ,

Խրախոյս Տրոյեանց և Լիւկացոց գո-
չեաց ձայնիւ ահագին .

« Տրովադացիք , Լիւկեացիք և Դարդա-
նեան նահատակք ,

Արիք , ո՞վ քաջք , ժամ է գոռալ արդ 'ի
նաւաց գումարտակ .

Յերամաղդայ, աչօք խնովք տեսի ան-
 վրէպ աւաղիկ,
 Տեսի զխորդ քաջաղեղանդ նետք թու-
 լացան կորովք:
 Գիտեմք իսկ քաջ, քանի Դիոս հըզօրն
 իշխէ մահացուաց,
 Որ մերթ բաժին, նա ում կամի, հանէ
 մեծաց ըզփառաց,
 Մերթ և ընդ վայր նա հարկանէ, նըկուն
 գործեալ ըզմարդիկ,
 Որպէս զարդիս վանեաց ըզՅոյնս և մեղ
 եկաց զօրավիդ:
 Ժամ է, ո՛վ քաջք, հասպա ՚ի նաւս. թէ
 նետ տեղայ թէ աշտէ,
 Այր այր զօրհաս իւր ողջունեալ մահ
 քաջութեան յանձն առցէ.
 Մարտ հայրենեաց է աւաղիկ. և մեռա-
 նել գեղեցիկ,
 Զի և զօրդիս և զամուսինն յետ իւր սա-
 հէ քաջողջիկ.
 Նորա և տուն նորա արարքն անգըրժե-
 լիք սահեսցին,
 Յորժամ հեղենք նաւագնացիկք յեր-
 կիր դարձցին հայրենին”:
 Գոչեաց Հեկտոր, բոց իմն աշխոյժ ՚ի
 բանակին բորբոքեաց.
 Խրախոյս անդուստ և մեծն Այաս կար-
 դայր դասուն ընկերաց.

«Ո՞ւմ կայք, ո՞վ քաջք, շատ է ձեզ արդ
 կամ մեռանել կամ փրկիլ,
 Եւ 'ի նաւաց վանել զօրհասն և զայդ
 վերագդ անարդիլ :
 Եթէ 'ի բուռն արկցէ ըզնաւս Հեկտորդ
 այդ գոռ ամենի ,
 Յուսայք թերևս ողջամբ դառնալ 'ի հայ
 րենիս ձեր հետի :
 Ո՞չ իսկ լըսէք դորա առ զօրն ասեղ ձայ
 նին ըզչաջին :
 Զխորդ ըզնաւս, գոչէ երգնու , 'ի հուր
 դատել և յաճին :
 Դա ոչ կայթել հրաւէր կարգայ, այլ
 մարտ յուզէլ և ըզհոյն :
 Եւ մեզ չեք այլ, չեք 'ի ժամուս ոչ միտք
 ոչ բան լաւագոյն ,
 Բայց թէ զոգիս կալեալ 'ի բռին կըք
 րել այնպէս դիմակալ,
 Իբրև լաւ է մեզ մի անգամ կամ մեռա
 նել և կամ կեալ :
 Զի՞ մեզ, ո՞վ քաջք, ձեռն ըզմիջովք կալ
 'ի կրուուիս մարդախանձ ,
 Եւ աստ տակաւ ծընդիլ տակաւ յայդ
 որերոյդ 'ի վատաց » :
 Ըսաց, և հուր վառեաց 'ի լանջ . բայց
 էլ Հեկտոր իբրև բոց ,
 Ծախեաց զԻպէզդ Պերիմեդեան . սա էր
 իչխան ֆոկացւոց :

Արկ և Այաս զիշխանն հեռեաց տա,
 պաստ բազկին իւր 'ի թափ
 Ըզլաւդամաս զԱնտենորեայ ըզքաջոր-
 դին հոյակապ :
 Պուղիւղամաս զընկեր Մեգսեայ զՈվտոն
 ըսպան տիգահար ,
 Սա կորովի էր Կիւլացի Եպէացւոց զը-
 րավար :
 Ետես Մեգիս և արգէնընկէց յարեաւ
 ընդդէմ նահատակ ,
 Խոյս առ 'ի շեղ ետ Պուղիւղամ , հան 'ի
 դերևս ըզնիզակ .
 Ամրածածուկ նրմա Փեբոս հովանացաւ
 'ի Ժամուն ,
 Մի Պանթոսեանն անկցի տասպաստ նա-
 հատակաց 'ի դասուն .
 Շէշտ 'ի կրրծոց մէջ Կրիամոսին աշտէն
 հարաւ և եմուտ ,
 Անկաւ դոփեաց . վազեաց Մեգիս զի-
 նուցն առնել կողոպուտ :
 Սլացաւ 'ի նա քաջ Ղամպոսեան Դո-
 լոփս 'ի տէգ քաջաճիգ ,
 Զոր Լաւմեգեան ծընաւ Ղամպոս վէստ
 փառաշուքն 'ի մարդիկ .
 Սա խիզախեալ մըկընդաւոր արձանա-
 ցաւ առ ընթեր ,
 Եւ ըզՓիւղեանն ըզՄեգիսայ կումբ զաս-
 պարին հարկանէր .

Ընդ վայր ըզձիգ հան մըկընդոյն կուռ
գոգաւոր վարասլան ,

Զոր յեփիւռայ Փիւղիս երբեմն ած 'ի
գետոյն Սեղենեան .

Ըզսա 'ի ձօն ետ վանատուրն արքայն նը
մա Եւփետէս ,

Ընդդէմ 'ի մարտ ճակատամարտ տանել
սահանգ մեծապէս .

Սա և յայնժամ 'ի զաւակէն զօրհաս վա
նեաց ըզմահուն ,

Բայց և Մեգիս շէշտ 'ի Դոլոփս չեթող
սատեհն ըզժամուն :

Սուր նիզակաւ հար զերկաթի գլխանո
ցին դարգմանակ ,

Բաշիւք ձիոց էր դիսապանծ . առ թօ
թափեաց զայն համակ .

Վերջք փողփողեալքըն հարուածեալք
անկան 'ի հող 'ի փոշի ,

Այնպէս ողջոյն աղարտեցաւ վառեալն
յառոյգ ծիրանի :

Սինչ դեռ այնպէս կըռուէր Մեգիս ,
ճրգնէր տանել մրցանակ ,

Անդուստ արին Մենեղաւոս եհաս քա
ջին օժանդակ :

Գեղարդն 'ի ձեռն 'ի կողմանէ մատեաւ
եկաց թաքթաքուր ,

հար 'ի թիկանցն և թափ ընդ լանջ
շէշտն անցանէր սայրասուր :

Դողովիս յորսայս տապալեցաւ , դովի-
մամբ հարաւ ընդ գետին ,
Կապտեւ ըզգէնս վազեն նոքա սըզընձա-
կուռս ըզքաջին :

Պոչեաց յայնժամ հարազատացն հեկ-
տոր 'ի ձայն քաջալեր ,
Եւ նախ արւոյն Իկետանեան Մեւանիս-
պեայ ձայն ազգէր .

Սա 'ի Պերկոտ հովիւ երբեմն էր թա-
թահերձ պաճարաց ,

Կայր արածէր ցորվայր հրոսակն 'ի
Տրոյիոյ էր 'ի բաց .

Այլ յարշաւանն յորժամ հեւլենք ծո-
վայածեալք խաղացին ,

Սա միւս անգամ եկն յԵղիոն փայլէր
Տրոյեանց 'ի յազգին

Էր Պրիամուն 'ի տաճարին զուգապա-
տիւ զաւակաց .

Ի սա յայնժամ ազգեաց հեկտոր և յա-
նուանէն ձայն կարգաց .

« Այսպէս ուրեմն , ո՛վ Մեւանիս , մեք
վատասցուք 'ի մարտին ,

Եւ քեռորդւոյն յաղէտ մահուն աղիք քո
ո՛չ գալարին :

Ո՛չ տեսանես , քանի՛ դոքա մոլին 'ի զէնս
Դողովսեայ ,

Արի , ո՛վ քաջ , չեք մեզ չեք այլ կըռուէլ
ընդ Յոյնս 'ի բացեայ .

Մինչև կամ մեք 'ի խուան գոցա շըշուկ
 հարցուք մահագոյժ ,
 կամ հիմն 'ի վեր անկցի Տրոյիա յարիւն
 բնակաց ապաժոյժ " :

Ասաց հորդէր , և ըզկրնի այրն խաղայր
 դիւցազգեաց ,

Մինչ դեռ անդուստ նիզակակցաց խրա-
 խոյս կարգայր մեծն Այաս .

« Արք զօրուժեան լիք , բարեկամք , լիք
 ակնածուք 'ի յոգի ,

Այր յընկերէն պատկառեսցէ յահեղ
 խառնուրդն 'ի մարտի .

Որք ակնածեն , բազում այն է զի յոտին
 կան քան տապաստ ,

Իսկ վերջոտնեալքն են վատք արանց ,
 չեն և երբէք բարեբաստ 45 " :

Խրախոյս կարգաց որոց արդէն դիմա-
 գրաւեալքն իսկ էին ,

Բայց և այնպէս յոգիս նոցա բա՛ք տըպա-
 ցան դիւցազին :

Նահատակեալք , անդէն նաւաց պա-
 տուար ածեն զերկաթին 46 ,

Բայց Արամազդ հովանացեալ կայր Տրոյ-
 ական խուժանին :

Չայն յԱնտիղոք կարգաց յայնժամ Մե-
 նեղաւոս քաջարի .

« Իբրև ըզբեզ չիք , Անտիղոք , առոյգ 'ի
 Յոյնս պատանի .

Չիք և նրման քեզ արագոտն և 'ի մարտի
 ուժաւոր ,
 Սլացիր , ո՛վ քաջ , 'ի ճակատէն հանր 'ի
 Տրոյեանց զոք հըզօր " :
 Խրախոյս նա զայս կարգաց 'ի նոյն վերջ-
 ոտնեցաւ 'ի վայրէն ,
 Եւ նահատակն և շուրջ դիտեաց և փայ-
 լակեաց 'ի յաշտէն .
 Շրտեան Տրոյեանք ընկըրկեցան զի այր
 գոռաց կորովի ,
 Եւ ձիգ քաջի նահատակին ոչ սըխալեաց
 'ի կըշուի .
 Եւ շէշտակի Մեւանիսպեայ 'ի լանջն
 արւոյն վարսեցաւ ,
 Հարաւ ընթեր ըստեանց քաջին մինչ
 դեռ խաղայր դիմագրաւ :
 Անկաւ տրովեաց , զէնք շաչեցին սաս-
 տիկ երկրին ընդ յատակ ,
 Սլացաւ 'ի նա Անտիղոքոս որպէս յայ-
 ծեամն ըզբարակ ,
 Երբ կենդանին ելեալ յորջոյն և նետա-
 հար լեալ անդէն ,
 Յոգւոց պարզեալ տապաստ անկաւ դա-
 րանամուտ յորտորդէն ,
 Այսպէս 'ի քեզ , Մեւանիսպէ , Անտի-
 ղոքոսն այն հուժկուն
 Եւ խոյացաւ 'ի քո վերայ , կաստեւլ 'ի
 քէն զարդ զինուն :

Լբրև Հեկտոր դէտակն ամբարձ 'ի յայն
 նախճիր ահագին ,
 Գոչեաց դիմեաց վարազաբար 'ի Նեստո-
 րեան քաջորդին :
 Աջ հանդարտեաց Անտիդոքոս թէպէտ
 մարտիկ կորովի ,
 Գուամարեցաւ որպէս գազան որ չար գոր-
 ծեալ խուճապի ,
 Յորժամ յանդեայս մոլեալ վերագն և
 գէշ ըզգամիւ արկանէ ,
 Կամ թէ անդէն 'ի պառակին զայր ան-
 դէորդ բեկանէ ,
 Փախուստ ճեպէ մինչ չև խըռնեալ անդ
 հետամուտ որերոյն ,
 'Նոյն Անտիդոք 'ի հեկտորայ խուճապե-
 ցաւ քաջարւոյն :
 Բայց Հեկտորեանք գոռմամբ ասեղ տե-
 ղան անդուլ տեղ փըքնաց ,
 'Նա միահետ փախչէր անդարձ մինչ 'ի
 խուժանն ընկերաց :
Սըռընչեցին Տրոյեանք հանգոյն գոռ-
 առիւծուց շողլակեր ,
 Հասպա հորդան խուժեն 'ի նաւս լընուլ
 Դիայն ըզպատուէր .
 'Նա ոյժ սաստիկ շնչէր Տրոյեանց , ըզ-
 Յոյնս առնէր անաբեկ .
 'Նոքա յարեան , շիջէլափառք սոքա վա-
 տին առ 'ի վէդ :

Շուք հեկտորայ խնդրէր Դիոս ձօնել
յայնժամ մեծափառ ,

Ձի նա անշէջ 'ի խելս նաւաց հուր շան
թեպէ գիւցավառ 47 .

Ձի և 'ի գլուխ ըզդժսլըհի խնդիրն հան
ցէ Թեոփսեան ,

Մինչև ցոլմուկք հրակէզ նաւու հատցին
տչացն աստուածեան :

Այսչափ խնդրէր , և յայնմ հետէ Տրոյ
եանց վանեալ ըզխուժան ,

էր խկ ինքնին նա հանդերձեալ շուք
տալ Յուլիաց աննըման :

Յայս մըտախոհ գրգեաց զԵկտոր նաւա
տորմին 'ի սպայքար ,

Մինչ գեռ վերագն ինքնահրաւէր էր խկ
յանձին բոցավառ :

Սողէր Հեկտոր որպէս Արէս նիզակա
ճօճն 'ի մարտի ,

Կամ լեռնախանձ հուր լափլիզօղ 'ի Թաւս
'ի խոր անտառի ,

Փրօփուրն յորդէր 'ի բերանոյն , և 'ի յա
չաց գիւցաղին

Ընդ ասընկէց յօնիւք նորա շանթիք հրա
ցայտք հատանին 48 :

Դիմեալ խաղայր հրկայյազօրն և մարտ
մղեալ անվէհեր

Յտղթ սաղաւարտն 'ի քունս նորա ասէ
ղակերպ տատանէր :

Չի և ինքնին Ամարոսայինն հովանացաւ
 'ի բարձանց ,
 Կրմա ըզփառս ձօնէր միայն 'ի մէջ բազմաց
 դիւցազանց .
 Էր իսկ Հեկտոր սակաւակեաց օրհասն
 առ դուրս կայր նորա ,
 Ի նոյն ըզնա ճեպէր Պալլաս նրկուն լի-
 նել յԱքիլեայ :
 Հուր փորատէր , պուղէլ ըզկարգ զամ-
 րածածուկ փաղանգաց ,
 Ուր և դիտէր զըստուարագունդս և քա-
 ջազէնս կորովեաց .
 Որչափ դուռաց չուժեաց քակէլ ըզմեծ-
 ամուրն ըզփաղանգ ,
 Բանդի կացին անվանելք իբրև հոծեալ
 աշտարակ :
 Չորօրինակ ժայռահազին արձանա-
 ցեալ քաջալանջ
 Վէմ անարդիլ արեգունի կայ 'ի ծովուն
 ալէտանջ ,
 Չարագ թևոց ուժգին հողմոց ըզթափն
 առեալ այսրանէ ,
 Եւ սաստկաբաղն լեռնակուտակ ալեացն
 երես ոչ առնէ ,
 Այնպէս ընդդէմ կըբրին Հելենիք յոտս
 անսասանք քաջամուր .
 Բայց խոյացաւ Հեկտոր 'ի խուան փայ-
 լակնացայտ իբրև հուր :

Շըշուկ էհար փոթորկեցաւ իբր հողմա-
 վար մեծ կոհակ ,
 Յորժամ մրրբիկ ամպրոպայոյզ ըզնա բա-
 խէ նաւ յարագ ,
 Փըրփուրն համբուն ծածկէ ըզլաստն յու-
 զեալ 'ի ծով մեծախոր ,
 Եւ զառագաստն հարեալ գանչէ մունն-
 չիւն հողմոյն ահաւոր ,
 Գողցես յայնժամ յոգւոց սարզէլ ահա-
 բեկին նաւաստիք ,
 Զոփան անգուլ զի յօրհասէն վայրիկ մի
 կան տարածիդ 49 ,
 Նոյնօրինակ սարսեալ ոգին արոփայր 'ի
 լանջն Աքայեանց ,
 Մինչ գեռ Հեկտոր և իբր յանգեայս սլա-
 ցաւ առիւծ գիշախանձ ,
 Յորժամ բիւրուց ջոկ սաճարաց յարօտն
 ելեալ դալարի ,
 Եւ առ ընթեր մեծի խաղին ճարակ գը-
 տեալ արածի ,
 Կայ անգէորդն 'ի մէջ նոցա իբրև սահ-
 նորդ լուրջ անբուն ,
 Բայց ընդ գազաննն ամեհի 'ի վեգ խա-
 ղալ չէ մարթուն ,
 Խնդրէ յանգեայց գալարեղջիւր զօրհասն
 ունել 'ի բացեայ ,
 Գայ և գընայ առաջապահ և վերջապահ
 կայ նոցա ,

Յապուրակի վազեալ գաղանն ունի ըզ-
 մին և գօշէ ,
 Զոլիրն ուղոյն խուճապելով փախչին 'ի
 գաշա 'ի գաշակ ,
 Սապէս յայնժամ ուղոյն Հելլենք իբր ա-
 հաբեկք յաստուածուստ ,
 Վարատեցան 'ի Հեկտորէ և յՈրմըզգայ
 'ի վերուստ :
 Լնկաւ միայն Պերիփիտէս Կոպրեայ որ-
 դի նազելին ,
 Որ առ Հերակլ երթ 'ի հրեշտակ Եւրիս-
 թեսի արքային .
 Վատթար ծնողի եկաց զաւակ բոլոր մա-
 սամբք քաջընտիր ,
 Միանգամայն էր արագոտն էր և հըզօր
 մարտադիր .
 Էր և մրտօք նա գերաբուն Միւկենացւոց
 նախաթող ,
 Որ և մահուամբն իւր Հեկտորայ շուք
 պատրաստեաց փառաւոր .
 Մինչ վերջոտնէր , յանկարծ գըթեաց նա
 յասպարին շրջանակ ,
 Ասպար երկայն մինչ 'ի պըճղունան ընդ-
 դէմ փըքնաց պահպանակ .
 Խոչընդոտնեալ այնպէս չարաւ անկաւ
 յորսայս 'ի գետին ,
 Եւ սաղաւարտն 'ի քունս նորա շագնաց
 յերկիր ահագին .

Վաղեաց Հեկտոր և տէգ 'ի բուռն ար-
ձանացաւ առ ընթեր ,

Առ համհարզիւք վարսեաց 'ի լանջն և
դիթաւալ տարածեր .

Աղեկիզեալք ընդ հիբացեան համ-
հարզքն օգնել խուսափին ,

Քանզի շտապաւ խուճապեցան յահե-
քաջի դիւցազին :

Ընկրկեցան նոքա 'ի ներքս և ըղնաւացն
յետին շար

Իբրև ամուր ասպատանի առին իւրեանց
'ի սլատուար 50 :

Քանզի Տրոյեանք հրոսեալք ըզհեա ,
Յոյնքն ըշտապեալք վերջոտնին ,

Եւ միջաբեկք լքին անդէն նաւաց ըզ-
կարգն առաջին :

Տաւաղեցան առ խորանօք համախրու-
նեալք 'ի վայր մի ,

Կացին այնպէս և չերևէր ոք 'ի զօրուէն
'ի դաշտի :

Անդ յարհաւիրս անդ և յամօթ ողջոյն
նոքա գրաւեցան .

Իբր 'ի դրժար , խրախոյս վերջին անդուլ
միմեանց ձայն կարդան :

Յաւետնեստոր ժիր պահապանն Աքայ-
եցոց բանակին ,

Զայր այր առ գուծ վառէր ծնողաց յո-
ղոք անկեալ ծերունին .

« Գուք արդ աղէ , ո՛ր բարեկամք , առէք
անձամբք քաջալեր ,

Այր յընկերէն ահնածեսցէ , արձանաս
ցի անվէհեր :

Յուշ ձեզ մանկունք , յուշ ամուսինք ,
հարք և արարք յուշ լիցին ,

Որ մի անգամ գոն կենդանիք կամ որք
ննջեն 'ի շիրմին 51 .

Ես աստ յողոք կամ ընդ նոցա որ չենն
այժմիկ 'ի միջի .

Արձանասջիք արիացեալք . որ 'ի փա-
խուստ մի դարձցի » :

Խրախոյս կարգաց զայս գեղեցիկ , ոգիք
քաջաց վառեցան ,

Եւ Աթենաս փարատեցոյց զամբ բալա-
ձիգն աստուածեան .

Լոյս մեծ ծագեաց լոյս համասփիռ , յըս-
տակեցան բիբք նոցա 52 ,

Տեսին քաջիկ ըզնաւս իւրեանց , տեսին
ըզխազմն 'ի բացեայ .

Սուր ահնարկեն և ըզհեկտոր ըզգոռ
մարտիկ քաջարանց ,

Եւ բակ առեալ անդ ըզնովաւ ըզխումբ
համհարզ դասակցաց .

Տեսին ըզգօրն ըզվերջասպահ անբաժ կա-
ցեալ 'ի մարտէն ,

Եւ որք դարձեալ անդէն առ դուրս մարտ
ընդ նաւաց յարդարեն :

Յամբաւ տագնապն և զայս նըւագ արին
 Այաս ոչ բովեաց ,
 Չեկաց 'ի վերջն ուր համախուռն ըզկայ
 առին գունդք Յունաց :
 Այլ նա 'նդ նաւաց տախտակամածս հըս
 կայաղօր ամբարձեալ ,
 Սեպագուցիկ զէն յաղթ 'ի բռին , քայլ
 հատանէր մեծաքայլ .
 Ջէնն էր հեծան նաւամարտկաց , ճօճէր
 նա զայն 'ի ձեռին ,
 Երկայնագէզ , քսան և երկուց կանգնոց
 էր չափ հեծանին :
 Որպէս յորժամ այր վերելեակ այր շոյտ
 'ի նուս նըժուգաց ,
 Չորս երիվարս յերամակէն ըզքաջընտիրս
 առ զուգեաց ,
 Մտրակ 'ի կուշտ ընդ արահետ ճեպէ
 դաշտէն 'ի յոստան ,
 Եւ շատ որեար և կանանի կան 'ի զընին
 հիանան ,
 Նա ցանգ փոփոխ նուսէ 'ի նուս ձիոցն
 ոստնու ճոխաբար ,
 Ոստնու անգայթ մինչ 'ի ներքոյ թըռչին
 նըժոյգքն օգապար ,
 Հանգոյն Այաս ընդ ճեմելիս տախտա
 կամածս արշաւէր
 Նաւաց 'ի նաւս քայլ մեծաքայլ , և ձայնն
 յերկին հասանէր :

Հրամանն անդուլ գոչեր ասեղ վրանաց
նաւաց կալ պաշտպան ,

Բայց և Հեկտոր ոչ հանդարտեաց կալ
Տրոյացւոց 'ի խրուան :

Որպէս յորժամ հաւուց երամք կան
տարմաբար առ գետով

Սագուց , խորգից երկայնավիզ և կարա-
պաց մեծ ժողով ,

Կան արածին արօրացեալք յարօտ դա-
լար 'ի դաշտի ,

Անդուստ արծիւ սրանայ խարտեաչ և
խոյանայ շէշտակի ,

Ճըզբրիտ Հեկտոր թափ 'ի նաւ մի նրման
ասեղ օդայնոյն

Շէշտ խոյացաւ , և էր նաւին առաջա-
կողմն երկնագոյն .

Ըզնա Դիոս հրգօր բազկաւն ինքնին դըր-
դեալ 'ի թիկանց ,

Փողեալ ըզհետ և ըզխուժան մարտ նո-
րահրատ բորբոքեաց :

Ասեա , 'ի մարան այն ինչ մըտեալ ան-
խոնջք էին կորովեք .

Մարտն էր ասեղ , քանզի քաջաց պա-
տահեցան քաջարիք :

Աշխոյժք մարտկացն են այլամիտք . զի
Յոյնք կըռուին յուսաբեկ ,

Զօրհասն անշուշտ տեսեալք առ դուրս ,
համայն մոլեալ են 'ի վէդ .

Իսկ տրոյացիք յուսապատարք մարտ մը-
 ղէին քաջապէս ,
 Մահ գիւցազանց ածել Յունաց ընձաւս
 առնել բոցակէզ :
Մինչ այս մինչ այն , յայս այլազան 'ի
 մարտ վառին լանջք քաջաց ,
 Անդուստ Հեկտոր նաւ մի կալաւ և բուռն
 եհար ըղիւեւաց :
 Չայս Պրոտեսիդ ած յԵղեոն 'ի հայրենի
 աշխարհէն 53 ,
 Նաւն էր արագ և գեղեցիկ , այլ ոչ դար-
 ձոյց զայն անդրէն :
 Խօլք ընդ խօլաց , Տրոյեանք և Յոյնք
 լաստափայտիս առ ընթեր ,
 Գոգ գիրկ ընդ խառն այր ընկերի շըշուկ
 գուժայր մահաբեր .
 Անդ ոչ աղեղն և ոչ սըլաք ոչ բացաձիգ
 և վըքին ,
 Միով ոգւով նահատակեալք մարտ 'ի մօ-
 տոյ գոռային .
 Չէնքն 'ի ժամուն սակր էր և վաղը , 'ի
 նոյն տապար սայրասուր ,
 Վաղակաւոր յաղթ և հարուստ , գեղարդն
 երկսայր հաստամուր .
 Չայսորինակ ընթերամարտ զինուք յառ-
 նեն նահատակք ,
 Կալեալ 'ի բուռն և սևագունտ դասասա-
 կաւորն ըզգանակ :

Կէսք 'ի բազկաց ըզգեանէին կէսք 'ի թի-
կանց կորովեաց ,

Եւ ապաժոյժ արեանցն առու ըզսևա-
թոյրն հող գունեաց :

Բայց զոր 'ի բուռն արկ մի անգամ , չե-
թող հեկտոր 'ի ձեռաց ,

Ըզգեկ նաւուն նա սինդ կալեալ ահե-
ղագոչ ձայն կարգաց .

« Հուր ածէք հուր , հրոսեալ Տրոյեանք ,
մի վերջոսնիք 'ի մարտէ .

Օր մեզ այսօր ետ Արամազդ որ զամե-
նայն օր արժէ .

Կալցուք ըզնաւս , որ անմահիցն եկեալ
առ մեզ յոչ կամաց

Ձեան մեծ ածին , քանզի մերոց սիրտք
վատացան ծերունեաց .

Ես մարտ մըղէլ երբ ժրտեցի նաւատորմին
յանդիման ,

Մեր ծերունիքն արկին խափան ինձ և
զօրուն միաբան .

Եւ թէ մեր միտք յԱմարոսայնոյն վը-
նասեցան յայնմ աւուր ,

‘ Եա այժմ ինքնին ահեղահրաշ սիրտ մեզ
ազգէ քաջամուր » :

Ասաց հեկտոր , հնազա հրոսակ տան
համախուռն յուժգին թափ .

Ձի և Այաս խուճապեցաւ հոծեալ նե-
տիցն 'ի տարափ :

Լիք ըզնաւուն տախտակամածն , ուր նա
 գողայր ամեհի ,
 Ըզմահն առ դուրս անշուշտ տեսեալ
 վերջոտնեցաւ վայրիկ մի :
 Ընկերկեցաւ 'ի նըստոց մի յերկայնու-
 թիւն եօթնոտնեան ,
 Եկաց արին արձանացաւ . անդուստ դի-
 տեր զամենայն .
 Տէգ կուռ շարժէր . թէ դք Տրոյեանց
 ծախիչ նաւաց հուր բերէր ,
 Վանէր 'ի բաց և ցանդ խրախոյս ահագ-
 նագոչ արձակէր .
 66 Ո՞ւմ կայք Յունաց խումբք դիւցա-
 զանց , արիք սատարք Արեսին ,
 Յուշ ձեզ , ո՞վ քաջք , յուշ ձեր բազուկք
 անվանելիք 'ի կըռուին :
 Մի՛թէ համհարզք կայցե՞ն ուստեք մեզ
 զօրավիգն 'ի թիկանց ,
 Մի՛թէ պատուար կայցէ՞ արեկ պատնէշ
 մարտիս մարդախանձ .
 Չիք աստ քաղաք մեզ մօտաւոր մահար-
 ձանօք քաջամուր ,
 Չիք ասպատան թէ այլ խուժան փոխա-
 նակաւ առցէ սուր .
 Բանակ ահա պատէ ըզմեզ Տրոյեանց խօ-
 լաց քաջազէն ,
 Պատէ և ծով , և մեք 'ի տար կամք հայ-
 րենի յաշխարհէն .

Ո՞ւմ կայք, ո՞վ քաջք, բազում միայն է
մեր կենաց փրկանակ ” •

Ասաց, և ինքն արձանացեալ վաներ 'ի
սուր 'ի նիզակ :

Թէ դք ուստեք մտեր նաւաց 'ի Տրոյա-
ցոց խուժանէ ,

Խանձող բերեալ հրրձիգ 'ի նաւս դրդեալ
վերագն յԵկտորէ ,

Դէտակն 'ի նա կալեալ Այաս , խոցեր
'ի սայր նիզակի •

Այսպէս տապաստ երկոտասանս էարկ
նաւացն առաջի :



ԵՂՒԼԿԸՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԶ.

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Պատրոկղէս արտասուօք իւրովք առն֊
 քէ զԱբիլէս առնուլ զղէնս նորա և զգ֊
 րականն : Յարձակի 'ի Տրոյացիս . ան֊
 ճնարին խուճապին նոքա , կարծեալ ըզ֊
 նա Աբիլէս : Նահատակութիւնք Պատ֊
 րոկղէայ մեծամեծք : Տասպատ արկա֊
 նէ զմեծն Սարպեդոն : Հեկտոր գոյժ ա֊
 ուեալ արչաւէ 'ի սահ գիականն : Մարտ֊
 սաստիկ ըզմարմնովն Սարպեդոնի : Հրա֊
 շալի փոխադրութիւն մարմնոյ նորա ընդ֊
 օդս : Պատրոկղէս խաղայ յաւաջ 'ի Տրոյ֊
 իս : Խիզախէ վազել ընդ սրատուարն , և
 ընկրկի յԱպողոնէ : Դիմագրաւին Պատ֊
 րոկղէս և Հեկտոր : Յաներևոյթս զինա֊
 զերծ առնէ Ապողոն զՊատրոկղէս : Վի֊
 րաւորի սա յԵւփորբէայ Տրոյացւոյ . և
 ապա ուրեմն նիզակահար անկանի 'ի
 Հեկտորայ : Աղիողորմ մահ Պատրոկղէայ .
 և 'ի վերջինան գուշակութիւն նորա գու֊
 ժաբեր առ Հեկտոր :



ԵՂՒԼԱԿՆ

Հ Ա Գ Ն Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Ժ Զ .

Մ ԻՆՉ դեռ այնպէս յայն լաստափայտ
պայքարէին սաստկապէս ,
Մեծին հանգէս Աքիլէսի եկաց յայն .
Ժամ Պատրոկղէս .
Ձերմ արտասուս կայր և հոսէր իբրև 'ի
խոր աղբերէ ,
Որ ընդ անկոխ վէմ ապառաժ խաւա-
րային ջուր բղխէ :
Յայն կերպարան ահեղն 'ի նա գորովե-
ցաւ Աքիլէս ,
Չայն յանուանէն բարեկամին կարգաց
սիրոյն 'ի հանգէս .

« Զի քեզ, հիմ լաս, ո՞ Պատրիկէ, եբր
 օրիորդ ըզմանկիկ,
 Որ մօրն ըզհետ արագելով ըզդեզևուն
 զիւր քայլիկ

Ժլտի բառնիլ, ունի զտեռոյն խափան
 ճեպոյն մայրենի,

Կողկողազին հայի և լայ, մինչև 'ի գեր'ն
 ընկալցի 54 .

Հանգոյն ճըզգրիտ, դու Պատրիկէ, հո-
 սես ինձ գիրք արտասուս .

Արդեօք ինչ մի ունիս ինձ բօթ կամ
 Միւրմիդեանց 'ի ժամուս .

Եւ կամ թէ քեզ հաս 'ի Փիթեայ հրեշ-
 տակութիւն ինչ գաղտնի .

'Նա զԱկտորեան Մենետիոս մեզ համբա-
 ւեն կենդանի .

Ողջ է և իմն Էակիրեանն 'ի մէջ ազգին
 Միւրմիդեան .

Երկուց դոցա օրհասն անշուշտ մեզ ցաւ
 ազգէր անպայման :

Կամ դու թերևս յաղէտն Յունաց յոգւոց
 հանես ցաւագին ,

Զի առ ընթեր հրակէզ նաւաց դոքա տա-
 պաստ անկանին .

Դիակնացեալք պատուհասին ընդ յան-
 ցանաց զոր յանցեան .

Խօսեաց աղէ, ծածկեր ինձ մի, գիտակք
 լիցուք երկոքեան » :

Ընդ խոր յոգևոց հանեալ, բարբառ ետուր դու քաջ Պատրոկղէ .

«Ո՛վ Աքիլէս հրզորդ Յունաց, ճետ դու քաջաց ՚ի զարմէ ,

Մի ցասնուցուս , թէ ես զամբաւ զաղէտըն լամ ըղՅունաց ,

Զի այժմ յոգիս կան ապաստան մեր դիւցազունք կորովեաց .

Ի նաւս ահա կէսք նետահարք և կէսք հեծեն տիգահար ,

Խոցեալ նետիւ տանջի Դոմեդ արին այն գունն ՚ի գուպար ,

Քաջն Ողիւսէս տիգահարեալ և Ատրիդէս վէտըմբեր ,

Եւ փրքնահար Եւրիպիւղոս տապի վերօքն ՚ի յազգեր :

Սոցուն վերաց բրժիշկքն այժմիկ բազմադարման տանին հոգ ,

Եւ դու ցայսվայր , ո՛վ Աքիլէս , կան սաւացեալ անամոք :

Քաւ , յիս երբէք մի գամագիտ մաղձ քո լիցի դառնութեան ,

Զոր սխութեամբ տածես ՚ի քեզ , ով մարդածախդ ախոյեան :

Ո՛վ ոք , ասա , դրոցէ յասկայս ինչ զօրավիգն առ ՚ի քէն ,

Թէ ոչ այսօր թափես ըղՅոյնս ՚ի դառնութեան օրհասէն :

Քեզ, ապառուժ, քաւ չեկաց հայր Պե-
ղոս ասպետ քաջարին,

Ոչ և թետիս մայր դիցանոյն ըզքեզ կը-
րեաց յարգանդին .

Ըզքեզ անշուշտ երկնեաց ծընաւ ծով
կապուտակն ամէհի

Կամ ժայռ ահեղ, զի է իսկ քո սիրտ ա-
պառաժ 'ի ծոցի 55 :

Աս' եթէ քո զանգիտեն միոք 'ի պատ-
գամէ իմեմնէ,

Կամ ինչ մի բան յԱրամազդայ քեզ մայրն
արդոյ ազդեալ է,

Գէթ զիս յըդեա, տուր ինձ ըզջորդ, ըզ-
Միւրմիդեանս հան ընդդէմ .

Կարգեմ ճակատ, լոյս կենսաւէտ թերևս
Յունաց ես ծագեմ :

Տուր և զուսն իմ վառեւ 'ի քոյդ 'ի զարդ
ահեղ և 'ի զէն,

Եւ զիս Տրոյեանք ըզքեզ կարծեալք ըն-
կըրկեսցին 'ի մարտէն .

Անդ և հեղենք առցեն ոգի յոգնեալ
մարտիկքն և աննինջ .

Է կենսառիթ 'ի մեծ խազմի ոգի առնուլ
և խուն ինչ :

Իսկ մէք առոյգքս հեշտին յայնժամ ըզջոր
խոնջեալն 'ի կրոււին

Ի մեր նաւաց և 'ի վրանաց վանեմք հան-
դէսպ ոստանին " :

Ասաց ժրտեաց . վայ , միտք քաջին եբբև
մանկան խօլացան ,

Զի ինքն անձին ժրտէր ըզմահն և զօրա-
հաս դառնութեան :

66 Բա՛բէ դիւցազն , անդէն ձայն ետ զայ-
րագնեւով Ա.քիլէս ,

Բա՛բէ դու ինձ , ո՛ր Պատրոկղէ , զլինչ հնա-
րիմաց ճարտարես :

Ինձ ոչ գուշակք յականջալուրս իմում
ազգէն ինչ ոգւոյ ,

Ոչ և բան մի յԱրամազդայ եբեր ինձ
մայրն իմ արգոյ :

Մաղձ դառնութեան , խէթ անպայման
զիմ սիրտ խանձէ և զողին ,

Երբ յուշ ածեմ , զի մարդ ժրտեաց կապ-
տեւ յինէն զիմ բաժին .

Յաւակնեցաւ , զիւրն հաւասար այրըն
զըրկեաց ճոխասլանծ .

Այս է խէթն իմ , որ զիս տապէ և զողին
իմ ցարդ կըտտեաց :

Բաժին էր կինն , զոր ինձ հանին Ա.քայե-
ցիք մրցանակ ,

Յորժամ զամուրն հարթեալ քաղաք ա-
ռի 'ի սուր 'ի նիզակ .

Զայն հափափեաց գոռ ճոխութիւնն Ա-
գամեմնոն արքայի ,

Իբրու իցեմ էս անաւագ տարաշխարհիկ
և գերի :

Այլ մէք օն անդր 'ի բաց թողցուք որ
ինչ յայնժամ դէպք դիպան ,

Զի և 'ի սիրտ յաւերժանալ մեզ ոխու-
թեամբ չէ արժան :

Ինձ օն և օն չէր հանգարտել զահեղ ցաս-
մանն իմ ըզփութք ,

Մինչ չև յիմ նաւս հասեալ հրոսիւ խօ-
շին մարտին և շըշուկ :

Բայց աղէ դու արկցես զուսով զիմ
զարդն և զէն գերարփին ,

Եւ մեր քաջաց Միւրմիդոնեանց կ'աց զօ-
րավար 'ի մարտին :

Տրոյեանց ահա մոլթ զարամուրքն ա-
հեղ պատին ըննաւութք ,

Եւ Յոյնք փակեալք առ ծովափամբ վայր
մի դրաւեն յոյժ անձուկ .

Ոտնհար դոցա կայ արդ ողջոյն Տրոյ-
եանցն ոստան մարդաշատ

Զի մօտ նոցա ոչ ճաճանչէ սաղաւարտիս
իմ ճակատ :

Անշուշտ արաբ ձորք լընուին 'ի Տրոյա-
ցոց դիականց ,

Թէ այդ արքայդ Ագամեմնոն էր խեղա-
մուտ իրաւանց :

Բայց արդ ողջոյն խիզախեցին , զի և Դո-
մեդ քաջարանց

Տէդ ոչ շարժէ 'ի յաղթ բըռին վանել զօր-
հասն ըզՅունաց .

Եւ ոչ դարձեալ ես զԱտրիդեայ, յԱքայ-
եցւոց բանակէն,

Ի դառնացեալ նորա գրլխոյն գանչիւն
ձայնի ինչ լըսեմ.

Չայն խրախուսի հնչէ միայն մարդածա-
խին Հեկտորայ,

Գոչիւն ընդ դաշտն յաղթողական Տրոյ-
եանց ձայնին բարձրանայ:

() Ի Պատրոկղէ հաս'ի Թիկունս նաւա-
տորմի տագնապին,

Ձի մի նաւք մեր աճիւնացեալ հտոցին
զանձուկ մեր դարձին:

Լճւր զոր ասեմ և հնազանդեաց պա-
տուիրանին զոր տամ քեզ,

Ձի ինձ 'ի սպառ յԱքայեցւոց շուք մե-
ծափառ առթեսցես,

Ձի և կրկին չքնաղ ըզկինն սալըսսարեալ
յիս ողջիկ,

Ի նոյն և շատ ընծայաբեր ձօնս յաւելցեն
գեղեցիկ.

Դու զնաւատորմ յանդորր հանեալ
դարձցիս առ իս միւս անդամ,

Թէսկտ և քեզ Ամպրոտայինն շուք յա-
ւելցէ յաղթական.

Մի առանց իմ դու խառնեսցիս Տրոյ-
եանց խօլացն 'ի շըշուկ,

Մի զիս Թերևս անփառունակ յարդա-
րեսցես և անշուք:

Մի և 'ի մարտ տարապայման իբրև աշխոյժ խիզախեր ,

Եւ մահ Տրոյեանց գուժեալ ըզզորդ 'ի յԵղիոն մի ածեր .

Թերևս ընդդէմ իջցէ քաջ ոք 'ի Դիւց-
ընկէց 'ի լեռնէ ,

Քանզի զնոսա կորովաղէղճն Ապողոն
սերտ սիրէ :

Բայց դու դարձիր երբ կենսաւէտ նա-
ւատորմին լոյս ծագես ,

Եւ թող դոքա յասպարիսին մարտ մը-
ղեսցեն քաջապէս :

Ո՛վ Արամազդ և Աթենաս և Ապողոն
քաջարի ,

Մի ոք Տրոյեանց , որչափ և են , յորա-
հասէն մի զերծցի ,

Մի ոք և յոյն . իսկ մեզ երկուց մի մահ
հասցէ մի աշխար ,

Միայն երկուքս հարցուք Տրոյեայ սը-
սակազարդն ըզպատուար " :

Սոքա այսպէս այր ընկերին զըրոյց տային
'ի ժամոն ,

Մինչ գեռ Այաս վատեր նետիցն յան-
տառախիտ տարափոյն :

Կամակարեալ Ամպրոպայինն ըզնա վա-
նէր 'ի բարձանց ,

Եւ 'ի խոնարհ այր տրոյացին 'ի լայնալիճ
աղէղանց :

Ահեղ հնչէր 'ի քունս արւոյն կուռ սա-
ղաւարտ նետահար .

Մեծ շաչէին ոստիւնք փքնացն վահա-
նակացն 'ի պալար .

Խոնջէր ձախ ուսն յանդուլ շարժել
ըզդիւրագարձըն վահան .

Զայրն 'ի տեղոյն ոչ սասանէր անհատ
նետիցըն խուժան :

Անդ կորովին յակաստանի յոգւոց թա-
սէր անդագար ,

Եւ ընդ իրանն ողջոյն նորա քիրտն ան-
պայման առուանայր :

Ոչ ժամանեաց քաջ նահատակն առ-
նուլ երբէք անդ ոգի ,

Զի կուռ անհետ խուժէր 'ի նա տագ-
նապ ըզհետ տագնապի :

Ինձ արդ , Մուսայք , դուք պատմեցէք ,
տան բնակաւորք Ողիւմիւկան ,

Զինչ օրինակ 'ի նաւս Յունաց նախկին
հրոյն բոցք հատան :

Սլացաւ հեկտոր և զԱյասայ ըզտէգն
'ի հաստ 'ի հացւոյն

Զախեաց սուսերբն 'ի ծայր բընոյն յա-
գոյց սայրի երկաթոյն .

Զուր տիգաբուն ճօճէր Այաս ըզկր-
ճատեալ նիղակին ,

Սայրըն թռուցեալ անկաւ հեռի շըռինդն
էհար ընդ գեաին :

Ճանեալ ուշիմն և խելամուտ հրաշիցն
էղեալ ահագին ,

Քըստմընեցաւ , զի դէք ինքնին 'ի վէգ ընդ
դէմ խաղային :

Ճանեալ , զի ողջ ըզկար մարտին խըզէ
հըզօրն Ամպրոպեան ,

Խնդրէ Տրոյեանց մեծահանդէս նըշան
կանգնել յաղթութեան :

Ի բաց յայնժամ նա 'ի նետիցն ընկըրկէ .
ցաւ 'ի ժամունն ,

Հապա Տրոյեանք հուր լափլիզօղ արկին
'ի խելա 'ի նաւունն .

Հրակէզ ցումամբք արագ արագ անշի-
ջելի բոցքն հատան ,

Անվանելի հուրն ընթանայր ընդ լաստա-
փայտն ամենայն :

Ետես Աքիլլ , ծեծէր ըզբարձս , գոչեաց
անդէն 'ի նաւէն ,

«Արի , դիւցազն իմ Պատրոկղէ , փութա
իմ քաջդ ասպազէն .

Բոցք բորբոքին անշէջք 'ի նաւս , ցոլ-
մունքն հատան մեզ անդուստ .

Ո՛վ , մի նաւացն աճիւնանալ մեզ կար-
ճեսցէ ըզփախուստ :

Աճապարեալ արկ գու ըզգէնս , զիմ
նահատակս ես խըմբեմ » .

Ասաց , անդէն և Պատրոկղէս առ ըզհրա-
փայլ զարդն և զէն :

Ըզսրոննապանսն գեղեցիկ սրունիցն ա-
 գոյց առաջին ,
 Ամրածածուկք և քաջասլինդք են 'ի
 Ճարմանդ արծաթին .
 Արկաւ երկրորդ վարասանակ լանջացն
 հըզօր 'ի պատեան
 Զխայտաճամուկն աստեղազարդ զա-
 րագոտին Աքիլէայն .
 Զուսովքն ապա կախեաց ըզկուռ զար-
 ծաթագամն ըզսուսեր ,
 Առ և զասպարն հաստահարուստ և 'ի
 բազուկն արկանէր .
 Ըզսաղաւարտն յաղթ գիսասանծ 'ի
 գլուխ եգաւ կորովի ,
 Եւ 'ի վերուստ փողփողէլով կատարն
 ահեղ տատանի .
 Առ և կալաւ տէգս հաստաբետ որ քաջ
 'ի բունն աղխեցան ,
 Միայն գեղարդն ըզկուռ , ըզծանր , ըզ-
 յաղթ չէառ զԱքիլէան .
 Զայն 'ի Յունաց բաւէր ոչ դք ճօճել
 մարտին 'ի հանդէս ,
 Քաջիկ ըզնոյն տանել բերել գիտէր մի-
 այն Աքիլէս .
 Բուն զգեղարդան զայն 'ի հացւոյ 'ի
 Պելիսին կատարաց
 Կըտրեաց Քիրոն , ետ հօր նորա օրհաս
 ածել գիւցազանց 56 :

- Ի** լուծ ապա ձրգեւ նրժոյգս յԱզոմե-
 գոն ձայն կարգաց,
 Ում նա ըզկնի քաջն Աքիլէայ շուք
 հարկանէր երեսաց.
- Սա դիւցազինն արագոտին հաւատարիմ
 աննրման,
 Եւ հրոսեւոցն ընդդէմ քաջաց էր սա
 սլատուար ամրութեան:
- Հանդերձեցաւ Ազոմեգոն, և ձեռն 'ի
 գործ ճեւրնիթաց
- Արկ ընդ լրծոյլ զամուլս արագ չընաշխար-
 հիկ նրժուգաց.
- Են այս նրժոյգքս Քսանթոս աշխէտ, և
 Բալիոսն այն ճանճկէն 57,
- Թըռչունք սոքա օդասարիկք հողմոց
 գունակ արագեն:
- Չսոսա Արպեանըն Պոգարգէ հողմոյն
 ծընաւ Չեփիւռի 58,
- Երբ Ովկեանուն առ հոսանօք արօտա-
 նայր 'ի դաշտի:
- Չըգեաց 'ի լուծն 'ի կողմանէ և զՊե-
 դասոսն հիասքանչ 59,
- Չոր ած Աքիլ յորժամ զոստան զԵ-
 տիոյնին աւարեաց.
- Այս Պեդասոս, թէպէտ և ինքն ըզմա-
 հացուաց ունէր ճէտ,
- Սրանայր թըռչէր և նրժուգացն էր ան-
 մահից զուգահէտ:

Բայց Ափիլէս անդ ընդ վերանս արագ
'ի վեր և 'ի վայր

Վազէր, և գունդ ըզՄիւրմիդեանց վա-
ռէր կազմէր առնաբար :

Իսկ Միւրմիդեանք գիմեալք որպէս
գայլք շաղլակերք ամէ՛ի,

Որոց անշէջ վայրագացեալ է հուրն 'ի
լանջ կատաղի,

Երբ զեղջերուն եղջերագեղ գէշ տան
լերանց 'ի թաւին,

Մըռըգայլէն և ծամելիքն արեամբ կար-
միր ներկանին,

Անդուստ ապա վոհմակ կապեալ գան
մոլեգին իջանեն,

Փափաք լնուլ ըզծարաւոյն 'ի սևաջուր
աղբերէն 60,

Կան և լափեն բարակ լեզուաւ ըզսևո-
րակ ջուրցն երես,

Եւ ըզգայուեալք ժայթքեն արեամբ շատ
խիխաւրաս գէշագէշ,

Մոլեացըն թափ արենախանձ ցանդ
մըրըրկեալ 'ի ծոցի,

Եւ փոր նոցա ձրգտեալ սարգի և փըքու-
ռոց պարսպաթի,

Հանգոյն յայնժամ Միւրմիդոնեանց
պետք զօրավարք կորովիք,

Խուամբ արարեալ շուրջ Ափիլէայ կան
համհարզին զօրավիգ :

Իսկ 'ի նոսա արձանացեալ վեհ գիւցա-
 զանցն Աքիլէս ,
 Զասպարակողսն և զայրուծին յորդէր
 վառէր սաստկապէս :
 Նաւք արագունք էին յիսունք , զորս Ա-
 քիլէս քաջ արանց
 Այր անձկալին Արամաղդայ 'ի Տրոյիա
 ինքնին ած :
 Անդ քաջընտիրք յարեան նորա նիզա-
 կակից շատ որեան ,
 Եւ 'ի մէն մի լաստափայտիցն յիսունք
 թըւով ամբարձան :
 Հընգից իշխեւ ասըսպարեաց իբրև գըն-
 դաց զօրավար ,
 Այլ գերագոյն զիշխանութիւն անձին
 սահեաց ճոխաբար :
 Գունդ զառաջինն ունէր զըահեալն՝ 'ի
 խայտ պատեան Մենեսութոս
 Որդի Սպերբեայ , սա է ճետիւ գետ 'ի
 Դիայ գեղահոս 61 :
 Անկեալն ընդ դիս գուտորըն Պեղեայ
 Պողիւգորէն գեղանի
 Ըզսա յղացեալ ծընաւ գետոյն յաւեր-
 ժահոսն իսպերբի .
 Սակայն կարծեալ էր հայր նորա Բո-
 ըոս որդին Պերերեայ ,
 Զի սա զաղբիկն ածեալ յայտնի , վար-
 ձանս ամբաւ ետ նըմա :

Երկրորդ գընդին քաջն Եւդորոս ճեա
 դաղամետտ ամբարձաւ ,
 Զոր Փիւղասեան Պողիւմէլէն ծընաւ
 նազէալն 'ի կաքաւ :
 Եր սա 'նդ գուսանս և աչս 'ի սա Արգո ,
 սասպանն արձակէր ,
 Երբ տօն պարուն էր Արտեմեայ ոսկե ,
 փըքնոյն որսասէր .
 Տեսեալ այնպէս 'ի վերնատունն ել ամ
 բարձաւ փութապէս ,
 Եւ ընդ նրմա բարեբարոյն Հերմէս անկաւ
 գաղտապէս :
 Զաւակ նրմա ետ հոյակապ զայս Եւդո
 ռոս կորովի ,
 Արագ յոտից միանգամայն և քաջ 'ի մարտ
 հանդիսի :
 Այլ մինչ առեալ 'ի յարգանդէ ծնու
 ցիչն անուն իլիթեա ,
 Աժ ըզտըղայն 'ի յերևան և լոյս զարփւոյն
 ետես նա ,
 Յայնժամ ապա Ակտորիդեանն Եքեկ
 լէոս քաջարին
 Առեալ ըզմայրն էած 'ի տուն և բիւր
 վարձանս ետ նըմին :
 Իսկ ըզտըղայն սընոյց վարժեաց Փիւ
 դասն ինքնին ծերունի ,
 Յարբունս հասոյց գըրգայր գըգուէր
 իբրև որդի սիրելի :

Երրորդ գընդին պետ Մեմալեան էր
Պիսանդրոս մարտիկ սէգ,

Ի Միւրմիդեանս յետ Պատրոկղէայ սա
'ի մարտի քաջատէգ :

Եկաց իշխան չորրորդ գընդին Փիւնիկ աւ
պետ ծերունին ,

Հինգերորդին Աղկիմեդոն Լայերկոսի
քաջորդին :

Իբրև այսպէս առ հասարակ եղ Աքիւ
լէս 'ի կարգի ,

Արձանացաւ , բան կորովի բարբառեցաւ
յատենի .

«Մի մուացօնք , Միւրմիդոնեանք , սաստ
քըն լիցին ձեզ երբէք

Զոր սպառնացեալ 'ի նաւըս ձեր ընդ
դէմ Տրոյեանց պարսեցէք :

Դուք յոխուածեանս հրատապ ցառմանս
զիս զըզուեցէք դառնապէս .

«Հէգ և թըշուառ , քեզ մայրըն քո մաղձ
դիեցոյց , Աքիլլէս .

Այ ապառու՛մ , դու որ կառեալ զո
րեարդ ունիս աստ անշուք ,

Գէթ ծովարշաւ թոյլ տուր նաւացս և
մէք 'ի տուն մեր դարձցուք .

Քո ուստ ուստէք անկաւ 'ի սիրտ այդ
ոխուածիւնդ ամէհի » .

Յիշէք , այս բան 'ի ձեր գընդէն շատ ինձ
եղև լըսելի :

Արդ օրն ահա մեծի խաղմին ում դուք
էիք անձկայրեաց .

Օն խիզախեալ հրզօրն 'ի ձէնջ մարտ մը-
ղեսցէ քաջալանջ " :

Եսաց դիւցազն , և ահագին բոց բորբո-
քեաց 'ի յոգի ,

Հապա կացին հոժ խիտ առ խիտ խրախոյս
լուեալք զարքայի :

Որպէս յորժամ ըզբարձրայարկ շինեալ
ըզտուն այր ճարտար ,

Կուռ վէմ առ վէմ 'ի միասին յարէ կան-
գնել ըզպատուար ,

Զի դիւաշունչ հողմոյն ընդդէմ կացցէ
կանգուն անկործան ,

Այսպէս ասպարք անդ կրմբաւորք և սա-
ղաւարտք հոժեցան .

Ասպար իբրու միոստայնի ընդ ասպարի
զուգեցաւ ,

Եւ սաղաւարտ առ սաղաւարտ և մարդ-
ընդ մարդ խառնեցաւ :

Սարսին գրլուկք և գիսասպանժ վերջք
փողփողունք կատարաց

Միասնաբար դան ծածանին . այսպէս
կային գունդք զօրաց :

Իսկ դիւցազունք վառեալք կրկին դի-
մագրաւէն աննրկունք ,

Մին Պատրոկղէս մին Ադոմեդ քաջնա-
հատակքն արգոյք .

Կրկին նոքա միով հոգևով իբրև ամուլք
հաւասար,

Ի մի բորբոք արձանացան Միւրմիդոս
նեանց զօրավար :

Բայց Աքիլէս խընամ կալեալ, չոքաւ
եմուտ 'ի խորանն,

Եւ գեղեցիկ ըզհրաշակերտ եբաց զար-
կեղն ըզբերան .

Չայն մայր Թետիսն եղ 'ի նաւուն ,
որդւոյն հարեալ ըզպաշտօն ,

Եւ անդ նրմա պաշտպան յօգոց կուտեաց
խըլայս և բաձկոն .

Եղ 'ի նրմա նա և ասուիս օթոցս և գորգս
աննրման .

Ունէր նա անդ 'ի պահեստի և հրաշա-
րուեստ գաշխուրան .

Ոչ ոք նովաւ բայց յԱքիլէայ զհրաշէկ
գինին ճաշակէր ,

Եւ ոչ այլ գից բայց 'ի Դիայ նովաւ նա
ձօն նըւիրէր .

Ըզսա յայնժամ հան յարկեղէն և նախ
մաքրեալ ծրծըմբով ,

Յետ այնորիկ լըւաց զայն ջինջ 'ի ջուր
յըստակ և 'ի զով .

Չուր և ձեռաց առեալ յայնժամ, արկ
ըզհրաշէկ ըզգինին ,

Եւ ինքն ապա կանգուն այնպէս արձա-
նացաւ 'ի յարկին :

Չօնէր զգինին և վերակնեալ մաղթէր
 յերկին արփաւոր,
 Ահանատես էր անդ ինքնին վեհն Արա-
 մազդ շանթաւոր .

“Դու Պեղասգեանըդ Արամազդ, դու
 Դովդոնեան ո՛վ արքայ,
 Բնակես ՚ի տար և թագ կապես ձրմեռ-
 նասուն Դովդոնայ .

Ուր բակ ըզքև Սելոսք գուշակք են
 քոց բագնաց բնակակից
 Եւ վասըն քո գետնախըշտիք են անըւայք
 և յոտից 62 .

Դու որ երբեմն ողոքաւոր ձայնիս լըւար
 մաղթանաց .

Ինձ շուք հարեր և վշտատես զորդիս է-
 դեր զԱ. քայեանց ,

Դու և զարդիս ըղխընդրըւածս պըսա-
 կեսցես տիրապէս ,

Որ կամս աստէն մենաւորեալ նաւատոր-
 մին ՚ի հանդէս .

Ես ըզհամհարզն իմ արձակեմ ՚ի մարտ
 ընդ շատ Միւրմիդեանց ,

Դու աջալուրջըդ Արամազդ, շուք տուր
 նրմա ՚ի բարձանց .

Հէղ ոյժ ՚ի լանջըն քաջալանջ, զի և Հեկ-
 տոր դիտասցէ

Թէ մեր համհարզն և միայնակ մըցեւ ՚ի
 մարտ ներհուն է :

Կամ թէ յայնժամ գուայ միայն բա-
 զուկ սորա կորովին ,
 Երբ յԱրեսեանն յահեղ շըշուկ ածեմ
 ըզսա ես ինքնին :
 Յիս դու ո՛վ տէր , սա 'ի նաւացն ըզգոռ
 վանեալ մի անգամ ,
 Անդրէն 'ի նաւս անդըրժեղի առ իս դարձ-
 ցի ողջանգամ .
 Դարձցին և զէնք դարձցին և քաջքս ողջ
 'ի մարտէս այս ահեղ » .
 Զայս նա մաղթեաց , և աղօթից լըւաւ
 Դիոսն հանճարեղ :
 Կէս զաղօթիցն ետ նրմա հայրն , ոյր վասն
 յողոք ժրտեցաւ ,
 Իսկ կէս դարձեալ ըզընորհին տալ դիւց-
 ազին զըլացաւ :
 Շնորհեաց ըզնաւս յանդորր հանել , վա-
 նել մարտին զահ և հոյն ,
 Բայց զըլացաւ թէ համահարզն ողջամբ
 դարձցի 'ի կըռուոյն :
 Զայս Աքիլէս մաղթեալ Դիայ և ըզ-
 նըւէրն իւր եհեղ ,
 Եւ միւս անգամ մուտ 'ի խորանն ըզ-
 դաշխուրանն եդ յարկեղ :
 Յարեաւ ապա հետաքընին առ դուրս
 եկաց խորանին ,
 Անդուստ Յունաց և ըզՏրոյեանց զըննէր
 ըզմարտն ահագին :

Նապա նոքա ընդ Պատրոկղեայ քաջին
 վառեալք 'ի հանդէս,
 Եւ գունդագունդ 'ի Տրոյացիս դըռոյթ
 ետուն սաստկապէս .
 Իբրև վայրագ բոռք և գոռեղք հեղան
 անդէն պատեցին ,
 Որք բնաւորեալք յուզւոյն վերայ ըզ-
 բոյնս եդեալ դարանին ,
 Անդ խեռ տըղայք ըստ բոյս բարուց ընդ
 նոցա խաղ մարտ յուզեն ,
 Յանգ գըրգըռեալ անտիականքն անձանց
 'ւ այլոց չար գործեն ,
 Զի թէ յանգէտս այր ուղևոր խուն մի
 նոցա խըռով հար ,
 Նոքա 'ի դուրս անդ թափ տըռեալ հրո-
 սակ կապեն տարմաբար ,
 Են զայրագինք , յաղկաղկ 'ի լանջն ըզ-
 սիրտ ունին կորովեաց ,
 Ճիւղաղ կըռուեալ ընդ անցաւորն պահ
 կան իւրեանց զաւակաց ,
 Նոյն Միւրմիդեանք սիրտ և ըզթափ սո-
 ցուն կալեալ հանգունակ ,
 Թափ 'ի նաւաց հեղան արտաքս հրո-
 սեալք մըղէլ մարտ արագ :
 Լըր 'ի Ժամուն գոռին գոչիւն նահա-
 տակացն անպայման ,
 Եւ Պատրոկղէս խրախոյս անդուստ գո-
 չէր արին յանդիման .

« Միւրմիդոնեանք, մեծն Աքիլլէայնի
զակակիցք դիւցազնն 63,

Չեր արուծիւնքդ ալէ, ո՛վ քաջք, ձեզ
մոռացօնք մի լիցին :

Օ՛ն առեալ մէք յաղթօղ մարտիւ շուք
յաւելցուք Աքիլլէայ,

Զի և ՚ի Յոյնս քաջ նահատակ հանգու-
նատիպ չիք նրմա .

Նա և գիտուն Աարիդ արքայն իւրոյն լի-
ցի դըժբանաց,

Փարշման կրիցէ զի շուք արժան չեդ նա
վէհին դիւցազանց » :

Խրախոյս կարգաց, գունդ կապեցին,
գրոհէն Տրոյեանց ՚ի փաղանգ,

Աղաղակին անդ ըզլաստիւքն հընչէր ա-
հեղ արձագանգ :

Լայն ինչ Տրոյեանք ըզՄենետեայ տե-
սին զորդին քաջալանջ,

Տեսին նորա և ըզհամհարզն հրափայլ զի-
նուցն ՚ի ճաճանչ,

Անկան բեկան առ հասարակ և փաղան-
գաց կարգք եղծան,

Վարժէն ինքնին թէ Աքիլլէս փայլա-
կնացաւ յերևան .

Վարժէն թէ նա հաշտեալ կրկին եհան
ըզլիէթն ՚ի սրտէն .

Խուճապեցան, այր այր փախուստ իրն-
դրէր ՚ի մեծ զըմբաղէն :

Նահատակեալ տէգ Պատրոկղէս փայ-
 լակնացոյց 'ի զօրուն ,
 Ուր էր խառնուրդն անհրնարին Պրոտե-
 սիդեան մերձ նաւուն :
 Կըշուեաց և հար ըզՊիւրեքմէ , սա Պէո-
 նեանց էր իշխան ,
 Որ զասպազէնան ած յԱմիւգեայ յար-
 ձակ ամանցն Աքսոսեան .
 Տիգեաց յաջ ուան . յոգւոց եհան ան-
 կաւ յորսայս 'ի փոշին .
 Սասանեցան Պէոնացիք և 'ի փախուստ
 խուճապին :
 Մեծ արհաւիրս արկ Պատրոկղէս 'ի
 ձիգ հըզօր գեղարդան ,
 Զի արկ տապաստ ըզզօրավարն ըզգո-
 նոցուն զախոյեան :
 Այսպէս վանեալ քաջ Մենետեանն
 ըզգունդագունդ թշնամեաց
 Շիջոց ըզհուրն , և նաւն իբրև խանձող
 մընաց կիսայրեաց :
 Հա՛ Տրոյացիք տագնապեցան փախչել
 յամբաւն 'ի շըշուկ ,
 Յոյնք հալածեն զեղեալք 'ի նաւս . զար-
 թեաւ անհուն շառաչուկ .
 Որպէս յորժամ լերին մեծի 'ի բարձրա-
 յոն 'ի ծայրէն ,
 Զամու զարամուր հարեալ վանէ աջ Դի-
 ոսին շանթազէն ,

Եւ գէտք յայնժամ և արտևանք և մայրիք գան յերևան,

Եւ 'ի յերկինս ցելեալ բանի արփին վերին անսահման,

Այսպէս յայնժամ Յոյնք 'ի նաւաց վանեալ ըզբոցն ահագին,

Վայր մի սփոփեալք զըւարթացան, բայց և չեղև դուլ մարտին .

Չև ևս ողջոյն սարտեան Տրոյեանք թիկնադարձոյցք 'ի նաւաց,

Այլ քաջք քաջաց պատահելով հաղիւ մեկնին 'ի վայրաց :

Անդ ախոյեան հար զախոյեան, չըշուկ ցըրուեալ էր մարտին,

Եւ խրախուսեաց 'ի զօրավարս նախ Մենետեան կորովին :

Ճեպով 'ի բարձն Արեւիկեայ վերջոտնելոյն տէգ կըշուեաց,

Քաջ թափ անցոյց զոսկրն ջախեաց, անկաւ յերկիր նա յորսայս :

Տէգ 'ի թոաս ձրգեաց կըշիւ Մենեղաւոս քաջարին,

Խոցեալ ըզլանջ մերկ յասպարէն, քաղեաց անդէն ըզհոգին :

Կանխեաց Փիւղիդ, հար զԱմփիկղոս ըզյարձակեալն ախոյեան,

Ի ծայր սրունից շէշտ դիպեցոյց ուրկայ մարդոյն յաղթ մըկան .

Նեարդք խրզեցան առ հասարակ 'ի սայր
 հըզօր նիզակին ,
 Եւ զԱմիիկղէայ զականողինն ըստուէրք
 մահու պատեցին :

Մատիղոբոսն 'Նեստորեան հար զԱտի-
 մնոս սուր յաշտէ ,
 Թափ անցուցեալ ընդ սընակուշոն յոր-
 սայս ըզնա տապալէ :

Սըրտնեալ Մարիս 'ի գուծ եղբօրն Ե-
 կաց հանդէպ դիական ,
 Մատեաւ և շէշտ յԱնտիղոբոս կըշուեաց
 ըզտէդ գեղարդան :

Ճեպեաց դիւցեան Թրասիւմեդէս մինչ
 չև տիգեալ Մարիսայ ,
 Ինքն անվըրէպ սրացոյց ըզտէգն և դիպե-
 ցոյց յուս նորա .

Տէգ սայրասուր կուռ նիզակին անկեալ
 'ի ծայրն 'ի բազկին ,
 Խրզեաց նորա ըզմըկանուճա , զոսկրնն ջա-
 խեաց գլխովին .

Ոչ հանդուրժեաց , յոտընկէլեաց տրուի-
 մամբ յերկիր հոսեցաւ ,
 Եւ աղջամոնղջ անփարեւին զաջօք նորա
 պատեցաւ :

Այսպէս կրկին այն հարազատք տա-
 պաստ յեղբարց 'ի յերկուց ,
 Համհարզք արգոյք Սարպեդոնին իջին
 խաւարն 'ի յալուց :

Ամիսովտար էր հայր եղբարց այս կորովի նետողաց ,

Այն որ սընոյց զանկըռուէլին գազան շիւմեռ մարդախանձ 64 :

Պիմեաց Այաս 'ի Կղոբուլոս կալաւ ըզնա կենդանւոյն ,

Մինչ կայր շողեալ այրն 'ի խըռան , անցոյց ընդ փողն սուր դաշոյն .

Դաշնակն ողջոյն ջեռաւ 'ի յորդ 'ի յապաժոյժ արենէն ,

Մահ ծիրանին մածաւ զաջօքն 'ի բըռնամահ օրհասէն :

Վարազացան Լիւկոս , Պենեղ այր տէգընկէց ընդ ընկեր ,

Տէգբ երկոցուն գերեւացեալ խառնին նոքա 'ի սոււեր :

Եհար Լիւկոս սաղաւարտին պերճ գիսապանծն 'ի կատար ,

Բեկեալ սըրոյն մօտ յերախկալն և ըղհարուածն հան ընդ վայր .

Պենեղ ընդ փողն 'ի խոր մըխեաց սուր ընդ ունկամբ կըշուակի ,

Մորթըն միայն կայր հաստարան , գըլուխն 'ի կախ հան զոգի :

Երհատակեալ և Մերիոն հաս յԱկամաս ճեպընթաց ,

Մինչ նա 'ի կառս վերելակէր հար զուսն աջոյ և խոցեաց .

Լուծաւ անդէն և 'ի կառաց տապալե-
 ցաւ 'ի գետին ,
 Օրհասաբեր զաջօք նորա մութ մառա-
 խուղք պատեցին :
 Տէգ սայրասուր և Իդոմէն հար յԵրև-
 մաս ընդ բերան ,
 Եւ թափանցանց ել ընդ ծոծրակ սայր
 պրղընձին դառնութեան .
 Թափ 'ի ներքուստ ելեալ ուղղոյն վրչ-
 րեաց զոսկերան ըսպիտակ ,
 Թափեաց 'ի դուրս 'ի բերանոյն և զա-
 տամանց գումարտակ .
 Աչկունքն երկուք 'ի յորդ արեանցն ընդ
 ապաժոյժ շողային ,
 Բոսորաբուղիքն ընդ բաց հագագն և ընդ
 ուրնգունս խաղացին .
 Մութ մառախուղ օրահասին պատեաց
 'ի դառն 'ի մահուան .
 Այսպէս Յունաց անդ զօրավարքն այր
 այր հարին զխոյեան :
 Որպէս 'ի հօտ գառանց 'ւ ուլոց գայլք
 յարձակեալք գիշախանձ ,
 Յեղակարծումն ապականիչքն առնուն
 տանին 'ի խաշանց ,
 Երբ ընդ լերինս յանփոյթ հովուէն օձ-
 տեալ նոքա կան 'ի տար ,
 Մոքա լրտեսք գան և հասս ճեպ զորսն
 ըմբռնեն ապիկար ,

Նոյն 'ի Յոճնաց սարսեալ Տրոյեանք ող-
 ջոյն յոգիս սրտաթափ,
 Թիկնադարձոյցք խուճապէին բազմա-
 շըշուկն 'ի տագնապ:

Եւ ցանգ դէտակն Այասն այն մեծ
 յԵկտոր արին նահատակ,
 Անձկայր հարուկ կազմ և ճօճան 'ի վեր
 առեալ ըզնիզակ:

Իսկ գոռն Հեկտոր յարջառենին պա-
 տեալ յաղթ զուսն 'ի յասպար,
 Ի ձիգ նետիցն ակնակառոյց 'ի ճօճ տի-
 գաց պատկառ կայր:

Գիտաց իսկ քաջ 'ի կողմն Յոճնաց միտեալ
 զմարտին մրցանակ,

Բայց և այնպէս յակաստանի կայր համ-
 հարզից փրկանակ:

Որպէս յորժամ յՈղիւմպոսէն 65 ամբ
 'ի յերկին ելանէ,

Երբ Արամազդ ըզպարզ եթերն 'ի մուծ
 ամպրոպ մըրըրկէ,

Հանգոյն Տրոյեանք առ 'ի նաւաց մըրը-
 կեալք ահիւ ոգետանջ,

Եւ ձայն գուժի խուճապէլոցն յորդէր
 փախուստն յաննահանջ:

Նա և զԵկտոր ըսպառազէնն առին նը-
 ժոյգքն օդասպար

Առին տարան. և սա այսպէս ելիք զօ-
 րուն ըզճամբար:

Ի շտապ տագնապ էր Տրոյացւոց պար-
 կէն փոսոյն խոչ և խուժ ,
 Տագնապեցան և կառածիգ ձիոց սըմբակք
 շուտափոյժ .
 Հատից նոցա կառք խորտակեալ 'ի ծայր
 վերջին առեղին ,
 Լըքին ըզկառս լըքին զարքայս սրացան
 նըժոյգքն 'ի դաշտին :
 'Նոցա ըզհետ խրախոյս արի փողէր Յու-
 նաց Պատրոկղէս ,
 Աղէտ վերջին գուժեալ Տրոյեանց , գո-
 ռայր վանէր սաստկապէս :
 'Նոքա շտապեալք անհընարին վարատե-
 ցան դիր և տար ,
 Ձայն փախըստեայցն ընդ ողջ ուղին ա-
 ղաղակին բարձրանայր .
 Հողն 'ի ներքոյ փոթորկեցաւ մըրըիկ
 փոշւոյն ամպանայր ,
 Ճեպ 'ի ծովէն տայր յԵղիոն սալասըմբակ
 երիվար :
 Բայց ուր զըմբաղ մեծ Պատրոկղէս 'ի
 զօրն հարեալ տեսանէր ,
 Անդ խոյանայր քաջ նահատակն առիւ-
 ծաբար ձայն գոչէր .
 Թաւալադդոր արք ընդ անուօք յորսայս
 մընչեն 'ի հեծիւն ,
 Եւ կառք թափուրք թեթևակի վազէն և
 տան շառաչիւն :

- Կայ ընդ պարկէն ճախրեն յայնժամ
 նըժոյգքն անմահք օդապար ,
 Զոր Պեղոսի դէք պատուասէրք ձիր ձօ-
 նեցին հրաշափառ :
- Այլ Պատրոկղէս տապէր յոգին ընդ-
 դէմ կըքրեւ Հեկտորայ ,
 Անձկայր խոցել, այլ ձկքն արագք թուու-
 ցին ըզքաջն 'ի բացեայ :
- Որպէս յամպրոպ մըրըրկայոյզ հող պար-
 պատի յաշնանի ,
 Յորում ջաղբիցն յԱրամազդայ յորդեաւ
 սահանն արձակի ,
 Յորժամ յերկնից նա 'ի մարդիկ ցասումն
 ածէ ահագին 66 ,
- Երբ ըմպահկեալ նոքա յորէնս արդա-
 բուծիւն ոչ խորհին ,
 Քանզի նստեալք 'ի յատենի բանս խե-
 ղաթիւրրս վըճուեն ,
- Եւ զիրաւունս յընչաց քերեալ երես
 վըիժուց դից չառնեն ,
- Գարիւ գարիւ զեղուն յայնժամ դետք
 ամենայն տան հորդան ,
- Եւ թումբք բազումք լեռնահոսան 'ի
 հեղեղաց քանդեցան ,
- Գետք մըրմըռեալք խոխոջ յահեղ թա-
 փին 'ի ծով ծիրանին ,
- Եւ ջրապարպատ 'ի յանդատտանս գործք
 մըշակաց աղարտին ,

Սապէս Տրոյեանց յամբաւ տազնապ
 երիվարաց հոյն գուժեաց ,
 Յորժամ յողոց թասեալք սրանան սրմ-
 բակ հարեալ ճեպլն թաց :
 Իբրև այսպէս հար Պատրոկղէս կարգ
 փաղանգաց զառաջին ,
 Վանեալ կրկին նահանջեցոյց 'ի կոյս
 նաւաց հանդիսին .
 Չրտայր նոցա թոյլ անկանեւ , յոր տեն-
 չայինն , 'ի յոստան ,
 Վանէր ընդ ծով վանէր ընդ գետն և
 ընդ պատուար բարձրութեան :
 Մարտ եդ և հար բազում որեար տա-
 պաստ էարկ գունդագունդ ,
 Եւ առաջին 'ի Պրոնոոս ձրգեաց զահեղն
 ըզմըկունդ .
 Ետես զի չէր ամրածածուկ լանջ իւր 'ի
 պահ ասպարին ,
 Հար և ելոյծ զանգաման 'ի բուն զարկոյց
 գոփմամբ ընդ գետին :
 Դիմեաց երկրորդ վարազաբար 'ի յԵնո-
 պեան 'ի Թեստոր ,
 Որ 'ի ժամուն 'ի կառս արքի կայր գու-
 մարեալ կորակոր ,
 Ըզխեւն ողջոյն գրաւեալ ունէր մեծ
 ափշութիւն և վարանք ,
 Եւ 'ի ձեռաց տաղտապեւոյն զերծեալ
 էին երասանք .

Մատեաւ արին հար ըզգեղարդն 'ի ծա-
մելինն 'ի յաջոյ ,

Եւ թափ ընդ շարս ընդ ատամանց վար-
սեաց ըզսայրըն ազգոյ .

Վարսեալ այնպէս և վերամբարձ 'ի
տէգն առեալ քաջազօր ,

Եւ 'ի կառաց կորզեաց 'ի վայր իբրև այր
մի սինըքոր :

Որպէս ձըկնորս լար 'ի ձեռին նստի 'ի
զերծ 'ի ժայռի

Եւ 'ի ծովէն փայլուն կարթիւ ձուկ մի
կորզէ անարի ,

Նոյն 'ի կառաց բերանաբաց կորզեաց
տիգաւ լուսավառ ,

Եւ ընդ բերանն ճօճեալ ըզնա ընկէց
յերկիր շնչասպառ :

Իսկ վէմ հարեալ ընդ մէջ գլխոյն 'ի
յարձակեալն յերիւղոս ,

Ջախեաց յերկուս զամրածածկեալ ճա-
կատն 'ի կուռ գլխանոց .

Յորսայս անդէն քարակոշկոճն յերկիր
տապաստ անկանի ,

Մահ կենախուզն յաւէժաբար հեղեալ
զնովաւ բակ ունի :

Դիմեաց ապա հար զԵրիւմաս և զԱմ-
փոտէր , զԵպաղտոս ,

ԸզՏղեպողեմ Դամաստորեան և ըզՊիւ-
ուէ և զԵքոս :

Հար և զԱրդեան Պողիւմեղոս , զԵւիպ ,
 զԻփասն 'ի քաջաց ,
 Այնպէս ողջոյն միմեանց ըզհետ 'ի ծոց
 հողոյն աւանդեաց :

Իայց Սարպեգոն անդ յակն արկեալ
 նըկուն զընկերսն ապազէն ,
 Իբր առ աթուր հարեալ 'ի քաջ Պատ-
 րոկղեսին 'ի բազկէն ,
 Չայն քաջազանց կարդայր Լիւկեանց 'ի
 նոյն և բան զայս պարսեաց .

« Առանկք Լիւկեանք , ո՛ւր խուճապիք ,
 դարձէք ընդ կրուկ ճեպընթաց :
 Ես աւաղիկ արձանացեալ կամ նահա-
 տակ դիմագրաւ ,

Գիտել ո՛ է այդ ախոյեանդ որ արդ մա-
 հունս ած ամբաւ :

Շատ քաջորեար կարթակոտոր եդ դա
 այսօր 'ի մարտին » .

Ասաց 'ի նոյն և 'ի կառաց վազեաց զի-
 նուքն 'ի գետին :

Դէտակն անդուստ 'ի վեթխարին կա-
 լեալ արին Պատրոկղէս ,

Ճեպ 'ի կառացն և ինքն 'ի վայր վազեաց
 'ի մեծն 'ի հանդէս :

Որպէս անդեղք լիամագիլք կորակը-
 տուցք յաղթք կրկին

Կըռուեալք 'ի բարձր ասառաթի կարկաչ
 բառնան ահագին ,

Հանգոյն կրկին հըսկայազօք գոչին
բարձեալ սոսկալի ,

Շահատակեն՝ի յասպարէզ այր ախոյեան
ընկերի :

Յակն ըզնոսա արկեալ գըթով վէհ Ձը
րուանեանըն զընդայ ,

Անդէն բարբառ կարդաց ընդ քոյրն և
ամուսինն ընդ հերա .

« Բաբէ աչեղդ , ինձ ՚ի մարդիկ զիմ
Սարպեդոն տարփալի

Օրհասն այսօր Պատրոկղեսին նըկուան դի
ցէ նիզակի .

Բայց իմ զարդիս տարուբերին միտք
տարակոյս ՚ի կրկին ,

Արդեօք ըզնա թափեմ այսօր գերաշ
խարան ՚ի մարտին ,

Արդեօք ողջիկ ձօնեմ ըզնա Լիւկեանց
ազգին բարեբաստ ,

Թէ Պատրոկղեայն ՚ի տէգն յաղթող թո
ղում ըզնա դիտապաստ » :

Ասաց արքայն , և անդրադարձ աչեղ
դչխոյն պայքարէր .

« Ձինչ , Ձըրուանեանըդ ահաբեկ , զինչ
բան անկարծ ասացեր .

Ձայր մահացու , ում կընքեցաւ օրհասն
անդուստ ՚ի վերուստ ,

Արդ յանփախուստ յախոյենէն թափե՛լ
ինդրես դու անշուշտ .

Օ՛ն ձեռն 'ի գործ . բայց հաճեսցի ոչ
ոք 'ի գիցն 'ի դասէն .

Իմ այլ խորհուրդ , և դու ինքնին լեր խե-
լամուտ , զոր ասեմ .

Թէ զՍարպեդոն դու այժմ 'ի սունն
աւանդեսցես կենդանւոյն ,

Քաջ և 'ի գից ոք Թափեսցէ զիւր սիրա-
սունն 'ի գուոյն :

Քանզի և շատ ճետք անմահից եկեալ
Տրոյեանց 'ի յոստան

Կրոււին անդէն . և դու յանմահս խէթ
յուզեսցես անպայման :

Բայց աղէ դու , Թէ սիրայնոյդ խընամ
ածես հայրօրէն ,

Թո՛ղ նա կրուուեալ 'ի պատրովդեան նը-
կուն լիցի նիզակէն .

Իբրև այնպէս նա գիտապատ լիցի յոգ-
ւոցն սարդէլ ,

Ձայն տուր Մահուն 'ւ անոյշ Քընոյն
յազգ իւր ըննա վերբերէլ .

Անդ հարազատք իւր և համհարզք յու-
ղարկաւորք Նիւկիոյ

Դամբան նրմա սիւն կանգնեսցեն , զի այս
է շուք մեռելոյ " :

Ասաց , և հայրն հասարակաց բանին հա-
ւան խորազգաց

Շուք հար որդւոյն . զի կաթս յերկիր ա-
րիւնախառն անձրեւեաց .

Քանզի տապաստ ունէր լինել 'ի պատ-
րովդեան նիզակէն

Ի Տրոյական մարգըս դաշտաց 'ի հայրե-
նեաց տարագէմ :

Տապա միմեանց վազեալ հանդէպ ար-
ձանացան նահատակք ,

Եւ Պատրովդէս 'ի Թրասիւմէդ նախ շո-
ղացոյց ըզնիզակ .

Էր Թրասիւմէդ քաջ համահարզ Սար-
պեդոնի արքային ,

Խոր 'ի գանձակ շամփրեաց ըզտէգն արկ
դիտապաստ 'ի գետին :

Դիմեաց երկրորդ և Սարպեդոն վրի-
պեաց 'ի տէգն իւր ազգոյ ,

Շէշտ յարագոտն 'ի Պեդասոս հար ըզ-
ձիոյն նուսն աջոյ .

Սոս երիվարն 'ի տագնապին շունչ փո-
րատէր գոռութեան ,

Մինչև տապալ տարածեցաւ մինչև ոգիք
պարզեցան :

Նըժոյգքն անմահք զահանդեցան , լուծ
ճարճատէր և քեղին ,

Ճեմքն երախճանքն առ հասարակ յան-
զերծ կրնճիուն հատանին .

Ձի անդ տապաստ կայր լըծակիցն այն
Պեդասոս գերաբուն ,

Մինչև վազեաց Աւգոմեդոն հնարեաց
Ճեպով 'ի ժամուն .

Ձրգեաց 'ի յաղթն 'ի յազգերէն զերկայ-
նասայրն ըզսուսեր ,
Յական քըթթել ըզձրգարանան Պեղասո-
սին հատանէր .

Հանդարտեցան կացին նըժոյգքն երա-
սանաց հըպատակք ,
Եւ ճեպ ընդ ճեպ 'ի վէգ արեանց դար-
ձան անդրէն նահատակք :

Ձրգեաց Սարպեդ վրիպեաց դարձեալ
'ի ձիգ հրափայլ նիզակի ,
Թըռեաւ մըկուշնդն անց 'ի վերոյ ահեակ
ուսոյն Պատրոկղի :

Գուժեաց 'ի նա և Պատրոկղէս գոյժ ըզ-
տիգին մեծասաստ ,
Եւ չեւ ընդ վայր խոցեաց կըշիւ ծա-
ծուկ սրտին զառագաստ :

Անկաւ տապաստ , որպէս յորժամ կոր-
ծան հոսէ մեծ կաղնի

Կամ կաղամախ կամ հաստաբեատ ամ-
բարձուղէշ յաղթ սոճի ,

Ձոր 'ի լերին յանտառախիտ ատաղձա-
գործ այր ճարտար

Ի կազմուժիւն նաւափայտին կըտրէ 'ի
սուր 'ի տապար ,

Ոչինչ ընդհատ հանդէպ կառաց տապա-
լեցաւ վեթխարին ,

Ճանխ կըրճէր և զարիւնոտըն մագըըցէր
ըզգետին :

Եւ որպէս թափ սլանայ յանդեայս յան-
կարծ առիւծ գիսապանծ ,

Ունի ըզցուլ խարտեաշն և սէգ , շուք
թաթահերձ պաճարաց ,

Տիրէ ահեղ և բեկանէ ժանիս հարեալ
հաստաբուն ,

Յուլն խռնչեալ յողոց պարզէ ընդ
ծամբէօք առիւծուն ,

Հանգոյն արքայն Լիւկէացոց 'ի տէգն
հարեալ դիւցազնն ,

Հեծեր սրտանէր և յանուանէն ձայն տայր
սիրուն աջակցին .

“Պու այր արանց , խմբս Գլաւկէ , կը-
ուոյս վերջին է շըշուկ ,

Արի՛ , ո՛վ քաջ , ահա քեզ օր , ցոյց զարդն
ընկէցրդ բազուկ 67 .

Օ՛ն , թէ քաջ ես , լեր խառնամուխ
յայս գուժալից յասպարէս

Եւ շուրջ յածեալ ձայն տուր Լիւ-
կեանց զօրավարացն 'ի հանդէս :

Գունդ կապեցեն , 'ի վէգ ելցեն Սար-
պեդոնիս փոխանակ ,

Եւ դու վասն իմ , ո՛ բարեկամ , մարտիր
իբրև նահատակ .

Քեզ սրատկառանք լիցին վասն իմ 'ի
դարս յաւէժ 'ի դարուց ,

Թէ Յոյնք այսօր յայս նաւամարտ մեր-
կեն զանկեալս 'ի զինուց .

Զիջ անստուգում, թէ զիմ դիակն այս
պէս գրծծեն անվէհեր .

Ո՛ւմ կաս, ո՛վ քաջ, եւ 'ի հանդէս տուր
մեր զօրուն քաջալեր » :

Լրուեաց Սարսեղ, և յարևէ հատանէին
բիբքն յաչաց

Եւ զանօսրեալ նորա ուրնդունս վախճան
մահուն պարուրեաց ⁶⁸ :

Աքսեաց Պատրոկղ 'ի լանջ նորա քար
չեաց ըզտէգն հաստաձիգ ,

Եւ յամփոփելն գեղարդան ըզհետ գայ
ին ախոնդիք .

Միանգամայն 'ի դուրս կորզեաց թա
փով ըզսայր նիզակին ,

Միանգամայն զհիքացելոյն առ և քա
ղեաց ըզհոգին :

Սանձ փորատող ձիոցն հանդէպ Միւր
միդոնեանք տան անդուստ ,

Մինչ դեռ նրժոյգք լքեալ ըզկառս և
ձեպէին 'ի փախուստ :

Լըաւ Գլաւկոս ըզհամհարզին գերաշ
խարան հեծութիւն ,

Աղիք քաջին գալարեցան զի և օգնել չէր
մարթուն :

'Նա խոց բազկին կալեալ ներքոյ ըզձեռն
իբրև հաստարան ,

Դառնակրսկիծ տանջէր վիրօք զոր նեսն
ազգեաց տեկրոսեան ,

Երբ նա դիմեաց թափել զընկերսն մա-
 հաջըշուկն յօրհասէն,
 Անդուստ Տեւկրոս աղէղնաձիգն հար 'ի
 բարձուն պատուարէն :
 Դարձաւ Գլաւկոս ձայն յԱպողոն յո-
 գւոց եհան դառնապէս .
 «Գու ո՛վ արքայ, ուր և մերձ կաս զվըշ-
 տատեսին ձայն լըսես .
 Եւ 'ի Տրոյիա և 'ի Լիւկեանց մեր յոյր
 յազգին լ՛ուր ինձ, տէր .
 Ես աւասիկ եմ վիրաւոր, արգ ապաւեն
 դու ինձ լեր :
 Գու թ քո անկցի . նետ ոսոխին վէր յիս
 եհար դառնու թեան ,
 Յաւ սայրասուր տանջէ զբազուկս և
 բուղխ չեկաց իմ արեան .
 Ուն իմ ծանրի , ոչ հանդարտեմ 'ի ձիգ
 հրզօր նիզակաց ,
 Չեմ բաւական դիմագրաւել 'ի մարտ
 վրիժուն թըշնամեաց .
 Հրզօրն ահա քաջ մազքեզանց կայ Սար-
 պեդոն դիտապատ ,
 Եւ զաւակին չեհաս 'ի յօգն և ոչ ինքնին
 Արամազդ .
 Յիս քաջաղէղն յիս դարձ, Արքայ, բու-
 ժեա զայս վէր զիմ սաստիկ ,
 Դառըն ցաւոյն ինձ դուլ արա և ինձ
 յաւել զօրավիգ :

Խրախոյս Լիւկեանց նիզակակցաց բար-
 ձից ոգւով անարգել,
 Գունդ կապեսցեն և քաջաբար դարձցին
 նոքա 'ի կըռուել :
 Գարձայց և ես բարեկամիս մարտեայց
 'ի սա՛հ դիական :
 Զայս աղօթեաց , և Ապոլոն լըւաւ ձայ-
 նին հեծութեան :
 Գուլ նա անդէն արար ցաւոյն սրբեալ
 վիրին զապաժոյժ ,
 Կացոյց զարիւնն և 'ի հոգին գերաշխար-
 հիկ շնչեաց ոյժ :
 Օ՛անեաւ Գլաւկոս և մեծ շնորհին լեալ
 խելամուտ քաջապէս ,
 Յոյժ բերկրեցաւ զի մեծ աստուած ձայ-
 նին լըւաւ փութապէս :
 Յարեաւ վազէր , ձայն ետ Լիւկեանց
 զօրավարաց բանակին ,
 Խրախոյս բառնայր կալ հովանի Սարպե-
 դոնի դիւցազին :
 Խաղաց ապա քայլ մեծաքայլ Տրոյեանցն
 'ի գունդ քաջազօր ,
 հրաւէր կարգաց Պուղիւդամեայ , ձայ-
 նէր ըզմեծն Ագէնոր .
 Չայն և արւոյն Ենէասայ տայր 'ւ Եկտո-
 ըին վեհափառ .
 Արձանացաւ կարգաց նոցա զարագա-
 թևըն բարբառ .

« Քեզ, ո՛վ Հեկտոր, հիմ մոռացօնք ե-
ղէն համհարզքդ, ո՛վ արդոյ,

Որք տարաշխարհք 'ի սիրելեաց ծախին
աստէն վասըն քո .

Ըզմէ՞ կասիս հարուլ գոցա հըզօր բազկիդ
ըզպաշտօն ,

Ահա քաջաց արքայն Լիւկեանց կայ դի-
տապաստ Սարպեդոն :

Դա քաջութեամբ արդարութեամբ ե-
կաց Լիւկեանց պահապան ,

Ըզգա Արէս եդ երկաթին նըկուն 'ի տէգ
պատրոկղեան :

Ի հուր վրիժուց, ո՛ բարեկամք, վառեցա-
րուք քաջազէն ,

Մի Միւրմիդեանք կապտեալ ըզզէնս ,
խաղ դիական կարգեսցեն :

Դոքա 'ի վրէժ վառին Յունաց , որք
անդ անկան չարաչար

Երբ ըզնոսա նաւամարտիկք տապաստ
արկաք տիգահար » :

Ասաց , թախիժ և սուգ անչափ զոգիս
գրաւեաց բանակին ,

Քանզի էր իսկ հըսկայազօրն ամուր պա-
տուար ոստանին :

Թէպէտ յեկաց էր Սարպեդոն , այլ շատ
ունէր նա խուժան ,

Ասպարակող Լիւկեացուց էր նահատակ
աննըման :

Հնապա հրոսեալք յարձակեցան 'ի դոյժ
մահուն համբաւոյ ,

Եւ աղեկէզ ընդ Սարպեդոն խաղայր
Հեկտոր յառաջոյ :

Բայց և անդուստ խրախոյս Յունաց կար-
դայր հուժկուն Պատրոկղէս ,

Բոց նախ յԱյասսըն բորբոքեաց յարդէն
վառեալն 'ի հանդէս .

« Արիք Այասք , ահա մրցանք , շըշուկ
յուզեալ է մարտիս .

Դուք որ կացէք ցանդ այրընտիրք , ևս ա-
ռաւել լիք զարգիս .

Ահ 'ի պատուարն որ նախ վաղեաց ,
կայ դիտապաստ Սարպեդոն ,

Ո՛վ , թէ ըզդին բըռնահարեալ կարգեմք
յառակ մեզ 'ի տօն :

Ո՛վ , թէ զզինուցն առեալ կապուտ , նա
և մի զոք ակոյեան

Տիգահարեալ արկցուք տապաստ , որ
պահ կալցի դիական » :

Խրախոյս կարդաց և զանճնագրաւն 'ի
հուր կրկին բորբոքեաց ,

Սաստիկ այնպէս կրկին զօրուն խօշիւն
յորդէր վաղանգաց :

Տրոյեանք , Լիւկեանք և Միւրմիդոնք և
Յոյնք գոռմամբ ահագին ,

Պարայածեալք ըզդիականք 'ի վէգ ե-
լեալ մրցէին :

Շըռինդն հարաւ 'ի հրոսակէն, զինուցն
ասէղ ձայն հնչէր,

Եւ Ամարոսկեան մէգ 'ի վերայ սփռեաց
մարտին գուժաբեր .

Ձի դիտապատ ըզսիրայնովն անկցին
զորդուով շատ մարտիկք,

Այլ նախ ըզՅոյնս զաջակաքաւս ընկրը-
կեցին Տրոյացիք :

Ձի այր աւագ 'ի Միւրմիդեանց անկաւ
Եպիգ կորովին

Ճեան Ագակլեայ, որ Թագ յառաջ կա-
պէր 'ի շէնն 'ի Բուդին .

Այլ պարտ արեան եղեալ նորա յեղբոր-
որդին վէհազնեայն

Եկն առ Պեղոս, առ նազաքայլն անկաւ
Թեսիս ապաստան :

Նոքա ընդ վէհն ընդ Աքիլեայ կարգէն
ըզնա յարշաւան,

Ի ձիաւէտն 'ի յԵղեոն ըզմարտ վանեւ
դարդանեան :

Արդ սա այն ինչ հըպեալ 'ի դին գոռաց
հեկտոր մեծն անդուստ,

Գիւ հար 'ի գլուխն ողջոյն ճեղքեաց 'ի
սաղաւարտն 'ի հարուստ .

Անկաւ յորսայս նա դիտապատ անդ 'ի
վերայ դիական,

Եւ օրհասին պատեաց ըզնա մահահրա-
ւէրըն սահման :

Ընդ մահ քաջի նիզակակցին գորովեցաւ
 Պատրովդէս ,
 Անց շէշտակի ընդ նահատակս սլացաւ
 արին փութապէս .
 Թեւահարեալ ոչինչ ընդհատ արագ իբ-
 րև ըզբազէ ,
 Որ զեղջերկաց և ըզտարմից զերամս ա-
 հիւ վարատէ ,
 Այսպէս 'ի գունդ Տրոյեանց , Վիւ-
 կեանց , դու Պատրովդէ քաջարի ,
 Շէշտ խոյացար , վասն համհարզին 'ի խոր
 խոցեալ 'ի յոգի :
 Յիսթենեղոս Իթեմենեան գիւ 'ի դաշ-
 տին 'ի քարանց
 Ձրգեաց կըշիւ 'ի սարանոցն , եհար ըզ-
 նեարդս և խըզեաց :
 Ընկըրկեցան անդ նակատակք նոյն և հեկ
 տոր կորովին ,
 Ասպարիսաւ չափ յարձակել թափով
 ըզտէգ նիզակին ,
 Ձոր այր ձրգէ քաջաբազուկ փորձ յարդն
 ընկէց մրցանաց ,
 Կամ երբ 'ի մարտ մահաշըշուկ կըռուի
 ընդդէմ թշնամեաց ,
 Այնչափ ինչ վայր թիկնադարձոյց Տրո-
 վագացիք տեղի տան ,
 Այնչափ Յունաց և այրընտիրք 'ի յայն
 խազմին քաջացան :

Բայց նահատակ յարեալ Գլաւկոս քա-
 ջայ Լիւկեանց զորավար,
 Շահատակեալ ըզԲաթիւկղէս 'ի մահ վա-
 րեաց տիգաճար .
 Սա Քալկոմիս սիրուն որդի 'ի տունս
 պայծառս յԵլլադա
 Բնակէր, և էր բազմահարուստ 'ի Միւր-
 միդեանս գերակայ .
 Մինչ հետամուտ էր 'ի Գլաւկոս, ընդ-
 կրուկ դարձաւ սա յանկարծ,
 Ձրգեաց ըզտէգն եհար 'ի լանջն, անկաւ
 տապաստ և դոփեաց :
 Խանդաղատեալ ցաւին Հելլենք, քանզի
 աւագ այր անկաւ,
 Տրոյեանք անդուստ առ մեծ խընդին հոր-
 դան ետուն ըզնովաւ :
 Բայց և այնպէս Աքայեցիք դուլ կորո-
 վոյն չարարին,
 Նա ախոյեանք ընդդէմ նոցա դըռոյթ է-
 տուն զայրագին :
 Շահատակեալ հար Մերիոն զայր մի
 Տրոյեանց քաջագոր,
 Լաոդոնոս խիզախն էր այն, զոր և ծընաւ
 Ոնետոր .
 Սա էր Իգեանն Արամազդայ նըւիրական
 քահանայ,
 Աստուածօրէն 'ի խուժանէն նա շուք ու-
 նէր գերակայ :

Ընդ ծամելեօքն և ընդ ունկամբն կըռեաց
 'ի նա և եհար ,
 Ոգին արագ ել 'ի մարմնոյն , պատեաց
 ըզնա խոր խաւար :
**Բայց Ենէաս 'ի Մերիոն շողաց 'ի տէգ
 նիզակին ,**
 Յուսայր վարսել մինչ նա խաղայր ընդ
 հովանեաւ ասպարին .
 Դէտակն 'ի նա քաջ Մերիոնն 'ի ձիգն
 էառ ըզփախուստ ,
 Կըքեալ 'ի կողմն աշտէն թըռեաւ վարսէր
 յերկիր 'ի յետուստ :
 Վարսեալ այնպէս ճօճան տիգին ծայրն
 'ի վերուստ երերէր ,
 Մինչև 'ի սպառ դուլ և դադար եղև թա
 փոյն մահաբեր .
 Իբրև կըռեալն 'ի քաջ բազկէն 'ի նըսպ
 տակն ոչ եհաս ,
 Զերկիր խոցեալ դերևացաւ , ցասեաւ
 գոչեաց Ենէաս :
 « Այ Մերիոն , դու կայթ կաքաւ թէ
 պէտ քաջիկ հարկանես ,
 Բայց վերջ յաւէժ էր քոց կայթից , թէ
 տէգս հարեալ էր ըզքեզ ⁶⁹ » :
 Չայն Մերիոն անդէն կըցեաց հըզօրն 'ի
 ձիգ նիզակի .
 « Դու ապաքէն , ո՛վ Ենէաս , կորովի ես և
 արի ,

Բայց և բնաւից կըբրէլ ընդդէմ է քեզ
արւոյդ դըժընդակ ,

Թէ ոք յանկարծ ախոյենիդ ելցէ ընդդէմ
նահատակ .

Ո՞չ և դու ինքն 'ի մահացուն բնաւորե-
ցար 'ի վիճակ ,

Քաջիկ և դու առցես 'ի մէջդ ըզսայրա-
սուրն իմ նիզակ :

Արագ յայնժամ, թէպէտ սրտեայդ թէ-
պէտ բազկաւ կորովիդ ,

Ինձ շուք տացես և ասպազէն Ղրժո-
խայնոյն ըզհողիդ ” :

Սարճեաց 'ւ անդէն ձայն Պատրովղէս
կարդաց նրմա և սաստեաց .

“ Զի՞ Մերիոն , որ հըզօրդ ես , զի՞ քեզ
խօսել յայդպիսեաց :

Յուշ քեզ , ո՞վ քաջ , գուցէ Տրոյեանք
յերգիծաբան քոյ շըրթանց

Լըբցեն ըզդին , բայց և բազումք տասրաստ
անկցին 'ի քաջաց .

Բազկաց պէտք են ելից մարտին , բանից
պէտք են յատենի .

Հատխօսու թիւն ոչինչ օգնէ . շատ է բա-
զուկն 'ի կըռուփ ” :

Ասաց , անդէն նահատակեալ ձայն ետ
մարտին Պատրովղէս ,

Եւ Մերիոն դիւցանըմանն ըզհետ խա-
ղայր յասպարէս :

Որպէս յանտառս մայրաւորաց կանչիւնք
 ձայնից 'ի լերին
 Եւ արձագանդք փայտահարից բացէ 'ի
 բաց հատանին ,
 Նոյն և բովբիւնք քաջահընչողք 'ի լայնա-
 տարր 'ի դաշտէն ,
 Գունակ գունակ առ 'ի զինուց շաջիւն ա-
 հեղ արձակէն .
 Յորժամ երկաթ , պըղինձ , քեմուխա ,
 արջառենին չոր ասպար
 Բախիւն կոփիւն տան առ սուսեր , տան
 ընդ մըկուճիս ընդ երկսայր :
 Թէ ո՞ր իցէ , ո՞ր Սարպեդոն , և ոչ ծա-
 նօթն աչալուրջ
 Ոչ ճանաչէր , թէպէտ քաջիկ ակընկա-
 ռոյց հայէր շուրջ .
 Այնչափ փըքնօք , այնչափ յարեանց և
 'ի փոշոյն ապաւառ ,
 Էր նա ծածկեալ ողջ 'ի գլխոյն մինչև յո-
 տից գարշապար :
 Գունդք խըռնէին ըզգիակամք , որպէս և
 ճանճք խիտ և հոծ
 Ի վանս հովուաց պատին բըզզան 'ի կաթ-
 նալիցն 'ի կըթոց ,
 Յորժամ ըզկայթսըն թաթաղուն կաթըն
 թանայ 'ի գարնան ,
 Սապէս նոքա 'ի վեր 'ի վայր շուրջ խու-
 ժէին դիական :

Սորովաբիբ 'ի յայն 'ի վայրն անդարձ
 էին աչք Դիայ,
 Զըշուկ մարտին զայն ականէր միշտ ան-
 քըթիթ 'ի նոսա .
 Վասն օրհասին Պատրոկղէսի խորին խոր-
 հուրդ 'ի սրտին
 Շատ ինչ յուզէր , արդեօք և քաջն անկ-
 ցի՞ տապաստ 'ի խաղմին .
 Արդեօք մեծին Սարպեգոնի փառք դիա-
 կան մեծաշուք ,
 Արին Հեկտոր տիգահարեալ հարցէ ըզ-
 նա յայն շըշուկ ,
 Նա և չքնաղ զինուց նորա առցէ՞ զկա-
 պուտն 'ի թիկանց ,
 Եթէ արդեօք մարտն յերկարեալ շատից
 լիցի մարդախանձ :
 Քաջ 'ի վերջէ խորհուրդ կընքեաց , զի
 մեծ համհարզն Աքիլէայ
 Ըզհեկտորեանս վանեալ յոստանն օր-
 հաս բազմաց ածցէ նա :
 Նապա յառաջ նա զԵկտորայն զողին
 լըքոյց 'ի վերուստ ,
 Բեկաւ արին վազեաց 'ի կառս խնդրէր
 խուճապ ըզփախուստ :
 Թիկնադարձոյց և Տրոյացւոց ձայն վա-
 տութեան արձակէր ,
 Զի քաջ ծանեաւ զԱմպրոպայնոյն ըզմէս
 կըշուոյն գուժաբեր :

Անդ և ոչ քաջք Լիւկեանք բովեալ,
 փախուստ առին հասարակ
 Տեսեալ այնպէս զարքայն իւրեանց գիւ-
 կնացեալ նըշաւակ .
 Վէրն 'ի սրտին կայր անյարբիր և ըզնովաւ
 շառք տապաստ
 Անկեալ կային , յորժամ զայն խաղմ ա-
 հեղ յուզեաց Արամազդ :
 Դիմեալ հելէնք կաստեն ըզղէնս Սար-
 պեդոնին 'ի թիկանց ,
 Զէնք հրաշակերտք , սլըղընձակուռք ,
 հրափայլք գեղով գեղապանծ :
 Զայն մեծ կասուտ տայր Պատրոկղէս
 տանել նաւացն իւր 'ի ձօն ,
 Մինչ գեռ անդուստ Ամպրոպային ձայն
 զայս կարգաց յԱպողոն :
 « Լըի՛ Փեբէ , ըզՍարպեդոն սրբեա յա-
 րեանց շարաւոյն .
 Զերծ 'ի փըքնաց ամբարձ , ո՛վ քաջ , տար
 'ի վայր մի բացագոյն .
 Ի ջուր յստակ լըւա գետոյն , ո՛ճ 'ի յա-
 լիչն աստուածեան ,
 Զարդ տո՛ւր մարմնոյն , զանմահականն
 արկ ըզնովաւ սլատմուճան :
 Աւանդ ըզնա տացես երկուց քաջընթա-
 ցիցն անարգել ,
 Քընոյն ասեմ նոյն և Մահուն երկուո-
 րեկաց տո՛ւր տանել 70 :

Տարեալ տացեն, թուուցեալ նոքա 'ի
 թեւս իւրեանց 'ի թեթև,
 Լայնասահմանն Լիւկիոյ հարուստ ազ-
 գին 'ի սարգև:

Անդ հարազատք և համահարզք յուղար-
 կաւորք Լիւկացոց
 Սիւն և դամբան տացեն նրմա, զի այս է
 շուք մեռելոց":

Լսաց արքայն և հնազանդեալ հօրն Ա-
 սողոնն փութապէս
 Սաւառնեցաւ յիդեան լերանց, էջ 'ի
 մարտին ասպարէս:

Կորզեաց և առ ըզՍարպեդոն 'ի խիտ առ
 խիտ 'ի փըքնաց,
 Տարաւ յանդորր 'ի վայր հեռի, 'ի ջուր
 դետոյն ողողեաց:

Օձ 'ի յաւիշն յաստուածեան ձորձ արկ
 անմահ գերաբուն,
 Աւանդ 'ի ձեռս ետ հորդողաց քաջն-
 թացիցն երկոցուն:

Իսկ Քունն և Մահն այն երկուորեակք
 թուուցեալք 'ի թեւս 'ի թեթև
 Ածեն 'ի մեծն 'ի Լիւկիա հարուստ ազ-
 գին 'ի սարգև:

Խորախոյս յայնժամ բարձ նըժուգաց
 'ւ Ազոմեդեայ Պատրոկղէս,
 Հրոսեաց ըզհետ Տրոյեանց, Լիւկեանց,
 այլ կարթեցաւ մեծապէս:

Այ մանկամիտ, թէ Աքիլէայ էր նա
 ձայնին ունկընդիր,
 Անշուշտ 'ի նա չէր գամագիտ օրհաս մա-
 հուն անյարիր:
 Սահայն խորհուրդ Արամազդայ է մարդ-
 կայնոյս գերագոյն,
 Որ զայր սըրտնեայն և կորովի յահ խու-
 ճապէ և 'ի հոյն.
 Նա ինքն 'ի մարտ գրգեալ ըզմարդ պար-
 տէ դարձեալ հեշտաբար,
 Որպէս և անդ ըզՊատրոկղէս եդ քաջա-
 լանջ անհանճար:
 Լորդ դու յայնժամ զո՞ առաջին տապաստ
 արկեր, զո՞ վերջին,
 Երբ քեզ աստուածքն ո՞ Պատրոկղէ օր-
 հաս մահու կարգացին:
 Նախ զԱդրեստէս 'ի մահ վարեաց և
 զԱւտոնէ, զԵքեկոս
 Եւ զԵպիստոր, զՄեւանիսպոս, և ըզ-
 Մեգեան Պերիմոս:
 Հարեալ ապա և զԵղասոս և ըզՊիւ-
 ղարտ, ըզՄուղին,
 Այլքն հասարակ այր անդ զարամբ թիկ-
 նադարձոյցք խուճապին:
 Էր իսկ յայնժամ ըզբարձրագուռն ա-
 ուեալ Յունաց Տրոյիա
 Ի տեգ նիզակ ասեղասաստ բազկի քաջին
 Պատրոկղէայ:

Բայց Ապողոնն էջ և եկաց անդ 'ի բուրդ
 մի գեղեցիկ,
 Մահ Պատրոկղէայ մենքենայէր, Տրոյ-
 եանց յորդէր զօրավիգ .
 Երիցս հրոսակ ետ Պատրոկղէս 'ի մոյթ
 բարձու սատուարին,
 Երիցս անդէն և Ապողոնն վանեաց ըզնա
 զայրագին .
 Հարժէր կոփէր անմահ բազկօք փայլա-
 կնահրաշ զիւր զասպար,
 Մինչ Պատրոկղէս նա և չորիցս հրոսեալ
 դիմեաց դիւցաբար :
 Ահեղ յայնժամ ձայն մեծասաստ ետ
 քաջաղեղն հաստամուր,
 «Տեղի, դիւցաղն Պատրոկղէ, դու 'ի վայ-
 րէդ տեղի տուր .
 Չէ քեզ կրնքեալ վանել յաշտէդ զու-
 տան Տրոյեանց քաջազանց,
 Ի ոչ Աքիլլէայ որ քան ըզքեզ է մեծա-
 պէս քաջարանց » :
 Զայս Ապողոնն . և Պատրոկղէս ընկրոկե-
 ցաւ տարագէմ,
 Խոյս ետ յայնժամ 'ի քաջաղեղն Ապողո-
 նի ցամանէն :
 Իսկ մեծն Հեկտոր 'ի դրունս Իսկեան
 սանձեալ ըզձիսն օգապար
 Կայր մըտայոյզ, միթէ դարձեալ մըտրա-
 կեսցէ 'ի գուպար ,

Եթէ զօրուն հորդան տացէ ողջոյն 'ի
ներքս 'ի յոստան .

Ծըփայր 'ի միտս, մինչև Փեքոս արձանա-
ցաւ յանդիման .

Չգեցաւ պատկեր ըզպատանւոյն ըզքաջ-
առոյգն և սրտեայ

ՉՅսիոսին, որ էր քեռի քաջաձիոյն Հեկ-
տորայ .

Սա հարազատ մօրն Հեկաբեայ էր Դիւ-
մասայ քաջորդի,

Բնակէր Դիւմաս 'ի Փուիգիա զափամբ
գետոյն Սանգարի :

Ի տիպ սորա կերպարանեալ ձայն Ասո-
ղոն ետ արքայն .

«Չի՞ քեզ Հեկտոր կասել մարտէն . չէ
քեզ, ո՛վ քաջ, չէ արժան :

Ո՛վ, որչափ վատ եմ՝ քան ըզքեզ այն-
չափ և ոյժ ինձ յորդէր,

Անշուշտ յայնժամ այդ վատուծիւնդ էր
քեզ քաջիդ գուժաբեր :

Արի՛ և ճեպ 'ի Պատրոկղէս տո՛ւր նրժու-
գացդ յասպարէզ,

Թերևս 'ի մահ վարեալ ըզնա շուք Ասո-
ղոն տացէ քեզ » :

Ասաց, անդէն և ընդ շըշուկն ել միւս
անգամ՝ նա 'ի դաշտ .

Ըզկեբրիոն կարգաց Հեկտոր, [Թափ նը-
ժուգաց տալ 'ի մարտ :

Բայց Ապողոն եկն 'ի խուժանն և խառնեցաւ ընդ նոսա .

Ի վեր 'ի վայր Յունաց խըռով, Տրոյեանց շուք տայր 'ւ Եկտորայ :

Վըռուէր Հեկտոր, այլ ունչա առնէր հարու որեար 'ի Յունաց .

Նա ուշ միայն 'ի Պատրոկղէս, Թափ տայր իւրոց նըժուգաց :

Գէտակն 'ի նա և Պատրոկղէս վազեաց կառացն 'ի գետին ,

Առ ըզգեղարդըն հաստակուռ կալաւ յահեակ 'ի ձեռին .

Աճապարեաց, առ և վէմ մի մարմարիոն արաստոյ ,

Բըռնահարեալ զայն կորովին գրաւեաց 'ի յափն իւր աջոյ :

Չըգեաց ուժով անհընարին, չեւ Թափն 'ի ձիգ վայրասպար ,

Խոռն մի վըրիպեալ նըպատակէն հար զԵկտորին կառավար :

Սա Վերրիոն անհարազատ ճետ էր մեծին Պրիամոնն ,

Ունէր յայնժամ զերասանացն , հարաւ ընդ մէջ ճակատուն :

Ըզջօնս կրկին ջախեաց սուր քարն ոսկըրն չեկաց 'ի գիմի ,

Աչքն ոստուցեալք 'ի հող փոշոյն ոտիցն անկան առաջի .

Իսկ նա ճախրեալ իբրև լուղորդ գլխա-
 թաւալ 'ի կառաց
 Վայրհոսեցաւ, և պաղ մահուն 'ի բունն
 հարաւ ոսկերաց :
 Դու ինքն յայնժամ հենգնեալ 'ի նա բան
 պարսեցեր, Պատրովղէ .
 « Բաբէ, զիմորդ դա յոյժ թեթև թաւալ
 ընդ գլուխ քաջ ճախրէ .
 Անշուշտ արագդ այդ ջրասուղակ 'ի ծով
 մըխեալ ձրկնալիբ 71 ,
 Թէ ոսորէից խեցեմորթաց յայց ելանէր
 'ի խնդիր ,
 Ճախր 'ի նաւէն առեալ քաջիկ թէպէտ
 և ծովն ալէտանջ ,
 Շատից յագուրդ տայր 'ի յորսոյն իբրև
 սուղակ նորասքանչ ,
 Որպէս ահա այժմ 'ի կառաց գիւ ըզգըւ
 խով ճախր էառ .
 Են են ուրեմն և 'ի Տրոյեանց արք լու-
 ղականք յոյժ ճարտար » :
 Հենգնեալ այսպէս, վազեաց ընդդէմ
 Կերբիոնի դիւցազնն
 Իբրև զառիւծ, որ ըզփարախ վայրավատ
 նեաց ըզհօտին ,
 Ի լանջն ապա խոցեալ գազանն, իւր
 թափն ինքեան մահ ածէ ,
 Այսպէս յայնժամ 'ի Կերբիոն դու խոյ-
 ացար, Պատրովղէ :

Անդուստ Հեկտոր վարազացեալ վազեաց
կառացն 'ի գետին ,

Իբրև ամուլք գոռ առիւծուց 'ի Կեբրիոն
մրցէին .

Որք զականեալ զորսն եղին տապաստ
լերին յարուան ,

Գազանքն երկուք սովատանջեալք մենա
մարտին անսայման ,

Այսպէս մրցեալք 'ի Կեբրիոն ամուլք
ներհունքն 'ի մարտի ,

Կըռուէր հըզորն Պատրոկղէս կըռուէր
Հեկտոր կորովի :

Իբրև այնպէս անդ այր զընկեր 'ի սուր
գօշէլ անձկանայր ,

Հեկտոր զգլխոյն ըզգիականն անկորզելի
բուռն էհար .

Բըռնահարեալ և Պատրոկղէս զոտիցն ու
նէր պընդապէս .

Խառնուրդն յայնժամ կողմանցն երկուց
մարտ բորբոքեաց սաստկապէս :

Օրորինակ Եւրոս Կոոոս 'ի վէգ ե
լեալք փոթորկին ,

Մըրժիկ ածեն և մայրախիտ հովիտք լե
րանց սասանին ,

Խորին անտառն ուժգին բախեալ գող
ցես չեն ծառքն 'ի կայի ,

Ոչ չըմենիք խաւիխաւոյք , ոչ կաղամախն ,
ոչ հացի ,

Աճունաճիւղքն 'ի տատանման գան ըզմի
 մեամբ ճարճատին ,
 Մինչև ասէղ ճայթեալ և բունքն հաս ,
 տահարուսոք տապալին ,
 Այսպէս գոռամբ Տրոյեանք և Յոյնք
 շահատակէն 'ի դաշտի ,
 Եւ ոչ յուշի անկաւ նոցա երբէք փա-
 խուստն անարի :
 Տեղ սայրասուր 'ի Վեբրիոն տեղայր ամ-
 բաւ գեղարգանց ,
 Երէթթևեան թօթափէին նետք լայնալիճ
 աղեղանց .
 Վէմբ անարդիւք կոփեալ ճայթմամբ
 թափ ընդ ասպարս հարկանին ,
 Անկեալ բոմբէն ըզդիակամբն ուր քաջքն
 'ի վէգ սայքարին :
 Իսկ մեծ դիակն յորձանս փոշւոյն մեծա-
 տարած անկեալ կայր ,
 Զարուեստն յաւէժ զիւր մոռացաւ գոլ
 նըժուգաց կառավար :
 Զորվայր զերկին անիւն 'ի գիլ հասա-
 ըակէր արևուն ,
 Տեղ սըլաքացն էր երկուստէք , մահունս
 առթէր 'ի զօրուն .
 Իսկ մինչ արեգն 'ի մայր դառնայր յոր-
 ժամ եզինքն արձակին ,
 Յայնժամ և բախտն Աքայեցւոց յաղթէր
 'ի մեծ սայքարին :

Կորզեն ըզմեծըն Կեբրիոն առ 'ի նեաից
տարափոյն ,

Խօշիւն կարճեն ըզՏրոյացւոց կապտեն
ըզզէնսն 'ի յուսոյն :

Ա՛՛՛՛՛՛՛ Պատրոկղէս արկ 'ի խաղմին , Տրովա
դացւոց մեծ վարանք ,

Գուժայր մահոււնա , գոչման ձայնին ա
հեղ կրկնէր արձագանգ :

Երիցս անգամ շահատակեալ իբրև Արէս
փոթորկեաց ,

Երիցս անգամ և դիտապաստ արկ նա զի
նուսնսն 'ի քաջաց :

Իսկ և չորիցս երբ դիւցաբար սլացաւ ա
րին յանդիման ,

Աւա՛՛ղ , յայնժամ քեզ Պատրոկղէ , եկն օ
րահասդ յերևան :

Քանզի անդուստ մահահամբոյր մարտ
յարդարեալ մեծազօր ,

Ինքնին 'ի քեզ վէհն Ապողոն դիմեալ խա
ղայր ահաւոր :

Խաղայր և գայր նա ընդ շըշուկն , ոչինչ
ծանեալ Պատրոկղէս ,

Զի միգապատ քօղարկեցաւ 'ի դիւցականն
իւր յերես :

Եկաց յետոյ , բախեաց ափովն ըզթիկ
նամէջ Պատրոկղէայ ,

Բախեաց և զուսն և ափշեցոյց , բըլշա
կնեցան աչք նորա .

Ըզսաղաւարտ գլխոյ նորա սատոյց Փե-
 բոս արկ 'ի բաց,
 Գընայր 'ի գիւ մեծ եռավերջն ընդ սըմ-
 բակօք նըժուգաց .
 Շաչիւն հանէր դանդաջելով վերջ հըն-
 չական սըղընձոյն ,
 Եւ գարգմանակն աղտեղացաւ ընդ ա-
 պաւառ ընդ արիւն .
 Օրէն երբէք չէր փոշոտել զայն գիսա-
 պանծ սաղաւարտ ,
 Յորչափ գլխոյն վէհն Աքիլէայ և ճա-
 կատուն կայր 'ի զարդ .
 Բայց զայն յայնժամ 'ի գլուխ տանել ետ
 Հեկտորայ Արամազդ ,
 Զի մերձ ընդ մերձ և այն դիւցազն ունէր
 լինել դիտապատտ :
 Բեկաւ 'ի բռին գեղարդն երկայն յաղթ
 կուռ երկաթ անարին ,
 Ասպար փոկովքն ամրածածուկ յուսոյն
 անկաւ 'ի գետին :
 Ըզվարապանն ելոյծ նորա ինքնին Փե-
 բոս քաջ արքայն ,
 Զըմբեալ ոգիքըն Պատրոկլէայ սուոյգ
 անդամքն հաշեցան :
 Կայր նա ափշեալ , մինչ դարդանեան
 այր մի մօտեալ 'ի թիկանց ,
 Տեգ սայրասուր հար 'ի քամակն ընդ մէջ
 ուսոցն և խոցեաց :

Սա Եւփորբոսն էր Պանթոսեան . սա
 մինչ տիօք պատանի ,
 Հեծելլուծեամբ և գեղարդեամբ էր ա-
 րագոտն անուանի .
 Էր զի երբեմն արկ սա տապաստ քըսան
 որեար 'ի կառաց ,
 Երբ զառաջինն 'ի կառամարտս 'ի փորձ
 մատեալ մրցանաց :
 Սա և յայնժամ քեզ , Պատրոկղէ , նախ-
 կին եհար սուր զաշտեայն
 Հար ոչ ըսպան , զի ահաբեկ ընկրրկեցաւ
 'ի խըռան :
 Հազիւ քարշեալ զաշտէն հացի խուճա-
 պեցաւ անարին ,
 Ոչ հանդարտեաց Պատրոկղէսին , թէպէտ
 մերկ կայր 'ի մարտին :
 Իսկ անդ գանեալըն Պատրոկղէս 'ի գան
 դիւցեան և յաշտէն
 Մուտ 'ի ճամբար նիզակակցաց թիկնա-
 գարձոյց յօրհասէն :
 Ընդուստ Հեկտոր ըզՊատրոկղէայ զար-
 կած տեսեալ քաջազին ,
 Զի խոյս տըւեալ վերջոտնեցաւ առեալ
 հարուածն ըզտիգին ,
 Դիմեաց 'ի մօտ արձանացաւ մըխեալ զօ-
 րուն ընդ դասակ ,
 Հար ըզգեղարդն և թափ անցոյց 'ի յա-
 խոնդեացն 'ի գանձակ .

Դիւթաւալ արագ արագ անկաւ տա-
սաստ և դոփեաց ,
Գոյժ ընդ բանակն հարաւ մահուն սուգ
յանսպայման հեղենաց 72 :
Որպէս առիւծ ընդ կինճ հուժկու 'ի
վեգ խաղայ անվէհեր ,
Երբ 'ի լերինս նոքա ասէղ գոռան փոք-
րիկն 'ի յաղբեր .
Կըռուեալ այնպէս անդ յեղևելս լընուլ
զփափաք ծարաւոյն ,
Եւ կինճն յոգւոց թասեալ նըկուն ժա-
նեաց լինի առիւծուն ,
Նոյն 'ի Պատրոկղ 'ի Մենետեանն 'ի մար-
դաժախ կորովին
Արձանացաւ Պրիամոսեանն հար տէգ
քաղեաց ըզհոգին :
Ոտնհար եղև և մեծապանծ արագաթև
ետ բարբառ .
« Ահա քաղաքդ , ո՛ր Պատրոկղէ , զոր յա-
տակել սանձացար .
Դու ասէիր , գերեվարեալ Տրոյեանց
զազատ կանանին .
Լընուլ 'ի նաւս և տարաշխարհ յերկիր
տանել հայրենին .
Ա՛յ խօլամիտ , նըժոյգքն ասէղք իմ՝ հեկ-
տորիս նահատակ
Կանուխ հասին յօգըն գոցա արագ հա-
րեալք ըզսրմբակ .

Եւ ես 'ի մարտ ռազմիկ արանցս յառա-
ջադէմ անվեհեր ,
Ի Տրոյացւոց տարամերժեմ զօր գերու-
թեան վըշարմբեր .
Իսկ դու աստէն արկցիս տապաստ կուր
անգեղաց գէշագէշ .
Այ հիբացեալ , քեզքօ հըզօրն ոչինչ օգ-
նեաց Աքիլէս :
Նա ինքն անշուշտ քեզ 'ի չուն քօ շատ
ինչ յիւրմէ խորանէն
Բան ազգ արար . յուշքեզ , ասէր , իմ
Պատրոկղէ ասպազէն .
Մի դու կրկին դարձցիս առ մեզ 'ի մար-
դախանձն Հեկտորայ ,
Մինչ չև խըզեալ զարիւնայեղցն ըզվարա-
պան ըզնորա :
Չայս նա անշուշտ ձայն քեզ ազգեաց
յուզարկաւոր 'ի քոյ չուն ,
Եւ դու , անմիտ , զայն անպատիր բան
կարծեցեր հաստատուն » :
Չայն մի նըւաղ յոգւոց յայնժամ հա-
ներ դու , քաջ Պատրոկղէ .
« Պանծա Հեկտոր , պանծա ճըշգրիտ դու
'ի ժամէս յայսմանէ .
Ըզքեզ յաղթող Չևա և Փերոս և զիս
նըկուն կարգեցին ,
Նոքա ըզգէնս իմ գեղեցիկ յուսոյն իմմէ
կապտեցին .

Բայց թէ քրտան քեզ նրմանակք արք խա-
ղային ինձ ընդդէմ,

Քաջ ըզնոսա ողջ դիտապաստ արկանէի
յիմ աշտէն :

Ձիս Ղետովի եհար որդին և օրհասին
իմ հանդէս,

Ձիս 'ի մարդիկ հար Եւփորբոս և դու
երրորդ զիս կապտես :

Բայց քեզ աղէ, այլ ինչ ասեմ և դու
անջինջ կա յուշի .

Եւ ոչ դու ինքն յամայր աւուրբք զարև
տեսցես յաշխարհի .

Քեզ մօտալուտ մահ կայ առ դուրս և օ-
րահաս դառնութեան,

Արկեալ տապաստ 'ի յաղթ բազկէն Ա-
քիլէսին գուռութեան :

Այն ինչ ասաց և առ ըզնա վախճան
մահուն և տագնապ,

Ոգին թուռցեալ ճեպ 'ի մարմնոյն 'ի դը-
ժոխոցն էջ 'ի թափ .

Իջանէր և արտասուէր զաշխարեւին
զիւր վիճակ,

Թողեալ աստէն զարիութիւնն, թողեալ
զառոյգն իւր հասակ :

Ընդուստ հեկտոր կրկնեաց նրմա թէ-
պէտ յոգւոց նա պարզեաց .

« Հիմ, Պատրոկղէ, ինձ մահագոյժ դու-
շակօրէն ձայն կարգաս .

Բ՛ա, ո՛ր դիտէ, թէ ճետ թետեայ վարսա-
գեղոյն Աբիլլէս

Յինէն տիգեալ, նա դիտասպաստ անկցի
քան զիս փութապէս ʔ :

Ասաց, աքսեաց և ՚ի խոցոյն անդրէն
ըզտէգն ամիոփեաց ,

Եւ ըզգիակնըն ճոխաբար յորսայս այն-
պէս արկ ՚ի բաց :

Վազեաց ապա յԱւդոմեդոն նիզակ ամ-
բարձ և գոռայր ,

Սա Աբիլլէայ արագոտին էր դիւցանման
կառավար .

Բայց տարագէմ թռուցին ըզնա նժոյգքն
անմահք օգասպար ,

Զոր Պեղոսին պատուասիրեալ աս-
տուածքն էտուն ձիր պայծառ :



ԵՂՒԼԱԸՆ



ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԵ .

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Մենեղաւոս 'ի մահ վարէ զԵւփորբոս,
որ խնդրէր կորզել զգիական Պատրոկղեայ
խոյս տուեալ 'ի Հեկտորայ, անդրէն
դառնայ 'ի սահպանութիւն գիականն
հանդերձ կրկին Այասիւք: Հեկտոր և
Այաս քաջ քաջի սատահեն: Մարտ ան-
նահանջելի և ահագին զգիականքն Պատ-
րոկղեայ: Ի միգի կռուին ընդ միմեանս
մարտիկք: Մենեղաւոս սահապան գիա-
կանն Պատրոկղեայ առաքէ զԱնտիզոբոս
դուժկան առ Աքիլէս վասն մահու նի-
ղակակցին: Ի մաղթանացն Այասայ փա-
րատէ Արամազդ զմէգն: Յոյնք կորզեն
զգիական Պատրոկղեայ և տանին: Հեկտոր
վանէ յետուստ: Այասք գիմակալէն նմա
և յանդորր հանեն զփախստեայս: Ժա-
մանակ Հագներգութեանս է երեկոյն
քսաներորդի ութերորդի աւուրն:
Տեսարանն է 'ի դաշտի հանդէպ Տրոյիոյ:



ԵՊ ԻԼԿԸՆ

Հ Ա Գ Ն Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Ժ Է .

Տ Ա Պ Ա Ս Ս այնպէս 'ի Տրոյացւոց անկեալ
Պատրոկղ 'ի դաշտին
Ոչ ծածկեցաւ 'ի գորովոյն Մենեղաւեայ
քաջազին .
Ի զարդ 'ի զէն վառեալ հրաշէկ եւ դի-
մագրաւ նահատակ ,
Շուրջանակի ըզդիակամբն հովանացեալ
ունէր բակ :
Որպէս երինջ առաջնածին այն ինչ ծնըն-
դեամբ եղեալ մայր ,
Յորթ իւր մատաղ խանդաղատեալ շուրջ
գայ բընչէ աղուաբար ,

Հանգոյն խարտեաչն այն շուրջ յածեալ
Մենեղաւոս շահատակ
Ամրածածուկ ըզՊատրոկղեաւ վահան
բառնայր և նիզակ 73 :

Կազմ և սպորաստ տիգահարել թէ որ
հարցի 'ի դիմի ,

Քանզի անդուստ ել Պանթոսեան ներ-
հունն 'ի տէգ նիզակի .

Դէտակն յանկումն Պատրոկղեայ սա
խիզախեալ ընդ առաջ

Արձանացաւ , և ընդ արին Մենեղաւոս
ձայն կարգաց .

«Արդ տուր տեղի , ո՛ր Ատրեսեան դիւցազն
արքայ ամբոխից ,

Կապուտ է դա խնոյ բազկին , թո՛ղ ըզմե-
ռեալդ և տուր ինձ .

Ո՞րք , ասա , 'ի Տրոյացւոց կամ համհար-
զից 'ի քաջաց ,

Յառաջ քան զիս 'ի Պատրոկղէս դիմա-
գրաւեալ տէգ վարսեաց .

Աղէ , ո՛վ քաջ , թո՛ղ զի Տրոյեանք ինձ
շուք հարցեն մեծապանծ ,

Կամ թէ տիգեալ ես քո ըզքաղցր արևդ
հատից 'ի յաչաց » :

Չայն այս խարտեաչն 'ի Մենեղաւ բոց
բորբոքեաց և ըզհուր .

« Երդուեալ 'ի Զևս , գոչեաց արին , պար-
ծանք գոռայ դա 'ի զուր :

Ոչ ընձառիւծք այնչափ խիզախք չեն և
 ոչ սէգք առիւծունք ,
 Ոչ և այնչափ կինճք և վարազք օրհասա-
 բերքն աննրկունք .
 Որոց ոգիքն ահեղազօր հուր բոց 'ի լանջ
 մրորրկեն ,
 Որչափ Պանթեանքդ այդ քաջատէգք
 շունչ գոռութեան փորատեն :
 Զոր , քաջաձին քոյդ Իւպրենոր ⁷⁴ զա-
 ուոյգութեանն առ ճաշակ ,
 Որ զիս զըզուեալ և գոռութեամբ ել ինձ
 ընդդէմ նահատակ .
 Նա զիս 'ի Յոյնս յընչաց քերեաց իբր
 անաւագ այր մարտիկ ,
 Եւ զի պարծանքն ոտից նորա չեղեն 'ի
 դարձ զօրավիգ .
 Զոր խնդութիւն , աղէ ասա , ետնա սի-
 րուն լըծակցին ,
 Զոր և արգոյ ծնողաց իւրոց 'ի յողջան-
 դամ 'ի դարձին :
 Անշուշտ և զքոյն կարճեմ ըզձայն թէ
 ինձ մրտես 'ի պայքար .
 Այլ քեզ ասեմ , դարձիր ընդ կրուկ ,
 մուտ 'ի զօրուգ 'ի ճամբար .
 Ուշիմ , այր դու , լէր մի անդամ մինչ չև
 արբեալ քո ըզգան .
 Բա՛ և մորոսն յետ արկածին գոյ խելա-
 մուտ անագան ? 75 :

Լըաւ և ոչ ընկրրկեցաւ, ձայն ետ ան-
դրէն 'ի հանդէս .

«Անշուշտ ուրեմն, ո՛ր Մենեղաւ, արդ-
ճեալ ընդ ճեալ տուժեցես .

Տոյժ զիմ արեան հարազատիս յոր և
սանձաս մեծասաստ ,

Տոյժ զայրուժեան զիւրոյ հարսինն 'ի
նորամուտն յառագաստ ,

Տոյժ ըզճնողացն , ոյց անպատում ջայլ
գուժեցեր և աշխար .

Բայց օն և օն դառն լալեաց դիւր տաց
նոցայն և դադար ,

Թէ ես ըզքո կառափն առեալ կապ-
տեալ և զքո զարդ և զէն ,

Իմ Պանթոսին և Փրոնդիտեայ 'ի ձեռս
եղեալ աւանդեմ :

Այլ աղէ, քաջ, մի այլ բազուկք անփորձ
կացցեն յասպարէս .

Արդիւնքցուցցեն կամ վատուժեան կամ
քաջութեանն ըզհանդէս » :

Ասաց ձրգեաց և զբոլորչին վահան խո-
ցեաց տիգահար .

Թափ ոչ անցոյց , կրկնեցաւ սայրն 'ի
քաջակուռն 'ի յասպար :

Ղիմեալ երկրորդ Մենեղաւոս փայ-
լակնացաւ 'ի յաշտէն ,

Եւ զԱրամազդ կարդայր անձին 'ի զօրա-
վիզն ապաւէն :

Մինչ դեռ վերագրն վերջոսներ, հարնա
'ի դուռն հագագին .

Վարսեալ ըզսայրն 'ի խոր մըխէր կորո-
վութեամբ քաջ բազկին .

Անցոյց ըզսայրըն թափանցանց ընդ պա-
րանոցն ընդ փափուկ ,

Թաւալագլոր անկաւ դոփմամբ, զինուցն
հատաւ շառաչուկ :

Գիսակք Շնորհացն հանգունատիպք շա-
ղախեցան ընդ արիւն ,

Նոյն և հիւսկէնքն յոսկի յարծաթ իւր
խոսպիք գալարուն :

Որպէս մըշակ զգալարագեղ խնամով սը-
նոյց ձիթենի

Ի վայր մի դերծ , ուր գեղեցիկ ջուր հե-
զահոս ծաւալի ,

Տունկն հերապանծ կայ 'ի կանգուն և
հողմք շնչեալ սիւգ քաղցրիկ

Գրբան ըզնա , և նա փըթթէ ըզձիւնա-
փայլն իւր ծաղիկ ,

Անդուտ յանկարծ մըրըրկածին այս մի
շնչեալ մոլեգին ,

Խըէ ըզտունկն արմատաքի և տապալէ
ընդ գետին ,

Նըման յայնժամ ըզՊանթոսեան զաշ-
խոյժն 'ի տէգ անվէհեր

Տապաստ արկեալ Մենեղաւոս և 'ի զի-
նուցըն մերկէր :

Որպէս առիւծ երբ լեռնասուն իջեալ
 վայրագն 'ի լեռանց
 Զընտիրն յանդեայց զարօտական կապ-
 տէ երինջ գեղապանծ ,
 Նախ ըզժանխան արկեալ ահեղ և զուլն
 առնու բեկանէ ,
 Ապա զարիւնն և զախոնդիս մըռըզգայ-
 լեալ լափլիզէ ,
 Վըհմակք գամփռանց 'ի հոյն նորա և
 խումբք հովուաց գան անդուստ ,
 Շըշուկ հարեալ առ հասարակ կան և
 գոչեն 'ի բացուստ ,
 Մօտ դիմագրաւ ընդ վերագին 'ի վէգ
 յառնել ոչ ժրտեն ,
 Զի և ոգիք տրոփան նոցա 'ի դակցացեալ
 երկիւղէն ,
 Այսպէս Տրոյեանց և ոչ այր մի այր քա-
 ջալանջ 'ի կըռուել
 Ընդ Մենեղաւ ժըտեաց արին մենամար-
 տիկ կաքաւել :
 Անշուշտ և զէնս ըզպանթոսեան նա կո-
 ղոպտէր հէշտաբար ,
 Զքնաղ զինուցն ըզշուք տանէր թէ Ա-
 պողոնն ոչ խանդայր :
 Առ ըզհեկտոր գրդեաց յայնժամ գո-
 ոոյն նրման Արեսին ,
 Ըզտիս Մենտեայ առեալ ճըզգրիտ Կի-
 կոնացուոց զիշխանին .

Արձանացաւ և մեծագոչ ձայն մի կար-
դաց շուտափոյթ .

«Զի՞ քեզ, Հեկոոր, այդ նրժուգաց գոլ
անժաման հետամուտ :

Նրժոյգք վեհին են Աքիլէայ դրժոխ-
լմբերք առ 'ի սանձ,

Կանացածին չազդէ նոցա, վարիչ դոցա
չիք յարդեաց .

Միայն Աքիլն է կառավար որ ճեան
է մօր անմահի .

Բայց քեզ յուշ, քաջ, զինչ Մենեղաւ
նախճիր գործեաց 'ի կրուովի :

Նա Պատրոկղէայ հովանացեալ, Տրոյ-
եանց զարին հար յոգին,

ԶԵԿՈՐԵՆ ասեմ ըզՊանթոսեան և եղծ
յաւէժ զոյժ քաջին » :

Ասաց Փեբոս և միւս անգամ եմուտ
մարտին 'ի հանդէս,

Բայց Հեկոորայ 'ի խոր սրտին ցաւ յու-
ղեցաւ աղեկէզ :

Յարեաւ և շուրջ աղընկառոյց գընդաց
գընդաց կարգ 'ի կարգ,

Տես ըզկապտողն ընտիր զինուց, տես զոր
յերկիր տապաստ արկ,

Տես և զարեանցըն ապաժոյժ ազբերա-
ցեալ 'ի վերաց,

Ամբոխեցաւ քաջ նահատակն և ահագին
ձայն կարդաց :

Ի զէն հրաշէկ էր ինքն անշէջ բոցոյն
նրման Հեփեստեայ .

Գոչեաց, լըւաւ Մենեղաւոս ըզմեծ բար
բառն Հեկտորայ .

Յողոց եհան, և անդ արին ինքն ընդ
անձին ոգորէր .

« Եզո՛ւկ եմ ես, զինորդ զայս զէնս ըզ-
գեղեցիկ լըքանել :

ԸզՊատրոկէս զինորդ թողուլ, որ զիս
պատուեալ կայ տապաստ .

Յոյն այր տեսեալ, յիս ո՞չ ահա քըրքիջ
հարցէ և ըզաստ :

Իսկ թէ 'նդ Հեկտոր և ընդ Տրոյեանց
մենամարտիմ յամօթոյն,

Տագնապ է ինձ թէ մենացեալս պատիմ
'ի շատ որերոյն :

Զի՛նչ, թէ Հեկտոր ողջ ըզփաղանդն
յանկարծ աստէն գումարէ .

Այլ զի՛ սիրտ իմ այդ ոգետանջ զիս խոր-
հըրդով տագնապէ :

Որ դիցն ընդդէմ մրցի ընդ մարդ, որում
նոքա շուք ձօնեն,

Այր է խիզախ և 'ի մահուն ոչ ապրես-
ցի վըտանպէն :

Յոյն այր ապա ոչ ցաննուցու թէ Հեկ-
տորայ տամ տեղի,

Զի դա 'ի մարտ է զարթուցեալ 'ի հրա-
մանէն տէրունի :

Ո՛վ, թէ ուստեք ձայնն Այասայ յունկն
 իմ լինէր հարկանել,
 Յայնժամ ամոլքս և ընդդէմ դից մէք
 ժրտէսք պայքարել:
 Ըզմեր գիակն առեալ ողջիկ ձիր տա-
 նէսք յԱքիլէս,
 Եւ այն անշուշտ հասեալ չարեացս 'ի
 սփոփուլթիւն լինէր մեզ):
Մինչ դեռ այսպէս յուզէր զարին ծուփ
 ալէտանջ խորհրդոյ,
 Անդուստ Տրոյեանց գունդք խուժեցին,
 խաղայր Հեկտոր յառաջոյ:
 Տազնապեցաւ Մենեղաւոս թիկնադար-
 ձոյց վերջոսնէր,
 Թող ըզգիակն այլ դարձ 'ի դարձ ընդ-
 կրուկ հայեր գորովէր:
 Զորօրինակ ըզյարձակեալն առիւծ ըզ-
 սէգ քաշաւոր
 Գոչիւնք և տէգք վանեն հովուաց և ահ
 գամփռանց քաջազօր,
 Զըգնի գաղանն, այլ խուճապի զայ-
 րուցն 'ի սիրտ բոցանայ,
 Եւ 'ի վերջէ նա բըռնադատ միջնադաւ-
 թէն տեղի տայ,
 Հանգոյն խարտեալն 'ի Պատրոկղեայ
 վերջոսնեցաւ 'ի ժամուն,
 Նիզակակցաց մուտ 'ի խուժանն, եկաց
 անդէն 'ի կանգուն:

Գարձաւ ապա, մեծն Այասայ խնդիր
 առնէր դիւցազնն,
 Շուրջ ականեալ դիտեաց ըզնա 'ի թև
 ձախոյ 'ի մարտին:

Նա մեծ խրախոյս տայր ընկերաց նահա-
 տակել յասպարէս,
 Զի արհաւիրս անդ երկնասաստ գու-
 ժեաց Փեքոս սոսկապէս:

Վազեաց խարտեաշն արագաթև ձայն
 արձակեաց ազգարար,
 «Արի՛ Այաս, եկ Պատրոկղեայ մեք պահ
 կալցուք քաջաբար .

Մերկ ըզգիական առցուք գոնեայ, հան-
 դէպ տարցուք Աքիլլեայ,
 Զի զէնքն արդէն կապուտ առան յա-
 հեղազօրն Հեկտորայ »:

Հուր բոց 'ի լանջնն Այասայ վառեաց
 արևոյն քաջալեր,
 Յարեաւ և անց ընդ նահատակս, խա-
 ղայր խարտեաշն առ ընթեր:

Հեկտոր անդուստ ըզՊատրոկղեայ ըզ-
 զէնս կապտեալ քաջամուր
 Այն ինչ քարչէր, կառավինատել խըն-
 դրէր 'ի սուր սայրասուր,
 Նա և ըզգին կուր գէշագէշ շանց Տրոյա-
 ցւոց տալ անձկայր,
 Եհաս Այաս իբր աշտարակ բարձեալ 'ի
 բուռն յաղթ ասպար:

Ետես Հեկտոր և 'ի խուժան նիզակ
կցաց ընկրրկէր,

Վազեաց 'ի կառս և Տրոյացոց վասըն զի
նուց տայր պատուէր,

Տանել յոստանն ըզմեծ կապուան 'ի շուք
անձին մեծափառ,

Մինչ գեռ Այաս կայր Պատրոկղէայ հո
վանաւոր 'ի յասպար :

Որպէս առիւծ ածեալ զկորիւնն 'ի
խոր յանտառն 'ի պահ կայ,

Եւ թէ որսորդք խուժեն յանկարծ,
շուրջ գայ վիրագն և գոռայ,

Շուրջանակի ըզտէգ աչացն արձակե
լով վեր 'ի վայր,

Գազանն ահեղ խոժոռ ըզյօնսն ողջոյն
տանի 'ի խոնարհ,

Տարեալ այնպէս և քօլարկէ զկայծա
կնացայտ բիք զաչաց,

Հանգոյն յայնժամ ըզՊատրոկղէաւ կայր
և կրուուէր մեծն Այաս :

Ի հանդիպոյ կայր 'ի նորա Մենեղաւոս
քաջարին,

Կայր և հայէր և 'ի ցաւոյն աղիք քաջին
գալարին :

Ոչ հանդարտեաց Իպսողոբեան Գլաւ
կոս Լիւկեանց զօրավար,

Խոժոռ ահամբ ձայն 'ի Հեկտոր ետ և
ձրգեաց պարսաքար :

«Տեպէամբ, Հեկոոր, քաջ նահատակ
այլ դու արդեամբք անաւագ,

Ի զուր է քեզ համբաւ փառացդ, որ 'ի
փախչել էս արագ:

Ե՛րթ արդ խորհեաց զխորդ փրկել զու-
տանդ և զայդ աշտարակ

Դու միայնակ ընդ քում ազգին որ Տրոյ-
իոյ էն բընակ.

Ոչ որ Լիւկեանց վասն ոստանիդ ընդ
Դանայեանց կրուուեսցի,

Զի չակնածես անդուլ ճրգանց, երես
չառնես մրցողի:

Ռամիկ արանց դու զո՞ր երբէք խընամ
ածցես և կամ դիւր,

Դու որ լըբեր ըզՍարպեդոն ըզքոյ համ
հարզն և մեծ հիւր:

Այ հիքացեալ, թողեր ըզնա յորս Աքայ-
եանց և յաւար

Զայն քաջազօրն, որ քաղաքիդ որ քոյ
անձինդ էր պատուար:

Ո՛չ ախոյեան կայր մեծապէս ցորչափ
զարև տեսանէր.

Զի վատացար և զայնպիսին շանցն 'ի
ժանեաց ոչ զերծեր:

Արդ թէ Լիւկեանք ինձ անսացեալ
դարձ 'ի տուն մեր արասցուք,

Վաղ Տրոյիոյ հասցէ անշուշտ դոյժ օր-
հասին և շըշուկ:

Ո՛վ, թէ զարդիս 'ի Տրոյացիս հուր բո-
ցանայր 'ի սրտի,

հուր որ զքաջացն ողջոյն գրաւէ հայրե-
նասէրն ըզհոգի:

Եթ' էր դոցա վառ և բորբոք գուլթ հայ-
րենեացն և սաշտօն,

Բա՛ փոյթ ընդ փոյթ ըզՊատրոկղէս մէք
քարշէաք յԵղիօն:

Եւ թէ երբէք յոստանն 'ի մեծ դիակ-
նացեալս այս արդոյ

Ածեալ լինէր առ Պրիամոս կորզեալ
մարտին 'ի միջոյ 76,

Սարպեդոնին ըզպերճ՝ ըզզէնս մեզ ձօնէ-
ին Յոյնքն արագ,

Եւ մէք ըզմեր դիւցազն արդոյ 'ի յԵղիօն
ածէաք:

Զի որ աստէն կայ դիտապաստ ունի
համհարզ զաւագ այր,

Որ ախոյեան մեծ է Յուենաց և ինքն ունի
քաջ որեար 77:

Բայց դու արւոյն այն Այասայ զի 'ի
դիմի ոչ հարեր,

Խուճապեցար երբ մի անգամ ըզգա 'ի
վէգ յակն արկեր.

Զի դու նրմա մենամարտիկ ոչ կարդա-
ցեր ասպարէզ.

Գիտես իսկ քաջ, թէ այդ վերագ է կորո-
վի քան ըզքեզ ":

Խեթիւ 'ի նա յառեալ Հեկտոր անդէն
բարբառ արձակեաց .

“ Զի դու Գլաւկէ, զի այդպիսիդ բան
սարսեցեր խրոխտապանձ .

Վա՛ջ քեզ այր դու, զոր կարծէի վե՛հ
բոլորից 'ի հանճար ,

Որք յարգաւանդն 'ի Վիւկիա բնակասը
նունդք են որեար .

Արդ ես շատ ինչ ըզքո հանճարն ա
ռեալ եմ աստ յայսպանել ,

Որ տիտանեանն յԱյասայ զիս ասա
ցեր խուսափել :

Զիս ոչ խօչիւն, ոչ նրժուպաց դոփմանց
սարսէ յաղթ սըմբակ ,

Զիս Գիոսին ասպարափառ խորհուրդն
յաղթող սարսէ ցանգ .

Այն որ զարին ասաբեկեալ նրկուն առ
նէ հեշտապէս ,

Թէպէտ և ինքն ըզնա մարտին դրդեալ
իցէ 'ի հանդէս .

Բայց դու աղէ մատիր , ո՛վ քաջ , կ'աց
մրցանացս առ ընթեր ,

Տեսցես այսօր եմ վատ արանց , որպէս
դու զիս սարսեցեր .

Կամ թէ վանեմ ես զայր Հելլէն, թէ
պէտ հրգօր աննրման ,

Որ անճնագրաւ Պատրոկղէսին հովա
նասցի դիական ” :

Լսաց, գոչեաց ըզբոց մարտին վառեաց
կրկին սաստկապէս .

«Տրոյեանք, Լիւկեանք և Դարդանեանք,
ձեզ քաջք, ահա ասպարէս .

Օ՛ն բարեկամք, լիք անվրկանդք, ձեզ
քաջ բազուկքդ յուշ լիցին ,

Մինչև ըզզէնսն արկից ես պերճ զԱ.քիւլ-
լէսի քաջազին .

Ըզզէնսն ասեմ, զոր Պատրոկղեայ մա-
հուամբն առի ինձ աւար » .

Ասաց, 'ի նոյն փայլակնաձև եւ 'ի մար-
տէն չու արար :

Սրացաւ արագ, հաս որերոյն որ ոչն
էին 'ի բացեայ ,

Այն որք յոստան գնային բարձեալք ըզ-
մեծ կազմածն Ա.քիլլեայ :

Մեկուսացաւ 'ի վայր ազատ, էառ ըզ-
զէնսն 'ի փոխել ,

Եւ զիւր կազմածն ետ Տրոյացոց 'ի մեծ
ոստանըն տանել :

Եկաց, արկաւ զԱ.քիլլէսին զանմահ ըզ-
զէնս զարդ անձին ,

Զոր 'ի պարգև արդոյ իւր հօր դէքն
երկնաւորք ձօնեցին .

Հայր իւր յեցեալ 'ի ծերութիւն ետ
զայն որդւոյն քաջալաւ ,

Սակայն 'ի զէնս 'ի հայրենին ոչ և որդին
ծերացաւ :

Լ՛նդուստ զԵկտոր Ամպրոպայինն յակն
 'ի վերուստ արկանէր,
 Յորժամ վէհին Ա.քիլլէսի նա պերճ 'ի
 զէնսըն վառէր .

Շարժեաց ըզգլուխն և խօսեցաւ խոր 'ի
 սրտին խեղամուտ .

« Ա՛յ հէգ, ընդ միտ չածես զօրհասդ որ
 արդ քեզ կայ մօտալուտ .

Ա՛յլ դու անձին զարդ արկանես զան,
 մահ ըզգէնս ըզքաջին ,

Յորմէ ասիւ առ հասարակ կանոցածինք
 սարսեցին :

Դու և տապաստ արկեր զնորա համ
 հարզն ըզքաջ և ըզհէզ ,

Զուսոյն, զգլխոյն զէնս կապտեցեր զը
 զւեալ ըզնա դառնապէս :

Արդ թէպէտ ոյժ 'ի քեզ հեղում 'ի մե
 ծապէս զօրավիդ ,

Բայց այս լնցի քեզ առ յինէն 'ի փոխա
 ըէն գեղեցիկ ,

Զի զպերճ կազմածըն զԱ.քիլլէայ 'ի
 քում դարձին 'ի մարտէն

Մի մօտեսցի Անդրոմաքէ 'ի բաց առնու
 զայն 'ի քէն » :

Լսաց, և վէհ Ամպրոպայինն ընդ թուխ
 յօնիւքն ակնարկեաց ,

Եւ իրանացըն հեկտորայ զկազմած զը
 նուն յարմարեաց :

Արկաւ ըզգէնան, արկաւ զԱրէս. անդէն
յԵկտոր բոցք հատան

Եւ հրահոսանք կորովութեանց 'ի յերա-
կունս ընթացան:

Գոչեաց ասեղ և մուտ քաջացն նիզա-
կակցացն 'ի հանդէս,

Եւ Աքիլլեան հրափայլ զինուքն ինքն ե-
րևէր Աքիլլէս:

Շուրջ կարգ 'ի կարգ յածեալ զօրուն
'ի մարտ վառէր զայրընտիրս,

ԸզՄեսթիդէս և ըզԳլաւկոս, ըզԹեր-
սիդոք, ըզՓորկիս.

Ջաստերոպոս, ըզԴիսեսնոր, 'ի նոյն վա-
ռէր զԻպսոթոս,

ԸզԲրոմիոն և ըզՄեդոն և զհաւահարցն
Եննոմոս:

Այս քաջազանց խրախոյս յայնժամ ձայ-
նիւ կարգաց մեծազօր.

« Ինձ ունկըն դիք սահմանակիցք խուճք
համհարդից բիւրաւոր.

Ոչ 'ի խնդիր ինչ բազմութեան որ և
չէր ինչ պիտեան,

հրաւէր 'ի ձեր 'ի քաղաքաց ձեզ կարդացի
յայս ոստան,

Այլ զի հարսանց մեր ծընդասէր և մեր
մանկանց աղածրի,

Ընդ իս 'ի գոռ Աքայեցւոց լիջկք հըզօր
հովանի:

Յայս մտախորհ , 'ի հաս 'ի հարկ ես
զիմ մաշեմ ժողովուրդ ,

Զայր այր 'ի ձէնջ լընուլ բարեօք և տալ
ողւոց ձեր յագուրդ :

Ի մարտ ուրեմն հասա այր այր . որ կամ
տասպաստ անկանի

Կամ թէ ապրի . զի առ և տուր այս ան
հրաժեշտ է մարտի :

Բայց թէ ոք քաջ 'ի վեդ ելեալ ըզ-
մեծն Այաս ընկրկէ ,

Եւ 'ի բանակ մեր քարշեսցէ զայդ դիտա-
պաստ Պատրոկէ ,

Կէս զաւարին տըւեալ նրմա և ես կիսով
չատացայց ,

Նա և 'ի բուն հաւասարորդ առնեմ ըզնա
իմ փառաց » :

Լըւան , անդէն հրոսեն 'ի Յոյնա քաջիկ
հարեալք զոտս 'ի բոյս ,

Ի վեր նիզակս ճօճան առեալ իբրև մար-
տիկք մեծայոյս :

Խիզախեցին թափել ըզդին բուռն Այա-
սայն 'ի ձեռաց .

Այ խօլամիտք , որ նա շատ զոք ձօն մե-
ռելոյն սարգևեաց :

Պարձաւ Այաս առ Մենեղաւ և զգու-
շացոյց 'ի սպհուն .

« Լոր ինձ , ասէր , ս' բարեկամ , տագ-
նաս է մեզ երկոցուն :

Խիթամ անշուշտ, մէք 'ի կըռուոյս դարձ
ջարասցուք ողջանդամ,

Զի Պատրովդէայ զարդիս 'ի սլահն ոչինչ
այնպէս ես հոգամ.

Նորա դիակն արդ գէշ արկցի շանց Տրոյ-
իոյ և հաւուց,

Ես վասըն քոյ և իմ գլխոյն խիթամ ար-
կած 'ի ժամուս :

Ո՞չ տեսանես, զո՞ր մէգ պատեաց հեկ-
տորդ այդ մեծ պատուհաս,

Շըշուկ յուղեաց առ հասարակ, արդ
շանթեսցէ մեզ օրհաս :

Արի դիւցազն, և տո՛ւր խրախոյս քաջաց
քաջաց այրընտիր,

Չայն բարձ կարգա, ձայնիդ թերևս ոք
լինիցի ունկընդիր ” :

Ասաց Այաս, լըւաւ արին յարեաւ ան-
դէն անվէհեր,

Բացէ 'ի բաց 'ի զօրն Յունաց քաջահըն-
չող ձայն ազգէր.

“ Ազէ Յունաց արքայազունք և զօրա-
վարք օն արիք,

Որք յԱրրիդեանցն 'ի բազմականս ա-
կումբ առնուք գեղեցիկ.

Ըզձօն ըմպէք ըզբաժակին, զի ամբոխից
էք արքայ,

Եւ շուք վառաց ըզձեր թագին ունիք
անգուստ 'ի Դիայ :

Կըշուէլ աստի էս չքաւեմ զայր այր 'ի
 ձէնջ զօրավար,
 Այնչափ ահա մեզ հուր մարտին մըրը-
 կեցաւ բոցավառ.
 Ո՛րք լըսէ աստ վազեսցէ նա հրաբորբոք
 'ի սրտի,
 Մի՛ յանձն առցէ թէ շանց Տրոյեանց
 խաղ Պատրոկղէս կարգեսցի":
 Ըզճայնն անդուստ արագ արագ լըւաւ
 Այասն Ոկլեան,
 Դիմեաց նախկին և նահատակ անց մի-
 ջամուխ 'ի խըռան:
 Յարեաւ երկրորդ Իգոմենէս, ել Մերիոն
 ըզկընի
 Նիզակակից մարդախանձին համանմա-
 նեալ Արեսի:
 Իսկ և զայլոցն ո՛ր բաւեսցէ յիշէլ զա-
 նուանան առանձին,
 Որ մի անգամ ըստ նոցանէն ըզմարտն
 Յոււնաց վառեցին:
 Մահատակեալ հրօսէն փաղանգք Տրոյ-
 եանցն հոծեալ ահափետ,
 Յառաջագէմ հըսկայազօրն Հեկտոր խա-
 զայր կարապետ:
 Որպէս յորժամ երկնահոսան մեծի գե-
 տոյն 'ի բերան,
 Ալքբ ահեղք 'ի թափ նորա գոչէն ընդ
 գէմ տան հորդան,

Բոմբէն ափունքըն բարձրաբերձք, ամե-
 հանայ ծովն անդուստ 78,
 Այնչափ Տրոյեանց մեծ հրոսակին խօ-
 շիւնքն հնչեն 'ի բացուստ :
 Յոյնք համախումբ ըզՊատրոկղէաւ ար-
 ձանացեալք 'ի ճակատ,
 Պըղընձակուռ ասպարափակ շուրջ գոր-
 ծեցին ցանգապատ :
 Իսկ Ամպրոպեանն շուրջանակի օդ մի
 հեղեալ միգամած,
 Մութ մառախուղ փայլակնացայտ սա-
 ղաւարտից տարածեաց :
 Զի և յառաջն էր Պատրոկղէս Արամազ-
 դայ սիրասուն,
 Յորչափ համհարզ ինքն Աքիլլէայ լոյս
 տեսանէր զարևուն .
 Յանձըն չառնոյր Ամպրոպայինն, թէ
 շանց Տրոյեանց լիցի գէշ,
 Վասն այն յընկերսն 'ի պահ մարմնոյն
 բոց բորբոքեաց մեծապէս :
 Բայց Տրոյացիք նահատակեալ Յունաց
 ածեն ըզտագնապ,
 Խուճապեցան նոքա ընդ կրուկ, լըքին
 ըզգին սըրտաթափ :
 Տապատտ ոչ զոք արկին Տրոյեանք թէ-
 պէտ վառեալք 'ի խազմին,
 Գօտէսլընդեալք միայն ըզգին քարշէլ նո-
 քա անձկային :

Իբրև այսպէս սարսեալ Յունաց խուն
 մի կացինն 'ի բացեայ ,
 Անդուստ արագ փողեալ Այաս անդ-
 րէն դարձոյց ըզնոսա .
 Այասն այն վէհ տեսլեամբ 'ի Յոյնս ,
 վէհ և յարդեանցն 'ի նախճիր ,
 Եւ Աքիլլէայ քաջի արանց երկրորդ գո-
 լով այր ընտիր :
 Փոթորկեցաւ ընդ նահատակս և արշա-
 ւէր քաջավազ ,
 Իբրու հուժկու յաղթահարուստ կինճ
 վայրենի և վարազ ,
 Որ 'ի լերին զբոյլ բարակաց և զորսոր-
 դաց քաջ որեար
 Ի վեր 'ի վայր ընդ մացառուստ հարեալ
 պուղէ ճոխաբար ,
 Սապէս արին Տեղամոնեան Այասն այն
 վէհ դիւցազգեաց
 Թափ միջամուխ ցիրցան կացոյց ըզկարգ-
 արոյեան փաղանգաց :
 Նոքա անձկով մի ըզմիով ըզՊատրոկ-
 դեաւ առեալ բակ ,
 Ձայն կարգային քարչել յոստան , կան-
 գնել փառաց յաղթանակ :
 Որպէս Լեթեանն անդ Իսպոթոս վէհ
 Պեղասգեայն 'ի զարմէն
 Կորզեալ ըզգին 'ի յայն շըշուկ քարչէր
 զմիոյ ոտանէն .

Փոկ հաստամուր շուրջ զաճառիւք ար-
կեալ 'ի կոճ'ն 'ի նորա ,
Քարչէր այնպէս նա 'ի շնորհուկս ազ-
գին Տրոյեանց 'ւ Եկտորայ :
Բայց նա առ դուրս արագ արագ տես
մահագոյժն ըզլըտանգ ,
Ոչ զօրեցին փրկել ըննա դիմագրաւեալ
ախոյեանք :
Տեղամոնեանն 'ի խռան զօրուն սլացաւ
'ի նա շէշտակի ,
Արձանացաւ եհար ընդ այտ սաղաւար-
տին սլղընձի :
Մըկընդահար ջախջախեցաւ կուռ սա-
ղաւարտ գիսասպանծ ,
Քանզի ձիգն էր հըզօր տիգի և յաղթ
բազկին էր հարուած .
'Դ արիւնազանգ վերաբերան հոսէր ու-
ղեղն առուաբար ,
Լրւծաւ անդէն հիքացելոյն առ հասա-
րակ ոյժ և կար .
Թող անկանել զոտն 'ի ձեռաց ըզՊատ-
րոկղեայ 'ի յերկիր ,
Եւ գիական ինքն 'ի վերայ յորսայս ան-
կաւ անյարիր .
Ոչ ժամանեաց 'ի Լարիսսա 'ի յարգա-
ւանդն իւր սահման ,
Եւ սիրասուն չետ նա ծնողաց ըզվարձ
իւրոյ սընընդեան .

Այսպէս նորա համառօտեալ աւուրք
կենացն յօրհասին ,

Քաջաբազուկըն Այասայնըկուն եղև նի
զակին :

Փայլակնացաւ յայնժամ Հեկտոր յԱյ-
աս 'ի տէգ հաստաբուն ,

Դէտակն 'ի ձիգ կալեալ Այաս , կըքեալ
խոյս ետ 'ի կըռոյն :

Հարաւ Սքեդոն մեծն Իփետեան փոկէ-
ացւոց քաջն արանց ,

Բնակիչն յարկաց վէհ Պենոպեայ և ամ-
բոխից տէր բազմաց .

Ընդ մէջ փողոյն տիգահարեալ , և եր-
կաթի սայրն 'ի բուն

Վարսեալ 'ի խոր թափ անցանէր մօտ առ
'ի ծայրն 'ի յուսոյն .

Անկաւ դոփեաց , զինուն զարդուն սը-
ղընձակուռ ձայն հնչեաց .

Եւ 'ի փորկիւն քաջ Փենոպեան դիմեալ
գոռաց մեծն Այաս .

Նա պահ ունէր Իպպոթոսեայ . ընդ
փորն Այաս հար նիզակ ,

Խրզեաց ըզգոգ զրահի նորա անցոյց ըզ-
սայրն 'ի գանձակ .

Տապալէցաւ և 'ի յորսայս բըռնահարեաց
ըզգեալին ,

Տեղի յայնժամ տան նահատակք , ետ և
Հեկտոր կորովին :

Մեծաբարբառ գոչեն չեղենք և քարշ
ածեն դիականց ,

Քարչեն զՓորկիւն և զԽալսոթոս , զեր-
ծուն ըզզէնս 'ի թիկանց :

Ընչուչտ յայնժամ Տրովագացիք նըկուն
վանեալք 'ի Յունաց ,

Թիկնագարձոյցք 'ի յԵղիոն գնային իբրև
վառք արանց ,

Իսկ և չեղենք և սահմանի Ամպրոպայ-
նոյն ընդդիմակ

Արիացեալք ըզյաղթութեան քաջ տա-
նէին մրցանակ ,

Թէ ոչ Փեբոս 'ի տիպ ծերոյ վառէր 'ի
մարտ զԵնէաս .

Էր ծերունիս այս Իպիւտեան արգոյն
Քարող Պերիփաս :

Սա Անքիսեայ առ հօր նորա իբրև Քա-
րող ալևոր

Էր բնակակից հաւատարիմ խորհրդա-
կան հարկևոր :

Զտիպ ծերունւոյս քաջ մազգեզանցն ա-
ռեալ Փեբոս 'ի ժամուն ,

« Զլինչ , Ենէաս , գոչեաց առ նա , զլինչ
է վատելդ այդ ողջոյն .

Մեծն Եղիոն 'ի տագնապի ծըփայ ընդ-
դէմ դից կամաց ,

Ո՛ւմ կաս , ո՛վ քաջ , զլի վարանիս վանել
նորուն զօրահաս :

Տեսեալ խակ եմ, զի դիւցազունք 'ի սիրտ
'ի յոյժ ապաստան,

Առեալ զԼերեանցն ըզքաջորեար վնտ
վանեցին զամենայն :

Ահա Դիոս, քան Հելենաց, մեզ տալ
խնդրէ յազթանակ,

Զի՞ թաքթաքուր ձեզ վերջոտնել և ոչ
յառնել նահատակ ʔ :

Օյս ծերունին . բայց Ենէաս յերեսն
յառեալ անքրթիթ

Ծանեալ զՓեբոս ըզքաջաղեղն, յԵկտոր
ձայն ետ խիտ առ խիտ .

«Արի Հեկտոր, աղէ և դուք մեր համա
հարզք նահատակք,

Մի վատեսցուք, մի և Յունաց լիցուք առ
տէն նըշաւակ .

Մի յԵղիոն թիկնադարձոյցք խուճա
պեսցուք անարիք,

Ինձ ոմն 'ի դից մօտևորեալ խրախոյս
կարդաց զօրավիգ .

Ասաց, թէ Զևս իշխան մարտին մեզ արդ
կացցէ հովանի,

Օն առեալ, քաջք, հրոսեալք 'ի Յոյնս
հորդան տացուք շէշտակի .

Դոքա ըզգին, ըզՊատրոկղէայ գէթ ան
խուճապք մի տարցին ʔ .

Ասաց, վաղեաց ինք՝ նահատակ արձա
նացաւ առաջին :

Բոց 'ի Տրոյեանս արծարծեցաւ, դարձան մարտին յասպարէս

Եւ 'ի դիմի Աքայեցւոց հարկանէին սաստկապէս .

ԶԼիոկրիտոս քաջ զԱրիսպեանն հար նիզակաւ Ենէաս ,

Արկ դիտապատ . էր սա հըզօր Լիւկոմիդէայ համահարզ .

Տասպալեցաւ . քաջին աղիք Լիւկոմիդէայ գալարին ,

Յառաջադէմ արձանացաւ սայր շողացոյց զաշտէին .

Կըշիւ 'ի լեարդն եհար զարքայն զԱպիսսոնն զԻպպասեան ,

Հար ընդ սրտին առագաստիւ և ծունկք նորա վատեցան :

Ի Պէոնեայ սա չու արար 'ի գաւառէն արգաւանդ ,

Եւ էր երկրորդ Աստերոպէայ սա նահատակ անվըկանդ :

Ի մահ նորա Աստերոպէայ քաջին աղիք գորովին ,

Շէշտ խոյացաւ 'ի վէգն Յունաց , այլ ոչ բաւեաց 'ի կրուսին .

Զի զՊատրոկղէաւ վահանավառ պատնէշ գործեալ ամրափակ ,

Անտառախիտ կարկառէին տէգք և մըկունդք և նիզակք .

Շուրջ դայր Այաս, բոց հատանէր,
 ձայնէր արին շատ պատուէր,
 Չբտայր ումէք ոչ վայրիկ մի 'ի Պատրոկ
 զեայ վերջոսնէլ.
 Ոչ և 'ի վէգ ըստ կարգն ելեալ դիմա-
 գրաւէլ արտաքոյ,
 Այլ բակ զիւրեաւ և համագունդ մըղէլ
 ըզմարան 'ի մօտոյ.
 Ըզգուշութիւն զայս տայր յայնժամ
 Այասն Յունաց այրն ընտիր,
 Եւ հող երկրին յապաժուժից թանայր
 արեանց 'ի կարմիր.
 Էր դիակոյտ խիտ անկեւոց իբրև զկար-
 կառըս դերբկաց,
 Որք 'ի Յունաց որք 'ի Տրոյեանց որք
 համհարզիցն 'ի քաջաց:
 Չի և ոչ Յոյնք ըզՊատրոկլեաւ մարտ
 կըռուէին անարիւնք,
 Թէպէտ տապաստ 'ի պայքարին անկա-
 նէին նըւազունք.
 Հոժեալք կային քաջիկ 'ի մարտն յայն
 ուշ կալեալ և զուրուշ,
 Աչք անբըթիթք այր յընկերէն զօրհաս
 վանէլ մահագոյժ:
 Նրայրեացք գոգցես մըրըրկեցան յան-
 հընարին յայն 'ի վէգ,
 Մինչ ասէիր թէ ոչ ծագէր անդ ոչ լու-
 սին ոչ արեգ.

Այնչափ 'ի մոռթ մէդ յաննըշոյլ մածան
 յայնժամ կորովիք,
 Որք մարտ եդեալ ըզՊատրոկղեալ մար-
 մնոյն կային զօրավիդ :
 Իսկ ուր այլուր Տրոյեանց, Յունաց բա-
 խին բանակք երկոքին,
 Անդ անմըռայլ ընդ եթերաւ մարտ յան-
 դորրու մըղէին .
 Սոցա արփւոյն ջինջ և սայծառ լուսոյն
 ճաճանչ հատանէր,
 Ոչ մէդ լերանց 'ի դագաթունս, ոչ ամպ
 'ի դաշտն երևէր .
 Որով երբէք ոգի առեալ նոքա ճըգանց
 'ի մարտին,
 Մահահամբոյրն 'ի սըլաքաց 'ի դաշտ ար-
 ձակ խուսէին :
 Բայց առաջինքդ 'ի մէդ պատեալ միան-
 դամայն 'ւ 'ի պայքար,
 Տիգահարեալք անկանէին շատ կորովեաց
 քաջորեար :
 Երկուք միայն Թրասիւմեդէս 'ւ Անտիլո-
 քոս 'ի բացեայ,
 Այն քաջազունքն ըզգոյժ մահուն չա-
 ուին մեծին Պատրոկղեայ .
 Ողջ կարծէին ըզնա անդէն մըխեալ 'ի
 մարտն առաջին,
 Ինքեանք մահուն և վախըստեանն ուշ
 ընկերացն ունէին :

Նոքա մեկին մարտ մղէին որպէս Նես-
տոր պատուիրեաց ,

Զի քաջասցին ըզծուփ մարտին տարա-
մերժեւ 'ի նաւաց :

Բայց որերոյն որ զՊատրոկղէաւ յայն-
ժամ ողջոյն ըզցերեկ

Մարտ անպայման ահեղազօր մըրրօկե-
ցաւ ահաբեկ :

Յոգիս 'ի բուն ապաստանեալք , ընդ-
քիրտն հարեալ անդադար

Եւ ծունկք և սրունք էին քաջաց մինչև
յոտից գարշապար .

Ձեռք և բազուկք խոնջք քրտնահոծք
'ի նոյն և աչք կորովեաց ,

Զքաջ համհարզիւ մեծն Աքիլէայ 'ի
փորձ մատեան քաջ բազկաց :

Որպէս յորժամ ըզճարպալից զարջառա-
մորժն յաղթ ցըլուն ,

Այր խաղախորդ տարածանեւ յանձնէ
'ի ձեռս որերոյն ,

Բըռնահարեալ նոքա զկաշին աստի պա-
տեն և անտի ,

Կացեալք այնպէս ճըգնին ձըգտեւ բազ-
կօք իւրեանց կորովի ,

Անդէն աւիշն 'ի դուրս բրխեալ 'ի ներքս
յորդէ ճարպն 'ի բուն ,

Եւ խիտ առ խիտ քարշեալ այնպէս ձը-
գի պարզի մորժն ողջոյն ,

Նոյնպէս ըզգին կրկին կողմանքն աստի
ձըգեն և անտի,

Այր այր զարամբ 'ի վէգ ելեալ անդ 'ի
յանձուկն 'ի վայրի,

Չօն տալ յոստան ճըգնին Տրոյեանք, և
Յոյնք նաւաց հանդիսին,

էր տեսանել անդ ըզնովաւ շըշուկ և
մարտ ահագին:

Անդ ոչ Արէսն աշխարհածուփ ոչ Ա
թենասն 'ի զընին

Չաշխոյժս արեաց եպերէին, թէպէտ
սըրտնեալք 'ի յոգին.

Այնչափ Ռիոս ըզՊատրոկղեաւ նրժոյգս
և խումբ քաջազանց

Խըռնեալ զայն օր անդ համագունդ, սայ
քար սաստիկ բորբոքեաց:

Չև Աքիլէս առեալ էր քաջն ըզգոյժ
մահուն Պատրոկղեայ,

Չի տարադէմ մարտըն մըղէր նաւատոր
մէն 'ի բացեայ:

Ընդ պատուարաւ Տրոյեանց կըռուեալ,
չասէր, թէ նա մեռեալ է,

Այլ թէ ողջիկ մինչև 'ի դրունս նահատա
կեալ դարձ առնէ.

Եւ զայն երբէք չածէր ընդ միտ քանդել
զոստանն առանձին,

Որ ոչ դարձեալ 'ի միասին գոլ գամագիտ
զօրէին.

Զի շատ անգամ զայս 'ի մօրէն լուեալ
իսկ էր յունկանէ ,

Որ ըզՆիայն նրմա զխորհուրդ պատմէր
նա կարգ ըստ կարգէ .

Այլ մայրն 'ի վեր չեհան նրմա զաղէտն
որ անդ դէսք ետուն ,

Զայն թէ յայնժամ տապաստ անկցի իւրն
համահարզ սիրասուն :

Բայց էր խօշիւն խիտ ըզմարմնովն 'ի
սայրասուր նիզակաց ,

Եւ զէնք անդուք շկահեալք առ զէնս ,
քաջք տապալին 'ի քաջաց :

Յոյն այր անդուստ նիզակակցին խրա-
խոյս կարգայր մեծազօր ,

« Աղէ , ո՛վ քաջք , մեզ առ 'ի նաւս չե
դարձն երբէք փառաւոր .

Լաւ է 'նդ ոտիւք թէ թանձրահող բացցի
դեանոյն մեզ արգանդ ,

Եւ մեք աստէն անդընդասոյգք լիցուք
ոգւով անլըկանդ ,

Այն շատ լաւ է քան մեք խօլաց Տրոյ-
եանց եղեալ նըշաւակք ,

Յոստանն ըզսա թողցուք քարշէլ փա-
ռաց կանգնել մրցանակ » :

Անդուստ և այր 'ի Տրոյացւոց զայս ըն-
կերին առնէր ազդ ,

« Աղէ , ո՛վ քաջք , 'ի պահ մարմնոյս ողջոյն
լիցուք մեք տապաստ .

Մի դք ընկճեալ յօրահասէն ընկըրկեացի
'ի խաղմին » .

Այսպէս յայնժամ քաջք ընդ քաջաց ըզ-
բոց մարտին վառեցին :

Մարտ ամէհի կըռուին մարտիկք, և ձայն
ահեղ երկաթի

Ընդ անապատ ամբաւ օդոյն գընայր յեր-
կին պըղընձի :

Բայց անդ 'ի զատ, Աքիլլեսին նըժոյգքն
յարտօսը հատանին

Տեսեալ զիւրեանց կառավարի զարկած
ըզգառն օրհասին :

Կային անշարժք տեսեալ ըզնա տապաստ
յաշտէն հեկտորեան,

Թէպէտ և ձայն Աւդոմեդոն կարդայր ա-
րին Դիորեան,

Թէպէտ և շատ ինչ մտրակեալ արագ
շարժէր խարազան,

Թէպէտ և սաստ նոցա սպառնայր, թէ-
պէտ և ձայն աղուական,

Լըսէն ոչինչ . ոչ յելլեսպոնտ դառնալ
'ի նաւս իղձ լինին,

Ոչ յԱքայեանց սրանալ անդրէն 'ի մարտ
խառնել ահագին :

Որպէս արձան որպէս կոթող կայ 'ի
կանգուն անսասան,

Մահացելոյ ուրուք քաջի և կամ բամբ-
շին 'ի դամբան,

Այնպէս կառեալ ընդ պերճ ընդ կառան
 իբրև անշարժք անյարիր
 Կային նրժոյգքն այն գեղեցիկք գլխակո-
 րեալք ընդ երկիր 79 .

Ջերմն արտասուք յարուանանց կաթեն
 նոցա 'ի գետին ,

Կառավարին են անձկայրեացք յոյժ
 դառնացեալք 'ի յոգին 80 .

'Գ առեղն 'ի վայր հեղեալ նոցա շէն և
 առոյգ բաշն և գէս ,

Քերեալ զերկրաւ անկեալ ընդ լուծն
 անդ աղարտեալ կայր այնպէս :

Յակն Արամազդ արկեալ վերուստ զաշ-
 խար նոցուն ցաւագին ,

Գորովեցաւ շարժեաց ըզգլուխ և բար-
 բառէր առանձին ,

“Ա՛յ հիքացեալք , զի՞ զձեզ Պեղեայ մեք
 ձօն տըւաք գեղեցիկ ,

Դուք որ անմահք բնաւորեցայք և ծե-
 րութեամբ ոչ վատիք .

Իսկ զի՞ բընաւ ձեզ վիճակէլ այդ մահա-
 ցու արքային ,

Բայց զի ողորմ՝ ազգի մարդկան հաղորդ
 լիջիք դուք վշտին :

Անշուշտ յերկրի մեծ վշտատես բա՛ բան
 ըզմարդ չէ և չէ ,

Որչափ դոյակ որչափ հաստուած զե-
 ուայ յերկրի և շնչէ :

Բայց ծն և ծն ոչ դուք նըժոյգքդ և ոչ
այդ կառք գերուհակ

Երբէք զԵկտոր Պրիամոսեան բարձեալ
բերցեն վերելեակ .

Չէ շատ նրմա , որ զինազերծ պարծանք
դուռայ վայրապար .

Այլ ես ձեզ լանջ տամ . քաջալանջ , թը-
ռիչս ոտիցդ օդապար ,

Չի զԱդոմեդ ողջիկ 'ի նաւս տարջեք
մարտէն տարադէմ ,

Չի տակաւին ես յաղթական շուք Տրոյա-
ցւոց ընձեռեմ :

Մինչև 'ի նաւս դիմեալ դոքա օրհաս ամ-
ցեն դառնութեան ,

Մինչև արեգն 'ի մայր դարձցի , մինչ
մութն հասցե աստուածեան » :

Ասաց արքայն , և նըժուգաց կորով շըն-
չեաց 'ի մարմին ,

'Նոքա ըզբաշարն փոշոտեալս թօթափե-
ցին ընդ գետին :

Սրավարք 'ի մէջ 'ի բանակաց թուռ-
ցեալ ըզկառս վարեցին ,

Արծարծեցաւ քաջն Ադոմեդ ցաւեալն
'ի մահ համհարզին .

'Արման անգեղ ըզհետ սագուց զարագ-
տոինս մորակէր ,

Է զի հեշտին 'ի Տրոյացւոց խառնամբո-
խէն խուսափէր ,

Է զի և հեշտ նա խառնամուխ գիմեալ
 'ի զօրն և վանէր ,

Հրոսեալ այնպէս ասէղազօր բայց զոք
 տապաստ չարկանէր :

Չէր բաւական 'ի վէճ յայն կառու վերե-
 լակեալ միայնակ ,

Սէգ նրժուգաց գու սանձակալ 'ի նոյն
 կըշուել և նիզակ :

Դէտակն անդուստ կալեալ 'ի նա ոք
 համհարզիցն ախոյեան ,

Էր սա որդի Լայերկոսին Աղկիմեդոն Ե-
 մոնեան .

Դիմեաց եկաց յետոյ կառացն յԱգոմե-
 դոն ձայն կարդաց .

“ Զանշահ խորհուրդդ , Ագոմեդոն ,
 զայդ ո՞ 'ի դից քեզ սադրեաց .

Ըզքեզ , ո՞վ քաջ , ո՞ խօլացոյց 'ի գեղեցիկ
 քո հանձար ,

Զի միայնակ 'ի ճակատուն մըտեր Տրոյ-
 եանց 'ի պայքար :

Ո՞չ տեսանես , զի համահարզ քո քաջ-
 արին տապաստ կայ ,

Եւ Աքիլլեան զինուքն 'ի յուս հեկտոր
 խայտայ և սիգայ ” :

“ Եւ ո՞ արդեօք , կրկնեաց նրմա Ագոմե-
 դոն նահատակ ,

Ո՞քեզ , ո՞վ քաջդ Աղկիմեդոն , յԱքայե-
 ցիս հանգուհակ ,

Որ բաւեսցէ տանել բերել զանմահ նը-
ժոյգսդ օդապար ,

Բայց թէ Պատրոկղ իւր կենդանեաւն
այն դիւցանման կառաւար .

Այլ նա , աւանդ , կայ դիտապատտ յօրա-
հասին իւր սահման .

Բայց դու , ո՛վ քաջ , առ ըզմտրակդ առ
զայս չքնաղ երասան .

Վերեւակեաց , ես վայր իջեալ խառնիմ
չըշուկն 'ի յամբաւ " .

Ասաց , հապճեպ Ազկիմեդոն թեթև 'ի
կառս խոյացաւ :

Առ ըզմտրակն , առ զերասանն 'ի բռին
արին անվեհեր ,

Ի վայր վազեաց Աւդոմեդոն , հեկոոր
անդուստ տեսանէր .

Դարձաւ արագ և յԵնէաս որ կայր
ընթեր ձայն կարգաց ,

« Լո՛ւր ինձ դու քաջ Տրոյեանց աւագ ,
խորհրդականդ Ենէաս ,

Ահա նըժոյգքն ամոլք անմահ Աքիլէ-
սին այն արագ

Երևեցան 'ի դաշտ մարտիս , այլ կառա-
վարքն անաւագ .

Անշուշտ կապտեմ ես ըզնոսա թէ քա-
ջանաս դու ընդ իս ,

Շատ է դըռոյթ թէ մի անգամ տացուք
նոցա ըզմարտիս :

Գորքա ընդդէմ ոչ բաւեացեն մեզ ճակատել 'ի կրօուին ։

Ասաց Հեկտոր, խրախոյս եբարձ Անքիսեսի քաջորդին ։

Նապա խաղան, պատեալ զուսովք քեմուխա ըզյաղթ արջառոյ

Չոր, հաստամուր, նոյն և 'ի կուռ ամրածածուկ պըղընձոյ ։

Խրախուսեցին և Քրոմիոս և Արետոս՝
գեղերես,

Խաղան ըզհետ և դիմագրաւք խնդան
յուսով յասպարէս ։

Են մեծայոյսք հարուլ ըզքաջս վարել
զնրժոյգան աննըման .

Այ մանկամիտք, որք յապաժոյժ գունեալք յարիւն, ոչ դարձան ։

Մահ Աւգոմեդ գուժեաց նոցա . բայց
նախ 'ի Զեւս տըւեալ ձայն,

Անդէն կորովք աշխոյժք հրահոս 'ի խոր
սրտին տան հորդան ։

Գարձաւ արագ առ մըտերիմն Աղկիմեդոն
զայս ազդեաց,

«Մի տարագէմ յինէն, ո՞վ քաջ, տարցիս
զամուրս նրժուգաց .

Մօտ ինձ վարեա, ես 'ի թիկանց լըւայց
դոցա ըզթասիւն,

Քանզի անշուշտ Հեկտոր այսօր ոչ տացէ
դուլ իւր թափոյն,

Մինչև զնրժոյգսըն գիտապանծ զԱքիւ-
 լէսին կապտեսցէ ,
 Եւ աստ ըզմեզ տապաստ արկեալ զԱ-
 քայեցւոց կարգն եղծցէ :
 Կամ ո՛ր գիտէ , թէ 'նդ նահատակս և
 ինքն անկցի յօրահաս » .
 Ասաց , գոչեաց ձայն մեծագոչ 'ի Մե-
 նեղաւ և յԱյասս :
 « Արի՛ք Այասք , Մենեղաւէ , դուք զօ-
 րավարք անվըկանդ ,
 Պահկերու-թիւն ըզգիականդ քաջաց 'ի
 ձեռս տուք յաւանդ .
 Թո՛ղ մեռելոյն նոքա 'ի պահ թափ վա-
 նեսցեն ըզխօլաց ,
 Դուք աստ եկայք վանել , ո՛վ քաջք , զօր-
 հասն ըզմեր կենդանեաց :
 Զի աստ հըզօրք մեզ գերարտօսըր ածել
 մարտիւ գիմեալ գան ,
 Այս է Հեկտոր և Ենէաս Տրոյեանց ա-
 ընքն աննըման :
 Այլ զի գրաւեալ են ելք իրացդ 'ի գեցն
 'ի գոգ բարեբաստ ,
 Օ՛ն արդ և ես սլացայց 'ի տէգ և հոգ
 կայցի Արամազդ » :
 Ասաց , ճօճեաց ձրգեաց կըշիւ զաշտէն
 երկայն նիզակի ,
 Հար և խոցեաց զԱրեւոտսին ըզկուռ աս-
 պար բոլորչի .

Ոչ հանդարտեաց սաստիկ տիգին , այլ
 Թափանցանց սայրասուր
 Խոր ընդ կամարն անց 'ի գանձակն աչ-
 տէն վարսեալ հաստամուր :
 Որպէս յորժամ ըզսուր տապարն այր 'ի
 բազուկ քաջաբուն
 Առեալ յետուստ իջուցանէ 'գ եղջիւրս
 վայրագ արջառոյն ,
 Ըզնեարդն ողջոյն խրզէ զնորա նա վեր
 վազեալ տապալի ,
 Այսպէս անդ հէգն 'ի վեր վազեաց
 զարկաւ յորսայս ըզգետնի :
 Ընդ փեռեկեալն ընդ ախոնդիս տէգ
 սայրասուրն 'ի ծայրին
 Սարսէր ճօճան հարուստ մի ժամ մին-
 չև քաղեաց ըզհոգին :
 Բայց և հեկտոր յԱդոմեդոն փայլակ-
 նացաւ 'ի յաշտեայն ,
 Նորա դէտակն հանդէպ կալեալ և 'ի
 դերև զայն եհան .
 Քանզի ճեպեաց և 'ի խոնարհ խուն մի
 կըքեալ զառաջեալ ,
 Վերոյ ուսոյն քերեալ երկայն աշտէն
 յերկիր վարսեցաւ .
 Վարսեալ այնպէս նիզակաբունն էր 'ի
 ծայրին երերուն ,
 Մինչև 'ի սպառ վատեալ Թափոյն հան-
 դարտեցաւ տէգն 'ի բուն :

Անշուշտ յայնժամ ձրգեալ սուսերս և
 խառն ընդ գիրկ կըռուէին ,
 Թէ ոչ Այապքն ամուլք քաջաց ըզլժափ
 նոցայն կարճէին :

Այն ինչ անդուստ երևեցան նոքա 'ի
 յօգն համհարզի ,

Շըրտեալ հեկտոր և զգուշացեալ անդ-
 րէն ընդ կրուկ վերջոսնի .

Յահ ըմբռնեալ և Ենէաս և Քրոմիոս
 տեղի տան ,

Անդ դիտապաստ լըքեալ զԱրետ 'ի յա-
 սպաժոյժն իւր արեան :

Բայց Աւգոմեդ արագավազ իբրև զԱ-
 րէս խոյացաւ ,

Արձանացաւ կապտեաց ըզզէնս , ձայն
 զայս կարգաց ճոխաբար .

“ Ո՛վ , գիւր սրտի առի խուն մի 'ի մահ
 իմոյն Պատրոկղէայ ,

Թէպէտ հարեալս այս դիտապաստ յոյժ
 է խոնարհ քան ըզնս ” :

Ասաց և առ զկապուտ զինուցն , ա-
 րեամբ գունեալ էր համակ .

Եդ զայն 'ի կառս և ինքն անդրէն 'ի
 նոյն սարսեաց վերելեակ .

Ձեռքն ոտքն 'ի բուն եկին քաջին ընդ-
 ասպաժոյժ մեծ արեանց ,

Որպէս յորժամ առիւծ ըզցուլ ժանեօք
 մալեաց գիշախանձ :

Եւ մարտ գարձեալ ըզՊատրոկղեալ
բաղմակական յուզեցաւ ,

Զ'ի բոց մարտին և ինք' Պալաս յերկնից
յերկիր խոյացաւ :

Ամարոպայինն յըլեաց ըզնա վառել ըզ
Յոյնս անպայման ,

Զի և նորա խորհուրդ մըտաց քաջ իսկ
չըլեալ էր յայնժամ :

Որպէս յորժամ մարդկան ազգի ըզծիրա
նին ծիածան

Առեալ ձրգէ մեծատարած նա 'ի յերկ
նից 'ի նըշան 81 ,

Թէ արհաւիրք պաշարեսցեն և յոյզք
մարտից և գոռմունք ,

Կամ Թէ զաշխարհ գրաւեալ կալցեն
սառնասառոյց ձրմերունք ,

Եւ անդ 'ի գործ հողալատասակ ձեռք
լքանին մըշակաց ,

Ի նոյն տըխրեալ և վըշտահար դասակք
հեծեն պաճարաց :

Նըման Պալաս զամբ ծիրանին արկեալ
անձին քօղ 'ի զարդ ,

Մուտ ընդ խուժանն Աքայեցւոց զայր
այր զարթոյց առ 'ի մարտ :

Չայն փուլթացոյց առ Մենեղաւ զի
կայր արին մերձ առ նա ,

Խրախոյս յորդէր ըզտիպ և զձայն առեալ
զազգոյն Փիւնիկեայ .

«Ի քեզ անշուշտ, Մենեղաւէ, 'ի քեզ
 հարցեն մեծ քրքիջ,
 Թէ խաղ այդպէս լիցի մեծին սերտն Ա
 քիլէայ աջակից.
 Թէ շուկք արագք 'ի Տրոյիա կեղեքես
 ցեն զնա ողջոյն,
 Առակ լիցիս. օն առեալ, քաջ, ձայն խրա
 խուսի տուր զօրուն » :
 Լըւաւ արին և ծերունւոյն կրկնեաց
 արագ անդրադարձ .
 « Հայր մեր արդոյ, դու հինօրեայ, լուր
 Փիւնիկէ դիւցազգեաց .
 Յանկարծ զտարափ վանեալ նետից էր
 ինձ Պալլաս հովանի ,
 Եւ ես անշուշտ 'ի սրահ մարմնոյն ցանգ
 զոտս 'ի բոյս հաստէի :
 Քանի թախիծ և ցաւ անչափ գրաւեաց
 զողիս մահ գորա .
 Ո՛վ, բոց ծախիչ է այդ Հեկտոր, մեզ
 ցանգ յաշտէն մահ գուժայ :
 Այդ վերագիդ ինքն Արամազդ շուք արդ
 ձօնէ հանասազ » .
 Ասաց Խարտեաշն, 'ի լուր բանին խնդաց
 խաժակն Աթենաս :
 Խնդայր, զի նախ քան դիցն ողջոյն նը
 մա յողոք նա անկաւ ,
 Անդէն 'ի ծունգս և յուս քաջին շնչեաց
 հաստեաց ոյժ անբաւ .

Ի լանջն եհեղ զանվանելի ըզթափն ըզ-
գոռ ըզճանճին ,

Որ ցանգ վանեալ և ցանգ առնէ դարձ
անվէհեր 'ի մարմին ,

Խնդրէ կրճեղ և անձկայրեաց է մարդ-
կայնոյն նա արեան ,

Այսպէս յայնժամ աշխոյժութիւնք 'ի
սիրտ քաջին վառեցան :

Պիմեաց եկաց առ Պատրոկղեաւ և շո-
ղացոյց ըզնիզակ ,

Հար ըզՊողէս 'ի Տրոյացոց զԵտիով-
նեան զայր աւագ :

Էր քաջ և ճոխ, սրմա հեկտոր շուք մեծ
'ի զօրն հարկաներ

Զի էր նրմա այր փարելի խրախճանակից
սա ընկեր :

Երբ սա փախէր թիկնադարձոյց , կըշ-
ուեաց խարտեաշն ընդ կամար

Եւ թափ յայնկոյս անցոյց զաշտէն , գո-
փեաց անկաւ նա 'ի վայր :

Արագ յայնժամ Մենեղաւոս սըացեալ
և ճեպ ետ անդուստ ,

Կորզեաց առ իւրսն ըզՊատրոկղէս Տրոյ-
եանց ձեռին 'ի ներքուստ :

Ետես Փեբոս արձանացաւ հուր 'ի հեկ-
տոր բորբոքեաց ,

Եւ զինքն 'ի ախպ Ասիոսեան Փենեպո-
սին ճըշգրտեաց .

Էր սա նըմա արգոյն 'ի հիւրս բնակէր 'ի
 տունս Աբիւղեան ,
 Ի տիպ սորա վէհ Քաջաղեղն երգիծա-
 կան սարսեաց բան .
 “ Ի քէն , հեկտոր , ո՞ ոք յասպս զահի
 հարցի յոյն որեար ,
 Երբ աստ ըզքեզ պակոյց մարտիկդ այդ
 արդնընկէց ապիկար .
 ԸզՄենեղան ասեմ խարտեաչ խոնարհ
 'ի մէջ քաջազանց ,
 Որ ըզՊատրոկղ արդ միայնիկ 'ի Տրոյա-
 ցւոց առ կորզեաց .
 Դա ըզհամհարզ քո նահատակ 'ի մահ
 վարեաց քաջասէս ,
 Ըզմըտերիմդ ասեմ զարին զԵտիոնեանն
 ըզՊոզէս ” :
 Լըւաւ հեկտոր , ցաւ խաւարին պա-
 տեաց ըզտիրան իբրև մէգ ,
 Դիմեաց 'ի մէջ նահատակաց 'ի զէն վա-
 ուեալ 'ի հրաշէկ :
 Դիոս յայնժամ ըզվերնջազարդն աս-
 պար փառաց լուսափայլ
 Բըւնահարեաց , և ողջ զԻդա 'ի յամպ
 պատեաց և 'ի բալ .
 Շարժեալ զասպարն յորոտահեղ շանթ
 հատանէր սրտաթափ ,
 Տրոյեանց նըշան ազգէր յաղթող , Յու-
 նաց փախուստ տայր խուճաս :

Նախ բիովտեան ցանգ դիմագրաւըն Պե-
նեղոս առ փախուստ ,

Զի տիգախոց թեթևակի 'ի յուսն հարաւ
'ի վերուստ .

Պողիւգամայ սայրըն ցետեաց ըզնա ցը-
բունն ոսկերաց ,

Զի սա քերեալ մօտ առ նովաւ եհար
յանկարծ և խոցեաց :

Իսկ և Հեկտոր հար ըզլէգոս ճեա յԱ-
կրիւնեայ 'ի քաջէն ,

Ըզնա ձեռին հար 'ի պըտուղն և կասե-
ցոյց 'ի մարտէն :

Սասանեցաւ և շուրջ հայէր 'ի սիրտն ող-
ջոյն յուսաբեկ ,

Տէգ 'ի ձեռին նա ոչ բաւէր ընդ Տրոյա-
ցւոց գալ 'ի վէգ :

Լսյն ինչ Հեկտոր թափ 'ի Ղեգոս դիմէր
արին քաջալանջ ,

Իդոմենէս 'ի վերտ զրահիցն եհար յըս-
տինսն առ 'ի լանջ :

Բեկաւ 'ի բունն երկայն աշտէն , Տրոյ-
եանք բարձին աղաղակ .

Տիգեաց Հեկտոր յԻդոմենէս , որ էր 'ի
կառս վերելեակ .

Վրիպեաց խուն մի , հար ըզՎիրան Մե-
րիոնին պաշտօնեայ ,

Որ ընդ նըմա 'ի կառավար գայր նա 'ի
մեծն 'ի Ղիւկոտայ :

Լիք Մերիոն յառաջ ըզնաւս , ուղի հոր-
դէր հետեակ

Եւ ինքն անշուշտ յիւրում մահուան շուք
տայր Տրոյեանց գերունակ .

Այլ Կիրանոս աճապարեալ թափեաւ ա-
րագ նրժուգաց ,

Ըզգառնութեան օրհաս վանեալ նրմա
ըզկեանս հանդերձեաց .

Փոխան տապաստ ինքն հեկտորայ 'ի
բուռն անկաւ վիրագին ,

Ընդ ծամելեօք և ընդ ունկամբն հարեալ
'ի սայր նիզակին .

Շար զատամանց թափեաց սուր տէգն ,
ըզկէսն եհատ ըզլեզուին ,

Ինքն 'ի կառացրն հոսեցաւ , քեմուխաք
անկան 'ի գետին :

Ճեպ Մերիոն տըւեալ ձեռացն , յերկիր
կըքեալ 'ի խոնարհ

Աւ զերասանս , կարգաց արագ ձայն յի-
գոմէն ազգարար .

“ Մըտրակ 'ի կուշա անկիր վաղվաղ գու-
'ի նաւացն 'ի հանդէս ,

Ձիք այլ Յունաց չիք յաղթութիւն , գու-
խակ քաջիկ տեսանես ” :

Ասաց , և նա 'ի կայս նաւաց ճեպէր ըզ-
ձիս գիսապանծ ,

Ձի և զնորա մեծ արհաւիրք զոգին ողջոյն
պաշարեաց :

Ընդ ակներև տես Մենեղաւ տես և
Այսս յանդիման ,

Զի Տրոյացւոց շուք Արամազդ տայր փո-
խադարձ յաղթուածեան :

Հայա բարբառ զայս արձակեաց Տե-
ղամոնեան մեծն Այսս ,

«Երդուեալ 'ի դիս , և մանկամիտ այր ոք
քաջիկ դիտէ զայս .

Գիտէ զի այժմ հայրն Արամազդ Տրոյ-
եանց ձօնէ մրցանակ ,

Զի ողջ դոցանեաք և սրաքք հարուն կը-
շիւ նըպատակ .

Թէ ըզքաջաց թէ զանարեացն ինքնին
ուղղէ Ամպրոպեանն ,

Իսկ մեր սրաքք անկեալ յերկիր զօր
հարկանեն ընդունայն :

Բայց և այնպէս ծն առեալ մեր խոր-
հուրդ կալցուք քաջիմաց ,

Զի արդ հնարիմք ըզմեր դիակն առնուլ
տանել առ 'ի բաց :

Նա և 'ի դարձ մեր ողջանդամ լիցուք մե-
րոցն 'ի հըրճուանք ,

Որ այժմ 'ի մեզ ակընկառոյցք կան թախ-
ծագին հասարակ .

Ասեն , թէ մեզ գոուն Հեկտորայ չիք այլ
ժուժալ քաջ բազկին ,

Այլ թէ ողջոյն մեք մարդածախ լիցուք
'ի զոհ վերագին :

Ո՛վ, թէ աստի դք փութապէս գընայր
 գուժկան Աքիլէայ •

Կարծեմ չև է լուեալ քաջին թէ սիրե-
 լին տապաստ կայ :

Բայց գուժաբեր չև տեսանեմ նըմա յոյն
 այր զոք զիսկան ,

Այնչափ մեր քաջքն այնչափ նըժոյգքն
 'ի մէգ մածան թանձրութեան :

Հայր Արամազդ , գէթ փարատեա մէգ
 զայս Յունաց զանարև ,

Ծագեա ըզլոյսդ և մեր աչաց տո՛ւր տե-
 սութիւն ակներև •

Անկցուք տապաստ գէթ յարևու , թէ
 այդ է քեզ 'ի հաճոյս " •

Ասաց , և հայրն 'ի գութ հարաւ տե-
 սեալ քաջին զարտասուս :

Արագ արագ զամբ փարատեաց և բա-
 լաձիգք սարղեցան ,

Արփւոյն ճաճանչ հատաւ կրկին , գայր
 մարտն ողջոյն յերևան :

Յայնժամ Այաս 'ի Մենեղաւ ձայն զայս
 արագ բարբառէր •

“ Շուրջ զականեա , Մենեղաւէ , արի
 մարտիկդ անվէհեր •

Թէ զնեստորեան զԱնտիզոքոսն ողջ
 գըտանես տակաւին ,

Ձայն տուր նըմա երթալ գուժկան Աքիլ-
 լեսի զիւցազին 82 :

Բօթ կարդասցէ, թէ տապաստ կայ իւրն
 համահարզ նազեւինն ։

Ի լուր ձայնին Մենեղաւոս արագ յա-
 բեաւ քաջարին ։

Յարեաւ որպէս ՚ի պառակէն առիւծ
 խաղայ բաշապանծ ,

Խոնջ և վաստակ ՚ի վէգ ելեալ հովուաց
 ընդդէմ և գամփռանց ,

Նոքա ոչ տան գօշել նրմա զարջառն ըզ-
 յաղթ և ըզգէր ,

Դէմ սովատանջ կան գազանին տըքնեալ
 ողջոյն ըզգիշեր ,

Մոլեալն ՚ի ճարս զուր խոյանայ , զի
 ձիգք նետիցն և տարափ

Կըշիւ ընդդէմ ՚ի կուռ բազկաց տեղան
 ամբաւ առ ՚ի թափ ,

Հրոսեն և ջահք , յորոց գազանն թէ-
 պէտ մոլեալ ցանգ դողայ ,

Մինչև ուրեմն ընդ արշալոյսն թախծեալ
 ոգւով տեղի տայ ,

Այսպէս Խարտեաշն յոյժ սրբտառուչ
 ըզՊատրիկէս լքբաներ ,

Մեկներ գընայր բայց և ՚ի դէպն Աբայե-
 ցւոց զանգիտեր ,

Մի՛ զարհուրեալք ըզտարփաւին աւար
 թողցեն թշնամեաց .

Կայր , շատ խրախոյս Մերիոնին տայր
 ՚ւ Այսսից կորովեաց .

« Աղէ Այաբ և Մերիոն Աքայեցւոց
աննրկունք ,

Յուշ ձեզ , ո՛վ քաջք , հիքացելոյն մեր
Պատրովդէայ բարք քաղցունք .

Զխորդ հեզ էր մինչ դեռ շնչեր և բո-
ւրից էր սիրուն .

Աւա՛ղ , ըզնա կապտեաց 'ի մէնջ անգուծ
օրհասն 'ի մահունն » :

Ասաց խարտեաշն , յարեաւ անդէն ճե-
պով զուղին հատանէ ,

Եւ աստ և անդ շուրջանակի կորովաբիբ
ականէ :

Որպէս արծուի , զոր յոյժ սրակն առ
հասարակ համբաւեն

Բնակից թըռչնոց գող գերազանց որչափ
ընդ օդ սաւառնեն ,

Զի ոչ թաքչի յաչաց նորա , թէպէտ
է յամբս վերելեակ ,

Ի թաւ 'ի թուփս մացառախիտ ղօլեալն
արագ նսպաստակ ,

Այլ շէշտ 'ի նա հոլաթևեան սլանայ
յօդոց 'ի բարձանց ,

Եւ ըմբըռնէ քաղէ ըզըռնչն հաւն այն վի-
րագ գիշախանձ ,

Նըման արգոյդ Մենեղաւէ , աչք լուսա-
լիբք քո յայնժամ

Ի խումբ քաջաց նիզակակցաց առ հասա-
րակ յածեցան ,

Թէ ո՞ւր արդեօք ըզնեստորեանն ողջիկ տեսցես տակաւին .

Անդէն և անդ դիտեաց ըզնա 'ի թև ձախոյ բանակին :

Անդ կայր և ձայն նիզակակցաց կարգայր 'ի մարտ քաջաւեր .

Դիմեաց Խարտեաշն եկաց 'ի մօտ ձայն մի կարգաց գուժաբեր .

« Վայ վայ , դիւցազն Անտիղոբէ , բօթ մի լըսել արի եկ ,

Հրեշտակուժիւն տամ գուժալից . ո՞վ , այն դիպեալ չէր երբէք :

Բա՛ մի անգամ թէ ականես , քաջ ճանաչես դու 'ի բուն

Զի մահ Յունաց նիւթէ աստուած և Տրոյացւոց յաղթուժիւն .

Մեռաւ արին Աքայեցւոց , դիտապասուկայ Պատրոկղէս .

Ո՞վ , անձկայրեաց գուժ և գորով թողնա Յունաց մեծապէս :

Փութա 'ի նաւս , երթ Աքիլլեայ արագապէս գոյժ կարգա ,

Թուուցեալ առցէ գէթ մերկ ըզդին . զէնք կապտեցան յԵկտորայ » :

Ընչ ինչ գուժեաց , Անտիղոբեայ ոսկերքն 'ի բուն սարսեցան ,

Նըլապ յերկար եկաց այնպէս իբր անբարբառ նա արձան .

Աճքն արտասուօք լըցան քաջին , ձայնն
 յօդաւոր կարճեցաւ ,

Բայց և այնպէս 'ի լուր ձայնին Մենե-
 դաւեայ փութացաւ :

Առեալ ըզզէնսն և Լաւդոկեայ քաջ
 համհարզին յանձն արար ,

Որ նրժուգաց սալասըմբակ էր առ նովաւ
 կառավար :

Աճք իւր հարեալ 'ի գերարտօսը ոտք իւր
 ճեպէն 'ի գաշտէ ,

Գնալով գընայր զի Աքիլեայ բօթ սիրե-
 լոյն գուժեացէ :

Այլ զի յայնժամ քո , Մենեդաւ , գութն
 ըստիպեաց գորովոյն ,

Տալ մխիթար անզօրավար տըրտմահա-
 ղորդ այն զօրուն .

Քանզի յորժամ Անտիղոքոս զիւր զօրա-
 կան լըքանէր ,

Ըզհետ քաջին անձուկ սրտի զօրականին
 տոչորէր .

Դարման տարար յըղեալ նոցա ըզթրա-
 սիւմեդ կորովին ,

Եւ գու 'ի սրահ քոյն Պատրոկղեայ յա-
 րեար ճեպով վերըստին :

Եկն առ Այասս եկաց կարդաց հրեշտա-
 կութեան զիւր հանդէս ,

« Ես զԱնտիղոք ճեպեցուցի գուժկան
 առ մեծն Աքիլէս ,

Գոյժ անդանդաղ տալ սիրելւոյն . այլ
օն և օն դա ոչ գայ ,

Թէպէտ սաստիկ ընդ վերագին խելթա-
հարեալ Հեկտորայ .

Նա ոչ կըռուի ընդ Տրոյացւոց այնպէս
մերկիկ և անզէն .

Խորհուրդ ուրեմն ուշիմացեալք ալէ
կալցուք մէք այժմէն .

Զխորդ ըզմեր դիակն առ մեզ ոգւով կոր-
զել քաջամուր ,

Եւ 'ի հրօսել 'ի մեզ Տրոյեանց գող յօր-
հասէն անձնապուր " :

« Քաջ է խորհուրդդ , 'ի նոյն Այաս
ձայն անդրադարձ զայս արար ,

Բան մեզ , արգոյդ Մենեղաւէ , քաջ խոր-
հեցար և արդար .

Արի դու ինքն և Մերիոն քաջին մըտէք 'ի
ներքոյ ,

Եւ շալակեալ բարձէք ըզդա , խազմին
տարայք արտաքոյ .

Մէք աստ ամուք ձեզ վերջապահք նա-
հատակեալք 'ի յուղին ,

Մարտ յարդարեմք ընդ Տրոյացւոց և
Հեկտորայ դիւցազին .

Ի նոյն աշխոյժ մէք համաբունք և համ-
անուանք դիպեցաք ,

Որք և յառաջ միշտ անմեկինք ըզդուն
Արէս վանեցաք " :

Չայն ետ Այաս , նոքա ըզգին գրկեալ
 բազկօք վերառին ,
 Բարձեալք այնպէս քաջակորով և ճո-
 խաբար տանէին :
 Յետուստ նոցա Տրոյեանց գոռին ա-
 ղաղակին բարձրանայր ,
 Յորժամ զերծեալ զորս գիական տեսին
 նոքա վատաբար :
 Հա՛ միագունդ արագավազք իբրև բա-
 րակք քաջազօր ,
 Որքան զորսորդ սրանան յառաջ ըզճետ
 կրնճին վիրաւոր ,
 Վազեալ այնպէս յառաջագէմք սահմա-
 նաւոր ասպարէզ ,
 Անձուկ բերեն արագ արագ զորսն առ-
 նել գէշագէշ ,
 Այլ երբ դառնայ ժանեղ գազանն յոյժն
 ասպատան անվրկանդ ,
 Բարակքն յայնժամ խուճապ ընդ կրուկ
 կէսք աստ օձտին և կէսք անդ ,
 Այսպէս Տրոյեանք հրոսակ կապեալ
 ցանդ ասպարէս հարուստ մի ,
 Ի սուր սուսեր վանեն խոցեն ՚ի տէգ նի-
 ղակ երկսայրի .
 Այլ մինչ Այասքն ահեղակերպ դառ-
 նան կըքրել ՚ի սպքար ,
 Եւ հրոսակին դիմագրաւեալք արձանա-
 նան զերթ սպառուար ,

Տրոյեանց յայնժամ՝ ահաբեկեալ գոյնն
հատանէր երեսաց ,

Եւ 'ի սպայքար մեծ գիականն ժլտէր ոչ
ոք 'ի քաջաց :

Լսապէս նոքա ըզդի քաջին յանդորր
հանեալ անվեհեր

Տանին 'ի նաւս , թէպէտ խօշիւն յետուստ
ասեղ՝ հատանէր :

Չորօրինակ բոց հըրդեհեալ բազմաժո-
ղովն 'ի քաղաք

Պատի յանկարծ սաւառնելով 'ի թև թա-
փոյն իւր արագ ,

Բոց ճարակօքն ամեհացեալ , բնաջինջ
յաճիւն տունք դառնան ,

Երբ և շահեալ 'ի հրակիզման հողմն շնչե
բռնութեան ,

Ասապէս հրաշունչ երիվարաց և քաջ
մարտկաց հրոսակին

Խօշիւնքն ըզհետ ահըս նոցա սակուցա-
նողս գուժային :

Համայն նոքա , զորօրինակ ամուք ջրեաց
կորովեաց ,

Որք հեռեալք ընդ առապարս 'ի վայր
խաղան 'ի լերանց ,

Խաղան ճրգեն ընդ ամափայս սըմբակ
հարեալք միաբան ,

Կամ մեծ գերան կամ 'ի կազմած նաւս
կերտին յաղթ հեծան ,

Հատեալք զուղին խոնջք քրտնաբեկք ,
 հուժկացն ոգիք սրարտասին ,
 Սապէս ըզդին այն կորովիքն յոգւոց թա-
 սեալք տանէին :

Նոցա Այասք լեալ վերջապահք սան-
 ձեն խօլացն ըզպայքար ,
 Որպէս ըզթումք ընդդէմ ուղիսից անտա-
 ռախիտ բարձուն դար ,
 Որ 'ի խոնարհ սփռեալ տարած առ հա-
 սարակ մինչ 'ի դաշտ ,
 Ըզթափ սաստիկ ըզհոսանաց սանձէ զգե-
 տոց մեծասաստ ,

Ըզջուրն աստ անդ ընդ դարափոր շրջէ
 թաւուտն այն ահեղ ,

Զի ոչ բաւէ վանել ըզնա յորդահոսանն
 այն հեղեղ ,

Նրման Այասք ըզՏրոյացւոց թափ ըզխօ-
 ւացն ուղիսօրէն ,

Մնվանելի արձանացեալք ընդ կրուկ վա-
 նեալ վարատեն :

Այլ կուռ նոքա խուժան տըւեալ , և 'ի
 նոսա քաջք կրկին

Հահատակեր մեծն Ենէաս հեկտոր գո-
 ռայր կորովին :

Զորօրինակ ամբ մի սակուաց և կամ տար-
 մից յոգներամ

Խուճապելով թեւեն փախչին կարկաջ
 բարձեալ մեծաձայն ,

Քանզի դիտեն 'ի հանդիպոյ շէշտ խոյա-
 նալ ըզբազէ ,
 Որ ասընկէց մանուկնց Թըռնոց ողորմել
 մահ ածէ ,
 Ըզնոյն Հէլէնք վանեալ յԵնեայ և յԵկ-
 տորայ նիզակին ,
 Գուժիւ մեծաւ անպատերազմք ընդ
 դաշտն ասիւ սուրային :
 Ձէնք գեղեցիկ շատք փախըստեայց ան-
 կեալք լըցին ըզխըրամ
 Արցին զափունա , և չէր խազմին չէր գուլ
 վայրիկ մի անդամ :



ԵՂՒԼԱԿԱՆ



ՀԱԳԵԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԸ .

ՆԱԽԱԴՐՈՒԹՒՒՆ

Անտիղոբոս գուժէ Աքիլէայ զմահ
Պատրոկղէսի : Կիրք արէտանջ ցաւոցն Ա-
քիլէայ : Թեախ գիմէ միսիթար տալ որ-
դւոյն : Հեկտոր խիզախէ տիրանալ դիա-
կան Պատրոկղէայ : Աքիլէս ընդ սատ-
նէշն գայ յերևան Տրոյացւոցն , և ահիւ
խուճապին նոքա : ԶՊատրոկղէս հան-
գուցանեն 'ի վրանն Աքիլէայ : Ատեան
Տրոյացւոց , ատենախօսութիւնք ընդդի-
մաբանք Պուղիւդամասայ և Հեկտորի :
Տրոյացիք կան մնան 'ի դաշտի : Ողբ Ա-
քիլէայ 'ի վերայ մարմնոյ բարեկամին :
Թեախ գնայ առ Հեփեստոս , խնդրել
'ի նմանէ զնորագործ կազմած զինուց
հրաշակերտից վասն որդւոյն : Նկարա-
դրութիւն շնաշխարհիկ վահանին Աքիլ-
լէայ :

Տեսարանն է 'ի վրանին Աքիլէայ և
ապա 'ի տաճարին Հեփեստոսի :



ԵՂՒԼՆԸՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԸ.

ԻՐԲԵՒ այսպէս հուր բոցակէզ մարտին
վառէր սաստկապէս ,
Անդուստարագն Անտիղոքոսե-հասգուժ-
կան յԱ.բիլէս :
Եգիտ ըզնա 'ի հանգիսոյ բարձրակառոյց
իւր նաւաց ,
Կայր և յուզէր զայն ինչ գիպեալ սա-
տահարին մեծ զարկած .
Յոգւոց դիւցազն հանեալ ասէր մըղձ-
կեալ 'ի խոր 'ի սրտին ,
«Բա՛բէ բա՛բէ, ընդէր է այդ զի Յոյնք ան-
դրէն խուճապին :

Իսկ զի բընաւ դոքա 'ի նաւս գան վարա-
տեալք 'ի դաշտէն ,

Մի՛թէ աստուածք զայն խէթ ոգւոյս ,
աւանդ , 'ի գլուխ ինձ հանցէն .

Ձայն զոր երբեմն արգոյ մայրն իմ գու-
շակօրէն ինձ ասաց ,

Թէ կենդանեաւ իմով հասցէ արկած քա-
ջին Միւրմիդեանց .

Տասպաստ արկեալ նա 'ի Տրոյեանց զար-
փին լըքցէ ոսկեկայ ,

Սիրա իմ գեղու . . . մեռաւ անշուշտ զա-
ւակն արի Մենետեայ :

Ա՛յ հիքացեալ , պատուէր ետու թէ ըզ-
տրոյեան վանեալ հուր ,

Դարձցի 'ի նաւս և ընդ Հեկտոր 'ի վէդ
չելցէ նա 'ի զուր :

Մինչ դեռ այսպէս կայր ոգետանջ նո-
րա խորհուրդն 'ի ծրվման ,

Եկն յերևան արձանացաւ Անտիզոքոսըն
գուժկան :

Ձերմ արտասուս կայր և հեղոյր , 'ի նոյն
և գոյժ բարբառէր .

« Աւանդ , Պեղեան , լուր ինձ դիւցազն
հրեշտակուծիւն բօթաբեր .

Իցիւ թէ չէր դիպեալ երբէք . դիտա-
պաստ կայ Պատրոկղէս ,

Եւ շուրջ ըզմերկ ըզդիակամբ մարտ բոր-
բոքի սաստկապէս .

Ըզզէնս Հեկտոր ըզգեղեցիկսն առ կո-
ղոստեաց կորովին » .

Գուժեաց , և ամս պատեաց զԱքիւլ
ամս մի ցաւոց խաւարին :

Աճիւն մոծիր կրկին ափովն առեալ
զգըլսովն արկանէր ,

Եւ թաթաւեալ ըզնոր հաշուք ըզտիս
դիմաց մըրճոտէր :

Եղծ արջնաթոյր մոխիրն ըզճորձ բու-
րեանն 'ի հոտըս պէսպէս ,

Գետնատարած անկաւ մեծն այն և
վայր գրաւէր մեծապէս .

Ըզփունջ վարսից փետէր ձեռօքն և ա-
ղարտեալ եդ յառակ ,

Վազեն անդուստ Աքիլլէսի և Պատրոկ-
ղեայ աղաննեայք .

Յոգիս հարեալք տագնապեցան և ճիչ
բարձեալ ցաւադին ,

Եւ 'ի սեմոց խուժեալք 'ի դուրս շուրջ
կան քաջի դիւցազինն :

Կան և ըզկուրծս առեալ կոծեն և ծունկը
նոցա կըթոտին ,

Յոգւոց հանէր և Անտիղոք յարտօսը հա-
րեալ 'ի ջերմին .

Պինդ ըզձեռացն Աքիլլէսին ունէր ոգւով
սրտակաթ ,

Զի զանգիտէր թէ նա ընդ փողն իւր ան-
ցուսցէ սուր երկաթ :

Սահան ասեղ բառնայր Աքիւլ, մինչև
 լըլաւ մայրն արգոյն,
 Լըլաւ յալուցս 'ի խոր ծովուն առ հօր
 բազմեալ ծերունւոյն :
 Ո՛հ հառաչեաց, և ըզնովաւ շուրջ բակ
 առին գեղեցիկ
 Որչափ 'ի յալս են 'ի ծովուն Ներեան
 դըստերք գիցուհիք .
 Էր անդ Գլաւկէ, Կիւմոդոկէ, և ընդ նո-
 սին թալիա,
 Եւ Նեսէա, Իսպէ, Թոա, էր և աչեղն
 Ալիա .
 Կիւմոդոյէ և Ակտէա, անդ հետևէր
 Լիմնորէ,
 Եւ Մեղիտէ, Ամիթիթոա և Յիերա, Ա
 գաւէ .
 Նոյն և Դոտոն և Պրոտովէ և Փերու-
 սա, Դիւնամէն,
 Ամիինոմէ, Կալլիանիր, և ընդ նոսա Դէք-
 սամէն .
 Անդ Դորիա և Պանոպէ և Գալատէ
 անուանին,
 Կալիանաս և Նիմերտէ և Ապսեւդէ անդ
 էին :
 Եհաս անդէն և Կլիւմինէ և Յանիրա,
 Յանասսա,
 Անդ վարսագեղն Ամաթիա, Որիթիա և
 Մերայն 83 .

Եկին և այլ Ներեանանոյչքն որ են յա-
լուցս 'ի ծովուն,

Եւ ձիւնափայլն անդէն նոքօք լըցաւ
քարայրն այն 'ի բուն:

Աս հասարակ 'ի միասին ըզկուրծս ա-
ռեալ կոծէին,

Մինչև ուրեմն ըսկիզբն արար Թեախ
կոծոյ հանդիսին.

“Օ արթիք Ներեանք, քորք գերա-
բունք, 'ի լուր ձայնիս բազմակոծ,

Լիք խեղամուտ զիմ քանխօն յուղէ զո-
գին ծով ցաւոց.

Եղունկ եմ ես, աշխար ինձ մօրս ծնողի
քաջի զաւակի,

Աւանդ, զի ես որդի ծընայ ամբիծ և յաղթ
կորովի.

Վէհ դիւցազանց այդ իմ զաւակ էր բար-
գաւաճ զերթ բողբոջ,

Մնուցի ըզնա իբրև ըզբոյս յուռթի 'ի
վայր դաւարւոջ:

Ի յԵղիօն արձակեցի նաւատորմին յար-
շաւան,

Անդ նահատակ Տրոյեանց ընդդէմ մարտ
յարդարել գոռութեան.

Ողբ կարգացէք, զի գիրկ ընդ խառն
ես այլ ընդ նա ոչ լինիմ

Ի դարձ նորա առ Պեղէոս 'ի յօթեվան
հայրենին.

Յորչափ հատորդ այդ իմ հոգւոյս կեայ
տեսանէ ըյս զարփեան ,
Ի վշտատեսս և ես երթեալ չեղէց նրմա
պիտեան :

Բայց և այնպէս երթամ առ սէրս, հար-
ցեալ ըզնա և լըսեմ ,

Ձի՛նչ կո՞ծ զի՛նչ ցաւ գրաւեաց ըզնա
բացեայ գոլով 'ի մարտէն " :

Ասաց և ել ինքն յանձաւէն , յարտօսր
հարեալ գիցուհիք

Խաղան ըզհետ . ծով փեռեկի , շուք
տան նոցա յաղթ ալիք .

Հատեալ զուղին եկին հասին 'ի Տրոյիս
արգաւանդ ,

Ելին յափուհս և գեղեցիկ կարգ ըստ
կարգէ կացին անդ .

Ուր Միւրմիդեանց նաւացն հանդէս
շուրջ զԱքիլէաւ բակ գործէր ,

Ուր խոր յոգւոց հանէր գիւցազն երբ
մայրն եկաց առ ընթեր :

Ի կո՞ծ հատեալ մատեաւ յորդին առ
ըզգլխոյն փարելի ,

Յողէր արտօսր և ձայն առ նա արագաթև
բարբառի .

Օ՛ր լաս, որդեակ , զի՛նչ իցեն կո՞ծքդ
ասա մեկին մի՛ ծածկեր ,

Ո՞ր ցաւ ըզքո սիրտ ստարանեաց , մօրս
հարցողիս հան 'ի վէր .

Ի գլուխ ասա հան Արամազդ 'ի ձայն
որդուոյդ լեալ ամոք ,

Որպէս յառաջն առ նա 'ի վեր ձեռս
ամբարձեր մալթանօք .

Ո՞չ խնդրեցեր , թէ Յոյնք ողջոյն ժինչև
'ի նաւս վանեացին ,

Վիշաք կարևորք հասցեն նոցա , անձուկ
բերցեն քում բաղկին » :

Ի խոր յոգւոց հառաչելով ասէր արազն
Ա.բիլէս .

« Անշուշտ , մայր իմ , ինձ Ողբամպեանն
երես արար մեծապէս .

Այլ աղէ ինձ զի՞նչ քաղցրասցի երբ
Պատրովդէս կայ տապաստ ,

Վէ՛հ համհարզից իմ նազելին , վայելքն
ոգւոյս բարեբաստ .

Եր հաւասար նա իմ գլխոյն . մեռա՛ւ ,
կարդամ ինձ աւա՛ղ .

Ըսպան հեկտոր , առ յաղթ ըզգէնան .
զէնք հրաշակերոք և չքնաղ .

Չոր Պեղոսին դապք անմահից ձօն ձօնե-
ցին պանծալի

Յաւուր յորում հանին վիճակ .բեզ զան
կողին մահացուի :

Ո՛վ թէ յանդուռդս էր քո 'նդ անմահս
ընդ ծովայնոց լեալ բընակ ,

Եւ Պեղէոս կին մահացու ածեալ էր քո
փոխանակ .

Քեզ բեր թառաչ 'ի մահ որդւոյս քեզ
չեւանէր 'ի սրահն ,

Զի դու կրկին զ'ի տուն դարձեալս ոչ
գրգեսցես մայրօրէն :

Այլ ոչ ժուժայ սիրտ իմ, ո՛վ մայր, կեալ
տեսանել ինձ զարև ,

Եւ ոչ երբէք լինել մարդկան կենցաղա-
կից ակներև ,

Մինչ չև ինձէն զՅկտոր վերագն յոգի
հարեալ յիմ աշտեայ ,

Եւ նա յարեան իւր թաւալեալ ըզվրէժ
լուծցէ Պատրոկղեայ ” :

Վրկնեաց թետիս , և արտասուաց աչք
իւր թացեալ 'ի վրտակ .

“ Կամիս ուրեմն արագամահ լինել այժ-
մէն , ո՛վ որդեակ .

Զի քեզ օրհասն յետ Հեկտորայն փու-
թով լիցի ընդ առաջ ” .

“ Թո՛ղ , մայր , օրհասն , անդէն կարճեաց
զիւցազն յոգւոց հան թառաչ ,

Թո՛ղ , մայր , օրհասն իմ փութասցի , իբ-
րև ձեռք իմ վերջացան

Իմ Պատրոկղեայ յօգն հասանել նիղա-
կակցիս աննրման .

Աւա՛ղ , իմ սէրն անկաւ տապաստ 'ի
հայրենեաց տարածիդ ,

Ո՛վ , քանի՞օն յոգւոց սլարդէլ նա զև
կարդայր զօրավիդ :

- Եւ արդ քանզի է վըճարեալ դարձն իմ
 յերկիր հայրենի ,
- Եւ ոչ լոյս մի ես Պատրոկղեայ լոյս կեն
 սաբեր ծագեցի ,
- Ոչ և այլոց շատ համհարզիցն 'ի տէգն
 անկեալ հեկտորեան ,
- Այլ ես աստէն բաղմեալ 'ի նաւս, բեռն
 եմ երկրի անախտան .
- Ես որ Յուճնաց վերոյ բնաւից նահատա
 կեմ 'ի մարտի ,
- Թէպէտ քան զիս են են ճարտարք այլ
 քաջաբանք յատենի :
- Ո՛վ, թէ յաստուածս թէ 'ի մարդիկ
 հեռն ռխակալ կորիցէ ,
- Որ և ըզմարդ լիահանճար վայրենամիտ
 յարդարէ 84 ,
- Որ քան ըզմեղը անուշարար և առաւել
 քաղցրաբուխ ,
- Ի սիրտ կաթեալ քաջորերոյն աճէ բար
 դի իբրև ծուխ 85 .
- Հեռ այսպիսի Ագամեմնոն արքայն յու
 ղեաց և յիմ լանջ ,
- Բայց աղէ դէպքն այն մոռասցին , թէ
 պէտ և դէպք ոգետանջ :
- Բայց ես զարդիս զիմ անողոք սիրտնըւ
 ճեալ 'ի հարկէ ,
- Հարից զԵկտոր որ սիրայնոյս ըզկեանս
 եհատ յարևէ .

Յեա այնորիկ և ես զիմ մահն ողջունե-
ցից յօրհասին ,

Թէ զայն անմահքն և Արամազդ 'ի գլուխ
հանել հաճեացին :

Ոչ խուսափեաց յօրահասէն և ոչ քաջ
ազն հերակլէս ,

Այն որ վեհին Ամարոսայնոյ էր փարե-
լի մեծապէս .

Նըկուն ըզնա արար օրհասն և ոխն հե-
րայն մեծասաստ ,

Արդ նոյն օրհաս և զիս առցէ , թող աստ
անկայց դիտասպատ :

Բայց օն այժմիկ տարեալ անձինս հան-
դէս փառաց քաջնափայլ ,

Հարսին ումեք 'ի տրոյուհեաց և դարդա-
նեանց տաց ողբալ ,

Որ զգերարուօսը կրկին ափովն 'ի գերդ
այտից սրբեսցէ ,

Եւ 'ի խորոց իբր յանդընդոց յոգւոց թա-
ռաչ շատ հանցէ :

Գիտուն լիցին . շատ իսկ արդէն ես դը-
լացայ 'ի մարտէն ,

Մի՛ արդ , մայր իմ , զիմ թափն 'ի շուր
մի սանձեսցես դու յինէն » :

Լ ըռեաց Աքիլ , ձայն Արծաթոտն որ-
դւոյն կրկնեաց սպտափսան .

« Բանք անսպառիրք էն քո , որդեակ , մըր-
ցելք իրաւ և արժան :

Է գեղեցիկ յաղէտն եղբարց կալ նա
 հատակ զօրավիդ 86,

Բայց քո հրափայլ զէնք հրաշակերտք
 են առ Տրոյեանս աւադիկ .

Ձայն արգ հեկտորն ահեղախորոխտ զու-
 սովքն արկեալ և սիգայ ,

Այլ ոչ յերկար նա խնդասցէ , օրհասն
 առ դուրս հասեալ կայ :

Բայց դու զարդիս կայ անձնապահ 'ի
 գոռութեանդ 'ի մարտէն ,

Մինչև ինքնին քոյին աչօք տեսցես դառ-
 նալ զիս այսրէն .

Վաղիւ յորժամ արև ընդ ծայրսըն հար-
 կանի , առ քեզ գամ

Եւ յարքայէն քեզ հեփեստեայ կազմած
 բերեմ աննրման » :

Լսաց թետիս և 'ի յորդուոյն դարձոյց
 ըզգէմն նազելին ,

Ձայն ետ դարձի դիցանուշից քերց ծո-
 վաբնակ ակրմբին .

« Աղէ զարդիս լայնածաւալ մըտէք ծո-
 վուն դուք 'ի խոր ,

Եւ միաբան յայց յապարանս ելէք Ծե-
 րոյն ալևոր :

Գնացեալ ոճով հօր ծովայնոյն բան
 պատմեցէք զամենայն ,

Զի ես բարձուն Ողիւմպոսին արգ ելա-
 նեմ յարտեան :

Յայց առ Հեփեսոս առ վեհ դարբին
 ճարտարապետ ելանեմ,
 Թէ հաճեսցի ձօնել որդւոյս փայլակնա
 ցայտ զարդ և զէն ։

Լըւան նոքա իջին 'ի ծով և ընդ ալեօք
 սուզեցան ,
 Եւ արծաթոտըն Դիցանոյչ դէմ եգ 'ի
 տունն ողիւմսեան .

Չքնաղ ըզգէնսըն վաղ ընդ փոյթ որ
 դւոյն ածել գիւցազին ,

Արագ արագ 'ի յՈղիւմսոս ոտք Դիցու
 հւոյն ճեպէին :

Մինչ այս մինչ այն , 'ի Հեկտորայ հել
 լէնք վանեալ վերագէն

Մինչև 'ի նաւս մինչ յԵլլեսսպոնտ գու
 ժեալք փախուստ արագէն :

Նոքա յանդորր զնիզակակից զԱքիլլեսին
 Պատրոկղէս

Չև անդրագոյն քան ըզնետից հանեալ
 էին ասպարէս :

Չի Թափ տըւեալ առ 'ի դիակն հորգան
 կրկնեաց այրուծին ,

Եւ նահատակ անդ փայլակէր Հեկտոր
 իբրև բոց հրատին .

Երկես յետուստ դիմեալ վերագն զտից
 դիոյն բուռն եհար ,

Ճգնէր քարչել 'ի նոյն խրախոյս Տրոյ
 եանց գոչմամբ ձայն կարգայր .

Երկես և անդ Այասքն ստուք անվանե-
լիք աննըման

Տարամերժեն . այլ կայր վերագն յակաս-
տանի անսասան :

Մերթ յանկարծոյն սլանայր 'ի զօրն և
մերթ անշարժ 'ի վայրին

Գոչէր ասէղ և ոչ քայլ մի ընկրրկեցաւ
կորովին :

Որպէս զառիւծըն զամէհի սովեալն 'ի
ձիգ ժամանակ

Մերժեւ յորսոյն չեն բաւական հովիւքն
արթունք բացօթեապք ,

Նոյն Այասիցն ուժաւորաց ոչ գեղար-
դան ոչ թափոյն

Երես չարար հեկտոր արին , ոչ դոււ ա-
րար մեռելոյն :

Ընչուչտ յայնժամ քարչէր ըզնա տանէր
ամբաւ շուք փառաց ,

Թէ ոչ հողմոնն հիրիկ թեթև գայր 'ի
բանբեր ճեպընթաց :

Հրեշտակ ըզսա յՈղիւմսսէն , 'ի զէն
վառեւ զԱքիլէս

Գաղտ 'ի Դիայ գաղտ յանմահից հերա
յրդեաց փութասէս :

Արձանացաւ մօտ դիւցաղին , ձայն ար-
ձակեաց խրախուսի .

« Ո՞ւմ կաս , Պեղեանդ վեհ դիւցազանց
բնաւից ասէղ սոսկալի .

- Արի թիկունս հաս Պատրոկղեայ, մարտ
յուզեցաւ անպայման .
- Ահա 'ի վէգ այր ընկերի հանդէս նմուաց
մահ գուժան .
- Կէսք գիականն 'ի զօրավիգ քրտանահա-
րեալք պայքարին ,
- Կէսք հողմավարն 'ի յԵղիոն կորզել թափ
տան հրոսակին :
- Հէկտոր 'ի յորս քոյ սիրայնոյն ահեղ
մոլի աւազիկ ,
- Է անձկացեալ 'ի գիրգ փողոյն ըզգլուխն
առնուլ գեղեցիկ .
- Խնդրէ գրձձել նորա զկառավին 'ի ցից
հանեալ վերամբարձ .
- Ժամ աւազիկ արի 'ի վեր շատ է նրս-
տելք արդ , ո՛վ քաջ .
- Անթ անջինջ առեալ զանձամբ և լինի-
ցիս նըշաւակ ,
- Թէ Պատրոկղէս շանց Տրոյացոց արկ-
ցի 'ի խաղ և յառակ :
- Նա և վայր մի թէ ըզմարմնով խաղ արաս-
ցեն մեռելոյն ,
- Անշուշտ 'ի քեզ քաջ կրթեացին խայտա-
ռականքց այդ ողջոյն ” :
- “ Իսկ , ո՞ 'ի գից , արագաթև գիւցազն
Աքիլ ձայն կրկնեաց ,
- Իսկ ո՞ր աստուած , ըզքեզ հրեշտակ , ո՞
գիցանոյշ ինձ յըլեաց ” :

« Զիս ինքն այժմիկ , հողմոսն հիրիկ
էտ անդրադարձ գիցուհին ,

Զիս ինքն ահա յըզեաց առ քեզ Ղիայ
արգոյն ամուսին .

Զայս ոչ Ղիոսըն բարձրագահ գիտէ ար-
դեօք 'ւ ոչ ոք այլ

Որչափ անմահք են բնակաւորք 'ի յՈ-
ղիւմպոս ձիւնափայլ » :

Լըւաւ Աքիլը , անդէն լուծուսն 'ի ձայն
խնդրէր հրեշտակին .

« Քաջ է , այլ մարտ զիմորդ մղղեմ . նոքա
զիմ զէնս կապտեցին :

Նա զի այն ինչ արգել իմ մայրս ինձ
մարտ մղղել գոռութեան ,

Մինչ չև ինքնին նա իմ աչաց կրկին է-
կեալ յերևան .

Խոստումն արար ինձ յՆփեստեայ ա-
ծել չքնաղ զարդ և զէն ,

Եւ ես զէն պերճ այլ ոչ գիտեմ բայց
յայասեան ասպարէն .

Այլ նա զարգիս նահատակեալ ընդ ա-
խոյեանս 'ի հանդէս ,

Ի պահ մարմնոյն իմ Պատրոկղեայ 'ի
տէգ մրցի քաջապէս » :

Ոչ հանդարտեաց արագն հիրիկ խրա-
խոյս աղգեաց կրկնակի ,

« Գիտեմք և մէք , թէ քո պերճ զէնք են
առ նոսա յաւարի .

Այլ ին անդէն ըզքեզ Տրոյեանց ցուց-
ցես դու մօտ պարկենին ,

Անշուշտ 'ի քէն նոքա ահեալք դուլ ա-
րասցեն պայքարին .

Վայր մի այնպէս ոգի առցեն և Յոյնք
մարտիկք քաջարի ,

Զի և վայր մի ոգի առնուլն է կենսա-
բեր 'ի մարտի " :

Ըսաց չիրիկ , և 'ի նմանէն թըռիչս էառ
փութապէս .

Յարեաւ անդէն հովանացեալն յԱյա-
մազդայ Աքիլէս :

Չասպարն յայնժամ թեզանաւոր զա-
հեղն առեալ Աթենաս

Արկ ըզքաջին ըզյաղթ ուսովքն հարեալ
նրմա շուք 'ի սպաս .

Եդ և սլսակ վէհ գիցուհին 'ի գլուխն ո-
րա ամպ ոսկի ,

Եւ 'ի յամպոյն բոցավառեալ լոյս հա-
մասփիռ հատանի :

Որպէս յորժամ 'ի քաղաքէն , որ 'ի կըզ-
զւոջ բացակայ ,

Ծուխ ամպաձև մինչև յեթեր գնալով
գընայ բարձրանայ ,

Երբ թշնամիք պատնէչ պատեալ ընդ
քաղաքին կան կըռուին ,

Եւ որք 'ի ներքըս փակեցան ըզցայգն
ողջոյն մաքառին ,

Արևն 'ի մայրն, յայնժամ 'ի դէտս հուր
 խիտ առ խիտ բորբոքեն,
 Խարուկածին բոցոյն ճաճանչք զկատարս
 բարձանց հարկանեն,
 Արշան աղգեն մերձաւորաց, թէ կան
 երբէք 'ի զընին,
 Թերևս 'ի յօգն հասցեն նաւուք տապնա-
 պելոյ քաղաքին,
 Այսպէս գլխոյն բոցն Աքիլէայ յաս-
 տեղս հատեալ ըզճաճանչ,
 Անց ըստ պատուարն և պարկենին զա-
 փամբն եկաց քաջալանջ.
 Չեմուտ 'ի զօրն. ըզմօր պատուէրն ու-
 նէր պատկառ 'ի յուշի.
 Առ դարափամբն արձանացեալ ձայն մի
 գոչեաց սոսկալի :
 Անդուստ 'ի բայ և Աթենաս բարբառե-
 ցաւ արձագանդ,
 Ի նոյն բարբառ արկ 'ի Տրոյեանց շըշուկ
 ամբաւ և վըտանդ :
 Որպէս յորժամ ահեղակերպ աւագա-
 փող ձայն փողոյն,
 Երբ պաշարեալ փակի քաղաք յարենա-
 խանձ որերոյն,
 Հնչէլ հնչէ զի թշնամւոյն հրոսակ գի-
 մեաց 'ի քաղաք,
 Հանգոյն յայնժամ մեծն Աքիլէս կար-
 դաց ըզձայն իւր աւագ :

Լըւան Տրոյեանք ըզգիւցազին զահեղ
 ըզձայն պըղընձին,

Խուճապեցան և արհաւրօք ոգիք նոցա
 սարսեցին .

Անդ փորատող երիվարաց բաշք դիզա-
 ցեալ գեղեցիկ ,

Ի յետս 'ի յետս տարան ըզկառս յահ
 շրտուցեալք 'ի սաստիկ .

Ի շտապ տագնապ և կառավարք սարսա-
 փեցան յերկիւղէն ,

Յորչափ ըզբոցն անշէջ հըրոյն անդուստ
 'ի յակն արկանեն ,

Բոց զահաբեկն 'ի գլուխ վառեալ մե-
 ծին այնմիկ դիւցազանց ,

Զոր Աթենաս փայլակնացայտ խաժակն
 յայնժամ բորբոքեաց .

Երիցս ահեղ ձայն 'ի խրամոյն գոչեաց
 դիւցազն Աքիլէս ,

Երիցս և անդ շտտեան Տրոյեանք շտտեան
 համհարդք մեծապէս :

Անդ և Թըւով երկոտասան քաջք այր-
 ընտիրք 'ի զօրուէն

Ի յայն շըշուկ կորեան շողեալք 'ի կառս
 իւրեանց և 'ի զէն :

Մճապարեալ հեղէնք յայնժամ 'ի
 սլատրոկղեանն 'ի դիակ ,

Ի տարափոյ կորզեալ նետիցն հանդու-
 ցանեն 'ի շալակ :

Բակ ըզնովաւ առին ընկերք ջայլեն յո-
 ղորմ 'ի հանդէս ,
 Քայլ զուգահետ առնոյր ըզհետ և արագ-
 ոտն Աբելէս .
 Ըզգերարտօսր հոսեաց յաջաց տեսեալ
 զոգւոյն իւր հատոր
 Եդեալ այնպէս 'ի դագաղին սուր գե-
 ղարդեամբ վիրաւոր .
 Ջայն զոր կառօք երիվարօք 'ի մարտ յը-
 ղեաց փառաւոր ,
 Եւ 'ի դարձին էառ ըզնա յարիւն դու-
 նեալ 'ի բոսոր :
 Արդոյն յայնժամ աչեղ Դշխոյն զան-
 խոնջեւին զարևակ ,
 Յովկիանուն հանգչել յորձանս յըղեաց
 ըզնա դժկամակ :
 Ի մայր արևըն մըտանէր և Յոյնք առին
 ըզգագար
 Շարաթացեալք 'ի մեծ խազմէն և 'ի
 մարտէն հաւասար :
 Ըզնոյն անդուստ և Տրոյացիք դուռ տան
 զինուցն արհաւրաց ,
 Անդորրացեալք լուծին ըզձիս արագո-
 տինս 'ի կառաց :
 Յատեան խորհել ժողովեցան մինչ չև
 զընթրեաց կալեալ հոգ ,
 Խըմբեալ այնպէս յոտընկելիս ժըտեաց
 նստել և ոչ ոք :

Ի դող հարեալ կային 'ի բուն զի եկն
 Աքիւլ յերևան,
 Այն որ երկայն ժամանակաւ 'ի մարտ չե-
 մուտ գոռու թեան :
 Ըսկիզբն արար Պանթեանն ուչիմ Պու-
 ղիւգամաս ձայն կարգաց,
 Որ սա միայն ապագայից էր 'ւ անցելոց
 խորազգաց .
 Համհարզ գոչով սա հեկտորայ, ճընան
 'ի մի 'ի գիշեր,
 Մին վէհագոյն էր 'ի լեզուն և մին 'ի
 տէգ 'ի սուսեր .
 Սա և յայնժամ արձանացեալ բան խո-
 սեցաւ յատենի .
 «Քաջիկ, ասէր, ո՛ր բարեկամք, դիք զա-
 մենայն 'ի կըշուի :
 Խորհուրդ ազգեմ մի կալ աստէն .
 դարձցուք յոստան վաղագոյն .
 Բացահացեալքս մի սպասեսցուք լուսոյ
 այդուն արփենելոյն :
 Յորվայր Աքիւլ ընդ Ատրեսեան ընդ դից
 ազննն խեթայր,
 Քաջ խակ և մէք ընդդէմ Յունաց մարտ
 մըղէպք հեշտաբար .
 Եւ ինձ առ նաւս կալ բացօթեադք էր
 սիրելի մեծապէս,
 Լեալ քաջայոյս թէ յաւարի առնումք
 նաւացն ըզհանդէս :

- Բայց արհաւիրք զիս այժմ ունին արագ-
 ոտինն Աքիլէայ .
- Բուռն և խիզախ է Թափ քաջին, դա ոչ
 առնու աստ ըզկայ .
- Նա 'ի դաշտի ոչ դադարէ, ուր վաշտք
 Տրոյեանց և Յունաց
- Այր ընկերին գիմագրաւեալ 'ի վէգ է-
 լեալ են արեանց .
- Դորա մինչև 'ի մեր քաղաք գոյժ կանա-
 նւոյն հնչեացի :
- Հասկա յոստանն . ինձ ունկըն գեք բան
 զոր ասեմ եղիցի .
- Այժմ ըզլիրագըն զայն ահեղ գիշեր
 անդորր անուշէ .
- Այլ դա այգուռն զինավառեալ վարա-
 զաբար գիմեացէ :
- Անշուշտ յայնժամ լիցի այր ոք քաջ
 խեղամուտ 'ի յոգի 87 .
- Եւ Թէ յոստանն ոք զերծանի, տամ ես
 նրմա երանի :
- Բայց և տասպատ շատք 'ի Տրոյեանց
 արկցին գէշ շանց 'ւ անգեղաց ,
- Այլ քաւ երբէք զայս գոյժ իմոց մի ոք
 հարցէ լըսելեաց :
- Արդ Թէ իմոյն անսայք բանի, Թէպէտ
 իցէք դըժկամակ ,
- Մէք զայս գիշեր 'ի զօրավիզն առցուք
 անձանց փրկանակ :

Դուրք մեզ բարձունք պահեն զոստանն,
 դոն մեզ անբոյժ մահարձանք,
 Ատաղճք ամուրք և սարղունակք դրան
 դեաց են կուռ հաստարանք :

Մէք առ վաղիւն յարևածայրսն 'ի զէն
 վառեալք քաջապէս ,
 Արձանացեալք վերայ բրդանց ձայն
 կարդասցուք յասպարէս :

Դըժոխըմբեր անշուշտ նրմա լիցի մար-
 տին իւր պայքար ,
 Թէ նա զհանգէս թողեալ նաւաց հար-
 ցի ընդ մերն ընդ սատուար :

Նըշաւակեալ դարձցի 'ի նաւս ձիովք իւ-
 րովք գիսասլանծ ,
 Վազ վայրասպար յայս կոյս յայն կոյս
 տըւեալ իւրոց նըժուգաց :

Հրոսեւ 'ի ներքս ոչ ժրտեսցի , մարտն
 իւր ելցէ 'ի դերևս ,
 Մինչ չև զոստան մեր ատակեալ արկցի
 նա շանց գէշագէշ " :

Ի նա հեկտոր խեթ հայեցաւ և անդրա-
 դարձ ետ ձայնի .
 « Բընաւ դու այժմ , ո՛ր Պողիւզամ , բան
 չասացեր ինձ հեշտի .
 Դու մեզ յոստան փակել կրկին ազդես
 'ի քոց խորհրդոց ,
 Աղէ , այր դու , դեռ չյագեցա՞ր կալ
 յայդ բրդանցդ արգելոց :

Ո՞չ աղբք ազինք այլալեզուք զայս մեծ
 ոստան Պրիամուն
 Է զե երբեմն հրուչակ հարին յոսկի պը-
 ղինձ թաթաղուն .
 Իսկ այժմ 'ի տանց նըւազեցաւ կահ կա-
 րասին մեր պայծառ ,
 Եւ գանձք մեր շտոք գնացեալ անկան 'ի
 Փռիւգիա 'ի վաճառ .
 Վաճառեցան և 'ի Մէոն յերկիր զըւարճ
 բարեբաստ 88 ,
 Յորմէ հետէ խեթիւ 'ի մեզ մեծն հայե-
 ցաւ Արամազդ :
 Արդ զե այժմիկ վէհ Զըրուանեան փա-
 ռս նաւթճեաց ինձ յոլով ,
 Հորդան զօրուս ետ առ նաւուք վանել
 ըզՅոյնս մինչ 'ի ծով ,
 Մի զայդ խորհուրդ , այ խօշամիտ , մի
 լըւիցէ մեր խուժան ,
 Նա և Տրոյեանց քեզ ոք չանսայ , և ես
 ինքնին ընդդէմ կամ .
 Արևք դուք , զօրք , 'ի լուր ձայնիս , վաշտք
 առ վաշտուք ընթրեցէք ,
 Ընդ զօրդ ողջոյն դիք պահակերս և հրս-
 կեսցէ ոք պարեկ :
 Իսկ թէ զընչեղ զոք տրոյացի տագնապ
 ունի իւր գանձուն ,
 Թո՞ղ զիւր մըթերան առեալ ինքնին և
 բաշխեսցէ մեր զօրուն .

Լաւ է ողջոյն զայն ծախեսցէ այր տրոյա-
ցին քան հելլէն .

Բայց դուք արիք ընդ արշալոյսն վա-
ռեալք 'ի զարդ և 'ի զէն :

Չայն ճակատուն տացուք հանդէսս նա-
ւատորմին յասպարէս ,

Թէսկէտ ինքնին արձանացեալ կայցէ անդ
քաջն Աքիլէս :

Թէ ձեռս յանձին հարեալ իցէ ըզմրցա-
նաց տանել շուք ,

Ըզգոյշ լիցի , ոչ խուսափեմ խառնիմ ընդ
նա 'ի շըշուկ :

Ոտնակառեալ արձանացայց ընդդէմ քա-
ջին նահատակ ,

Կամ նա տարցի ըզյաղթութիւն կամ ես
առից մրցանակ .

Հասարակաց վըտանդ ածէ թափ Արե-
սին մեծասաստ ,

Է զի որ մահ այլում գուժայ , ինքն ան-
կանի դիտապաստ :

Լսաց Հեկտոր , Տրոյեանք խընդան գո-
չիւն բարձեալ մեծապանծ ,

Անմիտք . նոցա մեծն Աթենաս զուշն 'ի
գլխոյն առ եբարձ .

Չօրհասաբերն յանձին կալան նոքա ըզ-
բանն Հեկտորայ ,

Պուղիւղամայ անսաց ոչ դք որ քաջ խոր-
հուրդ ետ նոցա :

Ապա 'ստ գընդաց 'ի բանակին ընթրիս
 առնուն անլեհեր ,
 Մինչ Յոյնք կոծ մեծ ըզՊատրոկղեաւ
 ջայլեն ողջոյն զայն գիշեր :
 Մատեաւ Աքիլլ, զաջն ահաւոր ընդ
 լանջն արկեալ սիրայնոյն ,
 Եւ խիտ առ խիտ յոգւոց հանեալ ըս-
 կիզքն արար ըզկոծոյն :
 Որպէս առիւծըն բաշաւոր դաւեալ 'ի
 գազտ յորսորդէն ,
 Որ ըզկորիւնս բարձեալ նորա տարաւ 'ի
 խոր անտառէն ,
 Հեղձամըղձուկ լինի գազանն եկեալ 'ի
 յորջն անագան ,
 Հուր փորատէ , գող զորսորդին խուզէ
 ըզհետս ամենայն ,
 Արշաւասոյր անցեալ վազէ ընդ ձոր բա-
 զում ընդ հովիտ ,
 Ուրէք եթէ գըտցէ ըզնա գէտակն ունի
 խիտ առ խիտ ,
 Շանթիք 'ի յաչս և բոց 'ի սիրտ , գազանն
 վառի գիշախանձ ,
 Այսպէս Աքիլլ խոր 'ի յոգւոց ձայն զայս
 գողէր Միւրմիդեանց .
 “ Բաբէ , յայնժամ ես քանկօն զըրոյց
 հեղի վայրապար ,
 Ի սփոփութիւն Մենետոսի այն գիւցա-
 զին 'ի տաճար .

Ճըշգրտեցի առ նա յՈսկունտ ըզփառա-
 ւոր դարձ որդւոյն 89 ,

Հիմնայատակ Եղևոյնին առեալ զբաժինն
 յաւարոյն :

Այլ զիդձ զամէն կանացածնաց Ղիոս 'ի
 գլուխ ոչ հանէ ,

'Նա մեզ երկուց ըզնոյն վիճակ 'ի նոյն
 բաշխեաց յորհասէ .

Վիճակ հան մեզ ըզՏրոյիոյ գունեւ զեր-
 կիրն 'ի բոսոր ,

Զի ոչ և իմքն 'ի դարձն 'ի տուն ինձ գիրկս
 արկցեն տարփաւոր .

Ոչ ծերունին իմ Պեղէոս , ոչ մայր ար-
 գոյն իմ Թեախ ,

Այլ այս երկիր դամբարանեալ աստ ընդ
 հողով առցէ զիս :

Արդ զի յեա քո , ո՛ր Պատրոկղէ , և ես 'ի
 հող իջանեմ ,

Քեզ դիհանըս չարարից մինչև զԵկտոր
 աստ չածեմ .

Ըզգլուխն ըզգէնան ածից առ քեզ ըզ-
 չարաշուք քոյ դահճին ,

Եւ յաւագաց զորդիս Տրոյեանց քում ձօ-
 նեցից խարուկին .

Չօնըս թըւով երկոտասան յաղեմ փո-
 խան քում մահու ,

Բայց դու վայր մի առ իմ նաւուքս առ-
 ցես հանգիստ յանդորրու :

Դարդանանոյշք և տրոյուհիք բացեալ
ըզգոգս ըզլանջաց ,

Ըզցայգ ցերեկ կոծցեն ըզկուրծ , քեզ
չուք հեղցեն զարտասուլաց .

Կապուտք մեր են այս կանանին , երբ
մէք յաղթօղն 'ի նիզակ

Նահատակեալք ըզթշնամեաց շէնս հոյա-
կապ քանդեցաք ” :

Լսաց , և ձայն տայր հրամանի նիզակա-
կցացն Աքիլէս ,

Եռոտանի մեծ առ հըրով կառուցանել
փութապէս :

Նոքա զչարան և զապաժոյժ լուանալ
զարեանց Պատրոկղէայ ,

ԶԵռոտանին առ 'ի լոգանս եղին հըրոյն
'ի վերայ :

Արկին ըզջուր և 'ի ներքոյ կըրկուտք հրա-
նան վառ 'ի վառ ,

Բոց սաւառներ 'ի փոր սանին ջուրըն
տակաւ ջերմանայր .

Մինչև եռանդն հարաւ ջըրոյն 'ի հընչա-
կան պըղընձին ,

Լուացին ըզնա և անուշակ պարարտ իւ-
ղով օժեցին :

Լըցին ըզվէրս դիապատիկքըն խընկենեօք
իննամեան ,

Հանդերձեցին և յանկողին հանդուցանեն
պատուական .

Ծածկեն յոտից մինչև ցրգլուխ բարա-
կաման 'ի կրտաւ ,

Եւ 'ի վերուստ շար ձիւնափայլ արկա-
նէին ըզնովաւ :

Ձողջոյն գիշերն առ հասարակ զԱ.քիւ-
լէսիւ սար առեալ ,

ԸզՊատրովդէս Միւրմիդոնեանք լային 'ի
կոծ և 'ի ջայլ :

Յայնժամ առ քոյրն և ամուսին հերա
ձայն տայր Արամազդ .

« Դու այժմ 'ի քոյն յաջողեցար , աչեղ
Դշխոյդ բարեբաստ .

Ահա զարագըն զԱ.քիւլէս 'ի մարտ հա-
ներ գոռութեան .

Թըւի անշուշտ , թէ առ 'ի .քէն հէլէնք
ողջոյն սերեցան » :

Ոչ հանդուրժեաց Աչեղն արգոյ , ետ
բարբառոյն անգրագարձ .

« Բսբէ , ահեղըդ Ձըրուանեան զլինչ
բան սրացաւ 'ի շրթանց :

Ի դոյն արգեօք և երկրածինք ոչ յետ-
նեսցին այր ընդ այր ,

Թէսկտ և այր մահկանացու թէսկտ
անկած 'ի հանճար .

Չիսորդ ապա ես բարձրնտիր գիցանու-
շից յակըմբին ,

Եւ կրկնակի , վէհ 'ի զարմէն վէհ և գո-
լով ամուսին

Քեզ որ բնակից թագ անմահից 'ի գլուխ
կապես գեղապանձ .

Զիտորդ սպա 'ի խէթ Տրոյեանց աղէտ
նիւթել յեանեցայց » :

Օ այս ինչ յայնժամ փոխանակեալ այր
բարբառէր ընդ ընկեր ,

Մինչ 'ի տաճարն Հեփեստոսին արգոյն
Թետիս հասանէր .

Տաճար անեղծ , աստեղազարդ , տուն գե-
րագոյն անմահից ,

Պրզնձակուռ հրաշակերտեաց ճարտարն
Հեփեստ կաղն յոտից :

Եգիտ ըզնա 'ի տաճարին 'ի քիրտն հա-
րեալ 'ի սաստիկ ,

Հուրջանակի յածէր յոգնէր , փուքն 'ի
ձեռին զօրավիգ .

Եռոտանիս 'ի թիւ քըսան կըռէր հրաշից
յարուեստին

Զարդ առ արմովք զարմանազան կար-
գել պայծառ տաճարին .

Միոյ միոյ եգ 'ի ներքոյ անիւս ոսկիս
հրաշազան ,

Զի ինքնաշարժք ելեալ նոքա գնասցեն
'ի դիցն 'ի յատեան ,

Անտի սպա ուղի կալեալ գարձցին անգ-
րէն գալ 'ի տուն .

'Նոր էր տեսիլն , նոր և չքնաղ գործ ճար-
տարեալ գերաբուն :

Էր խօս արդէն ըզհրաշարուեստ զայն
գործ 'ի գլուխս պրսակեալ,
Ունկունս միայն նոցա չքնաղս չէր տա-
կաւին յարմարեալ .

Մինչ դեռ և զայն ագուցանել ըզսայր
սրբէր բեւեաց ,

Եւ ճըջգրրտիւ թեւակոխէր ինքն յա-
րուեստին խորագգաց ,

Քայլեաց ոտամբն արծաթափայլ ե-
մուտ թետիս գիցուհին ,

Ետես ըզնա վաղեաց Քարիս 'ի գլխա-
շուք գեղանին 90 :

Էր այս Քարիս , զոր կրկնակաղն այն
հոյակապ 'ի կին ած ,

Սա ընդ առաջ ձեռն ետ թետեայ և յա-
նուանէն ձայն կարգաց .

«Աս ինչ , թետիս վեհ տեռազարդ , արդ-
'ի տուն մեր գալուստ քո ,

Շուք գալըստեանդ էր դուն ուրեք , ո՛վ
անձկալիդ և արգոյ .

Մատիր յառաջ , ես քեզ չըքով հիւրոյթ
ածեմ առաջի » .

Ասաց , ըզնա մեծարանօք մոյծ գիցուհին
նազելի :

Յաթոռ արծաթ սպարակապ շուք հար
նստոյց յանդիման ,

Աթոռ չքնաղ ճարտարագործ և 'ի ներ-
քոյ սատուանդան :

Չայն ետ կարդաց զճարտարապետն ըզ-
 Հեփեսոոս յանուանէն ,

« Արի փութա , ո՛վ Հեփեսոէ , Թե տիս
 խնդրէ ինչ 'ի քէն » :

Լըւեալ արդոյ կրկնակաղին անդէն ձայ-
 նէր պատասխան ,

« Բա՛րէ , արդոյ վէ՛հ գիցանոյչ ունի առ իս
 օթեւլան .

Դա զիս փրկեաց , երբ գահավէժ ինձ 'ի
 բարձանց ցաւագին

Էր անկանել , յաւուր յորում մայր իմ
 կամէր լըբենին :

Քանզի խնդրէր նա հնարիմաց զիմ քօղար-
 կել կաղուծին ,

Բայց երաշխէպ յաւուրն յայնմիկ մընայր
 կրրել ինձ անհուն ,

Թէ զիս Թե տիս Եւրիւնոմեաւ հանդերձ
 'ի ծոց չամփոփէր 91 ,

Եւրիւնոմէ դուսար հոսանաց Ովկիա-
 նուն ալեբեր :

Ես դամն իննեակ անդ առ նոսա հրաշա-
 կերտեալ շատ գործած ,

Արուեստեցի աղև և ճարմանդ , ասպա-
 րանջանս դիւրադարձ .

Տուփրս չքնաղս առ այս դարձեալ քայ-
 ուամանեակս գեղանի 92 .

Ճարտարեցի ես զայսոսիկ 'ի խորափոր
 յանձաւի .

Անդ փրփրադէզ Ովկիանունն 'ի վէտ 'ի
 վէտ կոհակաց ,
 Շուրջ զանձաւովս ասէզ բոմբէր գոջինն
 ամբաւ հոսանաց :
 Ոչ դք 'ի դից գիտէր զիմ վայրն և ոչ մարդ
 դք երկրածինն ,
 Միայն Թեոսիս և Եւրիւնոմ , որ զեսյայն
 Ժամ փրկեցին :
 Արդ զի Թեոսիս 'ի տուն մեր գայ , և ես
 կենացս անդրադարձ
 Վարսագեղոյն այնմիկ 'ի սպաս արդ մե
 ծապէս տամ ըզվարձ :
 Այլ դու փուլթա շուք դիցուհւոյն հիւ
 րոյթս առցես նազելիս ,
 Մինչ ես զայս փուքս 'ի բաց դընեմ և
 զայն ամէն զիմ գործիս " :
 Ասաց , յարեաւ հրէշ խանձատեալն ելլք
 ըզսալ դարբնոցին ,
 Գայր կաղ 'ի կաղ և սրունք վրտիտքն 'ի
 քայլս ոտից դեդւկին :
 Մատեաւ յառաջ ըզփուքսն առեալ 'ի
 կայծականց եդ 'ի բաց ,
 Եւ ողջ ըզկահ գործարանին յարկղ ար
 ծաթի ամփոփեաց .
 Զազտ զերեսաց ջնջէր սպընդաւ և զազտ
 ձեռաց քրտնահոծ ,
 Սրբեաց ըզլանջըն թաւամաղ սրբեաց
 զիւր հաստ սարանոց .

Արկ պատմուճան և առ 'ի ձեռն ըզգա-
լազանն ըզհարուստ ,

Այնպէս ելեալ նա կաղ 'ի կաղ քայլեր և
գայր 'ի ներքուստ :

Նաժիշտք կային շուրջ արքային դողդոջ
ոտիցն հաստարան ,

Նաժիշտք ոսկիք որ շընչաւոր օրիորդաց
են նրման 93 .

Հանճար 'ի միտս գոյր 'ի նոսա , գոյր և
կորով նա և ձայն ,

Եւ յանմահից գործ աստուածոց էին
վարժեալք աննրման .

Սոքա զնովաւ 'ի յառաջոյ քայլափոխեն
քաջընթաց ,

Իսկ ինքն արքայն զոտն յոտանէն շարժէր
և գայր յամբընթաց :

Եհաս 'ի մօտ ուր կայր Թետիս , նստաւ
յաթոռ լուսաբուն

Ըզձեռն 'ի ձեռն ետ դիցուհւոյն ձայն ետ
կարդաց և զանուէն .

“Մը ի՞նչ , Թետիս վեհ տեռազարդ , արդ
'ի տուն մեր գալուստ քո ,

Շուք գալըստեանդ էր դուն ուրեք , ո՛վ
անձկալիդ և արգոյ .

Զի՞նչ են խնդիրքդ , ասա՛ մեկին , 'ի գլուխ
հանել փափաքեմ ,

Թէ հնարաւոր միայն իցէ և թէ 'ի նոյն
ես բաւեմ ” :

Վարսագեղոյն աչքն յարտասուս , այն
սէս թետիս ձայն կրկնեաց .

« Իսկ ո՞րք այլ , ո՞ հեփեստէ , դիցտնու
չեցն ողիւմսկեանց

Գրժոխըմբեր կրրեալ աղէտ այնչափ դը-
տաւ չարաբաստ ,

Որչափ ես ինքն ում առաւել ցաւ յա-
ճախեաց Արամազդ :

Նա զիս 'ի մարդ գրաւեաց միայն 'ի դի-
ցուհեաց ծովային ,

Յոյժ դրժկամակ ես մահացուին առի
զՊեղեայն անկողին .

Նա այժմ 'ի տան է տըւայտեալ 'ի խոր
հասեալ յալևոյթ :

Այս ոչ է շատ , որդի ծընայ հասուցա-
նել յաւագոյթ .

Այս իմ որդի վէհ դիւցազանց աճէր իբ-
րև ըզբողբոջ ,

Սնուցի ըզնա իբրև ըզտունկ յուռթի 'ի
վայր դաւարոջ .

Առեալ ապա ցըռկանաւուք արձակեցի
յԵղիոն ,

Անդ գոռութեամբ ընդդէմ Տրոյեանց
հարուլ մարտին ըզպաշտօն .

Ըզնա ոչ ևս իմ գրկախառն առցեն բա-
ղուկք մայրենի

Ի գարձ նորա 'ի յարքունիսն 'ի տուն Պե-
ղեան հայրենի .

Նա և ցորվայր այդ սիրասունս կեայ տե-
սանէ ըյս զարվւոյն ,
Ի վըշտատես և ոչ բաւեմ տալ զօրավիդ
խմ որդւոյն :
Օրիորդ մի հեւլէնք նրմա 'ի բաշխ հա-
նին մրցանաց ,
Եւ զայն արքայն Ագամեմոնն կորզեաց
յորդւոյս 'ի ձեռաց .
Սա խեթահար չեմուտ 'ի մարտ հեզ-
ձամրղձուկ 'ի յոգին ,
Մինչ դեռ անդուստ Տրոյեանք ըզՅոյնս
'ի նաւս անեւ փակեցին :
Յողոք յայնժամ անկան նրմա Արգոսա-
ցւոց ծերունիք ,
Ի նոյն և շուք հարին նրմա բազում ըն-
ծայս գեղեցիկ :
Հրաժեշտ տըւեալ նա միջամուխ վանել
նոցուն զօրահաս ,
Զիւր Պատրոկղէան հան ախոյեան և
զիւր կազմածն ետ 'ի սպաս .
Այնպէս 'ի մարտ հանդերձելով ետ շատ
որեար ընկերին ,
Եւ անդ մարտիկքն օր մի ողջոյն առ դուրս
Իսկեան կըռուէին .
Զայն օր անշուշտ էր այն քաջաց զոս-
տանն առնուլ 'ի յաւար ,
Թէ Ապողոնն ընդ Պատրոկղէայ շահատա-
կէնն ոչ խեռայր .

Նա զախոյեան զայն արկ տապաստ և
 շուք յաւել Հեկտորայ,
 Վասն այն և ես առ ծունկըս քո յողոք
 զարդիս կամ ահա :

Հաճեաց որդւոյս արագամահ տալ սա-
 ղաւարտ և վահան ,

Պերճ սրունապանս կրուեալ աղխիւք ան-
 գրծելի վարապան :

Ըզզէնն ըզզարդ կորոյս ընկերն 'ի Տրոյա-
 ցւոց լեալ նըկուն ,

Կայ արդ որդիս գեանատարած և ցաւա-
 գին է ողջոյն ” :

**Չայն քաջալեր վշտացելոյն ետ Կրկնա-
 կաղն հոյակապ ,**

« Բաջլեր, Թեախիս, մի յայդ հոգոց լիցիս
 երբէք սրտաթափ .

Ո՛վ, թէ այնպէս ես 'ի ժամուն մահա-
 համբոյրն օրհասի

Ի չարաշուք 'ի վայրկենէն կորզել ըզնա
 բաւէի ,

Որպէս զարդիս գօտէսընդիմ զէնս հրա-
 շակերտ տալ նըմին ,

Զի և յապուշ հարցին մարդիկ որչափ
 կայցեն 'ի զընին ” :

Ասաց, եթող ըզ՛իցանոյն և առ գոր-
 ծիս իւր ճեպեր ,

Անգէն առ հուր շըջեաց ըզփուքան , հա-
 սա հրաման ետ գործել :

Անդ կարգ 'ի կարգ փուփփ փորատեն
 շունչ 'ի քուրայս 'ի քըսան ,
 Եւ վառ 'ի վառ զարմանազան սիւգք 'ի
 փըքոց շնչեցան .

Է զի սաստիկ և բորբոքեալ է զի 'ի
 սիւգ թուլակի ,
 Որպէս և կամքն էր Հեփեստեայ և ըստ
 գործոյն սլայմանի :

Առեալ անագ էարկ 'ի հուրն նոյն և սը
 ղինձ անվըկանդ ,

Առ և ոսկի ըզսլատուականն արկ և ար-
 ծաթ 'ի բով անդ .

Բըռնահարեաց եդ 'ի կոթող սալ մի
 անոստ ահագին ,

Եւ զուռն ըստուար կալաւ աջով , զաք-
 ցանն 'ի միւս 'ի ձեռին :

Տանդերձեցաւ նախ առաջին կըռեւ կո-
 փեւ ըզվահան 94 ,

Վահան համակ կուռ անարի , բնաւին
 գործած հրաշագան .

Եռապատիկ արկ ըզնովաւ ճաճանչագեղ
 շրջանակ ,

Եւ արտաքոյ սեկ զարծաթի դընէր նո-
 ցուն սահպանակ :

Գօտիք 'ի յաղթ 'ի վահանին անջրպետեն
 հինգ թըլով ,

Եւ յանջրպետան հրաշակերտեալ գործ
 հանճարոյ եդ յովով :

Գործեաց 'ի նմա զերկիր , ըզծով , զար-
փիաճեմըն զերկին ,

Եղ և զարևն անխոնջելի և լուսալիրն
ըզլուսին .

Զաստեղսն ողջոյն եցոյց 'ի նմա , նոքա
երկնից են պըսակ ,

Գործեաց ըզբոյլս և զբազմաստեղս , եղ
և զաւագն անդ ըզհայկ :

Եցոյց և զարջ զոր սայլ կոչեն ոյր 'ի
հայկն է հայեցուած

Անդ ման առնուլ և ինք միայն յՈվկիա-
նէն է անթաց :

Սա և երկուս գործեաց քաղաքս բազմա-
ժողով գեղեցիկ ,

Եւ 'ի միումն էին խընճոյք և լինէին հար-
սանիք .

Հարսունքն 'ի լոյս բորբոք ջահից յառա-
գաստից յերևան

Գան ընդ քաղաքն , և խիտ առ խիտ շէր
հանէին Իւմենեան .

Իսկ պատանիք 'ի կայթ կաքաւ բոլորա-
ծիր առնուլն պար ,

Եւ 'ի նոսա երաժըշտեալ հնչէր սրբինոգն
և քընար .

Բայց կանանին 'ի նախադրուես կան
հիացեալք 'ի զընին ,

Մինչ դեռ անդուստ 'ի հրապարակ դան
ժողովուրդք և խըռնին :

Քանզի երկուց արանց 'ի մէջ էր բոր-
բոքեալ մեծ պայքար ,

Յարիւն մարդոյ վասըն տուժին կայր և
կագէր այր ընդ այր .

Մին 'ի վըկայ կարդայր զամբոխն թէ
ինքն ողջիկ ետ տուժեաց ,

Միւսըն ժըխտէր թէ ինք բընաւ ինչ մի
չէառ տուգանաց :

Կընքել ըզկագ, զայր դատաւոր խընդրեն
երկուքն հաշտարար ,

Ամբոխն հերձեալ 'ի կողմն երկուց աս-
տի անտի ձայն կարդայր :

Քարողք լըռել տան խուժանին, և դասք
անցեալ ծերունեաց

Ի սուրբ կըրկէան 95 'ի սրբատաշ նասին
վերայ 'ի վիմաց :

Ըզգաւազանսըն ծերունիք տան Քարո-
զից քաջաձայն ,

Եւ զայնս կրկին առեալք 'ի բուռն յառ-
նեն կընքեն դատաստան :

Միաբանեալք եդին 'ի մէջ տաղանդ
ոսկւոյ ըզկըրկին ,

Տալ զայն մարդոյ որ ուղղագոյնս բան
խօսեսցի յառենին :

Ըզմիւս քաղաք բանակք երկուք զինա-
վառեալք սոսկալի

Կան պաշարեն . բայց երկփեղկեալ կար-
ծիս ունին կըրկնակի .

Կէսքն ասէին յաղարտ վարել և կէսք
'ի բաշխ պատրաստին ,

Յերկուս բաշխոյս զատել ողջոյն ըզգանձ
մեծի դըղեկին :

Ի թշնամիս գոլ անձնատուր չև պաշա-
րեալքն են հաւան ,

Նա 'ի ծածուկ զրահաւորեալք հանդեր-
ձէին 'ի դարան :

Անդ գիրգ հարսունք և ծընգասէրք մա-
տաղերամ և զաւակք

Պահկերուծիւն տան պատուարին , նոյն
ծերունիք հինօրեայք :

Ի չու նոցա մեծն Աթենաս կարապե-
տէր և Արէս ,

Ոսկէհանդերձք են երկոքեան համակ
ոսկւոյն 'ի հանդէս .

Երեսաւորք , երկայնադէզք , յերևանի
դիւցաբար

Խաղան զինուք , խուժանն ըզհետ գընայր
նըկուն և խոնարհ :

Եկին հասին նոքա 'ի վայրն , ուր դարա-
նեղն էր դիպան

Մերձ առ գետովն , ուր և յարբումն էր
անդէոց աւազան :

Նստան անդէն ամրածածուկ առեալք
զէն զարդ ըզմարտին ,

Իսկ և կրկին լըրտեսք զօրուն նստեալք
'ի զատ դարանին .

Ակրնկառոյցք, Էրբ դան օղիքն, Էրբ և
Ջոլիբք պաճարաց.

Գային անդուստ արօտականք, գան և
Էրկուք 'ի հովուաց:

Դաւոյն անգէտք հէգ անդէորդք սը-
րինգ հարեալ կայթէին,

Եւ յանկարծոյն դարանամուտքն հրո-
սակ տըւեալք յարձակին:

Զանդեայս անդէն և գեղեցիկ ըզլուսա-
կիզն հօտ զօգեաց

Ասպատակեալ վարեն յաւար և սուր ա-
ծեն հէգ հովուաց:

Շըռինդն անդուստ հարաւ անդեայց և
բարձրանայր ձայն գուժին,

Լըւան բանակք որ 'ի խորհուրդ հան-
դէպ շինին նստէին:

Ճեպ տան 'ի նուս աշտանակեալ օղա-
պարիկ նըժուգաց,

Եւ պընդապէս ձիավարեալ հասին նոցա
'ի թիկանց:

Ճակատ տըւեալ առ դարափամբք գե-
տոյն կարդան ձայն 'ի մարտ,

Շահատակեն և այր զընկեր խոցեն 'ի
սուր 'ի գեղարդ:

Մոլէր անդէն հեռն և Շըշուկ, մոլէր
օրհասն ահաւոր,

Զայր կենդանի զայն ինչ խոցեալն 'ի
բուռն առնոյր քաջազօր.

Բըռնահարէր և զայր անխոց և զայր տա-
պաստ 'ի մարտին ,

Քարչէր զոտիցն արկեալ ձորձյուս գու-
նեալ յարիւն մարդկային .

Անդ խառնամուխ գոգցես կըռուին իբ-
րև մարդիկ կենդանի ,

Եւ զգիակունս աստի անտի առեալ քար-
չեն 'ի բացի :

Ի նմա դարձեալ հրաշակերտեաց քաջ
մըշակեալ կակուղ անդ ,

Երիցս անգամ աղօսաբեկ գետին անդոյր
արգաւանդ .

Մըշակք բազումք արօրադիրք և ժիրա-
ժիրք 'ի յանդին ,

Զաղօսածիգ հարկիս զեզանց յայս կոյս
յայն կոյս վարէին .

Շըջանս առեալ երբ ժամանեն մըշակքն
'ի վերջն 'ի հերկոյն ,

Այր արբանեակ ջամբէր նոցա բաժակ
զանոյշ ըզգինւոյն :

Առեալք ըմպեն , դարձեալ աղօս այլ կո-
տորել ըզձանան ,

Մինչ զարգաւանդն աղօսահատ ողջոյն
առնել զանդաստան .

Յետուստ 'ի թուխ գոյն հարկանի իբրև
գետին աղօսեալ ,

Թէպէտ և է համակ ոսկի . ո՛վ արուես-
տին հրաշափայլ :

Պործեաց 'ի նմա և գետին մի ատոբա-
 հունձ և բերրի,
 Եւ անդ հընձողք ժրացեալք 'ի բուռն
 ըզսուր առնուն գերանդի :
 Որայք հընձեալք կէսք ընդ ահօս բարդ-
 բարդ յերկիր անկանին ,
 Ըզկէս դարձեալ որայակապք անդ յողո-
 րեւ հանգերձին .
 Կապողք երեք կան հանդրիճեալք , նո-
 ցա յետուտ սատանեակք
 Քաղեալ զորայսն առեալ 'ի գիրկս ա-
 ծեն անդուլ և արագ :
 Իսկ կալապեոն ցուպ 'ի ձեռին բազմեալ
 յակօսն 'ի գետնի ,
 Այնպէս լըռիկ 'ի մէջ նոցա կայր և խըն-
 դայր 'ի սրտի :
 Անդ 'ի բացէ ներքոյ կազնւոյն կահէն
 ծառայքն ըզսեղան ,
 Եզըն զենեալ ըզպարարակ յոգնին 'ի
 գործ պաշտաման :
 Նա և ընթրիս տալ հընձողաց անդ գօտէ-
 պինդ կանանին
 Սպիտակ ալիւր թըրեն առատ և սպաս
 հարեալ վաստակին :
Եր անդանօր և այգեստան յառատ խա-
 ղող ալկաղձուն ,
 Այգի չքնաղ, ուռն էր ոսկի, ողկոյզքն
 էին արջնագոյն .

Խէչք յարծաթոյ նեցուկք որթոց կայ-
ին անդ կարգ ըստ կարգէ ,
Փոս կասլուտակ սլատէր ըզնա , և ցանդ
մի շուրջ յանագէ :

Մըտից 'ւ ելից ընդ այգեստան մի արա-
հէտ էր ուզին ,

Այն կըթողացն էր ճանապարհ երբ այգե
կութ առնէին :

Իսկ և կուսանք գիրգ օրիորդք և խընդա-
միտ սատանեակք

Կայթ և կողով առեալ բառնան , ածեն
զպրտուղն անուշակ .

Մանուկ անցեալ 'ի մէջ նոցա կիթառ
անոյշ հարկանէր ,

Ի ձայն հեզիկ և դեղեցիկ լարըն բախեալ
դաշնակցէր .

Կաքաւս հարեալ կայթեն նոքա տրո-
փեն ոտիւք միաբան ,

Եւ շէր նուագ զուգաձայնեալ տան կի-
թառին և խաղան :

Պործեաց անդէն և զանդէոց զեղջե-
րագեղն ըզգասակ ,

Եւ սաճարացն 'ի յանագէ և 'ի յոսկւոյն
էր քանդակ :

Բընչեալք վազեն 'ի սառակէն նոքա 'ի
գետն 'ի յարօտ ,

Կարկաջասահ գետ սրըրնթաց , ամուրք
սրըրուոյն կան 'ի մօտ :

Չորք 'ի հովուաց համակ ոսկիք են ան-
 դէոց զուգընթաց,
 Ինունք թըւով գային ըզհետ ճերմակո-
 տինք 'ի գամփռանց :
 Իսկ առիւծունք կրկին ասեղք հրոսեալք
 յանդեայսն առաջին ,
 Եւ ճիրանեալք ունին ցուլ մի մեծաբա-
 ռաչ ասագին .
 Պոչիւն սաստիկ և պոռոչիւն տայր ցուլ
 ձրգեայն առ 'ի քարչ,
 Որեարն ըզհետ պընդին և շունք արագքն
 'ի վազ և 'ի շարժ .
 Գազանքն ամոլք ըզյաղթ ցըլուն գէշ
 ըզմարմինն արկանեն ,
 Արենախանձքն զախոնդիս և սեաւ զա-
 թիւն լափլիզեն :
 Չուր անդէորդք յոգւոց թասեն ըզհետ
 վազեալ գազանաց ,
 Չուր և հրոսակ տան 'ի նոսա արագ-
 ոտանցըն գամփռանց .
 Նոքա զժանիսըն արկանեւ յայն ամեհիս
 ոչ ժըտին ,
 Մօտ կան միայն հաջեւ հաջեն 'ի նոյն
 դարձեալ ընկըրկին :
 Ըս այս 'ի նմա դարբինն այն կաղ սքան-
 չեւարուեստ և ճարտար ,
 Ի գեղեցիկ 'ի մեծ հովտի նա և արօտ մի
 արար .

Արտ արձակ ուր լուսակիզն օգիք խայ-
տան խիտ առ խիտ .

Արար և հիւղս և հովուավանս , յարկա-
ծածուկ և գաւիթ :

Պարձեալ ճարտարն և սլար կաքաւ-
հրաշակերտեաց 'ի նրմա ,

Որ և ճըջգրիտ հանգունատիպ էր կաքա-
ւուն Գեղաղեայ ,

Ձոր Գեղաղոս 'ի վաղընջուց յաշխարհ
Կնոսեայ յայն արձակ ,

Վարսագեղոյն Արիադնեայ եցոյց սլա-
րուն զօրինակ :

Անդ պատանիք 'ի յէջ անցեալ ընդ
հարսնացու կուսանաց

Պար սլարէին 96 և ըզմիմեանց ձեռս ու-
նէին ըզպրողանց .

Սոցա 'ի քօղ բարակաման շար կըտաւոյն
ծածանի ,

Նոցա բաճկոնըն քաջանկեալ իբրև քըն-
քուշ ձէթ փայլի .

Ի հիւս վարսիցն ըզգեղեցիկն ունին կու-
սանքն ըզպրոսակ ,

Եւ պատանիքն արծաթ փոկովք կախեն
զոսկին ըզգաշնակ :

Է զի նոքա 'ի քաջավարժ 'ի շարժ ոտիցն
'ի պարուն

Բոլորածէր շըջանակեալ թեթևակի վաղս
առնուն ,

Որպէս յորժամ նստեալ բրտին առ դիւ-
 րագարձ իւր դըրդան ,
 Ձեռամբ զանիւն առեալ փորձէ թէ ա-
 րագէ 'ի շրջան :
 Եւ է դարձեալ զի սլարանցիկք դա-
 սեալք 'ի կարգ և սլարղին ,
 Եւ շատ ամբոխք կային հըրճուեալք ջըք-
 նազ սլարուն 'ի զընին :
 Անդ և կայթողք երկուք ոմանք շէր մի
 առեալ 'ի նըւագ ,
 Կաքաւ հարեալ թաւալագլուխ ճախը
 առնուին ճախը արագ :
 Լսա ճարտարն 'ի տիպ ահէղ Ովկիա-
 նուն հոսանաց ,
 Զողջ շրջանակ սերճ վահանին ծովա-
 ծաւալ սլրսակեաց :
 Իբրև այսպէս հան նա 'ի գլուխ ըզմեծ
 ըզկուռ զայն վահան ,
 Կըռեաց ապա և քան ըզհուր յոյժ ճա-
 ճանչեղ վարապան :
 Ի ճահ քունիցն արուեստակեաց և ան-
 վրկանդ սաղաւարտ ,
 Սքանչեւագործ և գեղեցիկ էր գլխանոցն
 հրաշագարգ :
 Եդ նա ոսկի և վերջաւորս փողփողելով
 'ի ծայրէ ,
 Գործեաց ապա և սըռնապանս 'ի դիւրա-
 թեք յանագէ :

Այս ճանն այնպէս տըւեալ զինուց ճար-
 տարարուեստն այն դարբին ,
 վերամբարձեալ եդ առաջն մօր Ա. քիւ-
 լեայ դիւցազին :
 Նա յՈղիւմսեայ ձիւնախաղաղ սրացեալ
 իբրև ըզբազէ ,
 հրաշէկ ըզզէնսն առեալ բերէր 'ի հե-
 փեստեայ արքայէ :



ԵՂՅԱՆՆԵՐ



ՀԱՔՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԹ.

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Թե տիս ածէ առ որդին զհրաշակերտեալ զէնան 'ի Հեփեստեայ : Աքիլէս գնայ յատեան Յունաց հանգերձ զորավարօք և ժողովրդեամբ : Ատենաբանութիւնք Աքիլէսի և Ագամեմնոնի : Հապճեպով զՅոյնս 'ի մարտ փողէլ խնդրէ Աքիլէս . զիջանի 'ի բանական փաստիցն Ոգիւսեայ, հաց առնուլ զօրականին մինչ չև մտեալ 'ի մարտ : Ագամեմնոն առաջի առնէ Աքիլէայ զպատարագ իւր, զոր խոստացան յառաջագոյն, և դարձուցանէ առ նա զԲրիսանոյշ : Երգումն Աքիլէայ 'ի հաշտութիւն, և զոհ հանգիսաւոր : Ողբ Բրիսուհւոյն 'ի վերայ մարմնոյն Պատրոկղեայ : Աքիլէս 'ի խոր խոցեալ 'ի ցաւոցն, հրաժեշտ տայ յուտելոյ . ընթրեն զօրականք, և պատրաստին 'ի մարտ : Տեսիլ ահագին հանգիսի զինավառութեանն Աքիլէայ և վերելակելոյն 'ի կառս :



ԵՂՒԼՆԸՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԹ.

ՔԼԻՔՄԱԶԱՆԴԵՐԶ այդ հոսանաց յՈՎ
կիանուն գայր 'ի վեր,
Երկնաճեմիցրն անմահից գոլ և մարդկան
լուսաբեր:
Եհաս յայնժամ 'ի կայս նաւաց մայր
Դիցանոյն այն արդոյ,
Ածեալ որդւոյն հրաշէկ ըզգէնս պար-
գևաձիր աստուծոյ:
ԸզՊատրոկղեալ 'ի գերարտօսը եգիտ
զորդին սիրասուն,
Ի նոյն և շատք նիզակակցաց կոծ ջայ-
լէին ըզմահուն:

Արձանացաւ 'ի մէջ նոցա վեհն այն ար-
դոյն զիցուհեաց ,

Ետ ձեռն 'ի ձեռն և յանուանէն զիւցազն
որդւոյն ձայն կարգաց .

“ Բեր, որդեակ իմ, Թողցուք ըզդա ,
Թէպէտ ցաւեալք 'ի յողի ,

Թողցուք յանդորր որ զիւր օրհասն ըստ
զիցն էառ սահմանի :

Իսկ դու զարդիս 'ի Հեփեստեայ հրա-
փայլ ըզզէնսն ան ընկալ ,

Զէնք պերճք, չքնաղք, զոր մարդ եր-
բէք զանձամբ իւրով չէ արկեալ ” :

Ասաց Թեախ, և առ ըզզէնսն եդ Աքիւլ
լեայ յանդիման ,

Անդէն 'ի նոյն շաչիւնք հրաշից զինուոն
զարգուն հնչեցան .

Միւրմիդոնեանք առ հասարակ 'ի դող
հարան տագնապի ,

Եւ զակն 'ի զէնս յառել անդամ ոք 'ի նո-
ցուն ոչ ժրտի :

Ետես Աքիւլ, անդէն նորա հուր վառե-
ցաւ խորհրդոց ,

Եւ ընդ յօնիւք աչքն ահաւոր շանթիս
Թափեն իբրև բոց :

Ըզզարդ զինուոն 'ի ձեռն առեալ ցընծայր
'ի դից պարգևին ,

Մինչև 'ի տես հրաշակերտիցն աշխոյժք
հատան 'ի յողին :

Նըրճուեալ այնպէս, և մօր իւրում արա-
գաթի և կարգաց ձայն .

« Անշուշտ, մայր իմ, զէնքդ այդոքիկ
տուրք էն դարբնին աստուածեան .

Այդ անմահից է ձեռակերտ, մարդ
զայդ երբէք չատակէ ,

Հնապա ես, մայր, վառ իմ դոքօք արդ 'ի
Ժամէս յայամանէ :

Սակայն խիթամ թէ Պատրոկղէայս քա-
ջին այժմիկ 'ի մարմին

Ընդ տիգախոց վերաբերաննն միջամուխ
Ճանճք լիցին .

Որդունս 'ի նմա եռացուցեալ աղարտես-
ցի շուք դիոյն 97 .

Ո՛վ, չիք 'ի նմա շունչ կենսական, և նեխ
հարցի անդ 'ի բուն » :

Անդէն որդւոյն մայր դիցուհին ձայն
զայս կրկնեաց սիրալիր ,

« Անսա, որդեակ, մի յայդ հոգոց մի դու
զրաջան տագնապիր .

Ես 'ի նմանէ զբըզղանս ճանճից վանեմ
ասա զվայրենեաց ,

Որ ճենճերեալք դան և խրոնին գուլ դիա-
կան գիշախանձ .

Մինչ զի այդպէս դա տարևոր տապաստ
անկեալ 'ի վայրի ,

Յանդ անտրխեղծ կացցէ մարմինն և ևս
առոյգ ծաղկեսցի :

Բայց դու այժմիկ ձայն տուր յատեան
Յունաց քաջաց ակումբին .

Դիր զոխդ 'ի բաց , և ակն ածցես Ագա-
մեմոնն արքային .

Արի փուլթա , վառեաց 'ի մարտ , զգե-
ցիր դու ոյժ նորասքանչ " .

Ասաց , կորով շնչեաց յորդին և եդ ըզ-
նա քաջալանջ :

Իսկ Պատրոկղեայ զաւիշն անոյշ և ըզկար-
միրն ըզնեկտար

Առ և յուրնգունսրն կաթեցոյց , զի դին
կացցէ անվլթար :

Յարեաւ յայնժամ և 'ի ծովափն եկեալ
դիւցազն Աքելլէս ,

Կարդաց ահեղ և դիւցազանց ձայն տայր
Յունացն 'ի հանդէս :

Լըւան ըզձայնն առ հասարակ , վայրաց
վայրաց տան հորդան ,

Եւ որք յառաջն համախըմբէալք կային 'ի
նաւս միաբան ,

Եւ նաւուղիղք և ղեկավարք յարեան
ձայնին այն 'ի լուր ,

Եկին և արք մատակարարք որ տան նա-
ւաց կերակուր .

Խըմբէր յայնժամ և այս որեար , զի եկն
Աքելլ յերևան ,

Այն որ երկայն աւուրբք հրաժեշտ ետ
'ի մարտէն գոռուլթեան :

Գային ամուլքն անդ կաղ 'ի կաղ քաջք
Արեսին պաշտօնեայք,
Դիոմեդէան այն նահատակ, գիւցազն Ու
դիւս այր աւագ .

Յեցեալք 'ի տէգ ընթանային զի յոյժ
էին վերաւոր,
Եկին մըտին և դահերէց բազմոց առին
փառաւոր :

Անդ վերաւորն և Ատրիդէս եհաս ար-
քայն 'ի վերջէ,
Որ տիգախոց հարաւ 'ի մարտ յԱնդէնո-
րեան Կոռնէ :

Իբրև այսպէս Աքայեցիք բողորեցան յա-
կըմբին,
Յարեաւ 'ի մէջ քաջն Աքիլէս ձայն զայս
կարդաց ատենին .

« Անշուշտ, Ատրիդ, և քեզ և ինձ միան-
դամայն յոյժ լաւ էր,
Երբ ռիերիմք վասըն կընոջն այր խեթա-
ցաք ընդ ընկեր,
Թէ զնա 'ի նաւս մեծն Արտեմիս էր կո-
րուսեալ նետահար ,

Յաւուր յորում ըզլիւրնեսոս վանեալ
առի ես յաւար :

Զի շատք Յունաց ատամացի չէին կա-
լեալ ըզգետին

Տասպաստ անկեալք 'ի Տրոյացւոց, մինչ
դեռ խեթայր իմ ոգին :

Քաջ խակ հեկտոր ընդ Տրոյացւոց խըն-
դաց յաղթողն յայն դուստար .

Նա և հելլենք զայս խեթ ըզմերն յուշի
կալցեն ընդ երկար :

Ազէ այն դէսւքն անյուշ լիցին , թէսպէս
և դէսւք ցաւագին ,

Եւ հարկն ինքնին ըզբոցաւառն հանդար-
տեսցէ ըզհոգին :

Ես աւագիկ հաշտ և համբոյր զհուր ընդ-
ոտնեմ զիմ ցասման ,

Քանզի անաստ ինձ յոխութեան յաւեր-
ժանալ չէ արժան :

Արի դու մարտ կարդա Յունաց . կամ
ես ահա նահատակ ,

Տեսից ինձէն , ժրտին Տրոյեանք կալ առ
նաւուք բացօթեադք :

Ի շտապ տագնապ առ 'ի դաշտէն խու-
ճապեսցին արդ անշուշտ ,

Թէ ապրեսցին զերծեալք միայն մեր նի-
զակին 'ի ներքուստ " :

Նա զայս ասաց , 'ի լուր բանին Յոյնք
խնդացին մեծապէս ,

Զի հաշտ այնպէս մեծն այն դիւցազն 'ի
բաց եդ զոխն Աքիլլէս :

Յարեաւ ապա Ագամեմնոն , այլ նա 'ի
մէջ ոչ եկաց .

Կանգուն այնպէս 'ի յաթոռոյն բազմա-
կանին ձայն կարդաց .

« Աղէ հեւենք , ո՛ր բարեկամք , քաջք
 պաշտօնեայք Արեւեան ,
 Գեղեցիկ է լըռիկ լըսելն , իսկ աղմըկելն
 է խոտան 98 .

Այդ ասպքէն դըժընդակ է և քաջաբան
 խօսողի ,

Զի չէք հընար լըսել խօսել ՚ի խառնագոջ
 խուժանի .

Տապնապ է այս բեմբասացին թէպէտ և
 այր քաջաձայն .

Եւ ես ահա արձանացեալ ձայն յԱքիւ-
 լէս զայս կարդամ .

Աղէ ինքնին , Արգոսացիք , ինձ մըտա-
 դիւր ունկըն դէք ,

Եւ առանձին այր այր ինքնին բան կըշ-
 ուեսցէ զիմ քաջիկ .

Ո՞չ խիտ առ խիտ որդիք Յուշաց յիս
 պարսեցին բամբասանք ,

Ո՞չ և ընդդէմ շատ լըւտացին . չէր իմ
 սակայն այս յանցանք :

Դիոս և Բախտ պատճառք կացին և խա-
 ւարինն Երիննէս ,

Որ յայն ատեան յիս հուր հարին զվայ-
 րագ թափոյն սաստկապէս ,

Յաւուր յորում ըզմըցանակն ես կապ-
 տեցի զԱքիւլէան ,

Եւ ընդհարայ բոցով ցասման . այլ զի՞նչ
 գործեւ էր յայնժամ .

Ո՛չ ոմն 'ի գից զայս անօրինեաց , որպէս
վերագն այն Ատէ 99 ,

Դուստրըն մազդեզն այն մահագոյժ որ
զամենայն վընասէ .

Թեթև ընդ օդ են ոտք դորա և ոչ քե-
րէ առ երկրաւ ,

Այլ 'ի վերոյ գլխոց մարդկան քայլափո-
խէ յօդ ամբաւ .

Քայլէ այնպէս և երկրածնաց հրապոյր
սլըղտոր տայ բաժակ ,

Եւ 'ի վերջէ այդ չարաշուքդ որսայ ըզ-
մին յիւր ծուղակ .

Դա աւաղիկ վընասակար գըտաւ ինքնին
և Դիայ ,

Զոր մահացուաց և անմահից ասէն լի-
նել գերակայ .

Բայց և այնպէս հերա կին մարդ հաղբ
մի լարեաց և նրմա ,

Երբ 'ի Թեբէ արքայաշուք ծնանէր հե-
րակլ յԱղկմենեայ :

Զի էր երբեմն առ երկնաճեմնն ասէր
Դիոս մեծապանծ ,

« Ինձ ունկըն դիք , սլարք անմահից , լուա-
րո՛ւք և դասք դիցուհեաց :

Զեղ աւաղիկ յիմոց անտի բան մերկա-
նամ էս ծածուկ ,

Այսօր ծնուցիչն Իլիթիա 'ի լոյս ածէ
ինձ մանուկ .

Մանուկ ճեփին է սլանծալն յիմոյն ա-
ռեալ յարենէ ,

Որ նա իւրոց սահմանակցաց թագ բոլո-
րից կապեսցէ ” :

Դաւ մի յայնժամ լարեալ նըմա դշխոյն
Հերա ետ բարբառ .

«Սըտես 'ի բուն , և զոր ասես դու ոչ ած-
ցես 'ի կատար .

Ապ' եթէ ոչ ինձ արդ , ո՛վ քաջ , եր-
դուիր 'ի մեծ երդմանէ ,

Թէ այդ մազդեզն 'ի գլուխ իւր թագ
սահմանակցաց կապեսցէ .

Զմազդեզն ասեմ , որ առ ոտիւք անկցի
կրնոջ նա այսօր ,

Որ և 'ի քոյդ արեանառու իցէ զարմէն
փառաւոր ” :

Ասաց Հերա , Դիոս գիտուն չեղեալ
դաւոյն նենգութեան ,

Անդէն զերդումն երդուաւ ըզմեծն և
չատ կրրեաց փաշաման :

Սլացաւ Հերա ելիք յայնժամ զՈղիւմսդ
սին արտեան ,

Եւ ընդ ճապուկ օդապարեալ էհաս յԱր-
գոսն աքայեան :

Էջ անդ Դշխոյն , եգիտ ըզկին զոր ճա-
նաչէր նազէլին ,

Պերսէոսեանն Իսթենեղեայ կին ժըրա-
գլուխ ամուսին :

Դեռ զեօթներորդն ունէր զամիս յար-
գանդ նորա երախայն ,

Ի ըյս հերա ած ըզտըղայն թէպէտ և յօր
տարաժամ :

Սանձ զաւակին ետ Աղկմենեայ , զեր-
կունս նորա խափանեաց ,

Ապա բանբեր ինքն առ Դիոս զըրոյց եբեր
և պատմեաց .

« Հայր Արամազդ , տամքեզ զըրոյց , հրա-
ցան արքայ մեծազօր ,

Ահա ծընաւ այրն հոյակապ Արգոսա-
ցւոց թագաւոր .

Եւրիսթէոսն է այդ զաւակ Իսթենե-
ղեայ առն աւագ ,

Ճետ քոյ է դա , անկ է նրմա Արգոսա-
ցւոց կապել թագ » :

Զայս ինչ հերա . և Արամազդ 'ի խոր 'ի
սիրտ խոցեցաւ ,

Անդէն զԱտեայ ըզծընրահեր առ ըզգըլ-
խոյն և կալաւ .

Երբուաւ ասէղ , մի ևս երբէք դարձյո՞ւ
ղիւմպոս արասցէ

Մի և յերկին աստեղածեմ վընասակարդ
այդ Ատէ :

Ասաց , էառ ձեռամբն 'ի գիւլ յերկնից
ձըգեաց դահալէժ ,

Նա յաստեղացն հոսեալ կայից և յարկա-
կից էջ առ մեզ :

Յանդ ընդ Ատէ սրտնէր Դիոս , տեսեալ
զորդին սիրասուն

Զի վշտահար նա տառապէր յԵւրիսթո
սէն լեալ նրկուն :

Այսպէս և ինձ , յորժամ Հեկտոր առ
նաւս ածէր կոտորած ,

Ոչ մոռացօնք եղև Ատէ , այն որ նախ
կին զիս դաւեաց :

Եւ զի անշուշտ ես զառանցայ և զուշն
իմ Զևս բարձ յինէն ,

Արդ աւաղիկ ՚ի հաշտ համբոյր ես ձօն
ամբաւ ընձեռեմ :

Աղէ դու , քաջ , արի ՚ի մարտ , խրախոյս
կարդա և զօրուն ,

Մինչև ըզձօնան ես անվրթար հանդեր
ձեցից քեզ ողջոյն ,

Որչափ երեկ դիւցազն Ոգիւս քեզ խոս
տացաւ ՚ի վրանին .

Եւ քո կամաւդ անսա վայր մի , թէ
պէտ և ճեպ տաս մարտին ,

Մինչև ծառայ քս իմ ՚ի նաւէն առեալ
ձօնիցն ըզգումար

Ածցեն արագ . տեսցես ինքնին , ձօնք են
ողւոյդ հաշտարար " :

6 | ուր ինձ , ո՛վ քաջ , անդէն դիւցազն
Աքիլ կրկնեաց փութապէս ,

Լ՛որ ինձ , արքայ Ագամեմոնն օգոստա
փառդ Ատրիդէս .

Թէ յօժարիս ըստ արժանեաց առնել
ձօնիցդ ըզհանդէս ,

Թէ նըհանջես , այդ ամենայն ասլըսպա-
րեալ է 'ի քեզ .

Այլ մեզ զարդիս 'ի զէն 'ի զարդ է վա-
ռելոյն ժամանակ ,

Չայն տալ մարտի և ճեպ ընդ ճեպ ար-
ձանանալ նահատակ :

Նա տակաւին մեր մեծապէս նախճիրքըն
կան անկատար ,

Եւ չէ այժմիկ յերկայն զրուցաց վատնել
ըզժամն 'ի վաճառ :

Եւ թէ այժմէն դուք զԱքիլլէս տեսլիք
գոռալ քաջաբար ,

Եւ ըզՏրոյեանց 'ի տէգ նիզակ փաղանդս
առնել դիր և տար ,

Խրախոյս յայնժամ ոք և 'ի ձէնջ առցէ
'ի մարտ դիմագրաւ » .

Ասաց լըռեաց , ուշիմն Ոգիւս կրկնել քա-
ջին ժրտեցաւ .

66 Քաւ , մի 'ի մարտ , ո՛ Աքիլլէս , թէ
պէտ քաջ էս դիւցանման ,

Մի վարեացես ըզՅոյնս նօթիս Եղիոնին
յանդիման :

Չի 'ի խառնել անդ բանակացն յերկա-
րեսցի մարտն 'ի վէգ .

Չի՞նչ , եթէ ոմն և յաստուածոց մարտ
վառեսցէ երկուստեք :

Հրամանն Յունաց տո՛ւր դու 'ի նաւս
առնուլ ըզհաց և գինի .

Աղբիւր կենաց են այգոքիկ , տան կորո-
վեաց կալ յուժի .

Մարդ զօրն ողջոյն անկերակուր երիթա-
ցեալ 'ի սովուռն

Ոչ բաւեսցէ կալ և կըռուել մինչև ցը-
մուտս արևուն .

Թէպէտ վառին աշխոյժքն 'ի մարտ ,
տակաւ անդամք իւր վատին ,

Սովատանջեալ և պապակեալ ծունկքըն
նորա կըթատին :

Իսկ այր մարտիկ իւր զօրավիգ ըզհացն
առեալ և գինի ,

Ողջոյն ըզցայգն անխոնջելի կայ ախոյ-
եան 'ի մարտի .

Ի լանջ նորա սիրտ բոցանայ , ոչ և ան-
դամք պարտասին ,

Մինչ չև ողջոյն նահատակեալ դադար
տըւեալ է մարտին :

Հասպա զօրուն տո՛ւր արձակուրդ ա-
կումք առցեն 'ի ճաշել ,

Մինչև ըզձօնսն Ագամեմոնոն տացէ արքայն
վերբերել :

Զի հելլենաց հանդէսն ողջոյն կացցէ
ձօնիցդ 'ի զընին ,

Եւ դու ինքնին խընդամըտեալ անգոր-
րասցիս 'ի յոգին :

Առ այս, կանգուն և քեզ երդումն
 Յունաց տացէ յանդիման,
 Թէ չեք նորա մըտեալ առ կինն և ոչ մօ-
 տեալ է անգամ.

Որպէս արանց է այս, արքայ, նոյն և
 կանանց արժանիք.

Զի և յաւէժ անդոյր լիցիս յանդրժեղ
 յայս կընիք :

Նա սպաս հարցէ և 'ի վրանին քեզ 'ի կո-
 չունս մեծահաց,

Հաշտ արասցէ և քոյդ ողջիկ լիցի սը-
 սակն իրաւանց :

Բայց և այժմիկ իրաւապէս բանս իմ
 դարձցի և առ քեզ,

Դու և առ այլս արդարադոյն կացցես
 յապայս, Ատրիդէս.

Գեղեցիկ է 'ւ անկաժուժիւն չէ և չէ
 առն արքային,

Թէ զայր զրկեալ հաշտ արասցէ երբ նա
 դրժեաց առաջին " :

Լըռեաց Ոգիւս, ձայն Ատրիդէս զըւար-
 թամիտ ետ անդուստ,

“ Ի լուր բանիդ, քաջդ Ոգիւսէս, ինձ
 խնդուժիւն է անշուշտ.

Դու գեղեցիկ բան զամենայն ոճով եղիր
 կարգեցեր,

Արդ էս այժմէն երդումն անսուտ կըռեմ
 սրտիւ անվէհեր :

Օ՛ն անդր յինէն, թէ առ աստուած է
ղէց երբէք երգմնահար .

Բայց Աքիլէս աստ վայրիկ մի կացցէ
վառեալն ՚ի գուպար :

Կացէք և դուք վըկայք անսուտք ողջոյն
խըմբեալքդ յատենի ,

Մինչ ՚ի վրանէն ածցին սարգեք և ուխտն
անխաբ կըռեսցի :

Քեզ զայդ , Ոգիւս , էս յանձն առնեմ
դու յայդ ժրացիր ՚ի հանդէս ,

Եւ այրընտիրս դու յաւազաց Աքայե-
ցւոց արասցես .

Մեզ ՚ի վրանէն ածէք շքքով զիմ պա-
տարագս ամենայն ,

Զոր խոստացայ տալ Աքիլէայ , և կա-
նանւոյն զերտխան :

Իսկ աստ ճեպով Տալթիւբիոս գնացեալ
բանակն ՚ի զօրուն .

Վարազ մի ինձ հանդերձեսցէ յաղէլ
Դիայ և արփւոյն ” :

“Պ՛ու վէհ արբայ , կրկնեաց Աքիլ , Ատ-
րիդ փառօք գերունակ ,

Մէք յայլ պատեհ զայդ ամենայն և յայլ
թողցուք ժամանակ .

Երբ պարասպեալ մէք գոռ մտրտին դոււ
արասցուք և դադար ,

Եւ երբ յիմ լանջ չեցեն բորբոք ոգիքս
այնչափ վառ ՚ի վառ .

Ահա ընկերք մեր վերաւորք նըկուեք վե-
րագն յԵկտորայ

Կան դիտապատտ, զի մեծապանծ շուք
Արամազդ հար նըմա :

Իսկ դուք 'ի հաց հրաւեր կարդայք .
ինձ ոչ բընաւ այդ կարծիք .

'Նա ես Յունաց նօթիս 'ի մարտ խրատոյս
տայի գեղեցիկ .

Թող կըռուեսցին նախ քաջապէս ըզվէժ
խնդրեալ մեր վառաց ,

Եւ մինչ արև գարձցի 'ի մայրն , ընթրիք
տացին մեծահաց :

Այլ իմ բերան ճաշակ չառցէ , անշուշտ
կընքեմ ես ահա ,

Ոչ կերակրոյ ոչ ըմպելոյ 100 , զի համ-
հարզն իմ տապատտ կայ :

'Նա 'ի վըանիս խոց տարածեալ 'ի սայ-
րասուր նիզակէն ,

Կայ դարձուցեալ 'ի նախագրունս և
շուրջ ընկերքըն ջայլեն :

Հուր վառեալ է 'ի խորհուրդս իմ , չեն
ինձ չեն պէտք այդ հոգոց ,

Ես մահ , արիւն , և խոր յոգւոց մընչիւն
խնդրեմ զանկելոց " :

Մճապարեաց և միւս անգամ կըրկնեաց
ուշիմս Ողիւսէս ,

« Լճը աննըմանդ Աքայեցւոյ , լճը ա-
խոյեան Աքիլէս .

Քաջ էս քան զիս և չէս փոքու ինչ գու
'ի տեգ զօրագոյն ,

Բայց էս 'ի վեր շատ քան ըզքեզ եմ 'ի
յատեան խորհրդոյն .

Տնընդեամբ աւագ յառաջեցի և իմ շատ
ինչ տեսեալ է .

Ազէ այսօր խորհուրդ սրտիդ ըզհետ ի
մոյն եկեսցէ :

Մարդ 'ի խազմէն բնաւորեցաւ յագուրդ
առնուլ վաղագոյն ,

Յորժամ երկաթ հարեալ կրտրէ հունձ
ըզսակաւ , շատ ցօղուն ,

Յորժամ ըզթաթ կըշուոյն իւրոյ առեալ
կըքէ Արամազդ ,

Այն որ մարդկան պատերազմին տայ ըզ
վիճակն և ըզբաստ :

Չէ պարտ Յունաց որովայնիւ տալ մե
ռեւոց սուգ և կոծ ,

Զի բիւրբ ահա զօր ամենայն մեզ անկա
նին խիտ և հոծ .

Ե՞րբ ապա մեզ ոգի առնուլ թէ ցան
կորդիմբ 'ի ջայլէլ ,

Շատ է զմեռեալն օր մի ողբալ անդորր
ողւով և թաղել :

Իսկ նըշխարացըն ապրեւոց առ 'ի մար
տէն մարդախանձ ,

Պարտ արժան է 'ի զօրավիգն արբումն
առնուլ և ըզհաց ,

Ձի մարտ ընդդէմ տալ թշնամեաց մեք
բաւեցուք անգաղար ,

Ի զէն 'ի զարդ ամրածածուկ զանձնիս
վառեալ քաջաբար .

Օն առեալ մեր , մի ոք մնասցէ 'ի մարտ
նորոյ խրախուսի ,

Վայ է մարդոցն , որ յուլացեալ ժամաւ
վաճառ դեգերի :

Մեք փոյթ ընդ փոյթ հորդան տըւեալ
միով ոգւով աննրկունք ,

Տրոյեանց ընդդէմ քաջաձիոց զԱրէս մո
լին դըրդեացուք " :

Լսաց և վեհն ըզնեստորայ զորդիսն ընդ
իւր առ 'ի սպաս ,

Եւ ըզՓիւղեանն ըզՄեդիտէս , ըզՄե
րիոն , ըզԹոաս .

Էսառ ընդ իւր և զՄեւանիս և զԼիւկո
մեդ ըզՎրիւնեան ,

Յարեան փութով և խաղացին յԱգա
մեմնեայ 'ի խորան :

Ժիր սաշտեցին և բանքն արդիւնք ան
դէն և անդ լինէին ,

Առին հասաճեալ 'ի խորանէն ըզխոստա
ցեալն ածէին :

Եռոտանիք 'ի թիւ Էօթնեակ Աքիլե
սին ձօն սայծառ ,

Եւ սանք փայլունք 'ի թիւ քըսան 'ւ եր
կոտասան երիվար .

Ածին և Եօթն ամբիծ կանայս ճարտարս
'ի գործ 'ի ձեռին .

Էր ութերորդ պարու նոցա տիկին Բրի-
սեան գեղանին :

Բարձեալ Ոգիս մեծակրչիւ տաղանդս
ոսկւոյ ըզտանեակ

Կարապետէր, այլ պատանիքն ըզհետ բե-
րէն պատարագ :

Ածին ողջոյն և հանդերձեալ եղին 'ի
մէջ ակրմբին .

Յարեալ յայնժամ Ագամեմնոն արձա-
նացաւ յատենին :

Քարոզն անդուտ Տալթիւբիոս վեհ
ձայնարկուն աստուածեան ,

Ի բուն առեալ ըզյաղթ վարազն կայր
գօտէսլինդ մերձ յաբբայն :

Չըգեաց յայնժամ Ագամեմնոն առ ըզ-
ղանակն 'ի ձեռին ,

Որ ցանգ կախեալ կայր առ ընթեր մեծ
պատենի սուսերին :

Չառաջնաստեան հատ վարազուն և ձեռս
ամբարձ յԱրամազդ ,

Կայր 'ի յաղօթս . էր լռութիւն առ հա-
սարակ յայն երաստ .

Նստեալ կային կարգ ըստ կարգէ պատ-
կառք 'ի լուր արբային .

Ըսկիզբն արար նա աղօթիցն , աչք իւր
'ի վեր 'ի յերկին .

« Ինձ 'ի վըկայ նախ Արամազդ վէհն
 աստուածոց մեծաղօր ,
 վըկայ երկիր , վըկայ արփին և Երին ,
 նէսք ասաւոր ,
 Այն որ հարուածք և պատուհասք են
 ժըպրհէլոցն երդմնահար ,
 Թէ բըռնութիւն Բըրիսեան դըստեր ձեռն
 իմ երբէք ոչ արար :
 Ոչ յայլ 'ի պէտս , ոչ յառագաստն ե-
 լեալ երբէք յանկողին ,
 Այլ հանապաղ նա անարատ յիմում ե-
 կաց խորանին :
 Արդ երդմնահար եթէ իցեմ , դէք դա-
 նեսցեն զիս ողջոյն ,
 Որչափ դանեն նոքա զմարդիկ որ 'ի նոսա
 սուտ երդնուն » :
 Ասաց յազեաց , և ըզվարազն Տալթիւք
 ծովուն 'ի յորձանս
 Առ ըզյազեալն արկ կեր ձըկանց . յա-
 րեալ Աքիլ ձայն կարդաց .
 « Հայր Արամազդ , դու ես որ ցաւ ա-
 ծես մարդկան մեծապէս ,
 Ապ' եթէ ոչ զնարդ ժըտէր յիս հարկա-
 նել Ատրիդէս .
 Նա ոչ արդեօք խըռով հարեալ վառէր
 ըզհուր զիմ ցասման ,
 Ոչ զօրիորդն ինձ յակամայս կաստել էր
 ինչ բաւական :

Այլ կամէր ջուս, զի յօրհասէն լիցին
 Հեղէնք շատք նըկունք .

Օ՛ն արդ արիք երթայք ճաշել, և մէք
 'ի մարտ ճեպեացուք " :

Ասաց, 'ի նոյն ելոյժ զատեանն, այր այր
 'ի նաւս սըփուեցան ,

Միւրմիդոնեանք բարձեալ զընծայս
 գնային 'ի նաւն Աքիլեան :

Առին եգին 'ի խորանին և կանանւոյն
 տան բազմոց ,

Եւ զերիվարս վարեն ծառայք 'ի յերաւ
 մակն 'ի ձիոց :

Բայց Բրիսանոյշ համանմանեալն ոսկե
 ղինիկն Աստղըկան

Այն ինչ ետես ըզՊատրոկղէս խոց դի
 տասպաստ յանդիման ,

Աղէկիզեալ հեղաւ զնովաւ և ճիչ
 բարձեալ սաստկապէս ,

Յետէր ըզլանջ ցետէր գիրդ զուլն և
 զգեղեցիկ զիւր երես :

Առեալ ապա ողբ նազելին, զայս կա
 կանէր ձայն դուժի .

« Ա՛յ Պատրոկղէ, հիքբացելոյ իմոյ ան
 ձին տարփալի .

Ողջ և առոյգ թողի ըզքեզ, գնացեալ
 աստի տարադէմ .

Աւանդ, զարդիս ըզքեզ իշխան, գրա
 ւեալ 'ի մահ տեսանեմ :

Ազէտք յաղէտս . ահա զոր ինձ ծընողքս
 ետուն ամուսին ,

Տիգահարեալ տեսի ըզնա տապաստ
 հանդէս քաղաքին .

Զերիս դարձեալ տեսի տապաստ զիմ
 հարազատս համամայր .

Նոքա հոգւոյս էին հատորք , զօրհասն
 առին չարաչար :

Դու փարելիդ , երբ զիմն Աքիլ տա-
 պաստ էարկ զամուսին ,

Եւ երբ զոստանն հարեալ վանեաց ըզ-
 Միւնեատեայ դիւցազին ,

Դու զիմ զարտօսրն սրբէիր , իբր հարս-
 նացու Աքիլէայ

Խրախոյս տայիր ինձ նաւագնաց լինել
 ընդ քեզ 'ի Փիթեա ,

Անդ Միւրմիդեանց 'ի մէջ քաջաց խըն-
 ջոյս կահէլ հարսանեաց .

Եւ արդ մեռեալ . առ դու զողբն իմ ,
 դիւցազն և հեզ , քաջ արանց ր :

Ասէր և լայր , 'ի նոյն հեծմամբ լային և
 այլ կանանին

Վերին յերեսս ըզՊատրոկղէս , այլ մէն
 մի լայր վիշտ զանձին :

Իսկ հելլենաց աւագանին տան Աքիլ-
 լէայ քաջալեր ,

Մաղթեն ճաշել , այլ նա յոգւոց հա-
 նեալ թառաչ , հրաժարեր .

- «Յիս, ո՛վ տեարք իմ, թէ որ դուցէ ինձ
 մըտերմաց 'ի դասէ,
 Կանխաժաման սիրտ հաստատել մի որ
 ինձ բուռն արասցէ :
 Ոչ հաց առնում ոչ ըմպելի, ցաւ կա-
 րելէր զիս ունի .
 Յըմուտս արփւոյն ժուժամ այսպէս,
 կամ 'ի խորհուրդս անյեղլի » :
 Ասաց, և զայլ աւագանւոյն խումբն
 արձակեաց փութապէս,
 Կացին անդէն Ատրէսուեանք, 'ի նոյն գիւց-
 ազն Ոգիւսէս .
 Կաց և Նեստոր և Իգոմէն և՛ ասպետ
 Փիւնիկ ծերունին .
 Խնդրեն նոքա գիւր ինչ ցաւոց տալ կա-
 րելէր գիւցազին :
 Այլ նա մինչ չև յարին շաղեալ, չէր
 նըմա գիւր 'ի վշտէն .
 Յանգ ըզՊատրոկղ յուշի կապեալ հե-
 ծէր յողորմ 'ի ձայնէն .
 «Պ՛ու ինձ երբեմն, ո՛ հիքացեալդ,
 ոգւոյս խոյ փարելի,
 Դու ժիր և կազմ ինձ կահելիր ճաշ գե-
 ղեցիկ 'ի վրանի,
 Յորժամ անդուստ Աքայեցիք ընդ Տրոյ-
 ացւոց կըռուէին,
 Եւ ընկերին այր մահ գուժայր բազմա-
 կական 'ի մարտին :

Եւ այժմ անկեալ կաս վերաւոր, դու
բարեկամդ իմ արդոյ,

Եւ ես այսպէս 'ի լիութեանս կամ սո-
վատանջ 'ի սէր քո :

Նոյնչափ անշուշտ ցաւէր սրտիս 'ի լուր
հօրն իմ վախճանին,

Որ ջերմ արտօսը 'ի Փիթիա հեղու թե-
րես 'ի մահն իմ,

Որ աստ ընդդէմ Տրովադացւոց յօտար
երկիր բացակայ

Անցեալ մըղեմ մարտ 'ի պատճառս այն
չարաշուքն հեղինեայ .

Կամ թէ 'ի լուր մահու որդւոյս, որ ինձ
անանի 'ի Սկիւռոս

Թէ կեայ արդեօք, զորդեակս ասեմ զիմ
հրաշագեղն ըզՊիւռոս 102 :

Ակն ունէի թէ մահն անշուշտ ինձ միայ-
նոյս հասանէ

Ի Տրոյիա նրժդեհացեալ յիմ ձիաւէտն
Արգոսէ,

Իսկ դու դառնաս 'ի Փիթիա վանեալ
մահուն ըզըշուկ,

Եւ նաւագնաց ածես երբեմն 'ի Սկիւ-
ռոսէ զիմ մանուկ .

Ածեալ այնպէս և ցուցանես նրմա զիմ
գոյս կարգ 'ի կարգ,

Զիմ ըզկալուած և ըզծառայս և ըզ-
տունն իմ բարձրայարկ :

Քանզի Պեղոս, կարծեմ անշուշտ, կամ
 արդ ննջէ զքուն մահուն,
 Կամ դեռ զարև թէ տեսանէ, վատի 'ի
 խոր ծերութիւն,
 Վատեալ այնպէս այն հինօրեայն մընայ
 արդ ժամ 'ի ժամէ
 Ձայն բօթաբեր ըզգուժկանի զիմոյն լը-
 սել մահուանէ :
 Ասէր Ա.քիլ և արտասուէր, 'ի նոյն և
 ծերքն հեծէին,
 Այր այր յեւէր ըզսիրելիս, զոր անդ 'ի
 տունըս լըքին :
 Ընդ արտասուս Ա.քիլէսին Դիոս 'ի
 դուժ մեծ հատաւ,
 Դարձաւ անդէն բան յԱթենաս արա-
 դաթև խօսեցաւ .
 « Բա՛բէ, դուստր իմ, դու զայդ արևդ
 բարձիթողի լըքանէս .
 Կամ թէ բընաւ 'ի քոց խնամոց ընդվայր
 հարեր զԱ.քիլէս .
 Թացեալ յարտօսր ըզսիրելին նստի հան-
 դէս իւր նաւաց,
 Այլքն համագունդ չոքան 'ի ճաշ, ին-
 քըն սովեալ չառնու հաց :
 Օ'ն դու զաւիշն անմահական 'ի դիւցա-
 զինն հեղ 'ի լանջ,
 Հէղ դու 'ի նոյն և ըզնեկտար . մի նա
 անկցի սովատանջ : » :

Ասաց վառեաց նա զԱթենաս զարդէն
վառեալն 'ի սրտին .

Եւ և թըռեաւ, լայնաթևեան և սրահըն-
չող իբրև ցին .

Էջ խոյացաւ նա 'ի բանակ զերկին թո-
ղեալ զարփաւոր ,

Մինչ ճեպ ընդ ճեպ Աքայեցիք 'ի զէն
վառին ահաւոր .

Ձանոյշ նեկտար, զանմահ աւիշն 'ի լանջն
եհեղ Աքիլեայ ,

Ձի մի համբուն սովատանջեալ կըթո-
տեսցին ծունկք նորա :

Ի տունն ապա վերաթըռեաւ ահեղա-
հրաշ ծընողին ,

Մինչ 'ի նաւաց զօրք գունդագունդ
հորդան 'ի դուրս խուժէին :

Որպէս յորժամ յԱրամաղգայ ձիւնաբե-
րին ցուրտ տարափ

Կուռ թօթափի, պարզող հիւսսին 'ի
բըբայոյզն յուժգին թափ ,

Նոյն խիտ առ խիտ և սաղաւարտք փայ-
լակնացայտք լուսաւոր

Կուռ 'ի նաւաց գային 'ի դուրս , 'ի նոյն
վահանք կըմբաւոր ,

Գան յերևան և գոգաւոր զրահից լան-
ջաց պահպանակք ,

Եւ բազմախուռն 'ի դուրս գային տեգք
'ի հացւոյ և նիզակք :

Ճաճանչ սաստիկ բացէ 'ի բաց յերկին
դրնայր ծայրալիր ,

Եւ 'ի փայլուն կուռ պղղընձեաց ողջոյն
շողայր և երկիր .

Հողն 'ի ներքոյ յոտից քաջաց տրոփեալ
Թնդայր մեծապէս ,

Երբ 'ի զօրուն 'ի միջակին վառէր գիւց-
ազն Աբիլէս :

Արձեն քաջին անդ ատամունք աչք իբրև
հուր բոց ցայտէր ,

Եւ 'ի սրտին ցան և ցասունն անհընա-
րին բորբոքէր :

Սեռեալ այնպէս Տրոյեանց ընդդէմ
արկաւ ըզձօնսն աստուածեան ,

Կազմած ահեղ զոր հեփեսոէս կրուեաց
դարբինն աննրման .

Ըզըռնապանսն առաջին սրունիցն ար-
կաւ գեղեցիկ

Ճարմանդակապք քաջ յերիւրեալք , և
են ճարմանդքն արծաթիք .

Ըզվարապանն զրահակուռ երկրորդ 'ի
լանջն արկանէր ,

Զուսովքն ապա կախեաց ըզմեծ զար-
ծաթալարն ըզսուսեր .

Զանվանելին հաստահարուստ առ ըզ-
վահան հրաշալին ,

Որ բացարձակ փայլատակեալ ցայտէր
իբրև ըզլուսին .

Ձորորինակ յորժամ 'ի ծով դայ հաւա
 զիցն յերևան
 Հըրոյն ճաճանչ, որ յամայի վառի լե
 յրանց յարուան,
 Երբ ըզնոսա բուռն և սաստիկ մըրըրիկք
 յուզեալք տագնապեն
 Ի ծով վարեալ 'ի ձըրնաւէտ 'ի սիրելէաց
 տարագէմ,
 Նըման յայնժամ մինչև յերկին Աքիլէ
 սի դիւցազին
 Ճաճանչն հատաւ սքանչէլարուեստ և
 գեղեցիկ վահանին:
 Ըզմեծն ապա առ սաղաւարտ 'ի գլուխ
 եդեալ յարմարեաց,
 Եւ ըյսն հատաւ իբրև աստեղ գլխանո
 ցին դիսապանծ.
 Փողփողէլով ծաճանէին համակ ոսկի
 փուռնջք վարսից,
 Ձոր խիտ առ խիտ եդ հեփեստէս 'ի վերջ
 նորայն ցըցունից:
 Բայց Աքիլէս 'ի փորձ մատեաւ և առ ըզ
 զէնան և կըռէր,
 Կըռէր յանձին և ճըզգըրտիւ ընդ յաղթ
 իրանն յերիւրէր,
 Արդեօք առոյգ իւր անդամոց քաջ դարձ
 'ի դարձ յարմարին,
 Եւ զէնք գըտան զէտ թիւք թեթիւք վեր
 ամբարձիկք դիւցազին:

Առեալ ապա 'ի դարանէն ըզհայրենի
տէգն եհան ,

Տէգ յաղթ և ծանր և քաջակուռ , տէգ
'ի հացւոյ 'ի Պեղեան .

Ձայն տէգ ճօճել չէր բաւական յոյն
այր մարտիցն 'ի հանդէս ,

Բըռնահարեալ ճըգել քաջիկ գիտէր մի
այն Աքիլէս .

Ձայն տիգաբունն 'ի գագաթանց Պե-
ղեայ լերին հատ Քիրոն ,

Մահունս ածել քաջորերոյն ետ հօր նո-
րա առ 'ի ձօն :

Իսկ Աղէիմոս և Աւտոմեդ զամուս առեալ
նրժուգաց

Ձըգեն 'ի լուծ , և արկանեն շուրջ աւ-
պազէնս գեղապանծ .

Հանդերձեցին գեղեցկապէս 'ի ծամելիս
սանձ արկին ,

Եւ գերասանն 'ի հաստամուր 'ի կառս
'ի կոյս սարզեցին .

Առ ըզճապուկ և ըզփայլուն ըղխարա-
զանն 'ի ձեռին ,

Եւ ճեպ ընդ ճեպ Աւտոմեդոն վազեալ
'ի կառս ել արին .

Ըզհետ պարսեաց ել Աքիլէս ըսպա-
ռազէն նահատակ ,

Եւ փայլակէր համակ զինուօքն իբրև արև
վերելեակ :

Եւ և անդէն ճեպ տայր խաղմին, բար-
բառ կարգաց սոսկալի,

Չայն գիւցաբար հուր փորատող ետ
նրժուգացն հայրենի .

“ Ըրի Քսանթէ, օն Բալիէ, ճեպք հոյ-
ակապք Պոտարգեան

Ալէ լիք գուք խնամակալուք կառավա-
րիդ փրկութեան .

Ողբ դարձուցէք, երբ կըշտապինդ մարտ
մղղեսցուք բարեբաստ,

Եւ մի իբրև ըզՊատրոկէս թողջիք ան-
դէն դիտապաստ ” :

Լըւաւ Քսանթոս և ՚ի լըծոյն ձայն ետ
նրժոյգն օգապար,

Բարբառեցաւ և ըզգըլուխ ունէր կը-
քեալ ՚ի խոնարհ .

Ընդ լուծն ողջոյն հեղեալ այնպէս և
վայրանկեալ բաշք նորուն,

Յօդաւորեաց, զի անդ ըզնա գշխոյն հերա
եդ խօսուն 103 .

“ Ըզքեզ Աքիլ մէք և զարգիս փրկեմք
զարիդ քաջազօր,

Բայց և անշուշտ առ գուրըս քո հա-
սեալ կայ օրն ահաւոր :

Մեղ ինչ չիք մեր, չեմք մէք սատարք
յայդ աննահանջ պատուհաս,

Այլ մեծազօրն ինքնին աստուած և ան-
հրաժեշտն Օրահաս .

Արդեօք մերոյն ոչ յուլութեան ոչ վա-
տութեան աղադաւ

Քոյդ Պատրոկղէս 'ի Տրոյացւոց յիւրոց
զինուց մերկացաւ :

Այլ քաջն 'ի դից, զոր դիցուհին ծընաւ
Ղետով վարսագեղ,

Ըսպան զարին 'ի մեծապէս շուք հեկտո-
րին այն ահեղ :

Մէք օդապարօք և ընդ Ձեփիւռ մըր-
ցեալ կարդամք ասպարէս,

Ձոր 'ի հողմունս արագաթի գոլ համ-
բաւեն մեծապէս :

Բայց քեզ կընքեալ է յաստուծոյ և 'ի
մարդոյ գոլ նրկուն ։

Այն ինչ ապաց, և Երիննէսք կարճեն
նորա ըզէզուն :

Ի մեծ ցասումն 'ի լուր բանին բըրդեալ
յայնժամ Աքիլէս,

« Քսանթէ, ասէր, զի՞ գու ինձ մահնա-
խապատում գուշակես .

Ձի՞նչ պէտք են քեզ . այդ և յինէն ար-
դեօք չէ ինչ 'ի ծածուկ .

Գիտեմ իսկ քաջ, թէ դիտապաստ արկ-
ցէ մահուն զիս շըշուկ .

Անկայց ես աստ, յարդոյ հօրէս և 'ի մօ-
րէս տարադէմ .

Բայց և այնպէս Տրոյեանց ընդգէմ կը-
ռուել ես ոչ դադարեմ .

Դու՛ւ չարարից , մինչ չև յագուրդ ար-
ւեալ մարտին մարդախանձ ր .

Ասաց գոչեաց . և խրախուսեալ ձայն ետ
մարտին նրժուգաց :



ԵՂԻՄԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ Ի.

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Համերամատեան աստուածոց: Ատե-
նախօսուածիւն Արամազդայ: Աստուածք
իջանէն յերկիր 'ի զօրավիգ մարտի կըր-
կին բանակացն: Գլորդէլ բնուածեան է-
իցս, գուժաբեր մտալուտ սարսափելի
պատերազմին: Աքիլէս զանց զայլովք ա-
րարեալ Տրոյացւովք, 'ի խնդիր դիմէ
Հեկտորի: Հանդիպի Ենէասայ, բար-
բառի և մենամարտի: Ձենէաս թափէ
Պոսիդոն: Նահատակուածիւնք Աքիլէայ
մեծամեծք և հարուած Տրոյացւոց: Ա-
պողոն 'ի վտանգին թափէ զՀեկտոր 'ի
ձեռաց Աքիլէայ:

Նկարագիր սքանչելի և ահեղ գիւցա-
զին Աքիլէայ:



ԵՂՒԼԱԿՆ

Հ Ա Գ Ն Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Ի .

Օ՛ւՅՍ օրինակ անգ բակ ըզքե առեալ,
դիւցազն Աքիլէս ,

Ի զէն 'ի մարտ Յոյնք վառէին նաւատոր-
մին 'ի հանգէս :

Ըզնոյն անգուստ և զրահավառք ետուն
Տրոյեանք ձայն մարտի ,

Միահամուռ անգ 'ի կարկառ բարձրա-
ւանգակն 'ի դաշտի :

Պար զանմահիցն Ամպրոպայինն, ետ ձայն
յայնժամ Թեմիսեայ ,

Խըմբէլ յատեան 'ի բարձրագահ յարտե-
ւանէն Ողիւմպեայ :

Յածեալ Թեմիս ընդ ամենայն, ձայն
տայր բնաւից ազդարար,
Նոքա համուռ յԱրամազդայն հորդան
ետուն 'ի տաճար :

Չէր ոք սակաս, բայց յՈվկեանէն 'ւ ոչ
'ի գետոց ոք արագ,

Ոչ և 'ի յայնց Յաւերժհարսանց, որ
սերձ մայրեաց են բընակք,

Բընակք նա և աղբերականց են և մար-
դաց խոտաւէտ,

Որք հասարակ ակումբ առին 'ի յայն ա-
տեան վեհաւէտ .

Բազմեալք 'ի գահըս սրբափայլ բորբե-
ցան 'ի հանդէս,

Գահք զոր Դիայ հրաշակերտեաց ճար-
տարարուեստն Հեփեստէս .

Եւ ոչ արքայն մեծ Պոսիդոն հրաւիրա-
նին կաց անսաստ,

Եւ 'ի ծովէն Երկրասասանն, եկն յան-
մահիցն յայն երաստ .

Նստաւ 'ի մէջն, և խորհրդոյն հարց-
փորձ Դիայ զայս արար,

« Առ ի՞նչ ատեանս այս աստուածոց,
հրացան արքայդ շանթահար :

Մի՞թէ Տրոյեանց և վասն Յունաց ինչ
մի եղեր խելամուտ,

Որոց մարտին խառնուրդ ահեղ կայ ա-
ւադիկ մօտալուտ » :

Քաջ, դու եղեր, կրկնեաց Ռիոս,
քաջ խորազգաց 'ի յոգի,

Ոյր աղազաւ, Երկրասասանդ, յատեան
ըզձեզ խրմբեցի :

Յօրհաս դոցա միտք իմ յածին, այլ էս
'ի ծայր Ողբամպին

Բազմեալ աստէն անդորր ոգւով կռուոյն
կացից 'ի զընին :

Իսկ դուք, ո՛վ քաջք, 'ի մեծ բանակ կըր-
կին ազգացդ օն արիք,

Կողմանց կողմանց մէն մի 'ի ձէնջ տացէ
'ստ մըտի զօրավիզ :

Զի թէ Աքիլը ընդդէմ Տրոյեանց կը-
ռուի այսօր միայնակ,

Եւ ոչ խուն մի բաւեն դոքա ընդդէմ
քաջին նահատակ :

Զի թէ միայն յերևանին երէկ սար-
սեալք դողացին,

Զինչ թէ այսօր վասն համհարզին 'ի
վէգ ելցէ մոլեգին :

Նա քան զօրհաս, խիթամ, կանխէ ըզ-
Տրոյիոյ աւերած Կ :

Ասաց, և մարտ յանմահականս մեծ և
ահեղ բորբոքեաց :

Ըլան անմահքն առ հասարակ և վա-
ռեցան իբրև բոց,

Յարեան 'ի վէգ և 'ի կրկին հերձեալ էին
խորհրդոց :

Սլացաւ Հերա 'ի նաւատորմն էջ ընդ նը-
մին Աթենաս ,

Եւ մարտակից երկրասասան մեծ Պոսի-
դոն եկն եհաս :

Նիզակակից նոցա ուշիմն օգտամատոյցն
էր Հերմէս ,

Ի նոյն 'ի չու հանդերձեցաւ և կաղն ին-
քնին Հեփեսոէս ,

Հուժկուն այն կաղն , որ ժանտ և խեթ
աստ անդ հայէր և գընայր ,

Գընայր 'ի կաղ և սրունքն ոսինք դեղե-
ւէին սպիկար :

Տրոյեանց 'ի կողմն անցեալ Արէս ասէղ
սարսէր սաղաւարտ ,

Անց թևակից նըմա Փեբոս գըլուխն 'ի բուն
գիսազարդ :

Ի նոյն նոցա քաջ նետահարն էր Արտե-
միս զօրավիդ ,

Էր և Ղետոնն , էր և Քսանթոս , ծիծա-
ղասէրն և Ատողիկ :

Պապք անմահից ցորչափ կային 'ի մա-
հացուաց տարադէմ ,

Աքայեցիքըն մեծապանծ նահատակեալք
խիզախեն :

Զի որ անբաժն էր 'ի մարտէն , եկն յե-
րևան Աքիլէս ,

Մինչ դեռ անդուստ Տրոյեանքն 'ի բուն
յահ գրաւեցան սատոկապէս :

Շրթտեան ուղոյն տեսեալ զարագն ըզ-
 Պեղոսեան քաջ արանց,
 Զինուն զարդուն փայլակն հատեալ իբրև
 զԱրէս մարդախանձ:
 Իսկ մինչ 'ի խաղմ' արժիաբնակքն ընդ
 երկրածնաց խառնեցան,
 Հեռ և շըշուկ անհընարին մըրըկեցաւ 'ի
 խուժանն:
 Գոչեր Պալլաս, է զի անցեալ առ պար-
 կէնիւն ըստ պատուար,
 Է զի ծովափն 'ի բազմագոչ ձայն արձա-
 կէր աղգարար:
 Չայն բարբառէր ահագնագոչ անդուստ
 'ւ Արէս մոլեգին,
 Եւ դըղըրդէր ամպրոպայոյլ իբրև մըրըիկ
 խաւարին.
 Է զի Տրոյեանց 'ի մարտկոցէն գոռայր
 խրախոյս տայր 'ի նոյն.
 Է զի վազեալ ընդ Սիմոիս գոչէր 'ի սերձ
 'ի բըլըոյն:
 Ի քաջալեր յայս յանմահից բանակք ազ-
 դաց վառեցան,
 Եւ խառնեցան ահեղազօրք 'ի բոց մար-
 տին գոռութեան:
 Անդ ահագինս և Արամազդ ամպրոպայ-
 ինն 'ի բարձանց,
 Հայրն աստուածոց և հայր մարդկան աւ-
 ւագածայն որոտաց:

Խոր 'ի հիմանց և Պոսիդոն զերկիր սարսեաց անսահման ,

Եւ բարձրայօն լերանց մեծաց կան արտականքն 'ի տատան :

Դըղըրդեցան և բիւրակնեայն Իգայ ոտք ,
ծայրքն 'ի վերուստ .

Սարսէր ոստան Տրովադացւոց սարսին
Յունաց նաւքն անդուստ :

Պակեաւ 'ի խորս անդընդեհպետ Շահասն յաւէժ մեռելոց ,

Պակեաւ 'ի վեր վաղեաց գահէն և ձայն
գոչեաց 'ի խորոց ,

Մի երկրաշարժըն Պոսիդոն հերձեալ
ըզհող թանձրութեան ,

Ձիւր թոհն և բոհ կանացածնաց բերցէ
և դիցն յերևան .

Ձի սոսկալի են իսկ և դից կաղաղքն այն
մուժք մեծամօր ,

Այսչափ 'ի դիցըն խառնամուխ խօշիւն
հնչեաց ահաւոր :

Քանզի ընդդէմ Պոսիդոնին կայր արքային գերասլանծ

Մեծն Ապոլոն բարձեալ բերեալ յերեքթևեան 'ի փրքնաց :

Իսկ ախոյեան անցեալ ընդդէմ ահագնագոչն Արեսին ,

Արձանացեալ կայր Աթենաս ծաւին ահեղ դիցուհին :

Կայր ընդ Հերայ քոյրն հարազատ Քաջ
աղեղանն 'ի սայ քար

Մեծաբարբառն Արաեմիս ոսկեփղբին
նետահար :

Իսկ Ղետովնին մեծ ախոյեան անցեալ
ընդդէմ քաջապէս

Տընակալուչն օգտամատոյց արձանա-
ցեալ էր Հերմէս :

Կայր Հեփեստէս, յորձանախոր ընդդէմ
գետոյն զօրավիգ,

Քսանթոս անուն տան դիք նըմա և Սկա
մանդրոս տան մարդիկ :

Այսպէս ճակատ ընդ աստուածոց աս-
տուածք ետուն մեծազօր,

Բայց Աքիլէս բոցավառէր շեշտ խոյա-
նալ 'ի Հեկտոր,

Իբրև անշէջ 'ի լանջ նորա հուր ընթա-
ցաւ ահագին,

Յագուրդ թափոյ իւր նիզակի տալ յա-
րենէ վիրագին :

Ղեպեաց յայնժամ դըրդեաց Փեբոս
մեծ զԵնէասն յԱքիլէս,

Եւ թափ 'ի սիրտ այն գիւցազին կորով
չընչեաց մեծապէս .

Պրիամոսեան Լիւկայոնի ձայնին ըզձայնն
յարմարեաց,

Զոյր և զպատկերն առ Քաջաղեղն և 'ի
խրախոյս զպս ասաց .

« Տրոյեանց աւագ, ընդ Ենէաս, ո՞ւր
մեծ բարբառդ, ո՞ւր այժմուս,

Զոր արքային Տրովադացւոց տայիր 'ի
յայն գիներբուս.

Ո՞չ խոստացար, թէ Աքիլլեայ գիմա-
դրաւես 'ի կրոււին ».

Լըւէալ զբարբառըն Ենէաս զայս ան-
դրադարձ էտ ձայնին.

« Զիս Պրիամեանդ, 'ի յայդ մրցանս
ընդ քաջազին Աքիլլեայ

Զի՞ դու դրդես մենամարտիկ կրոււել
այսօր ակամայ.

Ինձ ընդ քաջիդ 'ի վէգ խաղալ ոչ առա-
ջին է նըւագ,

Այլ զիս յիդեայ և այլ անգամ վա-
նեաց նորուն յաղթ նիզակ.

Յորժամ գիմեալ հըսկայազօրն 'ի մեր 'ի
ջոկ պաճարաց,

Ըզլ իւրնեսոսս և զՊեղասոն յաւար է-
առ և քանդեաց.

Փրկեաց Դիոս թէթևտոնեայ զիս ա-
ռադրեալ մեծապէս,

Ապ' էթէ ոչ ընդ Պալլասայ զիս հարկա-
նէր Աքիլլէս.

Պալլաս քաջին էր կարապետ ջահեալ 'ի
նա լոյս պայծառ.

Խրախոյս կարդայր, Տրոյեանց, Լէւ-
գեանց օրհաս ամէլ տիգահար:

Մի ոք ուրեմն յաւակնեսցի ընդ Աքիւ-
 լեայ գալ 'ի վեգ ,
 Ձի մերձ նրմա ցանգ ոմն 'ի դից վանէ
 զօրհասն ահաբեկ :
 Իսկ Աքիւլեայն սայր նիզակին թռու-
 ցեալ գրնայ շեշտակի ,
 Ոչ հանդարտէ մինչ չև ըզմարդ թափանց
 հարեալ 'ի յոգի :
 Այլ թէ աստուած զոյգ կըշուեսցէ զմար-
 տի նրժարն և ըզթաթ ,
 Նա զիս հեշտին ոչ վանեսցէ թէպէտ
 պանծայ գոլ երկաթ » :
 « Բաջ է , կրկնեաց բարբառ նրմա վեհ
 մազդեզանցն Ապողոն ,
 Եւ գու ինքնին դից յաւերժից քոց զաղօ-
 թից տուր ըզձօն .
 Ձի և ըզքեզ վեհ Աստղըկան գոլ համ-
 բաւեն 'ի զարմէ ,
 Իսկ դա ծընունդ է դիցուհւոյն որ քան
 ըզնա խոնարհ է .
 Քոյդ գուսար է մեծն Արամազդայ . նո-
 րայն , ծերոյն ծովային .
 Արի դիւցազն , եւ ախոյեան հար 'ի դի-
 մի այդ քաջին :
 Մի վեհերոտ . զանվանելի ըզտէգդ ուղ-
 ղեալ շեշտակի ,
 Ի խրոխտ բանից և 'ի բոհմանց դու 'ի
 փախուստ դարձցիս մի » :

- Ասաց, 'ի նոյն և յԵնէաս ոյժ մի շնչեաց
ահագին,
- Ի զէն հրաշէկ գիմադրաւեալ անց նա 'ի
մարտ հանգիսին :
- Սինչ այս մինչ այն, լուսածըզին հերա
եղև իրազգաց
- Զի շէշտ յԱքիւլ մեծն Ենէաս գիմէր 'ի
մէջ փաղանդաց :
- Չայն անմահիցըն սրբաւոր բարբառե-
ցաւ ահըմբին ,
- « Արդ դու Պալաս և Պոսիդոն լիք խե-
լամուտ առանձին .
- Զխորդ մրցանքդ այդ յանդեսցին , զոր
աստըստին գիտեմ ես .
- Զինավառեալ մեծն Ենէաս գիմէ արդ
շէշտ յԱքիւլէս .
- Քաջն Ապոլոն դըրդեաց ըզնա , ձայն ես
նըմա 'ի խրախոյս ,
- Օն արդ և մէք ըզթափ արւոյդ ընկըրկէս .
ցուք յետըս կոյս .
- Կամ և 'ի մէնջ ոք գիւցազին լեալ Ա-
քիլէայ հովանի ,
- Ոյժ յաւելցէ 'ի լանջ քաջին , մի սըրտա-
բեկ լինիցի :
- Գիտուն լիցի , թէ գիք հըզօրք գըգուեն
ըզնա սիրաբար ,
- Եւ թէ պաշտպան գիք Տրոյացւոց ճըդ-
նին իբրև հողմավար :

Ո՛չ աստ 'ի մարտ յՈղիւմսուէ իջաք մէք
դասք երկնաւոր ,

Զի մի նրկուն 'ի Տրոյացւոց առակեսցի
նա այսօր :

Աքիլլէսի թեւն կենաց զայլ օր հատցի
յապագայս ,

Զոր անգըստին մօրն յարգանգէ նիւ
թեաց նրմա Օրահաս :

Եւ թէ 'ի սոյն ձայն աստուածոց ոչ
հրահանգէ զԱքիլլէս ,

Անշուշտ յայնժամ նա ասաբեկ լիցի յո
գին սաստկապէս ,

Յորժամ 'ի մարտ ոմն յանմահից ելցէ
նրմա յանդիման .

Զի են աստուածք ասեղասաստք յոր
ժամ դայցեն յերևան » :

Ի լուր բանին Երկրասասանն բարբա
ռեցաւ ճեպ ընդ ճեպ ,

« Մի դու , հերա , այժմէն յահուր ըշտա
պեսցիս տարադէս :

Ո՛չ են ինձ կամք , ընդ անմահից մեզ
նախ խաղալ 'ի սայքար ,

Քանզի և շատ գերաստիճան եմք մէք 'ի
գահ և 'ի կար :

Մէք զարահետ թողեալ զուղին վայր
գիտանոց մեզ կալցուք ,

Բազմեալք անդէն թո՛ղ մահացուք մըտ
ցեն մարտին 'ի շըշուկ :

Իսկ երբ Արէս կամ Ապոլոն 'ի մարտ
ելցեն նահատակ,

Կամ սանձ արկեալ Ա. քիլէսի կըռուոյն
լիցին խոչընդակ,

Անդէն և մէք դիմագրաւեալք արձա-
նասցուք 'ի դուպար .

Գիտեմ անշուշտ, զի ետ ընդ ետ լիցին
դոքա դիր և տար .

Դարձցին յՈղիւմս, նստցին մընջիկ յեր-
կնաճեմիցն 'ի պարուն,

Տեղի տացեն զօրագունիցն 'ի մեր բազ-
կէն լեալ նըկուն » :

Ասաց, անդէն Ծիրանաւարան հորդէր
ուղի ակըմբին,

Յառնեն գընան 'ի մեծ մարտկոցն հե-
րակլէսի դիւցազին .

Մարտկոց բարձր էր պատնըչափակ հա-
րեալ քաջին առ 'ի սպաս ,

Զոր կանգնեցին Տրոյեանք երբեմն . էր
գործակից և Պալլաս .

Զի զայն հերակլ իւր յապաստան կալ-
ցի յահեղ Կիտոսէն ,

Երբ թափ վիշապն 'ի դաշան 'ի կոյս տա-
ցէ 'ի նա 'ի ծովէն ¹⁰⁴ :

Անդ Պոսիդոն և համագունդ դասք ան-
մահից բազմեցան ,

Եւ խիտ առ խիտ զուսովք իւրեանց ամբ
արկանեն թանձրութեան :

Եկին նստան և գիք կողմանն 'ի դար բըլ-
 րոյն գեղապանծ,
 Բակ, Քաջաղեղն, ըզքև առին և զԱրե-
 սիւ մարդախանձ:
 Բազմոց առեալք 'ի յանդորրու և 'ի
 խորհուրդ մըտանեն,
 Կան երկոքին կողմանքն այնպէս ան-
 գործք անհուպք 'ի մարտէն.
 Ժրտէր ըսկիզբն առնել ոչ դք բազմաջը-
 շուկ պայքարին,
 Թէպէտ բազմեալ բարձր 'ի գահէն
 խրախոյս Դիոս տայր նոցին:
Օ երեսս ողջոյն պատեն դաշտին անդ-
 կառք, ամբաւ այրուծի,
 Եւ հատանին բոցանըշոյլք 'ի տախտակաց
 պըղընձի.
 Բոմբիւն հնչէր 'ի գունդագունդ շար-
 ժեւ զօրուն միաբան,
 Եւ ընդ ոտիւք Թընդայր երկիր արի ա-
 րանցն 'ի դովման:
 Յայնժամ ամուք քաջք բանակաց ար-
 ձանացան 'ի հանդէս,
 Եւ նահատակ մեծն Ենէաս, եւ ախոյ-
 եան Աքիլէս:
 Յառաջագէմըն Անքիսեան գիմագրա-
 լեալ առաջին,
 Ահեղասաստ շարժէր 'ի քունն ըզսաղա-
 լարտ անարին.

Ի պահ լանջացն հանդէպ կալեալ զաս-
 պարն ըզկուռ քաջազօր ,
 Եւ 'ի բրուին պըղըն ձակուռ ճօճէր ըզտէգն
 ահաւոր :
 Այն ինչ Աքիլը ետես զի գայր իբր ա-
 խոյեան նա յաղթող ,
 Վազեաց յառաջ ել անվէհեր իբրև ա-
 ուիւծ պատառող :
 Որում ընդդէմ խըմբին մարդիկ և ձայն
 գուժան մեծասաստ ,
 Նա և աւանն ողջոյն յառնէ զաուիւծն
 առնել դիտապաստ ,
 Գազանն այն սօս նախ զառաջինն ար-
 համարհէ և սիգայ ,
 Մինչև անդուստ ոք տէգընկէց ըզսայրն
 հարցէ շեշտ 'ի նա ,
 Դառնայ յայնժամ բանայ զբերանն ,
 փրփուրն հեղեալ 'ի ժանիս ,
 Տապի եռայ սիրտ կորուլլն և հուր վա-
 ուի յախոնդիս ,
 Պարզեալ ըզձետն , ըզկողսն ըզմէջս աս-
 տի ծեծէ և անտի ,
 Այնպէս նա զանձն հրավառ գործէ և
 ձայն խրախոյս տայ մարտի ,
 Ապա խաժակն ողջ բոցավառ շեշտ խոյ-
 անայ սաստկապէս ,
 Կամ մահ ածել կամ մահ առնուլ նա-
 հատակացն յասպարէս ,

Հանգոյն ճըշգրիտ աշխոյժք ոգւոյն անդ
 զԱքիլէս վառեցին,
 Ի վէզ ընդդէմ Ենէասայ դիմագրաւել
 քաջազին :

Իբրև 'ի մօտ արձանացան մենամարտիկն
 'ի հանդէս,

Անդուստ արագ ձայն առաջին կարդաց
 դիւցազն Աքիլէս .

« Ձի՛ դու վազեալ ընդ ասպարէսդ ար-
 ձանացար, Ենէաս,

Թերևս տանել մեծ մրցանակ յոյս մի
 անխաբ քե՞զ եհաս .

Գոռալ ընդ իս զն՛ դըրդեցին ըզքեզ ո-
 դիբդ աննըկուն,

Իբր 'ի վերայ Տրոյեանց քաջաց ըզթագն
 առցես Պրիամուն 105 .

Բայց զիս տապաստ թէ և հարցես դու
 իբրև քաջ նահատակ,

Ոչ և յայնժամ քեզ Պրիամոս տացէ քեզ
 զայդ մրցանակ .

Ձի է իսկինքն հարըստացեալ հայր բազմ
 երամ զաւակաց,

Է և 'ի կեանս իւր քաջառողջ, չէ և վա-
 տեալ 'ի մլտաց :

Կամ թէ թերևս դետին յուռթի Տրոյ-
 եանք քեզ բաժ խոստացան,

Գետին ընտիր և տնկախիտ և արգաւանդ
 անդաստան ,

Զի դու զարդիւնսն ըմբռնեսնեսցես, երբ
գիտապատ զիս առնես .

Բայց քեզ ասեմ, 'ի յայդ մրցանա գործ
դժբնդակ եհաս քեզ :

Գիտեմ իսկ քաջ և զայլ նրւագ վանեալ
ըզքեզ յիմ նիզակ .

Ոչ իսկ յիշես, յորժամ յանդեայս գըտի
ըզքեզ միայնակ ,

Դու հատկըլեալ յիդեայ լերին վազս
առնուիր վատաբար ,

Եւ ընդ փախչելդ ընդ կրուկ 'ի յետս
հայել անգամ վերջացար .

Դու յապաստան 'ի Նիւրնեսսոս խու-
ճապեցար փախըստեայ ,

Ես զայն աւանըն քանդեցի ընդ Պալա-
սայ և Դիայ .

Աւար հարեալ 'ի գերութեան ածի զա-
զատ կանանին ,

Այլ գեքն յայնժամ և Արամազդ յինէն
ըզքեզ թափեցին :

Բայց և այսօր ըզքեզ յինէն ոչ թափես-
ցեն , մի կարծեր .

Խրատեմ ըզքեզ տեղի վայր մի տուր 'ի
մարտէդ , ուշիմ լեր .

Յիմ ճակատէն դարձիր 'ի զօրդ . մինչ չև
գիպեալ քեզ չարին ,

Զի և մորոսն 'ի գլուխ գործոյն ապաշա-
ւէ 'ի յոգին " :

Լ ըուեաց Աքիլը, և անվեհեր մեծն Ենէ-
 աս ետ բարբառ .
 « Զիս զերթ մանուկ ահել բանիւք, ո՛
 Աքիլէս, մի յուսար :
 Քաջ է և ինձ երգիծաբան լինել աս-
 տէն անարգել,
 Զբարբառ լեզուիս գիտեմ և ես նա-
 խատակոծ յարդարել .
 Մէք ըզմիմեանց գիտեմք ըզճետ, չեմք
 անծանօթ ծընողաց .
 Ի մարդկանէ ականջալուրք գիտունք ե-
 ղաք այսպիսեաց :
 Բայց և նոցուն ականատես, ոչ ճանա-
 չես ոչ դու զիմ
 Եւ ոչ ինքնին ես յանդիման տեսի եր-
 բէք ըզքոյին :
 Հայր քեզ ծընող մեզ համբաւեն ըզ-
 Պեղէոս զայն արդոյն ,
 Եւ 'ի մօրէ զաւակ թետեայ վարսագե-
 ղոյ ծովայնոյն :
 Իսկ ես զաւակ Անքիսեսին պանծամ լի-
 նել աւադիկ ,
 Ես զայն մեծանձն ինձ հայր կարդամ և
 մայր ունիմ ինձ զԱստղիկ :
 Անշուշտ մի ոք 'ի սոցանէն այսօր 'ի մերն
 'ի պայքար ,
 Զորդեակ սիրուն զիւր արտասուեալ ողբ
 կարդասցէ և աշխար :

Քաւ, եթէ մէք անտիական վէպըս միայն
խօսեալ արդ,

Մեկնեալ այնպէս հրաժեշտ տացուք 'ի
հանդիսէս մենամարտ :

Այլ թէ ներհուն և այսոցիկ կամիս լի
նեւ դու քաջիկ,

Գիտեւ ըզմեր զարմն և ըզճետ զոր և գի-
տեն շատ մարդիկ,

Ամարոպային ծընաւ Դիոս ըզԴարգա-
նոս առաջին.

Սա հիմն էարկ Դարգանիոյ, չէր Եղիոն
տակաւին.

Չէր 'ի դիւրի ոստանն այն սուրբ բազ-
մաժողովն օթարան,

Այլ առ ոտամբ բնականային լերին Ի
դայ բիւրակնեայն.

Իսկ Դարգանոս ծընաւ որդի զԵրիքեթո-
նոս թագաւոր,

Սա առ իւրովքն էր 'ի մարդիկ բազմա-
հարուստ գանձաւոր.

Սորա 'ի խաղս արածէին երեքհազար
մատակ ձիք,

Եւ խայտային մարքն 'ի մատաղ մլտորուկս
իւրեանց գեղեցիկ :

Արածէին, և եկն Հիւսիս 106 'ի սերն
հարաւ 'ի սոցա,

Թուի բաշաւոր ձիոյ նրման խառնակե-
ցաւ ընդ նոսա :

Այսպէս մատակէն առ 'ի նմանէն յղացեալ անդէն յարօտին ,
 Ծընան նրմա չքնաղ մըտրուկս երկոտասան 'ի կարգին .
 Պերճ այս մըտրուկք մինչ յարտորայս 'ի հասկալից կայթէին ,
 Ճախրեալք վերոյ քըստից հասկացն ոչ ինչ խանգար առնէին :
 Կայթահարեալք և 'ի վերայ յաղթ մըկանանց 'ի ծովին ,
 Թափ սուրային 'ի փըրփրագէզ ալեաց յերեսս 'ի վերին :
 Իսկ Երիթթոն ըզմեծ Տրովէ ծնաւ Տրոյեանց թագաւոր ,
 Եւ 'ի Տրովեայ առին ծընունդ որդիք երեք քաջազօր .
 Այս է Իղոս , Ասսարակոս , Գանիւմեդէս դիւցանման ,
 Էր Գանիւմեդ բնաւից մարդկան գեղով չքնաղ աննրման .
 Ըզսա աստուածքն վերառին լինել Դիւայ մատուրակ 107 .
 Զի գեղանին ընդ անմահից լիցի պարուն երկնաբնակ :
 Բայց և Իղոս ծընաւ որդի զայր հոյակապ Լաւմեդոն ,
 Եւ Լաւմեդոն 'ի լոյս էած ըզՊրիամոս , ըզՏիթոն .

Նոյն ըզՂամսոս, ըզՎլիւտիոս, և զԻկե-
տոն քաջարի,

Ասսարակոս ծընաւ զՎապիւս, ոյր Ան-
քիսէսն էր որդի:

Զիս Անքիսէս, և Պրիամոս ծընաւ ըզ-
քաջն ըզՀէկտոր,

Այս իմ ահա ճետ և արիւն յոր և սպան-
ծամ ես այսօր:

Այլ զարուծիւն ինքն Արամազդ տայ և
կարճէ ըզմարդկան,

Որպէս կամի. զի է իսկ նա բնաւից հըզօր
աննրման:

Այլ աղէ մէք յումսկէտ 'ի բանս մի յօ-
րասցուք մանկապէս,

Մեզ աւասիկ մեհամարտիկ պատերազմի
կայ հանդէս:

Բա՛ հեշտին է փոխանակաւ լուտալ
լուտանս մեզ ամբաւ,

Զի և կըշուոյն ոչ բաւեսցէ հարիւրաթի
բառնալ նաւ.

Արագաշարժ և դիւրադարձ գիտեմք լե-
զուն ըզմարդկան,

Եւ այս լեզու բիւրապատիկ գունակ
գունակ ունի բան.

Աստի անտի զրուցաց բանից լայն է դաշ-
տին ասպարէզ,

Եւ զոր դու բան ասես երբէք ըզնոյն մը-
նայ լըսել քեզ:

Այլ զի պէտք էն մեզ 'ի պայքար բան,
դագուշէլ 'ի դաշտի,

Եւ այր զընկեր կրծէլ լէզուաւ իբրև
տըկար կանանի,

Ուրք 'ի յուղտջ զայրուց 'ի սիրտ, հեռ
'ի յոգի ժանտաժուտ,

Միմեանց ընդդէմ սրտանեալք լուտան
ժայթքեն զիրան և ըզտուտ.

Բոցն որ 'ի սիրտ շարժէ զլէզու. այլ
յիս բանիւք ոչ ուժես.

Չըլէրջտոնիմ, մինչ չև տիգաւ մենամար,
տեալ քաջապէս.

Օն արդ, ո՛վ քաջ, նահատակեալ մեք
'ի բազուկ հաստամուր,

Այր ընկերին տացէ ճաշակ ըզնիզակին
սայրասուր ː

Լսաց, յասպարն հաստահարուստ շան
թեաց ըզտէգ զերկաթին,

Ի յաղթ վահանն հատաւ շըռինդն 'ի ձիգ
ահեղ նիզակին ː

Ամբոխեցաւ քաջ Պեղոսեանն 'ի տէգ-
ընկէցն ահափետ,

Ի բաց զասպարն առ հաստ բրուամբն և
արկ անձին անջըրպետ.

Խիթաց եթէ տէգն Ենէեայ ախոյենին
քաջափառ.

Երկայնաստուերն երկաթակուռն անցցէ
թափանց հեշտաբար ː

Ո՛վ, մանկաբար ընդ միտ չեաժ, թէ
դից պարգէք գերաբուն

Մահկանացուացն առ 'ի բազկաց ոչինչ
հեշտին գոն նրկուն:

Չազդեաց յասպարն Ենէասայ գեղարզն
արուոյն քաջալանջ.

Զի զդէմ կալեալ դիցասպարգև թիթեղն
ոսկի արկ նահանջ:

Ընդ տակս երկուս էանց 'ի թափ, սա-
կայն երեքն ողջ կացին,

Քանզի թիթղունս հինգ հեփեստէս
գարբնեաց կրուեաց յարուեստին.

Երկուքն էին 'ի սրղընձոյ, երկու ներ-
քինքն յանագէ,

Իսկ մին միջին էր 'ի յոսկուոյ յորում ե-
կաց յաղթն աշտէ:

Սաղաց երկրորդ գոուն Աբիլէս ըզ-
տէգն հարուստ շէշտ եհար.

Հարուած ահեղ. հար Ենէեայ բոլորա-
ծիրն ընդ ասպար,

Վարսեաց ընդ զնին ընդ առաջին ուր
էր սրղինձ փոքրոգի,

Եւ 'ի վերայ ածեալ նրբքին արջառա-
մորթ քեմուխա մի.

Ողջ թափ ընդ թափ անց աբիլէսան
յաղթահարուստ տէգ հացին,

Դըղըրդեցաւ 'ի հարուածոյն ասպարն
հնչեաց ահագին.

Պակեաւ ինքնին և Ենէաս և կրճկեցաւ
յայն հարուած ,

Ճեպեաց 'ի վեր առեալ զասպարն այն
պէս կալաւ առ 'ի բաց .

Սրացեալ նիզակն անց ըզթիկամբն և
վարսեցաւ ընդ գետին ,

Փրչրեալ զերկուս ըզըջանակս ամրա
ծածուկ զասպարին :

Խուսեալ այնպէս յերկայն տիգէն կա
լաւ անդէն ըզտեղի ,

Կաց պակուցեալ և արհաւիրք զաջօք նո
րա մածանի .

Քանդի և տէգըն ասաբեկ մօտ առ ընթեր
վարսեցաւ ,

Մինչ գեռ անդուստ և Աքիլէս շէշտ յԵ
նէաս խոյացաւ .

Սլացեալ այնպէս քաջ ախոյեանն և մեր
կացաւ սուր սուսեր ,

Ի նոյն և ձայն առիւծաբար ասեղադոջ
արձակէր :

Ճեպ Ենէաս ետ և կալաւ վէմ ասագին
զըժընդակ ,

Յոր ոչ բաւեն երկուք յարդեաց , նա
հէշտ շարժէր միայնակ .

Անդ Ենէաս ըզխոյացեալն հարոյր 'ի
վէմն որձաբար ,

Հարոյր անշուշտ ընդ սաղաւարտն և կամ
ընդ կուռն ընդ ասպար ,

Բայց յաղթ ասպարն 'ի յԱքիլեայ վա-
նէր զմահուն զօրահաս ,

Եւ արքիլեան սուսերն անշուշտ կարճէր
ըզնա 'ի կենաց ,

Թէ ոչ արագ 'ի միտս եղեալ երկրա-
սասան Պոսիդոն ,

Ձայնեալ 'ի դիս և հարկանէր Ենէասայ
ըզպաշտօն .

“Ո՛վ , ցաւէ ինձ վասըն մեծին Ենէասայ
յայս հանդէս ,

Ձոր արդ նրկուն 'ի յԱքիլեայ դըժոխք
առցեն փութապէս .

Նա քաջաղեղն Ապողոնին համողեցաւ 'ի
բանէն .

Ա՛յ մանկամիտ , նա ոչ թափէ ըզնա 'ի
դաուն օրհասէն :

Արդ զի՛ անմեղք այլոց վնասու զուր դի-
տապաստ լինիցի ,

Դա որ վերնոցն է անմահից միշտ ձօնա-
բեր փարելի .

Հայա , ո՛վ քաջք , արի՛ք թափեմք յօրա-
հասէն մէք ըզնա ,

Գուցէ ցասնու տեսեալ Դիոս ըզնա տա-
պաստ յԱքիլեայ :

Ապրել սըմա այժմ յօրհասէն , սահ-
մանն արդէն կընքեալ է ,

Ձի մի անսերմն և մի անհետ ձեւ Դար-
դանուն կորիցէ .

Ձոր Ձրուանեանն 'ի մէջ որդւոց առ
 հասարակ յոյժ սիրեաց,
 Որք 'ի նմանէ ծընան երբէք և 'ի կա-
 նանց մահացուաց .
 Նա աւանիկ և Պրիամուն, է իսկ շատ
 ինչ ժամանակ,
 Ձի Արամազդ երես չառնէ, լըքեալ
 զնորայն ըզգաւակ .
 Իսկ փոխանակ զարմն Յնէեայ Թագ
 Տրոյացւոց կապեացէ,
 Որդիք որդւոց և որ յապայս ճեան հան-
 դերձեալ եկեացէ 108 :
 Այս նրմա Դշխոյն աչեղ ձայն ետ 'ի
 դիցն յակըմբէն .
 « Երկրասասանդ, 'ի դոյն խնդիր լէր
 խելամուտ դու քեզէն .
 Արդեօք Թափե՞լ քեզ զԵնէաս մահա-
 համբոյր 'ի սահուն,
 Եթէ Թողուլ, Թէպէտ քաջ է, յԱ-
 քիլէսէն գոլ նրկուն .
 Ձի մէք 'ի սպաս երկնաձեմից դիցն ա-
 կըմբին հասարակ
 Ես ինք դշխոյս և Աթենաս ուխտ երդ-
 մնակուռ ուխտեցաք,
 Ձի մի ազգին Տրովադացւոց խրախոյս
 տըւեալ և կամ ոյժ,
 Լիցուք երբէք 'ի նոցանէն զօրըն կար-
 ձե՛լ մահագոյժ,

Մի և յորժամ ողջ Տրոյիա 'ի հրոյն պա-
տեալ լախիլզող,

Ի մեր քաջացն Աքայեցւոց յաճիւն դարձ-
ցի և 'ի հող ։

Չայն զայս լուաւ մեծ Պոսիդոն երկրի
սարսիչն 'ի հիմանց,

Յարեաւ սլացաւ 'ի դուռ մարտին և 'ի
չկահիւն գեղարգանց ։

Եկն և եհաս ուր Ենէաս կայր և դիւց-
ազն Աքիլէս,

Եւ մառախուղ քօղ Աքիլէայ զաջօքն
էած փութապէս .

Ի յասպարէն Ենէասայ ըզտէգ հացւոյն
պրղընձեան

Կորզեաց և եդ Աքիլէսի մեծի ոտիցն
յանդիման ։

Անդէն և թափ ետ զօրութեամբ և զԵ-
նէաս առ 'ի վեր,

Վերաթևեալ խոնարհ յերկրէ նա վազս
առեալ սաւառնէր .

Վազեաց ընդ կարդ շատ դիւցազանց և
անցանէր 'ի վերոյ,

Վազեաց ընդ շարս և նըժուգաց, թռու-
ցեալ յաջոյն աստուծոյ ։

Չոքաւ եհաս 'ի վերջ զօրուն բազմա-
տադնապ 'ի մարտին,

Ուր անդ Կաւկոնք քաջակրուիւք 'ի զէն
'ի զարդ վառէին ։

Յայնժամ Ենեայ վեհ Պոսիգոնն ար-
 ձանացաւ առ ընթեր,
 Խորհուրդ քաջիկ ազգեալ նրմա արա-
 դաթև բարբառէր .
 “ Բզքեզ 'ի դից , ո՛ Ենէաս , կարթեաց
 կըռուէլ տարապարտ ,
 Եւ անխորհուրդ ընդ Աքիլէայ մարտ
 կաքաւէլ մենամարտ .
 Նա քան ըզքեզ քաջ և սիրուն է անմա-
 հից , ըզգոյշ լեր .
 Նա քեզ յորժամ դիմագրաւի , խոյս
 տուր դու մարտ մի դընէր .
 Զի մի կանուխ քան ըզսահմանդ 'ի դը-
 ժոխոց տունն իջցես .
 Այլ դու , յորժամ օրհաս մահուն ըզ-
 քաջն առցէ զԱքիլէս ,
 Արի յայնժամ նահատակեալ ձայն տուր
 մարտի անվեհեր ,
 Քեզ ոչ ոք այլ 'ի հելէնաց տէգ գո-
 ռասցի մահաբեր ” :
 Ասաց եթող ըզնա 'ի վայրն ազգեալ նը-
 մա զամենայն ,
 Եւ փոյթ յաչացն Աքիլէսին պարզեաց
 ըզմէգն աստուածեան :
 Յըստակատես որպէս յառաջն եղեալ
 յայնժամ դիւցազին
 Խոժողեցաւ , 'ի միտս եկեալ առ Ինքն
 ասէր զայրագին .

“Բա՛բէ, զարմանս հրաշից մեծաց ես ա-
կանեմ յանդիման ,

Ահա իմ տէգն առ ոտրս կայ և չակա-
նեմ զախոյեան .

Տէգն իմ շանթեաց , իղձ լինէի ածել
նրմա օրահաս .

Սիրուն ուրեմն է անմահից և այդ գիւց-
ազն Ննէաս :

Ես ասէի , թէ վայրասպար դա 'ի լեզուն
իւր պանծայ .

Այլ թող ասրի , ոչ ևս ընդ իս փորձ
փորձեսցէ տէգ նորա .

Դա արդ խնդաց , զի յօրհասէն զանձըն
թափեաց մազապուր ,

Այլ ջն այժմիկ ձայն տաց մարտի Յու-
նացն 'ի զէն քաջամուր .

Դիմագրաւեալ Տրոյեանց այլոց փոր-
ձեմ տիգին իմ ըզսայր ” .

Ասաց , վազեաց ընդ կարդ զօրուն , յայր
այր խրախոյս զայս կարդայր .

“ Արդ գիւցազունք Աքայեցիք , մի ևս
կայցէք 'ի բացէ ,

Այլ այր ընդ այր քաջ ընդ քաջի 'ի մարտ
արեան գոռասցէ :

Դըժընդակ է , որչափ և շատ իցէ կորուն
իմ և հոյն ,

Արձանանալ ինձ 'ի կրուիւ ընդդէմ ան-
չափ որերոյն .

Նա ոչ Պալասս և ոչ Արէս , թէպէտ ան-
մահք մեծաշուք ,

Ընդ-քիրտն հարեալ տարցին բերցեն զայս-
չափ մարտին ըզըջուկ :

Բայց իմ որչափ ձեռք բաւեսցեն , որչափ
և ոտք 'ի դաշտի ,

Որչափ և ոյժ , ես 'ի կրուուէլ դոււլ չարա-
րից վայրիկ մի .

Այլ ընդ ողջոյն կարդ ճակատուն արձա-
նացայց ախոյեան ,

Եւ Տրոյացին ոչ խնդասցէ խմոյն հանդէպ
գեղարդան » :

Ըսաց վառեաց . անդուստ Եկտոր խրա-
խուսական ձայն կարդայ ,

Ինոյն ժրտէր և դիմագրաւ կալ ախոյեան
Աքիլէայ .

« Տրոյացիք քաջք , յԱքիլէսէն մի վեհե-
րիք տարապարտ ,

Բա և ես ինքն ընդ անմահից բանիւք
չըթանց դընեմ մարտ .

Այլ մաքառել ընդդէմ նոցա և տէգ
չարժէլ գեղարդան

Դըժընդակ է . իբրև նոքա են ուժաւորք
անսպաման :

Քաւ , Աքիլէս ոչ ամենայն բանից իւ-
րոց վերջ տացէ ,

Այլ կէս նորայն բոլորեսցի , կէս մի կըր-
ճատ մընասցէ :

Ես ախոյեան խաղամ 'ի նա , թէսլէտ
ձեռքն է հուր ողջոյն ,

Ձեռքնորա հուր . խսկ և կորովն հրաշէկ
նրման երկաթոյն ” :

Ասաց և բոց մեծ բորբոքեաց , և տիգա
բունք ամբարձան ,

Ոյժ բանակին միաննացաւ , խօշիւն հըն
չեաց սաստկութեան :

Այլ յանդիման մեծն Ապողոն արձանա
ցեալ Հեկտորայ ,

“ Հեկտոր , ձայնէր , մի ախոյեան դիմա
գրաւիր Աքիլլէայ .

Գուր 'ի խուանի կացեալ զօրուդ , ան
դուստ մարտ դիր , ուշիմ լեր ,

Զի մի տիգեալ կամ թէ 'ի մօտ հարցէ
լղքեղ 'ի սուսեր ” :

Ազդեաց Փերոս , Հեկտոր ահեալ 'ի
թաւն եմուտ 'ի զօրուն ,

Տագնապեցաւ , երբ ազդարար ձայն զայս
լլաւ զաստուծոյն :

Բայց Աքիլլէս լեալ խառնամուխ թափ
'ի Տրոյեանս դիւցաբար ,

Գոչէր ահեղ և առաջին զԻփիտիոն յոգի
հար .

Սա քաջորդի Ոտրիւնտեսի և ամբօխից
էր արքայ ,

Զոր յաւերժ հարսն ծընաւ Նէյեան քա
ղաքաւերն Ոտրիւնտեայ .

Մերձ ձիւնաւէտն 'ի Տըմողոս յԻդեան
 դաւառն 'ի յուռթին ,
 Աքիւլ ըզսա ըզխոյացեալն 'ի տէգ խոյ
 ցեաց նիզակին .
 Ընդ մէջ գլխոյն եհար թափով , և ճեղ
 քեցաւ կէս 'ի կէս ,
 Անկաւ դոփեաց , և ճոխաբար ոտնհար
 եղև Աքիւլէս .
 « Գու Ոտրիւնտեանդ , անտ անկեալ կաս
 բնաւից ասեղդ աննրման .
 Քո 'ի մահուդ աստ է դամբան , ճեաքո
 'ի լիճն է Գիւգեան ,
 Անդ ուր է քո հայրենատուրն երկիր
 կալուած մըրդաւէտ ,
 Մօտ 'ի յԵրմոս յորձանախորն և 'ի յԻւղ
 դոս ձկնաւէտ » :
 Ոտնհար եղև , և մէգ մահուն զաջօք մա
 ծաւ խաւարին ,
 Սըմբակք ձիոց 'դ երկաթապատ անուօքն
 ըզնա ջախեցին :
 Սլացաւ երկրորդ վարազաբար 'ի Գեմո
 ղոն շահատակ ,
 Էր սա ռաղմիկ ներհուն մարտից Անտե
 նորեայ քաջ զաւակ .
 Կըշիւ 'ի քունս եհար նորա ընդ սաղա
 ւարտ պըղընձին ,
 Այտ պըղընձեայ գլխանոցին ոչ ժուժկա
 լեաց նիզակին .

Ի սայր թափանց զոսկրն ջախտաց, զու-
ղեղն՝ ի ներքս անդ ողջոյն
Ընդ ասպաժոյժ իւր շողախտաց և ըզվի-
րագն եդ նըկուն :

Դիմեաց ապա յԻսպոդամոս խոցեաց
տիգաւն ըզքամակ ,

Որ ՚ի կառացն ՚ի վայր վաղեալ հանդէս
փախչէր նըշաւակ .

Յոգւոց թասէր և բառաչէր որպէս ըզ-
ցուլ ՚ի զոհին ,

Զոր պատանիք ձրգեալ քարչէն հանդէս
Ելկեայ արքային ¹⁰⁹ ,

Եւ զայն ՚ի շուք Երկրասասանն տեսեալ
յոգին իւր խնդայ ,

Այսպէս և սա մինչ սրուոջայր , խիզախ
ոգին լիք ըզնա :

Ընդուստ տիգաւ վաղեաց ՚ի վեստն ՚ի
Պրիամեան Պողիւզոր .

Պերճ՝ պատանւոյն հայրըն չեթող ՚ի մարտ
մըխիլ ահաւոր .

Զի սա կրտսեր ՚ի մէջ որդւոցն էր պա-
տանեակ գիւցանման ,

Եւ սիրաբուն յոյժ ծընողին , էր և ՚ի
վազս աննրման .

Սա պատուասէր զարագ ոտիցն հանդէս
ցուցեալ մանկաբար

Անցեալ յառաջ ընդ նահատակս , տա-
պաստ անկաւ հիքաբար .

Վազէր խիզախ, 'ի Թիկնամէջն հար Ա.
 քիլէս զայր տիգին
 Ուր աղեք ոսկիք ունին զկամար և ուր
 պատեանն էր կրկին .

Սայր գեղարգանն հարեալ 'ի պորտն յայն
 կոյս 'ի Թափ անցանէր ,
 Անկաւ 'ի գուճս յոգւոց հանեալ ողոր-
 մելի Թառաչէր .

Ամբ խաւարին մահահրաւէր բակ ըզնո-
 վաւ պարուրեաց ,
 Կըքեալ 'ի վայր նա իւր ձեռամբք առ զա-
 պաժոյժն ախոնդեաց :

Մնդուստ հեկտոր այն ինչ ետես ըզՊո-
 ղիւդօր զիւրն եղբայր ,
 Զի զախոնդիան ունէր ձեռօքն յերկիր
 կըքեալ 'ի խոնարհ

Աչք միգապառք և աղեկէզ 'ի ծուփ
 սրտին խորհրդոց ,
 Ոչ հանդուրժեաց շեշտ յԱքիլէս շուրաց
 տիգաւն իբրև բոց :

Ետես Աքիլ վազեաց անգէն ձայն մե-
 ծապանծ արձակէր

« Ահա մեզ այրն , ահա վիրագն որ զիս
 խոցեաց կարեվէր .

Դա զիմ արգոյն յոգի եհար զիմ համա-
 հարզ սիրաբուն ,

Զի ևս կըռուեալ, մեք 'ի միմեանց խու-
 ճապեսցուք 'ի կըռուոյն » :

Ասաց, և խեթ հրացայտ աջօք ձայն սոսկալի արձակեաց,

«Արի՛ Հեկտոր, քո ճեպ ընդ ճեպ հատցի այսօր թե՛լ կենաց» :

Իբրևաւ Հեկտոր, պակեաւ ոչինչ և անվեհեր ետ բարբառ,

«Մի՛, Պեղոսեանդ, ինձ ահ ածել իբրև մանկան մի՛ յուսար .

Չազդէն ինձ բանք, և ես ինքնին գամ խեղամուտ յամենայն,

Գիտեմ լինել նախատակո՞ծ գիտեմ լինել հեգնաբան .

Հըզօր հուժկու գիտեմ ըզքեզ, և ես շատ առ քև եմ խոնարհ,

Այլ յաստուածոցն՝ ի ծոց կամաց հանդուցեալ կայ այս պայքար :

Թէպէտ խոնարհ, այլ տէգընկէց առից ի քէն ըզհոգին,

Բա՛ սայրասուր թափ անցանէ նա և իմ տէգ նիզակին» :

Ասաց Հեկտոր ճօճեաց զաշտէն կըշուեաց հանդէպ և ձըգեաց,

Բայց Աթենաս փշմամբ ըզսայրն՝ ի դիւցազնէն զարտուղեաց .

Շունչ դիւցական փչեաց մեղմով, և Հեկտորայ դիւցազին

Տէգն առաջի ոտից նորա դարձաւ անկաւ ի գետին :

Հուր վառեցաւ 'ի յԱ.քիլէս մոլէր հա-
րուլ 'ի յողի ,
Յարձակեցաւ առիւծաբար անյնիւ գո-
չէր սոսկալի :

Լ'նդուսա զԵկտոր վեհն անպարտն առ
գիւցարար և կորզեացաւ
Փրկեալ հեշտին յօդ բալաձիդ քողածա-
ծուկ բակ գործեաց :

Երեցս ասեղ անդ Ա.քիլէս սլացաւ 'ի
տէգ գոռութեան ,

Երեցս յայնժամ զուր տարապարտ զօդ
հարկանէր թանձրութեան .

Իսկ և յորժամ չորորդ նըլագ գիւցազնա-
բար խիզախեաց ,

Ծանրացասունս Ա.քիլլ յայնժամ ձայն
ահագին որոտաց .

« Դու մազապուր 'ի մահուանէ և զայս
նըլագ զերծար , շուն ,

Փերոս փրկեաց 'ի մօտալուտ օրահասիդ
'ի սահուն .

Կացցես յաղթս յորժամ շրջիս դու 'ի
փըքնացն 'ի տարափ ,

Բայց ես զարեգ հատից ասլա սլացեալ
'ի քեզ յահեղ թափ .

Անշուշտ եմ ես , եթէ և ինձ է ոմն առ-
տուած զօրավիդ .

Իսաղամ ես արդ յայլ նահատակս վանեւ
յիս տէգ քաջաձիդ » :

Լսաց, 'ի Դրիւս 'ի փողամէջն հարտեգ,
 ճրգեաց ընդ ոտիւք,
 Եթող ըզնա՝ հար զՓիլտորեան ըզքա-
 ջայազմն ըզԴեմուք .
 Տիգահարեաց 'ի ծունկ նորա և առ ե-
 տեղ կապեցոյց,
 Վաղակաւոր 'ի գործ առեալ մըխեաց
 անդէն մահացոյց :
 Ի Լատոսս, 'ի Դարդանոս դիմեաց յոր-
 դիս Բիասին,
 Բընահարեալ զԵրկունն անդէն վարեաց
 կառացն 'ի գետին .
 Տիգեաց 'ի մին, ըզմիւսն առեալ եհար
 'ի սայր սուսերի,
 Տապաստ 'ի նոյն զԱլաստորեան զայրն
 արկանէր տրոյսցի .
 Սա ըզծընգօք ողոքաւոր փարեալ հան-
 դեպ գիւցազին,
 Հայցէր ըզկեանս և փորձ փորձէր գորով
 յուզէլ 'ի սրտին .
 Մի հարկանել ըզնա յողի, գուով առոյգ
 համատիք .
 Անմիտ, կարծէր գըրգալ ըզնա բանիւք
 ողոք և քաղցրիկ .
 Հեզ չէր Աքիւլ, այլ խրոխտ խիզախ,
 չէր և ոգւով բարեբուն .
 Մինչ գեռ փարեալ նա ողոքէր, եհար 'ի
 լեարգն ըզգաշոյն .

Կորզեաց արտաքս և ապաժոյժ արիւն
զեղաւ 'ի ծոցին ,
Խաւար զաջօք մաժաւ նորա , փչեաց ան-
դէն ըզհողին :

Ա յզեաց Աքիւլ, Մուլեայ ընդ ունկն
ըզտեգն եհար զաշտէի

Եւ շէշտակի ընդ միւսն յայնկոյս սայրն
անցանէր պրղընձի :

ՅԱգենորեանն յԵքեկլիոս հար սուր ընդ
մէջ ճակատուն ,

Լայնադաստակ վաղակաւորն ողջոյն ջե-
ռաւ 'ի յարիւն .

Ձաջօք նորա դառն օրհասիւ մահըն պա-
տեաց ծիրանի .

Ի Դեւկաղոն դիմեաց ապա , 'ի ձեռն
հար սայր պրղընձի .

Կըռեաց 'ի վայրն ուր և գնացեալն եարգք
արմրկան միանան ,

Տանջէր վերօքն , եկաց անշարժ տեսեալ
ըզմահն յանդիման .

Աքիւլ ըզգլուխ և զսաղաւարտն արկ
սուր ածեալ 'ի փողին ,

Յայտեաց ուղեղն յողնաշարէն , տապաստ
անկաւ 'ի դետին :

Ի Ռիգմէոս Պիրեայ որդին սլացաւ ապա
դիւցաբար ,

Որ յարգաւանգն 'ի Թրակիոյ 'ի յԵղիոն
չու արար .

Տէգ հար 'ի մէջն և խորամուխ վարսեաց
ըզսայրն յորովայն .

Ոչ հանդարտեաց, նա և ըզքաջն հար զԱ
րեթոս պաշտօնեայն .

Գարձ տայր ձիոց, նա ըզքամաղն եհար
'ի սուր 'ի նիզակ ,

Թափ 'ի կառացն հոսեաց ըզնա զահան
դեցան երիվարք :

Որպէս անկեալ հուր երկնասաստ յան
տառախիտ 'ի հովտին ,

Ի ծարաւուտ 'ի լեռնավայրն այրէ ըզ
թաւ ըզմայրին .

Մըրրիկ հողմոյն աստի անտի ըզբոցն հա
րեալ սաւառնէ ,

Այսպէս Աքիլլ ամեհացաւ յիւր յաղթ
'ի սուր նիզակէ :

Հրոսեալ վանէր աստուածակերպ 'ի մահ
վարէր գիւցաբար ,

Եւ յորդահոս յապաժուժից արեանց եր
կիրն առուանայր :

Որպէս գեղջուկն 'ի լուծ ձրդէ լայնա
ճակատ զոյգ եզանց


Կասուլ 'ի կալ բոլորածիր զգարին սպի
տակ 'ի հասկաց ,

Կըճղակք կոխեն և հատք ոստնուն փե
ճեկազերծք հեշտաբար ,

'Նոյն Աքիլլեայն սըմբակք ձիոց կոխեն
զանկեալս և զասպար .

Ներքոյ առանցք նոյն և պրսակք կառացն
յարիւն շաղախին ,
Զոր նրժուգաց սրմբակք 'ւ անիւք մեծա-
կայլակ ցայտէին :
Վառէր դիւցազն 'ի շուք փառաց շահա-
տակեալ դիւցանման ,
Եւ ընդ արիւն ընդ ապաժոյժ ձեռքն ա-
հաւորք շաղեցան 110 :





ԵՂՒԼԱԿԱՆ



ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԻԱ.

ՆԱԽԱԳԻՐ ՈՒԹԻՒՆ

Տրոյացիք ահաբեկք խուճապին կէսք
 'ի քաղաքն և կէսք յափուռնս գետոյն
 Սկամանդրեայ : Գետավէժ լինին անձ-
 նապուր լինել յԱ.բիլլեայ : Նա վանէ
 զնոսա մինչև 'ի մէջ անդր գետոյն և կո-
 տորէ : Լիւկայոն որդի Պրիամու և Ա-
 քիլլէս հանգիպին միմեանց . զրոյցք նո-
 ցա հետաքնինք : Ատերոպոս մեծն սպա-
 նանի յԱ.բիլլեայ : Սկամանդրոս գետ մո-
 լի ընդդէմ դիւցազնն : Նորահրաշ մարտ
 գետոյն ընդ Ա.բիլլեայ : Սիմոն գետ ընդ
 Սկամանդրեայ հնարին ողողել զԱ.բիլլէս :
 Հեփեսոտէս յառնէ ընդդէմ գետոյն և
 բոցակիզէ : Նկարագիր հրաշալի հրդեհի
 գետոյն : Ա.բիլլէս խաղայ 'ի Տրոյիս : Ա-
 հաբեկուծիւն Պրիամու : Ագենոր ճա-
 կատի ընդդէմ Ա.բիլլեայ : Ապողոն 'ի նը-
 մանուծիւն նորա դաւէ զԱ.բիլլէս :

Տեսարանն է , կէս մի 'ի մէջ գետոյն
 Սկամանդրեայ և կէս մի 'ի դաշտի :



ԵՂՒԸՆԸՆ

ՀԱԳՆ ԵՐԳՈՒԹԻՒՆ ԻԱ.

ՆԱՍԵԱԼՔ 'ի հուն գետոյն մաղդեղն Իս
կամանդրին գեղահոս 111,

Անդ Աբիլէս արկ անջրպետ փախըստէից
Տրոյացւոց .

Ըղկէս նոցուն խուճապեցոյց ընդ գաշ-
տավայրն 'ի յոստան ,

Յորում հելէնք օր մի յառաջ խուճա-
պէին ցիրուցան ,

Յորժամ հեկտոր Պրիամոսեան շահա-
տակէր քաջարին .

Յայն գաշտավայր արդ Տրոյացիք աստ
անդ օձտեալք վարատին :

Խոչ փախըստեան Տրոյեանց Հերա պա-
 տեաց մըթին զարամուր ,
 Մինչ կէս նոցուն յարծաթ յորձանսն ան-
 կան գետոյն խորաջուր .
 Հնչեն գըրգանք բումբէն ափունք յարձա-
 դանգաց ահագին ,
 Նոքա գուժիւ անկեալք 'ի լիւղ 'ի յոր-
 ձանաց ձրգձրգին :
 Որպէս ջորեակք 'ի Թափ հըրոյն թեւա-
 ծելով տարմաբար ,
 Եւ 'ի գետ կոյս վայր ապաստան խնդրեն
 նոքա դիր և տար ,
 Չի բոց անգուտ անխոնջ հըրոյն բորբո-
 քեցաւ յանկարծոյն ,
 Նոքա խուճապք մի ըզմիով հոսին 'ի ջու-
 րըս գետոյն 112 ,
 Այսպէս անդ խուռն արամբք , ձիովք
 Թափ յԱքիլէայն մեծազօր
 Լընոյր Քսանթոս գետն հոյակապ կար-
 կաջահոսն , յորձախոր :
 Բայց Աքիլէս ըզտեգն առ ափն եթող
 յեցոյց 'ի մոշայս ,
 Եւ վազս առեալ անդ դիւցաբար ոստեաւ
 գետոյն 'ի յորձանս .
 Չեռք 'ի նրան , միտք իւր յարին , յաջ
 և յահեակ հարկանէր ,
 Գուժայր մնչիւն խողխողէլոց , ջուրն 'ի
 բոսոր ներկանէր :

Որպէս գըլբինէն յահագնակէտ կայտառք
 ձրկանց խուճապին ,
 Սուրան ահիւ լընուն ըզխորչս անքոյթ
 ծոցոյն 'ի ծովին ,
 Ձի զորս ունի վիշապն այն ձուկն , ազա-
 տութիւն չիք երբէք ,
 Նոյնպէս Տրոյեանք սրավար գետոյն ըօ-
 ղին յալուցս ահաբեկ :
 Արբեցաւ սուրն . ընտրեաց Աքիւլ առ-
 պատանիս երկտասան
 Ի ձօն զոհին պատարագել 'ի վրէժ մա-
 հուն պատրուկեան :
 Իբր եղջերուս 'ի դող հարեալ կորզեաց
 զնոսս յալուցաց ,
 Եւ յետս 'ի կոյս ըզձեռս նոցա ամուր
 փոկովք կաշկանդեաց
 Նոցայն փոկովք , յոր ըզբաճկոնս հան-
 գրիճէին սընդապէս ,
 Եւ յանձն առնէր նիղակակցաց տանել
 նաւացն 'ի հանդէս :
 Այլ ազեաց 'ի ջուր անդրէն ըզսուրն ար-
 բուցանել յարենէ ,
 Եւ Պրիամեան Լիւկայոնին փախուցե-
 լոյն պատահէ :
 Ըզսա երբեմն կալեալ Աքիւլ 'ի հայրենի
 կալուածոյն
 Առ և վարեաց ըզնա բըռնի հասեալ 'ի
 պահ գիշերոյն :

Սա զոստըս մորչ ժանտ թըղենւոյն , պը-
սակ գործել իւր կառաց
Կըտրէր . անդէն գուժեաց Աքիլ անկար-
ծելին իւր արկած :

Տարաւ 'ի նաւս , 'ի մարդաշատն հան 'ի
Լէմնոս 'ի վաճառ ,
Եւ Յասոփի որդին յայնժամ հատոյց ըլ-
գինն և էառ .

Իսկ հիւր նորա Իմբրեան Ետոփն տը-
ւեալ ըզձիր փրկանաց ,
Շատ կարասի ետ և 'ի մեծն 'ի յԱրիսբէ
արձակեաց :

Նա դաղտագնաց 'ի Լէմնոսէն 'ի տուն
չոքաւ հայրական ,
Անդ օթանայր ընդ սիրելեաց խնդայր ա-
ւուրս մետասան .

Յերկոտասանն աստուած դարձեալ մա-
տնեաց ըզնա Աքիլեաց
Ի մահ վարել և դըժոխոց 'ի տունն յըղել
ակամայ :

Րզսա Աքիլ ետես յայնժամ . էր Լիւ-
կայոն մերկ 'ի բուն

Ոչ սաղաւարտ ոչ տէգ ասպար . արկ 'ի
գետին նա ողջոյն :

Եր քրտնահար 'ի փախըստեան , ծունկք
կըթուցեալք և վաստակք .

Ետես Աքիլ ասէր ընդ ինքն իբրու է-
ղեալ դըժկամակ .

« Բա՛բէ հրէշիցս, ահա Տրոյեանք հա-
րեալքն 'ի յիմ նիզակէն
Զխորդ 'ի Լոյս դառնան կրկին 'ի խաւար
չուտ գիշերէն •

Որպէս փախեալ սա դառն յօրէ անդ
վաճառեալն 'ի Լէմնոս,
Զոր ոչ սանձեաց շատից սանձողն և ահա
գինըն Պոնտոս •

Այլ աղէ մէք և մեր տիգլին տացուք դը-
մա ըզճաշակ,

Տեսից դարձեալ և անպատիր քաջ լինի-
ցիմ էս գիտակ,

Եթէ արդեօք դա և անդուստ դարձ ա-
րարեալ փախիցէ՞,

Սանձէ՞ ըզնա հող կենսաբունն, որ և քա-
ջաց սանձ գրնէ ։

Ըսէր, և նա մատեալ դողմամբ փարեւ
զծընդօք դիւցազինն,

Անձկայր ապրեւ 'ի մահուանէ և յօրհա-
սէ խաւարին ։

Զաշտէն ամբարձ ահեղատէգ խոցեւ ըզ-
նա Աքիլէս,

Նա իսկ և իսկ կալաւ ըզծունդս յերկիր
կըքեալ հիքապէս •

Վերոյ թիկանց թըռեալ աշտէն և վար-
սեցաւ 'ի գետնի,

Մընաց այնպէս առկայացեալ մարմնոց
մարդկան ծարաւի ։

Այլ նա միով ձեռամբ ըզժուռնդս միւ-
սով զաշտէն սլինդ ունէր .

Կալեալ այնպէս ձայն 'ի խորոց աղիողորմ
արձակէր .

«**I**նձ առ ծընդովքդ ակն ան և դուժ ,
քաջ մագղեղանց Աքիլէս ,
Ես այժմ իբրև ողորջաւոր անդրժեղի եմ
առ քեզ .

Ընդ քեզ երբեմն առի ճաշակ ես ըզպրտ-
ղոյն Դեմետրեան ,

Յաւուր յորում կալար դու զիս 'ի շէն
կալուածս հայրական .

Տարաշխարհիկ յիմոցս հաներ զիս 'ի Լե-
մսոս 'ի վաճառս ,

Հարիւրեղանց անդ արժեցայ , երիցս
այնչափ տաց փրկանս :

Երկոտասան այգն ընկալաւ զիս յԵղիոն
վշտագին ,

Եւ արդ զիս քեզ մահաճամբոյրն օրհաս
մատնեաց վերըստին :

Անշուշտ Դիայ եմ դրժպըհի , որ զիս կըր-
կին քեզ մատնէ .

Եղո՛ւկ եմ ես , զիս կարճակեաց ծընաւ
մայրն իմ Լատթէ

Գուստր արքային քաջ Լէլեգեանց Աւ-
տաոսի ծերունւոյն ,

Որ և բնակէ մերձ 'ի Սասնի 'ի Պեղասոն
'ի բարձուն .

Դուստր ըզսորա , որպէս զչափց , մե-
ծըն Պրիամ 'ի կին ած ,
Երկուք ծընաք մէք 'ի նմանէ , Երկուցն
ածցես այժմ օրհասս :

Ձի զՊողեւդոր նահատակեալ 'ի կարգ
զօրուն հետեակ ,
Տապաստ արկեր հարեալ ըղնա 'ի սայրա-
սուր 'ի նիզակ .

Ձարդիս և ինձ առ դուրս հասեալ կայ
օրհասիս դառն արկած ,
Անշուշտ չապրիմ 'ի քոյն բազկէ , զի ոմն
'ի դից զիս կարթեաց :

Բայց ըւեր այլ ինչ . չեմ հեկտորայ ար-
գանդակից , յիս ո՛վ տէր ,
Այն որ ըզհէզն յոգի եհար և զկորովն
քոյ ընկեր ” :

Լայսպէս յողոք Պրիամոսին մաղթէր որ-
դին հոյակապ ,
Բայց դըժպըհի լըւաւ անդուստ բանս ան-
ամոք սրտաթափ .

“ Այ մանկամիտ . մի ինձ խօսիր ըզփըս-
կանաց ինչ հանդէս ,
Յորմէ հետէ յօրհաս մահուն իմ գրաւե-
ցաւ Պատրոկղէս .

Յառաջ հեշտ էր իմոյ ոգւոյն խնայել
Տրոյեանց սիրաբար ,

Շատ զոք կալայ՝ ես կենդանւոյն և շատ
հանի 'ի վաճառ .

Այլ արդ ոչ ոք 'ի Տրոյացոց խուսա-
 փեսցէ յօրհասէ ,
 Զոր միանգամ մօտ յԵղիօն աստուած 'ի
 ձեռս իմ մատնէ ,
 Տրոյեանց ոչ ոք և մանաւանդ 'ի Պրիա-
 մուն զաւակաց .
 Բայց աղէ , քաջ , մեռիւր և դու . զի՞ քեզ
 հաշիւ 'ի լալեաց :
 Շատ քան ըզքեզ այրն հոյակապ և Պատ-
 րոկղէս մահ էառ .
 Ո՛չ տեսանես և զիս ինքնին այր տխա-
 նեան գեղափառ ,
 Հայր ինձ ունիմ քաջ և արդոյ և մայր
 ունիմ դիցանոյշ ,
 Բայց և այնպէս և ինձ ինքնին ժամն ե-
 կեսցէ մահագոյժ .
 Զիս օրահաս առցէ մահուն կամ 'դ ա-
 ռաւօտն կամ ընդ այդ
 Կամ յերեկոյն հասեալ 'ի ժամ և կամ
 յաւուր հասարակ ,
 Յորժամ մարտիկ ոք յիս կըշուեալ քաղէ
 յինէն զիմ ոգին ,
 Կամ տիգահար կամ լայնալիճ հաստ ա-
 ղեղանցն 'ի փըքին 113 » :
 Լուաւ ըզգոյժն , և ծունկք լուծան , ո-
 գի նորա նըւաղեաց ,
 Ելիք զաշտէն , փարեաց զԱքիլ ձըգեալ
 դաստակս ըզձեռաց :

Բայց Աքիլէս մերկեալ ըզսուրն էհար
ընդ զոգն ընդ փողոյն,
Եւ խորամուխ սուր զերկսայրին անցու-
ցանէր թափ ողջոյն •

Յորսայս անդէն թաւալագլոր տապալէ-
ցաւ անյարիր ,

Եւ թուխ արեանցըն ապաժոյժ խաղայր
թանայր անդ զերկիր •

Ըզնա Աքիլ առ զոտանէն և ետ դետոյն
յորձանաց ,

Ոտնհար եղեալ 'ի Լիւկայոն ձայն ար-
ձակէր մեծապանծ •

« Հանգիր անդէն , ո՛ր Լիւկայոն , դու ընդ
ձրկանցըդ դասու ,

Որ զապաժոյժ քոյին վերիդ լիզուն դո-
քա յանդորրու •

Ոչ մայրըն քո կոծեալ ըզքեզ արդ հան-
գուսցէ յանկողին ,

Այլ սկամանդրեանն ըզքեզ յորձանք
տարցին 'ի ծովն ահագին 114 •

Անդ թինդս առեալ ձուկն ընդ ալիս
քրսոմնածածան կապուտակ

Եւ կերիցէ զԼիւկայոնիդ զանոյշ ըզ-
ճարպն ըսպիտակ :

Չձեզ մահ առցէ , մինչ մէք առցուք
զԵղիոնին սուրբ ոստան ,

Դուք խուճապեալք թիկնադարձոյցք ,
Էս ցանգ յետուստ 'ի հարման •

Ձեզ ոչ գետոյս այս գեղահոս արծաթ
յորձանքն օգտեսցէ,

Որում յաճախ ցուլըս բաղումն առնուք
յազել 'ի դաշտէ .

Դուք 'ի յորձանսն ողջ արկանէք և ե-
րիվարս օգապար 115 ,

Բայց և տասպատ անկանիջիք յօրհաս մա-
հուն չարաչար .

Մինչև լուծջիք ողջիկ ըզվրէժ ըզՊատ-
րոկդեայ ըզմահունն

Եւ ըզՅունաց զոր ըսպանէք, մինչ ես էի
բացական ʔ :

Լըւաւ Քսանթոս, ծանրացասումն ընդ-
միտ լինէր խորազգաց ,

Զիւրդ դիցէ խոչ Աքիլէայ, կարճել
Տրոյեանցն ըզհարուած :

Բայց նա դիմեաց յԱստերոպոս ասե-
ղատէգ 'ի բրոնն ,

Անձկայր մահուն զօրհասն ածել Պեղե-
գոնեայ զաւակին .

Լայնահոսան Աքսիոսին էր սա ծընունդ
և Պերբեայ ,

էր Պերբէն երիցագոյն 'ի մէջ դըստերց
Ակեսմեայ .

Գետն ընդ սըմա յորձանախոր եկըն
խառնիցն 'ի զուգման ,

Ում և ընդդէմ ամէհացաւ դիւցազն յայն-
ժամ Պեղոսեան :

Նա 'ի գետոյն եւ ախոյեան տէգ ունեւ
լով ըզկրկին ,

Որում Քսանթոսն երկնահոսան կորով
չնչեաց 'ի սրտին :

Էր իսկ Քսանթոս ծանրացասումն 'ի
մահն առոյգ պատանեաց

Զորս 'ի հոսանս նորա Աքիլլ անգութ
սրտիւ կոտորեաց :

Սինչ ախոյեան անդ իղձ լինէր զիւրն
փորձել ախոյեան ,

Նախ Աքիլլէս հարցումն առնէր արձա-
նացեալ յանդիման .

« Ո՞ր էս և յոյց , որ ժըսեցար կալ ինձ
ընդդէմ նահատակ .

Բա՛ , իմ թափոյն դիմագրաւեալքն հի-
քացելոց են զաւակք » :

« Քաջ Պեղոսեանդ , դիւցազն անդէն
Պեղեգոնեան ձայն կրկնէ ,

Խնդրէս զիմ ճեան , ես Պէոնեայ եմ
յարգաւանդն 'ի յերկրէ .

Տարագէմ կայ . ես քաջատէգ եմ Պէո-
նեանց ախոյեան ,

Անդուստ եկի 'ի Տրոյիա , են արդ աւուրք
մեռասան .

Բայց ծընուող եմ լայնահոսան արգոյ
գետոյն Աքսոսին ,

Այս Աքսոս գեղավըտակ ջուր ծաւալէ
ընդ գետին .

Սա զՊեղեգոն ծընաւ զարին, այսպէս
զիմ ճեան համբաւեն .

Այլ արիքաջ, փորձ փորձեսցուք 'ի մե-
նամարտ հանգիսէն ։

Եւ յա ձայն կարգաց, Աքիլլ ամբարձ զՊե-
ղեան հացւոյն ըզնիզակ,
Կրկին տիգօք ել Աստերոսն յերկուց ձե-
ռացն յաջողակ .

Շէշտեաց միովն հար ըզվահան, այլ
Թափանցանց ոչ խրդեաց,
Ըզդէմ կալաւ Թիթեղն ոսկի գիցապար-
դւրն գործած .

Գըծեաց միւսով զաջոյ բազուկն և սեաւ
արեան բուղն ցայտի,

Աշտէն Թռուցեալ վարսեալ յերկիր
մընաց արեան ծարաւի ։

Երկրորդ Աքիլլ 'ի յԱստերոս շան-
Թեաց սրավարն ըզնիզակ,

Թափանց 'ի սիրտն անձկայր մըխել, վըխ-
պեաց հարուլ նըպատակ .

Թըռեաւ հանգէս ըզբարձրաթումբ
գետափն եհար ուժգնապէս,

Առ դարափամբ տէգն հաստաբուն անդ
վարսեցաւ կէս 'ի կէս ։

Վաղեաց Աքիլլ վարազաբար ձըգեալ ըզ-
սուրն յազգերէն,

Նա բուռն հարեալ տէգ զԱքիլլեայ չու-
ժեաց կորզել 'ի դարէն .

Երիցս 'ի տէգն յաղթաբազուկն ետ ցունց

'ի շտապ 'ի տագնապ

Ճըգնէր կորզէլ, երիցս և անդ պարտա-
սեցաւ ուժաթափ .

Ի չորրորդումն իբրև մոլէր թէքէլ ջա-
խէլ ըզհացին ,

Աճասարեալ Աքիլ ըզնա սուր սուսե-
րաւ հար յոգին .

Շէշտ առ պորտիւն հար յորովայն , ողջ
ախոնդիքըն վայթէր ,

Խաւար պատեաց զականողիս մինչ նա
յոգւոցըն պարզէր .

Դիմեաց Աքիլ և ճոխաբար ոտնհար
եղև առ 'ի լանջ ,

Կասպտեաց ըզգէնս հիքացելոյն և մեծա-
պանծ ձայն կարգաց ,

“Անց հէգդ այդպէս . բա՛ խիստ է քեզ
ընդ ճետս յաղթող Դիոսին

Ընդ մազդեզանց 'ի վէգ խաղալ թէպէտ
ճետ ես գետածին .

Դու ասացեր ըզքեզ ծընունդ լինել գե-
տոյն լայնահոս ,

Այլ ես 'ի ճետն իմ պանծանամ զի իմ
ծընողն է Դիոս :

Այր ծընաւ զիս, որ ճոխաբար շատ Միւր
միդեանց տիրանայ ,

Այն է Պեղոսն Էակոսեան . իսկ Էակոսն
'ի Դիայ :

Որչափ Դիոս վեհ է քան զգետոս որ 'ի ծո-
վուն թափին ծոց,

Այնչափ վեհ է ծընունդ Դիայ քան ըզ-
ծընունդըս գետոց :

Գետ աւազիկ մեծըն ֆսանթոս, թէ
բաւեսցէ քեզ օգնել :

Այլ չիք նրմա 'նդ Ամարոսայնոյն կըշիւ-
'ի վէգ ելանել :

Նրմա և ոչ գայ համեմատ Աքեղոսն
արբենին 416,

Եւ ոչ անչափն անդընդախորն Ովկիա-
նոսն ահագին :

Յորմէ բրկեն գետք ամենայն ծովք ամե-
նայն և ծովակք,

Եւ ամենայն աղբերակունք և խոր ջըր-
հորք և արձակք 417 :

Սակայն և նա ահաբեկի յԱրամազդայն
չանթ հրացան

Եւ 'ի շուինդն որոտընդոստ յորժամ
յերկնից տայ ըզձայն ։

Ասաց, և անդ զպըղընձակուռ կորզեաց
ըզտէգն 'ի դարէն,

Եւ ըզգիակն ընդ ապաժոյժ ընդ ապա-
լառ թող անդէն :

Նա կայր այնպէս զխաղնացեալ տա-
պաստ վերայ աւազոյն,

Եւ սևաջուր 'ի հոսանաց թանայր ըզնա
ջուր գետոյն :

Շուրջ կայտուային օձաձրկունք և բոյլք
ձրկանց խրոնէին ,

Եւ թինդս առեալ զերիկամամբք պա-
տեալ ըզճարսն ուտէին :

Միգուստ Աքիլ ըզհետ պընդէր Պէոնա-
ցւոցն ասպազէն ,

Որք առ գետովն յորձանախոր խուճա-
պէին 'ի յահէն ,

Իբրև տեսին 'ի գոռ կըռուին զիշխան իւ-
րեանց կորովն

Հարեալ 'ի սայր Աքիլէսի ասեղազօր
սուսերին :

Հար նա անդէն և զԹերսիզոք , զԱստիւ-
պիւղոս , ըզՄիւրոն ,

Եւ ըզՄնեսոս , ըզԹրասիոս և զՈփե-
լէստ , զԵնիոն :

Տասլաստ և շատ զոք արկանէր , թէ ոչ
Քսանթոս յորդխաղաց

Ծանրացասումն և մարդակերպ ձայնէր
'ի խոր յալուցաց .

« Ահէս բնաւից , ս' Աքիլէս , բայց և
գործես դըժպըհի ,

Իբրև զի ցանդ աստուածք ինքնին քեզ
շուրջ կացին հովանի .

Ողջ ըզՏրոյեանս թ' ետ քեզ Դիոս մատ-
նել ժանեաց օրհասի ,

Յիմ' հոսանաց վարեա արտաքս , երթ
դու գոռա 'ի դաշտի .

- Արդէն յորձանքս իմ գեղահոս 'ի դիականց էն զեղուն ,
Եւ խափանիմ զիմ յորդ հոսանսն խաղալ թափել 'ի ծովուն .
- Անձուկ է ինձ 'ի դիականց , և դու ցանդ կաս 'ի հարման .
- Աղէ դու քաջ , գըլա վայր մի . տաղտկացեալ եմ , ո՛ր իշխան ” :
- “ Քսանթէ մագդեղն , Աքիլ կրկնեաց , լիցի՛ որսէս տաս հրաման ,
- Այլ ես Տրոյեանց երդմնահարից օրհասածել դուլ չըտամ ,
- Մինչ չև փակեալ 'ի ներքս յոստան և Հեկտորայ դէմ առ դէմ
- Տաց ես ճակատ . կամ նա հարու կամ ես ըզնա յիմ աշտէն ” :
- Ասաց դիմեաց , աստուածակերպ արկ 'ի Տրոյեանս բոց հրահոս .
- Ճեպ ետ ձայնէր առ Ապողոն յորձանախորըն Քսանթոս .
- “ Բաբէ , արքայդ արծաթաղեղն , Արամագդայ քաջ զաւակ ,
- Զոր նա ճըշգրիտ քեզ հրամայեաց բան չըհաներ դու 'ի յանդ .
- Ասաց , Տրոյեանց կալ հովանի և ոյժ չնչէլ անվրկանդ ,
- Մինչ երեկոյն 'ի մոլթ 'ի ստուեր պատէ զերկիր արգաւանդ ” :

Լըլաւ Աքիլ սրտովրոտեցաւ, դիմեալ 'ի
 գետն 'ի յափանց
 Վազեաց 'ի մէջն . ամեհացաւ գետն 'ի
 գըրգանս հոսանաց .
 Թափ ետ 'ի նա և պըտուտիւքն ալեաց
 զալեօք տայր հորդտն ,
 Եւ դիակոյտք, զոր հար Աքիլ, յուզին
 ասեղ և ծըփան .
 Առ ըզմեռեալն և զօրութեամբ վա-
 րեալ եթուք 'ի ցամաք,
 Իբր ասագին ցուլ պոռոչայր, փլուզեալ
 ըզխոր զիւր յատակ .
 Ըզնըջխարեալն 'ի յիւր հոսանս սրախող
 խողեցն 'ի բիւրուց
 Առեալ ողջիկ Թաքուցանէր 'ի խորխո-
 րին յիւր յալուց :
 Իսկ զԱքիլեաւ յոյժ փըրփրագէզ զե-
 ղոյր կոհակ առ կոհակ,
 Զասպար նորա բախեն ալբ . չըգոյր
 ոտիցն հաստարանք :
 Կալաւ Աքիլ ըզծառ կրնճնոյն հաստա-
 հարուստ քաջաբուն ,
 Նա խըլեցաւ արմատաքի և խորխուլեաց
 զափն ողջոյն .
 Սրավար հոսանքն կուրացան 'ի Թաւ
 ոստոցն 'ի նորա ,
 Այնպէս ողջոյն անկեալ 'ի մէջ կամուրջ
 գործեաց 'ի նըմա :

Պակեաւ Աբելլ, յորձանուտէն վազեաց
 'ի դաշտ և սուրայր,
 Այլ իւր կըռուոյն գետն աստուծոյ և
 ոչ վայր մի գուլ չարար .
 Հեղաւ 'ի նա, ուռնոյր զիզան 'ի կա-
 սուտակ կոհակաց,
 Սանձ Աբելլեայ տալ նիզակին կարճել
 Տրոյեանց ըզհարուած :
 Ոստեաւ Աբելլ տէգընկէց մի 'ի Թափ
 արծուոյն քաջորսակ,
 Ում 'ի Թըռչունս չիք 'ի կորով չիք 'ի Թը-
 ուիչս հանգունակ .
 Այն Թուխ արծուոյն Թըռեաւ նըման,
 Հնչէր պըղինձն անդ ահեղ
 Հնչէր 'ի լանջն, ինքն 'ի գետոյն ճգնէր
 փախչել առ 'ի շեղ :
 Այլ հետամուտ և սրավարեալ գետըն
 ծաւալ 'ի դաշտին
 Վէտ վէտ ալեօք վանէր զԱբելլ և խո-
 խոջայր ասագին :
 Զորօրինակ այր առուագործ 'ի յորդա-
 բուղն աղբերէ
 Յոռոգ բուսոցն և սարաիզաց ջրոյ վըտակ
 առբերէ,
 Թիակն 'ի ձեռն ըզխոչ ըզխութ մաքրէ
 յառուէն անդր 'ի տար,
 Խաղան վըտակքն յառաջագէմ ըզխիճսն
 առնեն վեր 'ի վայր ,

Արագ արագ ջուրըն վազեալ ընդ զառ-
 'ի վայր կարկաջէ,
 Եւ սրավարեալ քան ըզմըշակ զիւր ա-
 ռաջնորդըն կանխէ 118,
 'Նոյն զԱքիլլեաւ, թէպէտ գիւցազն ա-
 րագու թեամբ աննրման,
 Զուրբ զանցանէն. քանզի մեծ է ձեռն
 աստուծոյ քան մարդկան:
 Որչափ Աքիլլ ճգնէր մրցել ճակատ ընդ-
 դէմ տալ գետոյն,
 Գիտէլ, նրմա ոտխ կայցէ՞ երկնաճեմից
 դասն ողջոյն,
 'Նոյնչափ և գետն ալիասաստ զուսովբ
 նորա զեղանէր,
 Եւ Աքիլլէս անհրնարին յոգւոց թա-
 սեալ վազվազէր:
 Ըզծունգս նորա կըթուցանէր գետն ա-
 մէհի և սրավազ,
 Վազեալ յառաջ յափշտակէր ներքուստ
 ոտիցըն զաւազ:
 Յայնժամ Աքիլլ աչբ 'ի յերկինըս վեր-
 ամբարձ յոգւոց հան.
 « Հայր Արամազդ, ջնբ ոբ 'ի դից հէգս
 Աքիլլէայ օգնական.
 Այժմ 'ի գետոյս թափեա զիս, տէր,
 կրեցից ապա զոր կամիս.
 Ոք յանմահից ինձ ոչ յանցեաւ, որչափ
 սիրուն մայրս ընդ իս.

Նա զիս դաւեալ ասէր թէ ես Տրոյ-
 եանց քաջացն ընդ պատուար,
 Ապողոնին յերէքթեան նեախցն եղէց
 փըքնահար :
 Ո՛վ, թէ հեկտոր յիս տէգ շանթեալ
 Տրոյեանց դիւցազն անվէհեր,
 Քաջ զոք 'ի մահ նա տարածէր, քաջ ոք
 դարձեալ զիս կապտէր .
 Արդ վատ մահու ջրասոյզ եղէց ես զեա
 մանուկ խողարած,
 Զոր յանցս ընդ հուն առեալ տանի ուխ
 ձմերայնոյն հոսանաց :
 Պալլաս յայնժամ և Պոսիդոն կացին
 ճեպով առ ընթեր,
 Եւ մարդակերպ տան ձեռն 'ի ձեռն Ա
 քիլէսին քաջալեր .
 Չայն 'ի նոսա խրախուսական նախ Պո-
 սիդոն արձակեաց,
 « Պեղէոսեանդ, քաջ լեր և մի լիցիս
 ոգւով այր անկած .
 Աստէն ամոլք մէք աստուածոց քեզ զօ-
 րավիգ վերահաս
 Գամք ըստ կամացն Արամազդայ, ես և
 Պալլաս Աթենաս :
 Չէ սահմանեալ քո օրահաս, ջրասոյզ
 լինել 'ի գետոյն,
 Արագ արագ վերջ է բանիդ, տեսցես
 անշուշտ դու քեզոյն :

Թէ հնազանդեալ մեզ լըւիցես, խոր-
հուրդ քեզ տամք հանճարեղ,
Մի դու երբէք մի ձեռնութափ լիցիս
մարտէդ յայդ ահեղ,

Մինչև զապրեալսն 'ի Տրոյացւոց 'ի պերճ
պատուար Տրոյիոյ
Փակեալ 'ի ներքս, հարցես յողի զԵկտոր
ըզքաջն և զարգոյ .

Ի նաւատորմ յայնժամ դարձիր . տացուք
քեզ փառս յաղթականն » .

Խրախոյս ետուն . չղքան 'ի բաց և ընդ
անմահս խառնեցան :

Նա խիզախեալ 'ի դից պատգամ դար-
ձաւ ոգւով անվրկանդ ,

Խաղայր 'ի դաշտ . էր դաշտն ողջոյն անդ
լըճացեալ ջրապարպատ :

Ընդ գիականցն լողային զէնք անկելոցն
'ի մարտի ,

Նա զոտս 'ի վեր առեալ վազեր ընդդէմ
ջրոյն շէշտակի .

Չուրն յորդահոս չուժեաց 'ի նա ում
Աթենաս յորդեաց ոյժ ,

Բայց Սկամանդրոս դուլ չէտ թափոյն
նա Աքիլլեայ ետ մեծ գոյժ .

Քանզի ալեօք լեռնակուտակ գիզան 'ի
վեր նա փրփրայր ,

Եւ զՍիմոն յահ Աքիլլեայ նիզակակից
իւր կարգայր .

« Քաջդ համահարզ, հարցուք ըզքա,
 միմեանց լիցուք զօրավիգ,
 Դա արդ քանդէ վեհ զԵղիօնն և ոչ ժու-
 ժան Տրոյացիք։

Հաս ինձ արագ, լից ըզհոսանս, բաց ըզ-
 սահանս յաղբերաց,
 Եւ ջրադարձից տուր արձակուրդ յա-
 հագնակոյտ կոհակաց։

Ա՛ռ հաստաբետ ըզբունս ծառոց, ա՛ռ
 և ըզվէմս և խարակ,
 Հա՛ր ընդ միմեանս, բոմբետ ասեղ զի
 սանձեսցուք զայդ վերագ։

Դա յաւակնի արդ ՚ի կըշիւ գալ աս-
 տուածոց երամոյն,

Այլ ջոգտեսցէ նրմա ոչ ոյժն ոչ գեղ
 դիմաց գերաբուն,

Ոչ օգտեսցէ ոչ սերճ ասպարն և ոչ զէնք
 իւր գեղեցիկ,

Որք յորձախոր անկցին ՚ի լիճ թաղեալ
 ՚ի տիղմս և ՚ի սիկ։

Իսկ ես ըզքա պարուրեցից ընդ թան-
 ձրութիւն ընդ աւազ,

Եւ ՚ի սկախառն ՚ի մօր անհուն ՚ւ ՚ի քա-
 րակոյտըս գերբկաց։

Ոչ գտցեն Յոյնք զոսկերս նորա և յու-
 զեսցեն վայրասպար,

Այնչափ ՚ի խոր թաղեմ ըզնա ՚ի գայ-
 ուալից ՚ի կարկառ։

Աստ դերեզման ունեւ ինքեան ելցէ դը-
մա 'ի վիճակ ,

Եւ սէտք չիցեն փոս հատանեւ և տալ
նրմա դիահանք ː

Ասաց , յԱ.քիւլ հեղեղաբար դիմեաց 'ի
Թափ.քաջամուր ,

Մըրմըռաւով 'ի դիակոււնս և 'ի յարիւնս
'ւ 'ի փըրփուր •

Կապոյտ կոհակս կախեաց ընդ օդ վեր-
ջին Թափոյն իւր հանդէս ,

Անդ առ ետեղ Թևակոխէր ողջ ողողել
զԱ.քիւլէս ː

Երկեաւ հերա վասն Ա.քիւլեայ , մի գե-
տահեղձ կորիցէ •

Եւ առ որդին իւր հեփեստէս ձայն մե-
ծաձայն արձակէ •

“ Արի դու իմ , կաղտոն որդեակ , դէմ
Քսանթոսին յորձանաց ,

Ընդ ամհհւոյդ բաւես ինքնին կըռուէլ
ըստ մեր ըլձանաց •

Հաս փուլթապէս զանվանելիդ զարթո
ըզբոցդ ըզճըրձիդ ,

Եւ ես 'ի ծոխն անընդախոր շարժեմ
մըրրիկ ըզսաստիկ •

Հարաւն ուժդին և զեփիւռոս յուզեալ
բոցոյդ ըզշահւն ,

Զէնս ըզՏրոյեանց և զկառափոււնսն
դարձուցէ 'ի յաճին ː

Իսկ դու ծառոց զախամբ Քսանթեայ
բոց բորբոքեալ արկ հրայրեաց,
Յամոք բանից մի ողորբիր և մի տեղի տար
բոհմանց :

Մի գըլասցիս 'ի քոյ թափոյն . ես քեզ
նըշան տամ ձայնի ,

Եւ դու յայնժամ զահեղ հըրոյդ սան-
ձեալ ըզբոց տուր տեղի » :

Ասաց հերա , և հեփեստոս հուր երկ-
նասաստ փորատէր ,

Եւ նախ 'ի դաշտ բոցածաւալ ողջոյն ըզ-
նա հրակիղէր .

Այրեաց անդէն ըզգիակոյտ , զոր Ա-
քիլէս տապաստ արկ ,

Դաշտն հասարակ ցամաքեցաւ , ջուր սան-
ձեցաւ սառնորակ :

Որպէս յայն ինչ ջըրեալ պարտեզ շըն-
չեալ հիւսիսն աշնայնոյն

Յամաք գործէ , և որք գործեն 'ի նմա
խնդան ըզբօսնուն ,

Այսպէս զմեռեալս յաճինն փոխեաց
ծրծեալ ըզջուրն 'ի դաշտէն ,

Անդուստ ապա թափ 'ի գետ կոյս շքեաց
զցոլմունս իւր հրեղէն :

Ճարճատէին կրնձնիք , ուռիք , այրին
մամուռք և մոշայք ,

Ներքիւնք , նոճիք անդ գեղեցիկ զա-
փամբ բուսեալք կարգ 'ի կարգ :

Տաղնապ ձրկանց 'ւ օձաձրկանց որք 'ի
 յորձանս անդ կայտուան ,
 Եւ աստ և անդ խուճապեցան 'ի շունչ
 բոցոյն Հեփեստեան :

Բոցք հատանին և 'ի Քսանթոս . գու
 ժեաց , Հեփեստ , « Չիք երբեք
 Չիք աստուածոց արդ և ոչ ինձ ասէղ
 բոցոյդ գալ 'ի վէգ .

Ո՛վ գուլ արա , թո՛ղ Աքիլէս և յու
 տանէն վանեսցէ

Չաղգ Տրոյացւոց . զի՛ ինձ օգնել կամ
 ո՞ր ինձ շահ յայս մարտէ » :

Բոցակիզեալ ձայն զայս գուժեաց , մինչ
 իւր յորձանքն եռան 119

Որսէս կաթսայ 'ի մեծ հրատէն կայ անդ
 'ի ներքս յեռանդան ,

Մինչ պրղպրջեալ հասուցանէ զթամբ
 յոյր խողն պարարակ ,

Եւ 'ի ներքոյ շանթիս ցայտեն կրրկուտք
 և փայտք չոր ցամաք ,

Այսպէս հրակէզ ջուր գեղահոս կայր
 յեռանդան սանձակոծ ,

Ոչ ընթանայր կառեալ ծախեալ 'ի հէ
 փեստեայն յահէղ բոց :

Պարձաւ 'ի Հեր յողոք անկաւ , հեղոյր
 հայցուած խիտ և հոծ ,

« Առ ի՛նչ , Ղրջխոյդ , քոյ քաջորդին տան
 ջէ զիմ ջուրն քան զայլոց .

Իմ խելթն առ քեզ չէ առաւել քան որք
Տրոյեանց են սատար .

Բայց և այնպէս , թէ հրամայես , ես աս-
տըստին տամ դագար :

Աղէ , դլասցի այդ գոռ Հրաշունչդ , և
ես երգնում քեզ անսուտ .

Քա՛ւ , ոչ սանձեմ 'ի Տրոյացւոց զօրհանն
հասեալ մօտալուտ .

Եւ ոչ յորժամ ողջ Տրոյիա յանշէջ հը-
րոյն յարհաւրաց

Յաճիւն գարձցի բոցակիզեալ յԱ. քայե-
ցւոց 'ի քաջաց " :

Իբրև գոյժ զայս լուաւ Հերա լուսածը-
ղի վէհ գշտոյն ,

Անդէն բարբառ զայս արձակեաց Հե-
փեստոսի քաջորդւոյն .

« Թո՛յլ արա այժմ , իմ քաջորդի , չէ
ինչ արգեօք յարժանեաց

Զանմահ աստուած տանջել այնչափ
արդ 'ի պատճառս մահացուաց " :

Լըւաւ Հեփեսոս և զերկնասաստ զաջ
իւր սանձեաց ըզհրաձիգ ,

Եւ գեանն անդրէն խաղայր դընայր դա-
րիւ գարիւ գեղեցիկ :

Պարտեալ Քսանթոս , և ախոյեանք ըզ-
թափն իւրեանց սանձեցին .

Քանզի Հերա արգել զնոսա թէպէտ
յոգին զայրագին :

Հեռ ահագին յայլս աստուածոց բորբո-
քեցաւ բոցալառ ,

Եւ 'ի խորհուրդս երկփեղկեցան գալ ըզ-
միմեամբք 'ի գուպար :

Մի ըզմիով շահատակեալ, մեռնչեաց ա-
հեղ և գետին ,

Եւ 'ի բարձանց աւագածայն երկին փո-
ղեաց ահագին :

Լըւաւ Դիոս բազմեալ յՈղիմազ հըր-
ճւեալ յողին իւր խնդայր ,

Տեսեալ այնպէս զի ըզմիմեամբք աս-
տուածքն ելին 'ի սոյքար :

Ոչ յամեցին . ասպարախոցն Արէս նախ
կին խիզախեաց ,

Տէգ սլըղընձի 'ի բռին գիմեաց թափ յԱ-
թենաս և լուտաց .

« Առ ինչ 'ի վէգ , այ շանաճանձ , ձը-
գէս զաստուածս ընդ միմեանց ,

Դու խրոխտ անչափ և լըրբացեալ և գբեզ
գըրդէ գառըն մաղձ :

Ոչ իսկ յիշէս , երբ զիս խոցեւ ըզԴո-
մեդէս գրդեցեր ,

Երևելի տէգ դու ինքնին առեալ կըշիո-
գործեցեր ,

Շէշտ յիս հարեալ թափ խոցեցեր զիմ
ըզմարմին զիւցական .

Անշուշտ այսօր լուծցէս ըզվրէժ զոր ինչ
յանցեար դու յայնժամ » :

Լսաց, խոցեաց զԵգեանն ասպար ըզ-
 փրնջազարդն անվրկանդ,
 Ասպար ասէղ, զոր ոչ ինքնին Արամազ
 դայն գրձձէ շանթ,
 Ըզսա Արէսն արեհախանձ խոցեաց յեր-
 կայն 'ի նիզակ.
 Վայր մի Պալասս անդ ընկրոկեալ, առ
 յաղթ ձեռամբ ըզխարակ.
 Խարակն էր սեաւ անկեալ 'ի դաշտ վէմ
 ասպառաժ անարի,
 Զոր ծերունիք եդեալ էին սահմանա-
 քար բաժ գետնի.
 Եհար ըզվէմն ընդ պարանոցն, ելոյժ
 զանդամս Արեսին,
 Յերկիր վերագն անկաւ գրաւեաց եօթն
 արտավար 'ի դաշտին.
 Վարպք փոշոտին, զէնք հնչեցին. ծիծա-
 ղեցաւ Աթենաս,
 Ոսնհար եղև. « Անմիտ, ասէր, դեռ
 դու չեղեր խորագգաց,
 Քաջ քանիօն եմ քան ըզքեզ. դու ինձ
 'ի վէզ ելանես.
 Երթ արդ ուրեմն և ըզնոր քո տուժեա
 այդպէս դու զանէծս.
 Քեզ նա ցասմամբ չարիս նիւթէ, որ
 ըզհեւենսն լքբեր,
 Եւ կուսակից Տրովագացոց երդմնահա-
 ըից թեկն ամեր » :

Ասաց, դարձոյց զաչս իւր փայլուն. ձեռն
ետ Աստղիկ Արեսին,

Կա խիտ առ խիտ յոգւոց հանէր հաղիւ
շնչէր կատաղին :

Դիտեաց Հերա լուսածղղին և յԱթե-
նաս ետ ըզձայն .

“ Ասպարափառն Արամազդայ, բաբէ,
ծընունդ յաղթական,

Ահա անդրէն այդ շննաճանճդ առեալ
զԱրէս մարդախանձ

Ի գոռ մարտէն արտաքս հանէ, արի՛ ըզ-
հետ դու պընդեաց ” :

Լըւաւ Պալաս, վաղեաց ինդայր գոլ
’ի նոսա գամագիտ,

Հաս հար բըւամբ լանջ զԱստղիկան, ե-
լոյծ ըզծունդս և ըզսիրտ :

Երկուքն այնպէս նըշաւակեալք անկան
յերկիր անդ տապաստ,

Եւ Աթենասըն մեծասպանձ ձայն արձա-
կէր մեծասաստ .

“ Այդպէս լիցին վշտաչարչարք, որչափ
Տրոյեանց են սատար,

Յորժամ մարտիւ նոքա Յունաց յառնեն
քաջացն ’ի պայքար .

Ո՛վ, լինէին խիզախք և քաջք զորօրինակ
այդ Աստղիկ,

Որ իբր ’ի վէգ Աթենասայս եկն Արե-
սին զօրավիգ .

Եւ մեր անշուշտ 'ի վաղընջուց դուռէր
 արւեալ 'ի մարտէն ,
 Հիմնայատակ զԵղիոնին զոստան քան
 դեալ բարեշէն » :

Ըսաց Պալասս , և ժըպտեցաւ Հերա դըւ-
 խոյն ընսարփի .

Բայց Պոսիդոն երկրասասան ձայն զայս
 կարգաց Փեբոսի ,

« Ո՛չ աւանիկ այլք մարտ գընեն , մէք աստ
 զի՛ կամք 'ի բացեայ .

Առակ լնցուք , եթէ անմարտք դառնամք
 յՈղիւմսյ յարկ Դիայ .

Աղէ , Փեբէ , դու սկիզբն արա , կըրսեր
 ես դու 'ի հասակ .

Ինձ չէ 'ի դէպ , երիցագոյն եմ և շատից
 ես գիտակ :

Ա՛յ մանկամիտ , խակախորհուրդ , ո՛չ
 խկ առնես յիշատակ ,

Կիրս քանի՛օն զԵղիոնիւ 'ի դից միայն մէք
 կրեցաք .

Երբ 'ի Դիայ եկաք 'ի սպաս Լաւմեդոնին
 տարի մի ,

Վարձ սակ արկաք և մեզ այն սէգն հրա-
 ման կարգայր տէրոճնի .

Քաղաք Տրոյեանց ես շինեցի , նա և սպ-
 սուլար գեղեցիկ

Պատուար ամուր , լայնասահման լինել
 քաղաք անառիկ :

Իսկ դու յարօտ հաներ զանդեայս գա-
 լարեղջիւր թաթահերձ
 Յանտառախիտ բազմահովիտ յԻգեայլէ-
 րին զառ 'ի վերս :
 Երբ անձկացեալ հաս ժամ վարձուն ,
 նա ողջ ըզվարձըն խորեաց ,
 Այդ վէս արքայն հատոյց ոչինչ և սպառ-
 նալեօք արձակեաց :
 Սաստ որոտաց սրկէլ քո զոտս 'ի նոյն
 ըզձեռս 'ի սարիս ,
 Այնպէս առակ հանել ըզքեզ վաճառ
 'ի տար 'ի կղզիս ,
 Նա և զերկուցս կըտրէլ զականջս . ուս-
 տի և մէք զայրագին
 Դարձաք անվարձք մըղձկեալք յողիս ,
 քանզի դրժեաց իւր բանին :
 Արդ շնորհս առնես դու նորայոցն և
 չես ընդ մեզ զօրավիդ ,
 Զի ընդ Տրոյեանց տապաստ անկցին դիւրդ
 ամուսինքն և որդիք » :
 Արկնեաց Փերոս . « Երկրասասանդ , զիս
 ասէիր անհանճար ,
 Թէ մահացուաց քեզ 'ի պատճառս ելա-
 նէի 'ի պայքար :
 Հէք մահացուք , որ զերթ տերևս են մերթ
 առոյգ և դալար ,
 Քանզի ուտեն պըտուղ զերկրին , և
 մերթ ծըն գեալք և նիհար :

Օ՛ն մեք կրուուոյն դուլ արասցուք. թո՛ղ
այլ անմահք մարտ դիցեն Դ՛ .

Զայս Քաջաղեղն բարբառեալ ընդ
կրուկ դարձաւ ՚ի վայրէն :

Ընդ հօրեղբօր մրցակցութեամբ ՚ի վէգ
խաղալ նպատկառեաց .

Իսկ անդ վայրագ քոյրն Արտեմիս, ահ
գազանաց, զայս լուտաց .

Օ՛ ի՛նչ, Քաջաղեղն, առնո՛ւս փա-
խուստ Պոսիդոնէն դու նրկուն,

Դու շուք փառաց թողո՛ւս նրմա և ան-
վաստակ յաղթու թիւն :

Ա՛յ մանուկ դու, առ ի՛նչ ապա ունիս
զաղեղն հողմավար .

Արդեօք դարձեալ լուսոյց զպարծելք ՚ի
մեր ՚ի հօրն ՚ի տաճար,

Որպէս երբեմնն պանծացար ՚ի յան-
մահիցն ՚ի դասէն,

Թէ նահատակ դու ելանես Պոսիդոնին
դէմ ընդ դէմ Դ՛ :

Լըւաւ Փերոս, այլ ոչ կրկնեաց բան
Քաջաղեղն այն արգոյն .

Բայց յԱրտեմիս ցասեաւ հերա և կըլ-
տամբեաց խրստագոյն .

Օ՛ ի՛ է քեզ այդ, շուն լըբենի, ինձ
ճակատ տալ ՚ի պայքար .

Ես խոչընդակն եմ քո ասեղ, թէպէտ ի-
ցես փըքնահար .

Կանանց առիւծ եդ Ձևս ըզքեզ և ում
կամիս տաս հարուած 120 •

Երթ դու յանտառս և գազանաց մահած
վայրագ եղջերուաց :

Քաւ քեզ դընել մարտ ընդ վէհից • Իսկ
Թէ խնդրես փորձ երբէք ,

Տեսցես մտոյ հըզօր քանի՞ ես քան ըզքեզ
եմ 'ի վէգ » :

Ասաց դշխոյն , և ահեկաւ կրկին դաս
տակս ըզձեռաց

Առ զԱրտեմեայ , և աջ ձեռամբ կորզեաց
ըզնետան 'ի Թիկանց :

Ժըպտեալ Հերա և ընդ ահանջս ծեծեաց
նետիւքն 'ի ձեռին ,

Մինչ նա գելոյր 'ւ երեքթևեան նետք
սրփուեցան ընդ գետին :

Յարտօսր հարաւ անդ Արտեմիս • Իբր
աղանի փախուստ առ ,

Որ խուճապեալ 'ի բաղէէ մրտեալ զօղի
'ի քարայր :

Այլ վիճակեալ չէր Արտեմեայ գըձձիլ
'ի սպառ 'ի վշտին •

Այնպէս լալեօք փախեաւ Թող անդ
կապարձ , զաղեղն , ըզփըքին :

Չայն 'ի Ղետոն կարդաց ապա արդո
սասպանըն Հերմէս •

« Ընդ քեզ , Ղետոն , ես 'ի մարտի ոչ
մըտանեմ 'ի հանդէս :

Չեք ինձ կըռուէլ ամսրոսայնոյն Արա-
մազդայ ընդ հարսանց .

Բայց արդ աղէ դու համարձակ քեզ 'ի
յանմահս տուր սարժանս :

Ասա ինքնին , թէ հերմեսի քոյ զօրու-
թեամբդ յաղթեցեր » .

Ասաց հերմես . Աետոն քաղէր ըզնետս
անկեալս վայր 'ի վեր :

Քաղեաց ողջոյն և զլայնալիճս անկեալ
'ի կոյտս 'ի փոշին ,

Առ զամենայն և զհետ դըստերն ուղւոյ
լինէր վշտագին :

Եւ կոյսն յՈղիւմսզ 'ի տուն իւր հօրն և
յարտասուս հարեալ էր ,

Կտաւ 'ի ծունդն 'ւ անմահական տե-
ռն զանձամբ ծածանէր .

Հայրըն գըգուեաց և հարցանէր մեղմով
ժըպտեալ յԱրտեմիս .

« Ո՞ յերկնայնոց գըձձեաց ըզքեզ իբրու
գործեալ ըզգարիս » :

« Յորմէ յանմահս են կագք սայ քարք ,
հերա քո հարսն հար զիս , հայր » ,

Զայս շառաչող քաջապըսակըն Արտեմիս
ետ բարբառ :

Ս'ինչ այս մինչ այն 'ի յՈղիւմսզոս այր
բարբառէր ընդ ընկեր ,

Փեբոս յայնժամ 'ի հրաշանունս գայր յե-
ղին մըտանէր .

Ունէր զԱրքայն հոգ պատուարի ամրա-
կառոյց քաղաքին ,

Զի մի զայն օր հարցէն ըզնա կանխեալ
սահման զօրհատին :

Դարձան յՈղիւմս գասք անոնահից , կէսք
մեծապանծք անվէհեր ,

Կէսք զայրագինք , և բակ առեալ նստան
առ հօր շանթաբեր :

Բայց Աքիլէս Թափ 'ի Տրոյեանս հա-
րոյր 'ի տէգ գեղապանծ ,

Վանէր վատնէր և զկառաձիգս սալասըմ-
բակ նըժուգաց :

Զորօրինակ ծուխ փոթորկեալ գընաց
յերկին լայնատարր ,

Յորժամ 'ի դիցն 'ի ցամանէ քաղաք այ-
րի վառ 'ի վառ ,

Տագնապ ածէ առ հասարակ և շտոք 'ի
շտապ խուճապին ,

Այնպէս Աքիլ Տրոյեանց զըմբաղ ածէր
տագնապ ըզվերջին :

Այր Պրիամոս մեծ ծերունին 'ի բար-
ձրաբերձ 'ի բրբզան ,

Ետես խուճապ ըզՏրոյացւոց ետես զԱ-
քիլ ախտանեան :

Վըճարեալ էր • գոյժ ծերունին ետ 'ի
բրբզանց էջ 'ի վայր ,

Առ պատուարաւ դըռնապանաց քաջաց
հրաման զայս կարգայր •

“ Ալէ ըզդուրս բաց կալարո՛ւք, մինչև
մըտցէ գուճիդ զօրաց .

Աքիլ վերագն աստ 'ի մօտ կայ, տագ-
նաս պ վերջին արդ գուժեաց .

Խուճապեւոց զերծեալ յոստանն ըզ-
դուրս անգրէն պընդեցէք ,

Անշուշտ այդ այր խուժէ 'ի ներքս, մա-
հու գուժկանն ասաբեկ ” :

Բացին ըզդուրս, բարձին ըզփակս, խու-
ճապեւոց լոյս ծագեաց .

Փերոս նոցա ընդ առաջեալ կարճէր Տրոյ-
եանց ըզհարուած :

Նոքա տապեալք 'ի ծարաւոյ և փոշո-
տեալք 'ի դաշտէն ,

Առ 'ի պատուար շէշտ 'ի քաղաք ճեպ
հատկըլեալք արագեն :

Աքիլ ըզհետ ամեհացեալ վանէր հա-
րոյր 'ի նիզակ ,

Շահատակէր սիրտ կորովն տանել փա-
ռաց մրցանակ :

Անշուշտ յայնժամ Յոյնք վանէին բար-
ձրագրուճեանն զոստան ,

Թէ զԱգենոր չէր Ապողոն զայրըն դըր-
դեալ հրաշագան .

Սա քաջորդի Անտենորայ այր հոյակապ
անվեհեր ,

Ում և 'ի սիրտ յայնժամ Փերոս բոցա-
վառեաց քաջալեր .

Կաց առ ընթեր վանել յառնէն մահուն
զահեղն ըզճապուռ ,

էր ինքն յեցեալ 'ի կաղնի մի ծածկեալ
'ի յօդ յարամուր :

Տես Ագենոր զքաղաքաւեր վերագ զԱ
քիւլ քաջալանջ ,

Ետես ծըփայր յիւրում սրտին իբրև 'ի
ծով ալէտանջ .

Յոգւոց հանեալ առէր ընդ անձն , 'ի
սիրտ մըղձկեալ քաջարին .

« Եղո՛ւկ եմ ես , թէ յԱքիլէայ անվա
նելուոյն խուճապիմ

Ի նոյն ուղի , ընդ որ Տրոյեանք արդ
խուճապին սրտաթափ ,

Հասցէ նա յիս , կալեալ հարցէ զապի
կարիս ըզկառափն .

Իսկ թէ թողից վանեալ այնպէս ըզՏրոյա
ցիս յԱքիլէայ ,

Եւ յոստանէն ընդ դաշտ տրոյեան փա
խեայց 'ի դարսըն Իդայ ,

Անդ ես կըծկեալ 'ի մացառուտս , և ընդ
երեկս 'ի մըթան

Լուացեալ 'ի գետ սրբեալ ըզքիրտն ան
դրէն մըտից 'ի յոստան . . . :

Այլ զն խորհել քեզ զայդ , անձն իմ .
Թէ դա տեսցէ զիս յանկարծ

Ի քաղաքէն ընդ դաշտ փախչել , հասցէ
նա յիս ճեպընթաց :

Ո՞ր մաղապուր եղէց յայնժամ ես չա-
րամահ յօրհասէ .

Գերաշխարհիկ է ոյժ դորա . դա բոլո-
րից յաղթող է :

Ընդէր է ինձ առ պատուարին չարձա-
նանալ ախոյեան ,

Ո՞չ և դորա 'ի յերկաթոյ թափանցելի է
անդամ .

Ո՞չ և հոգի ունի ըզմի և զնա ասէն մա-
հացու ,

Թէպէտ այժմիկ մեծ ջրուանեանն 'ի
նա փառաց շուք հեղու ʔ :

Լսաց , դարձաւ և Աքիլէայ սպասեալ
մընայր 'ի դաշտին ,

Ի վէգ խաղալ կազմ և սլատրաստ էր
սիրտ նորա կորովին :

Չորօրինակ ինձ ամեհի ելեալ թաւուս
յանտառէ

Դէմ որսորդին , և անխուճաս սիրտ քա-
ջարույն խիզախէ ,

Անշարժելի արձանանայ հաչիւն լըւեալ
ահափետ ,

Թէպէտ կանխեալ 'ի յորսորդէն խոցի
'ի տէգ կամ 'ի նետ ,

Տէգ 'ի մարմին վարսեալ տանի և ոչ
դուլ տայ կորովոյն ,

Մինչև մրցեալ կամ ընթագրէ կամ ան-
կանի անդ նրկուն ,

Այսպէս արին Անտէնորեան մեծն Ա
գենոր նահատակ

Չընկրկեցաւ, մինչ չև առեալ զԱքիւ-
լեսին ըզճաշակ :

Արդ սա կալեալ 'ի հանդիպոյ բոլորա-
ծիրն ըզվահան ,

Շէշտ յԱքիլէս կըշռեալ զաշտէն , բար-
բառեցաւ մեծաձայն .

“Դու մեծայոյս էիր անշուշտ , ո՛ հոյ-
ակապդ Աքիլէս ,

Վանել այսօր զոստան Տրոյեանց քեզ
'ի փառաց 'ի հանդէս .

Անմիտ , դեռ շատ հասցեն քեզ վիշաք .
զի են անդ շատ քաջորեան ,

Որք վասն որդւոց , հարց 'ւ ամուսնաց
տըքնին պահեն զայն ոստան .

Բայց դու աստէն ընդ պատուարաւ մա-
հուդ հասցես օրհասի ,

Թէպէտ մարտիկ ես անապին անեղա-
խրոխտ կորովի ” :

Ասաց և թափ շանթեաց 'ի սրունս ներ-
քոյ ծընդաց սուր զաշտեայն ,

Եհար կըշիւ և հնչեցոյց նոր զանագեայն
սըռնապան .


Բայց և ընդ կրուկ երկաթն հարեալ
դարձաւ ոստեաւ անդ 'ի բաց ,

Եթող անխոց զի զգէմ կալաւ դիցա-
պարդեն այն կազմած :

Դիմեաց երկրորդ 'ի յԱգենոր ասեղն
 Աքիլ զԻւցաբար ,
 Ընդ շուք քաջին խանդայր Փեբոս , զաշ-
 տէն թըռոյց հողմավար .
 Առ զԱգենոր յափըշտակեաց , պատեաց
 'ի յօդ թանձրութեան ,
 Տակաւ ընդ կրուկ վերջոսնեցոյց թա-
 փեաց մարտէն ողջանդամ :
 Ինքն 'ի պատկեր Ագենորայ Աքիլէսի
 դաւ գործեաց ,
 Կաց հանդիսոյ և նա 'ի տար վանէր ըզ-
 նա ճեպրնթաց .
 Վանէր անդուլ ընդ դաշտ տրոյեան անդ
 տարագէմ զարտուղի ,
 Թևակոխեալ 'ի գեան 'ի կոյս յորձանա-
 խոր Քսանթոսի .
 Տակաւ Փեբոս 'ի հանդիսոյ դաւէր և
 ցանգ վերջոսնէր ,
 Ցանգ և Աքիլ մօտեալ 'ի նա արագ ու-
 տիւքրն ճեպէր .
 Մինչև Տրոյեանք առ հասարակ խուճա-
 պեցան 'ի յոստան ,
 Պատրաստարեալքն ոգի առին , լըցաւ քա-
 ղաքն 'ի խուժան :
 Խուճապելոցն ոչ ոք ժուժեաց կալ ար-
 տաքոյ պատուարի ,
 Կալ և գիտել թէ ո՞ փախեալ և ո՞ ան-
 կալ 'ի մարտի .

Առ հասարակ ՚ի շտապ տագնապ թափին յոստան քաջամուր ,
Որք մի անգամ զոտս արագեալ եղեն յայն
ժամ անձնապուր :





ԵՂՅԻՆԿԱՆ



ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԻԲ.

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Տրոյացիք փակին 'ի քաղաքն . Հեկտոր
միայն կայ արտաքոյ զգէմ ունել Ա.քիւ-
լէայ : Պաղատանք Պրիամու և Հեկաբեայ
առ որդին մտանել 'ի ներքս , բայց 'ի
զուր : Հեկտոր տագնապեալ խօսի ընդ
անձին : Ահաբեկի 'ի տես Ա.քիւլէայ և
փախցի : Աթենաս դաւէ զՀեկտոր մե-
նամարտիլ ընդ Ա.քիւլէայ : Նկարագիր ա-
հեղ մենամարտու թեանն Հեկտորի : Քա-
ջապէս կռուեալ անկանի : Ա.քիւլէս զհետ
կառացն 'ի քարչ ձգէ զՀեկտոր : Ողբ
Պրիամու և Հեկաբեայ : Անդրոմաքէ 'ի
տեսանելն զՀեկտորայ արկածն յաշտա-
րակէ քաղաքին անկանի և նուաղի :
Ողբ Անդրոմաքեայ : Ի Հագներգու-
թեանս գերահրաչ հանդիսանայ Հոմեր
նա և յՈղբերգութեան մասին :
Տեսարանն է ընդ սլատուարաւ Տրոյիոյ :



ԵՂՒԼԱԼՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԻԲ.

ԼՅՍԳԻՍ Տրոյեանք ահիւ 'ի ներքս իբր
Էղջերուք սրտաթափ
Խըռնին և դիւր առնեն քրտան, ըզծարա
ւուն հարեալ տապ .

Կան անդ յեցեալք յորմոյն պըսակս . ան
դուստ հելենք մօտէին ,

Զասպարս 'ի յետս արկեալ զուսովք դի
մեալք ներքոյ պատուարին :

Բայց ըզհեկտոր չար օրահաս կապեաց
կացոյց իբր արձան

Ի հանդիսոյ Եղիոնին իսկեան դրանդեաց
յանդիման :

Չայն Ապողոն կարգաց յայնժամ, « Ձե՛
 դու Աքիլ շուտափոյթ ,
 Խիզախ այդպէս վանես դու զիս , զաս-
 տուած անմահ , մահացուդ .
 Ո՞չ ևս ծանեար թէ աստուած եմ , և դու
 մոլիս անվախճան .
 Չահըն Տրոյեանց , զորս վանեցեր , և
 յուշ չածես դու անգամ .
 Նորբա յոստանն ամփոփեցան , դու զար-
 տուղիս խոտորնակ .
 Մահ ինձ դուժաս , այլ աստուած եմ ,
 չեմ ես մահու նըշաւակ » :
 « Ինձ խոչ ընդ ոտն եղեր , Փեբէ , կըր-
 կնեաց Աքիլ ցասմամբ լի .
 Աստուած յաստուածս ժանտախտ մա-
 հու , որ զիս ածեր զարտուղի :
 Քանի՞ք յինէն անկանէին մինչ չև հասեալ
 յԵղիոն ,
 Այլ դու զերծեր և խանդացար ինձ մե-
 ծաշուք զայս ըզձօն .
 Ո՞չինչ խորհեալ զանգիտեցեր յիմոց վրի-
 ժուց դու յապայս ,
 Բայց լըցուցից ես ըզթերին , թ' եղէց
 միայն ձեռնհաս » :
 Ասաց , վազեաց յոստանն 'ի կոյս հրա-
 վառ ոգւով արութեան ,
 Որպէս նըժոյդ քաջ կառաձիգ 'ի խաղ
 մըրցմանց յաղթական ,

Որ բաշարձակ յասպարիսին քայլ արագէ
մեծասանծ ,

Այսպէս Աքիլ զոտն յոտանէն փոխէր
ճախրէր քաջընթաց :

Ըզնա յառաջ գիմեալ ընդ դաշտ ետես
Պրիամ ծերունի ,

Զորէն աստեղ փայլակնացայտ ծագեալ
կանուխ յաշնանի ,

Նըշոյք նորա են ճաճանչեղք , շողան 'ի
խոր գիշերոյն ,

Ըզնա 'ի բոյլ աստեղջ փայլեալ , անուա
նեցին հայկայ շուն ,

Գուժկան չարի դայ յերևան թէպէտ
յորդ է լուսոյն թափ ,

Հէգ մահացուաց խանձողական ախտ
բորբոքէ ըզհրատապ ¹²¹ ,

Այսպէս 'ի վազս հրաշէկ սլըղննձն 'ի
լանջ նորա փայլակէր .

Յոգւոց հան ծերն , ամբարձ ըզձեռն ,
առեալ ըզգլուխն ծեծէր :

Սիրուն զորդին հայրն ողոքէր մեծագան
չիւն ահաբեկ ,

Նա կայր անդէն վառեալ անշէջ ընդ Ա
քիլեայ գալ 'ի վէդ :

Հայրն աղեկէզ ձեռս տատանէր , ձայ
նէր « Հեկտոր , իմ որդեակ ,

Ի զատ յայլոց մի կար ընդդէմ այդ վե
րագիդ միայնակ .

Մէ վաղամահ լիցիս այժմէն նրկուն 'ի
քաջն յԱ. քիլէայ .

Հուր ծախիչ է . շատ քան ըզքեզ է զօ-
րութեամբ գերակայ .

Օ՛չ, թէ սիրուն , որչափ ինձ դա , այն-
չափ լեալ էր աստուածոց ,

Արագ արագ գէշ արկանէր շանց 'ւ ան-
գեղաց բերանոց .

Դիւրէր սրտիս , զի դա 'ի շատ զիս քաջ
որդւոց որբ արար ,

Ըզկէսս ըսպան ըզկէսս վարեալ հան
տար կղզեաց 'ի վաճառ .

Արդ Լիւկայոն և Պողիւզոր 'ի քաղաքիս
չէրևին ,

Այն իմ որդիք զորս ինձ ծնաւ Լաոթոէ
արգոյ կին :

Եթէ ողջ կեան , փրկանք նոցա տացուք
պըզինձ և ոսկի ,

Շատ կան մըթերք , շատ և դրատերն ետ
մեծն Ալտես ծերունի .

Իսկ թէ 'ի քուն նոքա մահուն կան ամ-
փոփեալ 'ի դամբան ,

Այս ինձ և մօրն առ հասարակ ցաւ է
սրտի անպայման .

Այլ ցաւ նուազեալ լիցի անշուշտ ժո-
ղովորդեան Տրոյիայ ,

Թէ դու միայն տապաստ չանկցիս նրկուն
'ի քաջն Ա. քիլէայ :

Արի որդեակ, մուտ 'ի քաղաք և լեր
 Տրոյեանց փրկանակ,
 Մի շուք զայդ մեծ տար Աքիլլէայ մա-
 հուն եղեալ նըշաւակ:
 Յիս, ով որդեակ, 'ի հիքացեալս. չեմ
 ողջ վատեալ տակաւին,
 Վահ, ինձ 'ի սեամբս ծերութեան Դիոս
 մահ տայ ցաւագին:
 Արդէն շատ ինչ տեսի ալէտս. տապաստ
 որդիքս իմ անկան,
 Դըստերք քարշեալք, և առագաստք իմ
 պատուականք պրղծեցան,
 Մատաղերամբս հարան զգեսնի 'ի չա-
 րաշուք վիրագաց,
 Եւ ծընգասէր հարսունք ձրգեալք 'ի գու-
 ձեռաց Աքայեանց.
 Եւ զիս վերջին հանդէպ դըրացս շունք
 գիշախանձք գօշեսցեն
 Երբ 'ի նետից անկայց տապաստ կամ սայ-
 րասուր նիզակէն.
 Հունք իմ սնուցեալք սեղանակիցք իմ
 պահապանք տաճարի
 Արբեալք զարիւնս և կըշտապինդք անկ-
 ցին գառեալք 'ի գաւթի:
 Մարտ մարտընչել և մեռանել փառք են
 առոյգ պատանւոյն,
 Եւ վեր և խոց սուր սըլաքաց զարդ գե-
 ղեցիկ է մահուն.

Այլ թէ ըզգլուի մի ալևոր և զալեզար-
դրն ծրնօտ

Զպատկառելի մեռեալ ծերոյն շունք
գրձձեացեն անամօթ ,

Այս է ահա վերջին աղէտ հիքացելոց
մահացուաց ” :

Զայս գուժայր ծերն , և դողդոջուն ձե-
ռօք զալիսրն հերաց

Փետէր զգլսոյն . բայց և այնպէս սիրտ
զեկտորին չամոքեաց ,

Մինչև անգուստ դիմեալ և մայրն ա-
ռուս հոսէր արտասուաց .

Եբաց ըզլանջն , և 'ի ձեռին կալեալ զըս-
տինան իւր 'ի վեր ,

Գերաշխարան ձայն գուժալից աղիողորմ
արձակէր .

« Հեկտոր որդեակ , ակն ած ըստեանց
և ինձ մօր քու՛մ ողորմեաց ,

Որ գորովեալ 'ի ճիչ լալեացդ ածի զըս-
տինս քոց շրթանց .

Յուշ քեզ , որդեակ , խոյս տուր այժմէն
'ի վերագէդ մի անգամ ,

Մ՛ուտ 'ի պատուարդ , հիքացեալ դու ,
մի կար դրմա ախոյեան .

Թէ զքեզ 'ի մահ նա տարածէ , իմ սուգս
անշէջ է ահա .

Ո՛ւր իմ լալիքս 'ի քու՛մ մահճին , հասոր
ողւոյս , զոր ծրնայ .

Ո՛րք և արգոյ քոյ ամուսնոյդ . ըզքեզ 'ի
 մէնջ տարադէմ
 Ի նաւս Յունաց ընդ քարշ ածեալ , շունք
 գիշախանձք դօշեացեն ր :
 Զազդեն լալիք , չազդեն աղերսք . հեկ-
 տոր անշարժ անվեհեր
 Կայր անդ մընայր , մինչ դեռ անդուստ
 Աքիլէ հրահայն դայր մօտեր :
 Որպէս վիշապ վայրագասուն ճարակ ա-
 ռեալ մահաթոյն ,
 Ամէհացեալ սպասեալ մընայ անցաւորին
 մօտ որջոյն ,
 Մաղձ դառնութեանըն զայրացեալ
 գրաւէ ողջոյն զիւր ոգին ,
 Հրացայտ աչաց ախօքն աստ անդ սողայ
 շանթէ առ խըշտին ,
 Այսպէս հեկտոր ցանդ աննահանջ սիր-
 տըն հրավառ բոց յանշէջ ,
 Անդ 'ի բուրդ մի դուրս կարկառեալ
 դընէր զասպարն իւր 'ի յեց .
 Զայրուց յոգին վառեալ արւոյն , ինքն
 ընդ անձին տայր բարբառ ,
 « Տագնապ է ինձ , եթէ երբէք էս մըտա-
 նեմ 'ի սպառուար .
 Պուղիւդամաս յիս առաջին բան ոլար-
 սեսցէ նըշաւակ ,
 Որ խորհուրդ էտ ըղՏրոյացիս ածել ան-
 դրէն 'ի քաղաք

Ի գիշերին , յորում չարեաւ եկն յերևան
Ա. քիլէս .

Այլ խորհրդոյն ես չանսացի , որ մեզ լաւ
էր մեծապէս .

Արդ զի յայնժամ ողընդըժնեայ 'ի հուր
արկի ըզխուժան ,

Եւ արդ Տրոյեանց և տեռաձիգ մեր
տրոյուհեաց ոչ ժուժամ .

Գուցէ և բան ոք պարսեացէ այր անա-
ւազ և անկաճ ,

Ահա հեկտոր յանձնապաստանն ըզժո-
ղովուրդ մեր մատնեաց :

Ձայս ասասցեն . լաւ է աստ կալ . կամ
զԱ. քիլէս ես հարում ,

Դառնամ 'ի տուն . կամ 'ի նմանէն ես
աստ փառօք մահ առնում :

Ապ' եթէ ես ըզսաղաւարտ և զկրմբա-
ւորն իմ զասպար

Թողեալ աստէն , և ըզնիզակն իմ յեցու-
ցեալ 'ի պատուար ,

Այնպէս գնացից ես ապաղէն առ քաջն
Ա. քիլլ ընդ առաջ ,

Անսուտ խոստմամբ Արէոսեանց տալ
զհեզինէն և ըզգանձ ,

Ձոր մի անգամ 'ի Տրոյիա նաւադնացիկ
ած Պարիս ,

Այն որ եկաց ըսկըզնառիթ մահաշը-
շուկ այս մարտիս ,

Դարձեալ Յունաց և 'ի գանձուց մեր ոս-
տանին բաշխ հանել,
Միանգամայն և 'ի Տրոյեանց զերդումն
անսուտ պահանջել,
Մի ինչ ծածկել, այլ զամենայն հանել
'ի բաշխ 'ի կրկին,
Որչափ ինչ գոյք և կարասի են գեղեցիկ
յոստանին . . . :

Այլ զի՛ բընաւ 'ի խորհրդոց ինձ խոճո-
ճել յայսպիսեաց .

Քաւ, ևս յողոր չերթամ առ նա . նա ոչ
կալցի սիրտ գըթած .

Ոչ ահն ածցէ ինձ Հեկտորիս թէպէտ
և մերկ բընաւին ,

Արագ արագ տապաստ արկցէ թէպէտ
անգէն իբրև կին :

Ոչ առ վիմուլ ոչ ընդ կաղնեաւ նազաբա-
նել առ նա չիք ,

Որպէս երբէք բնաւորեցան առնել կու-
սանք , պատանիք ¹²² .

Թող օրիորդք և պատանեակք լըցին մի-
մեանց նազաբան ,

Իսկ մեզ քաջացրս ասպարէս 'ի մարտ
մրցել գոռուլթեան :

Տեսցուք արագ , ո՛ւմ Ողիւմպեանն տա-
ցէ փառացն ըզհանդէս » .

Ասաց և կայր . անդուստ գիմեալ եկաց
'ի մօտ Աքիլէս :

Տամանմանեալ գող Արեսին յահեղա
գէս սաղաւարտ ,

Զաջոյ ուսոյն հաստահարուստ շարժէր
ճօճէր ըզգեղարդ .

Ճաճանչ զինուն և ասպարին և պըղընձին
պահպանակ

Իբրև ըզհուր էր բոցավառ և կամ ծա
գեալ արևակ :

Ետես հեկտոր , 'ի դող հարեալ յակաս
տանի ոչ եկաց ,

Անդէն ըզդուրսն յետ իւր թողեալ ասիւ
փախչէր ճեպընթաց :

Դիմեաց Աքիլ իբրև բազէ թըռչուն ա
րագ 'ի վայրի ,

Որ օդահերձ հեշտին վանէ զ'ի դող հա
րեալն աղաւնի ,

Սա խուճաղի անդ առ 'ի շեղ , նա կուիչ
հատեալ սուր և զիւ ,

Սրանայ յաւէտ և խոյանայ կորզէլ ըզնա
'ի մագիլ ,

Այսպէս Աքիլ բոցավառեալ թըռչէր
սուրայր շեշտակի ,

հեկտոր դողմամբ ընդ պատուարաւ
փախչէր 'ի շտապ տագնապի :

Անցեալ ընդ գէտն և ընդ վայրի ընդ
հողմավար թըղենին ,

Յանդ քերելով առ պատուարաւ ընդ ա
րահէտ վազէին .

Հասին 'ի յակըն գեղահոս , աղբերք բը-
 խին անդանօր ,
 Աղբերք կրկին են հոսանացն Իսկաման-
 դրին յորձախօր .
 Մին անդ ըզջուր հոսէ ջերմին , և ծուխ
 նորա որ բարդի
 Հուրջ ամբառնայ և բոցավառ է համա-
 նման կըրակի ,
 Միւսըն հոսէ յամարայնի իբրև կարկուտ
 ցրտացեալ
 Եւ կամ իբրև սաղ ձիւնաբեր կամ իբրև
 ջուր սառուցեալ .
 Կան 'ի վերոյ անդ գեղեցիկ և լայնա-
 տարր աւազանք .
 Գործ վիմատաշ . էին նոքա պերճ հան-
 դերձից լոգարանք .
 Տրոյեանց կանայք անդ լուանային և
 դըստերաց գիրգ երամ ,
 Երբ յանդորրու բնակէր երկիրն մինչև
 Յունացն յարշաւան :
 Ընցին զնովաւ , մինըն վանէր միւսըն փախ-
 չէր 'ի հանդէպ .
 Փախչէր այր.բաջ , այլ.բաջադոյնն ըզհետ
 վանէր ճեպ ընդ ճեպ :
 Յարջառեհուոյ կամ յարջառոց չէին 'ի
 սակս այն մըրցանք ,
 Որ.բաջաբայլ վազարշաւից տըւեալ լինի
 յաղթանակ ,

Այլ անդ ելեալ մի շղթայով քաջ նահա-
տակքն այն կրկին ^{օմնաբն}

Վազս առնուին . էր մրցանակն անձն
Հեկտորայ դիւցազին :

Որպէս նըժոյգք օգապարիկք , որք առ-
բերեն մրցանակ ,

Արագ արագ շրջան առնուն ընդ պայմա-
նեալ նրպատակ ,

Զի պարգևին ձօն հոյակապ անդ զառա-
ջեալ կայ նոցին

Եռոտանի կամ օրիորդ , 'ի շուք մեռեալ
դիւցազին ,

Այսպէս նոքա ճեպ զոստանիւ երիցս
առին ըզըջան ,

Եւ 'ի զընին կային աստուածք և Արա-
մազդ ետ ըզձայն .

“Բարէ վանեալ ես ընդ պատուար զայր
մի սիրուն տեսանեմ ,

Ես քաջարւոյն վասն Հեկտորայ 'ի գուժ
գորով հատեալ եմ .

Նա թամբ զեզանց այրէր ինձ ձօն 'ի գա-
հաւանդըս Իդայ ,

Է զի երբեմն և 'ի բարձու 'ի դըղեկին յա-
ղէր նա .

Եւ արդ ըզնա արագն Աքիլլ վանէ 'նդ
ոստան Պրիամեան .

Օ'ն առեալ արդ , դասք աստուածոց ,
խորհուրդ առէք միաբան .

Փրկեմք ըզնա , թէ Աքիլէայ նրկուն դը-
նեմք զայն արին » .

Խորհուրդ նա զայս արկ զառաջեաւ .
խաժակն ետ ձայն դիցուհին .

« Զինչ բանք իցեն . բաբէ , ո՛հայր , դու
ամպահար շանթածին ,

Փրկէ՞լ ըզմարդ որ վաղընջուց նա մատն ե-
ղև օրհասին .

Թափէ՞լ խնդրես զայր մահացու նախա-
սահմանն ՚ի ժամէն .

Բանն ՚ի դործ տար , այլ անմահից դասք
համախոհք ոչ իցեն » :

Վընքեաց Պալաս . Ամպրոպայինն ձայն
տէրունի բարբառէր ,

« Ծընունդ արդոյ անմահական , ճետ
տրիտոնեան , դու քաջ լէր .

Ոչ բան խօսիմ անդարձական , ես քեզ
ոչինչ զըլանամ .

Արի դու քաջ , մի դանդաղիր յոր և խոր-
հիս մի անգամ » :

Լ ըլաւ Պալաս . վառեալն արդէն կրկին
վառեալ փութապէս

Էջ յՈղիւմպէ , մինչ դեռ անդուլ զԵկ-
տոր վաներ Աքիլէս :

Որպէս բարակըն զեղջերուն հանեալ
բըռնի ՚ի խըշտեաց ,

Վանէ ՚նդ հովիտս և ընդ թաւուտ վա-
րեալ ըզնա ՚ի լերանց .

Ղօղեալ էրէն 'ի մացառուտս դո՛գ կի-
 սամեռ անդ զոփայ,
 Բարակն ըզհետ մըտեալ աստ անդ, մինչև
 դըտցէ, ոչ դուլ տայ,
 Այսպէս յարագն Աքիլէսէն ոչ ծած-
 կեցաւ փախըստեայն,
 Թէպէտ նա ցանդ թևակոխէր 'ի դուրս 'ի
 կոյս դարդանեան .
 Ճրգնէր հեկտոր դիմել յանքոյթ ընդ
 հովանեաւ իւր բըրգանց,
 Թերևս ուստեք յաշտարակաց օգնեն 'ի
 ձիգըս փըքնաց .
 Այնչափ և անդ Աքիլ զԵկտոր վարէր
 'ի դաշտ բացարձակ,
 Զառաջս առնոյր թէպէտ և ցանդ հեկ-
 տոր սրանայր ընդ քաղաք :
 Եւ որպէս մարդ ըզփախըստեայն վանել
 'ի քուն յերազէ,
 Ոչ մին բաւէ առ 'ի փախուտ ոչ միւսն
 երբէք հասանէ,
 Նոյնպէս յայնժամ ոչ մին եհաս, բայց և
 ոչ մին զերծանէր .
 Զի հեկտորայ փրկել յայնժամ յօրահա-
 սէն մարթ ոչ էր :
 Սինչև ուրեմն արձանացեալ մեծն Ապո-
 ղոն մօտ եկաց,
 Եւ 'ի հեկտոր կորով շնչեալ զոտարն
 թեթև առադրեաց :

Բայց Աքիլէս իւր խուժանին գլխովն
առնէր ակնարկի ,

Եւ ոչ թողոյր զոք նետածիգ առ 'ի Հեկ-
տոր շէշտակի .

Մի ոք տարեալ շուք զառաջինն , անցցէ
յերկրորդն ինքն 'ի կարգ .

Մինչև նոքա յաղբերակունսն հասին չոր-
րորդն ըզնրւագ :

Յայնժամ 'ի վեր կըշիռ ոսկի հայրեն ճը-
գեաց գերաբուն ,

Եդ 'ի նրմա վիճակ կրկին զերկայնաբուն
ըզմահուն .

Մին էր վիճակ քաջն Աքիլէայ մին
Հեկտորայ քաջազին .

Կըռեաց ընդ մէջ . վայրաբերէր դառն օ-
րահաս Հեկտորին .

Էջ մինչ 'ի խոր սանդարամետս . յայնժամ
Փերոս լիք ըզնա ,

Անդուստ խաժակըն Աթենաս եկաց 'ի
մօտ Աքիլէայ :

Չայն արձակէր , « Արդ մէք անշուշտ , ո՛
Աքիլէս դիւցազգեաց ,

Նահատակեալք շուք մեծաշուք տար-
ցուք հանդէսն 'ի նաւաց .

Արկցուք տապաստ մէք զայդ վերագն
Հեկտոր զանյագն 'ի մարտի ,

Դաշտ փախըստեան չիք արդ նրմա և
ոչ տեղի թաքըստի .

Թէպէտ սաստիկ ճիգըն թափեալ վէհ
 քաջազէնն Ապողոն

Յերկիր մածեալ ողորբաւոր Դիայ հարցէ
 ըզպաշտօն :

Կայց դու աստէն անդորրացեալ ոգի առ-
 ցես վայրիկ մի ,

Եւ ես զնացեալ դրդեմ ըզնա 'ի մենա-
 մարտ հանդիսի " :

Օայս Աթենաս . անսաց Աքելլ և 'ի
 յոգին իւր խնդաց ,

Յեցաւ 'ի հաստ պղղընձակուռ բուն նի-
 զակին և եկաց :

Յարեաւ Պալլաս Դեփորոսի 'ի տիպ դի-
 մաց և ձայնին ,

Եկն առ հեկտոր արձանացաւ ձայն զայս
 կարդաց քաջազին .

« Ըզքեզ, արգոյդ, բուռնն վանէ Աքելլ
 արագդ աննրման ,

Թեթևընթաց շրջանակեալ ընդ Պրիա-
 մեան մեր ոստան .

Այլ աղէքաջ, կացցուք վայր մի , արձա-
 նացուք 'ի հանդէս " .

Ըլլաւ հեկտոր յոգւոց թասեալն և
 ձայն կրկնեաց փութապէս :

« Դու Դեփորէ, և վաղընջուց վէհ սիրե-
 լիդ իմ յեղբարս ,

Մօր հեկաբեայ և Պրիամուն 'ի մէջ ող-
 ջոյն զաւակաց .

Իսկ այժմ յաւէտ սիրեմ պատուեմ, զի
 դու տագնապ յիմ վերջին
 Ահա 'ստ պատուարդ ելեր արտաքս,
 ուր այլք 'ի ներս դադարին":
 « Հայր մեր և մայր, կրկնեաց Պալաս,
 աղերսեցին շատ նըւագ
 Անկեալ 'ի դուճս, նոյն և համհարզք
 մազթեն կալ ինձ 'ի քաղաք.
 Այնչափ, արդոյդ, դողմամբ նոքա ող
 ջոյն սարսեալք տագնապին.
 Այլ վասըն քո աղիողորմ հիւժէր ծըն
 դէր իմ ոգին:
 Օհ մէք կըռուեւ անխնայ լեցուք 'ի տէգ
 ընկէց յասպարէս,
 Տեսցուք արագ, ելցէ՛ք ըզմեօք քաջամար
 տիկդ Աքելլէս.
 Հարեալ ըզմեզ տարցի՛ 'ի նաւս զարիւ
 նայեղցըն կապուտ,
 Թէ ինքն արդեօք աստէն 'ի տէգդ օրհաս
 առցէ մօտալուտ":
 Ասաց, դաւեաց. խաղաց յառաջ, մինչ
 ակոյեանք մօտ կացին.
 Գոռան միմեանց, և յԱքելլէս ձայն ետ
 Հեկտոր առաջին.
 « Ոչ ևս 'ի քէն, ո՛ր Աքելլէս, փախչիմ
 զարդիս նըչաւակ.
 Շքջան երիցս առի 'դ ոստանն և ոչ կա
 ցի նահատակ.

Այլ արդ քաջիդ գիմագրաւեալ, կամ
 հարկանեմ կամ մեռայց,
 Եւ մեղ վկայք լիցին անսուտ աստուածք
 տեսուցքն դաշանց:
 Թէ 'ի շնորհացն Արամաղդայ յաղթեալ
 զոգիդ քաղեցից,
 Քաւ, ոչ ոտնհար եղեալ քաջիդ և դառ-
 նապէս գրձձեցից.
 Այլ ըզբոյ պերճ ըզհոյակապ կապտեալ
 ըզգէնադ, Աքիլէս,
 Զմարմինդ առ Յոյնսն դարձուցից, և
 դու արա ինձ նոյնպէս:
 Արկնեաց Աքիլ ասեղաձայն և խաղա-
 ցոյց տէգ զաչաց.
 « Դու այժմ հեկտոր, այ ոխերիմ, մի
 ինձ խօսիր 'ի դաշանց:
 Իցէ երբէք երդումն անսուտ մէջ յառիւ-
 ծուց և մարդկան,
 Եւ կամ գառինք և գայլք երբէք 'ի նոյն
 ոգի միացան.
 Ո՞չ ցանգ նոքա խորամանկեալք չարիս
 նիւթեն իրերաց.
 Զնոյն ինձ և քեզ չեք ինչ համբոյր, չեք և
 դաշն ինչ 'ի յերդմանց,
 Մինչև աստէն մի ոք յերկուց օրհաս ա-
 ռեալ մահագոյժ,
 Յագուրդ տացէ դուն Արեսին յարեան
 իւրոյ յապաժոյժ:

Քաջ լեր , զոյժ քո քեզ ժողովեա . քեզ
արդ պէտք են մեծապէս ,

Զի նահատակ կացցես դու քաջ յայս
արդննկէց յասպարէս :

Չիք քեզ փախուստ . ըզքեզ յիմ տէգն
հարցէ Պալաս անվէհեր ,

Եւ միախուռն ըզվրէժ լուծցես զիմ համ
հարզից , զոր հարեր » :

Եսաց ճօճեաց հըսկայազօրն , ըզյաղթ
զաշտէն թափ ձրգեաց ,

Դէտակն 'ի ձիգն 'ի հանդիպոյ արթունն
հեկտոր խուսափեաց :

Ի գուճս եղև . թուուցեալ վերուստ տէգ
վարսեցաւ 'ի գետին ,

Ճարպ 'ի հողոյն կորզեալ Պալաս ետ
Աքիլլեայ վերըստին :

Չետես հեկտոր և յԱքիլլես ձայն ան
վէհեր զայս կարդայր ,

« Բա՛բէ , զիա՛րդ դիւցազն Աքիլլ 'ի հա
րուածոյն վրիպեցար .

Ահա՛ս ուրեմն ըզքեզ Դիոս չարար մա
հուս ըստ բանիդ ,

Ա՛յ վայրաբան և չարարուեստ , լի ես
բանիւք յետսամիտ .

Ա՛հ արկանես զի սրտաբեկ անկայց յու
ժոյն իմ բազկաց .

Այլ ուշիմ լեր . տէգ ոչ վարսես փախըս
տէիս 'ի թիկանց ,

Այլ շեշտակի, թէ տայ աստուած, յար-
ձակելոյս հար 'ի լանջ,

Բայց և դու ինքն այժմիկ 'ի սայր իմ'նի-
զակին ըզգոյշ կաց :

Իցիւ, թէ ողջ տէգն իմ թաղէր 'ի քոյ մար-
մին դիտապաստ ;

Դիւր էր յայնժամ վշտին Տրոյեանց, ո-
րոց ահ ես մեծասաստ ։ :

Լսաց կըռեաց, և զամրակուռ զաշտէն
ձրգեաց ճեպ ընդ ճեպ,

Հար զԱ. քիլեայ կումբ զասպարին, և էր
կըշիւն անվըրէպ .

Այլ յասպարէն ընդ կրուկ նիզակն ոս-
տեաւ անդէն անդ 'ի տար,

Յասեաւ Հեկտոր զի սուր սըլաքն եւ 'ի
ձեռաց վայրասլար :

Անկան երեսքըն սըրտառուջ, տէգ այլ
չունէր 'ի ժամուն,

Զիւր Գեփոբոսն ասպարակող գոչեաց
կարդայր յօգնութիւն .

Տէգ 'ի նմանէ խնդրէր Հեկտոր, այլ նա
չէր անդ առ ընթեր .

Ծանեաւ ըզհաղքն . « Աւաղ, գոչեաց,
աստուածք կարդան ինձ հրաւէր,

Հրաւէր 'ի մահ . մերձ կարծէի զիմ Գե-
փոբոս դիւցաղքեաց,

Այլ նա 'ի ներքս է պատուարին . ինձ
Աթենաս դաւ գործեաց :

Արդ ինձ առ դուրս դառն օրահաս կայ
մտալուտ , չեք փախուտ .

Զի՞նք սիրուն ես անմահից էի անդուստ
'ի վերուստ .

Դիտս երբեմն և Ապողոն զիս Թափէին
ողջանգամ ,

Եւ արդ , աւա՛ղ , զիս պաշարեալ օրհասն
ունի դառնութեան :

Բայց քա՛ւ յինէն Թէ ապաջան 'ւ անփա-
ռունակ ես կորեայց ,

Այլ մեծապէս գործ գործեցից զոր
պատմեսցեն յապագայս " :

Լսաց , 'ի նոյն ձրգեալ մերկեաց վաղա-
կաւոր սայրասուր ,

Որ յազգերէն կախէր նորա սուսեր մեծ
յաղթ հաստակուռ .

Շեշտ խոյացաւ դէմ յԱքիլէայ որպէս
արծուի օգապար ,

Որ Թըխպայորդ յամպոց 'ի դաշտ Թափ
խոյանայ առ 'ի վայր ,

Մագլէլ կորզէլ ըզգառնն գիրդ կամ
նապաստակ 'ի դողի ,

Այսպէս հեկտոր շողեալ 'ի նրան դի-
մեաց յԱքիլ շեշտակի :

Աքիլ անդուստ ամեհացաւ , հուր վա-
ռեցաւ 'ի յողին ,

Զասպար ըզկուռնն զերփնազարդ եդ
պահապան իրանին :

Պերճ սաղաւարտըն եռավերջ հրափայլ
ցայտէր իբրև բոց ,

Ի վերջս ոսկի գէսք ծածանին , զոր եդ
Հեփեսոս խիտ և հոծ :

Որպէս յաստեղս 'ի պարզ գիշեր աստ-
ղըն փայլէ երեկուն ,

Զքնաղագոյնն է 'ի յերկինս որչափ աս-
տեղք են 'ի բուն ,

Շողայր և սայրն յաջն Աքիլէայ աղէտ
նիւթէր Հեկտորի ,

Զըննէր ողջոյն զիրան քաջին ուր վէր
հարցէ շեշտակի ,

Ի զէն 'ի զարդ զիրանն Հեկտոր ճշիւք
ծածկեալ էր համակ ,

Զոր նա կապտեաց երբ 'ի Պատրոկլ հար
մահաբերն ըզնիզակ .

Մերկ կայր միայն յորում անրակ զուչն
'ի յուսոցըն զատէ ,

Մերձ առ փողոյն , ուր և հոգին մահ
յոյժ արագ գըտանէ 123 .

Ընդ այն ընդ կողմն ահեղազօր Թափով
Աքիլ տէգ վարսեաց ,

Եւ սայրն ընդ գիրդ ընդ պարանոցն ել
անդ յայն կոյս Թափանցանց .

Այլ ոչ ողջոյն ըզընչէրակն անգէն կը-
տրեաց տիգին սայր ,

Որով նորա բարբառ ձայնին ոչ կար-
ճեցաւ մինչ 'ի սպառ :

Անկաւ Հեկտոր, և Աքիլէս ոտնհար
բարբառ արձակէր .

« Դու զՊատրոկղէս կապտեալ, Հեկտոր,
զքեզ յանդորրու կարծեցեր .

Հարեր ըզնա, չածեր ինձ ակն իբրու
անդ մերձ ոչ էի .

Այ յետամիտ, ոչ անդ 'ի նաւս կայր
վրիժառուն ամեհի ,

Ես ինքն Աքիլլ, որ զկարթ ծընգացդ
լուծի 'ի սայր գեղարդան .

Արդ ըզքեզ շունք հաւք գօշեսցեն, նրմա
տացեն Յոյնք դամբան » :

Անդուստ Հեկտոր բան մի յօդեաց յոյժ
նըւաղեալ 'ի ձայնէն .

« Ի լոյս կենացդ, 'ի ծունկըս քո, յարև
ծնողացդ աղերսեմ .

Մի զիս առ նաւս Աքայեցւոց շունք գօ-
շեսցեն գիշախանձ ,

Այլ դու ընկալ յիմոց ծնողաց սըղինձ,
ոսկի մեծագանձ .

Անդ 'ի տուն իմ յաւանդ նոցա տացես
կրկին զիմ մարմին .

Եւ Տրոյացիք, դասք տրոյուհեաց ինձ
բոց տացեն խարուկին » :

Աթիւ 'ի նա յառեալ Աքիլլ ահեղա-
ձայն բարբառէր .

« Մի զիս դու, շուն, 'ի Թափ ծընգացս,
յարև ծնողացս աղերսեր .

Ո՛վ, թէ, ժուժայր սիրտ ամենիս ըզ-
քոյ մարմննսդ յօշատել

Եւ ողջ ծախել. դու այ՛ վերագ, բոց
յիս անշէջ վառեցեր :

Մարդ օն և օն ոչ այլ կայցէ պաշտ-
պան դիւտոյդ առ ՚իշանց,

Թէպէտ տասնիցս և քրսանիցս ձեր յա-
ւելցեն փրկանաց.

Թէպէտ և շատ այլ խոստասցին, թէ-
պէտ և հայրքո Պրիամ

Կըշիւ մարմնոյդ ոսկի կշուել հրաման տա-
ցէ արքունեան :

Քա՛ւ, ոչ մայրքո որ դքեզ երկնեաց,
լացցէ ըզքեզ ՚ի մահճի.

Ըզքեզ ողջոյն թըռչունք վայրագք շունք
կերիցեն ամենի :

Յողւոց պարզել ձայն ետ հեկտոր,
« Գաջ իսկ արդէն գիտէի.

Դու անամոք, անկարեկիր, և սիրտքո
սիրտ երկաթի.

Այլ յուշ մի քեզ ես ինքն եղէց պատ-
ճառք ցասմանն երկնասաստ.

Պարիս, փերոս մի դքեզ արկցեն առ
դուրս իսկեան դիտապաստ » :

Ասեր հեկտոր, և կէտ մահուն ողջոյն
ըզնա պարուրէր,

Հողին ելեալ առ Բարասպանն դըժո
խոց իջանէր.

Լայր ըզվիճակն, յորում զարբունան ելնք
զառոյգ հասակին,

Լայր իջանէր, և Աքիլէս ձայն մեռելոյն
ետ վերջին.

«Մեռիւր գու այժմ, և ես յայնժամ զան
ձամբ զօրհասն իմ առից,

Երբ Արամազդ զայն կընքեսցէ և այլքն 'ի
գից անմահից »:

Ասաց Աքիլէ և 'ի մարմնոյն կորզեաց
ըզյաղթն ըզգեղարդ,

Եդ զայն առ իւր, կապտեաց յուսոց զա-
րիւնայեղց զէն և զարդ:

Յոյնք խրոնեցան, հիացեալ կային 'դ
հասակ ընդ գեղն հեկտորայ,

Եւ 'ի զընին չեկաց յոյն այր որ անդ ան-
խոց թող ըզնա.

Անդուստ և ոք ակնակառոյց և ընկերին
առնէր յուշ,

« Զխարդ հեկտոր 'ի շօշափել մեր գիրդ
է յոյժ և քընքուշ.

Գիրդ առաւել, քան երբ ըզնաւս հրով
բոցավառ նա կիզոյր ».

Զայս ասացեալ, մօտ դայր խոցէր և
վէրս 'ի նա յաւելոյր:

Բայց Աքիլէս կապտեալ զհեկտոր եկաց
'ի մէջ ձայն կարդաց,

« Արդ ալէ քաջք, ո՞ բարեկամք, պետք
և իշխանք Արգոսեանց,

Քանզի զվիրագոյ ետուն աստուածք նը-
 կուն ներքոյ մեր ձեռին ,
 Որ զեան հասոյց որչափ Տրոյեանք հա-
 մանգամայն չարարին ,
 Օ'ն արդ արևք յառաջեսցուք զինու-
 զարդու 'ի քաղաք ,
 Գիտել եթէ զվ'նչ խորհեսցին որ Տրոյ-
 ացւոց են աւագք .
 Լըբցե'ն արդեօք 'ի մահ սորա զԼրեանց
 դըղեակ բարձրաբերձ ,
 Եթէ կայցե'ն յակաստանի թէսէտ հեկ-
 տոր չէ անդ մերձ :
 Այլ զվ' է ինձ յուզել 'ի սիրտ 'ի յայդ-
 սիսեաց խորհըրդոց . . .
 Ո'հ , Պատրոկղէս կայ անդ 'ի նաւս մե-
 ռեալ , անթաղ և անկոծ .
 Այն սիրայնոյս քաւ մի երբէք ինձ
 մոռացօնք մի լիցին .
 Յորչափ զարև ես տեսանեմ , ցորչափ
 քայլեն այս ծունկք իմ :
 Թէսէտ անյուշ իցեն մեռեալք 'ի խորս
 ներքին գեհէնի ,
 Այլ և անդէն ուչ նազէլոյս յիմոց մը-
 տաց ոչ անկցի :
 Արևք հելէնք խընդամըտեալք Պէյան
 նըւագ երգեսցուք ,
 Առեալ ըզսա նաւատորմին 'ի մրցանակ
 մեզ ածցուք :

Շուք մեծ տարաք . զԵկտոր գիւցազն յո-
գի հարաք քաջաբար ,

Ում Տրոյացիք 'ի յոստանին շուք ձօնէին
գիւցաբար " :

Մասց Աքիւլ , և 'ի հեկտոր բան գըժսլըհի
ընդ միտ ած ,

Ըզնեարդս ոտից 'ի կրընկանէ մինչև ցրկո-
ճըն ծակեաց .

Առեալ ապա ընդ այնոսիկ փոկըս ան-
ցոյց արջառեայս ,

Կապեաց 'ի կառս , եթող անդէն ձըգել
գլխոյն առ 'ի քարշ ¹²⁴ .

Եւ ինքն 'ի կառս վերամբարձեալ ըզ-
զէնն և զարդ ըզպայծառ ,

Մըտրակ 'ի կուշտ սրացեալ թըռչին հան-
դէս նըժոյգքն օգապար :

Քարչէր մեռեալն , և յամբ փոշոյն գէսք
կասպուտակք տատանին ,

Թաղէր 'ի հող գըլուխն ողջոյն երբեմն
եղեալ նազելին .

Այլ Զկս յայնժամ եդ զայն յառակ
'ի հայրենիս իւր 'ի բուն ,

Այնպէս զայն օր փոշոտեցաւ արդոյ գը-
լուխն այն ողջոյն :

Մայրն 'ի վերուստ տեսեալ զորդին , ա-
ռեալ ըզքօղն իւր պայծառ .

Արկ 'ի բացեայ , փետէր ըզվարսս և մե-
ծապէս ճիչ բառնայր :

Հայր ծերունին լայր հեկեկայր 'ի ձայն
ողորմ հեծութեան ,

Խուժանն յոգւոց հանեալ թառաչ անդ
ողբս առնոյր ընդ ոստան .

Վայն և աւաղն 'ի վեր 'ի վայր ճըշգրիտ
այնպէս նրման էր ,

Իբր Եղիոն բազմաբըրգեանն ողջոյն հրա-
կէզ տոչորէր :

Հազիւ ուրեմն անդ ժողովուրդք տան
ծերունւոյն արգելան ,

Որ անպայման տապէր ցաւով ըստ դուրս
վազել Դարդանեան .

Գութ արկանէր ողորաւոր , յաղբիւսս
եկեալ թաւալէր ,

Եւ յանուանէն ձայն առ նոսա ողորմելի
արձակէր .

“ Թոյլ արարէք , ո՛ր բարեկամք , թէ-
պէտ առ իս էք գըթած ,

Թոյլ տուք արտաքս ինձ միայնակ երթալ
'ի նաւս Աքայեանց .

Ահեղասաստ առն ապառու՛մ յողորմ ան-
կայց առաջի ,

Թերևս 'ի տիսն իմ՝ ակն ածցէ , թերևս
յալիս գըթասցի .

Ունի և ինքն ինձ նրմանեալ հայր ըզՊե-
ղոս ծերունին ,

Որ զԱքիլէս ծընաւ սընոյց աղէտ Տրոյ-
եանց գոլ ազգին :

Ո՛վ, այդ վերագ վերոյ բնակից զև սիրա
խոցեաց անպայման ,

Զի բազմերամ առոյդ որդւոցս ած օրա
հաս դառնութեան :

Ոչ լամ այնչափ ըզմահ նոցա թէպէտ
և յոյժ ցաւագին ,

Որչափ միոյն ցաւն իջուցէ զես 'ի դը-
ժոխս , հեկտորին :

Ո՛վ, թէ յիմ ձեռս մեռեալ էր դա , յա-
գուրդ էր իմ արտասուաց ,

էր նա և մօրն հիբացելոյ , զոր յարդան
դին իւր կրբեաց " :

Լայր ծերունին , խուժանն հեծէր գոյժ
անդրադարձ տայր 'ի նոյն ,

Մինչ հեկաբէ 'ի տրոյուհիս լսէօք ըս-
կիզբն եդ կոծոյն .

« Ո՛վ իմ որդեակ , եղո՛ւկ եմ ես . արևս
հատցի լուսաբեր ,

Զի դու մեռար հիբացելոյս դու ըյս
ըզտիւ և զգիշեր :

Դու ոստանին օգտամատոյց , հայր տրոյ-
ուհեաց և Տրոյեանց ,

Որ զբեզ նոքա ժողովէին հիւրամեծարք
զերթ աստուած :

Թէ քո արևդ ոչ հատանէր , շուք լինէիր
մեծապէս

Շուք բոլորից . այլ մահն ըզբեզ կապ-
տեաց 'ի մէնջ փութապէս " :

Լսէր և լայր . կինն հեկտորայ չէր իրա .
զգած տակաւին .

Զի լուր չէառ , եթէ փեսայն կայ արտա .
քոյ սպտուարին :

Ի տան բարձուն նստեալ 'ի ներքս ոստայն
նիւթէր կրկնատակ

Ոստայն ազնիւ , յորում նիտայր ծա .
ղիկ գիմակ և գիմակ .

Ետ նա հրաման ժիր աղախնեայց սան մեծ
դընեւ առ կրակին ,

Զէր բազանիս առ ձեռն ունեւ , տալ
հեկտորայ 'ի դարձին :

Այ հիբացեալ . չէր իրազգած թէ յոյժ
բացեայ բազանեաց

Ըզնա 'ի քաջն Աքիլլեսէն նրկուն արար
Աթենաս :

Գոյժ և ճըջիւն հեծեծանաց լըւաւ բըր .
գանցն 'ի բարձուէն ,

Եւ դող հատաւ յոսկերս նորա . կրկոցն
անկաւ ձեռանէն .

Իւր նաժըշտաց գեղահիւսից արագապէս
կարգաց ձայն ,

“ Երկուք 'ի ձէնջ եկայք ըզհեա , տե .
սից զինչ իրք գիպեցան .

Արդոյ սկեսրիս յունկն իմ հատաւ ճը .
ջիւն ձայնին հեծութեան ,

Ծունկք իմ սաղին , և 'ի լանջաց սիրտ
իմ վազէ 'ի բերան :

Անշուշտ առ դուրս աղէտ եհաս Պրիա-
մոսին զաւակաց .

Այլ 'ի բաց կաց, ո՛վ դոյժ, 'ի բաց, ո՛ն
անդր յիմոց ականջաց :

Մի զիմ զԵկտորն յանձնապատան գը-
տեալ Աքիլ նահատակ ,

Տարեալ 'ի բաց 'ի յոստանէն 'ի դաշտ
վարեաց միայնակ .

Մի և նրկուն կարճեաց ըզնա յիւր տըն-
կակից յաշխուժից ,

Զի նա 'ի խուան կալ ոչ ժուժայր . գի-
մագրաւէր բոլորից " :

Լսաց, անդէն վաղեաց արտաքս իբրև
մոլի և վայրագ ,

Սիրան հարկանէր ըզգողանի . ըզհետ չո-
քան աղախնեայք :

Եհաս անդէն 'ի յաշտարակն ուր և
խուժան կայր ամբաւ ,

Եկաց հայէր ըզպատուարաւ, ետես զԵկ-
տոր և ծանեաւ .

Քարշեալ այնպէս հանդէս բըրբան, և
երիվարքն օդապար

Ըզնա 'ի կողմն Յունաց նաւաց ճըգճըգէ-
ին վայրապար :

Պատեաց նորա զականողիս մուժ մա-
ռախուղ գիշերին ,

Թաւալեցաւ 'ի յետս 'ի կոյս, նուաղէ-
ցաւ 'ի յոգին .

Ըզզարդն ողջոյն արկ 'ի գլխոյն . չքնաղ
 պերոզն ըզփայլուն ,
 Ըզվարսակալն , ըզցանցահիւան , ըզգլխա-
 շուք զանկուածոյն ,
 Եւ զոր Աստղիկն ետ ոսկեղէն , ըզքօղն
 էարկ ճամկաւոր ,
 Յորժամ ըզկոյսն յԵտիոյնէն բիւրուք
 օժտիւք ած Հեկտոր :
 Խըռնեալ յայնժամ տալք և խնամիք
 զԱնդրոմաքեալ բակ առնուն ,
 Ունին բաղկօք ըզնըւաղեալն . ինքն անձ-
 կայրեաց էր մահուն :
 Իբրև վայր մի ուշաբերեալ ըզմիտըս իւր
 ժողովեաց ,
 Ըզգերարասոր 'ի մէջ նոցա հոսեալ յա-
 չացն և կարգաց .
 « Աւանդ Հեկտոր , ծընաք ուրեմն ա-
 մուք 'ի նոյն սահմանի .
 Դու 'ի Տրոյեան 'ի յարքունիս 'ի Պրիա-
 մուն տաճարի ,
 Ես 'ի Թեբէ յանտառախիտ 'ի յԻւպոպ-
 ղաք յԵտոյնին .
 Անբախտ հայրն իմ՝ սընոյց զանբախտս 'ի
 տիս մանուկ հասակին :
 Ո՛վ , չէր ծընեալ . զի դու իջեր 'ի խորխու-
 ընն յալս երկրի ,
 Եւ սուգ յանչափ 'ի տաճարի Թողեր
 լքեր զիս այրի :

Մատաղ մանկանս, զոր մէք ծընաք վա-
տաբաստիկքս յաշխարհի,
Մեռեալք Հեկտոր, ո՛հ, չես 'ի շահ և
ոչ նա քեզ եղիցի :
Թէ և լիցի դա անձնապուր գերաշխա-
րան 'ի մարտէ,
Սակայն և ցանգ նա առ ապայ յաղէտս
ամբաւս հեծեսցէ :
Չըրկեն ըզնա խորեալ զնորա սահման
գետնոյն և ըզբաշխ,
Չի որբ մանուկ 'ի կենակից համատիոցն
է անբաժ .
Դէմք վայրանկեալք ծընօտք թացեալ
կան 'ի յառուս արտասուաց
Եւ կարօտեալ գընայ տըղայն յայր ոք 'ի
հօրն ընկերաց .
Ըզմին ձրգէ նա ընդ խըլայն, միւսոյն ունի
ըզձորձոյն,
Եւ ողորմեալ ոք տըղային տայ բաժա-
կէն կաթ մի խուն,
Շըրթամբք չափ է թանալ կաթին, քիմք
ոչ թանան 'ի գինւոյն 125 .
Անգուստ և ոք հարբ մարբ բերկրեալն
ըզնա վարէ սեղանոյն .
Նա և հարու ձեռամբացի, նա և լուսայ
'ի բանից .
Դու որբ անկաճ, գընա 'ի բաց . հայր
քո չէ աստ հացակից :

Տըղայն 'ի յայտան արտասուեալին դառ-
նայ առ մայրն իւր այրի,

Այս Աստիւնաք գըգուեալն յառաջ
վերայ ծնդացն հայրենի .

Ուր նա զուղեղն ուտէր միայն և ըզփա-
փուկսն գառանց .

Ապա մանկիկն յետ յագեւոյն 'ի ման-
կական զբօսանաց ,

'Ներհեալ 'ի ծոցն դայեկին , յիւր յան-
կողնիկ նինջ առնոյր .

Այնպէս քնքուշ կայր 'ի մահճին , սիրտ
գըրգալեց և անդոյր :

Արդ երաշխեպ նա շատ կրեսցէ զսկեալ
սիրուն 'ի հօրէն ,

Զոր Տրոյացիք Աստիւանաքս մականուա-
նեալ յորջորջեն :

Կոչեն այսպէս , զի դու միայն պահպան
էիր պատուարաց

Եւ արդ ըզքեզ տանին 'ի նաւս տարա-
բաժին 'ի ծնողաց :

Աւա՛ղ հեկտոր , անդ մերկ ըզքեզ ու-
դունք կերեալ զեւասցին ,

Յորժամ 'ի քէն շունք կըշտապինդ մըռը-
գայեալք յագեսցին :

Բայց քեզ ձորձոց ամփոփեալ կան մը-
թերք 'ի տան դարանաց ,

Զորձք շնորհաշուք բարակամանք . գործք
էն ճարտար նաժըշտաց .

Ես զայդոսիկ առեալ ուջոյն այրեմ 'ի
հուր բոցավառ ,

Զի չեն քեզ սէտք , ոչ այլ զանձամբ
արկցես դու զայնս գլրգաբար .

Գէթ շուք անձինդ առ Տրոյացիս և առ
բամբէշս լինիցին » .

Ասէր և լայր Անդրումաքէ , տիկնայքն
ըզհետ կըցէին :



1800

The first of the month of the year
1800 was a day of great
importance to the people of
this country. It was the day
when the first of the year
began to be celebrated in
this country. It was the day
when the first of the year
began to be celebrated in
this country.

The first of the month of the year
1800 was a day of great
importance to the people of
this country. It was the day
when the first of the year
began to be celebrated in
this country. It was the day
when the first of the year
began to be celebrated in
this country.

The first of the month of the year
1800 was a day of great
importance to the people of
this country. It was the day
when the first of the year
began to be celebrated in
this country. It was the day
when the first of the year
began to be celebrated in
this country.

The first of the month of the year
1800 was a day of great
importance to the people of
this country. It was the day
when the first of the year
began to be celebrated in
this country. It was the day
when the first of the year
began to be celebrated in
this country.

ԵՂՒՄՆԵՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԻԳ.

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ա. քիլէս ընդ Միւրմիդոնեանց երիցս շրջան առնու կառօք զմարմնոն Պատրոկղեայ : Բազմի 'ի հացկերոյթ : Ննջէ առ ծովեզերն : Տեսանէ 'ի քուն զհոգին Պատրոկղեայ, և խօսի ընդ նմա : Պատրաստեն խարոյկ յայրումն դիական : Արարողութիւնք դիահանացն : Թաղումն ոսկերացն Պատրոկղեայ : Հրաշանայ հոմեր 'ի քերթուածն սգոյն Ա. քիլէայ վասն սիրելոյն : Ի շուք թաղմանն ընծայէ Ա. քիլ ժողովրդեան խաղս մրցանաց հանդերձ մրցանակօք . ձիւնթացս, բռնամարտութիւն, գօտէմարտութիւն, վազարչաւս, նետընկէցութիւն, գնտախաղս, մենամարտութիւն և տէգընկէցս :

Գեղեցիկ նկարագիր մրցանացս :



ԵՂԻՆԸՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԻԳ.

Օ՛ւՅՍ օրինակ ողբ առնուին նոքա ող-
ջոյն ընդ ոստան ,
Եւ Յոյնք հասեալ յԵլլեսպոնտոս այր
այր 'ի նաւս սրբուեցան :
Բայց Աքիլլէս թոյլ չեա սրբուիլ քաջա-
մարտիկ Միւրմիդեանց ,
Արձանացաւ 'ի մէջ նոցա , ձայն համ-
հարզից արձակեաց .
« Միւրմիդոնեանք դուք քաջաձիք , իմ
համահարզք աննրկունք ,
Մեք զԵրիվարըս զօդապարս դեռ 'ի կա-
ռաց մի՛ լուծցուք .

Այլ խումբ առեալ 'ի միասին և երի-
վարք և կառք մեր ,
Ողբ կարգասցուք ըզՊատրոկղէայ . այս
մեռելոց է նըւէր :
Ի դառնաղէտ ցողոյ աչաց ըսփոփեսցուք
մէք զոգիս ,
Ապա լուծեալ և զերիվարս առցուք ող-
ջոյն աստ ընթրիս » :
Ասաց , նոքա կոծ ամբարձին և Աքիւ-
լէս ձայն փողեաց ,
Լալէօք երիցս ըզգլիակամբ ման տան ձիոց
գիսապանծ :
Թետիս արտօսր յորդեալ նոցա զար-
թոյց կոծոյն ըզհանդէս ,
Զէնք զարդք Թանան 'ի յարտասուաց ,
Թանայր ողջոյն ասպարէս :
Բայցափ ցաւին ընդ մահ. քաջին , որում
անձուկ բերէին ,
Վոծոյն ըսկիզբն արար Աքիւլ գերաշ-
խարան հանդիսին .
Ի լանջն իւրոյ նիզակակցին ըզձեռս ե-
դեալ մարդախանձ ,
« Խնդան դու ինձ , ո՞ Պատրոկղէս , Թէ-
պէտ 'ի խորս ընդերկրեայս .
Ահա լըցի զոր խոստացայ , անսուտ է
բանն իմ առ քեզ .
Ահա հեկտոր առ ոտըս քո , շանց արկա-
նել գէշագէշ .

Երկոտասան և կառափունս քում հար-
կանեմ խարուկին

Զարդոյ Տրոյեանց ըզգաւակաց, ցա-
ւեալ 'ի քում օրհասին ։

Ասաց, և գործ անփառունակ ընդդէմ
նիւթէր Հեկտորայ .

Յորսայս ըզնա հողեալ ձրգէր մերձ դա-
գաղին Պատրոկլէայ :

Զէնս մերկացեալ, և արձակուրդ տան
փորատող նըժուգաց .

Կստան 'ի նաւն յԱքիլլէսի, նա ետ ըն-
թրիս մեծահաց :

Բսպանդք անդեայց շատ ձիւնափայլք
բառաչէին զերկաթով,

Շատք փողատեալք և 'ի խաշանց և 'ի
յայծից մայելով .

Շատք և վարազք սպիտակ ժանեղք և
ճարսպալիցք յազեցան ,

Եւ 'ի խորով բոցոյն վերայ Հեփեստոսին
սպարզեցան :

Այսպէս արեանց ըզմեռելով յորդա-
հոսան մեծ վըտակ

Խաղայր գընայր, և լընուին անդ ըստո-
մանք և բաժակք :

Բազք Յունաց ածին զԱքիլլ առ Ատ-
րիդէս ուժգնապէս

Բըռնադատեալ, զի ընդ Պատրոկլէր
ցանգ 'ի սիրտ բոցակէզ :

Մըտեալք 'ի վրանն , Ագամեմոնն ժիր
 Քարողից ձայն կարդայ ,
 Սան մեծ առ հուր կառուցանել 'ի սպաս
 մեծին Աքիլէայ ,
 Թերևս հաճել լուանալ նրմա յապա-
 ժուժիցըն արեանց .
 Հրաժարելով ետ նա հրաժեշտ , և երգ-
 մամբ չափ բան կրնբեաց .
 « Երդնում 'ի Զևս ողջ անմահից հայր
 մեծազօր , մեծաշուք .
 Քա՛ւ , լողարան խնոյ գլխոյս , նախ Պատ-
 րոկղէայ տաց խարոյկ .
 Դամբան շիրիմ կանգնեմ նրմա , խղեալ
 'ի ձօն փունջ հերաց 126 ,
 Զի ես 'ի կեանս երկրորդ անգամ այս
 չափ չեղէց տըրտմազգեաց :
 Բայց հացակից տըխուր ընթրեաց լինել
 զարդիս յանձն առնում .
 Այլ դու , արքայ , հրաման կարդա կու-
 տել աստ փայտ վաղ այգուն .
 Խարոյկ արկցեն ըստ արժանի այս մեռե-
 լոյ գիւցազին ,
 Որ 'ի խաւար արդ իջանէ 'ի բալաձիգս 'ի
 ներքին .
 Արագ ըզնա բոցակիղեալ անխոնջէլին
 ծախիչ հուր
 Աւցէ ըզդա մերոց յաչաց . խուժանն
 դարձցի 'ի գործ իւր » :

Ասաց, լըւան և բազմեցան վայելս առ-
նուշ սեղանոյն,

Կերան արբին անդ կըշտապինդք, չո-
քան 'ի վրանս առնուշքուն:

Օպփամբ ծովուն ըզբազմագոջ 'ի
Միւրմիդեանս Աքիլէս

Ի զերծ մի վայր ընկողմանեալ յոգւոց
հանէր դառնապէս .

Ալքբ բախեալ թանան զափունս, և զնա
անդէն քուն կալաւ,

Քունն անգորրիչ հոգոց սրտի հեղեալ
քաղցրիկ ըղնովաւ .

Անդամբն առոյգք խոնջեալ էին 'ի վա-
նելոյն հեկտորայ .

Եւ անդ յանկարծ ետես զոգին հիքացե-
լոյն Պատրոկլէայ .

Նըման 'ի յաչս իւր գեղեցիկ, նըման 'ի
տիս և 'ի ձայն,

Նըման 'ի ձորձն, արձանացաւ վերոյ գըլ-
խոյն յանդիման .

«Նընջէս, ձայնէր, արդեօք եղէ՞քեզ մո-
ռացօնք, Աքիլէս,

Ի լոյս կենացս ինձ հոգ կալար, և արդ
մեռեալ լըբանէս:

Տո՛ւր ինձ թաղումնս և մարթացայց մըտեւ
ընդ դուրս գըժոխոց,

Զի աւաղիկ վարեն 'ի բաց զիս խօշականք
մեռելոց .

Թոյլ ինձ ոչ տան նոքա 'նդ իւրեանս
 խառնիլ քան զգետ անդրագոյն ,
 Եւ ես թափառ չըջիմ ըզտամբ լայնագրու-
 նեան գեհնոյն :

Տուր ինձ արդ ձեռն . աւանդ քաջ իմ , ոչ
 ևս անդուստ առնեմ դարձ ,

Երբ խարուկին զիս աւանդես , չեմք այլ
 'ի մէջ կենդանեաց .

Ոչ ևս լինիմք խորհրդակիցք . օրհասն
 անգուծ եկուլ զիս ,

Օրհասն որ մօրն իմ յարգանդէ եղև ինձ
 միշտ կենակից :

Եւ քեզ ինքնին կայ յօրհասիդ , դիւցազն
 իմ քաջ Աբելէս ,

Տրոյեանց քաջացն ընդ պատուարաւ կըն-
 քել կենացդ ըզհանդէս :

Եւ յլ քեզ Աբելլ , թէ հաճեսցիս , ա-
 սեմ յայլ ինչ խորհրդոց ,

Մի դու զոսկերս իմ հանգուսցես մի
 տարանջատ 'ի քոյոց .

Այլ որպէս մէք 'ի տան ձերում սընըն-
 դակիցք միապէս ,

Երբ պատանեակ 'ի յՈպունտեայ ած
 Մենետոս զիս առ ձեզ ,

Զի ակամայ անմիտս հարի զԱմիլիգա-
 մեայ ես զորդին

Ջեռեալ 'ի խաղ 'ի վէգընկէցս , և զայրա-
 ցաւ իմ ոգին .

Եւ անդ յայնժամ Պեղոս ասպետ զիս 'ի
տունն իւր ժողովեաց ,

Խնամով սընոյց , և .բեզ , Ա.բիւլ , նիզակա-
կից զիս կարդաց ,

Այսպէս դարձեալ ըզմեր զոսկերս ամփո-
փեացէ սափոր մի ,

Սափոր ոսկին այն երկունկնեան զոր ետ
.բեզ մայր գիցուհի ։

Արկնեաց Ա.բիւլ . « Հիմաստ եկիր , ար-
գոյդ գըլուխ , զնիչ խնգրես .

Ողջ հրամանիդ պատկառ կացեալ զա-
մէնն 'ի գլուխ հանից ես .

Մօտեաց առ իս և լինիցիմք գերկ ընդ
համբոյր մի անգամ ,

Եւ վայրիկ մի քաղցրացուցուք ըզկոծ
ողբոյն դառնութեան ։

Ասաց ձրգեաց ձեռս անձկալից , բայց
նա կալաւ և ոչինչ ,

Հոգին իբրև ծուխ ընդ երկրաւ եմուտ
հանեալ ըզկըռինչ :

Անդէն արագ և Ա.բիւլէս 'ի վեր վա-
զեաց յարհաւրաց ,

Հարեալ ըզծափ իւր ըզծափի , ողորմա-
գին ձայն կարդաց .

« Բաբէ բաբէ , գոյ անդ ուրեմն և 'ի
յարկին գըժոխոց ,

Գոյ անդ հոգի , գոն ուրուականք , բայց
չիք ինչ անդ 'ի մարմնոց 127 .

Ըզցայգն ողջոյն ինձ յանդիման Պատրոկ
զեսիս կաց հոգին,

էր հիքացեալ արտասուլից հեկեկա-
ձայն վշտագին .

Ինձ պատուիրեաց նա զամենայն մանրա-
մասին մի առ մի,

Եւ հրաշապէս էր ճըջգըրտեալ նրման 'ի
տիպ պատկերի ր :

Ասաց, զարթոյց ըզՊատրոկզեաւ զան-
ձուկ ողբոյն ցաւագին .

Մինչև ծագեաց այդ վարդամատն և
դեռ անդէն ջայլէին :

Ղեպ տայր Ատրիդ ջորեաց, մարդկան
փայտակուտին 'ի սաշտօն ,

Գործոյն իշխան էր քաջ համհարզն Իգո-
մենեայ Մերինն ,

Էին նոցա սուր և հատու տապաքք փայ-
տաքք 'ի ձեռին ,

Եւ քաջուր սարիք կառանք . ջորիք յա-
ռաջ խաղային .

Ընդ վեր ընդ վայր ընդ խորտաբորտս
ընդ առ 'ի շեղ վաստակին ,

Մինչև յիդայ 'ի բիւրակնեայն հասին 'ի
գահըս լերին :

Անդ բարձրուղէշ կրտրեն կաղնիս 'ի լայ-
նասայր երկաթէն ,

Եւ տապալին բունքն 'ի գետին և գար-
գափմամբ ճարճատեն .

Ապա 'ի շերտըս կոտորեալ կապեն բե-
 ռինս 'ի ջորիս ,
 Որք զոտս հարեալք փութան 'ի դաշտ
 ընդ մացառուտ ընդ մայրիս :
 Իսկ փայտահարք բունս և կոճեղս առ-
 նուն զանձամբ և բառնան ,
 Որպէս նոցա իշխան գործոյն քաջ Մե-
 ղիոնն ետ հրաման :
 Հասեալք 'ի վայրն առ ծովափամբ մի
 ըզմիով կուտեցին ,
 Ուր Պատրոկղէայ դամբան մի պերճ
 գրծեաց Աքիլ և անձին :
 Գործեալ այնպէս մեծ փայտակոյտ և
 բազմեցան միաբան ,
 Բայց Աքիլէս հրաման կարգաց վառել
 զօրուն Միւրմիդեան .
 Հրաման դարձեալ և զերիվարս ըծել 'ի
 կառս փութապէս ,
 Յարեան նոքա զինավառեալք անցին ող-
 ջոյն 'ի հանդէս :
 Իշխանք 'ի կառս , և կառավարք յուզար-
 կաւորք փառաւոր ,
 Ասպետք յառաջ , ըզհետ գնային և
 գունդք հետեաց բիւրաւոր .
 Ի միջակին ըզՊատրոկղէս բարձեալք
 համհարզք տանէին ,
 Խրզեալք ըզվարսս արկեալ 'ի նա վար-
 սիւքն ողջոյն ծածկեցին :

Յեառուսա Աքիլ ունէր զգրվսոյն յողոց
հանեալ և կոծէր .

Զի զհոյակապ նիզակակիցն 'ի խորսնէր .
քինս յուղարկէր :

Հասեալք 'ի դիրն 'ի սահմանեալ, զմե-
ուեալն 'ի վայր հանգուցին ,

Եւ նիւթ բազում անդ ըզվայտից շուր-
ջանակի կուտէին :

Բայց Աքիլէս և անդանոր այլ ինչ դար-
ձեալ ընդ միտ ած ,

Եկաց բացեայ 'ի խարուկէն, խրղեաց
զգիսակ իւր խարտեաչ .

Զայն պերճ գիսակ տածէր զարգուն
Սպերքեայ գետոյն 'ի նըւէր ,

Եւ ձայն ողորմ 'ի կապուտակ ծովն ակն
արկեալ արձակէր .

« Լուր խպերքէ . զուր քեզ ուխտեաց
Պեղոս հայրն իմ ծերունի

Խրղէլ զգիսակ զայս քեզ 'ի ձօն , 'ի դարձ
յերկիր հայրենի :

Հարիւրեղնեան նա և յիսուն գառինս
յաղէլ 'ի զոհին

Մերձ առ աղբերն, ուր և անտառ գոյ և
բուրեան քեզ բազին .

Զայս նա ուխտեաց, ել 'ի դերևս . Ես
դարձ չառնեմ յիմ քաղաք ,

Տամ զայս գիսակ իմ Պատրոկղեայ ընդ
իւր տանել յիշատակ » :

Ասաց, 'ի ձեռս եդ ըղգիսակն համա,
հարզն սիրայնոյն,

Եւ արծարծեաց անդ միւս անգամ զան,
ձուկ սիրոյն և զողբոյն:

Ընչուչտ յայնժամ ողբք ջայլէին մինչ
յարևուն մըտանէլ,

Թէ ոչ Աքիլլ 'ի մէջ անցեալ Ագամե,
մնեայ ձայն աղղէր:

«Քեզ Յոյնք, Ատրիդ, շքբով անսան. մե,
կինէլ գոցա տո՛ւր հրաման,

Թո՛ղ ընթրեսցեն. գոյ մեզ ողբալ և կըշ-
տապինդ այլ անգամ:

Մէք հոգ կալցուք, մէք գօտէպինդ յու-
ղարկաւորք յայս հանդէս,

Բայց և արգոյ աւադանին կացցէ մնաս-
ցէ աստ առ մեզ »:

Լըւաւ Ատրիդ, 'ի խարուկէն ետ արծա-
կուրդ խուժանին,

Յուղարկաւորք մնացին անդէն. և փայտ
բազում կուտեցին:

Հարիւրտնեան բարձրացուցին զլա-
րոյկն աստի և անտի,

Ի ծայր նորա հանին զմեռեալն հա-
րեալք ցաւովք 'ի յոգի:

Շատ յոյր խաշինս և թաթահերձ գալա-
րեղջիւր շատ արջառ

Առեալ մորթեն առ խարուկին և ըզնո-
վաւ առին սլար:

Բ զճարպ նոցուն առեալ Ա.բիլլ, նովաւ
 զմեռեալն պատէր
 Յոտից ցրգլուիս, և ըզմորթեալն անդ 'ի
 սպանդից շուրջ կարգէր .
 Զօծանելոյն և ըզմեղու առ զըստմանս
 'ի ձեռին 128 ,
 Եդ անդանոր և կորացոյց զբերանսն 'ի
 կոյս դապաղին :
 Եւ փութացաւ էառ Ա.բիլլ չորս երիւ
 վարս սիգապանծ ,
 Եւ 'ի խարոյկն արկ ըզնոսա , յոգւոց հա
 նեալ հառաչեաց :
 Իննն բարակք բուծանէին 'ի սեղանոյ
 արքային ,
 Առ փողոտեաց զերկուս նոցա , արկ 'ի
 վերայ խարուկին :
 Զերկոտասանսնն աւագաց Տրոյեանց
 զաւակս ըզպայծառ
 Առ և յաղեաց և 'ի խորհուրդս վայրե
 նացաւ չարաչար 129 :
 Հուր արկ 'ի ներքս ամենածախ 'ի ճա
 րակէլ զայն ողջոյն ,
 Ապա յոգւոց յողորմ 'ի ձայն կարգաց
 զանուն նազելոյն .
 “ Ինդա դու ինձ , ո՞ Պատրովիէս , թէ
 պէտ 'ի խորս ընդերկրեայ ,
 Ճըջգրիտ ահա լընում՝ այսօր զոր մի ան
 գամ խոստացայ .

Ծախին ընդ քեզ երկոտասան արդոյ
 դաւակք Դարդանեանց .

Բայց ըզհեկտոր չտամ այսօր ճարակ
 հըրոյն , այլ գեշ շանց ր :

Զայս նա սպառնայր . այլ հեկտորայ
 մարմինն 'ի շանց ոչ դըժբէր

Քանզի ըզչուճա մազգեզն Ասողիկ վա
 նէր ըզտիւ և զգիշէր :

Դարձեալ ըզնա յանմահականն օծէր 'ի
 յիւզ վարդենի ,

Զի թէ 'ի քարշ տարցին ըզնա , խանգար
 մարմնոյն մի լիցի :

Անդ հոգ կալաւ և Ասողոն , ամբ կապու
 տակ ած 'ի նոյն ,

Յերկնից ըզգաշտըն պարագրեալ ծած
 կեաց ըզվայր զայն ողջոյն ,

Ուր կայր մարմինն . զի ցամաքիչ ոյժ պ
 րեւուն թափանցանց

Մի ինչ կանուխ ներդից մարմնոյն և ան
 դամոց արկցէ խանձ :

Բայց Պատրոկղեայն խարոյկն յայնժամ
 ոչինչ այնպէս բորբոքէր .

Ետես Աքիլ , և հոգացեալ այլ ինչ ընդ
 միտ արկանէր :

Յաղօթս եկաց կրկին հողմոց Զեփիււոռ
 սին և հիւսսի ,

Զոհ խոստացաւ , նըւէր եհեղ 'ի ձօն ոս
 կոյ բաժակի :

Զգալուստ նոցա արգահատեր, փու-
 թով այրել ըզմարմին,
 Եւ վառ 'ի վառ այն փայտակոյտ մեծ
 խարուկին ծախեսցին :
 Արագն հիրիկ լուաւ զաղերսն, հողմոց
 չոքաւ 'ի հրեշտակ .
 Հողմք ճաշէին նստեալք 'ի տան Զեփիւռ .
 հողմոյն դժժնդակ :
 Դիմեաց հիրիկ, արձանացաւ եկաց առ
 սեամս մարմարեան,
 Տեսին նոքա, յարեան 'ի վեր և կանգնե-
 ցան միաբան :
 Հրաւեր կարդան և տան բաղմոց . նա ետ
 հրաժեշտ և ասաց,
 « Զէ ինձ բաղմել քանզ' 'ի հոսանս Ով
 կիանուն առնեմ դարձ .
 Յեթովսպացոց գընամ յաշխարհն, հա-
 ըրերեզնեան ուր յազեն,
 Զոհ յանմահից փուլթամ և ես, մի զիրկ
 դրտայց յիմ բաժնէն :
 Աքելլ մաղթէ առ դիւաշունչն Զե-
 փիւռոս, առ հիւսիս,
 Արգահատէ զգալուստ նոցա և խոստա-
 նայ պերճ ձօնիս :
 Զի դուք շնչեալ վառէք զխարոյկն,
 ուր անկեալ կայ Պատրոկղէս,
 Ոյր աղագաւ ահա հելլէնք ողջոյն ջայ-
 լէն գառնապէս » :

Լսաց, թըռեաւ . զարթեան նոքա, 'ի վեր 'ի վայր յուզեցան,

Անչէն ասեղ և զարամուրք 'ի յառաջոյ վարեցան .

Արագապէս փոթորկեցին 'ի ծով դիմեալք կապուտակ,

Եւ դիւաշունչ 'ի փչմանէն կոհակք բարդին առ կոհակ .

Ի Տրոյիոյ հասին յաշխարհ և շնչեցին 'ի խարոյկ,

Յական քըթթել ամեհացան ասեղ հընչէն շառաշուկ .

Ըզցայգն ողջոյն 'ի մէջ հըրոյն բոց սասուկագին բորբոքէն

Ըզցայգն ողջոյն և Աքիլէս հեղոյր յոսկի սափորէն .

Առեալ զբաժակըն երկունկնեան գինի հոսեր 'ի դետին,

Թանայր զերկիր . զհէգ Պատրոկղեայ կարդայր անդէն ըզհոգին :

Որպէս լայ հայրն յայրել զոսկերս նորափեսայ իւր որդւոյն,

Որ զհէգ ծնողսըն դառնապէս ցաւով այրէ 'ի մահուն ,

Այնպէս Աքիլ լացեալ զՊատրոկղ, առնէր զոսկերս բոցակէզ,

Գայր և գելոյր ըղխարուկաւ յոգւոյ հանեալ դառնապէս :

Գայր յերևան անգ Արուսեակ հրեշ-
տակ երկրիս լուսաբեր ,

Եւ 'ի վերայ կապոյտ ծովուն քրքրմահան,
դերձ այդ սրփուէր .

Թափ խարուկին նուազեաց յայնժամ ,
ցովմունք բոցոյն պակասեաց ,

Եւ միւս անգամ հողմունք 'ի տունս ընդ
ծով Թրակեան առնեն դարձ :

Բայց Աքիլէս վայրիկ մի անգ 'ի խարու-
կէն բացական

Ընկողմնեցաւ , և յանդորրու առնոյր ըզ-
քուն քաղցրութեան :

Խրունին աւագք զԱգամեմնեաւ , յոտնա-
ձայնին 'ի արփիւն

Զարթեաւ Աքիլ , ձայն ետնոցանստեալ
այնպէս 'ի կանգուն .

« Արիդ և պետք Աքայեցւոց , առեալք
հրաշէկ ըզգինին ,

Ողջոյն զշանթիս նախ շիջուցէք զառկայ-
ծեւոյ խարուկին .

Առցուք զոսկերան ըզՊատրոկղեայ ամ-
փոփեսցուք առանձին ,

Քաջ զըննութիւն տըւեալ նոցա զի ճա-
նաչեղն է հեշտին .

Նա 'ի միջակն էր խարուկին , այլքն այ-
րէին մեկուսի ,

Եւ խառն 'ի խուռն արք , երիվարք արկան
հըրոյն 'ի ծայրի :

Յոսկի սափոր գիցուք զոսկերս կրկնա-
պատկեալ 'ի ճարպոց ,

Անդ հանգիցեն մինչև հրաւեր և ինձ գայ-
ցէ դըժոխոց .

Դամբան կանգնել ոչ յանձն առնեմ ձեզ
հոյակապ , այլ միջակ ,

Մինչև ապա մեզ կանգնեալք զայն բարձր
և լայն և արձակ ,

Դուք որ յետ իմ մնասջիք Յունաց նըշ-
խարք նաւաց հանգիսին » .

Ասաց Աբիլ , և մրտադիւր լուան ձայնի
գիւցազին :

Ըզկայծակունս նախ շիջուցին ցանեալ
հրաշէկ 'ի գինւոյն ,

Եւ 'ի հրայրեացսն անկեալ մընաց մոխրա-
կուտին խոր աճին :

Ապա լացեալք , ըզՊատրոկղեայ քաղեն
զոսկերս ըզհեղոյն ,

Եւ ամփոփեն յոսկի սափոր , կրկնապատ-
կեալ 'ի ճարպոյն .

Եգեալ 'ի վրան ծածկեն շարիւ , գըծեն
ապա ըզիբիմ

Շիրիմ բոլոր , և ըզհիմունս ըզխարուկաւ
շուրջ արկին .

Ճեպ 'ի վերայ և ըզբրածոյն հող կուտե-
ցին թանձրութեան ,

Այնպէս շիրիմ բարձրացուցեալ , յա-
րեան անտի մեկնեցան :

Յայնժամ Աքիլ դրդեաց զամբոխն յա-
 գոն մեծի մրցանաց ,
 Հան մրցանակս ըզկաթսայից , զեռոտա-
 նեաց , զնրժուգաց ,
 Ջորեաց զգասակ և ըզգրաստուց , ցըլուց
 գըլուխս քաջայաղթ ,
 Ըզդաս կանանց գեղագօտեաց , զրահիյ
 փայլուն և զերկաթ :
 Նախկին արագ ձիւնթացից եդ հոյակաս
 մրցանակ ,
 Ձիր առաջնոյն կին անարատ 'ի ձեռա-
 գործ յաջողակ ,
 Եւ ունկնաւոր եռոտանի , քսանկերկուց
 չափ նորա :
 Իսկ երկրորդին ձիր սահմանեաց ըզձի
 մատակ վեցամեայ ,
 Մատակ տըրմուղ , յորովայնին ջորի յղա-
 ցեալ խառնածին .
 Եւ գեղեցիկ կաթսայ անհուր ձիր սահ-
 մանեաց երրորդին ,
 Կաթսայ տանող չորից չափուց և եր հա-
 մակ ըսպիտակ .
 Իսկ չորրորդին 'ի մրցանակ տաղանդ ոս-
 կոյ եդ զերկեակ :
 Հինգերորդին անհուս 'ի հրոյ եդ դաշ-
 խուրան երկունկնեան ,
 Եկաց կանգուն բարբառեցաւ արձանա-
 ցեալ յանդիման .

Մէջա Ատրիդ, ահա ձեզ քաջք Աքայե-
ցւոցըն գրոհի,

Այս բրաբիոնք սահմանեցան ձերն թացիկ
կըրկիսի .

Թէ այժմ այլ ինչ կային պատճառք մըր
ցանաւոր հանգիսիս ,

Ես ինքն անշուշտ տարեալ էի մրցանա-
կաց զառաջինս :

Գիտէք իսկ քաջ, քանի՞ հըզօրք գերա-
զանցէն իմ նըժոյգք ,

Պոսիդոնին ձիւք պարգևաց նըժոյգք ան-
մահք և առոյգք .

Նա հօր իմում ետ Պեղոսի , և ինձ հայրն
իմաւանդեաց .

Ես արդ ուրեմն աստ հանդարտեմ ընդ
այսց իմոց նըժուգաց .

Վահ , կորուսին սոքա զիւրեանց ըզքաջ
և հեզ կառավար ,

Որ ցանդ նոցայն իւղէր ըզքաշս , լուա-
նայր 'ի ջուր ջինջ պայծառ .

Կան արդ նոքա յասպատանին , լան զկա-
ռավար քաջարին ,

Սըրտատուչորք 'ի խոր խոցեալք , բաշք
վայրանկեալք 'ի գետին :

Օ՛ն դուք արիք 'ի կարգ անցէք , ո՛ դք 'ի
ձէնջ յԱքայեանց

Վըստահ 'ի վազ իւր նըժուգաց , վըս-
տահ 'ի ձիգըս կառաց " :

Ասաց Աբիլ, յարեան ասպետք, և Եւմեղոս նախ վազեաց,

Սա Ադմետեայ էր քաջորդի ներհուն ձիոց մրցանաց :

Յարեաւ երկրորդ Դոմեդ արին լըծեալ Տրովեայ զերիվարս,

Զորս նա եհան յԵնէասայ, զոր Ապողոն ազատեաց :

Երրորդ մազդեղն էր Մենեղաւ, լըծեալ ըզձիարն զարագ,

ԶԱգամեմնեայ զՃայիկն Եթէ, դարձեալ և զիւրըն Պողարդ :

Ետ զայս ճայիկ Ագամեմնեայ Եքեպոլոս Անքսիդեան,

Տրոյեան մարտէն լինել ազատ և յանդորրու կալ 'ի տան .

Զի ճոխութիւնս ետ նրմա Զեւս բնակեալ 'ի մեծ Սիկիւոն .

Եւ էր ճայիկս այս բոցավառ ձիրնթացիցն 'ի պաշտօն :

Զորրորդն 'ի կարգ Անտիդոքոս կազմեր ըզձիս գիսապանծ,

Սա Նեստորի մեծ ծերունւոյն որդի յոգունց գերազանց .

Զիք պիւղածինք քաջ կառածիգք . բայց հայրն եկաց առ ընթեր,

Խորհուրդ քաջիկ ազդէր որդւոյն, թէ պէտ և նա ներհուն էր :

“ Բզբեզ Դիոս , Անտիղոբէ , և Պոսիդոն սիրեցին ,

Ի տիս գոլով դեռ պատանեակ քաջիկ ըզբեզ վարժեցին

Ի վարժ ամէն ձիւնթացիկ . ուստի շատ չեք ասել քեզ .

Գիտես դու քաջ առնուլ շրջան 'ի նըպատակն յասպարէս :

Բայց քո նըժոյգք դանդաղ վազեն , խիթամ ինչ էս ձախողակ .

Այլոց թեթեք , բայց ճարտարեւ իբրև ըզբեզ չեն գիտակ :

Արի , որդեակ , խելամըտեալէր դու ողջոյն ճարտարակ ,

Գուն գործեսցես , մի 'ի ձեռացդ ելցէ յանկարծ մրցանակ :

Խելօք օգտի ատաղձագործ , քան թէ 'ի թափ իւր բազկի .

Խելօք օգտի և նաւապետն 'ի ծով մըտեալ ծիրանի ,

Չարագ նաւ իւր ղեկավարէ զալէկոծեալն հողմավար .

Նոյն կառավար ձիւնթացիկ խելօք գըլէ զկառավար :

Ի ձիս , 'ի կառս միայն վըստահն անձահ վազէ նա զուղին

Ատո անդ վարեալ , և ձեք թափառք 'ի կըրկիսի ոչ սանձին .

Քաջ կառավար, թէպէտ վարող իցէ
դանդաղ նըժուգաց,

Յանգ ուչ ունի 'ի նըսպատակ, նա և յան-
ձուկս առնէ դարձ:

Աջալուրջ է թողուլ սանձել, ըզքեմըխ-
տեանն երասան

Կալեալ 'ի բուռն, և զյառաջեալն ու-
շով դիտէ յանդիման:

Յուցից քեզ քաջ և զնըսպատակն, և մի
լիցի քեզ վըխակ:

Կայ անդանօր բարձր 'ի յերկրէ վեց ոտ,
նաչափ բուն ցամաք:

Կամ է կաղնույ կամ եղևնի, կայ դեռ
անփուտ յանձրևույ:

Եւ վէմք սպիտակ կանգնեալ երկու ա-
տի անտի յելս ուղույ:

Շուրջանակի ձիրն թացից է ասպարէզ
տափարակ,

Զայն ոչ դիտեմ շիրիմ վաղուց է մեռե-
լոյ յիշատակ,

Եթէ արդեօք սահմանաքար եդեալ իցէ
'ի նախնեաց:

Արդ մըցանացն 'ի նըսպատակ վայր Ա
քելէս զայս ընտրեաց:

Դու առ նովաւ միշտ քերեւով ըզձիս
ըզկառս մօտ վարեա՛,

Եւ կըքեցիս վայր մի 'ի կառս 'ի ձախա-
կողմնն նոցա:

Աջոյ ձիոյն թոյլ երասան, տացես և
ձայն և մտորակ,

Եւ գուն գործեա զի ահեկեայն մօտ քե-
րեսցէ 'ի նսպատակ .

Եւ այնչափ մօտ մինչ գունտ անւոց
գոգ հըպեսցի 'ի ծայրի ,

Մի մօտ 'ի վէմն , զի մի հարուած ձիոց
կառաց լինիցի ,

Եւ մի այլոց լիցիս առակ և անձին քում
անարգանք .

Յամենայնի լիցիս, որդեակ, և խելամուտ
և հրահանգ :

Ձի թէ այնպէս յաջողեսցիս ըստ նըսա-
տակն անցանէլ ,

Քեզ հետամուտ ոչ ոք հասցէ, ոչ և
լիցի յառաջէլ .

Ոչ հասցէ քեզ հետասլընդեալ և Արիօնն
այն արգոյ

Ագրեստոսին ձին օգապար, որ ինքն է
ճէտ աստուծոյ 130 .

Եւ ոչ նըժոյդք Լաւմեդոնին, որ քաջա-
ռոյգք աստ բուծան » .

Ողջ ծերունին ազգեաց որդւոյն և առ
անդրէն բազմական :

Իսկ հինգերորդըն Մերիօն կազմէր ձիս
պերճս 'ի գիսակ .

Ի կառս ապա վերելակեալք արկանէին
ըզվիճակ :

Յունց տայր Ա. քիլլ, և ել վիճակն Անտի-
ղոքեայ առաջին,

Եւ յերկրորդին վիճակեցաւ Եւմեդոսի
արքային .

Աստ երրորդ Մենեղաւեայ, և եր չոր-
րորդ Մերիոն,

Վերջին Դոմեդ քաջակորով տալ նը-
ժուգաց ըզմըզոն :

Կացին յայնժամ մրցանաւորքն, արձա-
նացան կարգ 'ի կարգ .

Ա. քիլլ հեռուստ ցոյց զնըստատակն 'ի
դաշտ 'ի հարթ բացարձակ .

Ըզվէհ Փիւնիկն ըզհօրն համհարդ եդ առ
ընթեր 'ի լրտես,

Դիտել քաջիկ ըզձիրն թացսն և ճըշգրտ-
տել ուղղապէս :

Տա միաբան մտրակս 'ի կուշտ երիվարաց
ամբարձին,

Ի երասանաց փոկք հարկանեն, խրա-
խոյսք վարչացն յորդեցին .

Ձիք ճախրելով յական քըթթեւ անհե-
տացան 'ի նաւաց,

Ներքոյ լանջացն յուղէր փոշին իբրև մըը-
րիկ ամպրոպաց .

Ի յամբ փոշուոյն բաշք նըժուգաց ծածա-
նէին հողմավար,

Եւ կառք թեթեք է զի սուրան քերեալ
զերկրաւ 'ի խոնարհ,

Ե զի գողցես ընդ օդ կախեալ սաւառ-
նէին վերամբարձ 131 ,

Եւ կառավարք շահատակեն կանգունք
վերայ 'ի կառաց :

Յանձուկ վառեալք բրաբիոնաց տրո-
փայր վազէր սիրտ նոցուն ,

Խրախոյս անդուլ տան նրժուգաց , նոքա
Թըռջին յամբ փոշոյն :

Երբ պըսակեալ զընթացս վերջին , 'ի
ծովակողմըն դարձան ,

Կառավարացըն քաջութիւնք եկին յայն-
ժամ յերևան .

Յորժամ նրժոյգքըն պարզեցան հանդէպ
'ի մէջ կըրկիսին ,

Ձիք Փերեաեանն Եւմեղոսի յառաջա-
դէմ սուրային .

Ըզհետ նոցա սրացեալք Թըռջին Տրո-
վեան նրժոյգք Դոմեդեայ

Արագոտինքն յոյժ առ ընթեր , չէին ինչ
շատ 'ի բացեայ .

Յանդ Թըռէին տալ 'ի նորա հորդան 'ի
կառս անդ 'ի նոյն ,

Եւ Եւմեղեայ ուսք տապէին ջեռեալ
ձիոցն 'ի շընչոյն .

Գողցես գլխովքն հըպեալք 'ի նա , այն-
պէս վազէն օդապար ,

Եւ անդ անշուշտ զանցանէին , կամ էր կը
շիռն հաւասար ,

Թէ ոչ անդուտս վեհն Ապողոն , զայ-
րագնելով ընդ Տիւղեանն ,
Էր 'ի ձեռաց Թուրքեալ նորա ըզքաջա-
մուր խարազան :

Ամբոխեցաւ և արտասուք յաչաց անկան
դիւցազին ,

Զի Եւմեղեայ մատակ նըժոյգք շատ յա-
ռաջեալք խաղացին .

Իսկ իւր նըժոյգք խոչընդոտանեալք վազս
առնուին անմըտրակ ,

Այլ Պալլասէն չեկաց զանխուլ նենդ
փեքոսին դըժընդակ :

Եկն առ Դոմեդ , ետ զխարազանն , ոյժ
տայր ձիոց վերըստին ,

Մատեաւ ապա առ Եւմեղոս ոգւով վա-
ռեալ զայրագին .

Չախեաց ըզուծ , նըժոյգք Թափառք
զարտուղեցան 'ի յուղւոյն ,

Անկաւ քեղին , ինքն 'ի կառաց տապալե-
ցաւ մօտ անուոյն .

Վերոյ յօնից Չախէր ճակատն , հարուա-
ծեցան և ունդուէք ,

Հարաւ բերանն 'ի միասին , ՉախՉախե-
ցաւ և արմուռնի .

Աք արտասուք լըցան քաջին , և ձայնն
աշխոյժ պակասեաց .

Դոմեդ ձիոց մըտրակ 'ի կուշտ շատ քան
զայլոցն յառաջեաց :

Ձի ոյժ ձիոց շնչեալ Պալասս զԴոմեդ
յարգեաց մեծապէս .

Նորա ըզ՛ետ կառավարէր Մենեղաւոսն
Ատրիդէս :

Բայց Անտիղոբ խրախոյս անդուստ կար
դայր ձիոցն հայրենի .

« Արիք 'ի վազս , մի վեհերոտք . սըմբակ
հարէք կորովի .

Չասեմ ես ձեզ ընդ նրժուգաց գալ Դո
մեդեայ 'ի սայքար ,

Ոյց Աթենաս ետ թևս ոտից և զնա գոր
ծեաց գերափառ :

Հասէք ձիոց Մենեղաւեայ , մի վերջոտ
նիք նըշաւակ ,

Մի՛ ձեզ քաջացդ ամօթ 'ի վազս ածցէ
Եթէն այն մատակ :

Բան ձեզ ազդեմ բան գուժալից , որ և
անշուշտ լինիցի ,

Դուք յարքայէն 'ի Նեստորէ ոչ ևս լի
ջիք գըգուէլի .

Անդէն ըզձեզ հարցէ յոգի 'ի սուր 'ի
տէգ 'ի նիզակ ,

Թէ յուլացեալք տարցուք 'ի տուն մէք
անաւագ մրցանակ :

Դուք վազս առէք , ես իմովսանն ճար
տարեցից անդ ինչ մի

Եւ մէք անվրէս յառաջեսցուք անդ 'ի
յանձուկն յայն ուղի » :

Ի սաստ վարչին ձեք սուղ ժամաւ վազս
 արագեալ քաջազոր,
 Վայր մի յետոյ տես Անտիղոք զանձուկ
 ուղւոյն դողաւոր :
Լ անդանօր փոս 'ի յերկրի, ուր ջուր
 քաղեալ ձմերայնոյն,
 Ուղին անդէն էր պատառեալ և խոռո-
 չեալ վայրն ողջոյն :
 Ընդ այն ուղլեալ խոյս տայր Ատրիդ
 'ի զուգարշաւ 'ի կառաց,
 Ընդ նոյն 'ի շէշտ և Անտիղոք զիւր զե-
 ըիվարս մըտրակեաց
 Յուղւոյն 'ի դուրս, թեքեալ վայր մի նե-
 ղէր զԱտրիդ և վանէր,
 Երկեալ Ատրիդ և ձայն անդուտ յԱն-
 տիղոքոս արձակէր :
 « Անմրտանաս, Անտիղոքէ, սանձեա ըզ-
 ձիս դու վայր մի :
 Անձուկ է վայրդ, կայ և ապա վարեա
 ընդ այն ընդ ուղի :
 Աստ մեզ տագնապ է երկօցուն յոր-
 ժամ կառք մեր բախեսցին » :
 Չայնեաց Ատրիդ, և Անտիղոք և ևս
 վարէր սաստկագին :
 Մըտրակ 'ի կուշտ վարէր անդուլ, չըլ-
 սելոյն նա առնէ :
 Վարեաց 'ի չափ քարընկէցին, զոր սա-
 տանի այր ձրգէ,

Չըգէ ուժգին յասպարիսի՛ի փորձ ուժոյ
յաղթ բազկին ,

Նոյնչափ նըժոյգքն Անտիղոքեայ յառա-
ջադէմ վազեցին :

Վերջոսնեցան ձիք Ատրիգեայ , զի և
ինքնին դուլ արար ,

Զի մի յընթացս խոչընդոտնեալք վատ-
թարեացին չարաչար .

Մի կառք թաւալ , նըժոյգք տասալ լի-
ցին ՚ի սէր յաղթուժեան .

Խարտեաշն սպա ոչ հանդուրժեալ լու-
տաց յայնժամ զՆեստորեան .

« Չիք քան ըզբեզ , Անտիղոքէ , չիք ոք
այնպէս չարաթոյն .

Առցէ զբեզ դև . ՚ի զուր ըզբեզ կար-
ծեալ էր մեր իմաստուն :

Բայց մրցանակ մի ահն ունիր ունել ա-
ռանց ինչ երգմանց » ,

Ասաց , ՚ի նոյն և նըժուգաց խրախուսա-
կան ձայն կարգաց :

« Մի դըրասջիք , մի սըրտաբեկք . այդ ձիք
կանուխ պարտասին .

Կանուխ քան զձեզ , զի այդ ամուլք ըզ-
տիսն առոյգ ոչ ունին » :

Նա ետ խրախոյս . նըժոյգքն յորդոր ա-
ռին ՚ի ձայն արքունեան

Վազս արագեալ և ճեպ ընդ ճեպ ժամա-
նեցին յախոյեան :

Յոյնք յագոնին բազմոց առեալ, օգա-
պարիկ նըժուգաց

Կան 'ի զընին, նոքա 'ի դաշտ զամբ մըրըր-
կէն ըզփոշեաց:

Նախ Իգոմէն Կրետաց արքայն զերիվա-
րաց ետ ազգումն,

Էր ըստ ագոնն նա 'ի դիտի բազմոց ա-
ռեալ բարձրագոյն.

Բացուստ ըզձայն լըւեալ վարչին, ծա-
նեաւ անդէն ճըշգըրտեաց

Սոս զերիվարն, որ արշաւէր յառաջա-
դէմ սիգապանծ.

Քաջիկ զըննեաց, հրավառ նըժոյգն աշ-
խէտաձի էր համակ,

Ի ճակատուն տանէր սպիտակ նիշ լուս-
նաձև բոլորակ:

Եկաց կանգուն, ձայն արձակեաց. « Ար-
գոսացւոց պէտք արգոյք,

Արդեօք զըննիչ էս նըժուգացդ եմ միայ-
նակ, թէ և դուք.

Օտարք թըւին ձիք նախարշաւքդ, օտար
ինքնին կառավար.

Նախարշաւեալք յասպարիսին գուցէ
կրեցին ինչ մի չար.

Ձի զորս յառաջ ես դիտեցի պարայա-
ծեւ նըսատակ,

Ոչ ևս դիտեմ. թէպէտ զակն իմ յա-
ծեմ ընդ դաշտն հասարակ:

Կամ կառավարն կորոյս մըտրակ, 'ի
բուռն ունել ոչ բաւեաց

Մօտ քերեւով 'ի նըպատակն, կամ ոչ
չըջան արարքաջ:

Խիթամ, անկաւ նա անգանօր և կառքն
'ի նոյն ջախեցան,

Սանձակոտորք և զայրագինք սրացան նը-
ժոյգքն յանդիման:

Օ'ն 'ի զընին արիք և դուք, թերևս ոչ
քաջ ճըշգրտեմ.

Թըւի ինձ զայրն տեսանել յԵստղացւոց
'ի զարմէն.

Տիւղեայ քաջին ասեմ զորդին, ըզ'Դոմե-
դէս կորովի ʔ.

Լըւաւ Այասըն Ոիլեան և բան կըր-
կնեաց դըժպըճի.

“Օ'կ'քեզ այդպէս, ո' Իդոմէն, բան-
դագուշել վայրապար.

Ձիքն 'ի դաշտէն թուուցեալ առ մեզ են
նոյն նըժոյգքն օդապար:

ՅԵրգոսացիս ոչ ևս ես դու ոչ պատա-
նի առաւել

Եւ ոչ դարձեալ սըրակնագոյն ես քան
ըզգլուիս քո 'ի վեր:

Դու շողփաղփես. քեզ չէ վայել, զի
գոն քան զքեզ գերազանց.

Ձիք նախարշաւքդ են Եւմեղեանքն և նոյն
վարիչ նըժուգաց ʔ:

Յասեաւ, կրկնեաց Իդոմենէս . « Այս
դու վէ՛հ լեզուագար .

Յայն ամենայն վերջին Յունաց . միտքքո
վայրագ , սիրտքո չար :

Ի դրաւ դիցուք եռոտանի և կամ սան
մի սլատուական ,

Եւ դատաւոր զԱգամեմոն մեզ ընտրեա
ցուք երկոքեան ,

Ո՞ր ձեք իցեն այն նախարչաւք . զի ծա
նիցես 'ի տուժին » .

Լըւաւ , 'ի վեր վազեաց Այսս խնդրէր
լուտալ զայրագին :

Անշուշտ յայնժամ կագ ջերանէր ուժ
գին աստի և անտի ,

Թէ Աքիլէս ինքնին կանգուն ձայն չար
ձակէր յագոնի .

« Մի՛ ևս , Այսս Իդոմենէս , դառն կա
գեւ աստ ընդ վայր ,

Ո՞չ ձեզ ինքնին էր կըշտամբեւ , թէ ոք
այդպէս խեռանայր .

Մնացէք վայր մի բազմոց առեալ աստ
'ի զընին նըժուգաց ,

Դոքա արագ հասցեն առ մեզ 'ի յալթու
թեան մրցանաց .

Այր այր յայնժամ այդ նըժուգաց զըն
նիչ ճշգրիտ է ինքնին ,

Ո՞ք 'ի նոցունց իցեն երկրորդ , և ո՞ք ի
ցեն առաջին » :

Լսաց Աքիլւ գայր Դոմեդէս կուռ
 մըտրակեալ 'ի քամակ,
 Ձիք սաւառնին արագապէս փոթորկե-
 լով 'ի սըմբակ .
 Ամսըն փոշւոյն յորդ մըրըրկեալ ողջ
 փոշոտէր զկառավար ,
 Կառքըն կրուեալք յոսկի յանագ , թըռ-
 ջին ձիովքն օդապար .
 Հազիւ յայնժամ ահօս խորէր կառացն
 անուոց շըջանակ ,
 Սրանան այնպէս գոգցես ընդ օդ յաւազ
 փըխրեալ և բարակ :
 Հաս 'ի յագոն . ձիք քիրտն հօսեն , գըլ-
 խոյն լանջաց յորդ կայլակ ,
 Ինքն 'ի փայլուն ոստեալ կառաց , 'ի
 լուծն յեցոյց ըզմըտրակ :
 Խաթենեղոս առեալ անդէն ըզմըցանակն
 ետ արանց
 Տանեւ ըզկին , զեռօտանին , և ինքն ե-
 լոյծ զերիւարս :
 Ըզհետ Նեղեանն Անտիղոքոս կառավա-
 րեալ գայր մօտէր ,
 Ոչ արագեալ այլ ճարտարեալ նախ քան
 զԱտրիդ ժամանէր :
 Բայց և Ատրիդ ընդ նըժուգացն յոյժ
 առննթեր կայր նըվին ,
 Որչափ անուոյն 'ի մօտ կայ ձին կառա-
 ձըգողն 'ի գաշալին ,

Գէս ծայրարձակ ագւոյ նորա հըպի
 յանուոյն շրջանակ ,
 Նա կուռ դառնայ և անջրպետ խուն կայ
 յընթացս յայն արագ ,
 Նոյնչափ ճըշգրիտ յԱնտիղոբէայ մընաց
 Ատրիդ ըզկընի ,
 Որ հեռի կայր քարընկէցիւ , այլ հաս ան-
 դրէն շէշտակի :
 Քանզի աշխոյժք 'ի յայն մըցանս հատան
 անդէն Եթէին ,
 Բաշագեղոյն արագավաղ Ագամեմնեան
 մատակին :
 Մինչ զի թէ այլ յերկարէին սայքարա-
 ւորն արշաւանք ,
 Թերևս յայնժամ և զանցանէր և յաղթու-
 թեանն չէր յերկուանք :
 Բայց Մերիոն Իդոմենեանըն համա-
 հարզ քաջարի
 Քան զԱտրիդէս վերջոտնեցաւ տէգըն-
 կէցիւ ըզկընի :
 Յոյք և դանդաղք էին նորա զոյգ գիսա-
 սանծ նըժուգաց ,
 Եւ ինքն այնչափ չէր հըմտացեալ ձիրն-
 թացիկ մըցանաց :
 Հաս Եւմեղոս , վարէր վերջին ըզկառս
 ըզձիս հիքապէս ,
 Տեսեալ ըզնա 'ի գութ սրաին գիւցազն
 հատաւ Աքիլէս :

Եկաց 'ի մէջ Արդոսացւոց, «Վահ, Եւմէ
ղէ, ձայն ամբարձ,

Ա՛յդպէս վերջին այդ քաջարիդ վարէ
զամուս նրժուգաց :

Օ՛ն մէք զերկրորդն ըստ արժանւոյն
տացուք դրմա մրցանակ,

Բայց զառաջինն որդին Տիւղեայ կացի
անձին յաղթանակ » :

Ասաց Ա.բիւլ, գովէն ըզբանն որպէս
դիւցազըն կընքեաց,

Ետուն նրմա զմատակաձին ըստ հաճոյիցն
հելէնաց :

Ճեպ ետ յայնժամ Անտիղոբոս վաղեաց
աշխոյժն այն 'ի վեր,

Արձանացաւ և ընդ Ա.բիւլ բարբառեցաւ
անվէհեր .

« Ցասնում Ա.բիւլ, թէ զայդ գործես
կապտեալ ըզվարձ իմ շքոյն .

Ի գուժ հատար, զի վնասեցան կառք և
նրժոյգք քաջարւոյն .

Թո՛ղ դից և նա ուխտ էր ուխտեալ ոչ
գու վերջին յագոնի .

Իսկ թէ դըթաս գու սիրաբար, շատ 'ի
վրանիդ կայ ոսկի,

Շատ և սըղինձ, շատ և խաշինք, նրժոյգք,
նաժիշտք բարեբուն,

Ա՛ռ 'ի նոցունց տո՛ւր 'ի սլարգև, կամ
թէ այլ ձիր վէհագոյն,

Կամ առ յապայ կամ թէ այժմէն . քեզ
Յոյնք լիցին բարեբան .

Սակայն ըզբուն զիմ մրցանակ ոչ տաց
նրմա յաւիտեան :

Թող որ քաջաց վասն այնորիկ ինձ եկես
ցէ 'ի պայքար » .

Ասաց Նեղեանն , և ժրպտեցաւ դիւցազն
Աքիլ սիրաբար ,

Էր մրտերիմ Անտիղոբոս , կրկնեաց առ
նա Աքիլէս .

« Քաջ ինձ ազդես , Անտիղոբէ , պարգև
ձօնել 'ի տանէս .

Շնորհեմ քեզ զայդ , տաց զԱստրուպեայ
զրահ սլղղնձին Եւմեղեայ

Ըղճանրագինն , որ շրջանակ ունի փայ-
լուն անագեայ :

Չայն ետ ածել զայն 'ի վրանէն Ատո-
մեղեայ համհարզին ,

Չորբաւ եբեր ետ Եւմեղեայ . էառ նա
զայն խնդագին :

Եւ յԱնտիղոբ հարաւ Աորիդ , ցաւ և
զայրուց 'ի սրտի .

Քարողն 'ի ձեռն եդ գաւազան , լու-
թին կարգաց հանդիսի :

Չայն ետ Աորիդ . « Ձի՛նչ գործեցեր ,
ուչիմդ երբեմն Անտիղոբ ,

Ձի՛ վնասեցեր իմ նրժուգաց արհամար-
հեալ զիմ փառօք :

Ըզքոյս զանկածս յառաջ տարար. հանա
աւագք հէլէնաց

Մեզ մի ըստ աչս արասլիք դատ, տուք
դատաստան իրաւանց .

Զի մի յապայս ոք ասասցէ, թէ խա
բանօք Մենեղաւ

Բուռն արարեալ Անտիղոբեայ, զնորա
մատակն առ տարաւ .

Զի քաջ թէպէտ իւր երիվարք նրժոյգք
էին անաւագ ,

Բայց էր ինքնին գահու 'ի վեր և զօրու
թեամբ այր աւագ :

Այլ աղէ դատ ես արարից . Յոյնք զիս
թողցեն անբամբաս .

Ուղիղ է դատս . « Արի , գիւցազն Անտի
ղոբէ , եկ մերձեաց .

Մօտ կաց կառաց և նրժուգաց , կալ և
ըզքոյդ խարազան ,

Երդումն արա յերկրասասանն 'ի Պոսի
դոն մեծ արքայն 132 ,

Թէ խոչ չարկեր դու իմ կառաց նենգ
գործելով կամակար » .

Լըւաւ ուշիմն Անտիղոբոս և անդրադարձ
ետ բարբառ .

« Ներողամիտ լիցիս , արքայ , առ իս կըր
սեր սլատանի ,

Մենեղաւէ , մեծ լաւութեամբ , մեծ յա
ւագոյթ հասակի :

Գիտես իսկ. քաջ . բոց քանի՞օն է պատա-
նեաց վառ 'ի վառ ,

Նոցա ոգիքն յար բորբոքին , նոցա անուար
է հանճար :

Լէր դու անգորր , ես . քեզ մտադիւր տաց
ըզմատակ զոր առի ,

Նա և յիմոցս , եթէ խնդրես , քաջ մըտա-
դիւր ես տայի ,

Քան եթէ ցանգ . քեզ դըժպըհի , դիւցազն
արքայ բարեփառ ,

Անկանկցիմ 'ի քոյն սրտէ և դից լնցիմ
երդմնահար » :

Ըսաց , և աժ ըզձին մատակ Անտիղոքոսն
այն ուշիմ ,

Ետ Մենեղեայ . առ ընկալաւ և քաղցրա-
ցաւ 'ի յոգին :

Զոր օրինակ 'ի ծարաւուտ և 'ի ծընդեալ
անդաստանս

Յօղն իջանէ , և զուարթանան նորածա-
ղիկ բոյսք հասկաց ,

Այսպէս և քո , Մենեղաւէ , միտք և խոր
հուրդք զուարթացան .

Դարձաւ ապա առ Անտիղոք սիրողաբար
կարգաց ձայն .

« Զայն արդ և ես քեզ , Անտիղոք , ան-
գորր ոգւով տամ նըւէր ,

Զի ոչ ուսկայ և ոչ ապուշ յառաջ եր-
բէք դու եղեր :

Այլ ըզբո միտս արդ դեդևեաց պատա-
նութիւնդ հողմավար .

Բայց լաւ է քեզ աննենդ ոգւով ցանգ-
ծերունեաց կալ պատկառ :

Յոյն այր ոչ ոք այնչափ հեշտին զիս ա-
մոքէ իբրև դուք ,

Զի դու 'ւ եղբայրդ և հայրդ արդոյ քըրա-
նեցարուք ինձ 'ի շուք :

Ողորանացդ երես առնեմ , քեզ զիմըն
տամ մրցանակ ,

Գիտուն վասն իմ և այլք լիցին զի չեմ ան-
սաստ խըստամբակ) :

Ասաց , զմատակն Անտիղոքեայ ետ համ-
հարզին Նեմոնեայ ,

Եւ ինքն էառ յիւր մրցանակ ըզլուսա-
փայն ըզկաթսայ :

Արեալ չորրորդ հաս Մերիոն , տա-
ղանգս երկու առ զոսկի .

Կայր մրցանակ հինգերորդին ձիր երկ-
ունկնեան բաժակի :

Զայն Աքիլէս յածեալ 'դ Ագոնն ետ
Նեստորայ և ասաց .

« Արդ և դու զայդ , ո՛վ ծերունիդ , ըն-
կալ 'ի ձիր պարգևաց .

Քեզ յիշատակ իմ Պատրոկլէայ յուղար-
կաւոր հանգիսի ,

Զի դու , աւանդ , զայդ զիմ աղիս ոչ ևս
տեսցես յաշխարհի :

Չես 'ի մրցանս բըռնամարտկաց, գօտէ-
մարտից բաւական,

Ոչ նետընկէց, ոչ քաջարշաւ, վատեալ 'ի
տիս ծերութեան ։

Ասաց և ետ . առ խնդագին, ձայն ծե-
րունին արձակեաց .

« Այո որդեակ, դու զամենայն բարբա-
ռեցար յարժանեաց .

Անդամք վատեալք, ոտք դողդոջունք,
ձեռք չեն թեթեւք և արագ .

Ո՛վ, երբ կորովս եր հաստամուր 'ի քաջ-
աւոյգն իմ հասակ .

Յորժամ զարբայն Ամարիւնկէս թաղեալ
Եպեանքն 'ի Բուպրաս ,

Արբայորդիքն յուղարկաւորք եգին յա-
գոն մրցանակս ,

Ինձ 'ի մրցանս չեղև որ անդ ոչ 'ի յե-
պեանս հանգունակ ,

Ոչ 'ի Պիւղեանց ոչ յետողեանցն մեծ-
անձանց գումարտակ ։

Ի բըռնամարտըս պարտեցի ըզՎլիւտոմեդ
զԵնոպեան ,

Ի գօտէմարտըս զԱնկէոն, որ ինձ յարեաւ
ախոյեան .

Ի վազս ոտից ես յաղթեցի Իփիկլոսին
քաջընթաց .

Պողիւդորին և Փիւղեսեայ 'ի տէգընկէցս
մրցանաց ։

Միայն որդիքըն Ակտորեայ անցին ձիոցն
յարշաւան ,

Երկուք ընդդէմ ինձ միայնոյս 'ի վէգ ե-
լեալք յաղթութեան :

Մեծահարուստ էր մրցանակն . և այն եղ-
բարք երկուորեակ

Մին յերասանն էր քաջ ներհուն և մին
անդուլ 'ի մլտրակ :

Երբեմն այսպէս . այլ զայդ նախճիրս ես
արդ թողում պատանեաց ,

Եւ եմ հնազանդ ես ծերութեան ,
փայլեալս 'ի մէջ դիւցազանց :

Այլ դու ըզքոյդ թաղեա մրցմամբք , ես
ընդգրկեմ քո զընծայն .

Ինդամ 'ի սիրտ , զի մոռացօնք չեղև քեզ
քո բարեկամ .

Եւ ճանաչես զչուք ծերունւոյս յԱքայե-
ցւոցն 'ի հանդէս ,

Արդ քեզ աստուածք ջանիցդ 'ի վարձ չը-
նորհս տացեն մեծապէս " :

Իայց Աքիլէս մուտ 'ի խուժան լըւեալ
զգովեստ Նեստորի ,

Եւ բըռնամարտ դառն ագոնին եդ մրցա-
նակ առաջի :

Ետ անդ կապել ջորի անխոնջ , տրմուղ ,
անսանձ , վեցամեայ .

Եւ պարտելոյն եդ մրցանակ բաժակ բո-
լոր երկունկնեայ :

Եկաց ձայնեաց . « Ատրիդք , հեւէնք ,
ձեզ այլ մրցանս ընծայեմ .

Ահա պարգևք , օն քաջք երկուք բռնա-
մարտիկք յարիցեն :

Ում Ապողոն տայ յաղթութիւն՝ նա ըզ-
տոկուն զայս ջորի

Ըստ կամս Յունաց տարցի յիւր վրան .
պարտեալն ըզվարձ բաժակի » :

Ասաց , և վարժ բռնամարտիկն Եպոս
յարեաւ վիթխարին

Քաջ Պանոպեանն , և ՚ի ջորին հրպեալ
ձայն ետ ագոնին .

« Բաժակ խնդրողն հապա յառաջ . քան
զի զջորին յոյն ոք այր

Չառցէ անշուշտ զիս պարտելով . բռ-
նամարտից եմ վարժեար :

Շատ է զի մարտս ես տամ տեղի . զի յա-
մենայն գողներհուն

Չիք մարդոյ հնար . բայց զոր ազգեմ ,
առցէ անշուշտ կատարումն .

Ըզմորթ խըզեմ ախոյենիս , փշտեմ զոս-
կերս , և նրկուն

Իւր մերձաւորքն ՚ի մի խըռնեալք տարցին
ըզնա խոց ՚ի տուն » :

Ասաց . ողջոյն էր լըռութիւն . Եւրիւա-
ղոս գիւցանման

Յարեաւ միայն , սա Մեկիստեայն ճետ
արքային Տալայեան .

Սա՛ ՚ի Թեբէ չոքաւ երբեմն ՚ի գիւհանա
 Իգիպէայ ,
 Անդ նա յաղթեաց ողջոյն Կադմեանց .
 Դոմեդ սատար էր նրմա .
 Խրախոյս մեծ տայր ՚ի յաղթուածիւն և
 նախ նրմա ած գօտի ,
 Տըւեալ նրմա և զամրակուռ փոկըս ցըլուն
 վայրենի :
 Գօտէսընդեալք անցին յագոն , ձեռս ամ
 բարձին քաջուածեան
 Թափ այր յընկեր , և կորովի բազուկք յի-
 րեարս խառնեցան :
 Հարուած այտից շաչէր ահեղ , առուք
 քրտանց խաղային
 Ողջ ընդ իրանս , և մոլեցաւ քաջազն Ե-
 պոս զայրոգին .
 Շանթեաց հարուած այտից միւսոյն
 մինչ աստ և անդ նա զննէր ,
 Անդէն յերկիր տասպալեցոյց , զառոյգ
 անդամն ջախէր :
 Զոր օրինակ ձուկըն թափով յուժգին
 հիւսսին ՚ի շնջմանց
 Ի լուաւէտ վարեալ ծովափն ՚ի մուծ
 ծածկի կոհակաց ,
 Այնպէս հարեալ թաւալեցոյց մեծանձն
 Եպոս և կանգնեաց .
 Վազէն ընկերքն , ածեն արտաքս , և նա
 քայլէր առ ՚ի քարշ .

Անդ թանձր և թուխ արիւն ժայթքեալ
և դեգւի 'ի գլխոյն ,

Առին յիւրեանս և հանդուցին , էր այլ
յայլմէ նա ողջոյն :

Համհարզքն անդէն չոքան առին ըզբողո-
րակնն բաժակ .

Բայց Աբիլէս և յայլ մրցանս եդ զառա-
ջեալ մրցանակ :

Մրցանքն էին գըժոխըմբէլք գօտէմար-
տիկ հանգիսին ,

Եռոտանի մեծ առ 'ի հուր էր բրաբիոն
յաղթողին .

Արժէք նորա առ Աբայեանս երկոտա-
սան էր եզանց ,

Իսկ պարտելոյն 'ի մրցանակ կին մի ա-
ռեալ եդ կարգեաց .

Կին վարժ 'ի շատ 'ի ձեռագործս , արժէք
նորա չորս եզանց .

Չայն ետ Աբիլ . « Արիք հելէնք և յայս
'ի փորձ մրցանաց » :

Ասաց , յարեալ Տեղամոնեանն մեծն
Այաս 'ի հանգէս ,

Յարեալ անդէն և խորագէտ բազմահը-
նարն Ողիւսէս .

Արձանացան 'ի յագոնին զինեալ ըզմէջս
սլինդ գօտեօք ,

Վազեալք յերեարս և սլնդեցան լեալ
գիւրկնդիսառն յաղթ բազկօք ,

Ձոր օրինակ հիւսըն ճարտար կապէ զամոլս հեծանաց ,

Տան բարձրաբերձ լինել պահանգ ընդդէմ հողմոցըն շնչմանց :

Չեռք հասոք ճըգնին , կռնչէն քամակք , կայլակ քրտանցն առուանայր ,

Շիժք թուխ արեամբ յորդէն կապոյտք ընդ ուսս ընդ կողս առ 'ի վայր :

Ճըգնին 'ի պերճ եռոտանին . ոչ Ոգիւսէսըն գըլէր ,

Եւ ոչ Այաս . հուժկուն Ոգիւս ցանգ 'ի դիմի հարկանէր :

Յոյնք տաղտկացան . ձայն ետ Այաս .

« Դիւցազն ուշիմ լայերտեան ,
Կամ զիս վերառ , կամ ես ըզբեզ . Դիոս կալցի մեզ խընամ » :

Ասաց , վերառ . հնարեաց Ոգիւս , 'ի ծալս ծընգաց կոճիւն հար ,

Ընդարմացոյց զանդամս նորա , 'ի շէսլ ըզնա արկ 'ի վայր :

Ի լանջ նորա անկաւ Ոգիւս , ձայն հիացման բարձ խուժան .

Բայց Ոգիւսէսըն խորագէտ փորձեաց երկրորդ փորձ յայնժամ :

Խուն 'ի գեանոյն շարժեաց ըզնա , այլ ոչ ամբարձ զհարըստին .

Այաս յայնժամ ճիգն ետ ծընգացն , և թաւալին երկոքին :

Մի ըզմիով թաւալագլորք , փոշոտե-
ցան ախոյեանք ,

Եւ խնդրէին երրորդ անգամ գօտէմար-
տին ըզմրցանք :

Չայն ետ Աքիլ . « Մի այլ մրցանք , մի
պարտասիք վշտահար .

Արդ երկոցուն է յաղթութիւն և բրա-
բինն հաւասար :

Գնացէք առէք . թողէք վայր մի զի և
այլ Յոյնք մրցեսցին » :

Տեղի ետուն . զգեցան հանդերձ , քաջ
թօթափեալք ըզփոշին :

Բայց Աքիլէս վարձ և 'ի վազս եդ խառ-
նարան արծաթի ,

Տանէր վեց չափ . էր շնաշխարհիկ գործ
աննրման գեղանի

Գործած ճարտար Սիդոնացւոց . փիւ-
նիկք ընդ ծով ծիրանի

Բերին եդին 'ի նաւակայս ձիր թոռասայ
արքայի :

Ետ Պատրոկղէայ զայն Յասոնեան Եւ-
նոս փրկանք Լիւկոնին ,

Եւ զայն Աքիլ եդ մրցանակ 'ի շուք իւրոյ
համհարզին .

Վարձ մրցանաց , որ առաջին շոյտ է 'ի
վազըս ոտից .

Եւ երկրորդին եդ զեզըն մի յաղթահա-
րուստ ճարպալից :

Վերջնոյն տաղանդ եդ կէս զոսկւոյ , ե-
կաց կանգուն և ձայնեաց .

« Արիք հեւենք և յայս 'ի փորձ արագա-
վազ մրցանաց » :

Եւ Ոյիւէան արագն Այաս , եւ Ողիւսէս
խորիմաց ,

Եւ Անտիդոք 'ի վազս ոտից յաղթողն ող-
ջոյն պատանեաց :

Կացին 'ի կարգ . ցոյց մատնանիչ նոցա
Աքիլլ նըպատակ .

Արձակեցան 'ի կրկիսէն , սրացան թեթև
և արագ :

Յառաջադէմ անդէն Այաս թըռեաւ ա-
րագն Ոյիւէան .

Թևակոխէր և մերձ կարի վազեր Ողիւս
լայերտեան :

Որչափ կընողըն ժըրագլուխ մերձ կայ ու-
տայնն առաջի ,

Զոր անկանէ թեթև ձեռօք ճարտարա-
գործ յարուեստի ,

Քանզի ըստ ազն արագ արագ կրկոց
չարժեալ ընդ թեղան ,

Կըքեալ ըզլանջըն կատարէ ըզգեղեցիկն
իւր զոստայն ,

Այսպէս Ողիւս ունէր զհետոցն , մինչ չև
փոշւոյն ամբարձեալ ,

Յետուսա 'ի գլուխ շնչէր նորա իբրև նը-
ժոյգ արագեալ :

Ընդ հետամուտն Յոյնք ցնծացեալք
խրախոյս կարդան յաղթութեան,
Մինչև նոքա մօտ քերէին յարշաւանին 'ի
սահման :

Սրտին Ոգիւս մաղթէր զՊալասս. « Լսւր
գիցուհի, յիս հայեաց,

Ոյժ տուր ոտիցս » . մաղթեաց գիւցազն,
անսաց ձայնին Աթենաս :

Ժրացոյց զանդամս զոտս և ըզձեռս .
մօտ կայր անդէն մրցանակ .

Այն ինչ վազեաց, գըթեաց Այաս . Պալ-
լասս եղև խոչընդակ .

Գըթեաց անկաւ վայր յաղբալից առ 'ի
սպանդիցըն եզանց

Զորս Պատրոկղեայ 'ի խարուկին մեծն
Աքիլէս փողոտեաց :

Բերան ռնդունք լըցան նորա 'ի յարջա-
ռոցն սպաւառ ,

Կանխեաց Ոգիւս առ զխառնարանն, իսկ
Ոյիլեանն առ զարջառ :

Վայրագ ցըլուն կալաւ զեղջիւրն, եթուք
անդ զազըն և ասէր,

« Բաբէ, հեղենք, կարթեաց Պալասս զիմ
զոտն արագ անվէհեր .

Պահէ զՈգիւս, և 'ի վաղուց կայ առ նը-
մա իբրև մայր » .

Լըւան հեղենք, առ հասարակ ծիծաղե-
ցան հեշտաբար :

Անտիոքոս 'ի վազարչաւս ըզմրցանակն
առ վերջին ,

Եկաց անդէն և ժըպտեցաւ , բարբառե-
ցաւ յագոնին .

« Տեսէք , հեւլէնք , զի ծերունեաց շուք
տան և այժմ անմահ դիք .

Ահա տիօք է իսկ Այսա աւագ քան զիս
սակաւիկ .

Ողիւս առ հարբք մերովք ծընեալ , բայց
ծեր է ժիր մեծապէս ,

Յոյն այր 'ի վազս ջըդէ ըզնա , միայն ա-
րագն Աքիլէս » :

Ասաց , յարգեաց սա զԱքիլէս . նա ձայն
կարդաց յանդիման ,

« Անտիոքէ , քաւ մի ընդ օդ բան քո հար-
ցի գովութեան .

Քեզ և այլ կէս տաղանդ ոսկոյ բարդեմ
'ի ձիր պարգևին » .

Ասաց և եդ 'ի ձեռս նորա , նա առ գը-
նաց խնդագին :

Այա երկայն տէգ և ասպար և սաղա-
ւարտ եդ 'ի մէջ ,

Էին այս զէնք Սարպեդոնին , զոր կողոպ-
տեաց Պատրոկղէս :

Եկաց ձայն եա . « Արք քաջք երկուք զի
նալառեալք ախոյեան ,

Ի սուր երկաթ այր ընդ ընկեր փորձ փոր-
ձեացեն քաջութեան :

Որ նախ խոցեալ թափանց ընդ զէնս ա-
րիւն հանցէ ընդ մարմին ,

Ես զայս սուսեր արծաթագամ տամ մըր-
ցանակ յաղթողին ,

Սուր պերճ թրակեան զԱստերուպեայ .
իսկ զէնք լիցին երկոցուն .

Եւ մեծահաց 'ի խորանիս խրախճանու-
թիւն տամ նոցուն ։

Ասաց . յարեաւ Այասըն մեծ , յարեաւ
հուժկուն և Տիւղեան ,

Չոքան վայր մի անդ 'ի բացեայ , 'ի զէն 'ի
զարդ վառեցան ։

Եկին 'ի մէջ արձանացան քաջքն 'ի մար-
տից 'ի հրահանդ ,

Աջք ասընկէցք այր ընդ ընկեր . զահի
հարան Աքայեանք ։

Հապա դիմեալ ախոյենից թափ տալ մի-
մեանց սաստկութեան ,

Երիցս գրոհ տան 'ի բացուստ , երիցս 'ի
մօտ տան հորդան ։

Շանթեաց Այաս ընդ կուռ ասպարն ,
այլ ոչ խոցեաց ըզմարմին .

Պահեաց պատեանն . կըչուեաց Դոմեդ վե-
րուստ մեծի վահանին ։

Վըչիւ գործէր մըխել 'ի յուլն ըզգեղար-
դան սայրն 'ի բուն .

Երկեան հելէնք վասն Այասայ և դուռ
առնել ձայն ետուն .

Չայն տան և զոյգ մրցանակաց . բայց ետ
Աքիլ Դոմեդի

Ըզմեծ սուսերն ընդ պերճ փոկոյն և ընդ
իւրում պատենի :

Դարձեալ Աքիլ եդ գունտ խոշոր ,
գունտ անարուեստ էր ինքնին ,
Գունտ ահագին , զոր Ետիոն ձրգէր 'ի
Թափ յալթ բազկին .

Ըզնա Աքիլ ըսպան և առ ըզգունտն ընդ
այլ կարասեաց .

Եկաց ձայնէր , « Արիք հելենք և յայս 'ի
փորձ մրցանաց :

Որ անդաստանս ունի պարարտ նա և 'ի
վայրս բացական ,

'Նա յանդորրու մրցանակաւս լըցցէ զիւր
պէտս ընդ հինգ ամ .

Չի ոչ հովիւն և ոչ մըշակն , երբ պիտեսցի
ինչ երկաթ ,

Գնասցէ առնուլ 'ի քաղաքէն . այս գունտ
նրմա լիցի շատ » :

Ասաց . յարեալ Պողիւպիտէս և Լէոնտոս
կորովին ,

Յարեալ Այաս Տեղամոնեան , 'ի նոյն
Եպոս քաջարին :

Անցին 'ի կարգ . ըզգունտն առեալ շըջա
նակեաց արկ Եպոս ,

հելենք ողջոյն ծիծաղեցան . երկրորդ
ձրգեաց Լէոնտոս :

Երրորդ Այս արկ յաղթ բազկաւն, ան-
ցոյց զամէն ըզնըշան,

Մինչև չորրորդ կալաւ ըզգունան Պողիւ-
սկիսէսն աննըման :

Որպէս ընդ օդ վերոյ անդեայց թըռչի
ձրգեալ ցուպն հովուին,

Այնչափ անցոյց զողջոյն ազոնն . հան-
դիսատեսք գոչեցին .

Բարձին ըզգունտ համհարզք նորա, տա-
րան 'ի նաւս արքայի :

Պարձեալ Աքիլ 'ի փորձ նետից եդ
կուռ երկաթ 'ի միջի .

Եդ և տապարս 'ի թիւ տասնեակ, և
նոյն թըլուլ եդ կացին,

Եւ 'ի բացուստ կայմըն նաւու վարսեաց 'ի
խոր յաւազին :

Անդ զտանէն բարակ լարիւ կապեալ
զքընքուշ աղաւնի,

Չայն ետ նետել հարող թըռչնոյն ողջոյն
զտապարսըն տարցի .

Իսկ որ ըզլարըն հարկանէ և յաղաւնոյ
վրիպեսցէ,

Քանզի խոնարհ երևեցաւ, նա ըզկացին-
սըն առցէ :

Յարեաւ Տեւկրոս և Մերիոն Իգոմե-
նեայն պաշտօնեայ,

Արկեալ վիճակս 'ի սաղաւարտ, ցընցեն
վիճակն եւ Տեւկրեայ :

Նախկին Տեւկրոս ճրգեաց Թափով, այլ
 Փեբոսին ոչ ուխտեաց
 Յազէլ ըզպերճն հարիւրեզնեան նրմա
 զգառանց զանդրանկաց :
 Վրիպեաց Թըռչնոյն, զի Ապողոն խան
 դայր նրմա ըզպայքար,
 Մերձ առ ոտին եհար ըզլարն, որով Թըռ-
 չունն կապեալ կայր :
 Նեո սայրասուր կըտրեալ ըզլար, սլա-
 ցաւ Թըռչունն 'ի յերկին,
 Անդուստե լարն անկաւ յերկիր. Աքայե-
 ցլք ձայն բարձին :
 Ճեպով զաղեղն առ Մերիոն 'ի Տեւկրո-
 սին 'ի ձեռաց,
 Եւ 'ի գըղղուկն յարմարապէս ըզձիգ փը-
 քնոյն ճըզգըրտեաց .
 Ուխտեաց անդէն հարիւրեզնեան քաջ-
 աղեղան Փեբոսի,
 Յազէլ նրմա զանդրանկածին գառանցն
 ըզզոհ սանծալի :
 Բարձր ընդ ամպովք դիտեաց ետես զքըն-
 քուշ դողդոջ զաղաւնին,
 Մինչ դեռ Թըռչունն անդ ճախր առ-
 նոյր, շէշտ ընդ Թեռնիւ հար փըքին,
 Թափ անց անկաւ Մերիոնին վարսեալ
 ոտիցն առաջի,
 Եւ էջ Թըռչունըն վերաւոր նստաւ բար-
 ձուն 'ի կայմի :

Թեքեաց անդ զուլն, պարզեաց ըզթևան,
ոգին թըռեաւ 'ի մարմնոյն,

Անկաւ յերկիր, ետես ամբոխն յապուշ
հարան անդ ողջոյն :

Տասըն տապարս առ Մերիոն, Տեւկրոս
զկացինս մրցանակ :

Բայց Աքիլէս եդ յագոնին և ահագին
մեծ նիզակ .

Եւ զսան անհուր ծաղկաքանդակ, եզն էր
արժէքն, եդ 'ի մէջ,

Յարեան անգէն արբ արդնընկէցբ, յա-
րեաւ արբայն Ատրիդէս :

Յարեաւ 'ի նոյն և Մերիոն . Աքիլէ ե-
կաց ձայն կարդաց .

« Գիտեմք, Ատրիդ, վեհ ես բնաւից յոյժն
և 'ի ձիգ նիզակաց .

Դու տար անձին զայդ մրցանակ, Մե-
րիոնին տամք նիզակ .

Եթէ և քեզ այդ կամք իցեն, յոր և ես
տամ յորդորակ » :

Անսաց Ատրիդ . Մերիոնին ետ ըզնիզակ
պղղընձին ,

Տանել ըզսանըն հոյակասս ետ Տալթիւ-
բեայ Քարոզին :

ԵՂՒԼԱԿԱՆ

ՀԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԻԳ.

ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ

Աքիլէս վայրենհանայ 'ի դիակն Հեկտորի: Ապողոն յատենի աստուածոց բռնոք բառնայ ընդդէմ խժական գործոյն: Արամազդ յանձն առնէ Թեոխայ սպասուիրել Աքիլէայ դարձուցանել զՀեկտոր և առնուլ զփրկանան: Պրիամոս ազդեալ 'ի սատգամաց Արամազդայ, ուղևորի հանդերձ փրկանօքն 'ի վրան Աքիլէայ առաջնորդութեամբ Հերմեսի, փրկանաւորել զմարմին Հեկտորայ: Հետաքնին խօսակցութիւն Հերմեսի և Պրիամոս 'ի ճանապարհին: Տեսարան աղեկէզ Պրիամոս ողորբաւորի անկելոյ առ ոտս Աքիլէայ: Ողբալի աղերս ծերունի արքային: Լալիք Աքիլէայ և Պրիամոս: Հիւրընկալութիւն Աքիլէայ: Դարձուցանէ առ հայրն զմարմին որդւոյն: Պրիամոս նովաւ հանդերձ դառնայ յԵղիոն: Ողբ Տրոյացւոց և Անգրոմաքեայ և Հեկաբեայ 'ի վերայ Հեկտորի: Դիահանք և Թաղումն Հեկտորի:

Ի վերջին Հագներդութեանս զվերջն ճիգն Թափէ Հոմեր յողբերգակ մասին, յորում Թուի՝ կորդել Հոմերի 'ի ձեռաց բնութեան զգրիչ գորովաղէտ կրիցն:

Տեսարանն է կէս մի յԵղիոն և կէս մի 'ի վրանին Աքիլէայ:



ԵՂԻՆԿԱՆ

Հ Ա Գ Ն Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Ի Գ .

Լ ՈՒԾԱԻ ագոնն , և ժողովուրդք այր
այր 'ի նաւս սրբուեցան ,
Ընթրիս կահէն և սփոփութիւն խնդրէն
'ի քուն քաղցրութեան :

ԱՂԼ յուշ Աքիւլ զընկերն ածեալ , լայր
և չառնոյր անոյշ քուն ,

Աստ անդ դառնայր և Պատրոկղէայ անձ
կայր արւոյն քաջաբուն :

Քանի 'նդ նրմա գործեաց նախճիրս , զոր
քիրտն և մարտ մրցանաց ,

Ալիս զոր հատ , յիշէր ողջոյն , առուք
գնային արտասուաց :

Ե զի 'ի կողմն , է զի 'ի շէպ , է զի դառ-
նայր 'ի յորսայս ,

Յանկարծ կանգնէր , առ ծովափամբ գը-
նայր թափառ տրրամազգեաց 133 :

Այն ինչ ըզծայրս այգն արձակէր ընդ
ծով , ցամաք , լուսաւոր ,

Լըծեալ ըզձիս յետուստ կառաց կապէր
'ի քարշ ըզհեկտոր :

Երիցս 'ի շուրջ տանէր 'ի քարշ առ Պատ-
րոկղեան դամբանի ,

Մըտեալ 'ի վրանն և ըզգիական յորսայս
թողոյր 'ի փոշի :

Բայց անտրխեղծ սահէր Փեբոս , խնայ-
եալ քաջի մեռելոյն

Յասպար ոսկի ծածկէր ողջիկ զի մի
եղծցի նա 'ի բուն :

Լյապէս Աբիլ գըձձէր զԵկտոր , առ
տուածք 'ի գութ արծարծին .

Կորզէլ զմարմին խրախոյս կարգան ան-
քուն լրտես հերմեսին :

Ողջ հաճեցան , բայց ոչ հերա ոչ Պո-
սիգոն ոչ ծաւին

Վէհ Օրիորդն , որք ցանգ ընդդէմ Ե-
ղիոնի ոխային :

Յասնուն Տրոյեանց և Պրիամուն առ 'ի
գըձձանս Պարխայ ,

Որով գըձձեաց նա զգիցուհիսն եկեալս
'ի հիւղն նորա .

Յարգեաց ըզկինն , որ զնա 'ի սէր 'ի մա-
հաբեր թակարթեաց 134 .

Ոխան այնպէս , մինչև ուրեմն երկոտա-
սան այդ ծագեաց :

Յայնժամ Փեբոս ձայն ետ յանմահս ,
« Անգուլթք աստուածք փնասաբեր ,
Հեկտոր ինքնին ձեզ թամբ զեզանց և
զողջ այծից ո՞չ յազէր .

Եւ արդ մեռեալ , ո՞չ գորովք թափել
ըզնա ողջանգամ ,

Տեսցէ զնա կին , մայրն և որդին , հայ-
րըն Պրիամ և խուժան :

Այլ գուք ըզմիտս հաճէք , աստուածք ,
Աքիլլէսի վերագին ,

Ոյր չիք բընաւ ոչ գուլթ յաղիս ոչ միտք
ամոք 'ի սրտին :

Որպէս առիւծ վայրագասուն գրդեալ
յուժոյն դըժընդակ ,

Սէգ յարձակի 'ի հօտ խաշին գտանել
անձին ըզճարակ ,

Այսպէս ըզգուլթ այսպէս զամօթ ելիք
ողջոյն Աքիլլէս ,

Անթ , որ զմարդ տանջէ խըղձիւն և շահ
բերէ մեծապէս 135 :

Կորոյս դք զիւրն ըզնազելին կամ զհա-
մածին զիւր եղբայր

Եւ կամ զորդի , լայ և ողբայ և տայ սը-
գոյն իւր դագար .

Քանզի հոգի համբերատար եդ բընու-
թիւնն 'ի մարդիկ .

Իսկ դա 'ի մահ վարեալ զԵկտոր , և ոչ
դըլայ սակաւիկ :

Կասեալ 'ի կառս քարչէ ըզնա առ սիրայ-
նոյն դամբանաւ ,

Գործ դըժպըհի . այդ չէ նըմա ոչ պիտեան
և ոչ լաւ :

Դա թէպէտ քաջ , ըզգոյշ լիցի , մի սըրտ-
նեսցուք մէք ընդ նա ,

Որ մոլեգին գըձձէ այնչափ ըզհողն ան-
բան անըզայ " :

« 1 Լիցի այնպէս , ո՛ր Քաջաղեղն , Հերայն
կրկնեաց զայրագին ,

Լիցի այնպէս , թէ զուգաչափ Աքիւլ
'ւ Եեկտոր շուք տանին .

Հեկտոր այր է մահկանացու զըստինս
գիեաց մահացուի .

Ճետ Աքիւլէս է գիցուհւոյ զոր ես
սնուցի և տածի .

Ետու ըզնա Պեղէոսի որ սիրեցաւն յան-
մահից ,

Եւ ողջ աստուածքդ եկիք յայնժամ 'ի
հարսանիսն հացակից .

Եկիր և դու քո քընարաւդ , ընկեր չա-
րեաց դաւաճան " .

« Հեր , մի կագեր , կարճեաց Գիոս , շուքն
երկոցուն չէ նըման :

Բայց և Հեկտոր 'ի Տրոյացիս էր աստուա
ծոց սիրելի

Եւ ինձ յաւէտ , զի ձօնս խընճոյս ցանգ
պատրաստէր իմ բազնի .

Նըւէր ճենճեր ոչ պակասեաց . այս է
մեր շուք գերափառ .

Այլ թէ զԵկտոր մէք թափեսցուք, գաղտ
յԱքիլէայ չէք հընար :

Մայրըն գէտ կայ ըղցայգ ցերեկ . թէ ոք
զԹեախս ինձ կոչէ ,

Ես ամոքեմ զի Աքիլէս 'ի Պրիամէն ձօն
առցէ .

Առցէ սիրով և ըզՀեկտոր հօրըն տացէ 'ի
նըւէր » .

Ասաց Արքայն, հողմոտն Հիրիկ յարեալ
գընալ 'ի բանբեր :

Յուզի անկաւ հա ընդ Սամոս և ընդ Իմ
բրոս առապար ,

Էջ թափ 'ի ջուրսըն կապուտակ , ծովն
ալէտանջ մըռընչայր .

Սուզաւ իբրև գունտ կապարեայ կա
պեալ յեղջիւրըն ցըլուն ,

Որ իջանէ մահ գիշակեր ածեալ ձրկանց
երամոյն :

Գիտ ըզԹեախս յանձաւ 'ի խոր , շուրջ
գիցուհիք կան ծովուն ,

Նա 'ի միջի ջայլէր ողբայր զօրհաս քաջազն
իւր որդւոյն ,

Ում մահ մընայր 'ի Տրոյիա հեռի յիւրոց
հայրենեաց :

Կաց նրմա մտ . « Արի թետիս , հողմոսն
հիրիկ ձայն կարգաց ,

Կոչէ ըզքեզ Դիոս գըտակն անապական
խորհրդոց » .

« Ինձ զինչ արդեօք , կրկնեաց թետիս ,
հրամայէ հայրն աստուածոց :

Խառնեւ յանմահս ամօթ է ինձ , զի
կամ 'ի սուգ անպայման .

Բայց և գընամ , զի զոր ասէն , անշուշտ
չիցէ ընդունայն » :

Լարկ քօղ թուի քան զոր երբէք չէր
ինքն առեալ թըխագոյն .

Յարեաւ գընալ . արագն հիրիկ յառաջ
ընթաց էր ուղւոյն :

Ճովըն բացաւ , ելին 'ի յափն . անդուստ
սլացան 'ի յերկին .

Գըտին զԴիոս , խըմբեալ յաւերժ սարք
երջանկաց շուրջ կային :

Թետիս Դիայն մերձ բազմեցաւ , Պալլաս
նրմա տեղի ետ .

Անդուստ հերա բաժակ ոսկի 'ի ձեռս
նորա առ և եզ :

Սփոփէր ըզնա . էարք թետիս , դարձոյց
զըսկին շնորհօք լի .

« Եկիր , թետիս , ձայն ետ Դիոս , եկիր
յաւովքդ 'ի սրտի :

Եւ ես ինքնին գիտեմ քաջիկ , հարեալ
ես դու կարեվեր .

Այլ արդ ասեմ ոյր աղագաւ ես կար-
դացի քեզ հրաւեր :

Վէ՛գ իննօրեայ յուզի յանմահս վասն
հեկտորայ դիական ,

ՅԱքիլեասէն թափել ըննա արթուն հեր-
մեայ ձայն կարգան :

Այլ ես նրմա շուք տամ և քեզ յաւերժ
պահեմ զիմ ըզսեր .

Փուլթա ինքնին դու 'ի բանակն , և զայս
որդւոյդ տուր պատուեր :

Դից ըզցասուամն և զիմն յաւէտ 'ի նա
յուզեալ , դու պատմեա .

Ձի դա վայրագ գըձձեալ զԵկտոր ունի
առ իւր և ոչ տայ :

Անշուշտ Աքիլ ահեալ յինէն , անդէն
զԵկտոր տայ ուջիկ .

Բայց ես յըլեմ և առ Պրիամ հրեշտակու-
թեամբ ըզհիրիկ :

Գնասցէ 'ի նաւս վասըն որդւոյն ա-
ռեալ վրկանս և ընծայ ,

Փրկանք արդոյք անուշարար սրտի մե-
ծին Աքիլեայ " :

Ի ըլաւ թետիս , յՈղիւմպոսէն սրացաւ
որդւոյն 'ի խորան .

Նա լայր հեծեր . բայց ժիր համհարգք
պատրաստէին ըզսեղան ,

Խոյ յազէին մեծ թաւադէս. նստաւ անդ
մայրն առ որդւոյն ,

Գըգուեաց ձեռք բարբառեցաւ , կար-
դաց նորա և զանուէն :

« Տորվայր , որդեակ , ողբք և լալիք և
սիրտ մաշեալ 'ի կոծոյ .

Ոչ հաց առնուս ոչ քուն առնուս , լաւ են
սպոսանք յանկողնոյ :

Աւաղ , չես ինձ երկայնակեաց . մերձ
կայ օրհասս դըժընդակ .

Այլ ծն , որդեակ , լուր դու սպտոգամ .
քեզ 'ի Դիայ գամ հրեշտակ :

Դիցն է ցասումն յուզեալ 'ի քեզ և
Դիոսին իբրև հուր ,

Ձի դու վայրագ գըձձես զԵկտոր , կալար
առ քեզ և չետուր :

Արդ տուր զմեռեալդ և առ փրկանսս .
կրկնեաց Աքիլ մօր ձայնի ,

« Փրկանաբերն աստ եկեսցէ և ըզմե-
ռեալն տարցի :

Չեմ ես անսաստ բանին Դիայ թէ զայդ
կամի տիրապէսս .

Այսպէս յայնժամ մայրն և որդին զըու-
ցեն նաւացն 'ի հանգէս :

Բայց ըզհրիկ յըզեալ Դիոս , « Փուլթա ,
ասէր , յՈղբամպեայ .

Ե՛րթ յեղինն առ Պրիամոս , հրեշտակու-
թեամբ զայս ասա :

Փրկէլ զորդին գնասցէ 'ի նաւս տարեալ
ընծայս Ա.բիլլեայ

Ամոքեսցէ. գնասցէ միայն, Տրոյեանց ոչ
ոք ընդ նրմա .

Առցէ վարիչ ջորեաց սայլին զայր ոք
Քարող ալևոր ,

Որ ըզմեռեալն ածցէ յոստան , զոր եդ
Ա.բիլլ վերաւոր :

Ոչ ահ ոչ մահ հասցէ նրմա . տամք ու .
հահորդ ըզհերմէս ,

Որ յանդորրու ածցէ ըզնա տարցի մինչև
յԱ.բիլլէս :

Մըտեալ 'ի վրան , ոչ Ա.բիլլէս առցէ ըզ-
սուր 'ւ ոչ որեար .

Չէ նա մոլի ոչ ապիրատ և ոչ մարդ ոք
վայրապար .

Նա քաղցր է յայր ողորաւոր : . լըւաւ
Թըռեաւ շոյտն հիրիկ .

Եհաս հրեշտակ առ Պրիամոս , եգիտ
անդ ջայլ կոծ սաստիկ :

Որդիքն ըզհարբ նստեալք 'ի տան և ար-
տասուօք ձորձ Թանան ,

Եւ ծերունին կայր 'ի միջի շուրջ պատա-
տեալ 'ի խըլայն .

Կոյտ յաղբիւսաց կայր Թաթաւեալ գը-
լուխն և ուլ ծերունւոյն ,

Յոր նա ինքնին Թաւալէլով արկ զայն ձե-
ռօքն իւր ողջոյն :

Դատերք և նուք լային 'ի ներքս, ցաւով
ածեալ յուշ անձանց ,

Քանի՛ քանիք քաջորերոյն տապաստ ան-
կան 'ի Յունաց :

Եկաց հրեշտակն առ Պրիամոս , 'ի գող
հարաւ ծերունին .

Ասէր 'ի ցած , « Քաջ լեր Պրիամ . մի ահ
կաջի քո զոգին .

Չեմ ես գուժկան . հրեշտակ եկի աւե-
տաբեր 'ի Դիայ ,

Որ տարակաց թէպէտ 'ի քէն , քեզ խնամ
ածէ և գըլթայ :

Փրկել զԵկտոր քեզ հրամայէ . տարեալ
ընծայս յԱ. քիլէս

Ամոքեսցես . գնասցես միայն , ընդ քեզ
Տրոյեանց զոք չառցես :

Զորեաց սայլին առցես վարիչ զայր ոք
Քարող ալևոր ,

Որ ըզմեռեալն ածցէ յոստան , զոր հար
Ա. քիլ վերաւոր :

Ոչ մահ ոչ ահ հասցէ ինչ քեզ . ու-
ղւոյդ հորդող է հերմէս ,

Որ յանդորրու ածցէ ըզքեզ տարցի մինչև
յԱ. քիլէս :

Մըտեալ 'ի ներքս , ոչ Ա. քիլէս առցէ
ըզսուր 'ւ ոչ որեար .

Չէ նա մոլի ոչ ապիրատ և չէ նա մարդ
վայրապար :

Քաղցր է նա յայր ողորբաւոր” • ասաց
 Հիրիկ, եւ ՚ի բաց •

Հրաման որդւոց կարդաց Պրիամ կահել
 ըզսայն ըզջորեաց :

Ետ ՚ի վերայ կապել տապան • ինքն յա-
 ռագաստ իջանէր ,

Բուրեան յարկ բարձր ՚ի մայր փայտից
 ուր էր գանձուն իւր մըթեր :

Վարդաց ըզկինն • «Դիայ հրեշտակ հաս
 ինձ ասէր , ողիւմպեան •

Լո՛ւր հիբացեալդ , ես սլատրաստիմ փըր-
 կել զորդիս սիրական :

Գնացեալ ՚ի նաւս , տանիմ ընծայս և ա-
 մոքեմ զԱքիլէս •

Աղէ ասա ինձ , հեկաբէ , զինչ մի անգամ
 դու կարծես •

Ո՛վ, մեծապէս եմ անձկայրեաց , գընալ
 ՚ի զօրն Աքայեանց ” •

Լըւաւ վայեաց անդ հեկաբէ , ՚ի նոյն և
 ճիչ մեծ եբարձ •

« Վայ ինձ , իսկ ո՛ւր սրացան միտքքո ո-
 րով յառաջ շուք առեր ,

Շուք գերափառ և յօտարաց և յորոց
 թագ կապեցեր :

Ի նաւս Յոււնաց գընա՛լ միայն այն վիրա-
 գին առաջի ,

Որ քաջորդիս քեզ շատ ըսպան • ո՛վ, սիրտ
 է քո երկաթի :

Ձի թէ յանկարծ տեսեալ ըզքեզ կալցի
վիրագն այն դըժնեայ ,

Գուժ քեզ ածցէ կամ շուք դիցէ . թող
մէք լացցուք 'ի բացեայ :

Իմ ծընընդոց թեւ մահաձին , ո՛հ , չար
հրամանք նիւթեցին ,

Ձի տարադէմ մարմինքն 'ի շանց առ Ա
քիլէայ գօշեսցին :

Օ՛հ , սինդ կալեալ ըզլէարդ նորա , ես
ուտէի գիշտանս ,

Փառաց որդւոյս լեալ քինահան որ մահ
չէառ ըզվատաց .

Նա հայրենեաց կաց ախոյեան , ոչ վերջ
ոտնէր ոչ փախչէր ” .

Լըւաւ Պրիամ կրրկնեաց առ նա . « Կին
դու մի զիս խափաներ :

Հաւ չարահմայ մի լինիր տանս . 'ի զուր է
քեզ խօսել բան ,

Ձի ոչ աստի որ յերկրածնաց բերէ առ
իս զայս սպտոգամ :

Ձի թէ որ իղձ կամ լերդահմայ կամ
որ քըմաց զայս ասէր ,

Արդեօք իբրև սրտաբանից ոճնչս առնէաք
անվէհեր 136 :

Այլ ես ինքնին ըզՆիցուհւոյն ձայնըն
լըւայ և տեսի ,

Օ՛ն ես առեալ ուղւոյ լինիմ . սպտոգամն
'ի զուր մի լեցի :

Իսկ Թէ ինձ մահ մընայ առ Յոյնս , ա-
ռից և զայն մըտադիւրս .

Հարցէ Աքիլ արտասուաւից զիս գիրկ
ընդ խառն ընդ որդւոյս ” :

Լսաց , զարկեղս եբաց և հան շարքս
չքնաղս երկտասան ,

Երկոտասան սատակ խըլայս , նոյնչափ և
գորգ պատուական :

Բաճկոնս ազնիւս երկոտասան , նոյնչափ
դարձեալ վըտաւակ ,

Հան եդ 'ի դուրս նա և ոսկւոյ կըշիւ տա-
ղանդըս տասնեակ :

Եռոտանիս հրափայլս երկուս , 'ի նոյն
քառեակ և կաթսայ ,

Եւ դաշխուրան յոյժ հրաշակերտ , էր
Թրակացւոց այն ընծայ .

Երբ առ նոսա չոքաւ դեսպան , զայն ձիր
ետուն գերազանց ,

Այլ ոչ և յայն ծերըն խնայէր 'ի սէր որ-
դւոյն փրկանաց :

Եւ 'ի գաւիթ , սաստէր Տրոյեանց . « Գնա-
ցէք 'ի բաց , վատք արանց ,

Չիք ձեր արդեօք կոծ առտընին , զի՛ աստ
խըռնիք դուք 'ի լաց :

Վէր կարեւէր եդ ինձ Դիոս 'ի մահ որ-
դւոյս քաջազին .

Տեսջիք և դուք . չիք արդ հեկտոր , հար-
ցեն ըզձեզ Յոյնք հեշտին :

Այլ ես մինչ չե տեսեալ աջօք համակ 'ի
յողք և 'ի կոծ

Ձայս մեր ոստան այրեացաւեր, իջից 'ի
տուն դժոխոց ։

Լսաց շարժեաց ըզգաւազան, զամբոխն
'ի բաց փարատէր ,

Յըրուխն նորբա . անդ դառնացեալ ծերն և
զորդիս կշտամբէր ։

Ձմեծն Եղենոս և ըզՊարիս և ըզգիւցազն
Ագաթոն ,

Քաջամարտիկն ըզՊողիտէս , զԱնտիփո-
նոսն , ըզՊամմոն ,

ԸզԴեփոբոս և զԻսպոթոս , պերճ՝ զԱ-
գաւոն պատանին ,

Ինունց որդւոց ձայն դառնութեան զայս
արձակեաց ծերունին .

“ Արիք դուք վատք , զի՞ կայք աստէն ,
որդիք առակք , նըշաւակք ,

Ո՛վ , ողջ 'ի մահ մատնեալ էր ձեր իմն
Հեկտորայ փոխանակ ։

Եղո՛ւկ եմ ես . 'ի Տրոյիա որդիս ծընայ
քաջարի ,

Աւա՛ղ որդւոցս իմ այն քաջաց , չէ ոք ու-
րեք 'ի միջի ։

Ո՞ւր իմ Մեստորն այն դիւցատիպ , ո՛ւր
Տրոյվիդոս քաջմարտիկ ,

Ո՞ւր և Հեկտոր , որ նա ինքն էր իբրև
աստուած 'ի մարդիկ ։

Ճետ ոչ թըւէր նա մահացուի , այլ աստուծոյ բովանդակ .

Անկան նոքա , և աստ մնացին այս սինը-բորք նըշաւակք .

Այս դաւաճանք , այս կայթահարք , քաջք 'ի կաքաւ գուսանաց ,

Այս հափափողք աշխարհագոյժք հօտից գառանց և այծեաց :

Ո՞ւմ կայք , ո՞վ վատք , զի՞ դանդաղիք կազմել ըզկահ ըզսայլին ,

Բառնալ գընել զայս ամենայն , զի ես ուղւոյ լինիցիմ " :

Նոքա սաստին հօր ակնածեալք ձրգեն ըզսայլն ըզջորեաց ,

Զարկղ 'ի վերայ կապեն սայլին . սայլ գեղեցիկ նոր գործած :

Լուծն ըզջորեաց զերծուն սեպոց լուծ կըմբաւոր տօսախեայ

Բևեռապինդ , ըզլըծակապն առնուն լըծոլն իննկանգնեայ .

Ամրապընդեալ զայն հաստատեն 'ի քաջակուռն 'ի քեղին

Ի ծայր գլխոյն , և արկանեն օղ 'ի վերայ երիթին 137 .

Ապա երիցս աստի անտի ընդ կումբն առեալ շուրջ կապեն ,

Եւ հանգուցիւ առ 'ի ներքոյ ըզսայրն առնուն պարուրեն :

Բերեալ զընծայն յառագաստէն 'ի
սայլ կուտէն զամենայն .

Ընծայք ամբաւ . են փրկանակ քաջի
գլխոյն Հեկտորեան :

Ի լուծ ձրգէն սալասըմբակ զոյգըս ջո-
րեաց սայլաձիգ ,

Ձոր Պրիամուն երբեմն ետուն ձիր հոյ-
ակապ Միւսացիք :

Ածեն 'ի լուծ անդ և զամուլս ըզնրժու-
գաց Պրիամեան ,

Ձորս բուծանէր ինք ծերունին 'ի մա-
քրափայլն ասպաստան :

Այլ ըզնրժոյգան 'ի լուծ ձրգէր հան-
դէպ բարձու տաճարին

Ինքնին Պրիամ և ծեր Քարոզն , լուռք
մրտախոհք երկոքին :

Պինի անոյշ յաջոյ ձեռին առ թախծա-
գին Հեկաբէ ,

Յոսկի բաժակ մատուցանէր զի նուէր
հանեալ չու առցէ :

Կաց առ ձիովք , « Ա՛ռ նըւիրեա Արա-
մազգայ , ձայն կարդաց ,

Աղոթս արա , զի ողջանգամ դարձցիս յա-
րանց թշնամեաց :

Վառեալ ես դու գընալ 'ի նաւս ինձ յա-
կամայս . այլ տուր ձայն ,

Ձայն աղոթից առ Ձևս Իգեան , որ Տրոյ-
իոյ է պաշտպան :

Չարագն ըզհաւ սիրունն 'ի հաւս մաղ
 Թեա հրեշտակ քեզ աջեան ,
 Գնասցես առ Յոյնս տեսեալ ինքնին զայն
 քաջահաւն ապաստան :

Թէ Ամպրոպեան զայն իւր հրեշտակ քեզ
 ուղեկից ոչ տացէ ,

Ես ցանգ խոչ կամ չըւոյդ առ Յոյնս ,
 Թէպէտ սիրտ քո վառեալ է :

Արրկնեաց դիւցազըն Պրիամոս . « Բաջ է
 խորհուրդդ , ո՛վ կին դու ,

Լաւ է յերկինս ձեռս ամբառնալ ողորջա-
 ւոր 'ի Ժամու » :

Չայնեաց ըզկինն ըզտնակալուչ , ձեռացն
 յըստակ ջուր խնդրէր .

Մատեաւ առ նա , կալեալ ըզկոնքն և ջուր
 ձեռացն արկանէր :

Լուացեալ այնպէս կաց 'ի գաւթին , առ
 ըզբաժակ զամուսնոյն ,

Մաղթեաց յերկին վերակնելով ձօն նը-
 լիրէր ըզգինւոյն .

« Արամաղդ հայր , դու գերափառ , դու
 մեծազօր պետ Իդայ ,

Տուր ինձ զայն քաջն համբոյր գործել ,
 սիրուն լինել Աքիլէայ :

Չարագ քո ըզհաւ սիրունն 'ի հաւս յըլեա
 հրեշտակ ինձ աջեան ,

Գնացից առ Յոյնս տեսեալ ինքնին զայն
 քաջահաւն ապաստան » :

Մաղթեաց և Ձևս յըղեաց անդէն գե-
 րակատարն ըզթրուչուն ,
 Ըզթուխ արծուին , որսորդ քաջիկ , ում
 և խայտթուխ տան անուռն 138 .
 Որչափ է դուռն առնն ճոխի բարձր և ա-
 մուր տաճարին ,
 Այնչափ և ձիգ աստի անտի թևքնն թրու-
 չնոյն հոլանին .
 Թրուիչք նորա թևակոխեն 'ի քաղաքին
 կոյս աջեակ ,
 Եւ 'ի տեսիլ յայն խընդացեալք զըւար-
 թացան հասարակ :
 Ընդէն 'ի կառս ել ծերունին ճեպեալ
 զիւր ոտն յոտանէ ,
 Վարեաց արտաքս 'ի նախադրանց յար-
 ձագանգողն 'ի գաւթէ :
 Ձրգեն ջորիք սայլ քառանիւ վարեալք
 'ի քաջ Իդոսէն ,
 Ըզհետ նրժոյգք գանեալք ընդ շէնն 'ի
 ծերունի արքայէն :
 Որպէս 'ի մահ ուղևորել ըզհետ ողբան
 սիրելիք ,
 Մինչ ալևորքն 'ի քաղաքէն իջին 'ի դաշտ
 բացաձիգ :
 Դառնան յայնժամ 'ի յԵղիօն որդիք , փե-
 սայք թախճագին .
 Բայց մենացեալքն յանքուն աչացն Արա-
 մազդայ ոչ ծածկին :

Ետես 'ի դաշտ ըզմենաւորս , գըթայր 'ի
ծեր նա յարքայն

Եւ առ Հերմէս արգոյ որդին ձայն ար-
ձակեաց արքունեան .

“ Արի , Հերմէս , զի յոյժ անձկաս լինել
մարդկան դու ընկեր ,

Եւ որ ըզքեզ կարդան , լըսես , երթ ա՛ծ
ըզծերդ անվէհեր ,

Անտես յայլոց և անծանօթ , մինչև հաս-
ցէ յԱքիլէս ” .

Լըւաւ , անսաց մեծ նըւիրակն արգոսա-
սպանըն Հերմէս :

Կապեաց չքնաղ յոտսըն կօշիկս ոսկիս ,
անեղծ , օդապար ,

Որովք ընդ ծով , 'դ երկիր անչափ սրա-
նայ 'ի թևս հողմավար 139 .

Առ ըզբարսմո՛ւնս , որով ըստ կամս ածէ
աչաց նա թըմբիր ,

Նոյն արթնու՛թիւն թըմբրեցելոց . թը-
ուեաւ նոքօք ժիրաժիր :

Ի Տրոյիա և յԵլէսպոնոս հասեալ առ
զտիս արքունի

Ըզպատանւոյ ծաղկամօրուս ըզնորհա-
շուք պատկերի :

Յեղեայ դամբանն հասեալ նոքա դուլ
տան ձիոց և ջորեաց ,

Ջուր 'ի գետոյն արբուցանեն , և անդ զեր-
կիր մու՛թ պատեաց :

Ի հանդիպոյ գալ և մօտել ետես Քարոզն
ըզհերմէս .

« Միտ դիր, արքայ, ասէր առ ծերն, աստ
հանճարոյ պէտք են մեզ :

Մարդ տեսանեմ, չարի դիպաք, կամ
ձիարշաւք փախիցուք

Կամ թէ զծրնգովք փարեալ նորա ողո-
քաւորք մաղթեսցուք » :

Լըւաւ զայս ծերն, և այլ յայլմէ յահէն
եկաց յափշութեան,

Եւ ՚ի յանդամարն խրուուացեալ հերք ծե-
րունւոյն լարեցան :

Ընդէն հասեալ կաց առ ընթեր օգտա-
մատոյցն հերմէս,

Զաջոյ ծերոյն կալաւ, եհարց ՚ի քաջա-
լեր մեծապէս :

« Ընդ մուծ գիշեր, զոյգ ըզգրաստուցդ
ո՛ւր ես ուղղեալ դու, ո՛վ հայր .

Այլք ՚ի քուն կան . դու ՚ի քաջացդ Ա-
քայեցւոց ո՛չ երկեար :

Մերձ ոխերիմ կան թշնամիք . թէ զքեզ
տեսցեն ծերունի,

Որ գանձ այնչափ ընդ մուծ դաշտիդ բար-
ձեալ տանիս, զն՛նչ լիցի :

Չես դու առոյգ . ծեր է ընկերդ, ՚ի
թշնամւոյն ոչ թափէ .

Յինէն չիք ահ, այլ և ըզքեզ փրկեմ ՚ի
քոյն վերագէ :

Չար քեզ չառնեմ, ունիմ ըզքեզ իբրև
ըզհայր սիրելի 140 » .

Լըւաւ Պրիամ, հանդարտեցաւ և ան-
դրադարձ էտ ձայնի .

« Լիցի 'ստ բանիդ, որդեակ սիրուն. ան-
շուշտ հաս ինձ յօգն աստուած ,
Որ բարեշուք ինձ ուղեկից ըզքեզ եհան
ընդ առաջ .

Դու շնորհաշուք յիրան, 'ի դէմս և 'ի մը-
տացդ 'ի հանդէս ,

Դու և ծնողաց ճետ երջանկաց » . Լըւաւ
կրկնեաց ձայն հերմէս .

« Քաջ ասացեր, ո՛վ ծերունիդ, այլ
դու ճըշգրիտ ինձ ճառեաց ,

Դու յազգ օտար յապահովել յըղէս թե-
րևս զայդչափ գանձ :

Կամ զԵղիոն լըքիք ողջոյն ահաբեկեալք
նըշաւակք ,

Զի ախոյեանն ընդդէմ Յունաց անկաւ-
քո քաջն այն զաւակ » :

« Իսկ ո՛վ էս դու, ո՛ սիրելի, ծերուն կըր-
կնեալ հիանայր .

Յո՛յց ծընողաց . զի զհէգ որդւոյս այդ-
պէս շըքով խօսեցար » :

« Փորձես զիս ծեր, կըրկնեաց հերմէս,
հարցանելով զԵկտորէ ,

Զնորա նախճիրս շատ 'ի մարտի իմ իսկ
աջօք տեսեալ է :

Երբ առ նաւուք հար նա ըզՅոյնս , մեք
անդ յակճիւռս կայաք ,

Զի մարտ զլանայր մեզ Աքիլէս , ընդ Ա
տրիդէս լեալ վայրագ :

Ես Միւրմիդոն զինուոր նորա 'ի մի 'ի
նաւ ծովաչու ,

Է Պողիւկտոր հայրն իմ փարթամ և հին
աւուրց որպէս դու :

Վեցեակ յորդիս եմ եօթներորդ , և ել
վիճակ գալ ինձ աստ .

Եւ արդ ելի ես 'ի նաւուց և գալտ լրտես
գամ 'ի դաշտ :

Այգուն զոստան Յոյնք պատեսցեն . կալ
անկրուիք տաղտկանան ,

Եւ ըզնոցա սանձել զոգիս չեն զօրավարք
բաւական » :

« Թէ արդարև , կրկնեաց Պրիամ , զի
նուոր ես դու Աքիլէայ ,

Աղէ արդ դու , ո՛ր բարեկամ , ըզճըշմարիտն
ինձ ասա .

Կայ իմ որդեակըն տակաւին նաւատոր
մին 'ի հանդէս ,

Եթէ յօշեալ ըզնա իւր շանց արկ կերա
կուր Աքիլէս » :

« Ըզնա , ո՛վ ծեր , ձայն ետ հերմէս ,
ոչ շունք ոչ հաւք գօշեցին ,

Այլ առ նաւուն կայ Աքիլէայ , ան
կեալ անշուք 'ի վրանին :

Երկոտասան այգ ծագեցաւ, մարմին դու-
րա ոչ նեխի .

Չուտեն որդուներն ոյց կուր մարմինքն
են անկեւոցն 'ի մարտի :

Ըզնա ընդ այգս անգուծ քարչէ առ
դամբանաւ մըտերմին ,

Բայց եղծանել չէ բաւական . տեսցես
հիասցիս դու ինքնին ,

Զիարդ առոյգ և ցողալից , ջինջ յապա-
ժոյժ յարենէն

Կայ անտրխեղծ ողջոյն մարմնովն , և վերքն
'ի բուն սերտեալք են .

Շատ սուսերաց նա վերս էառ . այսչափ
անմահքն հոգ կալան

Քում զաւակին դիակնացեալ , զի էր նո-
ցա պատուական) :

Խնդաց յոյժ ծերն , ասէր , « Որդեակ ,
լաւ է ձօնել երջանկաց ,

Զի և որդիս երբէք 'ի կեանս ոչ մոռա-
ցաւ զՈղիւմպեանս .

Ոչ մոռացան ըզնա աստուածք և 'ի մա-
հուն իւր վիճակ .

Բայց դու զարդիս ընկալ յինէն ըզգե-
ղեցիկ զայս բաժակ .

Պահեա առ քեզ ' և ինձ աստուծով մինչ
յԱքիլէս ձեռնն տուր) .

« Զիս պատանիս , կրկնեաց հերմէս ,
փորձես , ո՛վ ծեր , բայց 'ի զուր :

Ես կամ պատկառ . դադտ յԱքիլլէայ
 չառնում երբէք ինչ ընծայս ,
 Չառնում և յանձն ինչ մի խորեւ , զի մի
 չարի դիպեցայց :

Ես մըտագիւր քեզ և յԱրդոս ուղի հոր
 դեմ նաւագնաց ,

Կամ թէ հետի . ոչ մեղիցէ քեզ մարդ քե-
 ղեալ զիս յընչաց :

Լսաց , 'ի կառս վազեալ էառ նա ըզ-
 մըտրակ , զերասան ,

Եւ նըժուգաց , նա և ջորեաց ոյժ մի
 շնչեաց աննըման :

Հասին նաւաց 'ի բուրգս , 'ի խրամ . պա-
 րեկքն 'ի սպաս կան ընթրեաց .

Անդ նըւիրակն հերմէս սատար եհեղ նո-
 ցայն քուն աչաց :

Եբաց ըզդուրս և առ ըզնիգս , մոյծ ըզ-
 Պրիամ ընդ սայլին

Հանդերձ ձօնիւքն , մինչ յԱքիլլէայ ե-
 կին 'ի վրան դիւցազին :

Յարկ բարձրայարկ , զոր մայր փայտիւք
 կանգնեալ Միւրմիդք արքային

Խիտ ըզձեղունն պըրտուովք դաշտին կը-
 նիւնազարդ կազմեցին .

Կայր մեծ գաւիթ շուրջանակի 'ի շեր-
 տափակս ամրութեան ,

Պահանգ դըրան հեծան մայր փայտ կայր
 ահագին մի միայն .

Արանց երից փակել բանալ պէտք էն
առ այն դռնափակ ,

Բայց Աքիլէս զայն յաղթ հեծան բառ
նայր դռնէր միայնակ :

Յայնժամ ըզդուրսն հանդէպ ծերոյն
բաց մարդասէրն այն հերմէս ,

Եւ մոյծ 'ի ներքս զԱքիլէսին ձօնս հոյա
կապս ըզպէսպէս :

Էջ 'ի կառացն , ասէր , « Ո՛վ ծեր , ես
ինքն անմահ եմ աստուած .

Ես եմ հերմէս . զիս քեզ հայրն իմ ու
ղւոյդ հորդիչ առաքեաց :

Արդ ես դառնամ . մի Աքիլէայ երևե
ցայց առաջի .

Ըսպաս այնչափ տալ մահացուաց ան
ճահ է դիցն անմահի :

Դու մո՛ւտ , ըզծուենգս ան զԱքիլէայ .
յուշ ան ըզհայրն և ըզմայր ,

Յուշ ան զորդին . յողոք անկիր և ա
մոքես հեշտաբար » :

Ասաց , յՈղիւմս թրուեալ հերմէս . էջ
Պրիամոս 'ի կառաց .

Եթող զԻդոս անդ պահապան կալ նը
ժուգաց և ջորեաց :

Մուտ ծերն 'ի ներքս . նստէր Աքիլ ,
ընկերքն 'ի զատ նստէին .

Երկուք միայն մեծն Ատոմեդ և Աղկե
մոս քաջարին

Կան 'ի սպասուռ . վերջ էր ընթրեաց ,
սեղանն դեռ կայր յանդիման .

Անտես նոցուն մուտ Պրիամոս , էառ ըզ-
ծունգս Աքիլէան :

Փարեալ այնպէս ողորբաւոր և զաջն էառ
մարդախանձ

Զաջն ահաւոր , որ որբացոյց ըզնա 'ի
չառ զաւակաց :

Զորորինակ այր հեքացեալ յերկրի իւ-
րում պարտ արեան

Ի շտապ տագնապ և ահաբեկ փախչի յօ-
տար 'ի սահման ,

Յանկարծ մըտեալ առ այր մի ճոխ , տե-
սողք հիանան մեծապէս ,

Նոյն ըզՊրիամ տեսեալ այնպէս յապուշ
հարաւ Աքիլէս :

Նա և որեարն անդ այլ յայլմէ յերեսս
հային 'ի միմեանց .

Ողորբաւորըն Պրիամոս փարեալ այնպէս
ձայն կարգաց .

Վրէ յուշ անձ , դիւցազն Աքիլլ , յուշ
ըզքոյ հայրդ 'ւ անձ ինձ դուժ .

Ինձ համատեք է հայրդ արգոյ հասեալ
'ի դառն ալևոյժ :

Թերևս զարդիս նա շուրջ պատեալ 'ի
մերձաւոր թշնամեաց ,

Զունի անձին զոք զօրավիգ վանեւ զա-
ղէան և հարուած .

Այլ լուր առեալ քո զողջութեան , ծե-
րըն խնդայ 'ի յոգին

Եւ ցանգ յուսայ 'ի տես որդւոյն 'ի Տրոյ-
իոյ 'ի դարձին :

Այլ ինձ եղո՛ւկ , որ յԵղիոն հայր էի
քաջ զաւակաց .

Մընաց ոչ ոք . յիսունք կային յարշաւա-
նին Աքայեանց :

Ինն և տասունքն արգանդակիցք , ըզկէսս
ծընան այլ կանայք .

Աւա՛ղ , նոցուն շատից ըզծունդս կըթոյց
Արէսն այն վայրագ :

Մընաց ինձ մին հեկտոր արին , բնաւից
պաշտպան գերազանց ,

Զոր դու այն ինչ տապաստ արկեր , ըզ-
նահատակն հայրենեաց :

Ըզնա գամ ես փրկել 'ի քէն , ամբաւ ա-
ծեալքեզ ընծայ .

Անն աստուածոց անձ , Աքիլէս , յուշ
բէր ըզհայրդ , յիս գըթան :

Վըշտատես եմ , որչափ ոչ ոք 'ի յերկրա-
ծին մահացուս ,

Զի զաջ մարդոյն զորդեկոտոր հըպէցու-
ցի յիմ շըրթունս " :

Ըսաց , և հօրն յիշատակաւ 'ի լալ զար-
թոյց և յաշխար .

Լայր Աքիլէս . ձեռամբն 'ի բաց ըզծերն
առնէր սիրաբար :

Լային երկուքն . ծերն յիշատակ բերեալ
որդւոյն հեկտորայ

Լայր դառնապէս անկեալ այնպէս հան-
դէս ոտիցն Ա. քիլեայ .

Անդուստ 'ւ Ա. քիլ ողբայր ըզհայրն , ող-
բայր և զիւր Պատրոկղէս ,

հեծիւնք լալճնք ընդ յարկն ողջոյն անդ
գանգեցին մեծապէս :

Իբրև շատ ինչ լացեալ Ա. քիլ հանդար-
տեցաւ 'ի յոգին ,

Վազեալ անդէն 'ի յաթոռոյն կանգ-
նեաց ձեռամբ զծերունին .

Ի գուժ հարաւ ալեաց գլխոյն և ալե-
զարդ ծընօտի ,

Դիւցազն յոգին արգահատեալ ձայն
արձակեաց գրգալի .

“ Ընչուշտ դու շատ , ո՛վ ծերունիդ , ե-
ղեր յոգիդ վշտութեր .

Զի ա՛րդ դու աստ գալ յերևան հանդէս
մարդոյ ժուժեցեր ,

Այն որ քո շատ և քաջ որդիս շահատա-
կեալ 'ի մարտի

Արկ դիտապաստ . բա՛բէ ծերոյդ սիրտ է
ուրեմն երկաթի :

Բազմեաց յաթոռ . թէպէտ ցաւեալք ,
հանցուք ըզցաւն 'ի սրտէ ,

Զի և երբէք կանացածնաց կոծ դառ-
նուժեան ոչ օգնէ :

Այսպէս աստուածք կենցաղ ցաւոց
 ետուն մարդկան դատակնիք .

Մէք վշտալիցք , նոքա անվիշտ կեանքս
 վարեն երջանիկ :

Քանզի մեծին Արամազդայ հանդէպ սե-
 մոց և դրանդեաց ,

Թակոյկք կրկին զետեղեալ կան թա-
 կոյկք չարեաց և բարեաց ¹⁴¹ :

Հանեալ անտի տայ Ամպրոպեանն ու-
 մեմըն խառն անխրտիր ,

Եւ նա յայնժամ մերթ տըւայտի մերթ
 կեանս վարէ դրգալիր :

Իսկ ում անխառն տայ 'ի չարեաց , նա
 սովատանջ է 'ւ անկած ,

Շըրջի թափառ և շուք նրմա դընէ ոչ
 մարդ ոչ աստուած :

Այսպէս Պեղեայ 'ի ծնընդենէն տըւան
 'ի դից ձիրք բարեաց ,

Վերոյ բնաւից ճոխ երջանիկ Միւրմի-
 դոնեանց թագ կապեաց :

Թէպէտ և ինքն այր մահացու , էառ ըզ-
 կին դիցանոյշ ,

Համայն աստուած պարզեատուն չարի
 ըզնա դիպեցոյց .

Զի ոչ ծընաւ նրմա 'ի տան ժառանգ
 թագի ոք զաւակ ,

Այլ մի միայն , որ տարաժամ է նա մա-
 հու նըշաւակ :

Հոգ ոչ բաւեմ ածել ծերոյն ես տա-
րադէմ հայրենեաց ,

Ի Տրոյիա եմ պատուհաս քեզ և քոյին
զաւակաց :

Եւ զքեզ երբեմն , երջանիկ ծեր , լըւաք
ժառանգ ճոխութեան ,

Որ յԵլլեսպոնտ , 'ի Փռիւզիա , 'ի Մակա-
րին դահ Լեսբեան :

Ասէն ծաղկեալ ըզծերունիդ գանձուք
որդւովք բարգաւաճ ,

Մինչև ըզքեզ դիքն երկնաւորք պաշա-
րեցին յայս հարուած :

Եւ յայնմ հետէ 'ի մարտ արեանց տագ-
նապեցաւ քո ոստան .

Այլ դու ժուժեա , մի դու զոգիդ մի
կրտսեսցես յաւիտեան :

Զի քեզ լալիք վասըն որդւոյդ չածեն
ինչ չահ գեղեցիկ .

Մինչ չև ըզնա քո յարուցեալ , կանուխ
հասցեն այլ չարիք " :

Մի ինձ , ո՛վ քաջ , բազմոց մի տար ,
կրրկնեաց անդրէն ծերունին ,

Յորվայր հեկտոր անթաղ անկեալ կայ
անդանօր 'ի վրանին :

Լուծեալ ըզնա , ցոյց ինձ և առ ձօնիցս
իմոց ըզհանդէս .

Փուլթա , դիւցազն , և յիմ ընծայս շատ
վայելեալ ցնծասցես :

Դու և աստի ողջամբ դարձեալ յերկիր
հասցես հայրենի ,

Զի այժմ ըզկեանս իմ շնորհեցեր , լոյս
տեսանել զարփենի ” :

Խեթիւ ընդ նա կրրկնեաց Աքիւլ . “ Մի
զիս գրրգուեր , ծերունիդ ,

Իմ իսկ անշուշտ հաստատեալ է դար-
ձուցանել քեզ զորդիդ :

Հրեշտակ Գիայ հաս ինձ մայրն իմ դուս-
տրս ծերոյն ալէտանջ ,

Եւ զքեզ քաջիկ գիտեմ , Պրիամ , ոմն
յաստուածոց առ մեզ ած .

Ժլտէր ոչ ոք և 'ի քաջաց մըխել 'ի մերն
'ի բանակ .

Եւ ոչ ծածկէր 'ի սլարեկաց . ոչ հեշտ
բանայր դրունափակ :

Մի զիս ուրեմն , ո՛վ ծերունիդ , մի թա-
խանձեր տարածամ .

Մի վարեցից զողոքաւորդ , լըքեալ Գիայն
ըզպատգամ ” :

Լըւաւ , պատկառ կաց ծերունին զահի
հարեալ 'ի սաստէն .

Եւ Աքիւլէս իբրև առիւծ , վազեաց ար-
տաքս 'ի տանէն :

Ատոմեդոն և Աղկիմոս ելին ընկերքն
ընդ նրմա ,

Ոյց առաւել շուք հարկանէր յետ օր-
հասին Պատրոկղեայ :

Երկուք սոքա լուծին ըզձիս, լուծին ըզ-
զոյդ ըզճորւոց,

Զֆարող ծերոյն մուծին 'ի ներքս, ե-
տուն նրմա ըզբազմոց:

Առին սայլէն զանբաւ փրկանսն արգոյ
գլխոյն Հեկտորեան,

Թողին երկուս անդ վերարկուս և քաջ
անկեալ պատմուճան.

Որովք զԵկտոր 'ի ճահ պատեալ տացէ
'ի տուն իւր տանել.

Հրաման ապա տայր աղախնեայց, լուս-
նալ ըզնա և օծել:

Այլ 'ի բացէ, զի մի Պրիամ 'ի տես որ-
դւոյն սրբանեսցի,

Սրբանեալ 'ւ Աքիլլ հարցէ ըզծերն ընդ
դէմ Դիայն պատգամի:

Լուացեալ իւղեալ արկին զնովաւ ձորձ
պատմուճանն ըզքնաղ,

Ինքնին Աքիլլ առեալ եբարձ, հանդոյց
ըզնա 'ի դադաղ:

Բարձեալ ապա ընդ որերոյն ած եդ
սայլն 'ի վերայ,

Յոգւոց հանեալ ձայն արձակէր իւր սի-
րայնոյն Պատրոկղեայ.

«Ինձ, Պատրոկղէ, մի ցասնուցուս, 'ի դը-
ժոխոց թէ լըսես

Եթէ զԵկտոր փրկեալ դիւցազն, հօրըն
սիրուն ետու ես:

Փրկանս ամբաւ ետ ծերունին . բաժին
պայծառ քեզ հանեմ ,

Խայրիք հոգւոյս » . ասաց Աքիլէ և 'ի խո-
րան մուտ անդրէն :

Նստաւ 'ի պերճ գահն որմնայեց հան-
դէպ ծերոյն և ասէր .

« Ահա որդիդ , ո՛վ Պրիամէ , զոր դու
յինէն ժտեցեր

Կայ 'ի մահճի . զորդիդ ընդ այդ տեսցես ,
սիրտ քո հանգիցէ .

Օ՛ն հաց առցուք , զի հաց էառ և վշտա-
տես Նիոբէ .

Այն հիբացեալն վարսագեղ որդիս կո-
րոյս երկտասան ,

Դըստերըս վեց ուստերըս վեց , առոյգք
զաւակք հրաշաղան .

Զուստերսն եհար մեծն Ապողոն 'ի լայ-
նալիճ աղեղան ,

Զդըստերս նետողն Արտեմիս , զի ընդ
Նիոբ սըրանեցան :

Քանզի 'ի վէգ յարեաւ Նիոբ ընդ գե-
ղաւոր Ղետովին ,

Պանծայր թէ նա երկուս ծընաւ , իսկ
ինքն եղև բազմածին :

Այ հիբացեալ , երկուք նոքա տասպաստ
արկին ողջ զորդիս .

Ինն օր այնպէս անկեալ կային ընդ ա-
պաժոյժ ընդ փոշիս :

- Թաղեաց ոչ ոք, քանզի զմարդիկն 'ի
 քար դարձոյց Արամազդ,
 Յօր աասներորդ աստուածք թաղեն
 զանկեալսն այնպէս դիտապատ:
 Արդ 'ի լալեաց հիւծեալ Նիոբն, համայն
 այնպէս առ ըզհաց,
 Եւ 'ի լերինս արդ յամայիս կայ շուրջ
 պատեալ 'ի դերբկաց.
 Անդ 'ի Սիպիւղ, ուր գոլ ասեն զՅա-
 ւերժհարսանց բնակուծիւն,
 Որք առ գետովն Աքեղովնեայ կաքաւ
 հարուն և կայծիւն.
 Թէպէտ քար է, լայ և դիւրէ աստուա-
 ծասատ իւր ցաւոց 142.
 Աղէ և մէք, ո՛վ ծեր դիւցազն, ընթրիս
 առցուք յայս բազմոց:
 Լացցես ապա դու յԵղիոն. դա ցանդ լի-
 ցի ցօղ աչաց ».
 Լսաց Աքիլ և յարուցեալ օդի սպի-
 տակ փողոտեաց:
 Մորթեն համհարզք քաջ հանդերձեալ
 մանրախորտիկ յօրինեն.
 Հարուն շամիուրս, քաջ խորովեալ
 բառնան 'ի դուրս ողջ քարչեն.
 Պերճ սակառեօք 'ի սեղանի հաց բաժա-
 նէր Աւտամեդ,
 Ըզմիսն Աքիլ 'ի բաշխ հանէր և ընթ-
 րէին հետ ընդ հետ:

Ընթրեալք այնպէս, մեծն Պրիամ զըն-
 ներ զԱ.քիլ Տիանայր,
 Քանի՛օն պերճ քանի՛ աւագ, իբր յա-
 տուածոց էր տխար:
 Ըզնոյն ընդ մեծն ընդ Պրիամոս Տիա-
 ցեալ Ա.քիլ էր ողջոյն,
 Չըննեալ զարդոյն ըզկերպարան, լըւեալ
 զխօսել ծերունւոյն:
 Իբրև այնպէս յագին միմեամբք, ձայն ետ
 Պրիամ առաջին.
 «Տուր ինձ, դիւցազն, այժմէն արագ
 քուն քաղցր առնուլ ՚ի մահճին:
 Չի նինջ չետու արտեանանց և ոչ մի
 ինչ քուն աչաց,
 Յօրէ յորմէ որդիս տապաստ անկաւ ՚ի
 քոց ՚ի ձեռաց:
 Ինձ ցանգ հեծիւնք և ՚ի դաւթիս ինձ
 ընդ աղբիւս թաւալումն.
 Հաց այժմ առի ես վշտահարս և ըզ-
 վայելս ըզգինւոյն:
 Չի ցարդ չէր իմ գինի առեալ, և ոչ
 եմ ես կերեալ հաց».
 Լըւաւ Ա.քիլ և համհարզից և աղախ-
 նեոյց ձայն կարգաց.
 Մահիճ դընել անդ ՚ի դաւթին, կըտաւ
 ածել ծիրանի,
 Չըգեւ և գորգս և թաւ խըլայս ծած-
 կոյթ մարմնոյն ՚ի մահճի:

Յարեան փուլթուլ, ճըրագ 'ի ձեռն ար-
կին կրկին անկողին,

Մատեաւ Աքիլ և ահ ընդ ահ ասէր
ցարքայն ծերունին.

«Այնչ աստ 'ի դուրս առ, ծեր սիրուն.
Յունաց աւագքն առ իս գան,

Յիմուժ վրանի ըստ օրինաց խորհուրդ-
խորհին յարաժամ:

Մի՛ զքեզ տեսեալ գուշակ լիցին Ագա-
մեմոնն արքային,

Եւ խոջընդակն ինչ գիպեսցի արձակե-
լոյ զաւակին:

Այլ ինձ ճըչգրիտ ասա, աւուրս քանի՞
խընդրես դու թաղման.

Յայնուայր և ես դագար տըւեալ և սան-
ձեցից ըզխուժանն »:

«Եթէ խնդրես, զ' 'ի գլուխ հանից ըզ-
գիահանան հեկտորին,

Կրկնեաց Պրիամ, ինձ, Աքիլէս, շընորհս
առնես առանձին:

Կուտեղ ըզփայտ, հեռի կայ լեառն. և
պաշարեալ կամք ահա.

Տրոյեանք յահի. մէք լալ ունիմք զԵկտոր
'ի տունս իննօրեայ:

Ի տասներորդն առնեմք թաղումն և հայ
տացուք խուժանին.

Ի մետասանն հողադամբան տաց ես ի-
մուժ զաւակին.

Յերկոտասանն 'ի կռիւ ելցուք եթէ եր-
բէք հարկ լիցի ” :

“ Քաջ է , ով ծեր , կրկնեաց Աքիւլ ,
իլձ քոց կամաց յանգեսցի .

Այնչափ առուրս ըստ քոց կամաց և ես
դուլ տաց բանակին ” .

Ասաց ետ զաջն յաջն ծերոյն , յան-
դորր եհան ըզհոգին :

Անդ 'ի գաւթի անդորրամիտ ծերն և
Քարողն հանգչէր ,

Աքիւլ 'ի ներքս 'ի խորանին և Բրիսա-
նոյն առ ընթեր :

Ողջն ըլցայգն աստուածք և զօրք քուն
քաղցրութեան առնուին ,

Այլ մարգասէրն Հերմէս աննինջ խոր-
հուրդ յուզէր 'ի յոգին ,

Զխորդ թափել զարքայն Պրիամ գաղտ
'ի յանքուն սարեկաց .

Արձանացաւ վերոյ գլխոյն , ձայն ծե-
րունւոյն արձակեաց .

“ Դու ծերունիդ , անդորր ոգւով ննջես
'ի մէջ թշնամեաց .

Աքիւլ դարձոյց , դու շատ ետուր քում
զաւակին 'ի փրկանս :

Երեցս այդչափ տացեն որդիքդ քեզ կեն-
դանւոյդ փոխանակ ,

Թէ Աորիդեայ և Աքայեանց լիցի ըզքէն
ոք գուշակ ” :

- Ծերն ահաբեկ զարթոյց զընկերն . և
լուծ Հերմէս ետ գրաստուլց ,
Արագ ընդ զօրն ուղի հատեալ . անցին
անտես 'ի նոցունց :
- Երբ 'ի յորձանան եկին նոքա Քսանթեայ
գետոյն գեղահոս ,
Անդէն Հերմէս թող ըզնոսա , թըռեալ
'ի վեր յՈղիւմիոս :
- Քըրքմահանգերձ այդ տարածէր լոյս
համասփիւռ յաշխարհին ,
Նոքա հեծմամբ վարեալք յոստանն , ջո-
րիք ձրգեն ըզմարմին :
- Ոչ ոք ըզգաց ոչ 'ի յարանց ոչ գեղա-
շուք կանանւոյն .
- Մին կասսանդրէ ոսկեղնիկըն Ասողը-
կան կին հանգոյն :
- Ի Պերգամէն զըննեալ ծանեալ 'ի կառս
ըզհայր ծերունին .
- Ծանեալ զԻգոսն , որ սայլ վարէր հան-
դերձ մարմնովն 'ի մահճին :
- Չայն արձակէր ճիչ բարձրաձայն ընդ
քաղաքին սողոտայս :
- « Ահա Հեկտոր , արիք տեսէք , դասք
տրոյուհեաց և տրոյեանց .
Չոր 'ի մարտէն ողջամբ դարձեալ ժողո-
վէիք խնդագին ,
Չի էր խընծղանք նա ոստանին , հըր-
ձուանք ողջոյն խուժանին » :

Ասաց և կոծ գրաւեաց զոստանն, ոչ
 այր մընաց և ոչ կին,
 Վազէն 'ի գուրս խուռն ընդ առաջ դիա-
 հանաց հանդիսին:
 Նախ ամուսինըն նազելի և մայրն ար-
 գոյ հեկաբէն,
 Վազեալք 'ի սայլն և ճիչ բարձեալ, ա-
 ռեալ ըզվարսրս փետեն:
 Տան թալացեալ գլխոյն համբոյր և շուրջ
 ամբոխն արտասուէր.
 Եւ 'ի նոյն կոծ յարանային մինչ յարե-
 լուն մըտանել.
 Անդ զօրն ողջոյն լային անշուշտ հան-
 դէս գըրաց քաղաքին,
 Թէ 'ի կառաց նոցա անդէն ձայն չարձա-
 կէր ծերունին:
 «Օն անդր 'ի բաց, տո՛ւք անց գրաս-
 տուց, մինչև ածեմ ես 'ի տուն.
 Լացէք ապա». լըւան խըռնեալքն և
 անց սայլին տան ուղւոյն:
 Մ ուծեալ 'ի պերճ 'ի յարքունիս, անդ
 'ի մահիճս ծակոտկէն
 Հանգուցանեն. և ձայնատուս ողբերգո-
 ղաց շուրջ կարգեն:
 Երգ զըզձական սըրտմահաղսրգ յոգւոց
 հանեալ երգէին,
 Անդուստ ջայլից եղերամարք արձագան-
 գեալ ձայն տային:

Լինդրոմաքէ ձկնածըղին ըսկիզբն առ-
 նէր մեծ կոծոյն,
 Եւ գերկ ընդ խառն ըզհեկտորայ քա-
 ջին ունէր ըզգլսոյն .
 «Քեզ քաջառոյգ շիջաւ արևդ, 'ի տան
 Թողեր զիս այրի,
 Արդ զոր ծընաք մեք հիքացեալքս, ման
 կիկս այս մեր զի՛նչ լիցի .
 Անշուշտ յարբունս դա ոչ հասցէ . նախ
 քանդեսցի Եղիոն .
 Զի քաջդ անկար որ քաղաքիդ տայիր
 զարևդ առ 'ի ձօն :
 Դու ըզմանկտին պահպանէիր և զծըն-
 դասէր կանանին ,
 Արդ քարշեսցին նոքա 'ի նաւս և ընդ
 նոսա ես ինքնին :
 Իսկ դու , մանկիկս , կամ մօրս ընդ խ
 վարեալ տարցիս 'ի գերի ,
 Եւ քեզ անձահ ըսպաս հարցես դու չա-
 րաշուք իշխանի ,
 Կամ Թէ յոյն ոք յաշտարակէ զքեզ հո-
 սեսցէ զայրագին ,
 Դառն մահու մատնեալ ըզքեզ 'ի վրէժ
 արեանց հեկտորին ,
 Որ կամ զեղբայրն ըսպան նորա և կամ
 ըզհայր և զորդի ,
 Զի և շատ Յոյնք 'ի քոյն հօրէ տապաստ
 անկան 'ի մարտի .

Զի էր իսկ քաջ հայր քո ահեղ յա-
 րեանց մարտին 'ի սլայքար ,
 Որով զարդիս և ժողովուրդք սուգ մեծ
 առնուն և աշխար :
 Իսկ դու ծնողաց , խնրս հեկտոր , կոծ
 առթեցեր անպայման .
 Այլ զիս յաւէտ 'ի մահ քաջիդ ցաւով
 լըցեր դառնութեան :
 Ինձ դու ոչ ձեռն 'ի քում մահուան կար-
 կառեցեր 'ի մահձէ ,
 Եւ ոչ բան մի ինձ հանձարեղ թողեր
 բրնեալ 'ի սրբոէ ,
 Զի զցայդ ցերեկ արտասուէի 'ի յիշա-
 տակ քո բանին » .
 Ասէր և լայր . դասք կանանւոյն ողբա-
 կցելով կականին :
 Գերաշխարան և հեկաբէ ձայնէր ,
 « հեկտոր վեհագոյն
 Սիրուն յորդիս , դու և 'ի կեանս սի-
 րուն և դից երամոյն ,
 Որք և մահուդ պաշտպան կացին . զի զայլս
 յորդւոց իմոց պար
 Քաջն Աքիլէս զորս ըմբռնէր , հանէր
 կըզգեաց 'ի վաճառ .
 Տարեալ յԽմբրոս և 'ի Սամոս և յանմա-
 տոյցն 'ի Լեմնէ ,
 Մինչև ըզքոյդ քաղեաց զոգին 'ի սայ-
 րասուր սըլաքէ :

Առ դամբանաւ իւր սիրայնոյն քարշեաց
ըզքեղ նա շատ յոյժ

Իւր Պատրոկղեայն, զոր դու սպաներ.
այլ ոչ այնպէս և յարոյց :

Արդ դու, որդեակ, իբրև ըզմարդ կաս
ինձ առոյգ ցողալից,

Զոր քաջաղեղն հարցէ Փեբոս 'ի հեշտ-
ընկալ իւր նետից 143 ր :

Ըսաց լալեօք, կոծ մեծ զարթոյց. ող-
բաց երրորդ հեղինէ.

« Բնաւից տագերց վեհ դու, հեկտոր,
սիրուն 'ի սերտ 'ի սրտէ.

Զխորդ չարաւ Աղեքսանդրի ես հարսն
եղէ անբախտիկ,

Որ զիս եբեր 'ի Տրոյիա. ո՛վ, թէ մեռեալ
էր կանխիկ :

Ամբ են քրսան զի աստ եկի զերկիր թո-
ղեալ հայրենի,

Եւ ոչ բան մի լըւայ 'ի քէն բան դառն
և կամ դըժպըհի :

Այլ թէ ոք տագր և տալ կամ ոք 'ի
նաղելեաց կըշտամբէր,

Եւ կամ սկեսուր, զի ըսկեսրայրս ինձ իբ-
րև հայր հեշտի էր,

Գու աղդարար սանձ դընէիր քոյ հե-
ղութեամբ հեշտ բանիւք.

Վասն այն ես լամ ըզքեղ և զիս, ինձ 'ի
խորոց գան հեծիւնք :

Չիք ինձ աստէն ոք մարդասէր . եմ ես
բնաւից նըշաւակ ” :

Ասէր ողբայր . խուժանն անբաւ կոծ
ջայլէին հասարակ :

Չայն ետ Պրիամ . “ Ածէք, Տրոյեանք ,
արդ փայտ յոստանն ’ի խարոյկ ,

Մի ինչ խիթայք յԱրդոսացւոցն ’ի դա-
րանէ ինչ ծածուկ :

Չիս Աքիլլէս ’ի յուղարկելն , ինձ բան
կընքեաց անաղօտ .

Անդորր է մեզ , մինչ ծագեացէ երկոտա-
սանն առաւօտ ” :

Ասաց . լըծեն եզինս ջորիս խըռնեալք
հանդէս ոստանին .

Չոքան , հատին ամբաւ մայրիս և փայ-
տակոյտ շեղջեցին :

Ի տասներորդն երբ համասփիռ վաղ քաջ
այգուն լոյս ծագեաց ,

Խըմբեալք յարտօսը ’ի դիահանս բարձին
զԵկտոր քաջ արանց :

Բարձր ’ի խարոյկն հանին ըզնա և հուր
արկին ըզնովաւ ,

Մինչ արշալոյսըն վարդամատն առաւօ-
տուն ծագեցաւ :

Համախըմբեալք նախ ըզհրայրեացս ’ի
սեաւ գինի շիջուցին ,

Մաքրեալ այնպէս զողջոյն խարոյկն , եղ-
բարքն հանդէս արարին .

Եկին 'ի մի ընդ ընկերաց , սպիտակ զոս-
կերսըն քաղեն

Քաղեն ցաւեալք • այտք թանային ջերմ
յարտասուլաց վըտակէն :

Աւեալք զոսկերսն ամփոփեցին անդ 'ի
սափոր 'ի յոսկի ,

Եւ քողազարդ նոցա ծածկոյթ տան շար
քընքուշ ծիրանի :

Վայրիջուցեալ եղին յանքոյթ 'ի փոս
խորեալ դարանին ,

Եւ 'ի վերուստ հոծ կուռ վիմօք սալայա-
տակ գործեցին :

Ապա շիրիմ կանգնեն արագ և անդ պա-
րեկք 'ի շուրջ գան ,

Զի մի կանխեալ դէպք ինչ դըժուար
տացին Յունաց յարձակման :


Կուտեալք ապա զշիրմաւ քաջին և յա-
րուցեալ առնեն դարձ ,

Եւ կարգ առեալ գան միագունդ խընջոյս
առնուն մեծահաց

Ի յարքունիսըն հոյակապ Պրիամոսին
տաճարի ,

Եւ պըսակեն ըզշուք թաղման քաջամար-
տիկն Հեկտորի :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆԿ



ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Ձեռնիք, Ἰππομολγός. Ազգ Սկիւթացւոց, որոց կերակուր էր կաթն ձիոյ: Այլ քննիչք 'ի կարծիս հերձեալ են վասն այսց տողիցս Հոմերի: Որ եդաւն, հասարակացն է: Յիշէ և Փիլոն 'ի Տեսակ. զՀոմերին զայս տողս. Մի-սաց-ոց. Ձեռնիք, կաթնահերաց: Բայց աստ Հոմեր ըստ Պոսիդոնիոսի և ըստ Ստրաբոնի իմանայ զՄիւսացիս եւրոպեանս բնակեալս 'ի Թրակիա:

2. Ակնարկէ յԱգամեմնոն արքայ, որ զրկեացն զԱքիլէս:

3. Նմանաբերութիւնս մի է 'ի գերահրաշից Եղիականին, որում նմանողք ճգնեցան լինել քերթողք: Որպէս Վիրգիլ յԵնէակ. ԺԲ. և 'ի Վիրգիլիոսէ Թասսոյ: Եւ երկոքին, ասէ Փոփ, քան զսկզբնագիրն յանչափս խոնարհագոյնք են: Իսկ Հոմերին բառ առ բառ յարձակն է այսպիսի.

“ Չորորինակ սատակմամբ հոլովեալ (վէմն) առ 'ի ժայռէն, (կամ բոլորչութեամբ հոլովեալ, քանզի կրկնանիշ է բարդեալ բառն Հոմերի Ὀλοσίτροχος),

Զոր 'ի ծայրէն գետ ձմեռնահոսան
դրդեալ փրթուցանէ,

Հերձանելով անպայման անձրևով
զհաստապնդութիւն ժայռին,

Եւ վերամբարձ (վէմն) ոստոստմամբ
իջանելով թռչի, և շառաչիւն հանէ հա-
րեալ 'ի ներքոյ նորա

Անտառն . իսկ նա հզօրեղապէս արա-
գի հետզհետէ, մինչև հասցէ

Ի հարթագաշան, և յայնժամ ոչ ևս
թաւալգլորի, թէպէտ և սարսեալ .

Այսպէս Հեկտոր . . . » :

Իսկ Փոփին ոտանաւոր թարգմանու-
թիւն բառ առ բառ յարձակն է այս,

« Որպէս 'ի միոյ լերին սեպացեալ
գլխոյ հատեալ

Բոլորչի հատուած ժայռի թաւալի ե-
րագութեամբ,

Զոր 'ի խիստ ապառաժէ հերձանէ
հեղեղ .

Գահավիժեալ ծանրակշիւ զանգուա-
ծըն իջանէ,

Վախից 'ի վախս թաւալ կործանմամբ
ոստնու ,

Եւ յամենայն հարուած ճարճատող
անտառն հնչէ .

Հետզհետէ ոյժ առեալ երագէ զըն-
թացսն, և մղեալ սաստկութեամբ

Հողովի, յարձակի, որոտայ, ճեպեալ
'ի վայր 'ի գաշան

Անդ զկայ առնու . այսպէս և Հեկ-
տոր . . . » :

4. Արհա-Իր+ անձնաւորին 'ի Քերթողէն իբրև զաւակ Արեսի, կամ մարտի: Իսկ Եփեմեան+ և Փլեգաշի+, Ժողովուրդք կրկին 'ի Թեսսաղիա սահմանակիցք յար 'ի պատերազմել կային ընդ միմեանս: Արդ Արէս խաղայ ընդ զաւակին իւրոյ Արհաւրաց, և Իգումենէս արին ալէխառն արքայ ընդ Մերիոնի քաջի նի զակակցին:

5. Տրոփել սրտին տայ ճօճիլ մսեալ տիգին 'ի նմա 'ի ծայրն: Կէսք քերթողաբանեալ ասէն զայս ճօճանս, և կէսք, որպէս և Փոփ, ըստ զննութեան անգամազըննաց ոյժ զարմանալի ընծայեն տրոփման սրտի:

6. Վասն զի պատգամ, աւանդէն, առեալ Պրիամու վասն հանդերձելոյ արքայութեանն Ենէասայ 'ի վերայ Տրոյալցոց:

7. Քանզի որպէս պատմէն Սիմոնիգէս և Իբիկոս, եթէ երկոքին սոքա էին նախանձորդք միմեանց և տարփածուք հեղինեայ:

8. Այս Փիլիպոշի+ չէին Ժողովուրդ Աքիլէայ, այլ Պրոտեսիզայոսի և Փիլոկտետայ, որ ունէին գաւառ 'ի մասին Թեսսաղիոյ:

9. Սոսկապէս Այրն ասելով Հոմեր, առաւել ևս մեծացուցանէ զգիւցազն իւր, քան եթէ պարզապէս ասէր Աքիլէս: Եւ զի և 'ի կոչմանէ անգամ անուանահարեկեալ ցուցցէ զՏրոյացիան:

Իսկ բարոյականնն Հոմերի՛ի Երգու-
թեան ունի զառաճս .

Թէպէտ և զօրութեամբ վեհ քան զա-
մենեսեան որ իցէ, անսալ պարտի իմաստ
նոց . 53 :

Իմաստութիւն փրկիչ է քաղաքաց , և
զայս նա միայն գիտէ որ զայն ունի . 54 :

Պարտ է յօժարամիտ լինել ՚ի լուր
խրատու . 53 . 55 :

10 . Որպէս բազում ուրեք , նոյնպէս և
աստ Գեղեցիկս հրահանգէ Հոմեր , դա-
տապարտ առնելով զսխտ ռիսակալ բար-
կութեան իբրև մահաբեր ազգի և աշ-
խարհակործան , և որ բարձեալ զխելո՛
մոլեգին գործէ զմարդ և անկարեկիր իբ-
րու զԱքիլէս յայնժամ :

11 . ԶՈՒՒՄՆՆՆ , աստուածոցն և այլ
ուր ևս՝ ամենայն իսկ իրաց ծնող ասել
Հոմերի , զայն ասէ , եթէ ՚ի խաւարային
սկզբնածին անդնդոց անտի , զոր Χάος
կոչէն Յոյնք , սկիզբն էառ լինելութիւն
գոյից :

12 . Գեղեցիկս հրահանգէ Հոմեր
տողիւքս ՚ի զգուշութիւն և ՚ի ժուժկա-
լութիւն նա և զկարի իմաստունս ՚ի մարդ-
կանէ և զյանձնապատանս :

13 . Ի Լեմնոս գտանէ զՔունն . Թերևս
զի առաւել քնէածք լեալ իցեն Լեմնա-
ցիք , որպէս ասեն . և քերթուածովս պար-
սէ զնոսա Հոմեր : Որպէս ամենայն , նոյն-
պէս և Քունն անձնաւորի ՚ի քերթո-
ղէն :

14 Առնուի պարգևելով Քնոյն, զայն յայտ առնէ Հոմեր, եթէ քունն հանգըստարան է մարդկան ոչ միայն խոնջեւոցն մարմնով, այլ և տագնապելոցն 'ի խորհրդոց և մանաւանդ 'ի կրից թախծութեան. ուստի և բազում ուրեք Հոմեր զքունն կոչէ Անուշարար սրտի :

15. Գիշեր, ակնածելի նմին իսկ Արամազդայ. զի Գիշեր և Քառս, որ այն ինքն է ըստ Գրոյն՝ Խասար 'ի Վերայ անդրոց, սկզբնածինք են նա և ըստ դիցաբանութեան Յունաց. վասն որոյ և կոչէ, Մայրն ասպոսածոց և մարդիան : Եւ բազում ուրեք ունի Հոմեր զառածս, « Գիշերոյն պարտ է հնազանդել » . ուստի և զԳիշերն կոչէ ասպոսածեան, փերունի, ևն :

16. Պատիւն կոչի մին յերկից կամ 'ի չորից անտի քերց, զոր Յունաց քերթողք կոչեն Χάρτες, Շնորհք :

17. Վասն զի անմեղադոյն և անտիական հասակն առաւել հպատակ է քնոյն : Եւ 'ի կարևոր քնոյ, որպէս զուարթանան միտք, նոյնպէս և աչք. այն է զոր ասէ, 'ի Շնորհաց փարեւին :

18. Տիպան, որդէք Երկրի. ապտամբեալք յԱրամազդայ վարեցան յանդունդս, որ և Տարտարոս : Եւ է այս ըստ քննչաց ստուերագրութիւն առ հեթանոսս ապտամբութեան բերլարայ և արբանեկացն 'ի ճմարտէն Աստուծոյ :

19. Թուչուն գիշերային 'ի չափ մեծութեան բազէի և համակ սեաւ. վասն

որոյ Հոմեր զտիպ սորա տայ Քնոյն : Տէս
և 'ի Հատոր Ա . Ծան . 6 :

20 . Որպէս այլուր բազում անգամ,
նոյնպէս և առաւել աստ և 'ի յետագայսն
առակէ Հոմեր զգիցապաշտութիւն . նա և
զԱրամազդ ինքնին գլխովին նշաւակէ ոչ
միայն իբրև անարժան ամենեւին 'ի պաշ-
տօն առնուլ, այլ և իբրև մարդ բոլորո-
վին սղծասէր և ախտալից . ըստ որում
և մարտիրոսք յերեսս հարկանէին զի-
ցապաշտից 'ի բանիցն Հոմերոսի :

21 . Զճնութիւնսն Արամազդայ 'ի յե-
տագայսն մի առ մի խայտառակէ Հոմեր :

22 . Դի-ձի-սոս, այն է Բաքոսն, աս-
տուած գինւոյ . և զի գինի ուրախ առ-
նէ, բերկրարար որդի կոչէ զնա Հոմեր :

23 . Նա և զամուսինսն ինքնին հրահան-
գէ Հոմեր ամօթխածս և պարկեշտս լի-
նել 'ի նմին իսկ 'ի պաշտաման իւրեանց :

24 . Իսկ ըստ այլաբանական ճմար-
տութեան՝ որպէս ճշգրտեն մեկնիչք Հո-
մերի, Եթեր կամ հուր, այս է՝ Դիոս,
զուգեալ ընդ Հերայ, այն է՝ օդ, և 'ի
խառնութեան սոցա ըստ կարգաւորու-
թեան արարչին՝ բուսանին յերկրէ ամե-
նայն բոյսք և կենդանածնին :

25 . Զի ճոխք և մեծատունք յորա-
ցեալք 'ի փափկութեան առաւելապէս
հպատակին քնոյ . ուստի և առ նոսա ըն-
թացուցանէ Հոմեր զբունն :

26 . Զի 'ի տագնապ պատերազմին ճեպ-
ընթաց կարասցէ լինել վատն փոքու բե-

ուամբն . և ընդ հակառակն արին յաղթ
ասպարաւն զօրավիդ տացէ մարտին , և
միանգամայն հովանի լիցի վատացելոցն :

27 . Ծով դիզանայ 'ի մարտիս , ըստ
Եւստատեայ , իբրև մարտակից աստու-
ծոյն իւրոյ Պոսիդոնի , որ զօրավարէր 'ի
մարտին յայնմիկ . միանգամայն և տարա-
պայման ահեղագոչ ալեօքն զարհուրե-
ցուցանելով զլծչնամիս նորա :

28 . Հէրմէս , հրեշտակ և նուիրակ Ա
րամազդայ , աստուած 'ի վերայ հօտից և
ստացուածոց մարդկան և ինամածու նո-
ցա . ուստի և Հոմեր 'ի քերթածս իւր
կոչէ զնա Մարգասէր , Բարեբարոյ ,
Տնակալուչ , Օգտամատոյց . և զհանդէս
մարգասիրութեան նորա ողջոյն 'ի ներ-
քըս բերէ 'ի վերջին հագն . հրեշտակ ու-
ղեկից բարի տալով զնա ծերունւոյն
Պրիամու 'ի դժուարին ճանապարհին :

Իսկ բարոյականն 'ի ԺԴ . հագն . բո-
վանդակի յառածս .

Պարտ է անսալ քաջ խորհրդոյ , եթէ
ծերոյ իցէ և եթէ պատանւոյ . 72 :

Արչափ և հանճարեղ ոք իցէ , երկնչել
պարտի 'ի հրապուրից ցանկութեան . 79 :

29 . Դարձեալ հեգնաբանէ Հոմեր և
ծիծաղելիս առագրէ զգիս :

30 . Ընդ հերակլէս որդի Արամազ-
դայ ըստ դիցաբանից խեթացեալ Հերայ
'ի ծովագնաց ճանապարհորդութեան
նորա , սաստիկ մրրկաւ հալածեաց զնա
մինչև 'ի կղզին Յունաց անուանեալ Կոլ :

31. Ի Խորհրդոյն Ամենասայ ասելով
 Հոմեր ակնարկէ զՏնարիմաց ճարտա-
 րուծիւնն Աթենասայ, որով թելագիր
 եղև նա իւրոցն Յունաց ՚ի շինուծիւն ա-
 հագին փայտակերտ երիվարին, որով
 թակարդեալ ըմբռնեցաւ Եղիոն և յա-
 տակեցաւ

32. Սքանչացեալ է հանճարն Հոմե-
 րի ՚ի գիւտս նմանուծեանց. որպէս և
 աստանօր ՚ի ցոյց սաստիկ արագուծեան
 ՚ի մէջ այլոց բազմաց ընտրել նորա զխոր-
 հուրդ մտաց մարդոյ, քան զոր առաւել
 արագածև թուի թէ չիք գտանել ՚ի բը-
 նուծեան:

33. Θέμις. է ինքնին Արդարուծիւն
 և իրաւունք. վասն որոյ և շուք առնու-
 առաւել քան զայլն և գահերէց բազ-
 մի: Հրահանգ գեղեցիկ է Հոմերի գի-
 տեալ առ թագաւորս և առ ամենայն ա-
 ռաջնորդս, իբրև նախապատիւ քան զա-
 մենայն առաքինուծիւնս ՚ի գործ վարել
 զայն, զի արդարուծեամբ հաստատի ա-
 թոռ նոցա:

34. Հակիրճ այս ատենաբանուծիւն
 Հերայ հրաշակերտ է ՚ի գրգռողական
 արուեստին: Եւ այսպէս որպէս կնքեն
 քննիչք՝ Հոմերոս վարժապետ է նա և
 ճարտարասուծեան ըստ ամենայն ձևոց
 հուետորականին:

35. Ան և Հոյն, որպէս և այլուր նը-
 շանակեցաք, անձնաւորեալ ՚ի քերթո-
 ղէն են արբանեակք Արեսի ահեղին. և

վսեմախօսու թեամբ նոցա ձայն տայ ուղի
հորդել անձին և լծել զկառսն, փոխան
ասելոյ՝ պատրաստեցաւ Արէս 'ի մարտ:

36. Աթենաս վազէ 'ի գահէն հրա-
հանգել զԱրէս: Ազդ առնէ ուշիմն հո-
մեր եթէ իմաստու թեամբ և բանիւ
պարտ է սանձակոծել զբարկու թիւն,
որ այն ինքն է՝ Անմտու թիւն սուղ: Եւ
թէ 'ի սկզբան անդ պարտ է սանձել
զբորբոքումն, ապա թէ ոչ մահունս
գործէ. այս է վազելն Աթենասայ 'ի
նախադրանցն:

37. Չիարդ համառօտս վճարէ հերա
զայն ինչ, յոր դժկամակեալ բռնադա-
տեցաւ 'ի Գիայ. վասն որոյ և առանձին
ուրեք մեկուսացեալ տայ զպատգամն:

38. Ազգահամար վաղեմի յոյժ, զոր
հոմերոս աւանդէ 'ի նախնեաց անտի:
Իսկ Պղատոն 'ի գիրսն իւր հռչակաւոր
անուանեալ Գորգիա, համարի գտանել
'ի հոմերեան տողս յայսոսիկ՝ 'ի Բաշխ էր-
ւեակ՝ զհամբաւելն իւր Երրեակու թիւն.
զորմէ ապա և Պղատոնեան քրիստոնեայք
պէսպէս մեկնու թիւնս 'ի վեր հանին ըստ
քմաց: Առաւել ևս Արիստոտէլ զվար-
դապետին իւրոյ զհամբաւի եհար զի-
մաստն և հաստատեաց 'ի գիրս յաղագս
Երկնից և Աշխարհի:

39. Հրաշանան քննիչք ընդ ճարտար
և իմաստուն պատասխանի հիրիկ դես-
պանին որ զշուք պահելով զարքային մի-
անգամայն և իմաստնաբանէ, եթէ 'ի-

մասանոց և առաքինեաց է փոխել երբեմն զկարծիս :

40. Չանդրանկութեանն իրաւունս, ասէ Եւստաթէոս, համարէին նախնիք իբրև աստուածային. ուստի և մասնաւոր ոստիկանս կարգէին նմա վրէժխնդիրս պատուոյ երիցութեան անդրանկաց :

41. Տես յՎ. հատ. 'ի վերջն Չ. հագներգութեան. նոյն է և աստ և անդա՛նոր քերականական շարագասութիւնն հոմերի :

42. Բնաւորական է այս անկարծելի դարձուած դիմաց խօսելոյն Հեկտորայ, եռանդուն կրից յայտարար 'ի տագնապել ժամանակին : Հոմերոս ընթանայ միշտ անմեկնելի 'ի բնութենէ : Բայց սակաւ մի 'ի վերոյ յերես 126, 'ի վերջն տողս, Գապան+, ասէ, Գան ընդ Խաւար Գիւշերի : Ունի աստանոր հոմեր բառ մի հետաքնին յատուկ, զոր և այլուր է տեսանել, 'Αμολγός. այն է ժամանակ յորում կթեն զկովս, ելեալ 'ի բայէն 'Αμέλγω, Կթեմ. իբր ասել՝ Կթաժամ. բայց իմանան քննիչք զմութն գիշերոյն :

43. Անզուգական ասեն Եւստաթէոս և Պիդուպէ զայս նմանաբերութիւն իբրև ճշգրտեալ նա և ըստ վայրացն. քանզի և մերձ յաւազուսն կանգնեալ էր պատուարն առ ծովափամբ : Գարձեալ և յանկարծական իմն բացադարձութեամբ առ Ապոլլոն առաւել մտադիր գործէ հոմեր զընթերցողն իւր առ հրաշսն Ապոլլոնի :

Եւ այս է նա և այլուր բազում անգամ
արուեստն Հոմերի :

44. Հոմաճայն գորով ազգումն նշանի
որոտընդոսան Արամազդայ , Տրոյացիք
յիւրեանց կողմն յանկուցեալ զայն քա-
ջալերին :

45. Ըստ տագնապելոյ ժամուն լա-
կոնական և բազմիմաստ և ոգեշարժ յոյժ
է յորդորակն : Զգիտութիւն մարդկային
սրտի տիրապէս ունելով Հոմեր , զակնա-
ծութիւն 'ի մէջ բերէ . զի յոր ինչ ոչ յա-
ջողեցաւ բազում անգամ ոչ սէր ոչ թա-
խանձանք և ոչ ընչաքաղցութիւն՝ այ-
լովքն հանդերձ , ակնածութիւն և պատ-
կառանք և պատիւ անձին քաջացան յայն-
ժամ : Տէս զայս և յԱ . Հատ . 'ի Ե . հագ-
ներգութեան :

46. Նոր իմն պատուար՝ ասէ Եւստա-
թէոս՝ կանգնէ Հոմեր վասն Յունաց առ
'ի նոցուն իսկ զինուց . և թերևս այս ար-
տայայտութիւն Հոմերի սաղրեաց պատ-
գամախօսին Ապոլոնի խորհուրդ տալ Ա-
թենացւոց յարշաւանին Քսերքսեայ ,
ամրանալ 'ի պատուար փայտեայ , այս է՝
'ի նաւատորմն : Զնոյն օրինակ է և վասն
Սպարտացւոց ասելն՝ ունել զպատուար
ոսկրեայ , այս է՝ զզինուորաց մարմինս : Եւ
թէ այս այսպէս է , ասէ , պարտ է ուրեմն
խոստովանել , եթէ ոչ փոքու ինչ պար-
տապան է Հոմերի Ապոլոն ինքնին :

47. Դիւ-յաւառ . Θεσιμαχης, Յաստուա-
ծուստ այրող . իբրև զի յԱրամազդայ

դրդեցաւ Հեկտոր այրել զնաւան: Ապա յետ այսորիկ Դժուհի ասելով ուշիմն Հոմեր զինդիր գիցուհւոյն, նա և զանուանեալ աստուածոցն զբան և զգործ քննէ և դատապարտ առնէ, ընդ գիցուհւոյն և զինդրակատարն զԱրամազդ:

48. Չայս կենդանի նկար Փոփ վեհագոյն դասէ քան զամենայն նկարագիրս Հեկտորի. զի և վերջին է այս հանդիսանալ զիւցազին, մօտ առ դուրս կալով նորա օրհասին՝ի ձեռացն Ա. քիլեայ, որպէս ասէ Հոմեր:

49. Քանզի ընդ կեանս և ընդ մահ նաւաստեացն անջրպետ կայ տախտակն նաւուն, գեղեցիկ է արտայայտութիւն Հոմերեան, որում՝ զհետ չոքան այլ և այլ քերթողք. և ըստ քննչացն ոչ կարացին ժամանել ՚ի պարզ և ՚ի վսեմական համառօտաբանութիւնն:

50. Յարդ Հեկտոր կռուէր ընդ մէջ պատուարին և ընդ մէջ առաջին կարգի նաւացն, զոր քարշեալ էին Յոյնք ՚ի ցամաք բացագոյնս ՚ի ծովէ. իսկ այժմ՝ վանեալ սոքա ՚ի նմանէ ասպակինին յերկրորդ կարգն նաւաց, որ մերձաւորք ևս էին ՚ի ծովն:

51. Ի վերջին տագնապ ժամուն չիք առաւել քան զայս յորդորակ Հոմերի, ասեն քննիչք, որչափ հակիրճ այնչափ և ազգոյ:

52. Այլաբանութիւն է Քերթողին. փոխանակ ասելոյ, եթէ ՚ի սաստիկ խու-

Ճապէրոյ անտի հանգուցեալ զսիրտ նոցա, փարատեաց Պալլաս՝ որ է իմաստութիւն՝ զցնորս մտաց նոցա և լուսաւորեաց պաշտպանել անձանց իմաստնաբար: Այլ քանի մի տողիւք ստորև, ընդ հրաշալի նկար ձիամարդիկ առն սքանչացեալ ընդ Սալիէոի գաղղիացւոյ քննիչք, ասեն եթէ ոչ միայն ծանօթ ուրեմն էր արուեստ ձիավարութեան առ ժամանակօքն Հոմերի, որ զայն յօրինակ 'ի դէմս բերէ ժամանակակցաց իւրոց, այլ և 'ի ծայրն հասեալ կատարելութեան, որով այրն ձիավարժ քառից ձիոց նուսէ 'ի նուս փոփոխի 'ի թուչել անդ նժուգացն:

53. Խորագիտութիւն Հոմերի է 'ի տալ անդ Հեկտորայ ըմբռնել զնաւ մի անառաջնորդ, զի մի անպատիւ արասցէ զդիւցազունս իւր: Քանզի Պրոտեսիլայոս սպանաւ անդէն 'ի հասանէն 'ի Տրոյիս:

54. Զայս օրինակ բարբառոյն Աքիլէայ մեծապէս գովեն իբրև յոյժ քաջավայելուչ բուսոյ բարուց դիւցազնն, որ նմանաբերութիւն յառաջ ածէ ոչ զորոյ և իցէ, այլ զմանկիկ տղայոյ կենդանի նկարագրութեամբ:

55. Ի խրատ զգուշութեան դառնապէս դատապարտէ Հոմեր զօխութիւն և զանհաշտ ատելութիւնն. մինչ զի և ոչ արժան համարի զվարակեալն նովաւ՝ 'ի մարդոյ ասել ծնեալ, այլ յապառաժ վիմէ:

56. Պէլեոս, անուն լերին, ուստի հատեալ էր փայտ հացւոյն 'ի տիգաբուն Պեղոսի հօրն Աքիլլէայ:

57. Անուանք նժուգացն Աքիլլէայ Ξανθός, որ է Աշխէտ, խարտեալ: Βαλιός, Պիսակոտ. զոր մէք ասեմք Ճանճկէն, Ճանճաճերմակ, Ճարտուկ Ճանճկէն:

58. Արգէայն. Ἄργυρα, նշանակէ Յափրշտակող յիգ. սեռ: Դարձեալ Մրրիկ: Դարձեալ Դիցուհիք յափշտակողք: Իսկ Պոթարգէ, Πόδαργος, Ճերմակոտն, դարձեալ և Արագոտն: Գիւտ գեղեցիկ գըլխովին բանաստեղծական՝ ասէ Փոփ՝ առ 'ի զարագութիւն զերիվարացն յայտնել, ասել զնոսա ծնունդս սաստկաշունչ հողմոյն զեփիւռի: Այլ զարմանալին ասէ այն է, զի զբանաստեղծական զայս եղանակ ծնանելոյ 'ի հողմոց, և բնաղնինք հինք իբրև անշուշտ հաստատեցին. որպէս Վարրոն և Կոլումելլա և Պլինիոս: Զնոյն հաստատեաց և Վիրգիլիոս 'ի Մշակականին իւրում: Բայց գաղափարին հոմերեան զհետ չոքաւ և Թասսոյքերթոզ, կենդանագրելով զայս օրինակ ծննդականութեան ձիոց 'ի հողմոյ: Երգ է:

59. Պէրասոս. Πηδασος, Վայր խոնաւուտ: Դարձեալ՝ անուն գաւառի: Դարձեալ՝ անուն երիվարին Աքիլլէայ:

60. Կենդանի յոյժ և առաւել հետաքնին համարին զճարտարարուեստ նկար զայս գայլոց 'ի հոմերէ օրինակեալ 'ի Միւրմիգոնեան խօջն Աքիլլէայ, որ

ծարաւեալ մնային մարտի պատերազմին : Քանզի որպէս հաստատեն, քան'ի քաղց՝ առաւել ևս 'ի ծարաւն անհանդուրժելիք են ազգդ գայլոց :

61. Սպէր+իոս, անուն գետոյ, ծընեալ յԱրամազդայ : Այլ հոմեր զխորդ և զզօրավարն ինքնին զիւրոյ դիւցազինն Աքիլլեայ պանծացուցանէ դիւցաբանութեամբ առ 'ի ճետիցն :

62. Դով+նա, քաղաք 'ի գաւառին Մոլոսացւոց ընդ մէջ Թեսսաղիոյ և Եպիրոսի : Իսկ Սելևոս կամ Ելևոս, ըստ Պինդարեայ, էին քուրմք Դովդոնեանն Արամազդայ, գուշակք և Թարգմանք պատգամաց առ դիցապաշտս : Ստրաբոն 'ի գիրսն Է. սսէ վասն Սելլոսից խստամբերութեանցն, իբրու յառաջ եկեալ 'ի գազանակեաց քաղաքավարութենէ նոցա, քան եթէ 'ի պաշտամանէ :

63. Բանախօսութիւն Պասրոկղեայ գեղեցիկ յոյժ դատեալ է իբրև անշահասէր ամենևին, և իբրև ձայն ճշմարիտ բարեկամի :

64. Տէս զՔիմեոն 'ի հատոր Ա. Ծան. 93 :

65. ՅՈՂԻ-Վայ. Աստանօր հոմեր Ողիմպեաւ պարզապէս իմանայ զէառն : Բայց քանի մի տողիւք ստորև 'ի նահանջեցուցանել անդ իւրում և զհեկտոր, Թուի հոմեր խնամով ճգնիլ 'ի պատիւ քաջին այնորիկ, 'ի ներքս բերելով 'ի վերուստ զմրկել ամպրոտայնոյն Դիոսի :

66 • Ճարտարութիւն է հրահանգիչն
 Հոմերի յանկարծ 'ի զուարճացուցանել
 անդ իւրում զընթերցանելիսն, ըստ պա-
 տեհին յեռուլ զբարոյականն 'ի քեր-
 թուածին, և տալ ճանաչել խուժանին
 եթէ պատուհասք աստուածասաստք բա-
 զում անգամ առաքին յաշխարհ վասն
 անօրէնութեանց մարդկան, և ըստ նմա-
 նէն՝ զգոյշ լինել 'ի վարս: Ի տողից աս-
 տի Հոմերի հրահանգեալ զՅոյնս գիտէ
 Գիողորոս Սիկիլիացի 'ի պատմել անդ
 իւրում վասն ասէղ իմն գետնաշարժի և
 ջրհեղեղի յաւուրս 101 Ողիմպիագին,
 որ բազում մասամբ քանդեաց զաշխարհն
 Յունաց. և ասէ, եթէ 'ի յուզել պայ-
 քարաց վասն պատճառաց հարուածոյն
 մեծի, փիլիսոփոսք բնախօսք ընծայէին
 զայն հարկաւոր պատճառաց բնութեան
 և ոչ աստուածասաստ ինչ ցասման, « Իսկ
 որք ողջամիտք էին, ասէ, 'ի բարեպաշ-
 տութեան մասին, պատճառս առաւել
 հաւանականս պատուհասին մեծի քարո-
 զէին զաստուծոյ վրէժխնդրութիւնն 'ի
 պատիժ ամբարշտութեան մարդկան »:
 Զայս հատուած Հոմերի և Վիկերոն ճա-
 հեցուցանէ 'ի սարսափելի հարուած ջր-
 հեղեղին պատահեալ յաւուրս իւր 'ի Հը-
 ոում 'ի թուղթն առ Վուհնտոս:

67 • Յոյժ քաջավայելուչ մեծանձին
 Մարպեդոնի դատեալ է այս վերջին բա-
 ցաձայնութիւն դիւցազին 'ի հոգեվարսն
 առ բարեկամն և թագակիցն իւր առ Գը-

լաւկոս : Աջ զվրէժ խնդրէ զԹշնամւոյն ,
այլ միայն զպատիւ և զլաւ համբաւն ըզ-
բարեկամին իւրոյ :

68. Ի հոգեվարս Սարպեդոնի ասելով
Հոմեր , Τέλος θανάτοιο κάλυψεν ὀφθαλ-
μοῦς, ῥῖνάς δ' , առանց կարծեաց զսրա-
նալ անգացն ասէ , որ 'ի հոգեվարսն
հանդիպի . զոր և Մոնդի Թարգմանիչ
Հոմերի համարձակեցաւ արտայայտել ,
ասելով , Le narici affilò , travolse i lu-
mi , e la morte il coprì .

69 . Մերիոն էր կրեւտացի . և կրեւտա-
ցիք քաջավարժք էին 'ի կաքաւն անուա-
նեալ Պի-ռոսէան . այն է՝ գիտել կաքա-
ւել վառեալ 'ի զէն և 'ի զարդ :

70 . Յայտնի է առասացուԹիւնն Հո-
մերի՝ Երկուորեակս կոչելով զքունն և
զմահն . որպէս և այլք՝ եղբայր մահու
ասեն զքունն և մահահանգոյն . ըստ ո-
րում և այլուր բազում անգամ՝ Երկայն
քուն կոչէ Հոմեր զմահն , մակդիր տա-
լով մահուն Կառնիլեոս , Երկայնաքուն .
կամ Ճշգիւ՝ Ընդերկար ընկողմնեցուցիչ :

71 . Աջ պակասին լայնածաւալ մտաց
Հոմերի վայելուց նմանուԹիւնք առեալք
'ի բնուԹենէ կամ յարուեստից . մի է և
այս յանկարծեւեաց անտի ջրասուզակ լու-
ղորդի : Արով և յոյժ վաղնջուց սովորու-
Թեանցն գիտակք լինիմք 'ի Հոմերէ . և
Թէպէտ ոմանք յերկբայս եղեն վասն վե-
ցից տողիցս , սակայն հարազատք են Հո-
մերի՝ ըստ հասարակաց :

72. Զգերաշխարան մահն Պատրոկղեայ ընծայելով Հոմեր անհնազանդութեան նորա 'ի պատուէրն Աքիլլեայ, զնպատակիւր զհրահանգն ցանգ 'ի ներքս արկանէ : Այլ ինձ թուի հաւաստի՝ զոր ոչ գտի առ քննիչս՝ նա և 'ի հանգամանս մահուն Պատրոկղեայ դիտել Հոմերի ըզփառս զիւրոյ դիւցազին Աքիլլեայ. զի ցորչափ զղէնան Աքիլլեայ արկեալ է, անպարտելի կայ Պատրոկղէս. և առ 'ի պարտել զնա՝ պարտ էր զերծուլ 'ի նմանէ զղէնան. և առ 'ի զերծուլ՝ չէ բաւական ձեռն մարդոյ. պէտք են դից : Այսչափ և զղէնան գլխովին զիւրոյ դիւցազին հրաշացուցանէ Հոմեր :

73. Առաջնածին, ներգործաբար. քան զի շեշտեալ է Πρωτότοκος. ուր կրաւոր. շեշտի Πρωτότοκος. ԶՄենեղաւոս յերևան ածէ զայրն մարդասէր և բարեզգեաց բարուց վիճակեալ, որ և առաւել իմն յանկուցեալ էր 'ի հեղահամբոյր բարսն քաջին Պատրոկղեայ. ուստի և 'ի ճահ նմանեցուցանէ զնա գորովագութ մայրենի խնամոցն 'ի վերայ զաւակի :

74. Իպերէնուր. էր եղբայր մեծապան ծիս այսորիկ Եւփորբոսի :

75. Այս հին առած գերահամբաւեալ էր 'ի Յոյնս. և 'ի ստեղծաբան տեսարանս ստէպ յեղեղեալ 'ի քաջիկ հրահանգ Ժողովրդեան :

76. Ոչ գիտելով Գլաւկոսի փոխարեալ զմարմին մեծին Սարպեդոնի ըզ-

Թագակցին իւրոյ, կարծէ զնոյն գրաւեալ
'ի Յունաց :

77 . Այս է՝ Պատրոկղէս քաջն նիզա-
կակից առաջին քաջին Յունաց Աքիւ-
լէայ : Ոչ մոռանայ Հոմեր ըստ պատեհին
'ի ներքս արկանել զգիւցազն իւր մեծա-
պէս գովութեամբ : Եւ մանաւանդ ստորև
յերես 248 , 'ի հրաշակերտ զինուցն նո-
րա անգամ յոյժ հրաշացուցանէ զնա .
մինչև ասել, եթէ որ զնորա զէնան զգե-
ցաւ՝ Հեկտոր , զնոյն ինքն զԱրէս գլխու-
վին զգեցաւ :

78 . Ահագին կենդանագրութիւն մե-
ծի գետոյ Թափելոյ 'ի ծովէ , 'ի Նեղոս
գետ նմանաբերեալ է 'ի Հոմերէ՝ ըստ մեկ-
նըչացնորա . և կոչէ զնա Հոմեր Δειπετής,
կամ Διοπετής , Արամազդահոսան , երկ-
նախաղաց . զի և ամենայն մեծամեծք ըստ
քերթողական լեզուի , կամ արամազդա-
ծինք են և կամ աստուածայինք : Թերևս
նա և վասն ծածկութեան ականն Նեղոսի
'ի ռամկէն , զայս ասէ : Այնչափահագինք
յոյժ են բերանք Նեղոսի՝ ընդ որս Թափի
'ի ծով , ասէ Վոլտ Ճանապարհորդ ան-
գղիացի , մինչև յառակս լինել առ Արա-
բացիս և առ ամենայն նաւազս Եւրոպա-
ցոց , եթէ՝ Որ Էրէնէի 'ի Բերանոյ անփի ,
ու Էրէնէի 'ի սափանայն : Իսկ այս տողք ըս-
քանչեւահիւսք Հոմերի բնաւ իսկ 'ի յու-
սահատութիւն կրթեցին զհին նախան-
ձաւորս նորա 'ի քերթողութեան զՍողոն
և զՊղատոն 'ի նմանել նմա : Եւ կենդա-

նագրութիւն տողիցս՝ ասէ նոյն Վսւտ՝
վկայէ, եթէ ինքնին ուրեմն Հոմերոս
յԵգիպոսս տեսեալ է զքնութեան տե-
սարանն :

79 . Դիպողագոյնս ակնարկէ Հոմեր ՚ի
սովորութիւն վաղնջուց մարդկանն . որ
՚ի վերայ շիրմացն կանգնէին կոթողս, և ՚ի
վերայ նոցա կառս քառաձիս կամ երկա-
ձիս : Իբրու այն թէ նժոյգքն Ա. քիլլեայ
այնպէս անշարժք կացեալ իցեն յանմահ
յիշատակարան Պատրոկղէայ քաջի :

80 . Արտասուք կենդանեաց եթէ բա-
նաստեղծեալ իցեն ՚ի Քերթողէն ՚ի նշան
վերջին թախծութեան նոցա, տակաւին
ընդունելք են : Իսկ եթէ ճշմարտու-
թեամբ ասացեալ, Փոփ յառաջ բերէ
վկայութիւնս յԱրիստոտէլէ, ՚ի Պլինիո-
սէ և յԵղիանոսէ վասն արտասուելոյ
կենդանեաց ՚ի կորուսանել զտարս իւ-
րեանց : Նա և վերգիլիոս զհետ գնայ վար-
դապետին, գեղեցիկս յոյժ տողելով,

Post bellator equus, positus insigni-
bus Aethon .

It lacrymans, guttisque humectat gran-
dibus ora .

Նա և գառն կրիտիսն Հոմերի Նիսիէլի,
թէպէտ զառաջինն, ասէ, այս արտա-
սուել կենդանեաց ՚ի ծաղր շարժէ զսողն,
սակայն և հիմն ունի ՚ի ճշմարտութե-
նէ . և ՚ի բազմապատիկ վկայութեանց
զոր ՚ի ներքս բերէ վասն այսորիկ, ածէ
և զականատես վկայութիւն զմեծին Բա-

սիլիոսի 'ի ճառն յաղագս Մահուան, և այլուր ևս, զի ասէ, «Տեսի ես ինքն երբեմն արտասուեալ զեզն առ մարին 'ի մեռանեւ ընկերակցին իւրոյ » :

81. Աստանօր ընդ Ծիածանս իմանայ Հոմեր, ըստ քննչաց, և զայլ օգերևոյթս, ըստ որում՝ զԱրշալոյսն հիւսիսային . որ և առ մեզ, ասէ Չեզարոթթի ընդ երկար ժամանակ համարէր իբրև չարագուշակ :

82. Վասն զի Անտիղոքոս սիրելի յոյժ էր Ա. քիլեայ :

83. Այս ամենայն անուանք նշանականք են 'ի յն . ծովուց և ջրոց և կղզեաց և ծովափնեայց և նաւուց :

84. Քաջիկ հրահանգէ Հոմեր յանտխակալութիւն, կշտամբելով զնոյն ոչ միայն 'ի մարդիկ, այլ և 'ի դիս առակելով զնոսս :

85. Ոխակալութեամբն յուսայ մարդ վրէժ առնուլ 'ի թշնամւոյն և այսուիկ հեշտանայ, այլ ապա դառնանայ : Չայս վարդապետելով Արիստոտէլ 'ի բարոյականին իւրում, յառաջ բերէ 'ի վկայութիւն զայս տող Հոմերի :

86. Լուութեամբն թետեայ արգելու ուշիմ Քերթողն զոգին վրէժխնդրութեան . և միայն գեղեցիկ ասէ զօգնելն յաղէտս եղբարց :

87. Պուղիդամաս խորհրդական այր ոք ասելով, ակնարկէ զՀեկտոր :

88. Եթէ 'ի գումարեւզօրս յայլ և այլ սահմանաց և եթէ 'ի կերակրել զնոսս :

89. Մենետիրոս դիւցազն հայր էր. քա-
ղին Պատրոկղեայ. իսկ Ռպոււնտ՝ երկիր
Ծննդեան Պատրոկղեայ:

90. Անուն կնոջն Հեփեստեայ, և նը-
շանակէ՝ Շնորհք:

91. Պատկեր Եւրիւնոմեայ ՚ի դօտ-
ւոյն ՚ի վեր ունէր զկերպարան կնոջ, և
՚ի վայր՝ զձկան. և մեհեան նորա մի ան-
գամ բանայր յամին:

92. Այլաբանութիւն քերթողական
վասն ծագման արուեստից առ ՚ի յերկ-
նից, այսինքն յաստուածատուր հանձա-
րոյ. քանզի յերկնից յերկիր գահաւիժէ
զհեփեստէս ճարտարապետ, և տայ նմա
զամենայն ճարտարութիւն և զըւրբ և
և զշնորհ ձեռակերտաց. ուստի և զՇը-
նորհան ինքնին ՚ի վերոյ ամուսին ասաց
նորուն հեփեստեայ: Չնոյն կարծիս
զՅունաց ունէին և բազում ժողովուրդք:
Եւ Սկիւթացիք համարէին՝ եթէ ՚ի վաղ
ժամանակաց անկաւ յերկնից ՚ի Սկիւ-
թիա արօր մի և կացին մի և աման մի:

93. Կրիտիսք ոմանք գայթակղին ընդ
ծայրայեղ աշխոյժս բանաստեղծականս
հոմերի. որպէս վասն ինքնաշարժ եռո-
տանեացն՝ որ ՚ի վերոյ. ևս առաւել
վասն ոսկի նաժշտացն արուեստակելոց
՚ի հեփեստեայ իբրև շնչաւորս, և այլն:
Այլ ինքնաշարժ մեքենայք, ասեն այլ կրի-
տիսք, ևս զարմանալիք երևին յաւուրս մեր
առաւելլութեամբ: Իսկ վասն կենդա-
նատիս նկարագրաց, ասէ Պիդոսէ, Ո՞չ

զօր ամենայն ասեմք մէք զարմացեալք ,
 Եթէ՝ թուի թէ շնչաւորք իցեն այդօքիկ,
 թուի թէ խօսեսցին դոքա , այլովքն հան-
 դերձ :

94. Ստորագրուածիւն հրաշակերտ վա-
 ճանին Աքիլեայ գերահամբաւեալ է առ
 հասարակ . քանզի ունի յինքեան զա-
 րուեստ զհնոցն 'ի մետաղագործութիւնս
 պղնձոյ , անագի , ոսկւոյ և արծաթոյ , և
 'ի բարեխառնութիւնս նոցա և 'ի ցուցա-
 կութեան ստուերի և 'ի պայծառութեան
 'ի քանդակսն : Ունի և զաստղաբաշխու-
 թիւն զվաղնջուցն և զհովուականն և
 զմշակականն և զպար նախնեացն , այ-
 լովքն հանգերձ : Ի հոմերէ առեալ և այլ
 քերթուք ունին ստորագրուածիւնս վա-
 ճանաց զիւրեանց դիւցազանց . ըստ որում
 վահանն հերակլեայ 'ի հեսիողոսէ , թէ-
 պէտև ընդ անհարազատս դասեալ : Վա-
 ճանն Ենէասայ 'ի Վիրգիլեայ . Ենէակ .
 Ը : Վահանն Ռինալտոսի 'ի Թաստոյէ .
 Երգ ԺԷ . և այլն : Բայց գերագասեն
 քննիչք զհոմերեանն , որում քան զամե-
 նեսեան առաւել մերձաւոր գտաւ վեր-
 գիլեանն : Այլ վասն հոմերեան վահանին
 բազում ճառս մատենիւք չափ կոտորե-
 ցին հմուտք , յերևան ածեալ զամենայն
 ճարտարութիւնս արուեստից զմթերեալս
 'ի ստորագրութեան վահանին Աքիլեայ :

85. Սուրբ կոչէ , զի արգարութեան
 էր ատեան :

96. Կնոսոս . Ի Կրետէ կղզի : Իսկ օրի-

նակ պարուն էր ըստ շրջանաց Լաբը-
րինթոսին Կրետայ : Տէս 'ի Պլուտար-
քոս 'ի Թեսէոս : Եւ էին ասէ Հոմեր 'ի
պարուն յայնմիկ պատանիք և հարսնա-
ցուք . հետաքնին է հոմերեան բառն
Αἰφροίβοιοι . նշանակէ Եզնագիւտք .
այսպէս կոչին կուսանք հարսնացուք , որ
'ի հանդերձեալ փեսայից առնուին զօ-
ժիտս , և մանաւանդ զէզանց :

Իսկ բարոյականն Հոմերի 'ի ԺԵ . և 'ի
յետագայ Հագն . ամփոփի յառածս .

Առաքինեաց և իմաստնոց է ըստ պա-
հանջէլ բանին փոխէլ զկարծիս . 118 :

Գուշակութեանց և ըղձութեանց ան-
սալ չէ արժան . 165 :

Յոխութեան յաւերժանալ չէ ար-
ժան . 166 :

Քան զամենայն կենդանիս վշտակիր
է մարդ 'ի վերայ երկրի . 262 :

Ոխակալութիւն նա և զհանճարեղս
վայրենամիտս գործէ . 297 :

Մի սկիզբն է բարւոյ և չարի . 141 :

97 . Նա և 'ի բնաբանութեան ողջամիտ
էն , ասէ Ռոշֆոր , կարծիք Հոմերի , որ
ոչ յապականութենէ ասէ գոյացեալ
զորդունսն :

98 . Յայտ է , ասէն քննիչք , եթէ 'ի
յառնէլ Ագամեմնոնի 'ի խօսէլ , խռով
ինչ յուզեալ իցէ 'ի Յոյնս . վասն որոյ և
ինդրէ ունկնդրութիւն անշառաց : Եւ
ասէն անալի զայս ձանձրացուցիչ ա-
տենաբանութիւն նորա . զի խառնախօ-

սել տայ նմա Հոմեր յարգարացուցանել
անդ զանձն . և այս է բովանդակ ա-
րուեստն Հոմերի :

99 . Ափէ . Ἀτῆ, նշանակէ՝ Վնաս, հա-
րուած, աղէտ, մեղք . և զնոյն ստորև
ասէ Հոմեր գահավիժեալ յերկնից . և
նկատեն քննիչք ՚ի տողս յայտոսիկ զան-
կումն Սկզբնաչարին յերկնից, և զայս
ծանօթութիւն, ասէ սուրբն Յուստինոս,
առեալ Հոմերի ՚ի Գրոց, նա և յաւանդից :

100 . Սովորութիւն հնոց ոչ ուտել ՚ի
մահ սիրելեաց մինչև ցերեկոյն . զոր է
տեսանել և ՚ի Գիրս : Այլ զնել զմեռեալս
՚ի գաւթի տան, էր սովորութիւն ՚ի Յու-
նաստան և յԻտալիա . նա և առ մեզ ցայս-
օր, ասէ Տասիէ :

101 . Չէր օրէն նոցա ուտել զերգմնա-
կուռ յաղեալն : Թուի առեալ յԵգիպ-
տացոց, որք ըստ Հերոդոտեայ զյա-
ղեալ սպանդից զգլուխն կտրեալ՝ ա-
նէծս կարգային ՚ի վերայ, ասելով, Եթէ
աղէտք ինչ հանդերձեալ իցեն գալ ՚ի
վերայ մեր կամ Եգիպտոսի, եկեսցեն ՚ի
վերայ գլխոյս այսորիկ . և ապա առեալ
զգլուխն ամային ՚ի Նեղոս գետ :

102 . Պի-ու-ու, յատուկ անուն որ-
դւոյն Աքիլլեայ : Իսկ մակադրական ա-
նունն, զոր զնէ աստ Հոմեր, է Նեպոլի-
ու-ու, որում չիք տեղի ՚ի հայ չափաբա-
նութեան . ՚ի սոյն հարկեալ և Մոնդի,
զնէ Պիւռոս : Եւ նշանակէ մակադրական
անունն Պատանեմարտ . զի պատանեակ

տակաւին գոլով Պիւռոս չոքաւ 'ի մարտ
'ի Տրոյիա յետ մահուան հօր իւր Աբել
լէայ :

103. Զանուանսն ժուգայս տէս 'ի վեր
'ի Ծան . 57 : Իսկ 'ի բարբառել անդ նը-
ժուգացն յազդեցու թենէն հերայ զոր
ասէ Հոմեր , իմասնագոյնս խորհրգածէ
Փոփ , եթէ թոյլ տուեալ լինի այս քեր-
թողական լեզուի , զօրավիգն առեալ յա-
ռասսպելէ , յաւանդու թենէ և 'ի սպա-
մու թենէ : Լիվիոս ինքնին , ասէ , 'ի բա-
զում տեղիս յիշատակ առնէ զեզանց ,
իբրև զբարբառողաց 'ի պէսպէս առ ի թս :
Եւ այս հրէշք , ասէ Պլինիոս , էր հասա-
րակ 'ի վաղնջուց տարեգրու թիւնս , խօ-
սել եզանց : Հանդերձ այսու , ասէ Փոփ ,
արդէն իսկ կանխեաց ասաց զնժոյգան
զայնոսիկ յանմահից ճետէ և արտասուել
ևս ետ նոցա . և որ մեծն է՝ յաւել եթէ
հերա խօսուն եդ զնոսա : Սպոնդանոս
և Տասիէ աստանօր տան յուշ ածել և ըզ-
բաղամեան զէշն . թէպէտ և այն 'ի ճրշ-
մարիտ հրաշից էր , զի ասէ , « Եւ եբաց
Աստուած զբերան իշոյն » :

104. Ընդ Լաւմեդոն արքայն Տրոյիոյ
զայրացեալ Պոսիդոն 'ի շինութեան պա-
տուարին , հրէշ իմն ծովային 'ի դուրս
եբեր յանդնդոց . իսկ 'ի վտանգել 'ի գա-
զանէ անտի դստերն արքային , եհաս հե-
րակէս և կռուեալ ընդ կիտոսին վըր-
կեաց զգուստրն . ոյր վասն Տրոյացիք
կանդնեցին հերակլէայ մարտիոց հան .

դերձ պատնշաւ սակաւ մի հեռի 'ի ծով
ափանց յասպատանարան նմա 'ի կը-
ռուեւն ընդ դազանին :

105. Քանզի ազգական Պրիամու էր
Ենէաս, որպէս յետոյ ուրեմն ազգաբա-
նէ Ենէաս զանձնէն :

106. Այլաբանութիւն է. որպէս թէ
իբրև զհողմ արագունք իցեն ձիքն, զոր
մէք ասեմք Օդապարիկ : Ըստ որում և
յառաջ անցեալ յայտ առնէ Հոմեր. քեր
թողաբանեալ զարագութիւն և զթե-
թեւութիւն նոցա 'ի քիստս հասկացն և
'ի մկանունս ծովուն :

107. Տես զԳանիւմեդէս 'ի Հատ. Ա.
Ծան. 74 :

108. Այս կրկին տողք Հոմերի մեծա-
պէս են դիտելի. զի որպէս հաստատեն ան
աչառ քննիչք, յայտնապէս 'ի հիմանց
քանդեն զվաղնջուց կարծիսն, զայն՝ ե-
թէ Ենէաս եկեալ 'ի Տրոյիոյ յԻտալիա
հիմն արկեալ իցէ նորոյ արքայութեան :
Վիրգիլիոս ամենևին ընդ լուութեամբ պա-
հելով զհարազատութիւն տողիցս այսո-
ցիկ Հոմերի, և կամելով հաստատել ըզ-
տարածեալ կարծիսն առ Հռոմայեցիս,
փոխանակ բառին Հոմերի Τρωεσσων, Տրո-
վացուց, ընթեռնու բառ մի այլ յու-
նական Πόντεσσων, Բոլորից, և զերկուս
տողսն Հոմերի թարգմանէ 'ի լատին այս-
պէս.

Hic domus Aenæ cunctis dominabitur
oris,

Et nati natorum, et qui nascentur ab illis.

109. Եւիկէ, քաղաք յԱքայիա, յորում էր մէհեան մեծակառոյց Պոսիդոնի. ամի ամի Յոնիացիք յազէին նմա ցուլ մի. եթէ բառացէր ցուլն՝ ՚ի տանել զնա ՚ի բաղին անդր, բարեբաղդութիւն համարէին զայն ժողովուրդք, և զյաշտն իւրեանց հաճոյական աստուծոյն:

110. Աստանօր սքանչացեալ Փոփ աւէ, Պէտք են նկարչի ուրուք ճարտարի ՚ի տողից աստի Հոմերի կենդանագրել զմարան լի և պատարուն ըստ ամենայն արհաւրացն. որպէս Փիդիաս ՚ի գերահընչակ եռատողիցն Հոմերի ՚ի Հագն. Ա. յերես 43. ճշգրտեաց զՈղիմպեանն Արամազդ ըստ ամենայն մեծ վայելչութեանցն:

111. Ի հագներգութեանս յայսմիկ՝ առաւել քան յամենայն հագներգութիւնս Եղիականին՝ ասէ Փոփ՝ սքանչելապէս բոցավառեալ է Հոմեր ՚ի քերթողական երևակայութեան իւրում:

112. Են գաւառք, որ ստէպ և մեծամեծս հարուածին ՚ի ջորեկաց. և գիւղականք վայրացն յեղծումն նոցին վառեն խարոյկս մեծաբոցս, և ջորեակք փախուցեալք ՚ի բոցոյն ինքնին տարմաբար անկանին ՚ի ջուր: Նաև Արաբացիք ծուխ անհնարին հանեալ ՚ի դաշտս, և կուրացուցեալ այնպէս ըզջորեակս՝ տան անկանել ՚ի գետին ՚ի կէ-

րակուր անձանց , ուստի և կոչեցան Ա՝
 κριδοφάγοι , այս է՝ Մարախակերք : Եւ
 հնարք են հոմերի ջորեկաց նմանեցուցա
 նել զՏրոյացիս առաջի Աքիլլեայ , յոր
 ժամ վազեաց ընդ Սկամանդրոս : Յառաջ
 բերէ Խորենացին և զայս սողս հոմերի .
 «Անդ էր տեսանել նոր զոմն Աքիլլեա
 ընդ Սկամանդրոս դէտ վազելովն» . Գ . Խ :

113 . Հրաշացեալ են առ քննիչս հոմերի և այս կրկին տրամախօսութիւնք
 Լիւկայոնի և Աքիլլեայ , իբրև կրկին ըսկրդբնատիպք անվթարք ճարտասանութեան . մին ազդոյ և համոզակեր և դորովաշարժ , և միւսն հրավառ և ահաբեկ և դիւցազնական :

114 . Գեղեցիկ յոյժ հետևողութեամբ և զայս քառատողս 'ի հոմերէ յառաջ բերէ վիրգիլ յԵնէակ . Ժ .

Istic nunc, metuende, jace: non te optima mater

Condet humi, patriove onerabit membra sepulcro :

Alitibus linqûere feris ; aut gurgite mersum

Unda feret, piscesque impasti vulnera lambent.

115 . Սովորութիւն վաղնջուց էր արկանել երիվարս ողջս 'ի ծով և 'ի գետս՝ 'ի պատիւ արագընթաց հոսանաց նոցա . և եկաց ընդ երկար սովորութիւնս այս : Սէքստոս Պոմպէոս որ 'ի պատճառս ծովային յաղթութեանցն կոչեցաւ որդի

Պոսիդոնի, պատուեաց զճայր իւր արկանելով 'ի ծով երիվար մի կենդանի, որպէս վկայէ Դիոն Կասսիոս 'ի վարս նորա :

116. Անուն մեծի գետոյ 'ի Յունաստան, ունի ծագումն 'ի Պինդոս լեռնէ Մակեդոնիոյ :

117. Ի Ժամանակաց անտի Հոմերի էր առ հասարակ կարծիք, յՈվկիանոսէ ունել ծագումն ամենայն ջրոց : Եւ այս կարծիք, ասէ Ռոչֆոր, որում երկար զննութեանց պէտք էին յեղծումն, եկաց մնաց մինչև ցդար մեր, և զնոյն հաստատեցին, ասէ, բազումք յարդի բնաբանից : Այլ որ գեղեցիկն է, զայսոսիկ տողան Հոմերի «Յորմէ ամենայն գետք և ամենայն ծովք», և այլն, նմին իսկ Հոմերի իրաւապէս յարմարեցին բազումք 'ի նախնեաց, ըստ որում և Կուլինտիլիանոս, որպէս եգաք 'ի յառաջաբանին :

118. Չայս գեղեցիկ նկարագիր ունի 'ի Հոմերէ Վիրգիլ 'ի Մշակականին իւրում. Գիրք Ա :

119. Չահեղ նկարագիր Հեփեստեան բոցակիզմանն ըստ Ճչգրիտ երևակայութեանն Հոմերի, ասեն քննիչք, արդարաւ ցուցանէ մարդ միայն, որ մի անգամ 'ի զնին կացեալ իցէ սոսկալի հրաբուխիցն Եանայի, տեսեալ զահագին ուղև հրեղէն տանն մղոնից լայնութեամբ վայրահոսել ասէղակերպ 'ի ծով անդր :

120. Քանզի զլանկարծական մահ ըզ-

կանանց ընծայէին նախնի Յոյնք փքնահա-
րուծեանն Արտեմեայ, որպէս և զա-
րանցն՝ Ապողոնեան նետիցն :

121. Ողջոյն այս հագներգութիւնն ,
ասէ Փոփ, յոյժ հրաշալի է յայնմ, զի 'ի
ամա դիմամրցանակաւ խառնին ընդ մի-
մեանս ասէղութիւն և խանդաղատական
կիրք . որ զմիմեանս փոխանակաւ աղղո-
ղագոյնս յարգարեն : Պակասին , ասէ ,
ինձ իմաստք 'ի դէմն բերել զկիրս սրտիս և
զհիացումն մտացս ընդ չնաչխարհիկ գե-
ղեցկութիւնս հագներգութեանս այսո-
րիկ : Եւ Պիգոպէ վեհագոյն ամենայն
գովութեանց ասէ՝ զհագներգութիւն
զայս :

122. Իբրու յառակս առեալ է եղանակ
բանին . որպէս թէ ասել Հեկտորի, չէ Ա-
քիլէս այնպիսի այր՝ ընդ որում իբրև
ընդ ընտանւոյ մարթ իցէ խօսել . որպէս
սովորեալ են մարդիկ ընդ կաղնեաւ ուրեք
կամ այլուր գալ առ միմեանս և մտերմա-
բանել ընդ իրեարս , և մանաւանդ պա-
տանիք և կուսանք :

123. Մեծապէս գովէ Պլուտարբոս
զանդամագնական Ճչգրտութիւնն Հո-
մերի : Եւ Լիւիոս մեծ պատմագիր հռով-
մայեցի 'ի պատմել զսպանութիւն ասա-
գին փղի խոցելով զվայրն զակնարկեալն
'ի Հոմերէ , յիշէ զայս սող նորա յասելն ,
Ea celerrima via mortis in tantæ molis
bellua inventa erat .

124. Չիք քան զՀոմեր գերագոյն նկա-

րիչ բնութեան . ինքն իբրև հաւատարիմ ճշգրտահան նկարէ զԱքիլէս ըստ ամէնայն բուսոյ բարուց նորա . բայց և զքրտումնելի կիրան զիւրոյ դիւցազին ինքնին դատասպարատէ Դժուհի կոչելով : Դարձեալ և 'ի հեղանալ սրտին Աքիլէայ , տայ նմա ինքնին բազկօք իւրովք հանգուցանել 'ի դադաղի զմարմին հեկտորի :

125 . Առակ էր առ Յոյնս վասն կծծի ողորմութեանց ասել , « Թանալ զչրթունսրն և ոչ զքիման » :

126 . Առ հասարակ էր սովորութիւն առ հինսն կտրել զվարսս 'ի վերայ գերեզմանի մեռելոյն յողբան :

127 . Դաւանութիւն անմահութեան հողուոց և առ հեթանոսս իբրև արև ակներև կայ առ Հոմերոսի . մանաւանդ յԱգիտականին նորա յէջան Ոգիւսեայ 'ի դըժոխս , և 'ի հրաշալի հարցաքննութիւնս հողուոց , 'ի վարձս բարեաց և 'ի պատուհասն չարաց :

128 . Ստոման մեղու , քանզի մեղս նուիրեալ էր մեռելոց : Եւ օժանելեաց և իւղոց , վասն բորբոքելոյ զխարոյկն : Դարձեալ և 'ի դիահանսն առ հինսն էր սովորութիւն՝ զոր ստորև ասէ Հոմեր՝ սպանանել զկենդանիս . որպէս և առ Սկիւթացիս ոմանս՝ թաղելընդ մեռելոյն զքաջընտիրն յերիվարաց նորա . էր զի և 'ի գերեզմանս թագաւորաց Ասիոյ դնէին 'ի միասին փիղ մի և ուլտա երկօտասան և երիվարս վեց և բազմութիւն բարակաց որսականաց :

129. Ոչ զանց առնէ ըստ պատեհին հրահանգել Հոմեր, անաչառապէս դատապարտելով և զիւրոյ գիւցազին գործ մարդազոհին, ասելով, « Ի խորհուրդս իւր չարաչար վայրենացաւ » :

130. Աբիսն յի ըստ առասպելին էր ծնունդ ՚ի Պոսիդոնէ և մայր ունէր զմին ՚ի Կատաղեացն դժոխոց . և պարգևեցաւ Ագրեստոսի արքային Արգոսացւոց : Ստատիոս քերթող լատին ստորագրէ զարագութիւն նորա . Գիլք 2 : Այս տողք Հոմերի են որ վասն Յլագլիսոյն յիշին ՚ի Պամ . Աղէքս . 16 . « Ձի, ասէ, գեղեցկութեամբ և արագութեամբ առաւել քան զԱրիոփայն . զի և ՚ի Լամոմենտեայ բերեալ մատուցանեմք քեզ » :

131. Ողջոյն զայս հատուած կենդանի նկարագրիս գեղեցիկ հետևողութեամբ ունի ՚ի Հոմերէ Վիրգիլ ՚ի Մշակականին իւրում . Գիլք Գ :

132. Երգումն ՚ի Պոսիդոն ՚ի Ճահ էր ՚ի ձիւնթացս առ Յոյնս, իբրու առ առաջին վարժիչ նոցա ՚ի ձիավարել : Ուստի և կոչէին՝ Պոսիդոն Ապոլոն : Եւ սովորական մակդիր նորա էր Երիբառէրէս, Երիբասաստն, և այլն : Ունի զայս և մերս Քերթող . « Երկրասպարփակ տիեզերապատպրտուտկացն Պոսիդոնի » . Նար . խց :

133. Չճայրայեղ զայս ցաւ Աքիլլեայ ընդ կրիտիսութեամբ իմն արկանէ Պղատոն՝ իբրև տկարութիւն ոգւոյ . սակայն և ամենայն իսկ կիլք երիտասարդիս

այսորիկ դիւցազինն, ասէ Ռոչֆոր, էին
 ծայրայեղք. և եթէ ցաւ իմն չափաւոր և
 զառն փիլիսոփայի տայր, ասէ, նմա Հո-
 մերոս, յայնժամ ոչ ճշգրիտ նկարէր մեզ
 զբոյս բարուց զԱ. քիլէայ :

134. Այս է առասպելեալ պատմու-
 թիւնն, յորում Ալեքսանդրոս Պարիս
 առևանգողն Հելինեայ վեհագոյն դա-
 տեաց զգեղն առևանգելոյն քան զգիցու-
 հեացն՝ մեծապէս սրտնեցուցեալ զնոսա :

135. Գեղեցիկ առած հոմերեան, որ
 ճշգրտէ զբնութիւն ամօթոյն, զի տան-
 ջէ զմարդ, բայց և միանգամայն օգտէ.
 այս է և Արիստոտելի ասելն առ պատա-
 նին շառագունեալ, « Քաջալերեաց, որ
 դեակ, գոյն առաքինութեան տեսանեմ
 յերեսս քո » : Ըստ ամանէն գեղեցիկ ևս
 է առածն զոր յետ այսորիկ ասէ, եթէ՝
 « Հոգի համբերող եդ բնութիւնն՝ ի մար-
 դիկ » . իբրու եթէ մարդ ծնեալ իցէ ՚ի
 կեանս յայս առ ՚ի համբերել :

136. Իմաստունն հոմեր նա և զաւելոր
 դապաշտութեք խուժանին իւրոյ ծիծա-
 ղէր . և ըստ պատեհին ՚ի քերթուածս
 իւր հրահանգէ զնոսա ՚ի հակառակն .
 որպէս և ՚ի վերոյ ՚ի բերանոյ Հեկտորայ
 դիւցազին ծաղս արարեալ զհաւահմայսն,
 « Թող, ասէ, ուր և կամեսցին թռիցեն
 հաւք եթէ ընդ արևելս և եթէ ընդ արև-
 մուտս, և զհռչակաւոր վճիռն կնքէ . « Մի
 միայն հաւահմայք այն են, մարտ դնել
 վասն հայրենեաց » :

137 • Ոչ ունելով մեր, ասեն քննիչք, գաղափար զկազմութեան սայլիցն առ նախնեօք, ոչ ունիմք ճշգրտիւ 'ի վերայ կալ հոմերեան ստորագրութեանն:

138 • Արիստոտէլ 'ի հռչակաւոր Պատմ. կենդանեաց Գիրք Թ • ԳԼ • 13 • խօսի յաղագս այսր տեսակի արծուոյ, և յաւաջ բերէ զայս տող հոմերի • և յաւելու եթէ այս արծուիք դադարին 'ի ձորս և 'ի ճախնուոս: հոմերի բառն է Περκνός, որ և Πέρκος, այս է՝ Որ ունի պիսակս թուխս: Այլ Արիստոտէլ փոխանակ հոմերեան բառին ունի Πλάγγος. որ է՝ Տեսակ ինչ արծուոյ:

139 • Վերգիլիոս, ասէ Չեզարոթ, գոգցես թարգմանաբար ունի զայս նկարագիր յԵնէականն Գ:

140 • Ի քերթուած յայս հոմերեան յաղագս երևման հերմեսի առ Պրիամոս, և ուղեկցութեանն և օգնականութեանն, հանդերձ ամենայն սարօքն, յուշ ածէ Տասիէ զպատմութիւն գրոցն Տովբիթայ:

141 • Այս թակոյկք կրկին հոմերեան չարեաց և բարեաց՝ հռչակեալ են յոյժ առ մատենագիրս, իբրու այն՝ որ ըսկիզբն մի քարոզէ չարի և բարւոյ • և ոչ կրկին՝ զմին բարւոյ, և զմիւսն չարի: Եւ 'ի դէպ ասէ Տասիէ, եթէ կրկին այս թակոյկք հոմերեան են կրկին բաժակքն 'ի ձեռին աստուծոյ, զոր ստէպ յեղյեղեն Գիրք: Այլ հոմեր 'ի վերջին հագներ-

գութեանս իբրև վերջին պսակաւ պան-
ծացուցանելով զգիւցազն իւր՝ որչափ փա-
ռաւոր առնէ զԱքիլէս ՚ի կարեկցու-
թեան սրտի, այնչափ և յիմաստնաբա-
նութեան :

142. Նիոբայն իբք բովանդակ այլա-
բանութիւն են. զի ՚ի Մէոնիա գոյ լեառն,
որոյ ծայրն բերէ զնմանութիւն պատ-
կերի կնոջ ողբացողի. լեառն կոչի Սի-
պիւղոս. ՚ի ծայրէն անսպառեւ ջուր հո-
սէ. այս են արտասուքն Նիոբայ ՚ի լե-
զոն քերթողաց : Եւ էր երբեմն՝ զի աղ-
բիւրք երկոտասան բխէին անդանօր, որ
ապա ցամաքեցան. այն է մահ երկոտա-
սան զաւակացն Նիոբայ, այլովքն հան-
գերձ : ԶՆիոբայն առասպելն՝ որով մխի-
թարէ Աքիլէս զցաւագնեալն Պրիամոս
ծերունին, գոցես առաւելութեամբ առ
Խորենացոյն ՚ի գիրս Պիտոյից :

143. Ըստ գիցաբանից նեոք Ապոլոնի
վերաւորեն, սակայն և անտխեղծ պահեն
զմարմին :



ՎՐԻՊԱԿ

ՈՒՂՂԵՍԼ

ԷԶ

ՃՐԻՐԴ

ՃՐԻՐԴ

407